Լսել

ԱՍՏԾՈՒՅ

ամեն առավոտ

365 ամենօրյա ուղերձ

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Լսել

ԱՍՏԾՈՒՅ

ամեն առավոտ

365 ամենօրյա ուղերձ

Hearing From God Each Morning, Joyce Meyer, Armenian
Copyright © 2022 by Joyce Meyer

All rights reserved. Except as permitted under the U.S. Copyright Act of 1976, no part of this publication may be reproduced, distributed, or trans- mitted in any form or by any means, or stored in a database or retrieval system, without the prior written permission of the publisher.

Լսել Աստծուց ամեն առավոտ, Ջոյս Մայեր, հայերեն
© 2022 Ջոյս Մայեր

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Համաձայն «1976թ. ԱՄՆի Հեղինակային իրավունքների մասին օրենքի», այս գրքի ցանկացած մասի տեսածրումը, վերբեռնումը կամ փոխանցումն էլեկտրոնային միջոցներով՝ առանց հրատարակչի թույլտվության, անօրինական է և համարվում է հեղինակային իրավունքների խախտում:

Գրքում աստվածաշնչյան մեջբերումներն արված են հայերեն «Արարատ», անգլերեն AMP, KJV, NKJV թարգմանություններից:

Լսել

ԱՍՏԾՈՒՅ

ամեն առավոտ

365 ամենօրյա ուղերձ

ՋՈՅՍ ՄԱՅԵՐ

Աստված կասի քեզ այն ամենը, ինչ կարիք ունես իմանալու

«Կինն ասաց Նրան. «Գիտեմ, որ Մեսիան պիտի գա. Նա, որ Քրիստոս (Օծյալ) է կոչվում, և երբ Նա գա, կպատմի մեզ այն ամենը, ինչ կարիք ունենք իմանալու, և այդ ամենը հասկանալի կդարձնի մեզ»» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.25):

Քեզ սպասում է հետաքրքիր և հուզիչ ճամփորդություն, եթե ուզում ես սովորել լսել Աստծուց և առաջնորդվել Սուրբ Հոգով: Աստված ցանկանում է խոսել քեզ հետ և ասել այն ամենը, ինչ պետք է իմանաս՝ կյանքը վայելելու և օրհնվելու համար, իմաստուն լինելու և իրականացնելու այն բարի ծրագրերը, որ Նա ունի քեզ համար: Աստված միշտ պատրաստ է լավ և օգտակար խորհուրդներ հայտնելու, սակայն երբեմն մարդիկ չեն օգտվում այդ հնարավորությունից, քանի որ չեն գիտակցում, որ Աստված խոսում է իրենց հետ: Նրանք պետք է սովորեն լսել Աստծուն և հնազանդվել Նրա ձայնին:

Երկրային ծնողները մշտապես խոսում են իրենց երեխաների հետ, այդ դեպքում ինչո՞ւ մեր երկնային Հայրը չպետք է խոսի մեզ հետ: Ծնողները չեն ակնկալում երեխաներից այն, ինչ չեն սովորեցրել նրանց. նույնպիսի վերաբերմունք Աստված ունի Իր զավակների հանդեպ: Նա ցանկանում է ասել մեզ այն ամենը, ինչ կարիք ունենք իմանալու:

Հաճախ մենք ուզում ենք գնալ մեր ճանապարհներով, որպեսզի անենք այն, ինչ ցանկանում ենք, և այն ժամանակ, երբ ցանկանում ենք: Սակայն, երբ այդպես ենք վարվում, վերջին հաշվով մոլորվում ենք և վատնում մեր կյանքը: Մենք կարիք ունենք, որ Սուրբ Հոգին առաջնորդի մեզ մեր կյանքի բոլոր օրերում, և Նա պատրաստ է անելու դա՝ մեզ հետ խոսելով և հայտնելով այն ամենը, ինչ կարիք ունենք իմանալու:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Սուրբ Հոգին քո առաջնորդն է և մխիթարիչը, Նա քեզ հետ է ամեն օր՝ քսանչորս ժամ անընդմեջ:

Կենսական անհրաժեշտություն

«Մեկ բան եմ խնդրել Տիրոջից, որը կփնտրեմ, կփափագեմ և [համառորեն] կհարցաքննեմ. որ Տիրոջ տանը [Նրա ներկայության մեջ] բնակվեմ իմ կյանքի բոլոր օրերում, որ Տիրոջ գեղեցկությունը [քաղցր գրավչությունը և սքանչելիությունը] տեսնեմ և ակնապիշ նայեմ ու խորհրդածեմ, զննեմ և հարցաքննեմ Նրա տաճարում» (ՍԱՂՄՈՍ 27.4):

Եթե փափագում ենք լսել Աստծուց, այդ դեպքում Նրան փնտրելը պետք է լինի առաջնահերթություն: Այսօրվա խոսքում Դավիթն անդրադառնում է մարդու կյանքի ամենակարևոր պահանջմունքին: Նրա համար Աստծո ներկայությունը *կենսական անհրաժեշտություն* էր:

Դավթի կյանքում բազում հնարավորություններ են եղել հաջողության հասնելու և վստահություն ձեռք բերելու համար: Աստծո ներկայությամբ զորացած՝ Նա սպանեց սարսափազդու հսկային ընդամենը մի պարսատիկով և հինգ գայլախազ քարով: Աստված ընտրեց, որ այս հասարակ պատանի հովիվը դառնար Իսրայելի թագավոր՝ չնայած այն բանին, որ նա իր եղբայրներից ամենակրտսերն էր: Համբավն ու հարստությունը, որ Դավիթը հետագայում ունեցավ, շատերի կարծիքով այն ամենն էին, ինչ նրան բավականություն կպատճառեին:

Թեև Դավիթը բազում կերպերով վերապրել էր Աստծո ներկայությունը, նա շարունակում էր փնտրել Աստծուն՝ ձգտելով ավելի լավ ճանաչել Նրան: Դավթի օրինակը ցույց է տալիս, որ մենք մշտապես պետք է փնտրենք Աստծուն՝ անկախ մեր հաղթանակներից: Նույնիսկ նա կարիք ուներ առավել խորը ճանաչելու Աստծուն:

Շատերը ցանկանում են, որ Աստված առաջնորդի իրենց, սակայն չեն ուզում որևէ բան մի կողմ դնել՝ Նրա ձայնը լսելու համար: Բայց Դավիթն իր ցանկությունները կենտրոնացրեց մեկ բանի վրա. օրեցօր էլ ավելի ճանաչել Աստծուն: Ես հավատում եմ, որ մեր հոգու ծարավը միմիայն հագեցնում է Աստծուն օր-օրի առավել խորը ճանաչելով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ձգտի՛ր առավել խորը ճանաչել Աստծուն այսօր և ամեն օր:

Մոտեցի՛ր

«Մոտեցե՛ք Աստծուն, և Նա կմոտենա ձեզ...» (ՀԱԿՈԲՈՍ 4.8):

Ոչ բոլորն են պատրաստ գին վճարելու՝ Աստծո հետ մտերիմ լինելու համար: Ոչ բոլորն են պատրաստ հատկացնելու անհրաժեշտ ժամանակ կամ կատարելու անհրաժեշտ ներդրում՝ հոգևոր աճ ունենալու համար: Աստված չի խնդրում մեր ամբողջ ժամանակը: Անշուշտ, Նա ցանկանում է, որ մենք անենք բաներ, որոնք «հոգևոր» չենք համարում: Նա ստեղծել է մեզ մարմնով, շնչով (մտքով, կամքով և զգացմունքներով), հոգով և ակնկալում է, որ լիարժեքորեն հոգ տանենք մեր անձի համար:

Մարմնի և շնչի համար հոգ տանելը ժամանակ և ջանքեր է պահանջում: Մեր հույզերը խնամքի կարիք ունեն. մենք պետք է զվարճանանք, հանգստանանք և հաճույք ստանանք այլ մարդկանց հետ հաղորդակցվելուց: Մեր միտքը պետք է օրեցօր զարգանա և նորոգվի: Բացի այդ, մենք ունենք հոգևոր էություն, որն ուշադրության կարիք ունի: Հավասարակշռված և առողջ մնալու համար պետք է ամբողջությամբ հոգ տանենք մեր անձի համար:

Ես կարծում եմ, որ Աստծո հետ մտերմության աստիճանը որոշվում է Նրա հետ անցկացրած ժամանակով: Մենք ասում ենք, որ ժամանակ չունենք փնտրելու Աստծուն, բայց ճշմարտությունն այն է, որ մենք ժամանակ ենք հատկացնում այն բաներին, որոնք ամենից կարևորն են մեզ համար: Եթե Աստծուն ճանաչելը և Նրա ձայնը լսելը իսկապես կարևոր են մեզ համար, ապա մենք ժամանակ կգտնենք դրանք անելու համար՝ չնայած նրան, որ ամեն օր ստիպված ենք պայքարել այն բաների դեմ, որոնք շեղում են մեզ: Մի՛ փորձիր Աստծուն մտցնել քո ժամանակացույցի մեջ, փոխարենը քո ժամանակացո՛ւյցը հարմարեցրու այն ժամանակին, որն անցկացնում ես Նրա հետ:

Աստծուն ճանաչելը երկարաժամկետ ներդրում է, ուստի մի՛ հիասթափվիր, եթե չես տեսնում անհապաղ արդյունքներ: Վճռի՛ր պատվել Նրան քո ժամանակով, և դու կքաղես դրա պտուղները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր վարժությունների կանոնավոր կատարումը, անկասկած, արդյունք է տալիս:

Թող խաղաղությունը լինի քո դատավորը

«Թող խաղաղությունը (հոգու ներդաշնակությունը, որ գալիս է) Քրիստոսից, իշխի (մշտապես գործի իբրև դատավոր) ձեր սրտերում» (ԿՈՂՈՍԱՅԻՆԵՐԻ 3.15):

Ես փորձում եմ ապրել իմ կյանքը՝ խաղաղություն գտնելով: Գնումներ կատարելիս ես չեմ գնում որևէ բան, եթե դա գնելու համար խաղաղություն չունեմ: Եթե զրույցի եմ բռնվում որևէ մեկի հետ և հասկանում եմ, որ կորցնում եմ խաղաղությունս, ես լռում եմ: Երբ որոշումներ եմ կայացնում, նայում եմ իմ առջև դրված ընտրությանը և ընտրում այն, ինչը խաղաղություն է բերում: Երբ փորձում եմ տարբերել Աստծո ձայնը այլ ձայներից, որոնք մրցում են իմ ուշադրությունը գրավելու համար, ես լսում եմ և փորձում եմ հասկանալ, թե որ ձայնից կամ ուղերձից է սիրտս լցվում Աստծո խաղաղությամբ:

Հասկացել եմ, որ զորություն ունենալու համար շատ կարևոր է պահպանել խաղաղությունը: Եթե չունենք խաղաղություն, ապա կարող ենք, ամենայն հավանականությամբ, լուրջ սխալ կատարել: Կասեմ ավելին. մենք երբեք չպետք է գործենք առանց խաղաղության: Կարող ենք ասել՝ խաղաղությունը «ներքին հաստատությունն» է այն բանի, որ Աստված հավանություն է տալիս մեր կայացրած որոշմանը:

Աստված առաջնորդում է մեզ խաղաղությամբ: Այսօրվա խոսքում ասվում է, որ խաղաղությունը նման է դատավորի, որը որոշում է, թե ինչն է «անվտանգ», կամ ինչից պետք է «հեռու մնալ»: Եթե չկա խաղաղություն, ուրեմն պետք է ձեռնպահ մնալ: Մենք պետք է թույլ տանք, որ մեր մտքի և հոգու ներդաշնակությունն իշխի և մեր սրտում գործի իբրև դատավոր՝ վերջնական լուծում տալով այն հարցերին, որոնք ծագում են մեր մտքում, և այն որոշումներին, որոնք պետք է կայացնենք կյանքում:

Մենք պետք է սովորենք ենթարկվել ճիշտն ու սխալը տարբերելու ներքին զգացողությանը և չանել այն, ինչն անհանգստություն է պատճառում մեր խղճմտանքին: Աստված մեզ խաղաղություն է տալիս կամ վերցնում է այն, որպեսզի հասկանանք՝ ճիշտ ճանապարհի՞ն ենք, թե՞ ոչ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թող խաղաղությունը լինի քո դատավորը: Իմացի՛ր. քո որոշումը ճիշտ է, երբ ունես խաղաղություն, և սխալ է, երբ չունես այն:

Աստված չի թաքնվում

«Երկինքները պատմում են Աստծո փառքը, և հաստատությունը իմացնում է Նրա ձեռքի գործերը» (ՍԱՂՄՈՍ 19.1):

Աստված որևէ մեկից չի թաքնվում: Նա հայտնում է Իրեն ամբողջ մարդկությանը (տես Հռոմեացիների 1.19,20): Նա խոսում է յուրաքանչյուրի հետ Իր ձեռքի գործերի միջոցով, և հենց բնությունը վկայում է Նրա զորության և մտադրությունների մասին:

Նայի՛ր շուրջբոլորը և ուշադրություն դարձրու այն աշխարհին, որ Աստված ստեղծել է: Գլխավոր բանը, որ Նա հաղորդում է մեզ բնության միջոցով, այն է, որ Ինքն իսկապես գոյություն ունի: Նա փորձում է ամեն օր հասնել մեզ և Իր մասին հուշումներ է անում. հուշումներ, որոնք ասում են. «Ես այստեղ եմ: Հարկ չկա, որ դու անհանգստանաս կամ վախենաս: Ես այստեղ եմ»:

Ամեն առավոտ արևը ծագում է և ամեն երեկո մայր է մտնում: Աստղերը փայլատակում են գիշերային երկնքում, և տիեզերքում տիրում է կարգ ու կանոն, ինչը հիշեցնում է, որ Աստված հսկում է մեզ:

Երբ մտածում ենք որոշ ծառերի մասին, որոնք բոլորովին անկենդան են թվում ձմռանը, իսկ գարնանը կրկին կենդանանում են, հիշում ենք, որ Աստված կարող է վերականգնել և ծաղկեցնել մեր կյանքը, նույնիսկ եթե անկենդան կամ հուսալքված ենք զգում հանգամանքների պատճառով:

Ես սիրում եմ նայել ծառին ու հետևել, թե ինչպես է այն օրորվում քամուց: Նկատել եմ, որ չորացած տերևները երբեմն կառչած են մնում ճյուղերից այնքան, մինչև որ քամու մի մեծ պոռթկում պոկում է դրանք՝ տեղ բացելով նոր բողբոջների համար: Սա հիշեցնում է ինձ, որ Աստծո Հոգու քամին հավատարիմ է քշելու այն ամենը, ինչ այլևս անհրաժեշտ չէ մեր կյանքում, և Աստված կպաշտպանի այն, ինչ պետք է մնա: Նա կբերի նոր կյանք, թարմություն և աճ:

Հիշի՛ր այս օրինակները, որոնք ցույց են տալիս, թե ինչպես է Աստված խոսում բնության միջոցով, և այսօր ամենուրեք փնտրի՛ր Նրա հուշումները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փնտրի՛ր այն բազմաթիվ հուշումներից մեկը, որ Աստված այսօր թողել է քեզ համար:

Աստված ուզում է բարձրացնել քեզ նոր մակարդակի

«Գիտությո՛ւն տուր իմաստունին, և առավել իմաստուն կդառնա. արդար մարդուն սովորեցրո՛ւ, և նա կավելացնի ուսումը» (ԱՌԱԿԱՅ 9.9):

Թեև Աստված ցանկանում է, որ ապրենք ուրախ, գոհունակ կյանքով, երբեմն Նա մեր ներսում առաջացնում է անբավարարության զգացում կամ այնպիսի զգացողություն՝ կարծես ինչ-որ բան այն չէ: Պատճառն այն է, որ Նա չի ուզում, որ մնանք նույն տեղում՝ անելով նույն բաները: Աստված մղում է մեզ փնտրելու Իրեն, որպեսզի կարողանա բարձրացնել դեպի նոր մակարդակ:

Աստված ուզում է՝ ավելի ուժեղանանք, ավելի խորը գնանք և ավելի մտերիմ լինենք Իր հետ: Մեծ մասամբ Նա առաջնորդում է մեզ հասունացման այս ընթացքի մեջ՝ հանելով հարմարավետության գոտուց: Երբ երկար ժամանակ չափից շատ հարմարավետ ենք զգում, նշանակում է՝ մենք չենք աճում: Եթե զգում ես, որ քո սրտում ինչ-որ անհասկանալի բան է կատարվում, պարզապես հարցրու Աստծուց, թե ինչ է կատարվում, և համբերատար սպասի՛ր Նրա պատասխանին:

Այն ժամանակը, որ անցկացնում ենք Աստծո հետ, խիստ կարևոր է մեր աճի և հասունության համար, բայց չենք կարող շարունակ անել նույն բաները և վայելել այն, ինչ Աստված պատրաստել է մեզ համար: Իմ կյանքում եղավ մի ժամանակաշրջան, երբ Աստվածաշնչի ընթերցումը հոգնեցուցիչ դարձավ, և Աստված առաջնորդեց ինձ մի քանի ամիս կարդալ Սուրբ գրքի մեկ այլ թարգմանություն: Այդ փոքրիկ փոփոխությունը բերեց աճ, որովհետև ես այլ կերպ նայեցի հանգամանքներին: Սատանան փորձում էր դատապարտել ինձ, որովհետև չէի ցանկանում Աստվածաշունչ կարդալ, բայց Աստված այնպես արեց, որ սկսեցի կարդալ Աստվածաշնչի մեկ այլ թարգմանություն: Մի օր, գրասենյակում, երբ փորձում էի կարդալ և աղոթել, փոքր ինչ ձանձրույթ զգացի, ուստի տեղափոխվեցի մեկ ուրիշ աթոռի վրա ու հանկարծ տեսա բաներ, որոնք մինչ այդ չէի նկատել, թեև տարիներ շարունակ դրանք եղել էին իմ գրասենյակում: Մի փոքր տեղափոխությունը ստիպեց ինձ նոր տեսանկյունից նայել շրջապատող իրերին: Օգտագործելով այս օրինակը՝ Աստված ինձ հոգևոր դաս տվեց:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Մի՛ վախեցիր աթոռդ տեղափոխելուց:

Վստահիր Աստծուն ամբողջությամբ

«Քեզ եմ վստահում, ո՛վ Տեր...» (ՍԱՂՄՈՍ 31.1):

Հիշում եմ այն ժամանակը, երբ Աստված հորդորում էր թողնել մշտական աշխատանքս, որով բավականաչափ գումար էի վաստակում: Նա խոսեց ինձ հետ. «Դու պետք է թողնես դա, մնաս տանը և պատրաստվես ծառայության»:

Ես անմիջապես չհնազանդվեցի, որովհետև վախենում էի թողնել աշխատանքս: Բացի այդ, ինչպե՞ս կարող էի հստակ իմանալ, որ լսում էի Աստծուց: Նա շարունակում էր այդ ուղղությամբ աշխատել ինձ հետ, ուստի փորձեցի գործարքի գնալ Նրա հետ. «Ես չեմ աշխատի ամբողջ դրույքով, բայց կաշխատեմ կես դրույքով»:

Ես սկսեցի աշխատել կես դրույքով, որովհետև վախենում էի Աստծուն լիովին վստահելուց: Դեյվն ու ես չունեինք այնքան եկամուտ, որքան՝ նախկինում, բայց պարզեցի, որ ավելի քիչ գումարով էլ կարող էինք ապրել: Մենք ստիպված էինք կրճատել մեր ծախսերը, բայց ի վիճակի էինք փակելու մեր հաշիվները: Ես ունեի ավելի շատ ժամանակ՝ ծառայությանը պատրաստվելու համար: Թվում էր՝ դա լավ ծրագիր էր, բայց Աստծո ծրագիրը չէր:

Ես հասկացա, որ Աստված չի ցանկանում «գործարքի» գնալ, և այդ ամենն ավարտվեց նրանով, որ ինձ ազատեցին աշխատանքից: Ես լավ աշխատող էի ու նախկինում երբեք աշխատանքից չէի ազատվել: Թեև ինձ դուր չէին գալիս այն հանգամանքները, որոնցում հայտնվել էի, սակայն, ի վերջո, հասա այնտեղ, որտեղ Աստված ցանկանում էր, որ լինեի. ես լիովին կախված էի Նրանից:

Չունենալով աշխատանք՝ ստիպված էի սովորել վստահել Աստծուն յուրաքանչյուր կարիքի համար: Վեց տարի շարունակ ամեն ամիս մենք աստվածային միջամտության կարիք ունեինք մեր հաշիվները փակելու համար, սակայն այդ ընթացքում ես շատ բան սովորեցի Աստծո հավատարմության մասին: Նա մշտապես մատակարարում էր մեզ, և այն, ինչ սովորեցինք մեր փորձառության միջոցով, հնարավորություն տվեց վստահելու Նրան այն միջոցների համար, որոնք այսօր անհրաժեշտ են միջազգային ծառայություն իրականացնելու համար. քաջալերում եմ քեզ լիովին վստահել Աստծուն և գործարքների չգնալ Նրա հետ, որովհետև դա ապարդյուն է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո հետ բանակցություններ վարելիս երբեք չենք հաղթում:

Ինչպես երեխա

«Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե՝ ով որ Աստծո արքայությունը չընդունի՝ ինչպես երեխա, նա չի մտնի նրա մեջ» (ՂՈՒԿԱՍ 18.17):

Աստված լսում է ամենահասարակ, ամենաթույլ աղաղակը և ընդունում ամենաանկեղծ խնդրանքները: Ես մեծացրել եմ չորս երեխա և այժմ ունեմ ինը թոռ, ու կարող եմ ասել, որ երեխաները երբեք ոչինչ *չեն* բարդացնում: Նրանք խնդիր չունեն քեզ հայտնելու, թե ինչ են ուզում, վազելու քո գիրկը, երբ վախենում են, կամ համբուրելու քեզ՝ առանց որևէ ակնհայտ պատճառի: Երբ նրանք ծնողներին հարց են տալիս, սպասում են պատասխանի: Նույն սպասումը մենք պետք է ունենանք, երբ խոսում ենք Աստծո հետ: Երեխաներն այնքան փորձառու չեն, որ վարպետորեն թաքցնեն իրենց տրամադրությունը կամ զգացմունքները, այդ պատճառով նրանց հետ հաղորդակցումը կարող է հեշտ և հանգստացնող լինել:

Հենց այդպես էլ Աստված է ցանկանում, որ լինենք՝ Իր հետ հաղորդակցվելիս: Մենք պետք է մոտենանք Աստծուն մանկական անկեղծությամբ և անհամբեր սպասենք, թե ինչ է Նա ասելու: Ինչպես երեխաներն ի բնե հակված են լիովին վստահելու իրենց ծնողներին, այնպես էլ մենք պետք է վստահենք Աստծո ձայնին և լինենք անմեղ, մաքուր և ազատ ամեն կասկածից: Երբ աղոթենք պարզ, մանկական հավատքով, կվերապրենք Աստծո հրաշագործ զորությունը և փոփոխություններ կտեսնենք մեր կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ այսօր աղոթես, Աստծուն կոչիր «Հայրիկ» և լիովին ապավինիր Նրան:

Ստեղծիր ճիշտ մթնոլորտ

«Եթե կարելի է, որքան ձեզնից է կախված, բոլոր մարդկանց հետ խաղաղություն ունեցեք» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.18):

Եթե ցանկանում ենք լսել Աստծուց, պետք է ստեղծենք Նրա ներկայությանը նպաստող մթնոլորտ: Մթնոլորտ ասելով՝ նկատի ունեմ այն միջավայրը կամ իշխող տրամադրությունը, որ շրջապատում է մեզ: Մթնոլորտը ստեղծվում է վերաբերմունքի միջոցով, և վերաբերմունքը կամ նպաստում, կամ խոչընդոտում է Աստծո հետ ունեցած մեր փոխհարաբերությանը: Աստծուց լսելու համար պետք է պահպանենք խաղաղության մթնոլորտ, որը հնարավոր է ապահովել առ Աստված ունեցած հավատքով և մեզ նեղացնողներին ներելու պատրաստակամությամբ:

Երբ մթնոլորտը հագեցած է վիճաբանությամբ, մենք զգում ենք դա: Նմանապես, կարող ենք խաղաղություն զգալ այնտեղ, որտեղ մարդիկ և իրավիճակները խաղաղ են: Մենք պետք է աշխատենք ստեղծել և պահպանել խաղաղ մթնոլորտ ամենուրեք, որովհետև խառնաշփոթի մեջ հնարավոր չէ լսել Աստծուն: Կռվի և գժտության վերաբերմունքը չի ստեղծում մթնոլորտ, որտեղ Աստված կխոսի մեզ հետ: Ընդհակառակը, Նա կխոսի մեզ հետ խաղաղ մթնոլորտում, որտեղ մեր սրտերն ու մտքերը համակված են խաղաղությամբ և սիրով:

Աստծո ներկայության լիությունը վայելելու համար մեր շուրջը և մեր սրտերում պետք է մշտապես պահպանենք այնպիսի մթնոլորտ, որը հնարավորություն կտա պատվելու Նրան: Եթե ուզում ենք լսել Աստծուց, ամեն բացասական վերաբերմունք պետք է հնազանդեցնենք Հիսուս Քրիստոսի իշխանությանը, որպեսզի կարողանանք ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ կզգանք Նրա ներկայությունը և կլսենք Նրա ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դարձիր «խաղաղարար»:

Ընկերությունը մեզ համարձակ է դարձնում

«Ուրեմն, համարձակությունով մոտենանք շնորհքի աթոռին, որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք պատշաճ ժամանակին օգնելու» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4.16):

Երբ հասկանում ենք Աստծո հետ մեր ընկերության նշանակությունը և տեսնում մեզ՝ որպես Նրա ընկերների, ավելի համարձակ, հավատքով լեցուն և Հոգով առաջնորդված աղոթքներ ենք անում: Ղուկասի 11-րդ գլխում Հիսուսը մի պատմություն պատմեց անմիջապես այն բանից հետո, երբ աշակերտներին սովորեցնում էր, թե ինչպես պետք է աղոթել՝ օրինակ բերելով «Տերունական աղոթքը»: Մենք կարող ենք ենթադրել, որ Նա օգտագործում էր այդ պատմությունը, որպեսզի լուսաբաներ աղոթքի վերաբերյալ Իր տված դասը: Նա ասաց. «...Ձեզնից ո՞վ է, որ բարեկամ ունենա, և կեսգիշերին նրա մոտ գնա և ասի. «Բարեկա՛մ, ինձ երեք հաց փոխ տուր, որովհետև իմ բարեկամն ինձ մոտ եկավ ճանապարհից, և ես բան չունեմ, որ նրա առջև դնեմ»: Եվ նա պատասխանի ներսից և ասի. «Մի՛ հոգնեցրու ինձ. դուռն արդեն փակված է, և երեխաներս ինձ հետ անկողնում են: Չեմ կարող վեր կենալ և տալ քեզ»: Ասում եմ ձեզ, եթե վեր էլ չկենա և նրան տա՝ նրա բարեկամ լինելու համար, սակայն նրա թախանձանքի համար վեր կկենա և կտա, ինչ էլ որ պետք լինի» (Ղուկաս 11.5-8):

Ուշադրություն դարձրեք՝ այն մարդը, որ հացի կարիք ուներ, ստացավ այդ հացը միայն իր «թախանձանքի համար»: Մենք կարող ենք թախանձել միայն մեր ընկերներին, որովհետև ընկերությունը մեզ համարձակ է դարձնում, և որքան մեր ընկերությունն Աստծո հետ խորամուխ է լինում և ամրապնդվում է, այնքան ավելի համարձակ և վստահ ենք դառնում Նրան մոտենալիս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ինչպես կթախանձեիր քո ամենամոտ ընկերոջը. նույն ջերմեռանդությամբ և մտերմությամբ աղոթի՛ր Աստծուն:

Բաց մի՛ թող քո ժամադրությունը

«Եվ դուք Ինձ կորոնեք և կգտնեք, որովհետև Ինձ կխնդրեք ձեր ամբողջ սրտով» (ԵՐԵՄԻԱ 29.13):

Հնարավոր է, որ մենք ստիպված լինենք լրջորեն պայքարել մեր մարմնի հետ, որպեսզի հակառակվենք պասիվության ոգուն, որը փորձում է խանգարել մեզ աճելու Աստծո գիտության մեջ: Աստծո հետ ժամանակ անցկացնելու պարտավորվածությունը նույնքան լուրջ է, որքան ցանկացած պարտավորվածություն, որ ստանձնում ենք:

Եթե երիկամային հիվանդության պատճառով ես դիալիզի կարիք ունենայի և ստիպված լինեի շաբաթական երկու անգամ առավոտյան ժամը 8:00-ին լինել հիվանդանոցում, ապա ոչ մի հրավեր չէի ընդունի այդ ընթացքում որևէ այլ բան անելու համար, որքան էլ հրապուրիչ դա թվար, կամ որքան էլ ցանկանայի անել դա: Ես քաջ կգիտակցեի, որ իմ կյանքը կախված էր դիալիզի ընդունումից: Մենք նույնպիսի լրջությամբ պետք է վերաբերվենք այն ժամանակին, որ անցկացնում ենք Աստծո հետ: Մեր կյանքի որակը մեծապես կախված է Աստծո հետ անցկացրած ժամանակից, այնպես որ այդ ժամանակը պետք է առաջնահերթ տեղ ունենա մեր անելիքների ցանկում:

Երբեմն անկազմակերպ ենք դառնում Աստծո հետ ժամադրության հարցում, որովհետև գիտենք, որ Նա միշտ հասանելի է: Մենք գիտենք, որ Նա միշտ պատրաստ է օգնել մեզ, ուստի կարող ենք բաց թողնել Նրա հետ նախատեսած մեր հանդիպումը կամ փոփոխություն կատարել մեր ժամանակացույցում, որպեսզի կարողանանք անել այն, ինչ առավել հրատապ է թվում: Եթե իսկապես առաջնահերթություն տանք այն ժամանակին, որ անցկացնում ենք Աստծո հետ, ապա չենք բախվի այդքան շատ «հրատապ» իրավիճակների, որոնք գողանում են մեր ժամանակը:

Երբ ժամանակ ենք անցկացնում Աստծո հետ, նույնիսկ եթե չենք զգում Նրա ներկայությունը կամ չենք կարծում, թե որևէ բան ենք սովորում, միևնույն է, ցանում ենք բարի սերմեր, որոնք բարի պտուղ են բերում մեր կյանքում: Ցուցաբերելով հաստատակամություն՝ դու ավելի լավ կհասկանաս Աստծո Խոսքը, մշտապես կվայելես Նրա հետ հաղորդակցումը, կխոսես Նրա հետ և կլսես Նրա ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. բաց մի՛ թող քո ժամադրություններն Աստծո հետ:

Աղոթիր և հնազանդվիր

«Դու փվել ես ինձ լսելու և հնազանդվելու ընդունակություն...» (ՍԱՂՄՈՍ 40.6):

Տարիներ շարունակ ցանկանում էի, որ Աստված խոսեր ինձ հետ, բայց հնազանդության հարցում ընտրովի վերաբերմունք էի ցուցաբերում: Ես պատրաստ էի անել այն, ինչ Նա ասում էր, եթե դա հեշտ էր և, իմ կարծիքով, լավ գաղափար էր: Իսկ եթե ինձ դուր չէր գալիս այն, ինչ լսում էի, վարվում էի այնպես, կարծես այդ խոսքերն Աստծուց չէին:

Որոշ բաներ, որ Աստված ասում է մեզ, կարող են քաջալերող լինել: Բայց Նրա ասածներից ոչ բոլորն են մեզ հրճվանք պատճառում: Սա չի նշանակում, որ դրանք չեն գործի մեր օգտին, եթե հնազանդվենք: Օրինակ, եթե Աստված քեզ հորդորում է ներողություն խնդրել ինչ-որ մեկից նրա հետ կոպիտ վարվելու համար, ապա քո պատասխանը՝ թե նա նույնպես կոպիտ է վարվել քեզ հետ, որևէ օգուտ չի տա: Եթե Աստծո առջև պատճառաբանություններ ես բերում, ուրեմն չես հնազանդվում Նրան, թեկուզ աղոթել ես և նույնիսկ լսել ես Նրա ձայնը:

Երեք տասնամյակից ավելի քայլելով Աստծո հետ և լինելով ծառայության մեջ՝ պետք է ասեմ, որ ես ու Դեյվը հաջողության հասել ենք այն պարզ պատճառով, որ սովորել ենք աղոթել, լսել Աստծուց, ապա անել այն, ինչ Նա ասում է: Տարիների ընթացքում փնտրելով Աստծուն և ջանասիրաբար անելով այն, ինչ Նա դրել է իմ սրտում՝ կարող եմ ասել, որ ամեն ինչից առավել ես պարզապես աղոթել եմ և հնազանդվել: Միշտ չէ, որ հեշտությամբ եմ արել դա, բայց արդյունքները սպասել չեն տվել:

Եթե ուզում ես, որ Աստծո ծրագիրն իրականանա քո կյանքում, կարող եմ տալ ամենապարզ դեղատոմսը. աղոթիր և հնազանդվիր: Աստված տվել է քեզ ընդունակություն անելու երկուսը միաժամանակ, և եթե մշտապես հետևես այդ դեղատոմսին, կիրականացնես Նրա կամքը քո կյանքի համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. աղոթիր, հոժարությամբ լսիր և հնազանդվիր:

Աստված ասում է. «Դու կարող ես վստահել Ինձ»

«…Երանելի է այն մարդը, որ Տիրոջից վախենում է… Չար համբավից չի վախենա. նրա սիրտը պատրաստ է, որ Տիրոջը հուսա» (ՍԱՂՄՈՍ 112.1,7):

Երբեմն Աստված խոսում է մեզ հետ՝ լցնելով մեր սիրտը խաղաղությամբ: Դու կարող ես բախվել այնպիսի իրավիճակների, երբ բոլորը հորդորում են քեզ վստահել Աստծուն և խաղաղություն պահպանել, բայց դու չգիտես ինչպես դա անել: Վախերը ճնշում, թուլացնում և սպառնում են քեզ: Ընկերներն ասում են՝ ամեն բան լավ կլինի, բայց քեզ համար դժվար է հավատալ, մինչև Աստված չի խոսում քո սրտում. «Դու կարող ես վստահել Ինձ. Ես հոգ կտանեմ: Ամեն բան իսկապես լավ կլինի»:

1989 թվականին այցելեցի բժշկի՝ հերթական ստուգման, որի ժամանակ իմ մարմնում հայտնաբերվեց քաղցկեղի արագ աճող տեսակ, և բժիշկը խորհուրդ տվեց անհապաղ վիրահատվել:

Լուրն իմանալուն պես սկսեցի պայքարել վախի դեմ: Ես դժվարությամբ էի քնում, և լինում էին ժամանակներ, երբ վախն այնպես ուժգին էր համակում ինձ, որ թվում էր՝ ուր որ է, կընկնեմ: Որքան էլ իմ ընտանիքի անդամները կամ ընկերները հուսադրում էին ինձ, միևնույն է, վախը չէր հեռանում, մինչև որ մի օր՝ գիշերվա ժամը 3:00-ին, Աստված խոսեց իմ սրտում. «Ջո՛յս, դու կարող ես վստահե՛լ Ինձ»:

Դրանից հետո այլևս չունեցա այդ նողկալի վախի զգացումը: Ես գիտակցաբար սպասում էի հետազոտության արդյունքներին, սակայն վախեցած չէի: Գիտեի, որ Աստծո ձեռքերում եմ, և ինչ էլ լինի, Նա հոգ կտանի ինձ համար:

Ինչպես պարզվեց, հետագա բուժման կարիք չունեցա: Վախկոտ լինելուց ես դարձա գոհացող, և սա այն է, ինչ կարող է տեղի ունենալ ցանկացած իրավիճակում, երբ սովորում ենք լսել Աստծո ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. վստահի՛ր Աստծուն, Նա հուսախաբ չի անի:

Պարզապես ժամանակ տրամադրիր

«...Ինձ իմացրու՛ Քո ճանապարհները, որ ճանաչեմ Քեզ...» (ԵԼԻՑ 33.13):

Երբ ժամանակ ես անցկացնում Աստծո հետ, դա ակնհայտ է դառնում: Դու ավելի հանդարտ և ուրախ ես լինում, քեզ հետ ավելի հեշտ է հաղորդակցվել, և դու կայուն ես մնում յուրաքանչյուր իրավիճակում: Աստծո հետ որակյալ ժամանակ անցկացնելը մի ներդրում է, որը մեծ օգուտներ է բերում: Սկսում ես հասկանալ, թե ինչն է Նրան դուր գալիս, և ինչն է վիրավորում: Ինչպես ընկերների հետ փոխհարաբերություններում, որքան շատ ժամանակ ես անցկացնում Աստծո հետ, այնքան նմանվում ես Նրան:

Ժամանակ անցկացնելով Աստծո հետ՝ ավելի զգայուն ես դառնում այն սիրո հանդեպ, որ Նա ցանկանում է ցուցաբերել քո և ուրիշների նկատմամբ: Քո խղճմտանքը զգուշացնում է քեզ, երբ որևէ մեկի հետ խոսում ես այնպես, որ դուր չի գալիս Աստծուն: Քո սիրտը վշտանում է, երբ վշտանում է Նա, և դու անմիջապես աղոթում ես. «Օ՜, Աստվա՛ծ, ներողությո՛ւն»: Շուտով ցանկանում ես ներողություն խնդրել այն մարդուց, ում վիրավորել ես, և հասկանում ես, որ «ներողություն, ես մտադիր չէի քեզ ցավեցնել» խոսքերն այդքան էլ դժվար չէ արտաբերել:

Երբ Աստված Մովսեսին ասաց, որ նա շնորհք է գտել Իր առջև (տե՛ս Ելից 33.12), Մովսեսը հասկացավ, որ կարող էր խնդրել այն, ինչ սիրտը ցանկանար:

Մովսեսը պատասխանեց, որ ցանկանում է մտերմորեն ծանոթանալ Աստծո հետ: Մովսեսը տեսել էր, թե ինչպես էր Աստված պատմության մեծագույն հրաշքները գործել, սակայն ամենից առավել նա ցանկանում էր ավելի խորը ճանաչել Աստծուն:

Ես աղոթում եմ, որ Աստծուն ճանաչելը լինի քո սրտի փափագը: Դու կարող ես ճանաչել Նրան և լսել Նրա ձայնն այնքան հստակ և այնքան անմիջական, որքան կցանկանաս: Դրա համար անհրաժեշտ է ժամանակ անցկացնել Նրա հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված չունի սիրեցյալներ, բայց ունի մտերիմներ:

Աստված խոսում է, երբ մենք երկրպագում ենք

«Եկե՛ք երկրպագություն անենք և երեսի վրա ընկնենք. ծունր դնենք մեզ ստեղծող Տիրոջ առջև [երկյուղած փառաբանությամբ և աղաչանքով]» (ՍԱՂՄՈՍ 95.6):

Ես հավատում եմ, որ երկրպագությունը ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որտեղ Աստված կարող է խոսել մեզ հետ: Դժվար է սահմանել, թե ինչ է երկրպագությունը: Երկրպագությունն ավելի շատ այն մասին է, թե Ով է Աստված, քան այն մասին, թե ինչ է Նա անում մեզ համար: Ճշմարիտ երկրպագությունը բխում է հոգու խորքից, այն թանկ է և սքանչելի: Երկրպագության միջոցով մենք փորձում ենք արտահայտել մեր զգացմունքներն Աստծո հանդեպ: Այն մեր սրտի արձագանքն է դեպի Տերը, Նրա հանդեպ մեր սիրո, երախտագիտության և նվիրվածության արտահայտությունը, որը դժվար է ձևակերպել բառերով: Մարդկային լեզուն բավականաչափ հարուստ չէ, որ նկարագրի ճշմարիտ երկրպագությունը: Ըստ էության, երկրպագությունն այնքան անձնական է և այնքան խորը, որ գուցե նույնիսկ հարկ չկա փորձելու տալ դրա սահմանումը:

Երկրպագությունն ավելին է, քան երգեր երգելը: Իրականում, ճշմարիտ երկրպագությունը, նախևառաջ, սրտի և մտքի վիճակ է: Մենք կարող ենք ջերմեռանդորեն երկրպագել Աստծուն՝ առանց որևէ նոտա երգելու: Երկրպագությունը ծնվում է մեր սրտում, այն լցնում է մեր միտքը, ապա արտահայտվում մեր շուրթերի և մարմնի միջոցով: Եթե մեր սիրտը համակված է Աստծո հանդեպ երկյուղածությամբ, մենք կցանկանանք երկրպագել Նրան՝ երգելով, պարելով, ծափ տալով կամ ձեռքերը բարձրացնելով: Կարող ենք նաև ակնածանքով լռել և հանդարտ մնալ Աստծո առջև: Հնարավոր է նաև՝ ցանկություն ունենանք զոհաբերություն կատարելու կամ այլ կերպ արտահայտելու մեր սերն Աստծո հանդեպ: Սակայն այս գործողություններն անիմաստ են Աստծո համար և ընդամենը ձևականություն են, եթե չեն կատարվում ճիշտ սրտով:

Քաջալերում եմ քեզ այսօր անկեղծորեն երկրպագել Աստծուն: Արա՛ դա՝ սիրուց մղված, ու մի՛ զարմացիր, եթե Աստված խոսի քեզ հետ, մինչ դու երկրպագում ես Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երկրպագի՛ր Աստծուն՝ անկեղծորեն երախտապարտ լինելով Նրա Ով լինելու համար:

Հասարակ արտոնություն

«Տիրոջ օրենքը անարատ է, հանգստացնում է հոգին. Տիրոջ վկայությունը ճշմարիտ է, իմաստուն է անում պարզամիտին» (ՍԱՂՄՈՍ 19.7):

Ես չեմ կարող պատկերացնել ավելի բարձր պատիվ, քան այն, երբ կարող ես խոսել Աստծո հետ և լսել Նրան: Ես հավատում եմ, որ աղոթքը մեր կյանքի մեծագույն արտոնությունն է: Դա *պարտադրանք* չէ, այլ ընձեռված *հնարավորություն:* Աղոթքը այն միջոցն է, որով համագործակցում ենք Աստծո հետ, որպեսզի իրականանան Նրա ծրագրերն ու նպատակները մեր և նրանց կյանքում, ում սիրում ենք: Դրա միջոցով մենք՝ մարդկային արարածներս, կարողանում ենք մտնել Աստծո փառահեղ ներկայության մեջ: Աղոթքը հնարավորություն է տալիս կիսելու մեր սրտերը Նրա հետ, լսելու Նրա ձայնը և բացահայտելու ու վայելելու այն հրաշալի բաները, որ Նա պատրաստել է մեզ համար: Աստծո հետ հաղորդակցումը, հիրավի, ամենամեծ արտոնությունն է, որի մասին կարող եմ մտածել, բայց այս սուրբ ու վսեմ գործը նաև ամենահասարակ արտոնությունն է, որի մասին ես գիտեմ:

Ես չեմ հավատում, որ Աստծո հետ խոսելը կամ Նրա ձայնը լսելը պետք է բարդ լինի: Հենց սկզբից Աստված նախատեսել էր, որ աղոթքը լինի դյուրին և բնական ապրելակերպ, որի միջոցով կարող ենք շուրջօրյա կապ հաստատել Նրա հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ աղոթքը օրվա ընթացքում դառնա նույնքան բնական և նույնքան հասարակ, որքան շնչառությունը:

Գործնական կիրառությունը մղում է կատարելության

«Ձեր Եհովա Աստծուն հետևեք և Նրանից վախեցեք...և Նրա ձայնին լսեք» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 13.4):

Երբ սկսում ենք ականջ դնել Աստծուն և լսել Նրանից, կարևոր է հնազանդվել այն ամենին, ինչ Նա ասում է: Հնազանդությունը բարձրացնում է Նրա հետ մեր փոխհարաբերության որակը և ամրացնում մեր հավատքը: Կարող ենք ասել, որ գործնական կիրառությունը մղում է կատարելության, երբ խոսքը վերաբերում է Աստծուն լսելուն և հնազանդվելուն: Այլ խոսքով՝ որքան շատ փորձառություն ունենանք, այնքան ավելի վստահ կդառնանք: Աստծո առաջնորդությանը լիովին հնազանդվելու համար պետք է հմտանանք հնազանդության մեջ: Թեև գիտենք, որ Աստծո ճանապարհները կատարյալ են, և Նրա ծրագրերը միշտ իրականանում են, երբեմն մենք գործում ենք՝ անտեղյակ Նրա խնդրանքներին, որոնք մեզնից որոշակի զոհ են պահանջում: Երբեմն էլ չափազանց զգուշանում ենք որևէ բան ձեռնարկելուց, որովհետև վախենում ենք, որ գուցե հստակ չենք լսում Աստծուց:

Մի՛ վախեցիր զոհաբերելուց կամ սխալվելուց: Կյանքում կան շատ բաներ, որոնք ավելի վատ են, քան սխալվելը: Հիսուսն ասաց. «Եկ Իմ ետևից»: Ես համոզված եմ, որ երբ մենք անում ենք լավագույնը Աստծուց լսելու համար, այնուհետև պետք է «քայլ անենք և պարզենք»՝ իսկապե՞ս լսում ենք Նրա ձայնը, թե՞ ոչ: Ամբողջ կյանքում վախի պատճառով ետ քաշվելով՝ մենք երբեք չենք կարողանա զարգացնել Աստծուց լսելու մեր ունակությունը:

Նա չասաց. «Դո՛ւ առաջնորդիր, իսկ Ես կհետևեմ քեզ»: Ես հասկացել եմ, որ ավելի լավ է անմիջապես անել այն, ինչ Աստված ասում է, որովհետև հակառակ դեպքում մենք կապրենք թշվառ կյանքով:

Երբ մեր երեխաները սովորում են քայլել, մենք չենք բարկանում, երբ ընկնում են: Մենք հասկանում ենք, որ նրանք սովորում են, և օգնում ենք: Նույնկերպ Աստված է վարվում. Նա քեզ կսովորեցնի լսել Իր ձայնը, եթե քայլես հավատքով և չվախենաս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Լսի՛ր, զանազանի՛ր և համարձակ հնազանդվի՛ր:

Աստված խոսում է տարբեր ձևերով

«…Ես, որ խոսում եմ արդարությունով…» (ԵՍԱՅԻ 63.1):

Այսօրվա խոսքում Աստված հռչակում է, որ Ինքը խոսում է, և երբ խոսում է, արդարությունով է խոսում: Մենք միշտ կարող ենք վստահ լինել, որ այն, ինչ Նա ասում է, արդար է: Աստված խոսում է մեզ հետ բազմաթիվ ձևերով, այդ թվում՝ Իր Խոսքով, բնության միջոցով, մարդկանց միջոցով, հանգամանքների միջոցով, խաղաղության միջոցով, իմաստության միջոցով, գերբնական միջամտությամբ, երազներով, տեսիլքներով և, ինչպես ոմանք են ասում, «ներքին վկայությամբ», որը լավագույնս կարելի է նկարագրել իբրև սրտի խորքում եղած «գիտություն»: Նա խոսում է նաև, ինչպես Աստվածաշնչում է գրված, «մեղմ ու բարակ ձայնով», որն, իմ կարծիքով, նույնպես վերաբերում է ներքին վկայությանը:

Աստված խոսում է նաև խղճմտանքի միջոցով, մեր ցանկությունների միջոցով և լսելի ձայնով, բայց հիշի՛ր, երբ Նա խոսում է, արդարություն է խոսում, ու երբեք չի հակասում Իր գրավոր Խոսքին: Մենք հազվադեպ ենք ֆիզիկապես լսում Աստծո ձայնը, չնայած այդպես լինում է: Ես հստակ լսել եմ Նրա ձայնը երեք թե չորս անգամ: Դեպքերից երկուսը եղել է քնած ժամանակ: Առաջին անգամ ես արթնացա Նրա ձայնից՝ լսելով իմ անունը: Ես միայն լսեցի «Ջոյս» անունը, բայց հստակ գիտեի, որ Աստված է խոսում: Նա չասաց, թե ինչ էր ուզում, սակայն ես բնազդաբար հասկացա, որ կանչում էր ինձ՝ Իր համար ինչ-որ յուրահատուկ բան անելու, թեև տարիներ շարունակ հստակ չէի հասկանում, թե ինչ պետք է անեի:

Ուզում եմ քաջալերել. խնդրի՛ր Աստծուց, որ օգնի քեզ լսելու Իր ձայնը ցանկացած ձևով, որ Նա կընտրի քեզ հետ խոսելու համար: Նա սիրում է քեզ. Նա ունի բարի ծրագրեր քո կյանքի համար, և Նա ցանկանում է խոսել քեզ հետ այդ մասին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված խոսում է տարբեր ձևերով. պարզապես հիշի՛ր, Նա երբեք չի հակասի Աստվածաշնչին:

Աստծուց տրված ցանկություններ

«Ցնծա՛ Տիրոջով, և Նա կտա քեզ քո սրտի ուզածները» (ՍԱՂՄՈՍ 37.4):

Աստված խոսում է մեզ հետ նաև մեր սրտի սրբագործված ցանկությունների միջոցով: Աստված ճիշտ ցանկություններ է դնում մեր սրտում, ապա իրականացնում է: Հիշում եմ, մի անգամ տնական դդմիկով հաց էի ուզում, բայց այն պատրաստելու համար ո՛չ տաղանդ ունեի, ո՛չ էլ ժամանակ: Ես պարզապես ասացի. «Տե՛ր, թարմ դդմիկով հաց եմ ուզում», և այլևս չմտածեցի այդ մասին: Գրեթե մեկ շաբաթ անց, մի կին, ով ոչինչ չգիտեր իմ ցանկության մասին, ինձ մի տուփ տվեց: Ես բացեցի և ի՞նչ տեսա. տնական դդմիկով հաց: Աստված հաճույք է ստանում, երբ մեզ համար փոքր ու մեծ բաներ է անում, և մենք միշտ պետք է գնահատենք դա:

Մենք պետք է խնդրենք Աստծուց տալ մեզ սրբացված կամ սուրբ ցանկություններ: Սովորաբար մենք ցանկանում ենք այնպիսի բաներ, ինչպիսիք են՝ հաջողությունը, ֆինանսները, գեղեցիկ տները, լավ փոխհարաբերությունները, սակայն պետք է ունենանք նաև հոգևոր ցանկություններ: Մենք պետք է փափագենք խորությամբ և մտերմորեն ճանաչել Աստծուն, պետք է մշտապես ցուցաբերենք Հոգու պտուղը, հատկապես՝ սերը, պետք է ծառայենք Աստծուն այնպես, որ Նա փառավորվի, և պետք է մշտապես հնազանդ լինենք Նրան: Եկե՛ք խնդրենք Աստծուց, որ հեռացնի մարմնական ցանկությունները և տա մեզ սրբացված ցանկություններ:

Աստված մեր ներսում դնում է ցանկություններ, որոնք Նրա արդարությունը, խաղաղությունն ու ուրախությունն են բերում մեր կյանքի մեջ (տես Հռոմեացիների 14.17), և այդ ցանկությունները երբեք չեն հակասում Նրա Խոսքին:

Սխալ ցանկությունները տանջում և անհամբեր են դարձնում մեզ, բայց երբ ունենք սրբացված ցանկություններ, մենք պատրաստակամորեն սպասում ենք Աստծուն՝ վստահելով Նրա ճանապարհներին և Նրա ժամանակներին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դի՛ր քո ցանկություններն Աստծո առջև, աղոթի՛ր դրանց համար և վստահի՛ր Աստծուն, որ Նա ճիշտ ժամանակին կիրականացնի, եթե անհրաժեշտ լինի:

Սպասիր խաղաղության

«Թո՛ղ լսեմ, թե ինչ կխոսի Տեր Աստված, Նա խաղաղություն կխոսի Իր ժողովրդի... հետ...» (ՍԱՂՄՈՍ 85.8):

Երբ Աստված խոսում է, ներքին խաղաղություն է տալիս մեզ՝ հաստատելով, որ մեր լսած ուղերձն իսկապես Իրենից է: Նույնիսկ եթե Նա խստորեն հանդիմանում է մեզ, Նրա Ճշմարտության Հոգին լցնում է մեզ մխիթարության հանգստացնող զգացումով:

Երբ մեզ հետ խոսում է մեր թշնամին՝ խաբեբան, մեր սիրտը չի լցվում խաղաղությամբ: Երբ փորձում ենք ինչ-որ հարցեր լուծել մեր հասկացողությամբ, մենք չենք կարող խաղաղություն ունենալ, որովհետև «մարմնի խորհուրդը (որը զգացողությունն ու բանականությունն է՝ առանց Սուրբ Հոգու) մահ է (մահ, որը ներառում է մեղքի հետևանքով առաջացող բոլոր տառապանքները՝ թե՛ այստեղ, թե՛ հանդերձյալ կյանքում): Իսկ (Սուրբ) Հոգու խորհուրդը՝ կյանք և խաղաղություն (թե՛ այժմ, թե՛ հավիտյան)» (Հռոմեացիների 8.6):

Ամեն անգամ, երբ ուզում ես հավաստիանալ, որ լսում ես Աստծուց, կամ որոշում ես կայացնում՝ հիմնվելով այն խոսքերի վրա, որոնք, հավատում ես, որ լսել ես Նրանից, օգտագործի՛ր խաղաղության նժարը: Եթե այն, ինչ լսել ես, չի բերում խաղաղություն, ոչինչ մի՛ ձեռնարկիր: Հարկ չկա ուրիշներին բացատրելու, թե ինչու չունես խաղաղություն այդ հարցում. հնարավոր է՝ ինքդ էլ չիմանաս պատճառը: Դու կարող ես պարզապես ասել. «Այս պահին ես խաղաղություն չունեմ, հետևաբար խելամիտ չէ որևէ բան ձեռնարկել»:

Մշտապես սպասի՛ր, մինչև ներքին խաղաղություն կունենաս անելու այն, ինչը, կարծում ես, որ Աստված կարգադրել է՝ անես: Խաղաղությունը հաստատում է, որ իսկապես լսում ես Աստծուց, և ճիշտ ժամանակն է գործի անցնելու: Խաղաղությունը լցնում է մեզ վստահությամբ և հավատքով, որոնք հնարավորություն են տալիս հնազանդվելու Աստծո հրահանգներին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սպասի՛ր խաղաղության, մինչ կգործես:

Մշտապես լցվի՛ր Հոգով

«Եվ մի՛ արբեք գինով, որ նրանում անառակություն կա, այլ մշտապես լցվե՛ք և բորբոքվե՛ք Հոգով» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5.18):

Քեզ համար կարևոր է իմանալ, որ Աստծո Խոսքում քեզ պատվիրվում է «մշտապես լցվել Հոգով», այսինքն՝ լցվել ամեն ժամանակ:

Դա անելու համար անհրաժեշտ է Աստծուն հատկացնել առաջին տեղը մեր կյանքում: Հաճախ սա պահանջում է կարգապահություն, որովհետև բազմաթիվ այլ բաներ խլում են մեր ժամանակը և ուշադրությունը: Այո՛, մենք ունենք շատ ցանկություններ և կարիքներ, սակայն Աստծուց ավելի կարևոր ոչինչ չկա: Մենք մշտապես լցվում ենք Աստծո ներկայությամբ, երբ ամեն օր փնտրում ենք Նրան՝ Խոսքն ուսումնասիրելու և Նրա հետ ժամանակ անցկացնելու միջոցով: Մեզ օգնում է նաև երախտագիտության վերաբերմունքը, ինչպես նաև մտքերը ճիշտ ուղղությամբ վերահսկելու կարողությունը:

Սուրբ Հոգին երբեք չի հեռանում. երբ Նա գրավում է Իր տեղը, բնակություն է հաստատում այնտեղ և հրաժարվում է հեռանալուց: Բայց կարևոր է, որ մենք մշտապես բոցավառվենք հոգևոր ձգտումներով: Այն, ինչ տաք է, կսառչի, եթե կրակը մարի:

Իմ կյանքում եղավ մի շրջան, երբ վեց ամիս շարունակ Աստված արգելեց ինձ խնդրել որևէ բան՝ բացի Իր հետ առավել խորը և մտերիմ փոխհարաբերությունից: Դա մի ժամանակաշրջան էր, երբ ես սովորում էի մոտենալ Աստծուն և խորությամբ ճանաչել Նրան: Ամեն անգամ, երբ ասում էի. «Աստվա՛ծ, ես կարիք ունեմ…», նույն պահին հիշում էի Նրա ասածը և կանգ առնում՝ նախադասությունն ավարտելով «ավելի ու ավելի Քո կարիքն ունեմ» խոսքերով:

Աստված տալիս է մեզ այն, ինչի կարիքն ունենք: Նա գիտի, թե ինչ է մեզ պետք, նախքան կխնդրենք: Եթե մենք զմայլվենք Տիրոջով և մշտապես փափագենք Նրան, Նա էլ կիրականացնի մեր սրտի ցանկությունները: Քաջալերում եմ քեզ այսօր և ամեն օր լցվել Սուրբ Հոգով և ամեն ինչից առավել ցանկանալ Աստծուն: Նա հոգ կտանի մնացածի համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աշխատի՛ր մշտապես լցվել Սուրբ Հոգով:

Օգնությունը հասանելի է

«Եվ ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ (Խորհրդատու, Օգնական, Բարեխոս, Պաշտպան, Զորացնող և Հենարան) կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.16):

Շատերն ընդունել են Հիսուսին՝ որպես Տիրոջ և Փրկչի: Նրանք կգնան Երկինք, բայց երբեք լիարժեք չեն օգտագործի այն հնարավորությունները, որ Սուրբ Հոգին տալիս է նրանց, կամ չեն ճաշակի այն հաջողության պտուղները, որ Աստված նախատեսել է նրանց համար: Պարզ ասած՝ շատերը ճանապարհ կընկնեն դեպի Երկինք, բայց չեն վայելի իրենց ճանապարհորդությունը:

Մենք հաճախ նայում ենք այն մարդկանց, որոնք ունեն հարստություն, դիրք, իշխանություն, և նրանց «հաջողակ» ենք համարում: Բայց ովքեր «հաջողակ» են համարվում, զուրկ են խաղաղությունից, ուրախությունից, բավարարված լինելուց և այլ ճշմարիտ օրհնություններից: Այսպիսի մարդիկ երբեք չեն սովորել լիովին կախված լինել Սուրբ Հոգու զորությունից:

Ինքնաբավ մարդիկ հաճախ կարծում են, որ Աստծուց կախվածությունը թուլության նշան է: Բայց ճշմարտությունն այն է, որ ապավինելով Սուրբ Հոգու կարողությանը՝ նրանք կարող են իրականացնել ավելին, քան երբևէ իրականացրել են սեփական ուժերով:

Աստված ստեղծել է մեզ այնպես, որ ուժեղ կողմերով հանդերձ ունենանք նաև տկարություններ և զգանք Նրա օգնության կարիքը: Մենք գիտենք, որ Աստված ցանկանում է օգնել մեզ: Դրա ապացույցը Աստվածային Օգնականն է՝ Սուրբ Հոգին, Ում Նա ուղարկել է բնակվելու մեր մեջ:

Հաճախ մենք անհարկի ջանք ենք գործադրում, որովհետև չենք ընդունում այն օգնությունը, որ հասանելի է մեզ: Ես քաջալերում եմ քեզ ապավինել Նրա՛ն, այլ ոչ թե քո ուժերին: Ինչի առջև էլ կանգնած լինես, հարկ չկա, որ միայնակ անցնես դրա միջով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քո ամենավատ օրն Աստծո հետ ավելի լավ է, քան ամենալավ օրն առանց Նրա: Սուրբ Հոգին այստեղ է, որ խոսի քեզ հետ և Իր օգնությունն առաջարկի քեզ:

Քո շուրթերով

«Մարդունն են սրտի փրամադրությունները, բայց Տիրոջից է լեզվի պատասխանը» (ԱՌԱԿԱՅ 16.1):

Երբեմն Աստված խոսում է մեզ հետ մեր շուրթերով: Ես հասկացա սա, երբ կանգնած էի մի կարևոր որոշման առջև և աստվածային պատասխանի կարիք ունեի, բայց կարծես չէի կարողանում հասկանալ, թե Աստված ուր էր առաջնորդում ինձ: Մտքերս խճճվում էին, և ես դոփում էի նույն տեղում, մինչև ընկերոջս հետ դուրս չեկա զբոսանքի:

Գրեթե մեկ ժամ մենք քննարկեցինք այդ հարցը՝ վայելելով թարմ օդը և միմյանց ընկերակցությունը: Դիտարկեցինք հնարավոր լուծումները և դրանց հավանական հետևանքները: Տարբեր կողմերից մեկնաբանեցինք իրավիճակը: Մինչ զրուցում էինք, հանկարծ սրտիս մեջ դրոշմվեց մի իմաստուն որոշում, որն անմիջապես դուրս եկավ իմ շուրթերից: Ես գիտեի, որ դա Տիրոջից էր: Դա իմ մտքի արգասիքը չէր: Որոշումը դուրս եկավ իմ հոգուց՝ ներսի մարդուց:

Իրականում ես չէի ցանկանում անել այն, ինչ պահանջում էր այդ որոշումը: Ես աշխատում էի համոզել Աստծուն, որ իմ իրավիճակին այլ լուծում տրվեր: Դժվար էր զանազանել Նրա ձայնը, քանի որ միտքս նախապես հակառակ էր Նրա ծրագրին: Կամակոր մտածելակերպը խաղաղության մեծ թշնամի է և կարող է խոչընդոտել Աստծուն լսելու մեր կարողությանը: Մենք պետք է պատրաստ լինենք մի կողմ դնել մեր ցանկությունները, հակառակ դեպքում, հնարավոր է՝ բաց թողնենք Նրա բերանից դուրս եկող խոսքը: Աստված միշտ գիտի, թե որն է մեզ համար լավագույնը, և մենք պետք է մեր մտքերը հնազանդեցնենք նրան, ինչ Նա մտածում է այս կամ այն իրավիճակի վերաբերյալ:

Աստված խոստանում է, որ եթե փնտրենք Իրեն, մեր բերանը կլցնի այն խոսքերով, որ պետք է խոսենք (տե՛ս Սաղմոս 81.10): Սա այն է, ինչ Նա արեց ինձ համար, և նույնը կանի քեզ համար, երբ շարունակես փնտրել Նրան և հնազանդվել Նրա ծրագրերին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր Աստծուց լցնել քո բերանը այն խոսքերով, որ պետք է խոսես այսօր:

Պահպանի՛ր զգայուն խղճմտանք

«Եվ Հոգին հայտնի ասում է, թե հետին ժամանակներում ոմանք հավատքից կհեռանան... ստախոսների կեղծավորությամբ, որոնց խղճմտանքը տաղված է» (Ա ՏԻՄՈԹԵՈՍ 4.1,2):

Այսօրվա սուրբգրային հատվածում խոսվում է մարդու «տաղված» կամ «այրված» խղճմտանքի մասին: Եթե վերքն այրում են, այն դառնում է սպիացած հյուսվածք, որն անկարող է որևէ բան զգալու: Նույնպես, երբ մարդկանց խղճմտանքը տաղվում է, այն կարծրանում և անզգայանում է: Տարիներ տևող անձնական ցավը և անհնազանդությունը կարող են փափկեցնելու փոխարեն քարացնել մեզ, բայց Աստծո շնորհքով կարող ենք փոխվել: Մենք ուզում ենք զգայուն լինել Աստծո հանդեպ, որպեսզի կարողանանք անմիջապես զգալ, երբ ցավեցնում ենք ուրիշներին կամ անհնազանդ լինում Աստծուն:

Խնդրի՛ր Աստծուց փափուկ սիրտ և զգայուն խղճմտանք, որպեսզի զգայուն լինես Նրա հանդեպ և այն աշխատանքի, որ Նա իրականացնում է քեզ հետ: Եթե գիտես մարդկանց, որոնց սրտերը քարացել են անձնական ցավից կամ Աստծո հանդեպ անհնազանդությունից, աղոթի՛ր նաև նրանց համար: Հրաշալի է, երբ կարողանում ենք անմիջապես հասկանալ, որ մեր վարքագիծը հաճելի չէ Աստծուն: Շնորհակա՛լ եղիր Աստծուց ամեն անգամ, երբ զգում ես, որ Նա աշխատում է քեզ հետ, և շարունակի՛ր համագործակցել Սուրբ Հոգու հետ, որպեսզի խղճմտանքդ զգայուն պահես Նրա հանդեպ: Մենք կարող ենք Նրանից ներողություն խնդրել և անմիջապես փոխել մեր վարքագիծը. «Հա՛յր, ես աղոթում եմ ինձ համար և իմ սիրելիների համար, որոնց խղճմտանքը տաղվել, կարծրացել և այրվել է: Ես խնդրում եմ, որ մեզնից հեռացնես այդ կարծրությունը: Խնդրո՛ւմ եմ, փափկեցրո՛ւ մեր սրտերը: Տո՛ւր մեզ զգայուն սիրտ, որը կարձագանքի Քո առաջնորդությանը, որպեսզի կարողանանք անմիջապես հասկանալ, թե ինչ ես ասում և ինչ ես ցանկանում, որ անենք, Հիսուսի՛ անունով, ամե՛ն»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ունեցի՛ր ամուր վճռականություն, բայց՝ փափուկ սիրտ:

Հաղթող համադրություն

«Երջանիկ (օրհնված, հաջողակ և նախանձելի) է այն մարդը, որ աստվածային իմաստություն է գտնում, և այն մարդը, որ հասկացողություն է ստանում [Աստծո Խոսքից և կյանքի փորձառությունից]» (ԱՌԱԿԱՅ 3.13):

Ես սիրում եմ լսել Աստծուն, երբ Նա խոսում է իմաստության և ողջամտության միջոցով: Իմաստությունը տեսնում է ճշմարտությունը տվյալ իրավիճակում, մինչ ողջամտությունը գաղափար է տալիս այն մասին, թե ինչպես պետք է վարվել այդ ճշմարտության հետ: Ես իմաստությունը համարում եմ գերբնական, քանի որ այն չի ուսուցանվում մարդկանց կողմից. Այն պարգև է Աստծուց:

Բազմաթիվ փորձառու և կիրթ մարդիկ իմաստության և ողջամտության պակաս ունեն: Աստծո Խոսքն ասում է. «Բայց եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան» (Հակոբոս 1.5):

Ես զարմանում եմ, թե որքան շատ մարդիկ են այն կարծիքին, որ պետք է դադարեն ողջամտություն ցուցաբերելուց, որպեսզի «հոգևոր» լինեն: Հոգևոր մարդիկ չեն սավառնում փառքի ամպերի մեջ. Նրանք ապրում են իրական աշխարհում և գործ ունեն իրական խնդիրների ու դրանց իրական լուծումների հետ: Ինչպես բոլորը, նրանք իրական պատասխանների կարիք ունեն, և այդ պատասխանները գտնվում են Աստծո Խոսքում և հայտնվում մեզ Նրա Հոգու միջոցով:

Մենք փնտրում ենք, իսկ Աստված խոսում է, բայց Նա Իմաստության Հոգի է և մեզ չի ասի որևէ անմիտ բան անել: Շատ անգամներ մենք խնդրում ենք, որ Աստված խոսի մեզ հետ և առաջնորդի մեզ, բայց եթե Նա Սուրբ գրքից հատուկ խոսք չի տալիս կամ հստակ չի խոսում մեր սրտի հետ, միևնույն է, պետք է շարունակենք ապրել և որոշումներ կայացնել: Աստված չի պատրաստվում թելադրել, թե ինչ ընտրություն կատարենք յուրաքանչյուր մանրուքի վերաբերյալ, բայց Նա տալիս է իմաստություն և ողջամտություն, իսկ այդ երկուսը կազմում են հաղթող համադրություն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե փնտրես Աստծուն, Նա կխոսի քեզ հետ:

Առաջին արձագանքը

«Ո՛վ Աստված, Դու ես իմ Աստվածը. առավոտվանից Քեզ եմ ման գալիս…» (ՍԱՂՄՈՍ 63.1):

Երբեմն զարմանում եմ, թե որքան երկար կարող ենք պայքարել որևէ իրավիճակում, նախքան կմտածենք, որ կարելի է խոսել Աստծո հետ և լսել Նրա ձայնը: Մենք գանգատվում ենք մեր խնդիրներից, փնթփնթում, տրտնջում, խոսում մեր ընկերների հետ և ասում, թե որքան կցանկանայինք, որ Աստված ինչ-որ բան աներ դրանց վերաբերյալ: Մենք մտքերով և զգացմունքներով պայքար ենք մղում իրավիճակների դեմ՝ հաճախ չօգտվելով ամենապարզ լուծումից, որն է՝ աղոթքը: Բայց ավելի վատ է այն, որ հետո հնչեցնում ենք բոլորիս հայտնի, հավանաբար, ամենաանհեթեթ արտահայտությունը. «Երևի, պետք է միայն աղոթել»: Համոզված եմ, որ լսել ես այս խոսքերը, գուցե նաև ինքդ ես ասել: Բոլորիս էլ ծանոթ են այս խոսքերը: Մենք մեղավոր ենք այն բանում, որ աղոթքին վերաբերվել ենք որպես վերջին հնարավորության և արտահայտվել այսկերպ. «Էլ ոչինչ չի օգնում, գուցե աղոթե՞նք»: Ի՞նչ են ասում այս խոսքերը: Այն, որ մենք իրականում չենք հավատում աղոթքի զորությանն այնպես, ինչպես հարկն է: Մենք կրում ենք բեռներ, որոնք չպիտի կրեինք, և ավելի դժվարացնում կյանքը, որովհետև չենք գիտակցում աղոթքի զորությունը: Եթե գիտակցեինք, ապա, որպես առաջին արձագանք և ոչ թե վերջին հույս, կխոսեինք Աստծո հետ ու կլսեինք, թե ինչ է Նա ասում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ աղոթքը լինի քո առաջին արձագանքը, այլ ոչ թե վերջին հույսը:

Դադարի՛ր

«Դադարե՛ք և ճանաչե՛ք, որ Ես եմ Աստվածը...» (ՍԱՂՄՈՍ 46.10):

Ինձ համար խոսելը միշտ հեշտ է եղել, բայց լսել՝ ստիպված եմ եղել սովորել: Մի անգամ զգացի, որ ամուսինս չի ցանկանում՝ ժամանակ տրամադրենք միասին զրուցելուն, այդ պատճառով նրան ասացի, որ մենք պետք է ավելի շատ զրուցենք: Նա պատասխանեց. «Ջո՛յս, մենք չենք զրուցում, դու խոսում ես, իսկ ես լսում եմ»: Նա ճիշտ էր, և ես պետք է փոխվեի, որպեսզի նրա մեջ ցանկություն առաջանար ժամանակ անցկացնել ինձ հետ:

Շուտով բացահայտեցի, որ Աստծո հետ վարվում էի նույն կերպ, ինչպես Դեյվի հետ: Ես անդադար խոսում էի և ակնկալում, որ Նա կլսի: Ես դժգոհում էի, որ երբեք չեմ լսում Աստծուց, բայց ճշմարտությունն այն է, որ երբեք ժամանակ չէի տրամադրում Նրան լսելուն: Այսօրվա խոսքը սովորեցնում է դադարել և ճանաչել, որ Աստված Աստված է: Շատերը դժվարանում են դադարել, որովհետև մարմինը սիրում է զբաղված լինել և անընդհատ գործել, սակայն մենք պետք է սովորենք առանձնանալ և հանդարտվել, եթե ուզում ենք լսել Աստծո ձայնը:

Շատերի համար լսելը կարողություն է, որը պետք է զարգացնել և վարժեցնել: Երբեմն պետք է լուռ նստել Աստծո ներկայության մեջ և ոչինչ չասել: Մենք պետք է հմտանանք լսելու մեջ: Իսկ ինչպե՞ս: Օրինակ, կարող ես Աստծուն հարցնել՝ կա՞ որևէ մեկը, ում Նա կցանկանար, որ քաջալերեիր կամ օրհնեիր: Այնուհետև, պետք է հանդարտվես ու լսես: Դու կզարմանաս, թե որքան արագ Նա կարձագանքի քեզ՝ հիշեցնելով ինչ-որ մեկին: Գուցե հստակ ցույց տա, թե ինչ պետք է անես այդ մարդուն քաջալերելու համար: Երբ ականջ ենք դնում Աստծո ցուցումներին, Նա տալիս է մեզ այնպիսի ստեղծագործական գաղափարներ, որոնց մասին երբևէ չենք մտածել: Ժամանա՛կ հատկացրու դադարելու և ուշադիր լսելու Նրան, ապա եղի՛ր հնազանդ և արա՛ այն, ինչ Նա ցույց է տալիս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր ժամանա՛կ հատկացրու, դադարի՛ր և լսի՛ր:

Շարունակի՛ր առաջ շարժվել

«Եղբայրնե՛ր, ես իմ անձը չեմ համարում, որ հասած լինեմ, բայց մեկ բան կա, հետևի բաները մոռանալով, դեպի առաջին լինողներն եմ նկրտում: Հետևում եմ դեպի նպատակը՝ Աստծո վերին կոչումի մրցանակին Քրիստոս Հիսուսում» (ՓԻԼԻՊԵՅԻՆԵՐԻ 3.13,14):

Մեր փոխհարաբերություններն Աստծո հետ շարունակ զարգանում են, և մենք մի մակարդակից անցնում ենք մյուսը: Ոչ ոք երբևէ չի կարող «տիրապետել» Աստծո հետ հաղորդակցման արվեստին, որովհետև չկա սահման այն փոխհարաբերությունների խորությանը, որ կարող ենք ունենալ Նրա հետ: Այդ փոխհարաբերությունները շարունակ զարգանում են, խորանում և ուժեղանում: Ժամանակի ընթացքում զարգանում և կատարելագործվում է Նրա ձայնը լսելու մեր ունակությունը: Աստիճանաբար մենք ավելի լայն ենք բացում մեր սիրտն Աստծո առջև, ավելի հմուտ ու փորձառու ենք դառնում Նրա ձայնը լսելու մեջ և ավելի լավ ենք հասկանում Նրան: Մենք երբեք չենք դառնա հավատարմագրված փորձագետներ աղոթքի ոլորտում ու երբեք չենք դադարի Աստծո հետ հաղորդակցվել սովորելուց: Մեր փորձառությունը մշտապես կհարստանա և կկատարելագործվի:

Աստված այնքան շատ բան է պատրաստել քեզ համար: Գուցե դու դեռ չես հասել քո նպատակակետին, սակայն կարող ես շնորհակալ լինել Աստծուց, որ բռնել ես այն ուղին, որը տանում է դեպի նպատակակետ: Նշանակություն չունի՝ սողում ես, քայլում ես, թե վազում ես, կարևորն այն է, որ առաջ ես գնում: Պարզապես շարունակի՛ր առաջ շարժվել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ամեն բան կարգին է, և դու ճիշտ ուղու վրա ես:

Աստված խոսում է հանկարծակի

«Դու իմ սուգը ցնծության փոխեցիր. իմ քուրձը հանեցիր ինձնից և ուրախություն հագցրիր ինձ» (ՍԱՂՄՈՍ 30.11):

1976 թվականի փետրվար ամիսն էր՝ ուրբաթ առավոտ. ես կոտրված էի և հուսահատ: Փորձում էի անել այն, ինչ լսել էի եկեղեցում, և այն, ինչ, կարծում էի, որ Աստված պահանջում էր ինձնից, բայց ոչինչ կարծես չէր փոխվում: Ես հուսալքված էի: Գիտեի, որ իմ կյանքում փոփոխություն էր անհրաժեշտ, բայց վստահ չէի, թե ինչ փոփոխություն էր դա: Գիտեի, որ փնտրում էի, բայց համոզված չէի, թե ինչ էի փնտրում:

Այդ առավոտ աղաղակեցի Աստծուն, որ այլևս չեմ կարող այդպես շարունակել: Հիշում եմ այս խոսքերը, որ Նրան ասացի. «Աստվա՛ծ, ինչ-որ բան պակասում է: Ես չգիտեմ, թե ինչ է դա, բայց ինչ-որ բան պակասում է»:

Ի զարման ինձ՝ Նա խոսեց ինձ հետ այնպես, որ պարզ լսեցի Նրա ձայնը: Նա տվեց իմ անունը և խոսեց ինձ հետ համբերության մասին: Այդ պահից սկսած ես *գիտեի*, որ Նա ինչ-որ բան էր անելու իմ իրավիճակի վերաբերյալ: Նույն օրը՝ ավելի ուշ, երբ մեքենայի մեջ էի, Հիսուսը լցրեց ինձ Սուրբ Հոգու այնպիսի ներկայությամբ, ինչպիսին երբեք չէի վերապրել: Այդ զգացողությունը կարելի է լավագույնս նկարագրել այսպես. ինչ-որ մեկը կարծես հեղուկ սիրով էր ողողել ինձ: Ես անմիջապես զգացի, որ տոգորվում էի խաղաղությամբ, ուրախությամբ և սիրով: Ինձ շրջապատողները նկատեցին դրական փոփոխություններ իմ վարքագծում, երբ սկսեցի սիրել նրանց այնպես, ինչպես երբեք չէի սիրել:

Այդ առավոտ արթնացա այնպիսի զգացողությամբ, կարծես հայտնվել էի անելանելի իրավիճակում: Բայց այդ գիշեր պառկեցի քնելու՝ իմանալով, որ իմ կյանքում նոր սկիզբ է դրվել: Աստված հաճախ այսպես է գործում. Նա խոսում և շարժվում է հանկարծակի: Մի՛ հոգնիր Նրան սպասելուց, որովհետև գուցե այսօր հանկարծակի բաներ կատարվեն քո կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հնարավոր է՝ այսօր հանկարծակի բաներ կատարվեն քո կյանքում:

Գտի՛ր ընկերներ, որոնք լսում են Աստծուն

«Երկաթը երկաթով է սրվում, և մարդը սրում է իր ընկերոջ երեսը» (ԱՌԱԿԱՅ 27.17):

Եթե մենք լսենք, Աստված կխոսի մեզ հետ մեր փոխհարաբերությունների՝ ամուսնության, ընկերական, աշխատանքային հարաբերությունների և նույնիսկ պատահական ծանոթությունների մասին: Նա կարող է խնդրել մեզ խզել մեր ընկերությունը կամ հարաբերություններն այն մարդկանց հետ, որոնք կարող են շեղել մեզ այն ծրագրից, որ Նա ունի մեր կյանքի համար: Մենք կարող ենք հեշտությամբ նմանվել այն մարդկանց, որոնց հետ ժամանակ ենք անցկացնում: Եթե ժամանակ ենք անցկացնում եսասեր և եսակենտրոն մարդկանց հետ, ապա հնարավոր է՝ շուտով հայտնաբերենք, որ հաճախ կենտրոնանում ենք ինքներս մեզ վրա՝ մտածելով, թե ինչ կարող ենք անել կամ ձեռք բերել ի շահ մեզ: Հակառակ դրան՝ Աստված կարող է քաջալերել մեզ ընկերանալ զոհաբերող անձնավորության հետ: Եթե ժամանակ անցկացնենք այսպիսի մարդու հետ, շատ չանցած մենք նույնպես կդառնանք զոհաբերող:

Հաճելի և օգտակար է ժամանակ անցկացնել նրա հետ, ով իսկապես լսում է Աստծուց, ով իսկապես զգում է, թե ինչ է Սուրբ Հոգին ասում և անում: Մեզ ուրախություն չի բերում այն ժամանակը, որն անցկացնում ենք այնպիսի մարդկանց հետ, որոնց հոգևոր լսողությունը թույլ է: Երբ այդպիսի մարդու կողքին ենք, դա ակնհայտ երևում է: Այսօրվա խոսքում ասվում է, որ «երկաթը երկաթով է սրվում», և մենք կարող ենք սրել ճիշտ բաներ լսելու մեր ունակությունը՝ լինելով այնպիսի մարդկանց կողքին, որոնք շարունակ հմտանում են Աստծո ձայնը լսելու և Նրան հնազանդվելու մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ասա՝ ով է ընկերդ, ասեմ՝ ով ես դու: Ընտրի՛ր ճիշտ ընկերներ:

Աստծո Խոսքերը համաձայնության մեջ են Սուրբ գրքի հետ

«Իմ սրտում թաքցրի Քո Խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ» (ՍԱՂՄՈՍ 119.11):

Մի անգամ, երբ պատրաստվում էի աշխատել մի գրքի վրա, հանկարծ զգացի, թե ինչպես Տերն ասաց. «Մի քանի րոպե հատկացրո՛ւ և պարզապես սպասի՛ր Ինձ»: Ես սպասեցի շատ կարճ ժամանակ, ապա սկսեցի զանգել: Տերը մեղմ ձայնով ասաց. «Ես չասացի զանգիր. Ես ասացի սպասի՛ր Ինձ»: Արտասովոր չէր այն ցանկությունը, որ դրդեց ինձ ինչ-որ բան անելու. մարդկանց մեծ մասը դժվարանում է դադարել և սպասել որևէ մեկին, որևէ բանի կամ հենց Աստծուն:

Երբ որոշ ժամանակ լուռ մնացի և սպասեցի Տիրոջը, Նա սկսեց խոսել հրեշտակների մասին. մի բան, որին անկասկած չէի սպասում: Նա ինձ առաջնորդեց փնտրելու մի քանի սուրբգրային խոսքեր, և ես մի փոքրիկ ուսումնասիրություն կատարեցի հրեշտակների զորության և ներկայության մասին: Աստված ունի պատճառ այն ամենի համար, ինչ անում է, և ես հավատում եմ, որ այդ օրը Նա ցանկանում էր, որ ես ավելի քաջատեղյակ լինեի հրեշտակներից, որոնք գործում են իմ օգտին. մի բան, որի մասին չէի մտածել բավականին երկար ժամանակ:

Գուցե քեզ համար հետաքրքիր է, թե ինչպես իմացա, որ Աստված խոսում էր ինձ հետ, և որ հրեշտակների թեման իմ մտքի արգասիքը չէր: Պատասխանն այն է, որ ես համակվեցի խաղաղությամբ, երբ լսեցի այդ խոսքերը: Իմ ներսում կարծես կանաչ լույս վառվեց: Իմ հոգին հաստատեց, որ դա ուղերձ էր Տիրոջից, և այն, ինչ լսեցի, համաձայն էր Աստծո Խոսքին:

Եղել են դեպքեր, երբ սպասել եմ Աստծուն և լսել նման ձայն, սակայն ենթագիտակցաբար հասկացել եմ, որ դա Աստծուց չէ: Մենք պետք է ճանաչենք Աստծուն Նրա Խոսքի միջոցով, որպեսզի վստահ իմանանք, թե երբ է Նա խոսում մեզ հետ, և երբ՝ ոչ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ուսումնասիրի՛ր Աստծո Խոսքը, որպեսզի կարողանաս ճանաչել Նրա ձայնը:

Նա կպատմի քեզ գալու բաները

«…գալու բաները կպատմի ձեզ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.13):

Աստծուց լսելու օգտակար բաներից մեկն այն է, որ հնարավորություն ենք ստանում պատրաստվելու ապագային: Սուրբ Հոգին մեզ տալիս է այն ուղերձները, որ Հայրը տալիս է Իրեն, և հաճախ ասում է բաներ, որոնք կատարվելու են ապագայում:

Աստվածաշնչում բազմաթիվ օրինակներ ենք գտնում, երբ Աստված խոսում է Իր ժողովրդի հետ և նրան տեղեկություններ տալիս ապագայի վերաբերյալ: Նա Նոյին ասաց պատրաստվել ջրհեղեղին, որը կործանելու էր երկրագնդի մարդկանց (տե՛ս Ծննդոց 6.13-17): Նա Մովսեսին ասաց գնալ փարավոնի մոտ և խնդրել, որ արձակի իսրայելցիներին, բայց նաև ասաց, որ փարավոնը չի կատարի նրա խնդրանքը (տե՛ս Ելից 7-րդ գլուխ): Ակնհայտ է, որ Աստված չի ասի ամեն բան ապագայի վերաբերյալ, սակայն Նրա Խոսքում ունենք խոստում, որ Նա որոշ բաներ կհայտնի մեզ:

Լինում են ժամանակներ, երբ զգում եմ, որ ինչ-որ լավ բան է կատարվելու, կամ, հնարավոր է, դժվարին խնդրի առջև եմ կանգնելու: Երբ ինձ մարտահրավեր է սպասում, և ես նախապես որոշ չափով գիտեմ այդ մասին, դա օգնում է մեղմացնելու գալիք հարվածը: Եթե մեքենան ընկնում է փոսը, լավ հարվածամեղմիչները (ամորտիզատոր) պաշտպանում են ուղևորներին ուժեղ ցնցման հետևանքներից, և ոչ ոք չի վնասվում: Նույնկերպ գործում է այն տեղեկությունը, որ Աստված նախապես հայտնում է մեզ:

Սուրբ Հոգու ծառայության մաս է կազմում գալու բաների մասին մեզ հայտնելը: Նա գիտի Աստծո միտքը և այն ծրագրերը, որ Աստված ունի յուրաքանչյուր անհատի համար: Ճիշտ ժամանակին Նա կհայտնի մեզ այն, ինչ կարիք ունենք իմանալու, որպեսզի իրականացնենք այն բարի ծրագրերը, որ Աստված ունի մեզ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. վստահի՛ր Սուրբ Հոգուն, Ով կպատմի քեզ այն, ինչ կարիք ունես իմանալու ապագայի մասին:

Իրական խաղաղություն

«...Խնդրի՛ր խաղաղություն և նրա հետևից գնա» (ՍԱՂՄՈՍ 34.14):

Ես շատ եմ սովորեցում այն մասին, որ Աստծո հետ քայլելիս կարևոր է հետևել խաղաղությանը: Սակայն, ուզում եմ, որ հասկանաս՝ կա նաև կեղծ խաղաղություն, և մենք պետք է զգուշանանք դրանից: Օրինակ, երբ ունենում ենք ինչ-որ բան անելու ուժգին ցանկություն, դա կարող է մեր մեջ առաջացնել խաղաղության կեղծ զգացում, որն իրականում բխում է մեր հույզերից: Ժամանակի ընթացքում այս կեղծ խաղաղությունն անհետանում է, և ի հայտ է գալիս Աստծո ճշմարիտ կամքը: Այս պատճառով երբեք չպետք է շտապել կարևոր որոշումներ կայացնելիս: Մի փոքր սպասելը իմաստուն և շրջահայաց քայլ է:

Ահա մի օրինակ: Մի մարդ, որին ես ու Դեյվը շատ էինք սիրում, կարիքի մեջ էր, և մենք ցանկացանք լրացնել նրա կարիքը: Դա մեծ ուրախություն կբերեր այդ անձնավորությանը և իրականություն կդարձներ նրա վաղեմի երազանքը: Ես լցվեցի խանդավառությամբ և Դեյվի հետ համաձայնության եկա նրան օգնելու հարցում: Մենք գործի անցանք, բայց որքան հեռու էինք գնում, այնքան քիչ խաղաղություն էի զգում: Մեր առջև խնդիր ծառացավ. մենք հանձն էինք առել օգնել այդ մարդուն, և ես չէի ցանկանում դրժել իմ խոսքը: Ինձ համար դժվար չէր ասել, որ սխալվել եմ, սակայն չէի ցանկանում հիասթափեցնել այն անձնավորությանը, ով հուսացել էր մեզ:

Անցավ մի քանի շաբաթ: Ես շարունակում էի աղոթել այդ իրավիճակի համար: Ի վերջո, կորցրի խաղաղությունս այն աստիճան, որ գնացի այդ անձնավորության մոտ ու ասացի. «Ինչ-որ բան այն չէ մեր ծրագրի առումով. Ես բացարձակապես խաղաղություն չունեմ»: Ինձ համար մեծ սփոփանք եղավ այն, որ այդ անձնավորությունը նույն զգացողությունն ուներ: Ես թույլ էի տվել, որ այս ծրագրի հանդեպ իմ խանդավառությունն առաջացներ խաղաղության կեղծ զգացում, որը վերացավ ժամանակի ընթացքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ կայացրու կարևոր որոշումներ՝ առանց համոզվելու, որ ներսումդ ճշմարիտ խաղաղություն է տիրում:

Ուսումնասիրիր Աստծո Խոսքը. լսիր Աստծո ձայնը

«Ուսումնասիրիր, նախանձախնդիր եղիր և ամեն ջանք գործադրիր, որ քո անձն ընտիր (փորձով ստուգված) կանգնեցնես Աստծո առջև՝ իբրև մի մշակ՝ առանց ամոթի, որ Ճշմարտության խոսքը ճիշտ վերլուծես և ուղիղ մատակարարես [արդարացի մեկնաբանես և հմտորեն սովորեցնես]» (Բ ՏԻՄՈԹԵՈՍ 2.15):

Ով ցանկանում է լսել Աստծո ձայնը, պետք է ուսումնասիրի Խոսքը: Որ ձևն էլ Աստված ընտրի՝ մեզ հետ խոսելու համար, Նա երբեք չի հակասի գրված Խոսքին, որը սկզբնապես հիշատակվել է հունարեն *«լոգոս»* բառով: Նրա կենդանի խոսքը հունարենում հիշատակվում է *«ռեմա»* բառով: Աստված հիշեցնում է մեզ Իր «լոգոսը» յուրաքանչյուր իրավիճակի համար: Նրա «ռեման» (մեզ ասվող խոսքը) գուցե բառ առ բառ չգտնվի Աստվածաշնչի էջերում, բայց սկզբունքորեն մշտապես կհենվի գրավոր Խոսքի վրա: Այս կերպ, Աստվածաշունչը հաստատում է՝ արդյոք այն, ինչ լսում ենք, Աստծո՞ւց է, թե՞ ոչ:

Օրինակ՝ «լոգոսը»՝ գրավոր Խոսքը, մեզ չի ասում, թե երբ նոր մեքենա գնենք կամ ինչպիսի մեքենա գնենք: Դրա համար մենք «ռեմա» խոսքի կարիքն ունենք: Չնայած Խոսքում չկան հատուկ ցուցումներ մեքենա գնելու վերաբերյալ, սակայն նրանում շատ բան է ասվում իմաստության մասին: Եթե կարծում ենք, թե «լսել» ենք Աստծուց, որ պետք է այսինչ մեքենան գնենք, հետո գիտակցում ենք, որ նման մեծ գործարքի պատճառով մի քանի տարի ապրելու ենք պարտքի ծանրության տակ, ապա հեշտ է հասկանալ, որ այդ մեքենան գնելը իմաստուն քայլ չէ, և այն ձայնը, որ լսել էինք, Աստծո ձայնը չէր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. «լոգոս» + «ռեմա» = իմաստություն

Աստված կհայտնի Իր իմաստությունը

«Եթե հասկացողությանը կանչես և ձայն տաս հանճարին, եթե, ինչպես արծաթ, որոնես և, ինչպես թաքնված գանձ, փնտրես աստվածային Իմաստություն, այն ժամանակ կհասկանաս Տիրոջ պատվական և սրբազան երկյուղը» (ԱՌԱԿԱՅ 2.3-5):

Այսօրվա խոսքը հորդորում է մեզ փնտրել իմաստություն և կանչել հասկացողությանը: Պատճառն այն է, որ Աստծո իմաստությունը գերազանցում է ցանկացած լավագույն գաղափարի, որ մարդը կարող է ունենալ: Աստված տեսնում է վերջը սկզբից, Նա տեսնում է մարդկանց սրտերն ու շարժառիթները և գիտի բաներ, որ մենք չգիտենք: Անկախ նրանից, թե ինչի հետ գործ ունենք՝ կյանքի ամենօրյա հոգսերի, թե սատանայի լայնամասշտաբ հարձակման, Աստծո իմաստությունը կփոխի իրավիճակը, և միակ ճանապարհը, որով կարող ենք ստանալ այդ իմաստությունը, Աստծուց խնդրելն է:

Շատ անգամներ, երբ Աստված խոսում է մեզ հետ, Նա իմաստություն է հայտնում: Նա հասկացողություն է տալիս իրավիճակի վերաբերյալ կամ հստակ ասում է, թե ինչ պետք է անենք, երբ կանգնած ենք որոշման առջև: Նա Իր իմաստությունը հայտնում է տարբեր ձևերով, և մենք պետք է ընդունենք այն որպես թանկարժեք պարգև:

Քաջալերում եմ քեզ գնահատել Աստծո իմաստությունը՝ որպես հոգևոր անգին գանձ, և հասկանալ, որ այն կենսական անհրաժեշտություն է, առանց որի չես կարող ունենալ հաջողակ կյանք: Սովորությունն դարձրու յուրաքանչյուր իրավիճակում՝ պարզ, թե բարդ, աղոթել Աստծուն և խնդրել Նրա իմաստությունը: Աստված անպայման կտա այն, և արդյունքները կապշեցնեն քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ոչ մի խնդիր այնքան փոքր չէ, որ չպահանջի Աստծո իմաստությունը:

Աստված լսում է և պատասխանում

«…Նա քեզ պիտի ողորմի աղաղակիդ ձայնով. հենց որ Նա լսեց, քեզ պատասխան է տալու» (ԵՍԱՅԻ 30.19):

Մեր ընկերությունն Աստծո հետ օգտակար է ոչ միայն մեզ, այլև մեզ շրջապատողներին: Երբ մարդիկ գալիս են մեզ մոտ իրենց կարիքներով կամ մտահոգություններով, երբեմն կարողանում ենք որոշ օգնություն ցուցաբերել, երբեմն էլ բոլորովին անկարող ենք լինում բավարարելու նրանց կարիքները: Նույնիսկ եթե չունենք այն, ինչի կարիքը մարդիկ իսկապես զգում են, ապա Աստված միշտ ունի: Երբ մենք դառնում ենք Աստծո ընկերը, կարող ենք մարդկանց ասել. «Ես չունեմ այն, ինչ հարկավոր է քեզ, բայց գիտեմ Մեկին, Ով ունի: Ես կխնդրեմ իմ ընկերոջից: Ես կբարեխոսեմ քեզ համար Աստծո առջև»:

Մենք գիտենք, որ Աստված ի զորու է միջամտելու մարդկանց հանգամանքներին, օգնելու նրանց երեխաներին ազատվելու թմրամոլությունից, բերելու ֆինանսական ճեղքումներ, անելու բժշկության հրաշքներ կամ վերականգնելու ամուսնությունները: Որքան խորն ենք ճանաչում Աստծուն, այնքան ավելի վստահ ենք դառնում մարդկանց օգնելու Նրա պատրաստակամության և կարողության մեջ: Երբ մարդիկ դիմում են մեզ, մենք կարող ենք գնալ Աստծո մոտ՝ իմանալով, որ Նա Իր օգնության բազուկը կմեկնի նրանց: Մենք կարող ենք իրականում խնդրել Աստծուց, որ մեզ շնորհ անի և օգնի այն մարդուն, ում սիրում ենք, նույնիսկ եթե նա արժանի չէ: Մենք կարող ենք աղոթել կարեկցանքով, որը բխում է սիրով լի սրտից, և Աստված կլսի ու կպատասխանի:

Աստված սիրում է քեզ և սիրում է լսել քո ձայնը, երբ մոտենում ես Նրան աղոթքի և հաղորդակցության համար: Հաճախակի՛ գնա Նրա մոտ ոչ միայն քո, այլև ուրիշների կարիքների համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հիշի՛ր, Աստված սիրում է լսել քո ձայնը:

Բնակարան Աստծո Հոգու համար

«Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում…» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.17):

Եթե դու վերստին ծնված ես, հուսով եմ՝ գիտես, որ Հիսուսը բնակվում է քո ներսում Սուրբ Հոգու զորությամբ: Հարցը հետևյալն է. արդյո՞ք Աստծուն հարմար է այնտեղ: Արդյո՞ք Նա Իրեն զգում է՝ ինչպես տանը: Թեև Աստծո Հոգին ապրում է քո ներսում, բայց դու կարող ես լցված լինել նաև այլ բաներով, օրինակ՝ վախով, բարկությամբ, նախանձով կամ տրտունջով ու դժգոհությամբ:

Մի անգամ Աստված ինձ օրինակով ցույց տվեց, թե ինչպես է Նա Իրեն զգում, երբ ապրում է տրտունջով, դժգոհությամբ և անհամերաշխությամբ լցված սրտում: Պատկերացրու, գնում ես ընկերուհուդ տուն, և նա ասում է. «Օ՜, նե՛րս արի, հիմա քեզ համար սուրճ կպատրաստեմ: Հարմար տեղավորվիր և զգա քեզ՝ ինչպես տանը»: Հետո նա սկսում է բղավել ամուսնու վրա, և երկուսով աղմկում են, վիճում, ափերից դուրս գալիս հենց քո ներկայությամբ: Որքա՞ն հարմարավետ կզգայիր քեզ վիճաբանության այս մթնոլորտում:

Եթե ուզում ենք լինել հարմարավետ «բնակարան» Տիրոջ Հոգու համար, պետք է հրաժարվենք այն ամենից, ինչը ստիպում է մեզ մոռանալ Նրա ներկայության մասին կամ վիրավորում է Նրան: Մենք պետք է վերջ տանք տրտունջին, թույլ չտանք, որ մեր ներսը լցվի խռովությամբ, վիճաբանությամբ կամ չներումով: Փոխարենը, պետք է այնպես անենք, որ մեր ներաշխարհը լցված լինի այնպիսի բաներով, որոնք հաճեցնում են Աստծուն և պատվում Նրա ներկայությունը: Մեր շուրթերից պետք է հնչեն փառաբանություն և գոհություն: Մենք պետք է ամեն օր արթնանանք և մեր սրտում ասենք. «Բարի լո՛ւյս, Տե՛ր: Ես ուզում եմ, որ այսօր իմ ներսում Քեզ զգաս՝ ինչպես տանը»:

Բոլորս կարիք ունենք ժամանակ առ ժամանակ մեր սրտում «գույքագրում կատարելու», որովհետև մեր սիրտը Աստծո բնակության վայրն է: Երբ քննում ենք մեր ներաշխարհը, ստուգում ենք այն սուրբ հողը, որտեղ Աստված ընտրել է բնակվել: Այնպես անենք, որ Նա Իրեն հարմարավետ զգա մեր սրտում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այնպե՛ս արա, որ հարմարավետ բնակարան լինես Տիրոջ Հոգու համար:

Լիակատար մուտք

«Նրա միջոցով հավատքով ունենք մուտք (ընդունելություն) այս շնորհքի (Աստծո բարեհաճության վիճակի) մեջ, որում [հաստատ և վստահ] կանգնած ենք: Եվ եկեք ցնծանք և ուրախանանք Աստծո փառքը վերապրելու և վայելելու հույսով» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 5.2):

Մեր հոգևոր կյանքում ամեն ինչ կախված է Աստծո հանդեպ մեր հավատքից և Նրա հետ մեր անձնական փոխհարաբերությունից, որն անկասկած ներառում է Նրա ձայնը լսելու կարողությունը: Մենք կարող ենք վայելել այդ փոխհարաբերությունը, որովհետև խաչի վրա Հիսուսի մահվան շնորհիվ մեզ տրվեց հնարավորություն ազատ, անարգել մոտենալու մեր երկնային Հորը, իսկ մեր հավատքն օգնում է մեզ մտերիմ, կենդանի փոխհարաբերություն ունենալ Նրա հետ:

Վերջերս ուսումնասիրում էի Եփեսացիների 3.12 խոսքը, որը շատ եմ սիրում: Այդ խոսքում ասվում է. «Որով, Նրա հանդեպ մեր հավատքի շնորհիվ, ունենք ազատ մուտք գործելու (ազատությամբ և առանց վախի Աստծուն մոտենալու) համարձակություն (քաջություն և վստահություն)» (Աստվածաշնչի «Ընդլայնված թարգմանություն»): Երբ խորհում էի այս Խոսքի շուրջ, սիրտս լցվեց խանդավառությամբ այն գիտակցումից, որ մենք, իբրև մարդկային արարածներ, կարող ենք աղոթքի միջոցով ցանկացած ժամանակ մոտենալ Աստծուն: Մենք կարող ենք լսել Նրա ձայնը ցանկացած ժամանակ, երբ կամենանք, կամ՝ երբ կարիք ունենանք: Մենք կարող ենք համարձակությամբ մոտենալ Նրան առանց վերապահումների, առանց վախի և լիակատար ազատությամբ: Ինչ փառահեղ է դա: Աստծո հանդեպ անձնական հավատքը դուռ է բացում Նրանից անսահման օգնություն ստանալու և Նրա հետ անարգել հաղորդակցություն ունենալու համար:

Եկ Աստծո մոտ այն վստահությամբ, որ Նա սիրում է քեզ, փափագում է հաղորդակցվել քեզ հետ և ցանկանում է ոչ միայն լսել, այլև խոսել քեզ հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ակնկալի՛ր, որ կլսես Աստծուց և կառաջնորդվես Նրա Սուրբ Հոգով:

Ճրագ և լույս

«Քո Խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ ճանապարհի համար» (ՍԱՂՄՈՍ 119.105):

Չկա ոչինչ ավելի գերբնական, քան Աստծո Խոսքը, որը տրված է մեզ Սուրբ Հոգու աստվածային ներշնչմամբ Աստծո մարգարեների և աշակերտների միջոցով: Աստվածաշունչն ունի պատասխան յուրաքանչյուր հարցի համար, որ կարող ենք ունենալ: Աստծո Խոսքը լի է կյանքի սկզբունքներով, մարդկային վարքագծի հանդեպ Աստծո ողորմության մասին իրական պատմություններով և արժեքավոր առակներով, որոնք կարևոր ճշմարտություններ են պարունակում երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր մարդու համար:

Աստվածաշունչն անձնական նամակ է՝ ուղղված ինձ և քեզ: Այն պատմում է այն ամենի մասին, ինչ կարիք ունենք իմանալու: Երբեմն Աստված կարող է ինչ-որ բան ասել մեզ, որը հնարավոր չէ գտնել Սուրբ գրքի գլուխներից կամ խոսքերից որևէ մեկում, սակայն եթե իսկապես Նա է խոսում, ապա այն, ինչ լսում ենք, միշտ համաձայն է լինելու Նրա Խոսքին: Աստված կխոսի մեզ հետ և կառաջնորդի յուրաքանչյուր իրավիճակում, երբ փնտրենք Նրան Իր Խոսքի միջոցով: Երբ ես կարիք եմ ունենում լսելու Նրանից որոշակի հարցի վերաբերյալ, Նա հաճախակի հիշեցնում է սուրբգրային որևէ խոսք, որը հստակ տալիս է այն պատասխանը, որ ես փնտրում եմ:

Աստծո ձայնը մշտապես լսելը (Սուրբ Հոգով առաջնորդվելը) ինձ համար դարձել է կենսակերպ այն ժամանակվանից, երբ ստացա Սուրբ Հոգու լեցունությունը: Աստված Իր Հոգու պարգևը տալիս է նրան, ով խնդրում է (տե՛ս Ղուկաս 11.13), և Սուրբ Հոգին օգնում է մեզ հասկանալու Աստծո Խոսքը, որպեսզի կարողանանք կյանքում կիրառել այն իմաստությունը, որ ամփոփված է այդ Խոսքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կարդա՛ Աստծո Խոսքը՝ իբրև քեզ ուղղված անձնական նամակ:

Ինքդ քեզ նվեր արա

«Իրար հետ քաղցր եղեք, պատրաստ՝ օգնելու միմյանց, գթած (սրտացավ, մեծահոգի, սիրառատ)՝ իրար ներելով [հոժարությամբ և ինքնակամ], ինչպես Աստված էլ Քրիստոսով ձեզ ներեց» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.32):

Չներումը, դառնությունը, բարկությունը կամ ցանկացած վիրավորանք կարող են խանգարել մեզ լսելու Աստծուց: Աստծո Խոսքը շատ հստակ է այս հարցում: Եթե ուզում ենք, որ Աստված ների մեր մեղքերը և հանցանքները, ապա մենք էլ պետք է ներենք ուրիշների մեղքերն ու հանցանքները:

Եփեսացիների 4.30-32 խոսքերում ասվում է, որ մենք տրտմեցնում ենք Սուրբ Հոգուն, երբ մեր սրտում տածում ենք այնպիսի բացասական զգացմունքներ, ինչպիսիք են բարկությունը, սրտմտությունը և թշնամությունը: Երբ չենք ներում որևէ մեկին, խստացնում ենք մեր սիրտը, և դա խանգարում է զգայուն լինել Աստծո առաջնորդությանը:

Մի անգամ ինչ-որ մեկից այսպիսի արտահայտություն լսեցի. չներումը նման է թույն խմելուն և հույս փայփայելուն, թե այն կսպանի քո թշնամուն: Ինչո՞ւ կյանքդ անցկացնես՝ ինչ-որ մեկի վրա բարկացած և դառնացած, երբ այդ մեկը, հավանաբար, վայելում է իր կյանքը և չի էլ մտահոգվում, որ վրդովել է քեզ: Ինքդ քեզ լավությո՛ւն արա. ների՛ր նրանց, ովքեր ցավեցրել են քեզ: Նվիրի՛ր քեզ ներման պարգևը: Այն կլցնի քո սիրտը խաղաղությամբ ու թույլ կտա լսելու Աստծո ձայնը և հետևելու Նրա առաջնորդությանը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. նվիրի՛ր քեզ ուրիշներին ներելու պարգևը:

Հաղթել Աստծո ճանապարհներով

«Յո՛այց փուր ինձ, ո՛վ Տեր, Քո ճանապարհները, սովորեցրո՛ւ ինձ Քո գնալու ճանապարհները» (ՍԱՂՄՈՍ 25.4):

Շատերը երջանիկ են, երբ ստանում են այն, ինչ ցանկանում են: Այդպիսին է մարդու բնույթը: Բայց երբ հետևում ենք Աստծուն, մեր ցանկությունները հետին պլան են մղվում, և մեզ համար ավելի կարևոր են դառնում այլ բաներ, ինչպես օրինակ՝ մեր կյանքի համար Աստծո ցանկությունները փնտրելը, որոշումներ կայացնելիս Նրա ձայնը լսելը և յուրաքանչյուր իրավիճակում Նրա առաջնորդությանը հնազանդվելը:

Մի անգամ ես ու Դեյվը խանութում նկար տեսանք, որն անմիջապես ցանկացա գնել: Դեյվը չէր կարծում, որ մենք դրա կարիքն ունեինք: Ես զայրույթով լցվեցի նրա հանդեպ, բայց լռեցի.

- Ամեն բան կարգի՞ն է, - հարցրեց Դեյվը:
- Այո՛, հրաշալի՛ է, հրաշալի՛, - պատասխանեցի ես:

Սակայն մտքումս այլ բան էի ասում. *«Դու միշտ փորձում ես ասել ինձ, թե ինչ անեմ: Ինչո՞ւ հանգիստ չես թողնում ինձ և թույլ տալիս, որ անեմ այն, ինչ ցանկանում եմ»:*

Գրեթե մեկ ժամ ես խռով մնացի: Փորձում էի ինչ-որ կերպ ներգործել նրա վրա: Ես գիտեի, որ լինելով խաղաղասեր, սառնարյուն անձնավորություն՝ Դեյվը ավելի շուտ կզիջեր, քան կկռվեր ինձ հետ: Ես բավականաչափ հասուն չէի Տիրոջ մեջ՝ հասկանալու համար, որ իմ վարքագիծն աստվածային չէր:

Սկսեցի համոզել Դեյվին, և, ի վերջո, գնեցինք այդ նկարը: Երբ այն փակցրի մեր տան պատին, Սուրբ Հոգին ասաց. «Գիտես, դու իրականում չհաղթեցիր: Դու ստացար քո նկարը, բայց, միևնույն է, պարտվեցիր, քանի որ չգնացիր Իմ ճանապարհներով»:

Հաղթելու միայն մեկ ճանապարհ կա. դա Աստծո ճանապարհն է: Նույնիսկ եթե չստանանք այն, ինչ ուզում ենք, կունենանք խորը բավարարվածության զգացում՝ իմանալով, որ հնազանդվել ենք Նրա ձայնին, իսկ դա գերազանցում է այն բավարարվածությանը, որ ստանում ենք ցանկացած ունեցվածքից կամ ձեռքբերումից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ Աստծո ճանապարհները դառնում են քո ճանապարհները, դու բռնում ես լիակատար խաղաղության և ուրախության ուղին:

Հաստատ մնա Խոսքի մեջ

«Ամեն բան փորձեք և սրուգեք [մինչև կարողանաք ճանաչել], թե որն է բարին, ամուր բռնեք [այն]» (Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ 5.21):

Աստծուց հստակ լսելու և հնարավոր խաբեությունից խուսափելու կարողությունը ձևավորվում է միայն Աստծո հետ կանոնավոր ժամանակ անցկացնելու, Նրա խոսքը սերտելու միջոցով: Սխալ է, երբ փորձում ենք լսել Աստծո ձայնը՝ առանց Նրա Խոսքի իմացության: Աստծո գրված Խոսքն իմանալը պաշտպանում է մեզ խաբեությունից:

Անպատասխանատու և նույնիսկ վտանգավոր է, երբ փորձում ես լսել Աստծուց՝ առանց Նրա Խոսքն իմանալու: Մարդիկ, որոնք ցանկանում են առաջնորդվել Հոգով, բայց ծուլանում են ժամանակ անցկացնել Խոսքի և աղոթքի մեջ, հեշտությամբ կարող են խաբվել, որովհետև չար ոգիներն անհամբեր սպասում են, թե ում ականջներին շշնջան: Սատանան փորձում էր ինչ-որ բաներ ասել Հիսուսին, իսկ Հիսուսը միշտ պատասխանում էր. «Գրվա՛ծ է», ապա Սուրբ գրքից մեջբերում էր անում՝ հերքելով թշնամու ստերը (տե՛ս Ղուկասի 4-րդ գլուխը):

Ոմանք փնտրում են Աստծուն միայն այն ժամանակ, երբ անախորժության մեջ են և օգնության կարիք ունեն: Բայց եթե նրանք սովոր չեն լսելու Աստծուց, կդժվարանան ճանաչել Նրա ձայնը, երբ իսկապես Նրա կարիքն ունենան:

Ցանկացած գաղափար, մղում կամ միտք, որ ստանում ենք, պետք է համեմատենք Աստծո Խոսքի հետ: Եթե չիմանանք Խոսքը, չենք ունենա չափանիշ, որով կարող ենք գնահատել այն տեսություններն ու փաստարկները, որ ծագում են մեր մտքում: Թշնամին կարող է ներկայացնել վառ գաղափարներ, որոնք տրամաբանական են թվում: Այն փաստը, որ այդ մտքերը տրամաբանական են, դեռևս չի նշանակում, որ դրանք Աստծուց են: Գուցե մեզ դուր է գալիս այն, ինչ լսում ենք, բայց չի նշանակում, որ մեր լսածն Աստծուց է: Մենք կարող ենք լսել ինչ-որ բան, որը հաճելի է մեր զգացմունքներին, սակայն եթե դա մեզ խաղաղություն չի տալիս, ուրեմն Աստծուց չէ: Աստված հորդորում է մշտապես հետևել խաղաղության և այն դարձնել մեր կյանքի դատավորը (տե՛ս Կողոսացիների 3.15):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո Խոսքով ստուգի՛ր այն, ինչ լսում ես, որովհետև դա է ճշմարտության միակ չափանիշը:

Աստված խոսում է, որպեսզի օգնի մեզ

«…Լուծը պիտի կոտրվի օծության պատճառով» (ԵՍԱՅԻ 10.27):

Երբ Աստված խոսում է քեզ հետ որևէ խնդրի մասին, որը պիտի լուծվի, մի՛ հետաձգիր դրա լուծումը: Դու կարող ես վստահ լինել, որ օծությունը, որը Սուրբ Հոգու զորությունն է և կարողությունը, կկոտրի այդ լուծը քո վրայից: Եթե հետաձգես խնդրի լուծումն այնքան ժամանակ, մինչև ինքդ ցանկանաս զբաղվել դրանով, հնարավոր է՝ ստիպված լինես փոխվել առանց Աստծո զորության կամ օծության:

Հաճախ ցանկանում ենք ինչ-որ բան անել այն ժամանակ, երբ մենք ենք նախընտրում, և պայքարում ու պայքարում ենք, քանի որ փորձում ենք լուծել խնդիրը առանց Աստծո օծության: Օրինակ, լինում են ժամանակներ, երբ ցանկություն եմ ունենում ինչ-որ հարց պարզաբանել մեր ծառայողներից մեկի հետ, սակայն հասկանում եմ, որ ավելի իմաստուն կլինի որոշ ժամանակ աղոթել դրա համար և թույլ տալ, որ Աստված պատրաստի այդ մարդու սիրտը: Երբ հետևում եմ Աստծո ժամանակացույցին, Նրա օծությունը մշտապես օգնում է լուծել այս կամ այն հարցը: Ես սովորել եմ հարցերին լուծում տալ այն ժամանակ, երբ Աստված է դա ցանկանում, և ոչինչ չձեռնարկել, երբ Նա խնդրում է ինձ սպասել: Ես ունեցել եմ նաև հիասթափեցնող փորձառություն, երբ ջանացել եմ ինքս ինձ փոխել՝ չսպասելով Աստծո օգնությանը և Նրա սահմանած ժամանակին: Որպեսզի մեր կյանքում ամեն բան ճիշտ գործի, մեզ անհրաժեշտ է Աստծո օծությունը:

Երբ Աստված հանդիմանում է մեզ որևէ բանի համար, ինչը պետք է փոխվի մեր կյանքում, նշանակում է, որ Նա արդեն պատրաստել է մեզ դրա համար: Հնարավոր է, մենք չզգանք, որ պատրաստ ենք, սակայն կարող ենք վստահ լինել, որ Նրա ժամանակը կատարյալ է, և Նրա օծությունը ներկա է կոտրելու այն լուծը, որ խանգարում է մեր լիակատար ազատությանը: Ես սովորել եմ ասել. «Տե՛ր, գուցե ինձ չի թվում, որ ես պատրաստ եմ, սակայն եթե Դու ասում ես, որ հիմա է ժամանակը, ուրեմն ես վստահում եմ, որ Քո զորությունն ինձ հետ է, և հոժարությամբ հնազանդվում եմ Քեզ»: Երբ հավատքի քայլ անես խնդիրը լուծելու համար, կհայտնաբերես, որ ունես այն իմաստությունը, շնորհքը, զորությունն ու կարողությունը, որ անհրաժեշտ են քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ հետաձգիր մեկ ուրիշ օրվան այն խնդիրների լուծումը, որոնք Նա ցանկանում է, որ լուծես այսօր:

Միայն Աստված է տալիս խաղաղություն

«Տերը զորություն կտա Իր ժողովրդին. Տերը կօրհնի Իր ժողովուրդը խաղաղությունով» (ՍԱՂՄՈՍ 29.11):

Ամենահզոր միջոցներից մեկը, որով Աստված խոսում է մեզ հետ և առաջնորդում է մեզ, ներքին վկայությունն է: Այլ խոսքով՝ մենք պարզապես ներքուստ գիտենք, թե որն է ճիշտ, կամ որն է սխալ: Դա իմացության առավել խորը մակարդակ է, քան սովորական գիտելիքը: Այն հոգու ոլորտում է և ուղեկցվում է խաղաղությամբ կամ խաղաղության բացակայությամբ: Մենք հասկանում ենք, թե ինչ պետք է անենք՝ հիմնվելով այն բանի վրա՝ ունե՞նք խաղաղություն, թե՞ ոչ:

Մեկ անգամ խոսում էի մի կնոջ հետ, որը կարևոր որոշում պետք է կայացներ: Նրա ընտանիքը և ընկերները խորհուրդներ էին տալիս, սակայն նրան անհրաժեշտ էր իմանալ ճիշտ պատասխանը, որովհետև ինքն էր կրելու այդ որոշման հետևանքները: Ամբողջ կյանքում նա զբաղվել էր սեփական գործով, իսկ այժմ զգում էր, որ պետք է թողնի այն և մնա տանը՝ երեխաների հետ: Իհարկե, սա պահանջելու էր ֆինանսական կտրուկ կարգավորում և փոփոխություն անձնական կյանքում, որոնք կարող էին հուզական ազդեցություն թողնել նրա վրա: Նա պետք է իմանար Աստծուց, ոչ թե մարդկանցից, թե որն էր ճիշտ որոշումը:

Շաբաթավերջին այս կինը հարազատներից մեկի հետ մասնակցեց արտագնա սեմինարի: Սեմինարի ընթացքում, երբ նա փառաբանում և երկրպագում էր Աստծուն ու լսում քարոզչին, նրա սիրտը լցվեց խաղաղությամբ, և նա հաստատվեց իր՝ բիզնեսը դադարեցնելու որոշման մեջ: Ինչ-որ պահի նա պարզապես հասկացավ, թե որն է ճիշտը: Այդ ժամանակվանից նա ուներ խաղաղություն իր որոշման վերաբերյալ:

Երբ բարյացակամ մարդիկ մեզ ինչ-որ բաներ են ասում, որքան էլ զարմանալի թվա, նրանց խոսքերը կարող են չազդել մեզ վրա: Սակայն երբ Աստված է մեզ հետ խոսում, դա մեծ ազդեցություն է թողնում: Խնդրի՛ր Աստծուց ներքին վկայություն, որը միայն Նա կարող է տալ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. միայն Աստված կարող է տալ քեզ խաղաղություն:

Դու յուրահատուկ ես

«Նա անհատապես ձևավորում է նրանց սրտերը...»
(ՍԱՂՄՈՍ 33.15):

Սաղմոս 33.15-ում խոսվում է մեր մասին՝ որպես անհատների: Քանի որ Աստված անհատապես ձևավորել է յուրաքանչյուրիս սիրտը, մեր աղոթքները պետք է բնականաբար բխեն այդ սրտից և համապատասխանեն այն էությանը, որ Նա դրել է մեր մեջ: Աստծո հետ հաղորդակցման մեր անհատական ոճը ձևավորելիս կարող ենք որոշ բաներ սովորել առավել փորձառու մարդկանցից, սակայն մենք պետք է զգույշ լինենք, որ չնմանակենք նրանց կամ թույլ չտանք, որ նրանք չափանիշներ դնեն մեզ համար: Հուսով եմ, որ օրինակ կլինեմ շատերի համար, բայց ուզում եմ, որ Հիսո՛ւսը լինի նրանց չափանիշը: Վատ բան չկա, երբ աղոթքիդ կյանքում ներառում ես որոշ բաներ, որոնք ուրիշներն են անում, բայց դա պետք է անես միայն Աստծո Հոգու առաջնորդությամբ: Սակայն եթե հոգումդ հանգստություն չունես, սխալ է՝ ինքդ քեզ ստիպես անել այն, ինչ ուրիշներն են անում:

Քաջալերում եմ քեզ զարգացնել Աստծո հետ խոսելու և Նրա ձայնը լսելու քո անհատական ոճը: Մի՛ փորձիր մրցել ուրիշների հետ կամ ընդօրինակել նրանց աղոթքի ոճը և պարտադրված մի՛ զգա ամեն անգամ աղոթելիս կիրառել այն բոլոր «սկզբունքները», որոնք երբևէ սովորել ես: Պարզապես եղի՛ր այնպիսին, ինչպիսին կաս՝ հիշելով, որ Աստված ձևավորել է քեզ այնպիսին, ինչպիսին Ինքն է ցանկանում, որ լինես: Նա հաճույք է ստանում քեզ այդպիսին տեսնելուց և ցանկանում է անձնապես և ուրույն կերպով խոսել քեզ հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված սիրում է քեզ հենց այդպիսին, և Նրան դուր է գալիս, թե ինչպես ես դու խոսում. մի՛ ամաչիր Նրանից:

Եղի՛ր անսասան

«Թո՛ղ փոկունությունը, անսասանությունը և համբերությունը կատարյալ և լիարժեք գործ ունենան, որ կատարելապես և լիովին զարգանաք [առանց թերության] և ոչ մի բանի պակասություն չունենաք» (ՀԱԿՈԲՈՍ 1.4):

Այսօրվա խոսքը վերաբերում է անսասան լինելուն: Անսասան լինել նշանակում է լինել հաստատուն. անսասան մարդը հաստատուն է, հանգիստ և հավասարակշռված՝ անկախ նրանից, թե ինչ է տեղի ունենում: Անսասան քրիստոնյան կարող է նյարդային խանգարում պատճառել սատանային: Երբ հոգևորապես հասունանում ենք այն աստիճան, որ կարողանում ենք անսասան մնալ, այլևս չենք արձագանքում թշնամու ամեն չնչին հարձակմանը: Անկախ նրանից, թե ինչ նա կնետի մեր ճանապարհին, մենք չենք շփոթվի, չենք վախենա, հեշտությամբ չենք վրդովվի, չենք հանձնվի և տեղից չենք շարժվի, եթե անսասան լինենք:

Անսասան և անշարժ լինելու համար պետք է ճանաչենք Աստծուն և մտերիմ փոխհարաբերություն ունենանք Նրա հետ: Մենք պետք է կարողանանք լսել Նրա ձայնը կյանքի փոթորիկների մեջ: Պետք է ճանաչենք նաև այն հաղթող զորությունը, որ պատկանում է մեզ Հիսուսի անունով և Նրա արյան միջոցով: Հիշենք, որ «սա էլ կանցնի», և տեսադաշտում պահենք հաղթանակը, որն անխուսափելի է, ու չտարուբերվենք այս ու այն կողմ՝ ենթարկվելով սատանայի հարձակումներին: Երբ անսասան լինենք, Աստծո զորությունը բաց կթողնվի մեր կյանքի մեջ: Ինչի առջև էլ այսօր կանգնած լինես, թո՛ղ համբերությունն անի այն գործը, որ Աստված ցանկանում է տեսնել քո մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Եղի՛ր անսասան Աստծո մեջ և նյարդային խանգարում պատճառի՛ր սատանային:

Փափուկ և զգայուն

«Եվ նրանց պիտի մեկ [նոր] սիրտ տամ և նոր հոգի պիտի դնեմ նրանց ներսում և պիտի հեռացնեմ քարե [անբնականորեն կարծրացած] սիրտը նրանց մարմնից և նրանց մի մսեղեն [զգայուն և Աստծո հպմանը արձագանքող] սիրտ տամ» (ԵԶԵԿԻԵԼ 11.19):

Այսօրվա խոսքում Աստված խոստանում է քարե սրտերը փոխարինել մսեղեն սրտով: Այլ խոսքով՝ Նա կարող է խստասիրտ մարդուն դարձնել փափկասիրտ, նրբազգաց:

Երբ մեր կյանքը հանձնում ենք Աստծուն, Նա մեր խղճմտանքը զգայուն է դարձնում ճիշտ ու սխալի հանդեպ: Սակայն, եթե չափից հաճախ ենք ընդվզում մեր խղճմտանքի դեմ, մեր սիրտը խստանում է: Երբ դա տեղի է ունենում, մենք պետք է թույլ տանք, որ Աստված փափկեցնի մեր սիրտը, որպեսզի կարողանանք զգայուն լինել Սուրբ Հոգու առաջնորդությանը:

Ես բավականին խստասիրտ մարդ էի, նախքան սկսեցի իրապես հաղորդակցվել Աստծո հետ: Իմ սիրտն աստիճանաբար փափկեց, և ավելի զգայուն դարձա Նրա ձայնի հանդեպ, երբ սկսեցի կանոնավոր ժամանակ անցկացնել Նրա ներկայության մեջ: Եթե մեր սիրտը զգայուն չէ Աստծո հպմանը, շատ անգամ մենք չենք ճանաչի Նրա ձայնը, երբ Նա խոսի: Աստված խոսում է մեղմ, կամաց ձայնով կամ մեղմ հանդիմանության միջոցով:

Խստասիրտ մարդը հակված է, նույնիսկ չգիտակցելով, ցավ պատճառելու ուրիշներին, իսկ դա տրտմեցնում է Աստծո սիրտը: Խստասիրտ մարդիկ, որոնք զբաղված են «իրենց գործերով», զգայուն չեն Աստծո կամքի կամ Աստծո ձայնի հանդեպ: Աստված ցանկանում է փափկեցնել մեր սրտերը Իր Խոսքով, որովհետև քարացած սիրտը չի կարող լսել Նրա ձայնը կամ ընդունել այն բազմաթիվ օրհնությունները, որ Նա փափագում է տալ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սիրտդ փափուկ և զգայուն պահիր Աստծո ձայնի հանդեպ:

Տեր, սովորեցրո՛ւ ինձ աղոթել

«Եվ եղավ, որ մի տեղ աղոթք էր անում, և երբ որ դադարեց, Իր աշակերտներից մեկն ասաց Նրան. «Տեր, սովորեցրո՛ւ մեզ աղոթք անել…»» (ՂՈՒԿԱՍ 11.1):

Ամենակարևոր աղոթքներից մեկը, որ կարող է փոխել մարդու կյանքը, սա է. «Տեր, սովորեցրո՛ւ ինձ աղոթել»: Այստեղ շեշտը ոչ թե *«աղոթելու»*, այլ *«ինձի»* վրա է. «Տեր, սովորեցրո՛ւ *ինձ* աղոթել»: Պարզապես աղոթքի մասին իմանալը բավական չէ: Մենք պետք է իմանանք ինչպե՛ս աղոթել՝ խոսել Աստծո հետ և լսել Նրան որպես անհատներ, որոնք մտերիմ, անձնական, կենդանի փոխհարաբերության մեջ են այն Աստծո հետ, Ում աղոթում են: Թեև կան աղոթքի սկզբունքներ, որոնք վերաբերում են բոլորին, սակայն մենք անհատներ ենք, և Աստված յուրաքանչյուրիս առաջնորդում է յուրովի աղոթելու և հաղորդակցվելու Իր հետ:

Կար ժամանակ, երբ մասնակցում էի «աղոթքի սեմինարների» և հետո փորձում էի աղոթքի մեջ կրկնօրինակել այն, ինչ լսում էի ուրիշներից: Ի վերջո, ես հասկացա, որ Աստված անհատական աղոթքի ծրագիր ուներ ինձ համար. դա այն ձևն էր, որով առավել արդյունավետ կհաղորդակցվեի Նրա հետ: Ինձ անհրաժեշտ էր պարզել դա: Ուստի ես ասացի. «Տեր, սովորեցրո՛ւ *ինձ* աղոթել»: Աստված հզոր կերպով պատասխանեց ինձ և հրաշալի փոփոխություն բերեց աղոթքիս կյանքում:

Եթե ցանկանում ես աղոթքի միջոցով առավել խորը, մտերիմ, ուժեղ փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ, քաջալերում եմ քեզ, որ ասես այս խոսքերը. «Տեր, սովորեցրո՛ւ *ինձ* աղոթել»: Նա կպատասխանի քեզ, և շուտով աղոթքիդ կյանքն ավելի արդյունավետ կդառնա, և առավել մեծ ազատություն կվերապրես աղոթքի մեջ: Աստված կառաջնորդի քեզ յուրահատուկ, արտասովոր ծրագրի մեջ, որը հիանալիորեն գործում է հենց քե՛զ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ Աստված սովորեցնի *քեզ* աղոթել:

Աստված խոսում է մղումների միջոցով

«Ճշմարիտ եմ ասում Քրիստոսում և սուտ չեմ ասում, իմ խղճմտանքն էլ [լուսավորված և մղված] Սուրբ Հոգով վկայում է ինձ» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 9.1):

Այսօրվա խոսքում Պողոսը գրում է Սուրբ Հոգուց «մղված» լինելու մասին: Աստված խոսում է մեզ հետ նաև մղումների կամ հուշումների միջոցով, որոնք տրվում են Սուրբ Հոգուց:

Թույլ տվեք գործնական օրինակ բերել: Երբեմն Աստված մղում է ինձ անելու հասարակ բաներ, ինչպես օրինակ՝ բարձրացնել խանութում կախիչից ընկած հագուստը: Ես չեմ լսում Նրա ֆիզիկական ձայնը, որը հորդորում է ինձ վարվել այդպես, բայց ներքին մղում, ցանկություն եմ ունենում ավելի լավ վիճակում թողնել այն վայրը, որտեղ ոտք եմ դրել: Տերն օգտագործում է իմ հնազանդությունը, որպեսզի սովորեցնի Իր բնավորության մասին: Նա ասում է. «Այն ամենը, ինչ անում ես կյանքում, նման է սերմ ցանելուն: Դու կինձես այն, ինչ ցանես»: Եթե ես ցանեմ կատարելության սերմեր, ապա կարող եմ ակնկալել, որ իմ կյանքում հրաշալի բաներ կկատարվեն:

Մեկ այլ օրինակ. վերջերս Սուրբ Հոգին մղեց ինձ էլեկտրոնային նամակով քաջալերանքի խոսք հղել մի կին ծառայողի: Տարիներ շարունակ ճանաչել եմ նրան և երբեք այդպիսի ցանկություն չեմ ունեցել, բայց ես հետևեցի Սուրբ Հոգու առաջնորդությանը և շուտով այդ կնոջից ստացա պատասխան, որում նա ասում էր, որ իմ քաջալերանքն այդ պահին հաստատություն էր այն որոշումների համար, որ նա կայացնում էր:

Աստծո մղումներով առաջնորդվելը հետաքրքիր փորձառություն է, որը թարմությամբ և խանդավառությամբ է լցնում մեր կյանքի յուրաքանչյուր օրը: Երբ սովորում ենք լսել Աստծուց, պետք է ուշադրություն դարձնենք այս մեղմ, ներքին մղումներին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եղիր զգայուն Սուրբ Հոգու «մղումներին», որքան էլ դրանք աննշան թվան:

Սուրբ Հոգին գիտի ինչ անել

«Բայց երբ որ Նա՝ Ճշմարտության Հոգին, կգա, կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ...» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.13):

Երբ Աստված ուղարկում է Իր Սուրբ Հոգուն՝ մարդկանց կյանքում գործելու համար, Նա դատապարտում է մեղքը, ոչ թե մեղավորներին: Աստվածաշնչում հստակ տեսնում ենք անհատների հանդեպ Աստծո սիրո ապացույցը և այն անհերքելի փաստը, որ Նա մշտապես ցանկանում է խրատել և ուսուցանել մարդկանց, որպեսզի կարողանան հետևում թողնել մեղքը և մտնել այն հրաշալի ծրագրի մեջ, որ Աստված ունի յուրաքանչյուրի համար: Մենք պետք է առանց վախենալու թույլ տանք, որ Նա ցույց տա և խոսի մեզ հետ այն ամենի մասին, ինչը սխալ ենք անում մեր կյանքում:

Սուրբ Հոգին ապրում է մեր ներսում: Նրա գործն է առաջնորդել մեզ, սովորեցնել, աջակցել աղոթքում, մխիթարել, հանդիմանել մեղքը և օգնել իրականացնելու Աստծո ծրագիրը մեր կյանքում:

Մենք կարող ենք վստահել Սուրբ Հոգուն, որովհետև Նա հստակ գիտի, թե ինչ է անհրաժեշտ անել, և երբ է պետք դա անել: Կարող ենք ասել, որ եթե մենք «կոտրված» ենք, Նա գիտի ինչպես «վերականգնել» մեզ:

Համոզված եմ, որ Սուրբ Հոգին գործում է քո մեջ և համագործակցում է քեզ հետ ճիշտ այնպես, ինչպես յուրաքանչյուրիս հետ: Ես քաջալերում եմ քեզ լիովին հնազանդվել Նրան, որովհետև Նա գիտի, թե ինչ է անում, և կանի դա ճիշտ ձևով: Եթե մարդիկ փորձում են շտկել մեզ կամ ինքներս ենք փորձում մեզ շտկել, հաճախ իրավիճակն ավելի է վատանում, բայց Սուրբ Հոգին առեղծվածային ձևով Իր հրաշքներն է գործում մեր կյանքում: Միշտ չէ, որ կհասկանանք, կամ մեզ դուր կգա այն, ինչ Նա անում է, սակայն վերջնական արդյունքը փառավոր կլինի: Հանգստացիր, վայելիր օրդ և գոհացիր Աստծուց, որ Նա գործում է քո մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հանգստացիր և թույլ տուր, որ Աստված գործի:

Ապրի՛ր Աստծո ճանապարհներով

«Տե՛ր, ցո՛ւյց տուր ինձ Քո ճանապարհը, որ գնամ Քո ճշմարտության մեջ. միացրո՛ւ իմ սիրտը, որ Քո անունից վախենա» (ՍԱՂՄՈՍ 86.11):

Եթե լսենք Աստծո ձայնը և ապրենք Նրա ճանապարհներով, եթե ընտրենք ծառայել Նրան, կկարողանանք խուսափել Նրա հետ մղվող երկարատև պայքարից: Իմաստությունը մեզ հուշում է, որ թույլ տանք Աստծուն անել այն, ինչ Նա ուզում է, որպեսզի ստիպված չլինենք շարունակ պտտվել նույն «սարի» շուրջը (տե՛ս Երկրորդ Օրինաց 2.3): Ես հանդիպել եմ մարդկանց, որոնք քսան կամ երեսուն տարի շարունակ պայքարում են նույն խոչընդոտների և խնդիրների դեմ: Եթե սկզբում նրանք հնազանդվեին Աստծուն, ապա վաղուց առաջխաղացում կունենային:

Երբ Աստված գտնում է մեզ, թույլ չի տալիս, որ մնանք նույն տեղում և լճանանք, որքան էլ հաճելի լինի այդ վայրը: Նա մշտապես տանում է մեզ նոր վայրեր և սովորեցնում նոր դասեր: Նա ցանկանում է, որ մենք կյանքով լեցուն լինենք, աճենք և իրականացնենք Նրա նպատակներն ու ծրագրերը:

Աստված ասել է. «Եթե ուշադրություն չդարձնեք Ինձ, անտեսեք և ականջ չդնեք Իմ հանդիմանությանը, Ես կկանչեմ ձեզ: Կփորձեմ օգնել ձեզ, բայց եթե շարունակեք չլսել, երբ նեղության մեջ ընկնեք, խուճապահար կվազեք Ինձ մոտ» (տե՛ս Առակաց 1.24-28): Աստված ողորմած է և երկայնամիտ, բայց գալիս է ժամանակ, երբ պետք է գիտակցենք, որ անհրաժեշտ է պարզապես հնազանդվել Նրան: Որքան շուտ հնազանդվենք և ապրենք ու ընթանանք Աստծո ճանապարհներով, այնքան շուտ կհարթվեն մեր կյանքի իրավիճակները, և մենք առաջ կշարժվենք Աստծո հիանալի ծրագրերի մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. աղոթի՛ր, հնազանդվի՛ր և մի՛ հապաղիր:

Աստված հոգ է տանում յուրաքանչյուր մանրուքի համար

«Չէ՞ որ երկու ճնճղուկ մեկ դանկի է ծախվում, և նրանցից մեկը չի ընկնի գետնին առանց ձեր Հոր: Իսկ ձեր գլխի բոլոր մազերն էլ համարված են: Ուրեմն մի՛ վախեցեք. դուք շատ ճնճղուկներից ավելի լավն եք» (ՄԱՏԹԵՈՍ 10.29-31):

Սուրբ Հոգու զորության միջոցով Աստված ցանկանում է խոսել քեզ հետ ամեն օր: Նա ցանկանում է քայլ առ քայլ առաջնորդելով հանել քեզ նեղությունից և մտցնել այն բարի ծրագրերի մեջ, որ նախատեսել է քեզ համար: Աստված հոգ է տանում քո կյանքի ամենաաննշան մանրուքների համար: Այսօրվա սուրբգրային խոսքերի համաձայն՝ Նա նույնիսկ գիտի, թե որքան մազ կա քո գլխին: Նա հոգ է տանում քո սրտի ցանկությունների համար և կամենում է հայտնել այն ճշմարտությունը, որը կազատի քեզ անհանգստությունից ու վախից:

Աստծո՝ քեզ հետ մտերիմ փոխհարաբերություն ունենալու ծրագիրը գոյություն է ունեցել նախքան քո ծնվելը: Դրա մասին գրված է Սաղմոս 139.16-ում. «Քո աչքերը տեսան իմ կերպարանքը՝ դեռ անպատրաստ. Քո Գրքում գրված էին այն բոլոր օրերը, որ լինելու էին, երբ որ նրանցից մեկը դեռ չկար»: Աստված գիտի մեր բոլոր օրերը և ծրագիր ունի յուրաքանչյուր օրվա համար: Եթե Նրան հարցնենք, թե ինչ պետք է անենք յուրաքանչյուր օր, ու հավատանք, որ Նա առաջնորդում է մեզ, ապա իրականություն կդարձնենք այն ծրագիրը, որ Նա ունի մեր կյանքի համար:

Այն, որ Աստված կարող է ունենալ ծրագիր երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր մարդու համար, անըմբռնելի է թվում, բայց միաժամանակ մեր սիրտը լցվում է մեծ ուրախությամբ, երբ գիտակցում ենք, որ Նա կարող է քաոսը վերածել նշանակալից և արժեքավոր բանի. ժամանակ հատկացրու և ճանաչի՛ր Աստծուն, որովհետև Նրա ծրագիրը բացահայտվում է Նրա հետ մտերիմ փոխհարաբերություն ունենալու միջոցով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հիշի՛ր, եթե Աստված հետևում է ճնճղուկներին, ապա Նա անկասկած վերահսկում է այն ամենը, ինչ այսօր կատարվում է քո կյանքում:

Ճշմարիտ բավարարվածություն

«Որ Նա կշտացնում է կարոտած անձին և լցնում է սոված անձը բարությունով» (ՍԱՂՄՈՍ 107.9):

Հուսով եմ, որ Աստծո հետ վերապրել ես այնպիսի ժամանակներ, որոնք մեծ բավարարվածություն են պատճառել քեզ: Նա միակն է, Ով իսկապես կարող է բավարարել կարոտած անձին, այնպես որ, մի՛ վատնիր ժամանակդ դատարկ փնտրտուքների վրա:

Անկախ նրանից, թե ինչ ունենք, ուր ենք գնում կամ ինչ ենք անում՝ բացի Աստծուց ոչինչ չի կարող իսկապես բավարարել մեզ: Փողը, ճանապարհորդությունը, տներն ու կահույքը, հագուստը, մեծ հնարավորությունները, ամուսնությունը, երեխաները և բազմաթիվ այլ օրհնություններ անշուշտ կարող են խանդավառել և երջանկություն պատճառել մեզ: Սակայն երջանկությունը հիմնված է այն բանի վրա, ինչ տեղի է ունենում տվյալ պահին, մինչդեռ ճշմարիտ ուրախությունը, որ Աստված ցանկանում է՝ մենք ունենանք, հիմնված է ներքին համոզվածության վրա, որն ամենևին կախված չէ արտաքին հանգամանքներից:

Մենք երբեք մշտական բավարարվածություն չենք ունենա, մինչև Աստծուն չդասենք առաջին տեղում, և երբ այդպես անենք, Նա կտա մեզ այն ամենը, ինչ ցանկանում ենք (տե՛ս Մատթեոս 6.33):

Մենք ժամանակ և գումարներ ենք ծախսում, մանրակրկիտ սխեմաներ մշակում ամեն օր սնվելու համար: Երբեմն նախապես գիտենք, թե ինչ ենք ուտելու հաջորդ օրը: Ինչպես հոգ ենք տանում ֆիզիկական կերակուրի համար, այնպես էլ պետք է հոգ տանենք հոգևոր կերակուրի համար: Մեզ հաճախ թվում է, թե կարող ենք հրաշալի փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ՝ առանց Նրա Խոսքով կերակրվելու և Նրա ներկայությամբ լցվելու: Փնտրի՛ր Նրան այնպես ջանասիրաբար, ինչպես ֆիզիկական կերակուրն ես փնտրում:

Մենք ստեղծվել ենք Աստծո հետ կենդանի, կենսական փոխհարաբերություն ունենալու համար, և մեր կյանքում ինչ-որ բան մշտապես կպակասի, եթե չունենանք այդ փոխհարաբերությունը: Եթե ամեն օր ժամանակ հատկացնենք՝ ճաշակելու Նրա Խոսքը և վայելելու Նրա ներկայությունը, ապա մշտապես կունենանք խորը բավարարվածության զգացում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կերակրի՛ր հոգիդ այնպես, ինչպես կերակրում ես մարմինդ:

Ներսից՝ դուրս

«Թագավորի աղջիկը իսպառ փառավոր է ներսում. նրա հանդերձը ոսկեհուռ է» (ՍԱՂՄՈՍ 45.13):

Սուրբ ծննդյան օրերին խանութների ցուցափեղկերն առանձնանում են գունագեղ, փայլուն տուփերով, որոնք կապված են շքեղ ժապավեններով: Այդ տուփերը գուցե ցանկալի տեսք ունեն, բայց եթե բացենք, ներսում ոչինչ չենք գտնի: Դրանք դատարկ են, դրված են այնտեղ՝ խանութին տեսք հաղորդելու համար: Մեր կյանքը նույնպես կարող է նման լինել գեղեցիկ փաթեթավորված տուփի, որի մեջ ոչ մի արժեքավոր բան չկա: Արտաքուստ այն կարող է գրավիչ կամ, նույնիսկ, նախանձելի թվալ ուրիշներին, սակայն ներքուստ մենք կարող ենք չոր և դատարկ լինել: Արտաքուստ կարող ենք հոգևոր թվալ, բայց ներքուստ՝ լինել անզոր, եթե թույլ չենք տալիս Սուրբ Հոգուն բնակվել մեր սրտում:

Այսօրվա խոսքում ընդգծվում է մարդու ներաշխարհի կարևորությունը: Աստված դնում է մեր մեջ Սուրբ Հոգուն, որպեսզի ներգործի մեր ներաշխարհի՝ մեր վերաբերմունքի, հակազդումների, շարժառիթների, առաջնահերթությունների և այլ կարևոր կողմերի վրա: Երբ ամբողջ էությամբ հնազանդվենք Քրիստոսի Իշխանությանը, կլսենք Նրա ձայնը և կվերապրենք Նրա արդարությունը, խաղաղությունն ու ուրախությունը, որոնք մեզ ուժ կտան ապրելու լիառատ կյանքով (տե՛ս Հռոմեացիների 14.17):

Սուրբ Հոգին ապրում է մեր մեջ՝ օգնելով ավելի ու ավելի նմանվել Քրիստոսին: Նա լցնում է մեզ Իր ներկայությամբ և առաջնորդությամբ՝ հնարավորություն տալով ուրիշների հետ բաժնեկցելու այն, ինչը գալիս է մեր հոգու խորքից, և արժեքավոր, զորավոր ու կենարար է նրանց համար, ում հետ հաղորդակցվում ենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ավելի շատ կենտրոնացիր ներաշխարհի՛դ վրա:

Թո՛ղ Հոգին առաջնորդի

«Ես եմ քո Աստվածը, որ քեզ սովորեցնում եմ օգտակար եղողը, որ քեզ առաջնորդում եմ քո գնալու ճանապարհում» (ԵՍԱՅԻ 48.17):

Մարդկանց մեծ մասը վախենում է բոլորին նման չլինելուց: Շատերին ավելի հարմար է հետևել հատուկ կանոնների, քան համարձակվել հետևել Աստծո Հոգու առաջնորդությանը: Հետևելով մարդու ստեղծած կանոններին՝ մենք հաճեցնում ենք մարդկանց, բայց երբ հավատքի քայլ ենք անում և հետևում Աստծո Հոգուն, հաճեցնում ենք Նրան: Մենք չպետք է ճնշված զգանք այն բանի համար, որ չենք աղոթում որոշակի ձևով, որոշակի տևողությամբ կամ որոշակի թեմաների շուրջ, քանի որ ուրիշներն այդպես են աղոթում: Փոխարենը, մենք պետք է ազատ լինենք արտահայտելու մեր ինքնատիպությունը՝ աղոթելով այնպես, ինչպես Աստված է սովորեցնում: Աստված յուրաքանչյուրիս մղում է աղոթելու տարբեր բաների համար, և այդկերպ անուշադրության չի մատնվում այն, ինչի համար պետք է աղոթել:

Մենք ինչ-որ կերպ ապահով ենք զգում, երբ անում ենք այն, ինչ մյուսներն են անում, բայց ցավալին այն է, որ մենք անբավարար կզգանք այնքան ժամանակ, մինչև չսովորենք, այսպես ասած, «արձակել նավը նավամատույցից» և թույլ տալ, որ Աստծո Հոգու օվկիանոսը տանի մեզ այնտեղ, որտեղ կամենում է: Տարիներ շարունակ ես նման էի նավամատույցին կապված նավի, քանի որ հետևում էի աղոթքի այն կանոններին ու հրահանգներին, որոնք սովորել էի ուրիշներից: Դա լավ սկիզբ էր, բայց ժամանակի ընթացքում իմ աղոթքները դարձան չոր ու ձանձրալի: Երբ սովորեցի «արձակել նավը» և հնազանդվել Սուրբ Հոգու առաջնորդությանը, լցվեցի թարմությամբ և ստեղծագործական ներուժով, ու դա հրաշալի էր: Երբ ես աղոթում եմ, Սուրբ Հոգին գրեթե ամեն օր տարբեր կերպ է առաջնորդում ինձ, և ես այլևս չեմ աղոթում կանոնների, հրահանգների և ժամանակացույցի համաձայն:

Հենց հիմա խնդրի՛ր Աստծուց, որ քեզ ցույց տա քո ինքնատիպությունը և օգնի լսելու Իր ձայնը ու հետևելու Իրեն՝ համաձայն այն եզակի և հրաշալի հատկանիշների, որոնցով Նա օժտել է քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. «արձակի՛ր նավդ» և ղեկդ հանձնի՛ր Աստծուն:

Մտերմությունը բերում է ազատություն

«...և Իմ անձից ոչինչ չեմ անում. այլ՝ ինչպես Իմ Հայրը սովորեցրեց Ինձ, այն եմ խոսում» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 8.28):

Իմ կյանքում եղել են պահեր, երբ Աստծուն հարցրել եմ, թե ինչ է ցանկանում, որ անեմ տվյալ իրավիճակում, ու Նա պատասխանել է. «Արա՛ այն, ինչ ուզում ես»: Առաջին անգամ, երբ Նրանից լսեցի այս խոսքերը, վախեցա այն մտքից, որ Աստված կարող էր այդպիսի ազատություն տալ ինձ, սակայն հիմա գիտեմ, որ մեր աճին և հոգևոր հասունացմանը զուգահեռ, Նա ավելի շատ ազատություն է տալիս մեզ:

Այս ամենն ավելի լավ հասկանալու համար ընդամենը պետք է զուգահեռներ անցկացնեի իմ երեխաների հետ: Երբ նրանք փոքր էին և անփորձ, բոլոր որոշումները նրանց փոխարեն ես էի կայացնում: Երբ ավելի հասունացան, թույլ տվեցի, որ ավելի ինքնուրույն գործեն: Մեր երեխաները երկար ժամանակ իմ ու Դեյվի կողքին են եղել և սովորել են ճանաչել մեր սրտերը: Այժմ մեր չորս զավակներն էլ հասուն մարդիկ են և մեծ մասամբ անում են այն, ինչ ցանկանում են, ու հազվադեպ են նեղացնում մեզ, որովհետև նրանք գիտեն մեր սիրտը և գործում են համապատասխանաբար:

Աստծո հետ որոշ տարիներ քայլելուց հետո մենք սկսում ենք ճանաչել Նրա սիրտը, Նրա բնավորությունը և Նրա ճանապարհները: Եթե հանձն ենք առնում հետևել Նրա ճանապարհներին, Նա մեզ ավելի մեծ ազատություն է տալիս, որովհետև մենք Նրա հետ «մեկ» ենք դառնում: Հոգևոր աճին զուգահեռ՝ մենք ավելի ենք ցանկանում պատվել Աստծուն և արտացոլել Նրա սիրտը այն ամենում, ինչ անում ենք: Մեր հոգին լցվում է Նրա Հոգով, և մեր ցանկությունները միաձուլվում են Նրա ցանկություններին:

Այսօրվա խոսքում կարդում ենք, որ Հիսուսն անում և ասում էր միայն այն, ինչ Հայրն էր սովորեցրել: Ես քաջալերում եմ քեզ փնտրել այդպիսի միասնություն Աստծո հետ, որպեսզի այլևս ոչինչ չանես քո ցանկությամբ և քո ուժերով, այլ Տիրոջ հետ այնպիսի մտերմություն վայելես, որ ցանկություններդ մեկ դառնան Նրա ցանկությունների հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ Աստծո ցանկությունները դառնան քո ցանկությունները:

Ստուգել և հավասարակշռել

«Շատ խաղաղություն կա Քո օրենքը սիրողների համար…» (ՍԱՂՄՈՍ 119.165):

Աստվածաշնչյան ընթերցանության այս ձեռնարկում բազմիցս նշել եմ այն փաստը, որ Աստված երբեմն առաջնորդում է մեզ հանգամանքների միջոցով: Սա իսկապես ճիշտ է, բայց մենք պետք է պահպանենք հավասարակշռություն, երբ ձգտում ենք լսել և հնազանդվել Նրա ձայնին հանգամանքների միջոցով: Խորհուրդ չեմ տալիս օգտագործել *միայն* հանգամանքները Աստծո կամքը զանազանելու համար: Մենք պետք է նաև հաշվի առնենք խաղաղությունը և իմաստությունը, որոնց մասին նույնպես խոսել եմ այս գրքում: Սրանք նշանակալի միջոցներ են, որոնցով լսում ենք Աստծուց, և երբեք չպետք է անտեսենք դրանք: Հանգամանքը կարող է նման լինել բաց դռան, սակայն չպետք է մտնենք այդ դռնով, մինչև չունենանք խաղաղություն:

Միմիայն հանգամանքներին հետևելով կարող ենք լուրջ անախորժության մեջ հայտնվել: Ինչպես Աստված, այդպես էլ սատանան կարող է նպաստավոր հանգամանքներ ստեղծել, որովհետև նա ունի մուտք դեպի այն բնական տիրույթը, որտեղ մենք ապրում ենք: Հետևաբար, եթե հետևենք միայն հանգամանքներին՝ հաշվի չառնելով Աստծո ձայնը լսելու մյուս միջոցները, ապա կարող ենք խաբվել:

Մենք գիտենք, որ չենք կարող գնալ հակառակ Աստծո Խոսքին: Մենք պետք է առաջնորդվենք խաղաղությամբ և քայլենք իմաստությամբ: Հեշտ է արագ «ներքին ստուգում» կատարել և որոշել մեր սրտում տիրող խաղաղության աստիճանը, նախքան թույլ կտանք, որ հանգամանքներն առաջնորդեն մեզ: Աստծուց լսելու ամենաապահով միջոցը Հոգով առաջնորդվելու աստվածաշնչյան մեթոդները համակցելն է, այնուհետև դրանք միմյանց հետ ստուգելը և հավասարակշռելը: Լավագույն մոտեցումն այն է, որ դիտարկենք Աստծո Խոսքի խորհուրդն ամբողջությամբ և երբեք չփորձենք գտնել այն հատվածները, որոնք համապատասխանում են նրան, ինչ մենք ենք ցանկանում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. որոշումներ կայացնելիս միշտ հետևի՛ր խաղաղության:

Աստված անձնապես ճանաչում է քեզ

«Որովհետև դեռ բնավ խոսք չկա իմ լեզվի վրա. ահա, ո՛վ Տեր, Դու ամենը գիտես» (ՍԱՂՄՈՍ 139.4):

Քանի որ մենք որպես անհատ ենք հարաբերություն հաստատում Աստծո հետ, ինչը և Նրա ցանկությունն է, որպես անհատ էլ աղոթում ենք Նրան: Նույնիսկ ուրիշների հետ աղոթելիս չենք կորցնում մեր անհատականությունը. մենք պարզապես միացնում ենք մեր սրտերը և միաձայն աղոթք բարձրացնում: Ես հավատում եմ, որ ընդհանուր աղոթքների ժամանակ Աստված ավելի շատ ցանկանում է, որ մեր սրտերը միաբանվեն, քան մեր մեթոդները միանման լինեն:

Երբ ասում ենք. «Տե՛ր, սովորեցրո՛ւ ինձ աղոթել», մենք խնդրում ենք, որ Նա սովորեցնի մեզ աղոթել այնպես, ինչպես բնորոշ է միայն մեզ, որպեսզի մեր աղոթքները հեշտությամբ և բնականորեն արտահայտեն մեր էությունը: Աղոթքի սենյակ մտնելիս չպետք է թողնենք մեր անհատականությունը դռան մոտ: Մենք պետք է մոտենանք Աստծուն այնպես, ինչպես կանք, և հնարավորություն տանք Նրան վայելելու այն յուրահատուկ ընկերակցությունը, որ Նա ցանկանում է ունենալ յուրաքանչյուրիս հետ: Մենք պետք է մոտենանք Աստծուն մեր ուժեղ և թույլ կողմերով, ինքնատիպությամբ և այն ամենով, ինչով այդպես հրաշալիորեն տարբերվում ենք աշխարհի մյուս մարդկանցից: Աստծուն հաճելի է հանդիպել մեզ հետ հենց այնտեղ, որտեղ կանք, Նա հաճույք է ստանում մեզ հետ անձնական փոխհարաբերություններ հաստատելուց, և Նրան բավականություն է պատճառում այն, որ կարողանում է օգնել մեզ դառնալու այնպիսին, ինչպիսին ցանկանում է, որ լինենք: Մենք լցվում ենք նոր ուժով և թարմությամբ, երբ գիտակցում ենք, որ կարող ենք մոտենալ Աստծուն այնպիսին, ինչպիսին կանք, և հանգստանալ Նրա ներկայության մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծուն մոտենալուց առաջ կարիք չկա «դիմահարդարվելու»:

Զորացի՛ր և քա՛ջ եղիր

«Միայն թե զորացի՛ր և շատ քա՛ջ եղիր, որ պահես և անես այն ամեն օրենքի պես, որ Իմ ծառա Մովսեսը քեզ պատվիրել է...» (ՀԵՍՈՒ 1.7):

Աստված ցանկանում է, որ լիովին ազատ լինենք վախից: Նա չի կամենում, որ ապրենք տանջանքի մեջ, և չի ուզում, որ վախը խանգարի մեզ վստահաբար անելու այն, ինչ Նա պատվիրում է: Աստված գործում է մեր անունից, երբ մենք կենտրոնանում ենք Նրա, այլ ոչ թե մեր վախերի վրա, երբ լսում ենք Նրա, այլ ոչ թե վախի ձայնը: Երբ ունենում ենք վախի մտքեր կամ զգացողություն, մեր թշնամին՝ սատանան, փորձում է շեղել մեզ Աստծուց և Նրա կամքից: Հնարավոր է, որ կյանքի տարբեր ժամանակներում վախի զգացում ունենանք, սակայն կարող ենք վստահել Աստծուն, և անհրաժեշտության դեպքում «գործենք՝ թեկուզ վախենալով»:

Տարիներ առաջ Աստված խոսեց սրտիս այն մասին, որ ես կարող եմ «գործել՝ թեկուզ վախենալով»: Երբ Նա Հեսուին ասաց չվախենալ, այդկերպ զգուշացնում էր, որ վախը կփորձի կանգնեցնել նրան՝ թույլ չտալով իրականացնել այն, ինչ Աստված ուզում էր, որ նա աներ: Աստված Հեսուին հորդորեց թույլ չտալ, որ վախը վերահսկի իրեն, այլ շարունակել քաջությամբ և զորությամբ առաջ շարժվել:

Երբ վախի զգացում ենք ունենում, առաջին բանը, որ պետք է անենք, աղոթելն է: Մենք պետք է վճռականորեն փնտրենք Աստծուն այնքան, մինչև ունենանք հուզական և մտավոր հաղթանակ վախի հանդեպ: Այսպես վարվելով՝ կենտրոնանում ենք Աստծո, այլ ոչ թե մեր վախերի վրա: Մենք երկրպագում ենք Նրան՝ Նրա Ով լինելու համար, և մեր երախտագիտությունն ենք արտահայտում այն ամենի համար, ինչ Նա արել է, անում է և կշարունակի անել:

Հաջորդ անգամ, երբ դեմառդեմ կանգնես վախին, հիշի՛ր, որ պետք է ուժեղ և քաջ լինես ու շարունակես առաջ շարժվել Աստծո կամքի մեջ: Նույնիսկ երբ ստիպված լինես որևէ բան անել վախենալով, գնա՛ և արա՛ դա՝ կենտրոնանալով Աստծո, այլ ոչ թե վախի վրա:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հետևի՛ր Աստծո ձայնին, այլ ոչ թե վախին:

Աստված թարմ Խոսք է տալիս

«Խնդրե՛ք Տիրոջը և Նրա զորությունը...» (Սաղմոս 105.4):

Երբ Հովսափատ թագավորը լսեց, որ հսկայական զորք է կուտակվում Հուդայի վրա հարձակվելու համար, նա գիտեր, թե ինչ պետք է աներ: Հարկավոր էր ոչ թե խորհուրդ հարցնել մարդկանցից, այլ փնտրել Աստծուն և անմիջապես լսել Նրանից:

Անկասկած, Հովսափատը նախկինում էլ մարտեր էր վարել, ուստի ինչո՞ւ չէր կարող օգտագործել նույն մեթոդները, որոնք կիրառել էր նախորդ իրավիճակներում: Անկախ նրանից, թե այս կամ այն բանը քանի անգամ է գործել անցյալում, հնարավոր է, որ այն չօգնի ներկայում ճգնաժամը հաղթահարելուն, եթե Աստված չթարմացնի օծությունը: Նա կարող է օծել հին մեթոդը և գործել դրա միջոցով, բայց կարող է նաև տալ բոլորովին նոր ուղղություն, նոր հրահանգներ, որոնց մասին երբեք չենք իմացել: Մենք պետք է մշտապես հուսանք Աստծո՛ւն, ոչ թե մեթոդներին, բանաձևերին կամ ճանապարհներին, որոնք անցյալում գործել են: Մեր ուշադրությունը պետք է կենտրոնացնենք Աստծո՛ վրա, ուժի և մատակարարման մեր աղբյուրը պետք է լինի միմիայն Աստված:

Հովսափատը գիտեր, որ մինչև չլսեր Աստծուց, հաջողություն չէր ունենա: Աստվածաշնչի «Ընդլայնված թարգմանությունում» ասվում է, որ Աստծո ձայնը լսելը «նրա կենսական կարիքն» էր, մի բան, առանց որի Նա չէր կարող: Այն կենսական անհրաժեշտություն էր, որը կարևոր էր նրա կյանքի և ամբողջ ժողովրդի գոյատևման համար:

Գուցե դու էլ նույնպիսի իրավիճակում ես: Հնարավոր է՝ դու նույնպես Աստծուց թարմ խոսքի կարիք ունես: Գուցե զգում ես, որ խեղդվող մարդու պես վերջին ճիգերն ես գործադրում ջրի երեսին մնալու համար: Գուցե հուսահատորեն կարիք ունես լսելու Աստծուց, որպեսզի կարողանաս ապրել:

Աստված ուզում է խոսել քեզ հետ նույնիսկ ավելի շատ, քան ցանկանում ես լսել Նրանից: Փնտրի՛ր Նրա երեսը՝ Նրան ժամանակ և ուշադրություն հատկացնելով, ու դու չես հիասթափվի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. բա՛ց եղիր այսօր Աստծուց թարմ խոսք լսելու համար:

Լսի՛ր և հնազանդվի՛ր

«Եվ Սիմոնը պատասխանեց և ասաց Նրան. «Վարդապե՛տ, ամբողջ գիշեր աշխատեցինք և ոչինչ չբռնեցինք, բայց Քո խոսքի համար ուռկանը կգցեմ»» (ՂՈՒԿԱՍ 5.5):

Աստված մեզ համար օրհնություններ և նոր հնարավորություններ ունի պահած: Դրանք ստանալու համար պետք է լսենք Նրա ձայնը, որպեսզի կարողանանք հասկանալ, թե ինչի հետ գործ ունենք, այնուհետև հավատքի քայլեր անենք: Սա հաճախ նշանակում է անել բաներ, որոնք մտադիր չենք անելու, գուցե չենք կարծում, որ կգործեն կամ չենք զգում, որ կարևոր են: Բայց Աստծո հանդեպ մեր վստահությունն ու պատկառանքը ավելի մեծ պետք է լինի, քան այն, ինչ անձամբ ցանկանում ենք, կարծում կամ զգում:

Սրա հրաշալի օրինակը տեսնում ենք Ղուկասի 5-րդ գլխում: Պետրոսը և մի քանի աշակերտներ ամբողջ գիշեր ձկնորսություն էին արել, բայց ոչինչ չէին բռնել: Նրանք հոգնած էին. իրականում՝ ուժասպառ եղած: Նրանք լավ քնի և թերևս լավ կերակուրի կարիք ունեին: Նրանք հենց նոր էին ավարտել ուռկանները լվալու և հավաքելու դժվար աշխատանքը:

Այդ ժամանակ Հիսուսը հայտնվեց լճի ափին և ասաց, որ եթե ուզում են ձկան մեծ որս ունենալ, կրկին պետք է նետեն ուռկանները՝ այս անգամ ավելի խորը: Պետրոսը բացատրեց, որ ամբողջ գիշեր աշխատել են ու ոչինչ չեն բռնել, և հիմա էլ հոգնած են: Այնուամենայնիվ, նաև համաձայնեց կրկին փորձել, որովհետև Հիսուսն էր դա պատվիրել:

Հենց այսպիսի վերաբերմունք է Տերն ուզում, որ ունենանք: Գուցե մտադիր չենք ինչ-որ բան անելու, գուցե չենք ցանկանում դա անել, գուցե չենք կարծում, որ դա լավ գաղափար է, գուցե վախենում ենք, որ դա չի գործի, բայցևայնպես, պետք է պատրաստ լինենք լսելու և հնազանդվելու Աստծուն, երբ խոսի մեզ հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. պատրաստ եղիր հնազանդվելու Աստծուն, նույնիսկ եթե վստահ չես, թե ինչ ես անում: Նա քեզ համար հրաշալի բաներ ունի պահած:

Խնդիրները հետապնդում են քեզ

«Եվ եղավ սրանից հետո, որ Մովաբի որդիները և Ամմոնի որդիները և նրանց հետ Մաոնացիներից էլ եկան Հովսափատի վրա պատերազմելու» (Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20.1):

Այսօրվա խոսքում գրված է, որ մովաբացիները, ամմոնացիները և մաոնացիները հետապնդում էին Հովսափատ թագավորին և Հուդայի ժողովրդին: Հին կտակարանի այլ հատվածներում տեսնում ենք, որ Աստծո ժողովրդի համար մշտապես խնդիրներ էին ստեղծում հեբուսացիները, քետացիներն ու քանանացիները:

Մեր պարագայում, մեզ անհանգստացնում են վախերը, հիվանդությունները, լարվածությունը, ֆինանսական խնդիրները, վտանգավոր իրավիճակները, փնթփնթան հարևանները և այլն:

Ի՞նչ խնդիրներ են հետապնդում քեզ հենց հիմա. դու կարող ես սովորել Հովսափատ թագավորից՝ ուշադրություն դարձնելով, թե ինչպես նա արձագանքեց իրեն հետապնդողներին: Սկզբում վախեցավ, այնուհետև արագորեն մեկ այլ բան արեց. սկսեց փնտրել Տիրոջը: Նպատակ դնելով լսել Նրանից՝ Հովսափատը նույնիսկ ծոմ հռչակեց իր թագավորության մեջ: Նա գիտեր, որ պետք է լսեր Աստծուց: Նա մարտական ծրագրի կարիք ուներ, և միայն Աստված կարող էր տալ նրան այնպիսի ծրագիր, որը կպսակվեր հաջողությամբ:

Ինչպես Հովսափատը, մենք նույնպես սովորություն պետք է դարձնենք ծանր դրության մեջ վազել Աստծո մոտ, ոչ թե մարդկանց: Մենք ավելի շուտ պետք է փնտրենք Նրան, քան ապավինենք մեր իմաստությանը կամ հարցնենք ուրիշների կարծիքը: Երբ բախվում ենք դժվարության, «վազում ենք հեռախոսի, թե՞ Գահի մոտ»: Աստված կարող է գործածել ինչ-որ մեկին՝ մեզ խորհուրդ տալու համար, սակայն առաջինը միշտ պետք է փնտրենք Նրան:

Աստծո ձայնը լսելը հրաշալի միջոց է վախի դեմ պայքարելու համար: Երբ լսում ենք Նրանից, մեր սիրտը լցվում է հավատքով, և վախը հեռանում է: Հովսափատը, որ ապրել է հարյուրամյակներ առաջ, գիտեր, որ կարիք ուներ լսելու Աստծո ձայնը: Այս նույն կարիքը մենք ունենք այսօր. ջա՛նք արա փնտրելու Աստծուն և լսելու Նրա ձայնն այսօր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր Աստծուց պաշտպանել այն խնդիրներից, որ հետապնդում են քեզ:

Քո մշտական, ամենօրյա ընկերը

«Իրիկունն ու առավոտը և կեսօրին ողբում եմ և հառաչում, և Նա կլսի իմ ձայնը» (ՍԱՂՄՈՍ 55.17):

Աստծո հետ ընկերություն հաստատելը նման է երկրագնդի վրա որևէ մեկի հետ ընկերություն հաստատելուն: Դա ժամանակ է պահանջում: Ճշմարտությունն այն է, որ դու կարող ես մոտ լինել Աստծուն այնքան, որքան կցանկանաս. դա կախված է այն ժամանակից, որը պատրաստ ես ներդնելու Նրա հետ ունեցած քո փոխհարաբերության մեջ: Քաջալերում եմ ճանաչել Նրան՝ ժամանակ անցկացնելով աղոթքի և Խոսքի մեջ: Քո ընկերությունն Աստծո հետ կխորանա և կաճի, երբ մշտապես հետևես Նրան և վերապրես Նրա հավատարմությունը: Աստծո հետ՝ որպես ընկեր, փոխհարաբերություն զարգացնելու և մարդկանց հետ փոխհարաբերություններ կառուցելու տարբերությունն այն է, որ Աստված քեզ համար դառնում է իրական Ընկեր: Ընկեր, որը երբեք չի թողնի և չի լքի: Ընկեր, որը հավատարիմ է, հուսալի, սիրող և ներող:

Առաջնահերթ դարձրու Աստծո հետ ամուր ընկերություն հաստատելը և Նրան կարևորագույն տեղ տալը քո յուրաքանչյուր օրվա մեջ: Ներգրավիր Նրան քո մտքերի, խոսակցությունների և առօրյա գործողությունների մեջ: Մի՛ վազիր Նրա մոտ միայն հուսահատության պահերին: Խոսի՛ր Նրա հետ նպարեղենի խանութում, մեքենա վարելիս, մազերդ սանրելիս, շանը զբոսանքի տանելիս կամ ճաշ պատրաստելիս: Մոտեցի՛ր Նրան որպես քո գործընկերոջ և ընկերոջ ու պարզապես հրաժարվի՛ր առանց Նրա որևէ բան անելուց: Նա իսկապես ցանկանում է ներգրավված լինել քո կյանքի մեջ: Հանի՛ր Աստծուն «կիրակնօրյա տուփից», որի մեջ շատերը պահում են Նրան, և թո՛ւյլ տուր, որ Նա քեզ հետ լինի երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և ամբողջ կիրակին: Մի՛ փորձիր պահել Նրան կրոնական «ճամփախցում», որովհետև Նա ցանկանում է ազատ մուտք ունենալ քո կյանքի բոլոր բնագավառների մեջ: Նա ուզում է լինել քո ընկերը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված քո Տերն է, բայց նաև ուզում է լինել քո ընկերը:

Աստծո օծության բանալին

«... Սա ինձ համար սուրբ օծման յուղ պիտի լինի ... Մարդու մարմնի վրա չպիտի թափվի...» (ԵԼԻՑ 30.31,32):

Ես ոչինչ չունեմ առաջարկելու մարդկանց՝ բացի Աստծո օծությունից (ներկայությունից և զորությունից), որ իմ կյանքի վրա է: Ես տպավորիչ չեմ. ես չեմ երգում կամ չեմ անում բաներ, որոնք կարող են ցնցող տպավորություն թողնել մարդկանց վրա: Ես պարզապես խոսում եմ Աստծո Խոսքի ճշմարտությունը: Ես տալիս եմ աստվածաշնչյան հայտնություններ հաղթանակի մեջ ապրելու և գործնականում Աստծուն հնազանդվելու մասին: Ես մարդկանց ասում եմ, թե ինչպես կարող են փոխվել, որպեսզի լիարժեքորեն վայելեն կյանքը: Ես նրանց ցույց եմ տալիս, թե ինչպես կարող են աճել հոգևորապես: Ես սովորեցնում եմ Աստծո Խոսքն այնպես, որ օգնեմ իրենց առօրյայում: Աստծո շնորհքով այս ծառայությունը հասնում է աշխարհի միլիոնավոր մարդկանց, բայց ես *պետք է* ունենամ Աստծո օծությունը, որպեսզի անեմ այն, ինչ Նա կանչել է ինձ անելու, այլապես արժեք չունեմ որևէ մեկի համար: Ես հասկացել եմ, որ Աստծո օծությունը չեմ ունենա, եթե չքայլեմ սիրո մեջ, որովհետև Աստված չի օծում մարմինը (մեր ցանկությունները, եսասիրական վերաբերմունքն ու վարքագիծը):

Այսօրվա խոսքում կարդում ենք, որ երբ օծման յուղը թափվում էր Հին կտակարանի քահանաների վրա, այն չէր կարող թափվել նրանց մարմնի վրա: Աստված չի օծում մարմնավոր վարքագիծը: Մենք իսկապես պետք է վարվենք սիրով, որովհետև դա օգնում է օծությանը և ավելացնում այն մեր կյանքում, իսկ օծությունն ուժ է տալիս անելու այն, ինչ Աստված կանչել է մեզ իրականացնելու: Աստծո օծությունը Նրա ներկայությունն ու զորությունն է, և այն հնարավորություն է տալիս հեշտությամբ անել այն, ինչ երբևէ չէինք կարողանա իրագործել մեր ուժերով: Բոլորս Աստծո օծության կարիքն ունենք: Հարկավոր չէ, այսպես կոչված, «հոգևոր» աշխատանք անել, որպեսզի Աստծո օծության կարիքն ունենանք: Օծությունն անհրաժեշտ է մեզ լավ ծնողներ և լավ ընկերներ լինելու համար, ամուր ամուսնություններ ունենալու համար, նաև՝ մեր արած յուրաքանչյուր գործի մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո ներկայությունը և զորությունը (օծությունը) այն ամենն են, ինչ անհրաժեշտ է քեզ ցանկացած բանում հաջողակ լինելու համար:

Աստված կվերականգնի քո անձը

«Նա վերականգնում է իմ անձը…» (ՍԱՂՄՈՍ 23.3):

Իմ կյանքում կար մի ժամանակաշրջան, երբ սաստում և արգելում էի այն, ինչ չէի ցանկանում, որովհետև մտածում էի, որ դա սատանայից էր: Ես այնքան սաստեցի, մինչև ուժասպառ եղա: Բայց հետո բացահայտեցի, որ շատ բաներ, որ փորձում էի սաստել, Աստծուց էին: Շատ բաներ, որ ինձ դուր չէին գալիս կամ չէի սիրում, Աստված էր թույլ տալիս՝ իմ աճի և զարգացման համար:

Եբրայեցիների թղթի հեղինակն ասում է, որ մենք պետք է հնազանդվենք Աստծո կարգուկանոնին: Նա պատժում է մեզ միայն այն պատճառով, որ սիրում է մեզ: Մի՛ փորձիր ընդդիմանալ այն ամենին, ինչ Աստված մտադիր է օգտագործել հօգուտ քեզ: Խնդրի՛ր Տիրոջից խորը և մանրակրկիտ աշխատանք կատարել քո ներսում, որպեսզի կարողանաս լինել այն, ինչ Նա ցանկանում է, որ լինես, անես այն, ինչ Նա ցանկանում է, որ անես, և ունենաս այն, ինչ Նա ցանկանում է, որ ունենաս: Իրականում, ես հոգևորապես չաճեցի այն տարիներին, երբ ընդդիմանում էի ինձ համար ցավոտ կամ դժվար հանգամանքներին: Ես շարունակ պտտվում էի նույն սարերի (խնդիրների) շուրջը: Ի վերջո հասկացա, որ փորձում էի խուսափել ցավից, բայց, միևնույն է, այն կար: Նույն վիճակում մնալու ցավը շատ ավելի վատ է, քան փոխվելու ցավը:

Անձի բաղկացուցիչ մաս է շունչը (միտք, կամք և զգացմունքներ): Հաճախ մեր շունչը վնասվում է կյանքի փորձառություններից: Աստված խոստանում է վերականգնել մեր անձը, եթե համագործակցենք Սուրբ Հոգու հետ, Ով գործում է մեր ներսում: Իմ անձը կոտրված էր, այն չուներ խաղաղություն և ուրախություն, բայց Աստված վերականգնեց ինձ, և նույնը Նա ցանկանում է անել քեզ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. բացի՛ր քո անձը Աստծո համար և խնդրի՛ր Նրան բժշկել յուրաքանչյուր վերք ու վնասվածք:

Մի՛ ընդդիմացիր. ընդունի՛ր այն, ինչ Աստված ասում է

«Փորձի՛ր ինձ, ո՛վ Աստված, և ճանաչի՛ր իմ սիրտը. քննի՛ր ինձ և ճանաչի՛ր իմ մտածմունքները: Եվ տե՛ս, թե որ չար ճանապարհում լինեմ, և առաջնորդի՛ր ինձ դեպի հավիտենական ճանապարհը» (ՍԱՂՄՈՍ 139.23,24):

Հաճախ, երբ հանդիմանվում ենք մեղքի համար, դառնում ենք փնթփնթան, որովհետև Աստված աշխատում է մեզ հետ: Մենք ճնշվում և անհարմարության զգացում ենք ունենում, մինչև չենք ընդունում մեր մեղքը, պատրաստ չենք լինում շրջվելու դրանից և ներողություն խնդրելու: Հենց որ համաձայնում ենք Աստծո հետ, վերադառնում է մեր խաղաղությունը, և բարելավվում է մեր վարքագիծը:

Սատանան հարձակվում է մեզ վրա դատապարտություն և ամոթ բերելով, որպեսզի մեզ ետ պահի աղոթքի մեջ Աստծուն վստահորեն մոտենալուց՝ թույլ չտալով ստանալ մեր խնդրանքների պատասխանը և վայելել Աստծո հետ հաղորդակցումը: Ինքներս մեր մասին վատ կարծիք ունենալը կամ մտածելը, թե Աստված բարկացած է մեզ վրա, բաժանում է մեզ Նրա ներկայությունից: Նա երբեք չի թողնում մեզ, բայց մեր վախերը կարող են ստիպել, որ կասկածենք Նրա ներկայությանը:

Այդ է պատճառը, որ այդքան կարևոր են ճշմարտությունը զանազանելը և հանդիմանության ու դատապարտության տարբերությունն իմանալը: Եթե ականջ ես դնում հանդիմանությանը, այն բարձրացնում է քեզ և հեռացնում մեղքից. դատապարտությունը միայն ստիպում է վատ կարծիք ունենալ ինքդ քո մասին և հաճախ ավելի է խորացնում խնդիրը:

Խնդրի՛ր, որ Աստված պարբերաբար խոսի քեզ հետ և հանդիմանի մեղքի համար՝ գիտակցելով, որ հանդիմանությունը օրհնություն է, ոչ թե խնդիր: Աղոթելիս գրեթե միշտ խնդրում եմ իմ երկնային Հորը հայտնել իմ սխալները և մաքրել ինձ մեղքից ու անարդարությունից: Հանդիմանությունը կենսական անհրաժեշտություն է Աստծո հետ ճիշտ քայլելու համար: Հանդիմանության պարգևը Աստծուն լսելու միջոցներից է: Մի՛ ընդդիմացիր. ընդունի՛ր հանդիմանությունը, որովհետև այն բարձրացնում է քեզ դեպի ազատության և Աստծո հետ մտերմության նոր մակարդակ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թող Աստված բարձրացնի քեզ և հեռացնի մեղքից:

Աստված ունի պատասխան՝ նախքան մեր խնդրելը

«Օրհնյալին եմ կանչում՝ Եհովային, և կազատվեմ իմ թշնամիներից» (Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 22.4):

Զարհուրելի մարտից առաջ Հովսափատը մոտեցավ Աստծուն՝ նախևառաջ փառաբանելով Նրան և ասելով, թե որքան մեծ, փառահեղ, հզոր և հրաշալի է Նա: Այնուհետև սկսեց թվարկել այն հզոր գործերը, որ Տերն արել էր անցյալում՝ Իր ժողովրդին պաշտպանելու և Իր խոստումները պահելու համար: Այդ ամենից հետո նա իր խնդրանքը ներկայացրեց Աստծուն: Սկզբում Հովսափատը արտահայտեց իր վստահությունն այն բանում, որ Տերը լուծելու էր այդ խնդիրը: Ապա պարզապես ասաց. «Օ՜, իմիջիայլոց, Աստվա՛ծ, մեր թշնամիները դուրս են եկել մեր դեմ, որպեսզի վերցնեն այն տարածքները, որ տվել ես մեզ՝ իբրև ժառանգություն: Ես մտածեցի, որ պետք է նշեի այս փոքրիկ խնդիրը: Բայց Դու այնքա՛ն մեծ ես. ես գիտեմ, որ այս իրավիճակն արդեն Քո վերահսկողության տակ է»:

Երբ Աստծուց օգնություն ենք խնդրում, պետք է գիտակցենք, որ Նա լսում է մեզ, երբ առաջին անգամ դիմում ենք Նրան: Հարկ չկա, որ մեր աղոթքները պտտվեն միևնույն բանի շուրջ: Կարծում եմ՝ ամենից լավ է խնդրել Աստծուց այն, ինչ ցանկանում ենք կամ ինչի կարիքն ունենք, այնուհետև, երբ կրկին մտաբերենք դա, պարզապես շնորհակալություն հայտնենք Նրան՝ համոզված լինելով, որ Նա գործում է: Մենք պետք է ասենք, որ վստահում ենք Իրեն և գիտենք, որ Իր ժամանակը կատարյալ է:

Աստված ունի ծրագիր քո ազատագրման համար, նախքան քո խնդիրները երբևէ կհայտնվեն: Աստված երբեք անակնկալի չի գալիս: Շարունակի՛ր կենտրոնանալ Նրա վրա. երկրպագի՛ր, փառաբանի՛ր և գոհացի՛ր Նրանից, որ օգնությունը ճանապարհին է: Շարունակի՛ր ականջ դնել Նրա ձայնին, մինչ Նա անցկացնում է քեզ մարտերի միջով և առաջնորդում դեպի հաղթանակ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված մեր հիշեցումների կարիքը չունի, բայց Նա մեր փառաբանության կարիքն ունի:

Աստված ուզում է օրհնել մեզ

«Որովհետև Տեր Աստված արև և վահան է. Տերը շնորհք և փառք է տալիս. Նա ոչ մի բարիք չի խնայում անարատությունով գնացողներից» (ՍԱՂՄՈՍ 84.11):

Մեր խղճմտանքի միջոցով Սուրբ Հոգին թույլ է տալիս մեզ իմանալու՝ արդյո՞ք որևէ սխալ բան ենք անում, որը տրտմեցնում է Նրան, խանգարում Նրա հետ ունեցած մեր փոխհարաբերությանը կամ թուլացնում մեր զգայունակությունը Նրա ներկայության հանդեպ: Նա օգնում է նաև վերադառնալ այնտեղ, որտեղ պետք է լինենք: Նա հանդիմանում և համոզում է մեզ, սակայն երբեք, երբեք չի դատապարտում:

Աստված սիրում է մեզ նույնիսկ ավելի, քան մենք սիրում ենք մեր երեխաներին, և Իր սիրով խրատում է մեզ: Ես հիշում եմ, որ տանել չէի կարողանում, երբ փոքր հասակում երեխաներիս զրկում էի արտոնություններից: Բայց գիտեի, որ նրանք անախորժության մեջ կհայտնվեին, եթե չսովորեին լսել ինձ: Աստված միևնույն մտահոգությունն ունի մեզ համար, բայց Նա համբերատար է: Նա շարունակ կրկնում է, թե ինչ պետք է անենք: Նա կարող է տասնհինգ տարբեր ձևերով խոսել մեզ հետ՝ փորձելով գրավել մեր ուշադրությունը, ցանկանալով, որ հնազանդվենք Իրեն մեր իսկ օգուտի համար:

Աստծո հանդիմանող սիրո ուղերձն ամենուրեք է: Նա ուզում է, որ լսենք Իրեն, որովհետև սիրում է մեզ: Եթե պնդենք մերը, Նա մեզնից կպահի արտոնություններն ու օրհնությունները: Աստված այդպես է վարվում միայն այն պատճառով, որ ցանկանում է՝ հասունանանք այն աստիճան, որ կարողանա Իր օրհնությունները լիովին թափել մեզ վրա: Եթե Աստված ձրի տվեց Իր Որդուն՝ Հիսուսին, անկասկած, մեզնից չի խնայի այն, ինչի կարիքն ունենանք: Մենք կարող ենք հուսալ Նրան՝ մեր կարիքները բավարարելու և մեզ առատապես օրհնելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հիշի՛ր, որ Աստված ուզում է օրհնել քեզ նույնիսկ այն ժամանակ, երբ խրատում է:

Կենդանի՝ Աստծո համար

«Նույնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած և նրա հետ ձեր կապը խզված համարեք, և Աստծուն՝ կենդանի [ապրելով Նրա հետ անքակտելի փոխհարաբերության մեջ]՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսում» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 6.11):

Մարդիկ, որոնք փրկված չեն, հոգևորապես մեռած են: Սա նշանակում է, որ նրանք անկարող են վայելել Աստծո հետ հաղորդակցումը կամ հասկանալ Սուրբ Հոգու ներքին մղումները և հետևել դրանց: Այս մարդիկ սահմանափակված են իրենց բնական կամ մտավոր գիտելիքներով և առողջ բանականությամբ. նրանք չեն կարող օգտվել հայտնությամբ ապրելու արտոնությունից և զորությունից: Բայց երբ մենք վերստին ծնվում և հոգևորապես կենդանանում ենք, Աստված կարողանում է խոսել մեզ հետ և ցույց տալ բաներ, որոնք չէինք կարող իմանալ առանց աստվածային հայտնության:

Անցյալում ես աշխատել եմ և զբաղեցրել պատասխանատու պաշտոններ՝ չունենալով այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ էին ինձ տրված հանձնարարությունները կատարելու համար: Սակայն, ես ունեի մտերիմ, անձնական փոխհարաբերություն Տիրոջ հետ, ուստի Նա առաջնորդում էր ինձ և կարողություն տալիս անելու այնպիսի բաներ, որոնց համար չունեի լիարժեք կրթություն:

Ես երբեք չեմ սովորել, թե ինչպես պետք է ծառայություն ղեկավարել կամ օգտագործել զանգվածային հաղորդակցման միջոցները: Բայց Աստված ինձ և մեր թիմին զինել է անհրաժեշտ ամեն ինչով, որպեսզի տարբեր միջոցներով՝ այդ թվում ԶԼՄ-ներով ծառայենք ամբողջ աշխարհում: Նա Իր Հոգով քայլ առ քայլ առաջնորդում է մեզ: Մեր կատարած հավատքի յուրաքանչյուր քայլին զուգընթաց Նա շարունակում է սովորեցնել և ցույց տալ, թե ինչ պետք է անենք հաջորդ քայլին:

Աստված նաև կզինի քեզ, որպեսզի անես այն, ինչ Նա կանչել է քեզ անելու, եթե Նրա հետ մշտական հաղորդակցման մեջ լինես: Եթե ջանասիրաբար փնտրես Նրան և լսես Նրա ձայնը, Նա գերբնականորեն կառաջնորդի քեզ: Նա կսովորեցնի, թե ինչպես իրականացնես այն նպատակները, որոնք Նա ունի քո կյանքի համար, և որոնք գուցե ավելի մեծ են, քան այն, ինչ դու ներկայում սովորել ես անել կամ կարող ես երբևէ պատկերացնել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված կզինի քեզ այն ամենով, ինչի կարիքն ունես:

Երբեմն Աստված շշնջում է

«… մի մեծ և զորավոր հողմ պատռեց սարերը և կոտրատեց ապառաժները Տիրոջ առջև, բայց Տերն այն հողմի մեջ չէր: Եվ հողմից հետո երկրաշարժ եղավ, բայց Տերը երկրաշարժի մեջ չէր: Եվ երկրաշարժից հետո կրակ, բայց Տերը կրակի մեջ չէր, և կրակից հետո մի մեղմ ու բարակ ձայն» (Գ ԹԱԳԱՎՈՐԱՅ 19.11,12):

Ես հիացա, երբ տարիներ առաջ իմացա, որ որոշ ձիեր, ինչպես նրանց մարզիչներն են ասում, ունեն «սուր ականջ»: Թեպետ ձիերի մեծ մասը կառավարվում է բերանի սանձին ամրացված սանձափոկերով, սակայն որոշ ձիեր, մի ականջը սրած, հետևում են իրենց տիրոջ ձայնին: Նրանց ականջներից մեկը բաց է սովորական զգուշացումների համար, իսկ մյուսը զգայուն է մարզչի հրահանգներին:

Եղիա մարգարեն ուներ սուր լսողություն: Երբ բնական հանգամանքները վախեցրին նրան, և նա Աստծուց լսելու խիստ կարիք ուներ, նա կարողացավ ճանաչել Աստծո ձայնը իր շուրջը տիրող աղմուկի և խառնաշփոթության մեջ: Եղիան հենց նոր էր պարտության մատնել 450 սուտ մարգարեների՝ նրանց անձայն Բահաղի և միակ ճշմարիտ Աստծո միջև տեղի ունեցած մենամարտում: Այժմ չարանենգ թագուհի Հեզաբելը սպառնում էր մեկ օրում սպանել նրան: Եղիան կարիք ուներ իմանալու, թե ինչ աներ:

Նա կանգնեց մի սարի վրա՝ Աստծո առջև: Մի ուժեղ քամի պատռեց սարերը, հետո սարսափելի երկրաշարժ եղավ, և նրա շուրջը կրակ բռնկվեց: Կրակից հետո լսվեց «մեղմ ու բարակ ձայն»: Աստված չխոսեց Եղիայի հետ քամու զորության, երկրաշարժի կամ կրակի միջոցով. Նա խոսեց շշուկով: Եղիան ուներ սուր լսողություն, որը մարզել և զգայուն էր դարձրել Իր Տիրոջ ձայնի հանդեպ: Այսպիսով՝ նա արեց այն, ինչ ասաց Աստված, և դա փրկեց նրա կյանքը:

Այսօր էլ Աստված մեղմ ձայնով և շշուկով խոսում է մեր սրտերում: Խնդրի՛ր Նրան տալ քեզ լսող ականջ, որպեսզի կարողանաս լսել Նրա մեղմ ու բարակ ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. լարի՛ր հոգևոր լսողությունդ՝ Աստծուն լսելու համար:

Հոգին հակառակ է մարմնին

«[Որպես սովորություն] քայլե՛ք և ապրե՛ք [Սուրբ] Հոգով [զգայուն լինելով Հոգու վերահսկման և առաջնորդության հանդեպ] և [Աստծուց կտրված մարդկային էության] մարմնի փափագը և ցանկությունը չեք կատարի» (ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.16):

Ինչպես ձին, որ ականջը վարժեցրել է մշտապես զգայուն լինելու իր տիրոջ ձայնին, այնպես էլ մենք պետք է պատրաստ լինենք *լիովին* հետևելու Տիրոջ առաջնորդությանը, այլ ոչ թե միայն այն հրահանգներին, որոնք մեզ դուր են գալիս կամ որոնց համաձայն ենք: Միշտ չէ, որ մեզ դուր կգա այն, ինչ Տերն ասում է, որ անենք:

Պետք է գիտակցենք, որ Աստծուն հետևելու համար երբեմն մարմնին պետք է ասել՝ ո՛չ, և երբ այդպես ենք վարվում, մարմինը տառապում է: Լինում են ժամանակներ, երբ մեծ արագությամբ ընթանում ենք մի ուղղությամբ, ու հանկարծ Տերը հորդորում է կանգ առնել և փոխել ուղղությունը: Մեզ համար ցավոտ է, երբ չենք գնում մեր ճանապարհով, սակայն, ի վերջո, հասկանում ենք, որ Աստծո ճանապարհները միշտ լավագույնն են:

Այսօրվա խոսքում Պողոս առաքյալը գրում է Հոգու և մարմնի միջև ընթացող պայքարի մասին: Եթե հետևենք Հոգու առաջնորդությանը, ապա չենք բավարարի կամ չենք իրականացնի մարմնի ցանկությունները, որոնք հեռացնում են մեզ Աստծո լավագույն ծրագրերից: Այս խոսքում չի ասվում, որ մարմնի ցանկությունները կանհետանան. մենք ստիպված կլինենք մշտապես պայքարել դրանց դեմ: Բայց եթե ընտրենք առաջնորդվել Հոգով, ապա չենք իրականացնի մարմնավոր ցանկությունները, և սատանան չի հասնի իր ուզածին:

Երբ ընտրում ենք հետևել Աստծո առաջնորդությանը, մեր ներսում պայքար է սկսվում: Մեր մարմինը և Աստծո Հոգին սովորաբար անհամաձայնության մեջ են, և մենք հակված ենք մարմինը պահելու հարմարավետ վիճակում: Սակայն, բոլորս պետք է սովորենք հնազանդվել Աստծո Հոգուն և հաղթահարել մարմնավոր ցանկություններն ու գայթակղությունները: Այսօր վճռի՛ր, որ մարմնիդ թույլ չես տա առաջնորդել քեզ, այլ կառաջնորդվես Աստծո Հոգով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված ցանկանում է տալ քեզ Իր լավագույնը:

Լսիր հոգով

«Քամին որտեղ ուզում է՝ փչում է, և նրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղից է գալիս և ուր է գնում. այսպես է ամեն Հոգուց ծնվածը» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.8):

Երբ վերստին ծնվում ենք, մեր հոգին կենդանանում է, և մենք զգայուն ենք դառնում Աստծո ձայնի հանդեպ: Մենք լսում ենք Նրա շշնջոցը, թեև չենք կարող ասել, թե որտեղից է գալիս: Նա խոսում է քնքշորեն՝ մեղմ, բարակ ձայնով հանդիմանելով, ուղղելով և ուղղորդելով մեզ:

Մարդկանց հետ մենք հաղորդակցվում ենք խոսքի, դեմքի արտահայտության, ժեստերի և մարմնի լեզվի միջոցով, սակայն Աստծո հետ հաղորդակցումը կատարվում է հոգով:

Աստված խոսում է մեր հոգու հետ ուղիղ հաղորդակցման, ներըմբռնման, այլ կերպ՝ ինտուիցիայի (խորաթափանցության անբացատրելի զգացում), խղճմտանքի (ճիշտ ու սխալի վերաբերյալ մեր հիմնական համոզմունքները) և խաղաղության միջոցով: Մեր հոգին կարող է իմանալ բաներ, որոնք մեր միտքը չի կարող հասկանալ և ըմբռնել:

Օրինակ, երբ զգայուն ենք Աստծո ձայնի հանդեպ, կարող ենք նայել արտաքուստ ճիշտ թվացող իրավիճակին, բայց ներքուստ հասկանալ, որ ինչ-որ բան այն չէ: Հոգու մեջ այդ «ստուգումը» նախատեսված է ետ պահելու մեզ այն մարդկանցից, որոնց չպետք է հարենք, կամ այն բաներից, որոնց մեջ չպետք է մասնակցություն ունենանք:

Ուշադրություն դարձրու, թե ինչ ես զգում քո սրտում և հոգում, որովհետև այդտեղ է, որ Աստված քաջալերանքի, մխիթարության և զգուշացման խոսքեր է ասում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ուշադրություն դարձրու հոգու «ստուգումներին»:

Խոսի՛ր Աստծո հետ Իր մասին

«...Ո՛վ մեր հայրերի Տեր Աստված, Դու չե՞ս այն Երկնքում բնակվող Աստվածը և ազգերի բոլոր թագավորությունների վրա Տիրողը, և Քո ձեռքին են զորությունը և ուժը, և մեկը չի կարող Քեզ դեմ կանգնել» (Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20.6):

Երբ Հովսափատ թագավորը խնդիր ունեցավ, գնաց Տիրոջ մոտ: Բայց Տիրոջ մոտ գնալով՝ չխոսեց իր խնդրի մասին. նա գնաց Տիրոջ մոտ ու խոսեց այն մասին, թե Ով էր Տերը: Աստծո հետ մեր խնդիրների մասին խոսելու փոխարեն՝ խոսենք Նրա հետ նաև Իր մասին: Մենք պետք է ասենք, թե որքան հրաշալի է Նա, որքան բարի է Նա եղել մեր հանդեպ, ինչ է արել անցյալում, և ինչ գիտենք, որ կարող է անել Իր մեծության շնորհիվ: Նրան այսպես փառաբանելուց և երկրպագելուց հետո կարող ենք խոսել մեր խնդրի մասին:

Ես մտածում եմ այն մարդկանց մասին, որոնք զանգում են ինձ միայն այն ժամանակ, երբ խնդիրներ են ունենում, ու դա ցավ է պատճառում ինձ, որովհետև ես զգում եմ, որ ոչ թե ես եմ նրանց հետաքրքրում, այլ այն, թե ինչ կարող եմ անել նրանց համար: Համոզված եմ, որ ինքդ էլ վերապրել ես սա և միևնույն զգացողությունն ես ունեցել: Այս մարդիկ կարող են իրենց անվանել իմ ընկերներ, սակայն, իրականում, նրանք իմ ընկերները չեն: Իհարկե, ընկերները դժվար ժամանակների համար են, բայց նրանք նաև լավ ժամանակների համար են: Մենք կարիք ունենք ժամանակ անցկացնել մեր ընկերների հետ ոչ միայն խնդիրների մասին խոսելու նպատակով, այլև նրանց քաջալերելու, գնահատելու և խոսքերով ու գործողություններով աջակցելու համար:

Երբ այսօր ժամանակ անցկացնես Աստծո հետ, նախքան խնդիրներիդ մասին հիշատակելը, անպայման խոսի՛ր Նրա հետ հենց Իր և այն բարիքների մասին, որ Նա անում է քեզ համար:

Աբրահամը Աստծո ընկերն էր: Ես նույնպես ուզում եմ Աստծո ընկերը լինել և հավատում եմ, որ նույնն էլ դու ես ցանկանում: Աստված պարզապես մեր խնդիրները լուծողը չէ. Նա մեր ամենն է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խոսի՛ր Աստծո հետ Իր մասին, նախքան կխոսես Նրա հետ քո մասին:

Համեմատության դեպքում ոչինչ է

«Որովհետև այնպես եմ դատում, որ այս ժամանակի չարչարանքները արժանի չեն բաղդատվելու այն գալու փառքի հետ, որ մեզանում պիտի հայտնվի» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.18):

Ի՞նչ է նշանակում բաժնեկից լինել Քրիստոսի չարչարանքին: Գլխավոր միտքն այն է, որ ամեն անգամ, երբ մեր մարմինը ցանկանում է անել մի բան, իսկ Աստծո Հոգին ցանկանում է, որ անենք մեկ այլ բան, մեր մարմինը կչարչարվի, եթե ընտրենք հետևել Հոգուն: Մեզ դուր չի գալիս դա, բայց այսօրվա խոսքն ասում է, որ եթե ուզում ենք բաժնեկից լինել Քրիստոսի փառքին, ապա պետք է պատրաստ լինենք նաև բաժնեկից լինել Նրա չարչարանքին:

Մինչև հիմա հիշում եմ այն չարչարանքը, որի միջով անցա իմ քրիստոնեական կյանքի վաղ տարիներին, երբ սովորում էի հնազանդվել Աստծո Հոգուն: Ես մտածում էի. «Սիրելի՛ Աստված, մի՞թե երբևէ կարողանալու եմ հաղթահարել սա: Մի՞թե երբևէ հասնելու եմ այն կետին, որ կկարողանամ հնազանդվել Քեզ՝ առանց ցավ զգալու»:

Երբ մարմնավոր հակումներն այլևս վերահսկողի դերում չեն, մենք հասնում ենք այնպիսի վիճակի, երբ Աստծուն հնազանդվելն այլևս դժվար չէ, երբ իրականում *հաճույք ենք ստանում* Նրան հնազանդվելուց: Կան բաներ, որոնք այսօր հեշտ են ինձ համար, մինչդեռ ժամանակին դրանք դժվար ու ցավոտ էին: Նույնը կատարվում է նրանց հետ, ովքեր պատրաստ են անցնելու դժվարությունների միջով՝ փառքին հասնելու համար:

Հռոմեացիների 8.18-ում Պողոսը, ըստ էության, ասում էր. «Հետո՞ ինչ, որ մի փոքր չարչարվում ենք: Այն փառքը, որ բերելու է մեր հնազանդությունը, շատ ավելի գերազանցում է այն չարչարանքին, որ կրում ենք այժմ»: Դա բարի լուր է: Ինչ չարչարանք էլ կրենք, ինչի միջով էլ անցնենք, բացարձակապես ոչինչ են այն բարիքների համեմատ, որ Աստված անելու է մեր կյանքում, երբ շարունակենք առաջ շարժվել Նրա հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված հրաշալի բաներ կանի քո կյանքում, երբ շարունակես առաջ շարժվել Նրա հետ:

Աղոթի՛ր և գոհացի՛ր

«Եվ երբ որ Դանիելն իմացավ, թե հրովարտակը ստորագրվեց, գնաց իր տունը... և օրը երեք անգամ ծնկի էր գալիս և աղոթք էր անում և գովաբանում էր իր Աստծուն, ըստ որում նա սրանից առաջ այսպես էր անում» (ԴԱՆԻԵԼ 6.10):

Գոհանալը անչափ կարևոր է Աստծո ձայնը լսելու համար, որովհետև ինչպես փառաբանությունը և երկրպագությունը, այն մի բան է, որին *արձագանքում է* Աստված: Մի բան, որ Աստված սիրում է, մի բան, որ ջերմացնում է Նրա սիրտը: Ամեն անգամ, երբ Աստծուն այդպիսի հաճույք ենք պարգևում, մեր մտերմությունը Նրա հետ ավելի է խորանում, և դա նպաստում է Նրա հետ մեր փոխհարաբերության զարգացմանը:

Եթե շնորհակալ չենք այն ամենի համար, ինչ ունենք, ինչո՞ւ պիտի Աստված տա մեզ մեկ այլ բան, որի համար տրտնջալու ենք: Միաժամանակ, երբ Աստված տեսնում է, որ անկեղծորեն գնահատում ենք մեծ ու փոքր բաները և գոհանում, Նա հակված է տալու մեզ ավելին: Համաձայն Փիլիպեցիների 4.6-ի՝ այն, ինչ խնդրում ենք Աստծուց, պետք է գոհությունով լինի: Անկախ նրանից, թե ինչի համար ենք աղոթում՝ գոհությունը միշտ պետք է ուղեկցի դրան: Աղոթքը գոհությունով սկսելը լավ սովորություն է, որը կարող ենք զարգացնել: Օրինակ, մենք կարող ենք ասել. «Շնորհակալությո՛ւն այն ամենի համար, ինչ արել ես իմ կյանքում: Դու փառահեղ ես, և ես իսկապես սիրում ու գնահատում եմ Քեզ»:

Քաջալերում եմ քեզ քննել կյանքդ, ուշադրություն դարձնել մտքերիդ և խոսքերիդ ու տեսնել, թե որքան ես գոհանում Նրանից: Եթե ուզում ես մարտահրավեր ընդունել, ապա պարզապես փորձի՛ր ամբողջ օրն անցկացնել՝ առանց դժգոհության որևէ խոսք արտաբերելու: Զարգացրո՛ւ գոհության վերաբերմունք յուրաքանչյուր իրավիճակում: Իրականում, դարձի՛ր ծայրահեղ գոհացող, ու տե՛ս, թե ինչպես ես ավելի մտերմանում Աստծո հետ, և ինչպես է Նա առատ օրհնություններ թափում քեզ վրա:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խոսի՛ր գոհության, ոչ թե դժգոհության խոսքեր:

Սիրի՛ր ընկերոջդ քո անձի պես

«Որովհետև ամբողջ օրենքն այս մեկ խոսքում է կատարվում. քո ընկերոջը քո անձի պես սիրի՛ր» (ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.14):

Աստված ուզում է մեզ հետ խոսել շատ բաների մասին, բայց կարևոր թեմաներից մեկը մեր փոխհարաբերությունն է այլ մարդկանց հետ: Աստված սիրում է մեզ, և Նա ցանկանում է, որ սիրենք ինքներս մեզ առողջ, հավասարակշռված ձևով ու թույլ տանք, որ Իր սերը մեր միջոցով հոսի դեպի ուրիշները:

Աստծուց լսելու քո որոնումներում հորդորում եմ քեզ աղոթել, որ Նա մշտապես խոսի քեզ հետ և իմաստություն տա քո փոխհարաբերությունների վերաբերյալ: Փոխհարաբերությունները մեծ տեղ են գրավում մեր կյանքում, և եթե չունենանք լավ փոխհարաբերություններ, մեր կյանքի որակը կվատանա:

Այս առավոտ ես աղոթում էի իմ ամուսնու համար և հարցնում Աստծուց, թե ինչ կարող եմ անել նրա համար: Հանկարծ միտք ծագեց, որ խոհանոցի սեղանին երկտող թողնեմ, որը նա կտեսներ, երբ կգար նախաճաշելու: Երկտողում գրեցի հետևյալ խոսքերը. «Բարի լո՛ւյս, Դե՛յվ... ԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ՔԵԶ»: Ներքևում մի ժպիտ նկարեցի և դրեցի ստորագրությունս: Ես հավատում եմ, որ երկտող թողնելու գաղափարն Աստծուց էր, և այդ *փոքրիկ* բանն անելու իմ հնազանդությունն ամրացրեց մեր փոխհարաբերությունը:

Սկսի՛ր աղոթել քո բոլոր փոխհարաբերությունների համար: Առանձին-առանձին բե՛ր դրանք Աստծո առջև և խնդրի՛ր Նրանից ցույց տալ, թե ինչ կարող ես անել դրանք բարելավելու համար: Սովորաբար մենք մտածում ենք, թե մարդի՛կ ինչ պետք է անեն մեզ համար, բայց եթե հետևենք սիրո օրենքին, ավելի շատ կմտահոգվենք նրանց համար, քան մեզ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր Աստծուց ցույց տալ, թե ինչպես կարող ես բարելավել քո փոխհարաբերությունները:

Աստված խոսում է մեզ հետ անհատապես

«Եվ քո ականջները լսելու են մի խոսք քո ետևից, որ ասելու է. «Սա՛ է ճանապարհը. սրանո՛վ գնացեք, երբ որ աջ կողմ պետք է գնաք, և երբ որ ձախ կողմ պետք է գնաք»» (ԵՍԱՅԻ 30.21):

Աստված խոսում է մեզ հետ, որպեսզի օգնի ճանաչելու ճիշտն ու սխալը և նպաստի լավ ընտրություններ կատարելուն: Որոշ բաներ կարող են սխալ լինել մեկի համար և ճիշտ՝ մյուսի համար, այնպես որ, բոլորս էլ անհատապես Աստծուց ցուցումների կարիք ունենք: Իհարկե, կան ճիշտ ու սխալի ընդհանուր ուղեցույցներ, որոնք կիրառելի են բոլորի համար, օրինակ՝ բոլորս գիտենք, որ ստելը, խաբելը և գողանալը սխալ են: Բայց կան բաներ, որոնք անհատական են: Իմ որդին մեկնել էր ճամփորդության և ծրագրել էր ևս մեկ օրով երկարաձգել այն, բայց հաջորդ առավոտյան, երբ արթնացել էր, խաղաղություն չէր ունեցել ևս մեկ օր մնալու, այդ պատճառով վերադարձել էր տուն: Աստված ունի անկրկնելի և առանձնահատուկ ծրագիր յուրաքանչյուրի համար, և Նա մեր մասին գիտի բաներ, որոնք նույնիսկ մենք չգիտենք:

Հնարավոր է՝ չհասկանանք, թե ինչու է Աստված արգելում մեզ անել այն, ինչ անում են մեզ շրջապատողները, սակայն եթե մեր սիրտը զգայուն է, մենք կվստահենք և կհնազանդվենք Նրան, նույնիսկ եթե չենք հասկանում պատճառը: Բանն այն է, որ հարկ չկա, որ իմանանք բոլոր «ինչուների» պատասխանները, երբ Նա որևէ բան է խնդրում կամ պահանջում. մենք պարզապես պետք է սովորենք լսել Նրա ձայնը և հնազանդվել:

Մարտի պատրաստվելիս զինվորներից երբեմն պահանջվում է կատարել անհեթեթ վարժություններ, որոնք կարծես տրամաբանական չեն: Նրանք սովորում են արագ կատարել առաջադրանքները և աներկբայորեն հնազանդվել հրամաններին, նույնիսկ երբ չեն հասկանում, թե ինչ է կատարվում: Եթե հրամանատարները հրաման արձակեն, և զինվորները, լինելով մարտի առաջնագծում, կանգ առնեն ու հարցնեն, թե ինչի համար է այդ հրամանը, ապա նրանք կարող են սպանվել: Նույն կերպ, Աստված ուզում է, որ մենք վստահենք Իր սիրառատ առաջնորդությանը և հնազանդվենք Իրեն՝ առանց հապաղելու և առանց ավելորդ հարցերի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հնազանդվի՛ր Աստծո խոսքին, նույնիսկ երբ չես հասկանում:

Աստված կամաց առաջնորդում է մեզ

«Հովվի նման հովվելու է Նա Իր հոտին, Իր բազուկի վրա է ժողովելու գառնուկներին և Իր գրկում կրելու է նրանց և կամաց քշելու է ծիծ տվող ոչխարներին» (ԵՍԱՅԻ 40.11):

Երբ Աստված խոսում է մեզ հետ և առաջնորդում, Նա չի գոռում մեզ վրա կամ չի հրում այն կողմ, որ կողմ ցանկանում է, որ գնանք: Ո՛չ, Նա առաջնորդում է մեզ հեզ հովվի պես՝ առաջարկելով գնալ Իր ետևեից դեպի կանաչ արոտավայրերը: Նա ցանկանում է, որ մենք այնքան զգայուն լինենք Իր ձայնին, որ նույնիսկ զգուշացման մի փոքր շշնջոցը ստիպի մեզ հարցնել. «Ինչ ես ուզում ասել, Տե՛ր»: Այն պահին, երբ զգում ենք, որ Նա հորդորում է մեզ փոփոխություն կատարել, պետք է արագորեն հնազանդվենք Նրան: Եթե խաղաղություն չունենք այն բանում, ինչ անում ենք, ապա պետք է կանգ առնենք և խնդրենք, որ Աստված ուղղորդի:

Առակաց 3.6-ում ասվում է, որ եթե ճանաչենք Աստծուն մեր բոլոր ճանապարհներում, Նա կուղղի մեր ճանապարհները: Աստծուն ճանաչել նշանակում է այնքան հարգանք, երկյուղածություն և պատկառանք ունենալ Նրա հանդեպ, որ քեզ համար կարևոր լինի, թե ինչ է Նա մտածում քո յուրաքանչյուր քայլի մասին:

Օրը սկսելու լավ միջոց է այսպես աղոթելը. «Տե՛ր, ինձ համար կարևոր է, թե ինչ ես Դու մտածում. ես չեմ ուզում անել բաներ, որոնք Դու չես ուզում: Եթե այսօր կա մի բան, որը չես ուզում, որ անեմ, ապա խնդրում եմ՝ ցո՛ւյց տուր դա, որպեսզի կարողանամ կանգ առնել, շրջվել և փոխարենը կատարել Քո՛ կամքը, ամե՛ն»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ավելի կարևոր համարի՛ր այն, ինչ Աստված է մտածում:

Փնտրի՛ր Աստծուն ամեն ժամանակ

«Եվ ոմանք եկան ու Հովսափատին պատմեցին և ասացին. «Քեզ վրա մեծ բազմություն է գալիս ...»: Եվ Հովսափատը վախեցավ և երեսն ուղղեց Տիրոջը խնդրելու և ծոմապահություն քարոզեց ամբողջ Հուդայի մեջ» (Բ ՄՆԱՅՈՐԴԱՅ 20.2,3):

Երբ Հովսափատ թագավորը կարիք ուներ լսելու Աստծուց, նա ծոմ հռչակեց Հուդայի ամբողջ թագավորությունում: Ամբողջ ժողովուրդը հավաքվեց՝ ի սրտե փնտրելու Տիրոջը և խնդրելու Նրա օգնությունը:

Հովսափատը ծոմ հռչակեց, որպեսզի ցույց տար իր անկեղծությունն Աստծո հանդեպ և հայտներ, որ ինքն Աստծո կարիքն ուներ: Եթե կարիք ունես լսելու Աստծուց, մտածի՛ր որոշ ժամանակով կերակուրից հրաժարվելու և այդ ընթացքում Աստծուն փնտրելու մասին: Հեռուստացույցն անջատելը և Աստծո հետ ժամանակ անցկացնելը նույնպես վատ գաղափար չէ, վատ չէ նաև մի քանի երեկո տանը մնալը և Աստծուն փնտրելը՝ ընկերների հետ հանդիպելու և նրանցից խորհուրդ ու կարծիք հարցնելու փոխարեն: Այսպիսի գործողություններն ապացուցում են, որ դու իսկապես հասկանում ես Աստծուց լսելու կարևորությունը:

Որոշ մարդիկ անկեղծորեն փնտրում են Աստծուն միայն այն ժամանակ, երբ անախորժության մեջ են, բայց մենք մշտապես պետք է փնտրենք Նրան: Մի անգամ Աստված ինձ հասկացրեց, որ մարդիկ շատ խնդիրներ ունեն, որովհետև փնտրում են Իրեն միայն այն ժամանակ, երբ հայտնվում են անախորժության մեջ: Նա ցույց տվեց, որ եթե ոմանց խնդիրները հեռացներ, ապա նրանք ընդհանրապես չէին փնտրի Իրեն: Նա ասաց. «Փնտրի՛ր Ինձ այնպես, կարծես մշտապես հուսահատության մեջ ես, և այդ ժամանակ այդքան հաճախ չես հայտնվի հուսահատության մեջ»: Կարծում եմ, սա լավ խորհուրդ է, և ես քաջալերում եմ քեզ ամեն օր հետևել այս խորհրդին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ սպասիր, մինչև անախորժության մեջ հայտնվես, ապա փնտրես Աստծուն. փնտրի՛ր Նրան ամեն ժամանակ:

Ուզում ես ավելի շատ լսել

«Ձեր Եհովա Աստծուն հետևեք և Նրանից վախեցեք, Նրա պատվիրանները պահեք և Նրա ձայնին լսեք, Նրան պաշտեք և Նրան հարեք» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 13.4):

Եթե մենք ակնկալում ենք լսել Աստծուց, ապա պետք է ուշադրություն դարձնենք Նրա ձայնին: Մենք պետք է նաև արագորեն հնազանդվենք, եթե ուզում ենք հաճախակի լսել Նրանից: Նրա ձայնի հանդեպ մեր զգայունությունը կավելանա հնազանդության միջոցով և կնվազի անհնազանդության միջոցով: Անհնազանդությունը ծնում է անհնազանդություն, իսկ հնազանդությունը հող է նախապատրաստում ավելի խորը հնազանդության համար:

Լինում են օրեր, երբ գիտենք, որ արթնանալուն պես «մարմնավոր օր» ենք ունենալու: Օրը սկսում ենք մի տեսակ ծանր զգացողությամբ, ալարկոտ ենք, ընկճված, խոցելի: Առաջին միտքը սա է. «Ուզում եմ, որ բոլորն ինձ այսօր մենակ թողնեն: Ես չեմ մաքրելու տունը, գնալու եմ խանութ: Ոչ էլ հետևելու եմ իմ սննդակարգին. ամբողջ օրն ուտելու եմ այն, ինչ ցանկանում եմ, ու չեմ ուզում, որ որևէ մեկը որևէ բան ասի դրա համար»:

Նման օրերին մենք պետք է որոշում կայացնենք: Կարող ենք հետևել այս զգացմունքներին կամ կարող ենք աղոթել. «Աստվա՛ծ, խնդրո՛ւմ եմ, շտապ օգնի՛ր ինձ»: Մեր զգացմունքները կարող են հնազանդվել Հիսուս Քրիստոսի Իշխանությանը, եթե խնդրենք, որ Նա օգնի մեզ ուղղելու մեր վերաբերմունքը:

Ես լավ գիտեմ, թե ինչ են այդ «մարմնավոր օրերը». մենք կարող ենք օրը սկսել վատ պահվածքով, այնուհետև վատթարացնել իրավիճակը: Երբ տեղի ենք տալիս եսասիրական վերաբերմունքին և կատարում մարմնի ցանկությունը, օրվա վերջում մեր վիճակը միայն վատթարանում է: Բայց ամեն անգամ, երբ հնազանդվում ենք մեր խղճմտանքին, բացում ենք այն պատուհանը, որ Աստված կարող է օգտագործել Իր Հոգով մեզ առաջնորդելու համար: Ամեն անգամ, երբ հնազանդվում ենք Աստծո ձայնին, այդ պատուհանից ավելի շատ լույս է թափանցում: Երբ վերապրենք Աստծուն հետևելու ուրախությունը, այլևս չենք կամենա ապրել առանց դրա:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թույլ մի՛ տուր, որ այսօր ունենաս «մարմնավոր օր»:

Նեղ ուղին լավ տեղ է տանում

«Քանի՜ նեղ է դուռը, և նեղվածք է ճանապարհը, որ տանում է կյանք, և քիչ են նրան գտնողները» (ՄԱՏԹԵՈՍ 7.14):

Հավանաբար, այն, ինչ արել ես մի քանի տարի առաջ, կանհանգստացնի քո խղճմտանքը, եթե փորձես անել դա այսօր: Գուցե հինգ տարի առաջ դա չի անհանգստացրել քեզ, բայց քանի որ Աստված հայտնել է, որ դա սխալ է, դու այլևս չես մտածի այդ արարքը կրկնելու մասին:

Աստված խոսում է մեզ հետ ինչ-ինչ հարցերի շուրջ, աշխատանք է տանում, որպեսզի ուղղի մեզ, ապա ժամանակավորապես հանգիստ է թողնում: Բայց քանի դեռ մենք լսում ենք Նրան, Նա մշտապես խոսելու է մեզ հետ նորանոր բաների մասին:

Եթե դու նման ես ինձ, ապա մի ժամանակ քայլել ես լայն ու անխոհեմ ուղիներով, բայց այժմ կանգնած ես նեղ ուղու վրա: Հիշում եմ, մի անգամ Աստծուն ասացի. «Իմ ճանապարհը կարծես ավելի ու ավելի է նեղանում»: Ես ունեի այնպիսի զգացողություն, որ այն ուղին, որով Աստված առաջնորդում էր ինձ, այնքան էր նեղանալու, որ ինձ համար տեղ չէր մնալու: Զարմանալի չէ, որ Պողոսն ասաց. «Եվ ապրում եմ այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ» (տես Գաղատացիների 2.20): Երբ Հիսուսը գալիս է մեր մեջ ապրելու, Նա մշտական բնակություն է հաստատում և աստիճանաբար Իր ներկայությունը տարածում մեր կյանքում՝ ավելի ու ավելի քիչ տեղ թողնելով մեր հին մարմնավոր բնույթին:

Եթե զգում ես, որ նեղ ուղու վրա ես, որ չես կարողանում անել այն, ինչ սովոր էիր անելու, կամ քեզ վրա դրված սահմանափակումները չափազանց խիստ են, այդ դեպքում քաջալերվի՛ր. քո հին մարմնավոր բնույթը սեղմվում է, որպեսզի Աստծո ներկայությունն ավելանա քո կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ընդունի՛ր քո սահմանափակումները՝ իմանալով, որ դրանք ավելի շատ տեղ են բացում Աստծո համար:

Մնա՛ հավասարակշռված

«Եղե՛ք հավասարակշռված (զուսպ, ողջամիտ), աչալուրջ և զգույշ ամեն ժամանակ. որովհետև ձեր թշնամին՝ սատանան, մռնչացող [քաղցած] առյուծի պես ման է գալիս և որոնում է, թե որին կուլ տա» (Ա ՊԵՏՐՈՍ 5.8):

Սուրբ Հոգուն լսելը կօգնի մեզ հավասարակշռված մնալ կյանքի բոլոր բնագավառներում: Հոգին մեզ կասի, թե երբ ենք չափից շատ կամ ոչ բավականաչափ գումար ծախսում, երբ ենք չափից շատ կամ ոչ բավականաչափ խոսում, կամ, նույնիսկ, երբ ենք չափից շատ կամ ոչ բավականաչափ հանգստանում: Ամեն անգամ, երբ որևէ բան չափից շատ կամ չափից քիչ ենք անում, նշանակում է՝ դուրս ենք հավասարակշռությունից:

Այսօրվա խոսքում ասվում է, որ մենք պետք է հավասարակշռված լինենք, որպեսզի սատանան չկարողանա առավելություն ունենալ մեր հանդեպ: Տարիներ շարունակ նա առավելություն ուներ իմ հանդեպ, որովհետև ես հավասարակշռված չէի աշխատանքի հանդեպ իմ վերաբերմունքի մեջ: Կարծում էի, թե ամբողջ կյանքս պետք է կազմակերպեի աշխատանքի շուրջ: Քանի դեռ աշխատում էի և ինչ-որ բան անում, ես չունեի մեղքի զգացում, որը սատանան կօգտագործեր իմ դեմ: Բայց անընդհատ աշխատելու այդ մղումը Աստծուց չէր. դա ինձ չէր մտցնում աստվածային հավասարակշռության մեջ: Աշխատանքը լավ բան է, սակայն ես նաև հանգստի և վայելքի կարիք ունեի:

Ամեն օր, երբ ձգտում ես լսել Աստծուց, խնդրի՛ր Նրան ցույց տալ որևէ բնագավառ, որը դուրս է հավասարակշռությունից, և թո՛ւյլ տուր, որ Նա աշխատի քեզ հետ և շտկումներ կատարի: Կյանքում համատեղելու շատ բան ունենք, այդ իսկ պատճառով հեշտ է դուրս գալ հավասարակշռությունից, բայց Աստված միշտ հասանելի է մեզ օգնելու համար: Պարզապես հարցրու, թե ինչն ես չափից շատ կամ չափից քիչ անում, և կատարի՛ր այն փոփոխությունները, որ Նա կառաջարկի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո օգնությամբ մնա՛ հավասարակշռության մեջ:

Լավագույն ընկերը, որ երբևէ կունենաս

«… բարեկամ կա, որ եղբորից ավելի հաստատ է» (ԱՌԱԿԱՅ 18.24):

Եթե հարկ լիներ նշելու, թե որն է արդյունավետ աղոթքի և Աստծո հետ մտերիմ փոխհարաբերության ամենակարևոր բանալին, ապա կասեի, որ դա Աստծուն որպես ընկեր մոտենալն է: Երբ գնում ենք Աստծո մոտ՝ հավատալով, որ Նա նայում է մեզ՝ որպես Իր ընկերների, նոր սքանչելիքներ են բացվում մեզ համար: Մենք ձեռք ենք բերում ազատություն և համարձակություն, որոնք անհրաժեշտ են արդյունավետ աղոթքի համար:

Եթե չճանաչենք Աստծուն՝ որպես ընկերոջ, և եթե վստահ չլինենք, որ Նա մտածում է մեր մասին՝ որպես Իր ընկերների, ապա դժկամությամբ կհայտնենք մեր կարիքները կամ որևէ բան կխնդրենք Նրանից: Եթե Աստծո հետ ունենանք կաշկանդված, պաշտոնական հարաբերություններ, մեր աղոթքները կարող են օրինապաշտական լինել: Բայց եթե մոտենանք Նրան՝ իբրև մեր ընկերոջ, չկորցնելով Նրա հանդեպ մեր պատկառանքն ու երկյուղածությունը, ապա կշարունակենք Նրա հետ ունենալ մտերիմ, հուզումնալից և կենարար հաղորդակցում:

Ընկերությունը հիմնված է սիրելու և սիրված լինելու վրա: Դու գիտես, որ ինչ-որ մեկը քո կողքին է՝ պատրաստ օգնելու, քաջալերելու քեզ և մշտապես հոգալու և գործելու հանուն քեզ: Ընկերը նա է, ում գնահատում ես, քո ծառայակիցը, գործընկերը, մեկը, ով թանկ է քեզ համար, մեկը, որի հետ ցանկանում ես ժամանակ անցկացնել, և մեկը, ումից հաճույք ես ստանում: Դու դառնում ես ինչ-որ մեկի ընկերը՝ ժամանակ հատկացնելով նրան: Դու դառնում ես այդ մարդու ընկերը՝ կյանքդ կիսելով նրա հետ: Քաջալերում եմ քեզ տեսնել Աստծուն՝ որպես քո ընկերոջ: Վերաբերվի՛ր Նրան հարգանքով և պատվով, բայց նաև վերաբերվի՛ր որպես քո ընկերոջ ու սովորի՛ր հաղորդակցվել Նրա հետ այնպես անկեղծ և հեշտ, ինչպես կհաղորդակցվեիր երկրային ընկերոջ հետ. Նա լավագույն ընկերն է, որ երբևէ կունենաս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու Աստծո ընկերն ես:

Քայլ առ քայլ

«Եվ Եհովան ասաց Աբրամին. «Գնա՛ քո երկրից և քո ազգականներից և քո հոր տնից այն երկիրը, որ Ես քեզ ցույց կտամ» (ԾՆՆԴՈՅ 12.1):

Աբրահամը սովորեց վստահել Աստծուն՝ համոզված լինելով, որ Նա քայլ առ քայլ կառաջնորդի իրեն: Աբրահամի պատմությունը սկսվում է Ծննդոց 12.1-ից, որն այսօրվա խոսքն է: Ուշադրություն դարձրու, որ Աստված Աբրահամին ցույց տվեց առաջին, ոչ թե երկրորդ քայլը: Ըստ էության, Նա ասաց, որ Աբրահամը չէր հասնի երկրորդ քայլին, մինչև չաներ առաջինը: Սա այնքան պարզ է, միաժամանակ այնքան խորիմաստ և արժեքավոր: Այս օրինակով հասկանում ենք, թե ինչպես է Աստված խոսում. Նա քայլ առ քայլ ուղղություն է տալիս:

Շատերը հրաժարվում են առաջին քայլն անելուց, քանի որ չգիտեն, թե որոնք են երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ քայլերը: Եթե դու այդպիսին ես, հուսով եմ, այսօր կքաջալերվես առաջ գնալու Աստծո ծրագրի մեջ՝ վստահելով Աստծուն և անելով առաջին քայլը: Առաջին մի քանի քայլերից հետո քո հավատքը կաճի, որովհետև դու կհասկանաս, որ յուրաքանչյուր քայլի տակ կա ամուր հիմք:

Աստված Աբրահամին խնդրեց դժվար քայլ անել՝ թողնել ամեն ինչ և ամեն մեկին, որ հարազատ էին իրեն: Սակայն, Աստված նրան խոստացավ, որ այդ քայլն ի նպաստ իրեն էր լինելու:

Երբ հնազանդվում ենք Աստծուն, մենք օրհնվում ենք: Աստված ունի լավ ծրագիր մեր կյանքի համար, ծրագիր, որը մեր օգտին է: Մենք ընդամենը պետք է քայլ առ քայլ հետևենք այդ ծրագրին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քայլ առ քայլ հնազանդվի՛ր Աստծո խոսքին:

Մի՛ կարծիր, թե ամենագետ ես

«Աստծո ճանապարհը կատարյալ է. Տիրոջ Խոսքը կրակով մաքրված է. Նա պահապան է բոլոր Իրեն հուսացողներին» (ՍԱՂՄՈՍ 18.30):

Աստծո Խոսքի ճշմարտությունն անսասան է պահում մեզ կյանքի փոթորիկներում: Մենք կարող ենք ակնկալել, որ կլսենք Աստծուց Նրա գրված Խոսքի միջոցով: Այն երբեք չի փոխվում կամ տատանվում Իր նշանակության մեջ: Նույնիսկ եթե Նրա Խոսքում հատուկ չի խոսվում մեր իրավիճակի մանրամասների մասին, ապա Աստծո սրտի և բնավորության մասին հաստատ խոսվում է և մեզ վստահեցվում, որ Նա միշտ հոգ կտանի և ճանապարհ կհարթի մեզ համար:

Խոսքը սովորեցնում է, որ մեր գիտելիքը հատվածական է, թերի և անկատար: Համաձայն Ա Կորնթացիների 13.9-ի՝ մենք գիտենք միայն «մասամբ» («Նոր Քինգ Ջեյմս թարգմանություն»): Սա ինձ հուշում է, որ մեր կյանքում երբեք չի լինի ժամանակ, երբ կարող ենք ասել. «Ես գիտեմ այն, ինչ անհրաժեշտ է իմանալ»: Մոտեցի՛ր Աստծուն խոնարհությամբ և փափագի՛ր սովորել Նրա Խոսքից: Ամեն օր խնդրի՛ր Նրան սովորեցնել, թե ինչ պետք է անես յուրաքանչյուր իրավիճակում:

Ընդունի՛ր Սուրբ Հոգուն՝ որպես քո Ուսուցչի, որպեսզի Նա կարողանա ամեն օր առաջնորդել քեզ ամբողջ ճշմարտության մեջ (տես Հովհաննես 16.13): Նա կհայտնի քեզ բաներ, որոնք երբեք չէիր կարող ինքնուրույն հասկանալ: Ես որոշել եմ *ամբողջ կյանքում սովորող* լինել և նույնը խորհուրդ եմ տալիս քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ կարծիր, թե դու ամենագետ ես. խնդրի՛ր Աստծուց սովորեցնել այն, ինչ կարիք ունես իմանալու այսօր:

«Պարզապես» մի՛ աղոթիր

«Ամբողջ տասանորդը տարե՛ք գանձատուն... Եվ Ինձ փորձե՛ք սրանով,- ասում է Զորաց Տերը,- թե արդյոք չե՞մ բացի ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափի ձեզ համար, մինչև որ նրա համար տեղ չլինի» (ՄԱՂԱՔԻԱ 3.10):

Հաճախ լսում եմ, թե ինչպես են մարդիկ աղոթում՝ օգտագործելով «պարզապես» բառը (այդպես ինքս եմ բազմիցս աղոթել): Այդ աղոթքը հնչում է մոտավորապես այսպես. «Այժմ, Տե՛ր, մենք *պարզապես* շնորհակալություն ենք հայտնում Քեզ այս կերակուրի համար», «Աստվա՛ծ, մենք *պարզապես* խնդրում ենք, որ պաշտպանես մեզ», «Հա՛յր, մենք *պարզապես* գալիս ենք Քեզ մոտ այս երեկո...», «Օ՜, Աստվա՛ծ, մենք այնքա՛ն շնորհակալ կլինենք, եթե *պարզապես* օգնես մեզ այս իրավիճակում...»: Հասկանո՞ւմ ես, թե ինչ նկատի ունեմ: Այսպես աղոթելով՝ կարծես վախենում ենք Աստծուց շատ բան խնդրել:

Աղոթքի մեջ օգտագործելով «պարզապես» բառը՝ մենք ասես նշում ենք, որ կարող ենք նաև բավարարվել նվազագույնով և ծայրը ծայրին հասցնելով: Աստված ցանկանում է առատապես տալ մեզ ավելին, քան համարձակվում ենք հուսալ, խնդրել կամ մտածել (տե՛ս Եփեսացիների 3.20): Նա ուզում է բացել երկնքի պատուհանները և թափել օրհնությունները, այդ դեպքում ինչո՞ւ պիտի մոտենանք Նրան՝ խնդրելով տալ մեզ նվազագույնը՝ ծայրը ծայրին հասցնելու համար: Ինչո՞ւ պիտի մոտենանք Նրան այնպես, կարծես վախենում ենք չափից շատ խնդրելուց: Երբ մոտենում ենք Նրան այդպիսի վերաբերմունքով, թվում է՝ չենք հավատում, որ Նա առատաձեռն է ու բարի: Մենք պետք է հասկանանք, որ Նա այն Աստվածը չէ, որ տալիս է «պարզապես» այնքան, որ ծայրը ծայրին հասցնենք: Նա ցանկանում է օրհնել մեզ առատապես, ինչպես խոստանում է այսօրվա խոսքը:

Աստված չի ուզում լսել վախվորած, անվստահ «պարզապես» աղոթքներ: Նա ուզում է լսել համարձակ, վստահ, հավատքով լի աղոթքներ այն մարդկանցից, որոնք հաստատուն են Նրա հետ ունեցած իրենց ընկերության մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ խոսքը վերաբերում է աղոթքին, մի՛ եղիր անվստահ:

Քո ներսում գանձ կա

«Բայց այս գանձն [Ավետարանի աստվածային լույսը] ունենք հողե [փխրուն, մարդկային] անոթներում, որ զորության գերազանցությունը Աստծունը լինի, և ոչ թե մեզնից» (Բ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐԻ 4.7):

Ամեն ինչից առավել ուզում եմ հստակ լսել Աստծո ձայնը և մշտապես վերապրել Նրա ներկայությունը: Ես հավատում եմ, որ դու կարդում ես այս գիրքը, որովհետև դա նաև քո ցանկությունն է: Ես գրել եմ, որ տարիներ շարունակ հավատացել եմ Հիսուս Քրիստոսին՝ որպես իմ Փրկչի, բայց չեմ ունեցել մտերիմ հարաբերություն Աստծո հետ: Ինձ թվում էր, թե շարունակ փորձում էի մոտենալ Նրան, բայց այդպես էլ չէի հասնում: Մի օր, երբ հայելու առջև սանրում էի մազերս, Նրան մի պարզ հարց տվի. «Աստված, ինչո՞ւ է ինձ շարունակ թվում, թե փնտրում եմ Քեզ ու չեմ գտնում»: Սրտումս իսկույն լսեցի այս խոսքերը. «Ջո՛յս, դու փորձում ես փնտրել Ինձ *դրսում*, իսկ քեզ անհրաժեշտ է փնտրել *ներսում»:* Թո՛ւյլ տուր բացատրել. Աստված ասում է, որ Ինքը բնակվում է մեր մեջ, բայց ոմանց համար դժվար է հասկանալ այս ճշմարտությունը: Այսօրվա խոսքը բացատրում է, որ Աստծո ներկայության գանձը մեր ներսում է, բայց շատերը, որոնք հավատում են Հիսուսին, երբեք չեն վերապրում Նրա ներկայության կամ Նրա հետ մշտական հաղորդակցության ուրախությունը:

Ես աշխատում էի հասնել Աստծուն, բայց ճշմարտությունն այն էր, որ Իր շնորհքով ու ողորմությամբ Նա էր եկել ինձ մոտ և բնակություն հաստատել իմ ներսում: Նույնը վերաբերում է քեզ՝ որպես Աստծո զավակի: Նա քեզ հետ է ամեն ժամանակ, ու Նա է քո զորությունը, խաղաղությունը, ուրախությունն ու օգնությունը: Նա ուզում է խոսել քեզ հետ, այնպես որ, սկսի՛ր լսել քո սրտում, և կհայտնաբերես, որ Նա ավելի մոտ է, քան կարծում ես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ փնտրիր Աստծուն դրսում, փնտրի՛ր ներսում:

Ասա՛ «շնորհակալություն»

«Գոհացեք Տիրոջից, որ բարի է, որ Նրա ողորմությունը և սիրառատ բարությունը հավիտյան է» (Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 16.34):

Գոհությունը պետք է լինի մեր կյանքի անբաժանելի մասը: Դա մի բան է, որը ստեղծում է այնպիսի մթնոլորտ, որտեղ Աստված կարող է խոսել. դա աղոթքի տեսակ է, որը պիտի հորդի մաքուր սրտից՝ հեշտ և բնական: Մենք կարող ենք ամեն երեկո ժամանակ հատկացնել և գոհանալ Աստծուց օրվա ընթացքում Նրա ցուցաբերած օգնության համար, բայց նաև մշտապես գոհության պարզ աղոթքներ պիտի բարձրացնենք՝ տեսնելով, թե ինչպես է Նա գործում մեր կյանքում կամ օրհնում մեզ: Օրինակ. «Տե՛ր, շնորհակալությո՛ւն անուշ քուն պարգևելու համար», կամ՝ «Աստվա՛ծ, շնորհակալությո՛ւն, որ ատամիս բուժումն այդքան ցավոտ չէր, որքան կարծում էի», կամ՝ «Հա՛յր, շնորհակալությո՛ւն, որ ինձ օգնեցիր ճիշտ որոշումներ կայացնել այսօր», կամ՝ «Տե՛ր, շնորհակալությո՛ւն, որ մշտապես քաջալերում ես ինձ»:

Աստված միշտ բարի է մեր հանդեպ, միշտ հավատարիմ է և շարունակ ջանասիրաբար գործում է մեր կյանքում՝ ամեն հնարավոր ձևով մեզ օգնելու համար: Մենք պետք է գնահատենք դա՝ հայտնելով մեր երախտագիտությունը Նրա և այն ամենի հանդեպ, ինչ անում է մեզ համար: Մենք պիտի գոհանանք Աստծուց մեր սրտերում, ինչպես նաև բարձրաձայն արտահայտենք մեր շնորհակալությունը, որովհետև դա օգնում է մեզ մշտապես գիտակցել և զգալ Աստծո սերը, որն արտահայտվում է մեր հանդեպ Նրա բարությամբ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. շնորհակալություն հայտնի՛ր Աստծուն քսան բանի համար, նախքան այսօր Նրանից որևէ բան կխնդրես:

Վերաբերմունքը որոշում է կյանքի ուղին

«Ամեն զգուշությունից առավել զգուշացիր քո սրտից, որ նրանից է կյանքի ելքը» (ԱՌԱԿԱՅ 4.23):

Վերաբերմունքը շատ կարևոր է. մեր վերաբերմունքը՝ լավ թե վատ, սկիզբ է առնում մտքերից և դառնում վարքագիծ:

Հայտնի մեջբերման մեջ ասվում է. «Ցանիր միտք, կինձես գործողություն. ցանիր գործողություն, կինձես սովորություն. ցանիր սովորություն, կինձես բնավորություն. ցանիր բնավորություն, կինձես ճակատագիր»:

Ճակատագիրը կյանքի ուղին է. Բնավորությունն այն է, թե ով ենք մենք. սովորությունները վարքագծի ենթագիտակցական կաղապարներն են: Մեր կյանքի արդյունքը, ըստ էության, որոշվում է մեր մտքերով: Հենց մտքերից է սկսվում ամբողջ գործընթացը: Զարմանալի չէ, որ Աստվածաշունչը սովորեցնում է նորոգել միտքը՝ զարգացնելով նոր վերաբերմունք և նոր սկզբունքներ (տե՛ս Հռոմեացիների 12.2, Եփեսացիների 4.23): Մենք պետք է լինենք Աստծո Խոսքի լավ տնտեսներ և մշակենք մտածողության նոր օրինաչափություններ, որոնք կփոխեն մեր կյանքի ուղին:

Մենք կարող ենք խանգարել Սուրբ Հոգուն մեր վատ վերաբերմունքով, օրինակ՝ դառնությամբ, բարկությամբ, չներումով, չարամտությամբ, անարգանքով, վրեժխնդրությամբ կամ ապերախտությամբ և այլն: Սուրբ Հոգին շարժվում է այնտեղ, որտեղ կա աստվածահաճո վերաբերմունք:

Պարբերաբար քննիր քո վերաբերմունքը և հսկիր ամենայն ջանասիրությամբ, ինչպես պատվիրվում է այսօրվա խոսքում: Եթե կարիք ունես փոխելու վերաբերմունքդ, ապա սկսիր փոխել մտքերդ:

Սատանան մշտապես կփորձի տալ մեզ սխալ մտքեր, բայց հարկ չկա, որ ընդունենք այն, ինչ նա փորձում է տալ: Ես չէի ընդունի մեկ գդալ թույն զուտ այն պատճառով, որ ինչ-որ մեկն առաջարկել է, դու նույնպես չէիր ընդունի: Եթե մենք բավականաչափ խելացի ենք, որ հրաժարվում ենք թույնից, ապա պիտի բավականաչափ խելամիտ լինենք՝ թույլ չտալու սատանային թունավորել մեր մտքերը, վերաբերմունքը և, ի վերջո, մեր կյանքը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ամեն օր կատարիր վերաբերմունքի «գույքագրում»՝ պահպանելով այն ճիշտ վիճակում:

Նվիրաբերված կյանք

«Ո՛վ Տեր, Քեզ եմ հանձնում իմ կյանքը» (ՍԱՂՄՈՍ 25.1):

Ես սիրում եմ առավոտյան ձեռքերս բարձրացնել և նվիրաբերման աղոթք անել, ինչպես գրված է այսօրվա խոսքում: Ես ասում եմ. «Ո՛վ Տեր, Քեզ եմ հանձնում իմ կյանքը»: Սա իրականում սահմանում է, թե ինչ է նվիրաբերումը: Այն լիովին, հոժարակամ անձնատուր լինելն է Տիրոջը: Նվիրաբերման աղոթքում մենք ասում ենք. «Ահա՛ ես, Աստվա՛ծ: Իմ անձը Քեզ եմ հանձնում: Քեզ եմ հանձնում ոչ թե իմ ֆինանսները, այլ՝ ինձ, ոչ թե մեկ ժամ կիրակի առավոտվանից, այլ՝ ինձ, ոչ թե մի հատված իմ օրվանից, այլ՝ ինձ: Քեզ եմ հանձնում իմ *ամբողջ* կյանքը: Ես այն դնում եմ Քո առջև. արա՝ ինչ ուզում ես: Խոսի՛ր ինձ հետ և իմ միջոցով այսօր: Դիպչի՛ր մարդկանց իմ միջոցով այսօր: Այսօր իմ միջոցով փոփոխությո՛ւն բեր աշխարհում: Ես սեփական ոչինչ չունեմ. ես ընդամենը տնտես եմ: Ինչ որ եմ, Քեզնով եմ, և ինչ ունեմ, Քեզնից է ու հասանելի է Քեզ այսօր»:

Երբ նվիրաբերում ենք որևէ բան, այն առանձնացնում ենք Աստծո գործածման համար: Հետևաբար, երբ նվիրաբերում ենք մեր կյանքը, մենք հրաժարվում ենք մարմնավոր ցանկություններից, աշխարհիկ արժեքներից, մարմնավոր մտածելակերպից, անկազմակերպ ապրելակերպից, վատ սովորություններից և այն ամենից, ինչը չի համապատասխանում Աստծո Խոսքին: Մենք փակում ենք մեր ականջները աշխարհի աղմուկի համար և բացում Աստծո ձայնի համար: Մենք նպատակաուղղված հեռու ենք մնում անբարեպաշտ բաներից, որպեսզի պատրաստ և հասանելի լինենք Աստծո կողմից գործածվելու համար: Նվիրաբերումը հեշտ չէ, սակայն դրա համար արժե ճնշել մարմինը և զոհողությունների գնալ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր Աստծուն ասա՝ ահա՛ ես:

Լսելու հարցում ընտրովի մոտեցումն անթույլատրելի է

«...Այսօր, եթե Նրա ձայնը լսեք, մի՛ խստացրեք ձեր սրտերը» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4.7):

Երբ հոժար չենք լսելու Աստծո ձայնը կյանքի մի բնագավառում, հաճախ անկարող ենք լինում լսել Նրա ձայնը մյուս բնագավառներում: Երբեմն մենք լսում ենք միայն այն, ինչ ցանկանում ենք լսել, և սա կոչվում է «ընտրովի մոտեցում»: Նման իրավիճակում մարդիկ, ի վերջո, հանգում են այն եզրակացության, որ այլևս չեն կարող լսել Աստծուց, սակայն սա ճիշտ չէ: Փաստն այն է, որ Աստված արդեն խոսել է նրանց հետ, բայց նրանք ոչ մի կերպ չեն արձագանքել: Թո՛ւյլ տուր օրինակ բերել հետևյալ պատմությունը:

Մի անգամ մի կին ասաց, որ խնդրել է Աստծուց, որ իրեն հայտնի, թե ինչ է Աստված ուզում, որ ինքն անի: Աստված հորդորել է նրան ներել քրոջը, ով ամիսներ առաջ վիրավորել է իրեն: Չունենալով ներելու ցանկություն՝ այդ կինը շուտով դադարում է աղոթելուց: Որոշ ժամանակ անց, երբ նա կրկին փնտրում է Տիրոջը ինչ-որ բանի համար, իր սրտում լսում է հետևյալ խոսքերը. «Նախ՝ ների՛ր քո քրոջը»:

Երկու տարի շարունակ, ամեն անգամ, երբ նա բախվում է նոր իրավիճակի և Աստծուց առաջնորդություն խնդրում, Աստված մեղմորեն հիշեցնում է նրան ներել քրոջը: Ի վերջո, նա հասկանում է, որ երբեք չի փոխվի կամ հոգևորապես չի աճի, մինչև չհնազանդվի, ուստի աղոթում է. «Տե՛ր, տո՛ւր ինձ ուժ՝ ներելու իմ քրոջը»: Նույն պահին շատ բաներ նա սկսում է տեսնել քրոջ տեսանկյունից. բաներ, որոնք մինչև այդ հաշվի չէր առել: Կարճ ժամանակում նրա հարաբերությունները քրոջ հետ լիովին վերականգնվում են և ամրանում, քան երբևէ եղել էին:

Եթե իսկապես ցանկանում ենք լսել Աստծուց, ապա ինչ էլ Նա ասի, պետք է բաց լինենք լսելու և արձագանքելու: Ես քաջալերում եմ քեզ այսօր լսել և հնազանդվել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. արդյո՞ք Աստծուց լսելու հարցում ունես ընտրովի մոտեցում քո կյանքի որևէ բնագավառում: Հոժարությամբ լսի՛ր Աստծո ձայնը:

Անկեղծ հավատք

«Իսկ պատվիրանքի վախճանը սերն է սուրբ սրտից և բարի խղճմտանքով և անկեղծ հավատքից» (Ա ՏԻՄՈԹԵՈՍ 1.5):

Մեր հավատքի կամ աղոթքի կյանքում չենք ուզում լինել մանկա*միտ*, այլ ուզում ենք լինել մանկան *նման:* Տերը չի ցանկանում, որ մեր փոխհարաբերությունն Իր հետ բարդացնենք: Նա փնտրում է անկեղծ սրտեր, որովհետև Նա սրտերի Աստված է: Նա ուզում է, որ մենք աղոթենք հավատքով, որը զգացմունք չէ, այլ՝ հոգևոր ուժ, որն ազդում է անտեսանելի ոլորտի վրա: Աստված կարգուկանոնի Աստված է, բայց ո՛չ կանոնների, կարգերի և օրենքների Աստված, և Նա չի ուզում, որ մենք ուժասպառ լինենք՝ փորձելով երկարուձիգ աղոթքներ անել, որոնք Հոգուց չեն կամ հետևում են ինչ-որ բանաձևերի ու պահանջում որոշակի կեցվածք: Դա օրինապաշտական մոտեցում է և մշտապես վնասում է Աստծո հետ մեր կենդանի փոխհարաբերությանը, որովհետև «Հոգին կենդանացնում է, իսկ օրենքը՝ սպանում» (տե՛ս Բ Կորնթացիների 3.6):

Երբ հետևենք Սուրբ Հոգու առաջնորդությանը, մեր հաղորդակցումն Աստծո հետ կողողվի կյանքով: Մենք ստիպված չենք լինի նայել ժամացույցին, որպեսզի աղոթենք այնքան, որքան հարկն է, ինչպես շատերն են անում: Երբ Աստծո հետ խոսելը և Նրան լսելը անում ենք որպես պարտականություն և մարմնի աշխատանք, հինգ րոպեն կարող է մեկ ժամ թվալ, բայց երբ մեր աղոթքը ներշնչված է Սուրբ Հոգուց, մեկ ժամը կարող է հինգ րոպե թվալ: Ես սիրում եմ աղոթել և Աստծո հետ հաղորդակցվել այնքան, մինչև լիովին չբավարարվեմ: Փորձի՛ր հանգստանալ ու վայելել այն ժամանակը, որ անցկացնում ես Աստծո հետ, և դու կքաղես պտուղները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ձգտի՛ր լինել մանկան նման, ոչ թե մանկամիտ:

Կայանած մեքենան չես կարող վարել

«Հաստատի՛ր իմ քայլերը և ուղղի՛ր դրանք Քո Խոսքով» (ՍԱՂՄՈՍ 119.133):

Մարդիկ հաճախ են հարցնում. «Ինչպե՞ս եմ իմանում, թե ինչ է Աստված ուզում, որ անեմ իմ կյանքում»: Ոմանք տարիներ շարունակ անշարժ են մնում, որովհետև սպասում են, որ երկնքից մի ձայն կհնչի և իրենց կասի, թե ինչ անեն:

Եթե նման իրավիճակում ես, ապա իմ լավագույն խորհուրդը քե՛զ. պարզապես *ինչ-որ բա՛ն* արա: Արա՛ այն, ինչ կարծում ես, որ Աստված կարող է կանչել քեզ անելու, ու եթե սխալվես, Նա կօգնի ուղղել այդ սխալը: Մի՛ վախեցիր սխալվելուց, այլապես երբեք չես փորձի հնազանդվել այն ամենին, ինչ Աստված ասել է քեզ: Ես սիրում եմ ասել, որ կայանած մեքենան չես կարող վարել: Դու պետք է շարժման մեջ լինես, եթե ուզում ես, որ Աստված ցույց տա, թե որ ճանապարհով գնաս: Կարիք չկա, որ Նա քեզ ասի՝ շրջվի՛ր ձախ, եթե դու որևէ տեղ չես գնում: Բայց եթե շարժման մեջ ես, Նա կարող է ուղղորդել քեզ:

Թո՛ւյլ տուր իմաստության խոսք փոխանցեմ: Անշուշտ, կան ժամանակներ, երբ պետք է դադարենք և սպասենք Աստծուն, աղոթենք ու չդիմենք անհապաղ միջոցների: Բայց սա չի վերաբերում բոլոր իրավիճակներին: Կան ժամանակներ, երբ Աստծո կամքը բացահայտելու միակ ճանապարհը որոշակի ուղղությամբ շարժվելն է և Նրան թույլ տալը, որ խոսի մեզ հետ և առաջնորդի մեզ: Եթե սխալ ճանապարհով ընթանալիս լինես, Նա կփակի այդ դուռը և մեկ այլ դուռ կբացի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ աղոթում ես, հետևի՛ր, որ շարժման մեջ լինես:

Մի՛ բարդացրու

«Բայց վախենում եմ՝ միգուցե ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր միտքն ապականվի այն միամտությունից, որ Քրիստոսում է» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 11.3):

Աստված ցանկանում է, որ Իր հետ մեր փոխհարաբերությունն ու հաղորդակցումը լինեն պարզ, բայց սատանան խեղաթյուրել է աղոթքի մասին մեր պատկերացումը, որովհետև նա ոչ միայն գիտի, թե որքան զորավոր է աղոթքը, այլև գիտի, թե որքան դյուրին պետք է լինի այն մեզ համար:

Պարզապես ինքդ քեզ հարցրու. *«Ինչո՞ւ պիտի Աստված ստեղծեր մեզ՝ Իր հետ հաղորդակցում և փոխհարաբերություն ունենալու համար, ապա բարդացներ այդ գործընթացը»:* Աստված ոչինչ չի բարդացրել. Նա պարզ և հաճելի միջոց է ստեղծել Իր հետ ժամանակ անցկացնելու և այդ ժամանակը վայելելու համար: Սատանան ուզում է՝ մենք հավատանք, որ աղոթքը երկար ժամանակ է պահանջում, և մենք պետք է հետևենք հատուկ բանաձևերի: Նա շրջափակում է աղոթքը տարբեր կանոններով և կարգերով ու գողանում այն ստեղծագործական մոտեցումը և ազատությունը, որ Աստված ուզում է՝ մենք ունենանք: Նա փորձում է խեղդել մեր հավատքը և համոզել, որ մենք իրականում այդքան էլ արժանի չենք խոսելու Աստծո հետ և չենք կարող լսել Նրա ձայնը:

Երբ աղոթում ենք, սատանան միշտ փորձում է դատապարտել մեզ՝ ասելով, որ ճիշտ կամ բավականաչափ չենք աղոթում, և որ մեր աղոթքները փոփոխություն չեն բերում: Բացի այդ՝ նա փորձում է շեղել մեզ: Ահա, թե ինչու է մարդկանց հաճախ թվում, թե աղոթքը դժվար և անարդյունավետ է, ուստի նրանք հազվադեպ են աղոթում:

Ընդհանուր առմամբ, շատերը հուսախաբված և անբավարարված են իրենց աղոթքի կյանքում, բայց դա կարող է փոխվել: Մենք կարող ենք աղոթել պարզ, անկեղծ, հավատքով լի աղոթքներ և վստահ լինել, որ Աստված լսում և պատասխանում է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ բարդացրու:

Սպասի՛ր Աստծուն

«Հանդարտվի՛ր և հանգստացի՛ր Տիրոջ մեջ. սպասի՛ր Նրան և համբերատար ապավինի՛ր Նրան» (ՍԱՂՄՈՍ 37.7):

Ամեն օր ես Աստծուց լսելու կարիք ունեմ և ուզում եմ լսել Նրանից ամեն ինչի մասին: Աստծուց լսելու համար մենք պետք է պատրաստ լինենք սպասելու իմաստության և ամեն ինչից առավել փափագենք Աստծո կամքը: Մենք առավել հստակ կլսենք Աստծուց, եթե վճռենք չդիմել գործողությունների՝ հիմնվելով մարմնավոր ցանկությունների կամ զգացմունքների վրա: Մենք օրհնված կլինենք, եթե նախքան որևէ քայլ ձեռնարկելը, սպասենք այնքան, մինչև վստահ լինենք, որ Աստծուց ուղղորդում ունենք: Այնուհետև պիտի անենք այն, ինչ Աստված առաջնորդում է մեզ անելու, նույնիսկ եթե դա դժվար է մեզ համար:

Տարիներ առաջ ես սկսեցի դասական ֆիլմեր հավաքել, որովհետև հեռուստացույցով դիտելու որևէ պարկեշտ բան չկար: Մի օր մեր տանը հայտնվեց մի ամսագիր, որտեղ ներկայացված էր լավ, պարկեշտ ֆիլմերի ցանկ: Կարծես Աստված հնարավորություն էր տվել ինձ առանց որևէ ջանքի համալրել իմ հավաքածուն: Ես ոգևորվեցի և որոշեցի պատվիրել մոտավորապես հիսուն ֆիլմ: Այնուհետև պատվերի թերթիկը մի կողմ դրեցի: Մի քանի օր անց, երբ իմ հույզերն ու խանդավառությունը հանդարտվել էին, կրկին նայեցի այդ թերթիկին և պատվիրեցի ընդամենը երկու ֆիլմ: Սա պարզ օրինակ է, բայց սկզբունքը կիրառելի է կյանքի շատ բնագավառներում:

Երբ գործում ենք միայն խանդավառ հույզերի հիման վրա, հաճախ սխալներ ենք թույլ տալիս: Ես ասում եմ. «Թո՛ղ հույզերը հանդարտվեն, ապա որոշո՛ւմ կայացրեք»: Զարմանալի է, թե գիշերային լիարժեք քունը ինչպիսի դրական ազդեցություն կարող է ունենալ մեր կարծիքի և որոշումների վրա:

Քաջալերում եմ քեզ, որ սովորես սպասել: Հույզերը կսաստկանան և կթուլանան, հուզական էներգիան այնքան անկայուն է, որ հազվադեպ կառաջնորդի մեզ այն նպատակակետը, որ Աստված սահմանել է մեզ համար: Աստված մշտապես կառաջնորդի մեզ լավ վայրեր, եթե պարզապես հետևենք Նրա Խոսքին և իմաստությանը, այլ ոչ թե ապավինենք մեր հույզերին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի կո՛ղմ դիր հույզերդ, ապա որոշո՛ւմ կայացրու:

Բաց մի՛ թող օրհնությունը

«Երանելի (երջանիկ, հաջողակ և նախանձելի) է այն մարդը, որ միշտ ակնածալից և սրբազան երկյուղ ունի [Տիրոջ հանդեպ]. բայց իր սիրտը խստացնողը չարիքի մեջ կընկնի» (ԱՌԱԿԱՅ 28.14):

Աստված կարող է խոսել մեզ հետ ամենատարբեր ձևերով, բայց եթե խստացնենք մեր սրտերը և հրաժարվենք Նրա ասած խոսքին հնազանդվելուց, ապա բաց կթողնենք այն օրհնությունները, որ Նա ցանկանում է տալ մեզ: Ես հիշում եմ այն ժամանակը, երբ ամեն փոքրիկ բան, որ Աստված խնդրում էր ինձ անել, կամ ամեն բան, որ Նա *չէր* ցանկանում, որ անեի (իսկ ես շարունակում էի անել), վերածվում էր Աստծո և իմ միջև ըմբշամարտի մրցույթի: Օրեր, շաբաթներ, ամիսներ և երբեմն, նույնիսկ, տարիներ պահանջվեցին, մինչև ընդունեցի այն փաստը, որ Աստված չի պատրաստվում փոխել Իր միտքը և շարունակելու է ինձնից հնազանդություն պահանջել այս կամ այն հարցում:

Երբ, ի վերջո, տեղի տվի Աստծո ճանապարհներին, իրավիճակներն այնպիսի ընթացք ստացան, որ սկսեցի օրհնվել այնպես, ինչպես երբևէ չէի կարող պատկերացնել: Եթե ես հենց սկզբից անեի այն, ինչ Աստված խնդրել էր, որ անեի, ապա կկարողանայի խնայել ինձ բազմաթիվ խնդիրներից:

Շատերը համառ են և ուզում են գնալ իրենց ճանապարհներով, նույնիսկ եթե դրանք չեն գործում: Ինչևէ, մենք կարող ենք սովորել նրբազգաց լինել Աստծո հանդեպ և դառնալ զգայուն Նրա ձայնին և Նրա Հոգու առաջնորդությանը: Մեր հոգին նախատեսված է Աստծո հետ հաղորդակցման համար: Նա խոսում է և՛ մեր ներըմբռնման (ինտուիցիա), և՛ մեր խղճմտանքի միջոցով, որպեսզի հեռու պահի մեզ անախորժություններից և հայտնի ճիշտն ու սխալը: Ապա Իր Հոգու միջոցով օգնում է մեզ անել այն, ինչ ճիշտ է:

Քաջալերում եմ քեզ այսօր թողնել Աստծո հանդեպ համառության ցանկացած դրսևորում և հետևել Նրան փափուկ սրտով, որը ձգտում է լսել և հնազանդվել Նրա ձայնին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ավելի լավ է՝ հաստատվես՝ ոչ թե քո, այլ Աստծո ճանապարհների մեջ:

Արդյո՞ք լսում ես Նրան

«Շատ բան ունենք ասելու, որ դժվար է բացատրել, որովհետև ձեր [հոգևոր] լսողությունը բթացել է, և դուք դարձել եք դանդաղկոտ [նույնիսկ ծույլ՝ հոգևոր խորաթափանցություն ունենալու հարցում]» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.11):

Երբևէ հանդիպե՞լ ես որևէ մեկին, ով հարցեր է տալիս, բայց երբեք չի սպասում պատասխանները լսելուն, կամ՝ ինքն է պատասխանում իր հարցերին: Դժվար է խոսել այնպիսի մարդու հետ՝ ով չի լսում: Ես վստահ եմ, որ Աստված չի փորձում խոսել այսպիսի վերաբերմունք ունեցող մարդկանց հետ: Եթե մենք չլսենք Նրան, Նա կգտնի մեկին, ով մեծ ցանկություն ունի լսելու այն, ինչ Նա ուզում է ասել:

Եբրայեցիների 5.11-ում զգուշացվում է, որ մենք բաց կթողնենք կյանքի արժեքավոր սկզբունքները, եթե չունենանք լսելու պատրաստակամություն: Լսելու պատրաստակամությունը թույլ չի տա, որ մեր լսողությունը բթանա: Լսելու պատրաստակամություն ունեցող մարդը նա չէ, ով ուզում է լսել Աստծուց միայն այն ժամանակ, երբ նեղության մեջ է կամ Աստծո օգնության կարիքն ունի, այլ նա, ով ցանկանում է լսել, թե ինչ է Աստված ասում կյանքի յուրաքանչյուր բնագավառի վերաբերյալ:

Երբ ակնկալում ենք մարդուց որևէ բան լսել, մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք նրա վրա. մեր ականջները պատրաստ են լսելու նրա ձայնը: Նույնը վերաբերում է Աստծո հետ մեր փոխհարաբերությանը. ամեն օր պետք է ակնկալենք լսել Աստծուց և ուշադրություն դարձնենք Նրա ձայնին:

Հիսուսն ասաց, որ մարդիկ ունեն ականջներ, բայց չեն լսում, և ունեն աչքեր, բայց չեն տեսնում (տե՛ս Մատթեոս 13.9-16): Նա չէր խոսում ֆիզիկական լսողության և տեսողության մասին, այլ՝ հոգևոր ականջների և աչքերի, որոնք տրվում են մեզ, երբ վերստին ծնվում ենք Աստծո Արքայության մեջ: Հոգևոր ականջներով մենք լսում ենք Աստծո ձայնը: Մենք ապահովված ենք անհրաժեշտ ամեն ինչով Աստծուց լսելու համար, բայց պետք է հավատանք, որ կարող ենք լսել Նրանից: Աստծո բոլոր խոստումները մեր կյանքում դառնում են իրականություն հավատքի միջոցով, ուստի այսօր սկսի՛ր հավատալ, որ դու կարող ես լսել, և դու լսում ես Աստծուց:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գործածի՛ր հոգևոր ականջներդ:

Բոլորս որդեգրված ենք

«Ինչպես որ [Իր սիրով] ընտրեց մեզ [ըստ էության, ընտրեց Իր համար՝ որպես Իր սեփականություն] Նրանով աշխարհը ստեղծելուց առաջ… Մեզ նախասահմանեց (ծրագրեց Իր սիրով), որ որդեգրվենք (հայտնվենք) որպես Իր զավակներ Հիսուս Քրիստոսի միջոցով» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1.4,5):

Երբ հանդիպեցի իմ ամուսնուն՝ Դեյվին, քսաներեք տարեկան էի և ունեի ինը ամսեկան երեխա՝ առաջին ամուսնությունից: Իմ նախկին ամուսինը դավաճանում էր ինձ, իսկ հետո ընդհանրապես լքեց մեզ, որի պատճառով ամուսնալուծվեցի:

Երբ Դեյվը խնդրեց ինձ ամուսնանալ իր հետ, ես պատասխանեցի. «Շատ լավ, դու գիտես, որ ես ունեմ որդի, և եթե դու ընդունում ես ինձ, պիտի ընդունես նաև նրան»:

Դեյվը հրաշալի պատասխան տվեց. «Ես այդքան լավ չեմ ճանաչում քո որդուն, բայց գիտեմ, որ սիրում եմ քեզ և կսիրեմ ցանկացած բան կամ ցանկացած մեկին, որը քո մասնիկն է»:

Մարդիկ ապշում են, երբ իմանում են, որ Դավիթը որդեգրված է: Նրանք շարունակ ասում են ինձ, թե որքան նման է նա հայրիկին, ինչը ֆիզիկապես անհնար է, որովհետև նրա մեջ չկան Դեյվի գենները:

Երբ Աստված որդեգրում է մեզ, Նա ուզում է օգնել, որ մենք ուշագրավ ձևով նմանվենք Իրեն: Մենք բոլորովին նման չենք Իրեն նախքան մեր որդեգրվելը, սակայն ինչպես որդեգրված երեխաներն են յուրացնում որդեգրող ծնողների հատկանիշները, այնպես էլ մենք նմանվում ենք Աստծուն, երբ աճում ենք Նրա հետ մեր փոխհարաբերություններում:

Երբ ես որդեգրվեցի Աստծո ընտանիքի մեջ, իմ վարքագիծը բոլորովին նման չէր իմ Երկնային Հոր վարքագծին, բայց տարիների ընթացքում փոխվեցի և հուսով եմ, որ այսօր մարդիկ կարող են իմ մեջ տեսնել Երկնային Հոր հատկանիշները: Ես աճել եմ գոհության, ուրիշների հանդեպ սիրո, համբերատարության, ողորմածության և շատ այլ բաների մեջ: Աստված ուզում է նույն փոփոխությունները բերել և՛ քո, և՛ նրանց կյանքում, ում սիրում ես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու օրեցօր փոխվում ես՝ նմանվելով Աստծո պատկերին:

Գնա՛ և խնդրի՛ր

«Եվ սա է այն համարձակությունը, որ ունենք դեպի Նա, թե ինչ որ Նրա կամքի պես խնդրում ենք, լսում է մեզ» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 5.14):

Ուզում եմ քաջալերել քեզ, որ Աստծուն մոտենաս վստահությամբ: Աստված ուզում է, որ մենք վայելենք աղոթքը, բայց դա տեղի չի ունենա, քանի դեռ վախենում ենք սխալվելուց: Նա խոստանում է լսել և պատասխանել, երբ աղոթենք Իր կամքի համաձայն, բայց ի՞նչ կլինի, եթե խնդրենք Նրա կամքին հակառակ բան: Իհարկե, մենք հնարավորինս պետք է աղոթենք Աստծո կամքի համաձայն, բայց չպիտի թույլ տանք թշնամուն գցել մեզ վախի թակարդն այնպես, որ ընդհանրապես վախենանք Աստծուց խնդրելուց այն, ինչ կա մեր սրտում:

Եթե աղոթենք Աստծո կամքին հակառակ, ապա վատագույնը, որ կարող է տեղի ունենալ, այն է, որ չենք ստանա մեր խնդրանքը, իսկ դա միմիայն ի նպաստ մեզ կլինի: Աստված գիտի մեր սրտերը, և Նա չի բարկանա, եթե սխալվենք ու խնդրենք այն, ինչը Նրա կամքը չէ: Մենք չպետք է մոտենանք Նրան՝ վախենալով, որ կսխալվենք, կամ՝ Նրան դուր չի գա, եթե չափից շատ բան խնդրենք: Ես խնդրում եմ Աստծուց այն, ինչ ցանկանում եմ և ինչի կարիքն ունեմ՝ մշտապես հնարավորինս կառչելով Նրա Խոսքից, ապա ասում եմ. «Աստվա՛ծ, եթե այն, ինչ խնդրել եմ, ճիշտ չէ ինձ համար, ապա ես վստահում եմ, որ այն չես տա ինձ»: Գնա՛ Նրա մոտ հավատքով, համարձակությամբ՝ ակնկալելով ստանալ Նրա պատասխանը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գնա՛ և խնդրի՛ր:

Հակառակվիր վախին. լցվիր հավատքով

«Առանց հավատքի անկարելի է հաճո լինել Նրան...» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11.6):

Սատանան աշխատում է արտաժամյա՝ փորձելով լցնել մեր կյանքը վախով: Քանի որ մենք հավատքով ենք լսում Աստծուց, պետք է նախահարձակ լինենք և հակառակվենք վախին: Աստվածաշնչում ասվում է, որ Աստծո Խոսքով հայտնվող արդարությունը առաջնորդում է մեզ հավատքից՝ հավատք (տես Հռոմեացիների 1.17): Եթե իմանանք, թե ով ենք մենք Քրիստոս Հիսուսում և հասկանանք, թե որքան է Նա մեզ սիրում, ապա ցանկացած բանի կմոտենանք հավատքի վերաբերմունքով: Աստված բազմիցս ասել է, որ հարկ չկա վախենալու, որովհետև Ինքը մեզ հետ է:

Այն աղոթքը, որ հավատքից է, զարմանալի կերպով կօգնի մեզ և ուրիշներին, հետևաբար, քաջալերում եմ քեզ՝ ուժեղ պահես հավատքդ: Մենք բացահայտում ենք Աստծո կամքը հավատքով լեցուն աղոթքների միջոցով, բայց կարող ենք նաև ընդունել սատանայի կամքը վախի միջոցով: Հոբն ասաց, որ այն, ինչից վախենում էր, հասավ իրեն (տես Հոբ 3.25), այնպես որ՝ ապրիր հավատքից՝ հավատք: Ամեն բան անելիս հավատա՛, որ Աստված բարի է, և սպասիր Նրանից լավագույնը:

Աղոթքը ամենակարևոր բանն է, որին պետք է մոտենալ հավատքով լի սրտով: Այն բացում է երկնային պատուհանները և արձակում Աստծո զորությունը մեր կյանքի և մեր հանգամանքների մեջ: Եղիր չափազանց ուշադիր, որ վախը չսողոսկի աղոթքներիդ մեջ և չխանգարի ստանալու այն, ինչ Աստված պատրաստել է քեզ համար: Եթե վախի հետ կապված լուրջ խնդիր ունես, խորհուրդ եմ տալիս սկսել աղոթքներդ հետևյալ խոսքերով. «Այսօր ես մոտենում եմ Աստծուն հավատքով և հակառակվում եմ վախին»: Այժմ համարձա՛կ աղոթիր՝ ակնկալելով լսել Աստծուց, և հիշիր, որ Աստված պատասխանում է քո աղոթքներին ոչ թե այն պատճառով, որ դու կատարյալ ես, այլ՝ որ Նա բարի է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սիրտդ պահիր հավատքով լի:

Աստված հասկանում է

«Մեծ է մեր Տերը և շատ զորավոր. Նրա իմաստությանը չափ չկա» (ՍԱՂՄՈՍ 147.5):

Չեմ կարծում, որ ես չափազանց պերճախոս եմ, և գուցե դու էլ չես կարծում, որ չափազանց բարդ բառերով ես հաղորդակցվում: Ինձ այլևս չի անհանգստացնում, թե ինչպես է հնչում իմ աղոթքը. ես Տիրոջն ասում եմ այն, ինչ կա իմ սրտում, ու դա ասում եմ այնպես, ինչպես կարող եմ՝ պարզ, հասարակ և շիտակ: Այդպես ես խոսում եմ իմ ամուսնու հետ, այդպես խոսում եմ իմ զավակների հետ, այդպես խոսում եմ իմ աշխատակիցների հետ: Այսպիսով՝ այդպես ես խոսում եմ Աստծո հետ, և այդպես Նա խոսում է ինձ հետ: Ես չեմ փորձում տպավորություն գործել Նրա վրա. ես փորձում եմ սիրտս կիսել Նրա հետ ու դա լավագույնս կարող եմ անել, երբ մնում եմ այնպիսին, ինչպիսին կամ:

Աստված ստեղծել է մեզ այնպիսին, ինչպիսին կանք, ուստի մենք պետք է մոտենանք Նրան առանց ձևականության և չմտածենք, որ պետք է հատուկ աղոթք անենք, որպեսզի Նա լսի մեզ: Քանի դեռ անկեղծ ենք, Նա կլսի մեզ: Նա նույնիսկ լսում և հասկանում է այն, ինչ կա մեր սրտում, և ինչը հնարավոր չէ բառերով արտահայտել: Աստծուն ուղղված սիրտը թանկ է Նրա համար, և Նա լսում է նույնիսկ այն բառերը, որոնք հնարավոր չէ արտաբերել: Երբեմն ցավն այնքան ուժգին է, որ ի վիճակի չենք լինում աղոթելու ու կարողանում ենք միայն հառաչել կամ հոգոց հանել, բայց Աստված նույնիսկ դա է հասկանում: Դու կարող ես այսօր մխիթարվել՝ իմանալով, որ Աստված հասկանում և լսում է այն, ինչ ասում ես Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված սիրում է անկեղծություն. աղոթելիս եղի՛ր այնպիսին, ինչպիսին կաս:

Խոնարհություն Աստծո առջև

«...ամեն ինքն իրեն բարձրացնողը կխոնարհվի, և ինքն իրեն խոնարհեցնողը կբարձրանա...» (ՂՈՒԿԱՍ 18.14):

Ղուկաս 18.10,11 խոսքերում կարդում ենք երկու մարդու մասին, որոնք գնացին տաճար՝ աղոթելու: Մեկը փարիսեցի էր, մյուսը՝ մաքսավոր: Հիսուսն ասաց. «Փարիսեցին, առանձին կանգնած, սկսեց ինքն իրեն այս աղոթքն անել. «Ո՛վ Աստված, գոհանում եմ Քեզնից, որ նման չեմ ուրիշ մարդկանց՝ հափշտակողներին, անիրավներին, շնացողներին կամ, նույնիսկ, այս մաքսավորին»» (AMP): Հետո նա շարունակում է թվարկել իր բոլոր բարի գործերը:

Այս հատվածում ինձ դուր է գալիս այն, որ Աստվածաշնչում չի ասվում, որ փարիսեցին աղոթում էր *Աստծուն:* Գրված է, որ նա գնաց տաճար՝ աղոթելու, բայց աղոթեց *«ինքն իրեն»:* Այստեղ կարդում ենք մի մարդու մասին, որը կարծես աղոթում էր, բայց Աստվածաշունչն ասում է, որ նա նույնիսկ Աստծո հետ չէր խոսում. նա խոսում էր ինքն իր հետ: Կարծում եմ՝ երբեմն մենք նույնպես աղոթում ենք՝ տպավորություն թողնելու և՛ մարդկանց վրա, և՛ մեզ վրա: Եկե՛ք լինենք ազնիվ. մենք կարող ենք տպավորվել մեր իսկ պերճախոսությամբ: Երբ խոսում ենք Աստծո հետ և փորձում լսել Նրանից՝ համաձայնության գալով որևէ մեկի կամ որևէ խմբի հետ, մենք պետք է շատ զգույշ լինենք, որ չքարոզենք ուրիշներին և չփորձենք գերհոգևոր երևալ, այլ իսկապես կիսենք մեր սրտերն Աստծո հետ: Համաձայնությունը անհավանական հզոր ուժ ունի, բայց պետք է լինի մաքուր և բխի խոնարհ սրտից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված տեսնում է բոլոր բարի գործերը, որ արել ես ծածուկում, և Նա վարձահատույց կլինի քեզ:

Եղի՛ր փոխհարաբերություն կառուցող հավատացյալ

«Բայց հիմա Հիսուս Քրիստոսի ձեռքով դուք, որ ժամանակով հեռավոր էիք, մոտավոր եղաք Քրիստոսի արյունով» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.13):

Մի ժամանակ ես, ինչպես ինքս էի անվանում, «կրոնավոր հավատացյալ» էի, և Աստծուց օգնություն էի խնդրում միայն այն ժամանակ, երբ բախվում էի, իմ կարծիքով, հուսահատ իրավիճակի, ճգնաժամի կամ լուրջ խնդրի, որոնց լուծումն ինքնուրույն չէի կարողանում գտնել: Միաժամանակ, ոչ այդքան շատ, բայց աղոթում էի, որովհետև դա «կրոնական» պարտականություն էր:

Երբ դարձա, ինչպես ես եմ անվանում, «փոխհարաբերություն կառուցող հավատացյալ», շուտով հասկացա, որ Սուրբ Հոգին ապրում էր իմ մեջ, որպեսզի լիներ իմ Մխիթարիչը, Ուսուցիչը, Ընկերը և Օգնականը, ու բացահայտեցի, որ ես օգնության կարիք ունեի ամեն ինչում՝ սկսած մազերս հարդարելուց, բուոլինգում լավ միավորներ հավաքելուց և ընկերոջ համար ճիշտ նվեր ընտրելուց մինչև ճիշտ որոշումներ կայացնելը և կյանքի հուսահատ իրավիճակների և լուրջ խնդիրների միջով անցնելը:

Երբ իսկապես հասկացա այս ճշմարտությունը և գիտակցեցի, որ Հիսուսը մահացավ ոչ թե նրա համար, որ ինձ կրոնի մի նոր տեսակ տար, այլ առաջնորդեր ինձ Աստծո հետ խորը անձնական փոխհարաբերության մեջ. «կրոնավոր հավատացյալից» ես անցում կատարեցի դեպի «փոխհարաբերություններ կառուցող հավատացյալը»: Իմ հավատքն այլևս հիմնված չէր իմ գործերի վրա, որոնք ես բարի էի համարում, այն հիմնված էր Հիսուսի գործերի վրա: Ես տեսա, որ Աստծո ողորմությունն ու բարությունն ինձ համար ճանապարհ բացեցին Աստծո հետ սերտ փոխհարաբերության մեջ լինելու, կյանքի յուրաքանչյուր բնագավառում Նրա օգնությունը ստանալու, Նրա ձայնը լսելու և Նրա հետ մտերիմ հաղորդակցում ունենալու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կենտրոնացի՛ր փոխհարաբերությունների, ոչ թե կրոնի վրա:

Մեր լավագույն օգնությունը

«Ես բարձրացնում եմ իմ աչքերը դեպի սարերը. որտեղից կգա իմ օգնությունը. իմ օգնությունը Տիրոջից է, որ երկինքն ու երկիրն արեց» (ՍԱՂՄՈՍ 121.1,2):

Մենք պիտի հասունանանք մեր հավատքի մեջ այնքան, որ ամեն անգամ, երբ կարիք լինի իմանալու, թե ինչ պիտի անենք, չվազենք որևէ մեկի մոտ: Ես նկատի չունեմ, որ սխալ է խորհուրդ հարցնել նրանցից, ովքեր, կարծում ենք, ավելի իմաստուն են, բայց սխալ եմ համարում, երբ չափից շատ ենք ապավինում մարդկանց կարծիքներին: Դա վիրավորում է նաև Աստծուն:

Ինչպես տեսնում ենք այսօրվա խոսքում, Դավիթն առաջին հերթին փնտրում էր Աստծուն և գիտեր, որ Աստված էր իր միակ օգնությունը: Նույնը վերաբերում է մեզ. մենք էլ պետք է լինենք Դավթի նման և առաջին հերթին դիմենք Աստծուն: Մենք պետք է սովորություն դարձնենք, որ խորհրդի համար Աստծուն դիմենք որպես մեր «առաջին ընտրություն», այլ ոչ թե վերջին հնարավորություն:

Աստված կարող է Իր ընտրությամբ գործածել որևէ մեկին որոշ բաներ հստակեցնելու, լրացուցիչ մտքեր հաղորդելու կամ հաստատելու համար այն, ինչ արդեն ասել է մեզ, այնպես որ, առաջին հերթին փնտրիր Նրան, և եթե Նա առաջնորդի քեզ որևէ անձնավորության մոտ, հետևիր Նրա առաջնորդությանը:

Թվոց 22.22-40 խոսքերում Աստված նույնիսկ օգտագործեց ավանակին՝ մարդու հետ խոսելու համար: Նա այնքան է ուզում խոսել մեզ հետ, որ կօգտագործի ցանկացած միջոց: Դու կարող ես համոզված լինել, որ եթե հավատում ես, որ Աստված կխոսի քեզ հետ, ապա Նա կգտնի միջոց Իր ուղերձը քեզ հասցնելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. առաջին հերթին խնդրիր Աստծո օգնությունը:

Աստված ապրում է քո մեջ

«Մնացեք Ինձանում, և Ես՝ ձեզանում [Ապրեք Իմ մեջ, և Ես կապրեմ ձեր մեջ]» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.4):

Ինչո՞ւ պիտի Աստված ցանկանար ապրել մեր մեջ: Եվ ինչպե՞ս կարող է Նա անել դա: Չէ՞ որ Նա սուրբ է, իսկ մենք տկար, մարդկային արարածներ՝ թուլություններով, թերություններով և ձախողումներով:

Պատասխանը պարզ է. Նա սիրում է մեզ, և Նա է ընտրել բնակություն հաստատել մեր մեջ: Նա այդպես է անում, որովհետև Աստված է. Նա ունի կարողություն անելու այն, ինչ ցանկանում է, և ընտրում է բնակվել մեր սրտում: Այս ընտրությունը հիմնված չէ որևէ բարի արարքի վրա, որ արել ենք կամ երբևէ կարող ենք անել. այն հիմնված է միմիայն Աստծո շնորհքի, զորության և ողորմության վրա: Մենք դառնում ենք Աստծո բնակարանը՝ Հիսուս Քրիստոսին հավատալու միջոցով (ինչպես Աստված սովորեցնում է մեզ Աստվածաշնչում):

Այսօրվա խոսքը շեշտում է այն փաստը, որ մենք պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին՝ Մեկին, Ում Աստված ուղարկեց՝ Իր հետ մտերմություն ունենալու համար: Նրան հավատալը հնարավորություն է տալիս լսելու Նրա ձայնը, մեր սրտում ընդունելու Նրա Խոսքը և զգալու Նրա ներկայությունը:

Մենք պետք է հավատանք, որ Հիսուսն Աստծուց նվեր է մարդկությանը, և Նրա զոհը մեր մեղքերի համար բավական էր, որպեսզի մեզ թույլ տրվեր մտնելու Աստծո ներկայության մեջ: Մենք դառնում ենք բնակարան Աստծո համար, երբ ընդունում ենք Հիսուսին՝ որպես մեր Տիրոջ և Փրկչի: Այդ դիրքից, Սուրբ Հոգու զորությամբ Նա սկսում է Իր հրաշալի աշխատանքը մեր մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այնպե՞ս արա, որ Աստված քո սրտում զգա Իրեն՝ ինչպես տանը:

Առաջին հերթին գնա՛ Աստծո մոտ

«Նա կկանչի դեպի Ինձ, և Ես կլսեմ նրան. Ես նրա հետ կլինեմ նեղության մեջ. կապրեցնեմ նրան և փառավոր կանեմ նրան» (ՍԱՂՄՈՍ 91.15):

Մի անգամ հարազատներիցս մեկն այնպիսի բան արեց, որ իսկապես ցավեցրեց ինձ, և ինձ մերժված զգացի: Դրանից հետո, երբ հուզված նստած էի մեքենայի մեջ, Աստծուն ասացի. «Աստվա՛ծ, ես կարիք ունեմ, որ մխիթարես ինձ: Ես չեմ ուզում այսպիսի զգացողություն ունենալ: Չեմ ուզում դառնանալ կամ լցվել զայրույթով: Այս անձնավորությունն ինձ այսպիսի ցավ արդեն պատճառել է, և հիմա չեմ ուզում, որ օրս փչանա դրա պատճառով: Բայց ես դժվարանում եմ ինքնուրույն հաղթահարել այս ապրումները և ստիպված եմ դիմել Քո օգնությանը»:

Գիտե՞ս ինչ կատարվեց: Աստված վերցրեց ցավը, և իմ վատ զգացողությունն անհետացավ: Բայց որքան անգամներ ենք Աստծուն աղոթքով դիմելու փոխարեն դիմում մարդկանց՝ սխալմամբ կարծելով, թե պատահածը նրանց պատմելով՝ կմխիթարվենք, բայց իրականում այդպես չէ: Ճշմարտությունն այն է, որ երբ խոսում ենք այն մասին, ինչը ցավեցրել է մեզ, սաստկացնում ենք մեր զգացմունքները և ավելի դժվարացնում դրանց հաղթահարումը: Նախքան Աստծուն դիմելը՝ մենք հակված ենք անելու այն, ինչ կարող է անցնել մեր մտքով, սակայն դրանցից և ոչ մեկը երբևէ չի փոխում իրավիճակը: Մեր վիճակն առավել լավ կլիներ, եթե յուրաքանչյուր արտակարգ իրավիճակին և ամեն տեսակի հուզական ցավին մեր առաջին արձագանքը լիներ աղոթքը: Եթե լիովին կառչենք Աստծուց՝ հայտնելով, որ Իրենից առավել ոչ մեկի կամ ոչ մի բանի կարիքը չունենք, մեր կյանքում կվերապրենք հզոր ճեղքումներ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. առաջին հերթին լսի՛ր Աստծո պատասխանը:

Խաղաղություն

«Եվ Աստծո խաղաղությունը, որ ամեն մտքից վեր է, կպահպանի ձեր սրտերն ու մտքերը Քրիստոս Հիսուսում» (ՓԻԼԻՊԵՅԻՆԵՐԻ 4.7):

Ես արդեն մի քանի մտորումներ եմ գրի առել այն մասին, որ Աստված Իր ժողովրդին առաջնորդում է խաղաղության միջոցով, սակայն ուզում եմ ևս մեկ անգամ հիշատակել այդ մասին, որովհետև դա շատ կարևոր է: Մարդիկ, որոնք անում են ինչ-որ բաներ՝ առանց խաղաղություն զգալու, ապրում են դժբախտ կյանքով և որևէ բանում հաջողության չեն հասնում: Մենք պետք է հետևենք խաղաղության:

Այսօրվա խոսքը հավաստիացնում է, որ Աստված առաջնորդում է մեզ խաղաղության միջոցով: Եթե դու որևէ բան ես անում, օրինակ՝ հեռուստացույց ես դիտում, և հանկարծ կորցնում ես խաղաղությունդ, նշանակում է՝ դու լսել ես Աստծուց: Այս իրավիճակում խաղաղության բացակայությունը նշան է այն բանի, որ Աստված ասում է. «Անջատի՛ր հեռուստացույցը. այն, ինչ դիտում ես, լավ չէ քեզ համար»:

Եթե ինչ-որ բան ասելիս կորցնում ես խաղաղությունդ, ուրեմն Աստված խոսում է քեզ հետ: Հենց այդ պահին ներողություն խնդրելը կազատի քեզ շատ խնդիրներից: Դու կարող ես ասել. «Ներողությո՛ւն այդ խոսքերի համար: Ես սխալ էի, չպիտի ասեի դա, խնդրո՛ւմ եմ, ների՛ր ինձ»: Աստված ուզում է ներգրավված լինել մեր բոլոր որոշումներում: Խաղաղությունը այն միջոցն է, որով Նա հայտնում է մեզ Իր կարծիքը այս կամ այն արարքի վերաբերյալ: Հավանության դեպքում Նա տալիս է խաղաղություն, իսկ անհավանության դեպքում՝ ետ վերցնում:

Եթե մենք չունենք խաղաղություն, ուրեմն չենք հնազանդվում Աստծուն, որովհետև պետք է թույլ տանք, որ Աստծո խաղաղությունը՝ իբրև դատավոր, իշխի մեր սրտում (տե՛ս Կողոսացիների 3.15): Ամեն անգամ, երբ կորցնում ենք խաղաղությունը, պետք է կանգ առնենք և զգայուն լինենք այն ամենին, ինչ Աստված ասում է մեզ: Խաղաղությունը ծառայում է որպես կողմնացույց մեր սրտում՝ մատնացույց անելով ճիշտ ուղղությունը: Այս է պատճառը, որ Աստվածաշնչում Աստված ասում է. «Հետևե՛ք խաղաղության ամենի հետ և սրբության, որ առանց նրա ոչ ոք Տիրոջը չի տեսնի» (Եբրայեցիների 12.14):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խաղաղությանը հետևելը հեռու կպահի քեզ անախորժություններից:

Երբեմն պարզապես կանգնի՛ր

«Եվ ամբողջ Հուդան կանգնած էր Տիրոջ առջև, նաև նրանց երեխաները, նրանց կանայք և որդիները» (Բ ՄՆԱՑՈՐԴԱՑ 20.13):

Ինձ մասնավորապես դուր է գալիս այսօրվա խոսքը և այն փաստը, որ ամբողջ ազգը հանգիստ կանգնեց Աստծո առջև: Բանն այն է, որ Աստծո տնտեսության մեջ հավատքով հանգիստ կանգնելը գործողություն է: Անշուշտ, դա ֆիզիկական գործողություն չէ, այլ՝ հոգևոր: Կյանքում հաճախ դիմում ենք ֆիզիկական գործողությունների և քիչ ենք անում կամ ոչինչ չենք անում հոգևոր առումով: Բայց երբ ինքներս մեզ սովորեցնում ենք դադարել և սպասել Տիրոջը, ներգրավվում ենք հզոր հոգևոր գործունեության մեջ: Դադարելու մեր պատրաստակամությունը Տիրոջն ասում է հետևյալը. «Ես սպասելու եմ Քեզ այնքան, մինչև որևէ բան անես այս իրավիճակի վերաբերյալ: Մինչ այդ ես կմնամ խաղաղ և կվայելեմ կյանքը՝ լիովին ապավինելով Քեզ»:

Հուդայի ժողովուրդը, որ կանգնել էր Տիրոջ առջև, ուներ բոլոր պատճառները (կանգնելուց բացի) *ինչ-որ բան* անելու համար: Բախվելով ահռելի ուժի, որը սպառնում էր ավերել երկիրը և ստրկացնել բոլորին, Հուդայի ժողովուրդը պետք է որ գայթակղվեր ապստամբելու կամ առնվազն ինքն իրեն պաշտպանելու: Բայց նրանք այդպես չվարվեցին: Փոխարենը հանգիստ կանգնեցին՝ ապավինելով Տիրոջը, և Նա հրաշքով ազատեց նրանց:

Աստծուն ապավինելը բերում է ուժ (տե՛ս Եսայի 40.31): Այն ուժը, որը ձեռք ենք բերում Աստծուն սպասելիս, կարող է անհրաժեշտ լինել Աստծո հրահանգները կատարելու համար: Ովքեր ապավինում են Տիրոջը, լսում են Նրա ձայնը, ստանում պատասխաններ, կանգնում ճիշտ ուղու վրա և նորոգվում ուժով, որպեսզի անեն այն, ինչ Նա պատվիրում է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Տիրոջ առջև հանգիստ կանգնելը հավատք է և հոգևոր գործողություն:

Ամեն ժամանակ, ամենուրեք

«Անդադար աղո՛թք արեք» (Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՅԻՆԵՐԻ 5.17):

Մենք կարող ենք աղոթել ամեն ժամանակ և ամենուրեք: Մեզ պատվիրվում է աղոթել ամեն ժամանակ, ամեն պարագայում, անդադար, բայց գիտենք, որ չենք կարող ամբողջ օրն անցկացնել՝ մի անկյունում խոսելով Աստծո հետ և լսելով Նրան: Եթե այդպես անեինք, հնարավոր չէր լինի ապրել: Աղոթքը պետք է լինի շնչառության պես՝ բնականոն և դյուրին: Այն մեր կյանքի անբաժանելի մասն է: Իրականում, ինչպես մեր ֆիզիկական կյանքը պահպանվում է շնչառությամբ, այնպես էլ հոգևոր կյանքը պետք է պահպանվի աղոթքով: Մենք կարող ենք աղոթել բարձրաձայն կամ լուռ: Կարող ենք աղոթել նստած, կանգնած կամ քայլելով: Կարող ենք խոսել Աստծո հետ և լսել Նրան՝ շարժվելիս կամ անշարժ վիճակում: Կարող ենք աղոթել գնումներ կատարելիս, ինչ-որ մեկին սպասելիս, գործարար հանդիպմանը մասնակցելիս, տնային գործեր անելիս, մեքենա վարելիս կամ լոգանք ընդունելիս: Մենք կարող ենք աղոթել այսպիսի խոսքերով. «Շնորհակալությո՛ւն, Տե՛ր, այն ամենի համար, ինչ անում ես», կամ՝ «Աստվա՛ծ, ես Քո օգնության կարիքն ունեմ», կամ՝ «Օ՜, Հիսո՛ւս, օգնի՛ր այն կնոջը, որ տխուր կանգնած է»: Իրականում, Աստծո կամքն է, որ աղոթքին մոտենանք այսկերպ: Սատանան ուզում է, որ մենք հետաձգենք աղոթքը՝ հույս ունենալով, որ կմոռանանք դրա մասին: Քաջալերում եմ քեզ աղոթել հենց այն պահին, երբ սրտումդ ինչ-որ բան ես զգում: Սա կօգնի քեզ մոտ լինել Աստծուն ամբողջ օրը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սովորությո՛ւն դարձրու մշտապես հաղորդակցվել Աստծո հետ:

Զարգացող փոխհարաբերություն

«Բայց արդարների ճանապարհը ծագող լույսի պես է, որ հետզհետե լուսավորվում է, մինչև որ կատարյալ օր է դառնում» (ԱՌԱԿԱՅ 4.18):

Երբ խոսքը վերաբերում է Աստծո ձայնը լսելու կարողությանը, ամենահիրաշալին այն է, որ այդ կարողությունն աստիճանաբար զարգանում է: Աստծո ձայնը լսելը հմտություն չէ, որին մեկընդմիշտ տիրապետում ենք, այլ մշտապես զարգացող փոխհարաբերություն, որը վայելում ենք: Փոխհարաբերության մեջ խորամուխ լինելուն զուգահեռ սովորում ենք հաղորդակցվել Աստծո հետ ավելի հաճախ, ավելի անմիջական և ավելի արդյունավետ. սովորում ենք ավելի ուշադիր հետևել Սուրբ Հոգուն, աղոթել ավելի մեծ վստահությամբ և ավելի հստակ լսել Նրա ձայնը:

Երբևէ երջանիկ եղե՞լ ես Աստծո հետ քո փոխհարաբերություններում՝ զգալով, որ ամեն բան հրաշալի է ընթանում, ու հանկարծ, առանց ակնհայտ պատճառի, դարձել ես մտազբաղ, լցվել անհանգստության, ձանձրույթի կամ անբավարարության զգացումով: Երբևէ ունեցե՞լ ես այնպիսի տանջող զգացողություն, որ կարծես ինչ-որ բան ճիշտ չէ Աստծո հետ քո փոխհարաբերությունում, կամ՝ որ պետք է ինչ-որ բան այլ կերպ անես: Մեծ մասամբ, երբ այսպիսի զգացողություն ես ունենում, նշանակում է, Սուրբ Հոգին փորձում է քեզ ինչ-որ բան ասել:

Քո ներսի մարդը (քո հոգին, այն մասը, որ հաղորդակցվում է Աստծո հետ) գիտի, երբ որևէ բան այն չէ քո աղոթքի կյանքում, որովհետև Սուրբ Հոգին ապրում է քո հոգու մեջ և քեզ կհայտնի, թե ինչ պիտի փոխվի Աստծո հետ քո փոխհարաբերություններում: Պարզապես պետք է լինես բավականաչափ համարձակ՝ Հոգուն հետևելու համար: Աստված գիտի, որ մենք պատրաստ ենք ավելին և հորդորում է ավելի մտերիմ հաղորդակցում ունենալ Իր հետ և ավելի ուշադիր լսել Իր ձայնը: Աստված միշտ շարժվում է, և Նա ուզում է, որ մենք շարժվենք Իր հետ: Երբեք մի՛ վախեցիր հին մեթոդը կամ միջոցը թողնելուց և նորին ձգտելուց:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հիշի՛ր, Աստծո ձայնը լսելը հմտություն չէ, այլ՝ փոխհարաբերություն:

Մենք սպասում ենք, իսկ Աստված՝ խոսում

«Եվ հավիտենից ի վեր լսված չէ և ականջին հասած չէ, աչք էլ չի տեսել, որ Քեզնից բացի մեկ ուրիշ աստված այսպիսի բաներ աներ Իրեն հուսացողներին» (ԵՍԱՅԻ 64.4):

Սուրբ Հոգին աղոթքում կառաջնորդի մեզ զարմանալի սխրանքների մեջ, եթե պարզապես հարցնենք Նրան, թե ինչ աղոթենք, սպասենք Նրա պատասխանին, այնուհետև հնազանդվենք:

Մենք իմաստուն չենք, եթե ասում ենք, որ ժամանակ չունենք սպասելու Աստծուն, և թույլ չենք տալիս, որ Նա խոսի մեզ հետ և առաջնորդի աղոթքում: Մենք ռեստորանում քառասունհինգ րոպե կսպասենք, մինչև մեզ սպասարկեն, բայց Աստծուն սպասելու ժամանակ չունենք: Երբ մեր սրտերն ուղղում ենք Աստծուն և սպասում, որ ուղղորդի, մենք պատվում ենք Նրան: Սպասելու մեր պատրաստակամությունը ցույց է տալիս, որ մենք ցանկանում ենք Նրա կամքը և կառչած ենք Նրա առաջնորդությունից:

Մենք բավականաչափ ժամանակ ենք խնայում, երբ մեր սրտերն ուղղում ենք Աստծուն և սպասում Նրան: Ինչպես գրված է այսօրվա խոսքում, Աստված գործում է նրանց օգտին, ովքեր ապավինում են Իրեն: Աղոթքներդ սկսի՛ր պարզապես ասելով. «Ես սիրում եմ Քեզ, Տե՛ր, և սպասում, որ ուղղություն տաս այսօրվա իմ աղոթքներում»: Ապա աղոթի՛ր այն, ինչ կա քո սրտում, այլ ոչ թե այն, ինչ միտքդ կամ կամքդ է թելադրում:

Վերջերս աղոթում էի մի մարդու համար, որ աներ այն, ինչ, գիտեի, որ պետք է աներ, բայց Աստված ցույց տվեց, որ պետք էր աղոթել նրա կարգապահության համար, որովհետև կարգապահության բացակայությունը ազդեցություն էր թողնում նրա կյանքի շատ բնագավառների վրա: Ես կարող էի աղոթել մեկ բնագավառի համար, որն ակնհայտ էր, բայց Աստված ավելի խորն էր տեսնում, քան ես:

Մեկ ուրիշ անգամ, երբ աղոթում էի մի անձնավորության համար, ով վարքագծի առումով խնդիր ուներ, Աստված ցույց տվեց, որ նրա խնդրի արմատը ինքնամերժումն էր, և ես պետք է աղոթեի, որ այդ մարդն իմանար, թե որքան է Աստված սիրում իրեն: Բանն այն է, որ մենք հաճախ աղոթում ենք մեր տեսածի համեմատ, բայց Աստված կառաջնորդի մեզ տեսնելու հեռուն, եթե ապավինենք Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծուն սպասելու ժամանակը երբեք վատնված ժամանակ չէ:

Աղոթել Աստծո աղոթքները

«Այլ, ինչպես որ բարձր է երկինքը երկրից, նույնպես էլ բարձր են Իմ ճանապարհները ձեր ճանապարհներից, և Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից» (ԵՍԱՅԻ 55.9):

Կարծում եմ, պատճառներից մեկը, որ աղոթքում երբեմն անբավարարված ենք զգում կամ ունենում ենք այնպիսի զգացողություն, որ չենք ավարտել աղոթքը, այն է, որ մենք չափազանց շատ ժամանակ ենք անցկացնում՝ պարզապես կենտրոնանալով *մեր* աղոթքների վրա: Բայց ասեմ, կա ավելի լավ, ավելի վեհ, ավելի արդյունավետ ճանապարհ. աղոթել *Աստծո* աղոթքները: Անկեղծ ասած, եթե ես աղոթում եմ իմ հայեցողությամբ, ապա կարող եմ աղոթել տասնհինգ րոպե և անբավարարված զգալ, բայց եթե առաջնորդվում եմ Սուրբ Հոգով և աղոթում Աստծո ուզած կերպով, կարող եմ աղոթել երկու նախադասություն և լիովին բավարարված զգալ:

Ես պարզել եմ, որ Հոգով առաջնորդված աղոթքները սովորաբար ավելի պարզ են և կարճ, քան իմ հայեցողությամբ արված աղոթքները: Դրանք ուղիղ են, շիտակ և հստակ: Ես զգում եմ, որ առաջադրանքն ավարտված է, երբ աղոթում եմ Աստծո, ոչ թե իմ ուզած կերպով: Երբ աղոթում ենք մեր հայեցողությամբ, հաճախ կենտրոնանում ենք մարմնավոր բաների և արտաքին հանգամանքների վրա, բայց եթե առաջնորդվենք Աստծուց, ապա կաղոթենք հավիտենական բաների համար, ինչպիսիք են՝ մեր մտքերի և շարժառիթների մաքրությունը, Աստծո հետ առավել խորը փոխհարաբերությունը: Խնդրի՛ր, որ Աստված սովորեցնի քեզ աղոթել ոչ թե քո, այլ Իր աղոթքները, և դու առավել մեծ բավականություն կստանաս աղոթքից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. աղոթի՛ր ոչ թե քո, այլ Աստծո՛ աղոթքները:

Աստծո սրտի մտածմունքները

«Բայց Տիրոջ խորհուրդը հաստատ է հավիտյան. Նրա սրտի մտածմունքները՝ ազգից մինչև ազգ» (ՍԱՂՄՈՍ 33.11):

Ես գիտեմ, որ դու ուզում ես լսել Աստծուց ամեն օր, և անկեղծորեն հավատում եմ, որ դա հնարավոր է, եթե ձևավորես լսելու սովորություն: Նրա խորհուրդը հասանելի է եղել բոլոր սերունդներին, բայց քչերն են ժամանակ հատկացրել լսելու Նրան: Սպասել Աստծուն՝ չի նշանակում ժամերով նստել ու փորձել լսել Նրանից: Այն նշանակում է ընդունել, որ առանց Նրա չենք կարող որևէ ճիշտ բան անել: Մենք չենք ապավինում մարմնի ուժին և չենք անում այն, ինչ ցանկանում ենք, այլ խնդրում ենք Նրանից Իր առաջնորդությունը:

Ես հավատում եմ, որ երբ Աստծուն խնդրում եմ առաջնորդել ինձ, Նա անում է դա: Օրվա ընթացքում ես ֆիզիկապես չեմ լսում Աստծո ձայնը, որն ինձ թելադրում է, թե ինչ անեմ, բայց սրտումս ունեմ զգացողություն, թե որ ուղղությամբ պետք է գնամ: Օրինակ, այս առավոտ ես արթնացա՝ արդեն ունենալով օրվա ծրագիրը: Ես մտադիր էի ամբողջ օրը մնալ տանը, թեև մեր որդին իր ընտանիքի հետ հրավիրել էր մեզ ճաշի: Երբ աղոթում էի, զգացի, որ որդուս հետ անցկացրած ժամանակն արժեքավոր կլիներ ինձ համար, և պետք է ընդունեի նրա հրավերը: Աստված փոխեց իմ սիրտը, և ես գիտեի, որ իմ օրն ավելի հրաշալի կլիներ, եթե հետևեի Նրա առաջնորդությանը, այլ ոչ թե իմ ծրագրին:

Վստահի՛ր Աստծուն, որ Նա այսօր կառաջնորդի քեզ, և մի՛ եղիր համառ քո ծրագրերի հարցում: Միգուցե Աստված քեզ համար անակնկալ ունի կամ մի հետաքրքիր բան է պատրաստել, որը չէիր ցանկանա բաց թողնել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե Աստված փոխում է քո սիրտը, հոժարակա՛մ եղիր փոխելու քո ծրագրերը:

Մի՛ վախեցիր

«Որովհետև Ես՝ Եհովան, քո Աստվածը, զորացնում եմ քո աջը, որ ասում եմ քեզ. «Մի՛ վախեցիր, Ես կօգնեմ քեզ»» (ԵՍԱՅԻ 41.13):

Երբեմն մենք հանդիպում ենք հակառակության, երբ ձգտում ենք հետևել Սուրբ Հոգուն, ու շատ անգամներ այդ դիմադրությունը հանդես է գալիս վախի տեսքով, այն էլ ոչ թե ուժգին վախերի, ինչպես օրինակ՝ բնական աղետի, սարսափելի հիվանդության կամ որևէ դժբախտության վախի, այլ՝ անհանգստության և տագնապի տանջող զգացումի, որ ունենում ենք սովորական բաների հանդեպ: Սատանան նույնիսկ փորձում է ստիպել մեզ վախենալ համարձակ աղոթելուց: Նա ուզում է, որ Աստծուն մոտենանք վախով, ոչ թե հավատքով:

Ոմանք ամեն օր ապրում են վախի մշտական զգացումով: Նրանցից կարելի է լսել այս մեկնաբանությունները. «Վախենում եմ՝ այսպիսի երթևեկության պայմաններում չկարողանամ ժամանակին հասնել աշխատանքի», կամ՝ «Վախենում եմ՝ այրեմ տապական», կամ՝ «Վախենում եմ՝ շաբաթ օրը բեյսբոլի խաղի ժամանակ անձրև գա»: Այս ամենօրյա վախերը, որքան էլ չնչին թվան, միևնույն է, վախեր են, որոնք խոչընդոտում են Աստծուց լսելու սովորությունը՝ ստիպելով մարդկանց կենտրոնանալ իրենց անհանգստությունների վրա: Թույլ մի՛ տուր, որ թշնամին շեղի քեզ փոքրիկ բաներով և վարակի կյանքդ այս աննշան, մշտական վախերով: Փոխարենը՝ մենք պետք է աղոթենք և վստահենք Աստծուն:

Իմ կարգախոսն է. «Աղոթի՛ր ամեն ինչի համար և ոչնչից մի՛ վախեցիր»: Երբ մենք ձևավորում ենք Աստծո հետ խոսելու և Աստծուց լսելու ապրելակերպ, հարկավոր է նախահարձակ լինել և ընդդիմանալ փոքրիկ վախերին, սովորություններին ու մտածողության այն կաղապարներին, որոնք չեն նպաստում կամ աջակցում աղոթքին: Սուրբ Հոգին ցանկանում է օգնել մեզ այդ հարցում, ուստի պետք է խնդրենք Նրան ազատել մեզ բացասական սովորություններից և տալ դրական վերաբերմունք, որի շնորհիվ մշտապես հավատքով կապի մեջ ենք մնում Աստծո հետ: Երբ շարունակենք թույլ տալ Սուրբ Հոգուն այսպես առաջնորդել մեզ, մեր աղոթքները և Աստծո ձայնը լսելը կդառնան նույնքան հեշտ և բնական, որքան շնչառությունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. աղոթի՛ր ամեն ինչի համար. ոչնչից մի՛ վախեցիր:

Աստված պատասխանում է արդարի աղոթքներին

«…արդարի անկեղծ (սրտաբուխ, շարունակական) աղոթքը հսկայական զորություն [գործուն ուժ] է արձակում» (ՀԱԿՈԲՈՍ 5.16):

Երբ մարդիկ պայքարի մեջ են իրենց աղոթքի կյանքում, նրանք հաճախ կարծում են, որ պատճառն այն է, որ իրենք անսուրբ և անարդար են, ուստի փորձում են իրենց ավելի լավ պահել՝ հուսալով, որ աղոթքները կպատասխանվեն:

Ճշմարտությունն այն է, որ եթե վերստին ծնված ենք, մենք արդար ենք: Գուցե ամեն բան ճիշտ չենք *անում*, բայց մենք 100 տոկոսով արդար *ենք* Քրիստոսի միջոցով: Բ Կորնթացիների 5.21-ում գրված է. «Որովհետև Աստված Նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում»: Կա տարբերություն արդարության և «ճիշտ» վարքագծի միջև: Արդարությունը նկարագրում է մեր դիրքը կամ մեր կարգավիճակն Աստծո առջև՝ *Հիսուսի արյան շնորհիվ:* Մենք չենք կարող ինքներս մեզ արդարացնել. միայն Հիսուսի արյունն է մեզ արդարացնում այնպես, կարծես երբեք չենք մեղանչել: Աստված նայում է մեզ՝ որպես արդարների, չնայած, որ մենք դեռևս շարունակում ենք սխալներ գործել: Քանի որ Նա մեզ այդպես է նայում, մենք ունենք Աստծուց տրված իրավունք աղոթելու և ակնկալելու, որ Աստված կլսի և կպատասխանի: Մշտապես ձգտի՛ր հնարավորինս ճիշտ պահել քեզ և արա՛ դա Աստծո սիրուց մղված, բայց հիշի՛ր՝ Նա լսում և պատասխանում է քո աղոթքներին ոչ թե քո, այլ՝ Իր բարության շնորհիվ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու արդարացել ես Աստծո շնորհքով:

Աղոթքի զորությունը կախված չէ նրա տևողությունից

«Եվ աղոթք անելիս շատախոս մի՛ եղեք, ինչպես հեթանոսները… Արդ, նրանց մի՛ նմանվեք, որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ պետք են ձեզ՝ Նրանից խնդրելուց առաջ» (ՄԱՏԹԵՈՍ 6.7,8):

Ամենամեծ ստերից մեկը, որ սատանան ասում է մարդկանց աղոթքի վերաբերյալ, այն է, որ աղոթքը պետք է երկար տևի: Նա կստիպի քեզ մտածել, որ պետք է ժամերով աղոթես, մինչև աղոթքդ լիարժեք համարվի, սակայն Աստծո Խոսքից և անձնական փորձառությունից գիտեմ, որ հարկ չկա, որ աղոթքը երկար տևի, որպեսզի այն զորավոր լինի: Աղոթքի զորավոր լինելը կախված չէ նաև նրա կարճ լինելուց: Մեր աղոթքների տևողությունը որևէ նշանակություն չունի Աստծո համար: Կարևորն այն է, որ մեր աղոթքները լինեն Հոգուց առաջնորդված, անկեղծ և հավատքով լեցուն:

Կարծում եմ, որ մենք կարող ենք այնքան խճճվել մեր աղոթքի *բառերի* մեջ, որ կորցնենք աղոթքի *զորությունը:* Ես կրկին ուզում եմ շեշտել, որ ոչ մի սխալ բան չկա երկար աղոթելու մեջ: Ինչպես ավելի վաղ ասացի, ես հավատում եմ, որ մենք պետք է ժամանակ հատկացնենք Աստծո հետ երկարատև հաղորդակցմանը և աղոթքին, և Աստծո հետ ժամանակ անցկացնելու մեր պատրաստակամությունը կամ դրա բացակայությունը որոշում է Նրա հետ մեր մտերմության աստիճանը: Սակայն, չեմ կարծում, որ առանց Սուրբ Հոգու առաջնորդության, մենք պետք է ջանանք որոշակի ժամեր տրամադրել Աստծո հետ խոսելուն և Նրան լսելուն՝ պարտականության զգացումից դրդված կամ որպես մարմնի աշխատանք: Եթե մեր կյանքի խնդիրներն իսկապես պահանջում են ավելի երկար աղոթել և տևական ժամանակ հատկացնել Աստծո ձայնը լսելուն, ուրեմն մենք պետք է ներդնենք այդ անհրաժեշտ ժամանակը, բայց հարկ չկա, որ երկարատև աղոթքներ անենք պարզապես ժամանակն արձանագրելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ւյլ տուր, որ աղոթքդ լինի Հոգով առաջնորդված, սրտաբուխ և ճշմարիտ հավատքով լեցուն:

Եղի՛ր խոնարհ, երբ Աստված խոսում է

«... Եվ ես սրան եմ մտիկ տալիս՝ խոնարհին և կոտրած հոգի ունեցողին և Իմ Խոսքից դողացողին» (ԵՍԱՅԻ 66.2):

Երբ լսում ենք Աստծուց, մենք ունենք ընտրություն արձագանքելու խոնարհությամբ և վստահությամբ կամ խստացնելու մեր սիրտը և անտեսելու Նրան: Ցավոք սրտի, երբ ոմանք չեն ստանում իրենց ուզածը կամ անցնում են փորձությունների և դժվարությունների միջով, խստացնում են իրենց սիրտը:

Սա այն է, ինչ պատահեց իսրայելցիներին, երբ անցնում էին անապատի միջով: Աստված հրաշալի բաներ էր ծրագրել նրանց համար, բայց սկզբում Նա փորձեց նրանց, որպեսզի տեսներ, թե արդյոք նրանք հավատալու էին Իրեն: Աստված միտումնավոր առաջնորդեց իսրայելցիներին երկար, դժվար ճանապարհով, որպեսզի տեսներ՝ կպահեի՞ն Իր պատվիրանները, թե՞ ոչ: Իր Խոսքում Աստված ասում է՝ չխստացնենք մեր սրտերը, ինչպես նրանք խստացրին (տե՛ս Եբրայեցիների 3.7,8):

Խնդիրները նրանց դառնացրին՝ ավելի լավը դարձնելու փոխարեն: Իսրայելցիները խստացրին իրենց սրտերը և չցանկացան սովորել Աստծո ճանապարհները: Նրանք ունեին սխալ վերաբերմունք և սխալ մոտեցումներ ու չկարողացան առաջ գնալ, որովհետև հրաժարվեցին Աստծուն վստահելուց:

Թույլ մի՛ տուր, որ սիրտդ խստանա դժվարությունների ժամանակ: Խստասիրտ մարդիկ ապստամբ են և հրաժարվում են շտկվել: Նրանք դժվարանում են լսել Աստծուց և դժվարություններ են ունենում մարդկային փոխհարաբերություններում: Նրանք պատրաստակամ չեն հաշվի առնելու ուրիշների տեսակետները, չեն հասկանում ուրիշների կարիքները և սովորաբար անտարբեր են դրանց հանդեպ: Նրանք եսակենտրոն են և անկարող շարժվելու սրտացավությամբ:

Եկե՛ք վճռականորեն փնտրենք Աստծուն, որպեսզի Նա փափկեցնի մեր սրտերը և օգնի զգայուն լինել Իր հպմանը և լսել Իր ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ իրավիճակն այնպես չի ընթանում, ինչպես դու ես ցանկանում, վստահի՛ր Աստծուն և պահպանի՛ր լավ վերաբերմունք:

Աստված խոսում է, որպեսզի ուղղի մեզ

«... Տերը ուղղում և խրատում է նրանց, ում սիրում է...» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.6):

Բոլորս ժամանակ առ ժամանակ ուղղվելու կարիք ունենք: Ես հավատում եմ, որ Աստծո ցանկությունն է խոսել մեզ հետ և անձամբ ուղղել մեզ, նախքան Նա կգործածի մարդկանց կամ իրավիճակները՝ մեզ ուղղելու համար: Ուղղումը շատ դժվար է ընդունել, հատկապես երբ այն արվում է ուրիշների կողմից, ուստի, Աստված նախընտրում է սկզբում օգնել մեզ լուծելու հարցերը առանձին: Բայց եթե մենք չգիտենք, թե ինչպես թույլ տանք Նրան առանձին ուղղել մեզ կամ չենք ընդունում Նրա խրատը, ապա Նա կարող է ուղղել մեզ հրապարակայնորեն:

Մի անգամ, երբ մեկնել էինք օտար երկիր՝ ծառայության, ռեստորաններից մեկում նստած փորձում էի մատուցողին հասկացնել, թե ինչ էի ցանկանում, բայց նա անգլերեն շատ չէր խոսում, իսկ ես նրա լեզուն ընդհանրապես չէի հասկանում: Շուտով զայրույթն ակնհայտ դարձավ իմ վերաբերմունքի և ձայնային հնչողության մեջ. ես ինձ վատ էի պահում այն մարդկանց առջև, որոնք գիտեին, որ եկել էի իրենց երկիր՝ ծառայելու, և, անշուշտ, ես օրինակ էի նրանց համար:

Ես գիտեի, որ ինձ վատ էի պահել, բայց Աստված ցանկացավ, որ ես *իսկապես* իմանայի դա, ուստի երբ Դեյվի հետ վերադարձանք մեր հյուրանոցային սենյակ, Դեյվը հիշատակեց այդ դեպքը և ասաց, որ ես լավ օրինակ չծառայեցի ուրիշների համար:

Թեև գիտեի, որ նա ճիշտ էր, և հասկանում էի, որ Աստված գործածում էր նրան, որպեսզի լիովին գիտակցեի իմ վարքագծի կարևորությունը, այնուամենայնիվ, տրամադրված էի մատնացույց անելու Դեյվին՝ ասելով, որ ինքն էլ նախկինում նույնկերպ է վարվել: Եթե անեի դա, նշանակում է՝ ես անկեղծորեն չէի ընդունել Աստծո ուղղումը, և այդ ժամանակ Աստված ստիպված կլիներ ուղղել ինձ այլ կերպ, որը, միգուցե, ավելի ամոթալի կամ ցավոտ կլիներ:

Սկսիր աղոթել և խնդրել Աստծուց, որ օգնի քեզ ընդունելու Իր ուղղումները, ինչպես նաև այն ուղղումները, որոնք Նա անում է ուրիշների միջոցով՝ իմանալով, որ այդ ամենը ի նպաստ քեզ է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ ընդդիմացիր Աստծո ուղղումներին:

Զորություն քո կյանքի համար

«Ասված մեկ անգամ խոսեց. ես երկու անգամ լսեցի, թե՝ զորությունն Աստծունն է» (ՍԱՂՄՈՍ 62.11):

Ես հավատում եմ, որ աղոթքը՝ պարզապես Աստծո հետ խոսելը և Նրան լսելը, ամենահզոր ուժն է, որ հասանելի է ամբողջ տիեզերքում: Սա համարձակ պնդում է՝ հաշվի առնելով այսօր բնության մեջ առկա մյուս ուժերը, բայց ես, անկասկած, համոզված եմ այս խոսքերի ճշմարտության մեջ: Երբ մտածում ենք միջուկային կամ ատոմային էներգիայի վերաբերյալ, մտածում ենք այնպիսի հզոր ուժերի մասին, որոնք վեր են մեր պատկերացումից: Երբ մտածում ենք ավտոմեքենայի կամ մոտոցիկլետի վերաբերյալ, հասկանում ենք, որ դրանք ունեն ուժ:

Սակայն նույնիսկ ամենահզոր երկրային ուժը ոչինչ է՝ համեմատած Աստծո զորության հետ: Այն ուժը, որ մեզ ծանոթ է ֆիզիկական աշխարհում, բնական է, բայց աղոթքի ուժը հոգևոր է: Աղոթքը մեր կյանքի մեջ արձակում է Ամենակարող Աստծո զորությունը, և աղոթքի ուժը միացնում է մեզ Աստծո զորության հետ, և այդ է պատճառը, որ աղոթքից ավելի հզոր ուժ գոյություն չունի:

Աղոթքի ուժը կարող է շարժել Աստծո ձեռքը: Աստված կարող է փոխել անհատի սիրտը, ազատել մարդուն կապանքներից և տանջանքներից, վերացնել հիասթափություններն ու ճնշումները, կոտրել կախվածության զորությունը, կամ բժշկել մարդու զգացմունքները: Աստծո զորությունը կարող է վերականգնել ամուսնությունը, մարդու մեջ դնել նպատակի և նշանակության զգացում, բերել խաղաղություն և ուրախություն, պարգևել իմաստություն և գործել հրաշքներ: Եվ Աստծո փառահեղ, հսկայական զորությունը՝ տիեզերքի ամենահզոր ուժը, արձակվում է մեր կյանքի մեջ պարզ, հավատքով լի աղոթքի միջոցով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. օգտագործի՛ր աղոթքը Աստծո զորությունը քո կյանքում արձակելու համար:

Աստված իմաստություն է խոսում

«Բայց եթե մեկը ձեզնից իմաստության պակասություն ունի, թո՛ղ խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում, և կտրվի նրան» (ՀԱԿՈԲՈՍ 1.5):

Լսելով Աստծո ձայնը՝ լցվում ենք Աստծո իմաստությամբ, որն ի զորու է փոխելու ցանկացած իրավիճակ: Երբ Աստծուց իմաստություն ես ստանում որևէ բանի վերաբերյալ՝ որոշում կայացնելու, ֆինանսական հարցի, առողջական լուրջ խնդրի, մասնագիտական դժվարության, անձնական և փոխհարաբերության հետ կապված հարցերի կամ ընտրության, որը կարող է ազդել կյանքի հետագա ընթացքի վրա, դու ձեռք ես բերում խորաթափանցություն և տեսնում այն ուղղությունը, որի մասին երբեք չէիր մտածի: Աստծո իմաստությունը կարող է խնայել մեր գումարները, ժամանակը, եռանդը. այն կարող է նույնիսկ փրկել քո կյանքը: Այն կարող է բերել անպատմելի օրհնություններ: Աստծո իմաստությունը կարող է տալ քեզ բարեհաճություն այնտեղ, որտեղ մի ժամանակ արհամարհված ես եղել, այն կարող է վերացնել մարդկանց միջև բաժանումը և լիարժեք վերականգնում բերել այնտեղ, որտեղ ավերածություն է: Աստծո իմաստությունը կարող է դարձնել քեզ ավելի խելացի, քան իրականում կաս, և առաջնորդել հրաշալի բաների մեջ:

Այսօրվա խոսքում ասվում է, որ Աստված մեզ իմաստություն է տալիս. ի՞նչ է նշանակում լինել իմաստուն: Պարզ ասած՝ իմաստուն մարդիկ կայացնում են որոշումներ ներկայում, որոնցից գոհ կմնան ապագայում: Իսկ ոչ իմաստուն մարդիկ անում են այն, ինչ այդ պահին լավ է թվում, բայց հետագայում գրեթե միշտ դժգոհ են լինում իրենց ընտրությունից: Ոչ իմաստուն մարդիկ գործում են հույզերից դրդված՝ փոխանակ խնդրեն Աստծո իմաստությունը, և սովորաբար զղջում են հախուռն, հուզական որոշումների համար: Իմաստուն մարդիկ, ընդհակառակը, հետ են նայում և հիանում այն շնորհքով և առաջնորդությամբ, որ ստացել են Աստծուց, երբ փնտրել են Նրան: Նրանք գիտակցում են, որ անհավանականորեն օրհնվել են Աստծուց այն պտուղներով, որոնք քաղում են իմաստուն ընտրություններ կատարելու արդյունքում: Այսօր Աստծուն փնտրելիս խնդրի՛ր Նրա իմաստությունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ներկայում կայացրո՛ւ որոշումներ, որոնցից գոհ կմնաս ապագայում:

Աստված խոսում է պարգևի և ընդունակության միջոցով

«Մարդու սիրտը խորհում է իր ճանապարհը, բայց նրա քայլերը Տերն է հաստատում» (ԱՌԱԿԱՅ 16.9):

Հաճախ մտածում ենք. «Ինչ պիտի անեմ իմ կյանքում: Ո՞րն է իմ ապրելու նպատակը: Արդյո՞ք Աստված ծրագիր ունի ինձ համար»: Այս հարցերին Աստված պատասխանում է մի քանի ձևերով, այդ թվում՝ մեր պարգևների, հմտությունների և ընդունակությունների միջոցով:

Աստծուց տրված տաղանդը կամ այն, ինչ հաճախ անվանում ենք «պարգև», մի բան է, որը կարողանում ենք անել հեշտությամբ: Օրինակ, արվեստագետները գիտեն ինչպես միախառնել ձևերն ու գույները և հաճույք ստանալ նկարչությունից, քանդակագործությունից կամ շենքերը նախագծելուց: Շատ երգահաններ իրենց մտքում լսում են մեղեդիները, ապա գրի են առնում դրանք և ստեղծում գեղեցիկ երաժշտություն: Ոմանք ունեն կազմակերպելու կամ կառավարելու բնական ընդունակություններ, մինչդեռ մյուսներն օժտված են որպես խորհրդատուներ, որոնք օգնում ենք մարդկանց հասկանալու, թե ինչ է կատարվում իրենց կյանքում և փոխհարաբերություններում: Ինչպիսին էլ լինեն մեր տաղանդները, մենք մեծ հաճույք ենք ստանում, երբ զբաղվում ենք նրանով, ինչն ամենից լավ ենք անում:

Եթե դու վստահ չես, թե որն է կյանքիդ նպատակը, պարզապես արա՛ այն, ինչն ամենից լավ ես անում: Աստված կհաստատի քո ընտրությունները՝ օրհնելով քո ջանքերը: Մի՛ վատնիր կյանքդ՝ փորձելով անել այն, ինչի համար օժտված չես: Երբ զբաղվում ես նրանով, ինչի համար չունես բնական ունակություններ, դու դժբախտ ես, դժբախտ են նաև քեզ շրջապատողները: Բայց երբ ճիշտ տեղում լինես, գերազանց կաշխատես և օրհնություն կլինես քո աշխատավայրում:

Եթե մենք անենք այն, ինչն ամենից լավ ենք անում, կզգանք Աստծո օծությունը (ներկայությունը և զորությունը) մեր բոլոր ջանքերում: Մենք կիմանանք, որ գործում ենք մեր պարգևներով և այդպես անելով պատվում ենք Աստծուն ու ծառայում մարդկանց: Աստված խոսում է մեզ հետ օծության միջոցով՝ տալով խաղաղություն և ուրախություն, ու մենք հասկանում ենք, որ իրականացնում ենք մեր կոչումը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. արա՛ այն, ինչն ամենից լավ ես անում. դա Աստծո պարգևն է:

Դավանի՛ր և աղոթի՛ր

«Իրար խոստովանե՛ք ձեր սխալները (ձեր վրիպումները, ձեր սխալ քայլերը, ձեր հանցանքները, ձեր մեղքերը) և իրար համար աղո՛թք արեք, որ բժշկվեք և վերականգնվեք [հասնելով մտքի և սրտի հոգևոր ներդաշնակության]...» (ՀԱԿՈԲՈՍ 5.16):

Մեղքը բաժանում է մեզ Աստծուց: Այն ստիպում է, որ մեզ հեռու զգանք Աստծուց. այն կարող է դրդել, որ ցանկանանք թաքնվել Նրանից կամ չցանկանանք խոսել Նրա հետ, և այն կարող է ետ պահել մեզ Նրա ձայնը լսելուց: Երբ գիտենք, որ մեղանչել ենք, պետք է խնդրենք Աստծո ներումը, ապա ընդունենք այն, որովհետև Նա խոստանում է ներել մեզ, երբ ապաշխարենք: Այն, ինչ թաքցնում ենք, կարող է իշխանություն ունենալ մեզ վրա, այնպես որ, կան ժամանակներ, երբ շատ օգտակար է ուրիշներին խոստովանել մեր մեղքերը՝ համաձայն այսօրվա խոսքի:

Մեր սխալներն ուրիշներին խոստովանելու և աղոթքի խնդրանքով նրանց դիմելու համար, նախևառաջ, պետք է գտնենք մեկին, ում իսկապես վստահում ենք, ապա՝ պատրաստ լինենք մի կողմ դնել մեր հպարտությունը և խոնարհաբար հայտնել մեր ներսում ընթացող պայքարի մասին: Եթե դա դժվար է քեզ համար, խնդրի՛ր Աստծուց, որ օգնի քեզ աճել խոնարհության մեջ, որովհետև արդյունքներն ապշեցուցիչ կլինեն, երբ գտնես մի ընկերոջ, ում կարող ես վստահել և ասել. «Ես պայքարում եմ այս բնագավառում և ուզում եմ ազատ լինել: Ինձ համար շատ դժվար է, և ես կարիք ունեմ, որ աղոթես ինձ համար»:

Հիշում եմ, մի անգամ ես պայքարում էի նախանձի դեմ, որ զգում էի ընկերոջս հանդեպ: Ես աղոթել էի, բայց նախանձը շարունակում էր տանջել ինձ, ուստի խոստովանեցի դա Դեյվին և խնդրեցի, որ նա աղոթի ինձ համար: Երբ այդ խնդիրը հայտնի դարձրի, նախանձի զորությունը քանդվեց, և ես ազատ արձակվեցի: Առաջին հերթին գնա Աստծո՛ մոտ, բայց եթե ընկերոջ կամ հոգևոր առաջնորդի օգնության կարիք ունես, թույլ մի՛ տուր, որ հպարտությունը կանգնի քո ճանապարհին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թույլ մի՛ տուր, որ հպարտությունը խանգարի քեզ՝ երբ կարիք կա ուրիշներին խոստովանելու քո մեղքերը:

Աստծո ընկեր

«Ձեզ ծառաներ չեմ անվանում... Բայց ձեզ Իմ ընկերներ անվանեցի» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.15):

Աստված Աբրահամին Իր ընկեր անվանեց, ապա հայտնեց Սոդոմը և Գոմորը կործանելու ծրագիրը, որի մասին կարող ենք կարդալ Ծննդոց 18.17-ում: Ինչպես Նա Աբրահամի հետ կիսեց իր մտադրությունները, այնպես էլ քեզ հետ՝ որպես Իր ընկերոջ, կկիսի Իր սիրտը, Իր ցանկությունները, Իր նպատակները, Իր ծրագրերը: Նա կտա քեզ հասկացողություն և խորաթափանցություն՝ իմանալու, թե ինչ է կատարվում քո կյանքում, և կասի, թե ինչ քայլեր ձեռնարկես: Նա կառաջնորդի և կօգնի պատրաստվելու ապագային: Լինելով Աստծո ընկեր՝ դու ստիպված չես լինի հանկարծակիի գալ տարբեր հանգամանքներից: Դու կարող ես տեղեկացված և պատրաստ լինել, որովհետև դու Աստծո ընկերն ես և լսում ես Նրա ձայնը: Գուցե Նա չհայտնի այն ամենը, ինչ կցանկանայիր իմանալ, և այն ժամանակ, երբ կցանկանայիր իմանալ, սակայն Նա կառաջնորդի քեզ և կտա ուժ, երբ լինես համբերատար և վստահես Իրեն:

Միգուցե հարցնում ես. «Ինչպե՞ս եմ ես դառնում Աստծո ընկեր»: Համաձայն այսօրվա խոսքի՝ դու արդեն ընկեր ես: Հիսուսն Իր աշակերտներին ասաց. «Ես ձեզ Իմ ընկերներ անվանեցի»: Եթե դու Հիսուսի հետևորդն ես, ուրեմն Նրա աշակերտն ես և Նրա ընկերը: Ինչպես ցանկացած ընկերության մեջ, դու կարող ես լինել պարզապես ծանոթ կամ մտերիմ, անձնական ընկեր: Քո ընկերությունն Աստծո հետ աճում և զարգանում է այնպես, ինչպես աճում և զարգանում է քո ընկերությունն այլ մարդկանց հետ: Ցանկացած ընկերություն պահանջում է ժամանակ և ջանք, նույնը վերաբերում է Աստծո հետ քո փոխհարաբերություններին:

Քաջալերում եմ քեզ այսօր ժամանակ և ջանք ներդնել Աստծո հետ փոխհարաբերությունների մեջ՝ կարդալով Նրա Խոսքը և մտորելով Խոսքի շուրջ, խոսելով Նրա հետ և լսելով Նրան՝ որպես Իր ընկեր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քո ժամանակացույցում տեղ հատկացրու Աստծո հետ փոխհարաբերություններում ժամանակ և ջանք ներդնելուն:

Ճգնաժամի կառավարում

«…Այնուամենայնիվ, ես գիտեմ, որ բարիք կլինի Աստծուց վախեցողներին, որ մեծարում և երկրպագում են Նրան՝ գիտակցելով Նրա մշտական ներկայությունը» (ԺՈՂՈՎՈՂ 8.12):

Աստված մի քանի արժեքավոր դասեր է տվել ինձ ճգնաժամը կառավարելու վերաբերյալ: Հիսուսն ասաց. «Ինձ մո՛տ եկեք» (Մատթեոս 11.28): Նա չասաց վազել հեռախոսի մոտ և զանգել երեք ընկերոջ՝ արտակարգ իրավիճակի բախվելիս: Ես դեմ չեմ, երբ մարդկանց խնդրում ենք աղոթել մեզ համար, բայց եթե մենք վազենք մարդկանց մոտ, ապա բժշկություն չենք գտնի. նրանք միայն վիրակապ կդնեն մեր վերքին:

Կյանքում մենք բախվում ենք շատ մարտահրավերների և ճգնաժամերի: Երբեմն ճգնաժամերը մեծ են, երբեմն՝ փոքր: Որպեսզի ես չապրեի մշտական արտակարգ իրավիճակների մեջ, Տերը մղեց անդադար կամ ջանասիրաբար փնտրել Իրեն: Ես սովոր էի փնտրել Աստծուն ժամանակ առ ժամանակ, կամ՝ երբ մեծ անախորժությունների մեջ էին հայտնվում: Ի վերջո, հասկացա, որ եթե ուզում եմ երբևէ դուրս գալ մշտական ճգնաժամային իրավիճակից, ապա պետք է մշտապես փնտրեմ Աստծուն այնպես, ասես հուսահատորեն Նրա կարիքն ունեմ: Ես պետք է փնտրեմ Նրան դժվար ժամանակներում և օրհնված ժամանակներում:

Մենք հաճախ Աստծուն քիչ կարևորություն ենք տալիս, երբ մեր կյանքում ամեն բան լավ է ընթանում: Բայց ես ուսումնասիրել եմ, որ եթե Նրան փնտրում ենք միայն հուսահատության պահերին, ապա հաճախ Նա մեզ հուսահատ իրավիճակներում է պահում, որպեսզի շարունակենք հաղորդակցվել Իր հետ:

Աստված միշտ կփրկի և կօգնի մեզ, երբ գանք Նրա մոտ: Բայց եթե ուզում ենք մնալ մշտական խաղաղության և հաղթանակի մեջ, ապա պետք է ջանասիրաբար փնտրենք Նրան ամեն ժամանակ, ինչպես այսօրվա խոսքն է հորդորում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ձեռք բեր ճգնաժամը կառավարելու հմտություններ՝ մշտապես հաղորդակցվելով Աստծո հետ:

Դու իսկապե՞ս վստահում ես Աստծուն

«Ուրեմն, սիրելի՛ եղբայրներ, հաստա՛տ եղեք, անշա՛րժ կացեք, ամեն ժամանակ ավելի՛ առաջացեք Տիրոջ գործում...» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 15.58):

Հաստատ մնալու կարողությունը խոսում է Աստծուն վստահելու մասին: Մտածի՛ր այս մասին. եթե ասեմ. «Ես վստահում եմ Աստծուն», բայց անհանգիստ և մտահոգ լինեմ, նշանակում է՝ իրականում չեմ վստահում Նրան: Եթե ասեմ. «Ես վստահում եմ Աստծուն», բայց ընկնեմ հուսահատության և ընկճվածության մեջ, այդ դեպքում ես չեմ վստահում Նրան: Եթե ասում եմ, որ վստահում եմ Աստծուն, և անհանգստանում եմ կամ կորցնում ուրախությունս, նշանակում է՝ իրականում չեմ վստահում Նրան: Երբ մենք իսկապես վստահում ենք Աստծուն, կարողանում ենք մտնել Նրա հանգստի մեջ և թույլ տալ, որ մեր սրտերը հաստատվեն Նրա հանդեպ անսասան վստահության մեջ: Թշնամին հիմնովին չի հեռանա և ավելի շատ տհաճություն, քան լուրջ խնդիր կպատճառի մեզ:

Քանի դեռ երկրի վրա ենք, հնարավորինս սիրելով և ծառայելով Աստծուն, թշնամին գաղտագողի մոտենալու է մեզ: Աստված նախատեսել է, որ մեր հոգևոր աճը ներառի նաև հոգևոր մկանների զարգացում, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ սովորում ենք հակառակվել թշնամուն: Պողոս առաքյալը լավ էր հասկանում սա, այդ պատճառով նա չէր աղոթում, որ մարդիկ խնդիրներ չունենային. նա աղոթում էր, որ նրանք լինեին հաստատակամ, հաստատուն և անսասան՝ *իսկապես* վստահելով Տիրոջը: Աստված ուզում է, որ մտնես Իր խաղաղության մեջ, ու Նա կգործի հօգուտ քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. *իսկապես* վստահի՛ր Տիրոջը:

Աղոթի՛ր ամեն ժամանակ

«Ամեն աղոթքով և աղաչանքով աղո՛թք արեք ամեն ժամանակ (ամեն պարագայում, մշտապես) Հոգով...» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 6.18):

Այսօրվա խոսքում Պողոսը հորդորում է աղոթել ամեն պարագայում՝ հետևելով Սուրբ Հոգու ուղղորդմանը՝ տարբեր իրավիճակներում օգտագործելով աղոթքի տարբեր տեսակներ: Բայց ինչպե՞ս «աղոթք անենք ամեն ժամանակ»: Մենք դա անում ենք՝ առօրյայում պահպանելով գոհության վերաբերմունք և լիովին կառչելով Աստծուց, առօրյա գործերում մեր մտքերը կենտրոնացնելով Նրա վրա և ամեն իրավիճակում ականջ դնելով Նրա ձայնին: Հավատում եմ, որ Աստված իսկապես ուզում է, որ աղոթքը մեզ համար դառնա կենսակերպ, և ցանկանում է օգնել մեզ, որ այլևս աղոթքին չվերաբերվենք որպես միջոցառման, այլ՝ որպես ապրելակերպի, ներքին գործունեության, որը հենասյուն է այն ամենի համար, ինչ անում ենք: Նա կամենում է, որ մշտապես խոսենք Իր հետ և լսենք Իրեն. աղոթենք ամեն օր՝ մեր սրտերը միացած պահելով Նրա սրտի հետ և մեր ականջները ընկալունակ դարձնելով Նրա ձայնին:

Հաճախ, երբ լսում ենք աղոթքի կարիքի կամ մտածում ինչ-որ իրավիճակի մասին, ինքներս ասում ենք. *«Երբ աղոթեմ, կաղոթեմ նաև դրա համար»*: Այս միտքը թշնամու խորամանկ գործելակերպն է: Ինչո՞ւ չաղոթել հենց այդ պահին: Մենք նույն պահին չենք աղոթում, քանի որ աղոթքի մասին սխալ պատկերացում ունենք: Ավելի հեշտ կլիներ, եթե պարզապես հետևեինք մեր սրտին, բայց սատանան ուզում է բարդացնել աղոթքը: Նա ուզում է, որ հապաղենք՝ այն հույսով, որ լիովին կմոռանանք այդ մասին: Աղոթի՛ր՝ երբ ունես աղոթքի ցանկություն կամ կարիք. այսպես մենք կարող ենք մշտապես աղոթել և Աստծո հետ կապի մեջ մնալ ամբողջ օրվա ընթացքում և ամեն իրավիճակում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ հետաձգիր Աստծո հետ խոսելը:

Ոչ միայն հացով

«…ոչ միայն հացով կապրի մարդը, այլ՝ Եհովայի բերանից դուրս եկած ամեն բանով» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅ 8.3):

Այն տարիներին, երբ իմ ծառայությունը չէր աճում այնպես, ինչպես ես էի ցանկանում, հուսախաբվում էի և լցվում անբավարարության զգացումով: Ես ծոմ էի պահում, աղոթում և փորձում էի անել հնարավոր ամեն բան, որպեսզի ավելի շատ մարդ մասնակցեր իմ համաժողովներին:

Հիշում եմ, որ հաճախ էի դժգոհում և վրդովվում, երբ Աստված հավաքույթների մեջ չէր տալիս այն աճը, որ ուզում էի: Աստված հաճախ ստուգում էր ինձ՝ թույլ տալով, որ իմ հավաքույթներին մարդկանց քանակը և նրանց խանդավառությունն ավելի քիչ լինեին, քան ցանկանում էի: Երբ հեռանում էի այդ հավաքույթներից, հարցնում էի. «Ինչն եմ սխալ անում, Աստվա՛ծ: Ինչո՞ւ չես օրհնում ինձ: Ես ծոմ եմ պահում, աղոթում եմ, զոհաբերում եմ և հավատում, իսկ Դու չես շարժվում»: Ես այնպես հուսախաբվեցի, որ գրեթե պայթում էի: Ես հարցրի. «Աստվա՛ծ, ինչո՞ւ չես պատասխանում իմ աղոթքներին»:

Նա խոսեց ինձ հետ. «Ջո՛յս, Ես սովորեցնում եմ քեզ, որ մարդը միայն հացով չի ապրում»: Նա այս նույն խոսքերն ասել էր իսրայելցիներին, երբ նրանք անապատի միջով ճանապարհորդում էին դեպի Խոստմունքի երկիր՝ շատ ավելի դանդաղ, քան սպասում էին: Նա իսրայելցիներին ասաց, որ դա իրենց խոնարհեցնելու, փորձելու և ստուգելու համար էր, նաև՝ սովորեցնելու, որ մարդը միայն հացով չի ապրում, այլ՝ Աստծո Խոսքով:

Ինձ դուր չէր գալիս այն միտքը, որ Աստված խոնարհեցնում և ստուգում էր ինձ, բայց ես գիտակցում էի, որ «մարդը միայն հացով չի ապրում» ասելով՝ Նա ուզում էր, որ ամեն ինչից առավել ես փափագեի Իրեն: Ժամանակին իմ ծառայությունն աճեց, բայց միայն այն բանից հետո, երբ Աստված իմ կյանքում գրավեց առաջին տեղը: Երբ դու կարողանաս բավարարվել միմիայն Աստծով, Նա կտա քեզ մյուս բաները, որոնք կցանկանայիր ունենալ: Նա է մեր կյանքի ճշմարիտ հացը, որ ի զորու է սնելու մեր հոգին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հրաժարվի՛ր միայն հացով ապրելուց. ամեն ինչից առավել փափագի՛ր Աստծուն:

Հարկ չկա, որ քո աղոթքները կատարյալ լինեն

«...Նա միշտ կենդանի է, որ խնդրանքներ ներկայացնի Աստծուն և բարեխոսի ու միջամտի նրանց համար» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 7.25):

Ցանկանում եմ կիսել քեզ հետ մի ճշմարտություն, որն իսկապես քաջալերել է ինձ Աստծո հետ փոխհարաբերություններում: Ես, շատերի պես, անկախ նրանից, թե որքան էի աղոթում, միևնույն է, ունեի այն զգացողությունը, որ ինչ-որ բան այն չէ իմ աղոթքի կյանքում: Ի վերջո, Տիրոջը հարցրի. «Ինչո՞ւ եմ ես այսպես զգում: Ամեն օր աղոթում եմ: Ես բավականաչափ ժամանակ եմ անցկացնում աղոթքի մեջ: Ի՞նչն է պատճառը, որ երբ ավարտում եմ աղոթքը, անբավարարված եմ զգում, ու կարծես ընդհանրապես ոչ մի քայլ չեմ մոտեցել Քեզ»: Աստված պատասխանեց. «Որովհետև քեզ թվում է, որ դու կատարյալ աղոթքներ չես անում: Դու կասկածում ես ինքդ քեզ, և դա ստիպում է կասկածել քո աղոթքների զորությանը»:

Ես հասկացա, որ դա ճիշտ էր. ես չէի կարծում, որ այն էի, ինչ պիտի լինեի: Վախը մշտապես տանջում էր ինձ՝ ստիպելով, որ ինքս ինձ ասեի հետևյալ խոսքերը. «Ես չեմ աղոթում բավականաչափ հավատքով, կամ՝ ես չեմ աղոթում բավականաչափ երկար, կամ՝ ես չեմ խոսում Աստծո հետ ճիշտ բաների մասին»:

Աստված ազատեց ինձ վախից և կասկածից, երբ խոսեց ինձ հետ. «Գիտե՞ս ինչ, Ջո՛յս, դու ճիշտ ես: Դու կատարյալ աղոթքներ չես անում: Դու կատարյալ չես: Այդ է պատճառը, որ ունես Հիսուսին՝ որպես քո Բարեխոսի, և այդ է պատճառը, որ դու աղոթում ես Նրա անունով»:

Գուցե դու էլ չես կարծում, թե «ճիշտ» աղոթքներ ես անում, բայց քաջալերվի՛ր: Մինչև քո աղոթքները հասնում են Աստծուն, Նրա համար դրանք դառնում են կատարյալ, որովհետև դու աղոթում ես ոչ թե քո, այլ՝ Հիսուսի անունով: Երբ աղոթում ենք Հիսուսի անունով, մենք ներկայացնում ենք Աստծուն այն ամենը, ինչ Հիսուսը կա, այլ ոչ թե այն, թե ով ենք մենք, հետևաբար Աստված ընդունում է մեր աղոթքները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ Հիսուսը կատարյալ աղոթքներ անի քեզ համար:

Հուսախա՛բ արա թշնամուն

«Բոլորովին ուրախություն համարե՛ք, եղբայրնե՛ր, երբ որ կերպ-կերպ փորձությունների եք հանդիպում կամ տարբեր գայթակղությունների մեջ եք ընկնում: Համոզվա՛ծ եղեք և հասկացե՛ք, որ ձեր հավատքի փորձառությունը և սրտագումը տոկունություն, հաստատունություն և համբերություն են գործում» (ՀԱԿՈԲՈՍ 1.2,3):

Քրիստոնյաների ամենատարածված սխալներից է այն, որ երբ փորձությունները գալիս են, նրանք աղոթում են, որ դրանք դադարեն: Ես հավատում եմ, որ փոխարենը մենք պետք է աղոթենք զորության և տոկունության համար. մենք պետք է խնդրենք, որ Աստված մեզ հաստատուն դարձնի: Եթե թշնամին մեր դեմ ուղղի իր ամենամեծ զենքերը՝ անելով հնարավոր ամեն բան մեզ անհանգստություն պատճառելու, մեր աշխատանքը կործանելու, մեր ընտանիքը մասնատելու կամ մեր խաղաղությունը գողանալու համար, իսկ մենք մնանք հաստատուն և համբերատար, նա կհայտնվի մեծ հուսախաբության մեջ և, ի վերջո, կպարտվի, որովհետև մենք չենք համագործակցում նրա հետ:

Փիլիպեցիների 1.28-ում ասվում է. «Եվ [ոչ մի վայրկյան] ոչ մի բանով մի՛ զարհուրեք կամ ահաբեկվեք ձեր հակառակորդներից և թշնամիներից, որ դա [կայունությունը և անվախությունը] նրանց համար հստակ նշան (ապացույց և կնիք) է [վերահաս] կորստի, և ձեզ համար՝ [հաստատ վկայություն] ազատագրման և փրկության, և դա Աստծուց է» (AMP): Այս խոսքը քաջալերում է մեզ չվախենալ կամ չահաբեկվել, երբ սատանան դուրս գա մեր դեմ, այլ մնալ հաստատուն: Երբ այդպես վարվենք, ոչ միայն ցույց կտանք սատանային, որ նա չի կարող դիպչել մեզ, այլև կհայտնենք Տիրոջը, որ մենք հավատում ենք Իրեն: Այն փաստը, որ մեր գործողությունները հաստատում են մեր վստահությունն առ Աստված, նշան է Նրա համար՝ բաց թողնելու Իր զորությունը մեր իրավիճակների մեջ և ազատելու մեզ: Ես հավատում եմ, որ Աստված ուզում է, որ դու Իրենից լսես այս խոսքերը. «Հաստա՛տ կանգնիր և մի՛ վախեցիր»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ քո վստահությունն առ Աստված այնքան հաստատուն լինի, որ այն հուսախաբ անի թշնամուն:

Նոր սիրտ

«Եվ ես ձեզ նոր սիրտ պիտի տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր մեջ և վեր պիտի առնեմ ձեր մարմնից քարեղեն սիրտը ...Եվ Իմ Հոգին պիտի դնեմ ձեր մեջ և պիտի անեմ, որ Իմ օրենքների մեջ վարվեք և Իմ դատաստանները պահեք և կատարեք» (ԵԶԵԿԻԵԼ 36.26,27):

Այսօրվա խոսքերում տեսնում ենք մի խոստմունք, որն Աստված տվել է հազարավոր տարիներ առաջ, խոստմունք այն մասին, որ կգա մի օր, երբ Նա մարդկանց կտա նոր սիրտ և Իր Հոգին կդնի նրանց ներսում: Երբ Աստված խոսեց այս խոսքերը, մարդիկ ապրում էին Հին ուխտի ժամանակաշրջանում՝ Հիսուսի ծնունդից, մահից և հարությունից առաջ: Հին ուխտում Սուրբ Հոգին լինում էր մարդկանց հետ և իջնում էր նրանց վրա հատուկ նպատակներով, բայց չէր ապրում նրանց սրտերում:

Դու և ես ապրում ենք Նոր ուխտում, այն ժամանակաշրջանում, որի մասին Աստված խոսում էր Եզեկիել մարգարեի միջոցով, երբ խոստացավ ուղարկել Իր Հոգին՝ մեր ներսում բնակվելու համար: Ոչ ոք չէր կարող վերստին ծնվել և դառնալ բնակության վայր Աստծո Հոգու համար, մինչև Հիսուսը չմահանար և հարություն չառներ մեռելներից: Այժմ, քանի որ Նա եկել է, մենք կարող ենք ընդունել Նրան՝ որպես Տիրոջ և Փրկչի, և ընդունել Սուրբ Հոգուն մեր սրտերի մեջ: Երբ Նա ապրում է մեր մեջ, Նա կարող է խոսել մեզ հետ, հնարավորություն տալ լսելու Իր ձայնը և մեզ ի զորու դարձնել հնազանդվելու այն ամենին, ինչ ասում է մեզ:

Քաջալերում եմ քեզ խորհել, թե ինչ զարմանահրաշ օրհնություն է Աստծո բնակարան ընտրվելը: Դա նշանակում է, որ դու և Աստված շատ մոտ եք, և դու կարող ես վայելել հրաշալի փոխհարաբերություններ Նրա հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու շատ մոտ ես Աստծուն:

Գործուն հավատք

«Եվ առաքյալներն ասացին Տիրոջը. «Մեր հավատքն ավելացրո՛ւ»» (ՂՈՒԿԱՍ 17.5):

Շատերը, գուցե նաև դու, աղոթում են «մեծ հավատք» ունենալու համար, բայց հավատքը չի ավելանում միայն աղոթքի միջոցով: Այն աճում է աստիճանաբար, երբ հնազանդվում ես Աստծուն և անում այն, ինչ Նա խնդրում է քեզ անել: Հնարավոր է, որ Նա խնդրի մեզ անել բաներ, որոնք երբեք չենք արել կամ, գուցե, լիովին չենք հասկանում, բայց երբ հնազանդության քայլ ենք անում, վերապրում ենք Աստծո հավատարմությունը, և մեր հավատքն աճում է:

Երբեմն որոշակի իրավիճակների համար Աստված մարդկանց հավատքի պարգև է տալիս, բայց սովորաբար հավատքը մեծանում է փորձառության միջոցով: Մեր հավատքն աճում և զորանում է, երբ գործադրում ենք այն:

Այսօրվա խոսքում աշակերտները խնդրեցին Հիսուսին ավելացնել իրենց հավատքը: Նա պատասխանեց նրանց Ղուկասի 17.6-ում գրված խոսքերով՝ ասելով, որ նրանք պետք է գործեն իրենց հավատքի հիման վրա, որպեսզի այն ավելանա: Նույնը այսօր վերաբերում է մեզ: Հավատքը դրսևորելու միջոցներից մեկը ինչ-որ բան անելն է. հավատքը հաճախ գործողություն է պահանջում: Անշուշտ, կան ժամանակներ, երբ Աստված ուզում է, որ ապավինենք Իրեն և սպասենք, որ Ինքը գործի մեր անունից, բայց երբեմն մենք պետք է ապացուցենք մեր հավատքը՝ ինչ-որ բան անելով: Եթե ուզում ենք, որ մեր հավատքն աճի, պետք է պատրաստ լինենք սպասելու Աստծուն կամ գործելու համաձայն Նրա Խոսքի, բայց մեր հավատքը չի ավելանա, եթե ոչինչ չանենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գործի՛ր այնպես, որ ցույց տաս քո հավատքը:

Ժամանակները փոխվում են

«Եվ Նա է ժամանակները և ժամերը փոխողը...» (ԴԱՆԻԵԼ 2.21):

Տարիներ առաջ, որպես եկեղեցու աշխատակազմի անդամ, ես ունեի լավ աշխատանք: Իմ ծառայությունը ծաղկում էր, ես ունեի կայուն աշխատավարձ և մի շարք այլ հնարավորություններ՝ անելու այն, ինչ սիրում էի և զգում էի, որ կանչված եմ անելու: Այնուհետև եկավ ժամանակ, երբ Աստված խոսեց ինձ հետ այդ աշխատանքը թողնելու և իմ ծառայությունը դեպի «հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք» տարածելու մասին: Ես լսեցի Նրա խոսքերը. «Քո կյանքում այս ժամանակն ավարտված է. դու այս վայրում արել ես այն, ինչ պիտի անեիր»:

Իմ սրտում ես գիտեի, որ Աստված էր խոսել: Բայցևայնպես, վախի և խանդավառության զգացումները միախառնվել էին. ես պետք է սկսեի իմ ծառայությունը: Ես ուզում էի խիզախել և մեկ քայլ առաջ գնալ, բայց վախենում էի սխալվելուց և կորցնելուց այն, ինչ ունեի: Ուզում էի տեսնել, թե Աստված ինչ կաներ, բայց վախենում էի անհայտ տարածքում այդպիսի մեծ քայլ անելուց:

Երբեմն Աստված ավարտում է ինչ-որ բան, իսկ մենք շարունակում ենք կառչած մնալ դրանից: Իմ հոգին ուզում էր քայլ անել, բայց մարմինս ուզում էր մնալ: Ես մեծ ապահովություն էի զգում այն պաշտոնում, որ Աստված կոչ էր անում ինձ թողնել, և չէի ցանկանում հրաժարվել: Բայց, ի վերջո, հնազանդվեցի Նրան և այսօր վայելում եմ այն ծառայությունը, որ տարածված է ամբողջ աշխարհով: Հիշի՛ր, Աստված փոխում է ինչ-որ բաներ, և մենք պետք է հոժարակամ լինենք հետևելու Նրա առաջնորդությանը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ակա՛նջ դիր Աստծո ձայնին և հնազանդվի՛ր Նրա առաջնորդությանը, երբ կյանքում փոփոխություններ կատարելու կարիք ունենաս:

Աստծուց մե՛ծ բաներ սպասիր

«Բայց Նրան, որ կարող է [իրականացնել Իր նպատակը և] առատությամբ անել բոլոր բաներից ավելի, քան որ խնդրում ենք կամ մտածում [անսահմանորեն վեր՝ մեր ամենավեհ աղոթքներից, ցանկություններից, մտքերից, հույսերից կամ երազանքներից], այն զորության չափով, որ մեզանում ներգործում է» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.20):

Ոմանք այնքան են վախենում վատ լուրերից, որ երբեք չեն մտածում բարի լուրերի համար աղոթելու մասին: Դա աստվածահաճո վերաբերմունք չէ: Եթե մենք ուզում ենք լսել Աստծո ձայնը և տեսնել Նրա զորությունը մեր կյանքում, ուրեմն պետք է ունենանք այնպիսի վերաբերմունք, որը հաճելի է Նրան: Մենք պետք է ունենանք դրական, ոչ թե բացասական սպասումներ: Կյանքի հանդեպ մեր մոտեցումը պետք է լցված լինի հավատքով, հույսով և բարի սպասումներով, որովհետև Աստվածաշունչն ասում է, որ առանց հավատքի անկարելի է հաճո լինել Աստծուն (տե՛ս Եբրայեցիների 11.6), և հույսը երբեք չի ամաչեցնի մեզ (տե՛ս Հռոմեացիների 5.5): Աստծո մեջ բացասական ոչինչ չկա. այն ամենը, ինչ Նա անում է, ի նպաստ մեզ է, այնպես որ, սա հենց այն է, ինչ պետք է ակնկալենք, երբ աղոթում ենք: Մենք չպետք է աղոթենք, ապա *մտածենք*՝ արդյո՞ք Աստված ընդհանրապես որևէ բան կանի. մենք պետք է աղոթենք՝ *ակնկալելով*, որ Աստված կանի նույնիսկ ավելին, քան մենք խնդրել ենք:

Այսօրվա խոսքում ասվում է, որ Աստված կարող է «առատությամբ անել բոլոր բաներից ավելի», քան երբևէ կհամարձակվենք խնդրել կամ, նույնիսկ, *մտածել:* Նա կարող է մեր «ամենավեհ աղոթքներից, ցանկություններից, մտքերից, հույսերից կամ երազանքներից» *անսահմանորեն ավելին* տալ: Սա հրաշալի պնդում է, որը պետք է լցնի մեզ այն վստահությամբ, որն անհրաժեշտ է սպասումով աղոթելու համար: Ես անձամբ գերադասում եմ աղոթել մեծ բաների համար, ունենալ մեծ սպասումներ և ստանալ դրանց կեսը, քան առանց հավատքի աղոթել աննշան, փոքրիկ բաների համար և բոլորն էլ ստանալ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծուց մե՛ծ բաներ սպասիր:

Աստված կգտնի քեզ

«Ահա Տիրոջ աչքը նրանց վրա է, ովքեր վախենում են Իրենից [ակնածում և երկյուղածությամբ երկրպագում են Իրեն], ովքեր սպասում են Իրեն և ապավինում Իր ողորմությանն ու գթությանը» (ՍԱՂՄՈՍ 33.18):

Կար մի ժամանակաշրջան, երբ ջանասիրաբար փորձում էի լսել Աստծուց, բայց նաև վախենում էի սխալվելուց: Այդ ժամանակ նոր էի սովորում լսել Աստծո ձայնը: Հոգով առաջնորդվելը նոր բան էր ինձ համար, և ես վախենում էի, որովհետև չունեի Աստծուց լսելու բավականաչափ փորձառություն, որպեսզի հստակ իմանայի՝ իսկապե՞ս լսում էի Աստծուց: Ես չէի հասկանում, որ Աստված ներում է մեր սխալները, եթե մեր սրտերը ճիշտ են:

Նա խոսում էր ինձ հետ ու մղում հավատքի քայլ անելու և ինչ-որ բան ձեռնարկելու, բայց ես շարունակում էի. «Տե՛ր, իսկ եթե ես բաց թողնեմ Քեզ: Իսկ եթե իրականում չլսեմ Քեզ և սխալ բան անեմ: Ես վախենում եմ, որ բաց թողնեմ Քեզ, Աստվա՛ծ»:

Նա խոսեց ինձ հետ. «Ջո՛յս, մի՛ անհանգստացիր: Եթե Ինձ բաց թողնես, Ես քեզ կգտնեմ»: Այս խոսքերը դարձրին ինձ համարձակ՝ անելու այն, ինչ Աստված կանչում էր ինձ անելու, և սիրտս լցրին անսահման խաղաղությամբ: Դրանք քաջալերեցին ինձ՝ անելու բազում հավատքի քայլեր: Ես այսօր կիսում եմ դրանք քեզ հետ, որպեսզի քեզ նույնպես քաջալերեմ անելու հավատքի քայլեր՝ ի պատասխան այն ամենի, ինչ հենց հիմա Աստված ասում է քեզ:

Եթե ամեն ինչից առավել փափագում ես Աստծո կամքը, և եթե արել ես հնարավոր ամեն բան Աստծուց լսելու համար, ուրեմն պետք է համարձակ քայլ անես և հավատաս: Նույնիսկ եթե սխալվես, Աստված կուղղի այդ սխալը և ամեն բան բարիին գործակից կանի քեզ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. համարձակ քա՛յլ արա, եթե հավատում ես, որ լսել ես Աստծուց, և մի՛ վախեցիր, որ բաց կթողնես Նրան:

Հոգով և Խոսքի հիման վրա

«Տե՛ր, թող իմ աղաղակը մոտենա Քեզ. Քո Խոսքի պես իմաստուն արա ինձ» (ՍԱՂՄՈՍ 119.169):

Ինչպիսի աղոթք էլ անենք՝ նվիրաբերման կամ նվիրման, խնդրանքների կամ հարատևության, բարեխոսության կամ համաձայնության, փառաբանության, երկրպագության կամ գոհության, Աստծո Խոսքը պետք է իր կարևորագույն տեղն ունենա այդ աղոթքում: Մեր աղոթքներն արդյունավետ են, երբ Աստծուն հիշեցնում ենք Իր Խոսքը և աղոթում՝ հավատալով, որ Նա կարող է իրականացնել այն, ինչ ասել է: Ես նաև հավատում եմ, որ ամենից արդյունավետ աղոթքները «Հոգով» աղոթքներն են:

Մեր աղոթքներում մեզ անհրաժեշտ են թե՛ Խոսքը, թե՛ Հոգին, որպեսզի հավասարակշռված և ուժեղ լինենք մեր հոգևոր կյանքում: Եթե մարդիկ փնտրում են գերբնական փորձառություններ կամ չափազանց շատ են տարվում հոգևոր հարցերով, նրանք կարող են խաբվել և չափազանց հուզական կամ, նույնիսկ, ցնորված դառնալ: Իսկ եթե կենտրոնանում ենք Խոսքի վրա՝ զգայուն չլինելով Հոգուն, մենք կարող ենք դառնալ օրինապաշտ և զուսպ հավատացյալներ: Երբ միաժամանակ տեղ ենք տալիս թե՛ Հոգուն, և թե՛ Խոսքին, մենք կարող ենք ապրել հավասարակշռված կյանքով, որը հիմնված է ճշմարտության վրա և հեղեղված է ուրախությամբ ու զորությամբ: Մեզ անհրաժեշտ է Աստծո Խոսքի ամուր հիմքը և Հոգուց եկող խանդավառությունն ու ոգեշնչվածությունը: Երբ աղոթքի մեջ ապավինում ենք Աստծո Խոսքին և առաջնորդվում Սուրբ Հոգով, մեր աղոթքները համապատասխանում են Աստծո կամքին, ավելի արդյունավետ են լինում և մեծ պտուղ են բերում մեր կյանքում: Ինչ էլ անես, քաջալերում եմ քեզ, որ աղոթքներդ լցնես Խոսքով և թույլ տաս, որ Սուրբ Հոգին առաջնորդի: Դու կտեսնես հսկայական արդյունքներ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո Խոսքը Հոգու սուրն է: Այն քո զենքն է սատանայի դեմ. եռանդորեն գործածիր այն:

Հստակ և հակիրճ

«Մի՛ անհանգստացեք կամ ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն պարագայում և ամեն բանում աղոթքով և աղաչանքով (հստակ խնդրանքներով) և գոհությունով՝ ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն» (ՓԻԼԻՊԵՅԻՆԵՐԻ 4.6):

Հիշում եմ, Աստծո հետ իմ ճանապարհորդության ընթացքում եղավ մի ժամանակ, երբ Նա մարտահրավեր նետեց ինձ, որքան հնարավոր է, քիչ բառ օգտագործել՝ Իրենից որևէ բան խնդրելու համար: Աղոթելիս շատ խոսելու սովորություն ունեի: Ես խոսում ու խոսում էի, որովհետև ունեի այն սխալ կարծիքը, թե կարճ աղոթքները լավ աղոթքներ չեն: Անշուշտ, երկար աղոթքները լավ աղոթքներ էին, եթե դրանք անկեղծ էին և իսկապես անհրաժեշտ:

Եվ Աստված մարտահրավեր նետեց, որ խնդրանքներս հնարավորինս քիչ բառերով ներկայացնեմ Իրեն, Նա պարզապես խնդրում էր, որ հակիրճ և հստակ լինեի, ապա մի փոքր սպասեի Իրեն, նախքան կաղոթեի մյուս խնդրանքի համար: Երբ այդպես վարվեցի, անհավատալի զորություն ավելացավ իմ աղոթքի կյանքում: Մինչև օրս, երբ այդպես եմ աղոթում, Սուրբ Հոգու զորությունն ու ներկայությունը զգում եմ ավելի, քան այն ժամանակ, երբ աղոթքի մեջ շատախոս եմ լինում: Ես հասկացել եմ, որ ամենահզոր, ամենաարդյունավետ աղոթքները երբեմն կարող են լինել այնպիսի աղոթքները, ինչպիսիք են. «Շնորհակալությո՛ւն, Տե՛ր», «Օ՜, Աստվա՛ծ, ես Քո իմաստության կարիքն ունեմ», «Տո՛ւր ինձ ուժ առաջ գնալու, Տե՛ր», կամ՝ «Ես սիրում եմ Քեզ, Հիսո՛ւս», թերևս ամենահզորը՝ «Օգնի՛ր»: Հասկանո՞ւմ ես: Ընդամենը մի քանի բառը կարող է միացնել մեզ Երկնքի հետ, երբ կանչենք Տիրոջ անունը և խնդրենք, որ Նա գործի մեր օգտին: Աղոթքների արդյունավետությունը կախված չէ երկարատև լինելուց, այլ այն անկեղծությունից և հավատքից, որ ներդնում ենք դրանց մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. որակը միշտ հաղթում է քանակին, նույնիսկ՝ աղոթքում:

Միշտ հասանելի

«…ուղիղները կբնակվեն Քո երեսի առջև» (ՍԱՂՄՈՍ 140.13):

Այն փաստը, որ Սուրբ Հոգին ապրում է մեր ներսում, ապացուցում է, որ Նա մշտապես հասանելի է և պատրաստակամ՝ խոսելու մեզ հետ և օգնելու մեզ, երբ Նրա կարիքն ունենանք: Երբ շարունակենք հոգևորապես աճել, կբախվենք գայթակղությունների, բայց Աստված տվել է մեզ Սուրբ Հոգուն, որպեսզի կարողանանք հակառակվել դրանց և սխալ որոշումների փոխարեն ճիշտ որոշումներ կայացնենք:

Այնուամենայնիվ, ոչ մի մարդ կատարյալ չէ, և մենք կարող ենք սխալներ թույլ տալ: Բայց Աստծո ներումը միշտ հասանելի է մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով: Ստանալով այս ներումը՝ մենք զորանում ենք և կարողանում առաջ գնալ Աստծո հետ: Ներումը լցնում է մեր սիրտը խաղաղությամբ, ազատ է արձակում մեզ և օգնում ավելի հստակ լսել Աստծո ձայնը:

Մենք տկարանում ենք, երբ պարտված և դատապարտված ենք զգում յուրաքանչյուր սխալի համար: Փոխանակ մեր ջանքերը վատնենք ինքներս մեր մասին վատը մտածելու վրա, ավելի լավ է ջանք թափենք զգայուն լինել Աստծո ձայնին, երբ առաջնորդի մեզ Իր հետ առավել ուժեղ և խորը փոխհարաբերությունների մեջ: Նրա ներումը և ներկայությունը մշտապես հասանելի են մեզ Սուրբ Հոգու միջոցով: Երբ այսօր փնտրես Աստծուն, քաջալերում եմ քեզ ընդունել Նրա սերը և ողորմությունը: Նրա ձեռքերը բաց են, և Նա սպասում է, թե երբ է ժամանակ անցկացնելու քեզ հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հիշի՛ր, Սուրբ Հոգին միշտ հասանելի է քեզ:

Փոխվելու ժամանակն է

«Բայց մենք՝ ամենքս…Նրա պատկերի նման կերպարանափոխվում ենք անընդհատ ավելացող շքեղության մեջ, փառքի մի աստիճանից դեպի մյուսը, [որովհետև սա գալիս է] Տիրոջից [Ով Հոգի է]» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.18):

Այսօրվա խոսքը սովորեցնում է մեզ, որ մեր կյանքում պետք է գործեն թե՛ Աստծո Խոսքը, և թե՛ Աստծո Հոգին, որպեսզի մենք վերապրենք այն փոփոխությունները, որ Աստված ցանկանում է տեսնել մեր մեջ:

Ով գալիս է Քրիստոսի մոտ, փոփոխության կարիք ունի: Մենք անշուշտ չենք ուզում մնալ այնպիսին, ինչպիսին կայինք՝ նախքան Նրան ճանաչելը: Մենք կարող ենք և պիտի ցանկանանք փոխվել, բայց պետք է նաև գիտակցենք, որ ինքներս մեզ չենք կարող փոխել: Մենք պետք է լիովին ապավինենք Սուրբ Հոգու զորությանը, որպեսզի Նա խոսի մեզ հետ այն փոփոխությունների մասին, որոնք պետք է կատարվեն, ապա դրանք իրականություն դարձնի մեր կյանքում: Որպես հավատացյալներ՝ մենք պետք է համագործակցենք Նրա հետ այն աշխատանքում, որ Նա իրականացնում է մեր ներսում, բայց նաև պետք է հիշենք, որ փոփոխություն կատարողը Նա է: Շատ անգամներ Նա կխոսի մեզ հետ այն փոփոխությունների մասին, որոնք ցանկանում է կատարել մեր կյանքում, այնպես որ, մենք պետք է մեր սրտերը զգայուն պահենք Նրա ձայնին, որպեսզի կարողանանք սիրով աշխատել Նրա հետ, երբ Նա փոխի մեզ «փառքի մի աստիճանից դեպի մյուսը»:

Երբ Աստված աշխատում է մեր կյանքում, Նա խոսում է մեզ հետ տարբեր ձևերով, այդ թվում՝ մեր հոգում անհարմարության զգացում դնելով: Մենք հոգևոր անհարմարություն ենք զգում, երբ անում ենք այն, ինչ հաճելի չէ Իրեն: Ամեն անգամ, երբ Սուրբ Հոգին ցանկանում է փոփոխություն կատարել մեր մեջ կամ մեր վարքագծում, մեզ ընդամենը անհրաժեշտ է հանձնվել, և Նա կիրականացնի Իր մտադրությունը: Պարզապես ասա՛. «Ոչ թե իմ, այլ՝ Քո՛ կամքը լինի»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ապավինի՛ր Սուրբ Հոգուն, որպեսզի Նա կատարի այն փոփոխությունները, որ անհրաժեշտ են քո կյանքում:

Փառաբանի՛ր՝ մինչև Աստծո ներկայության մեջ մտնելը

«Մտե՛ք Նրա դռները գոհությունով, Նրա սրահները՝ փառաբանությունով. գոհացե՛ք Նրանից և օրհնե՛ք Նրա անունը» (ՍԱՂՄՈՍ 100.4):

Կան միջոցներ, որոնք հնարավոր են դարձնում լսելու Աստծո ձայնը, և դրանցից մեկը հարգալից, անկեղծ փառաբանության և երկրպագության մեջ մտնելն է: Աստված հաճույք է ստանում, երբ Իր ներկայությունն ու զորությունը հայտնում է այն մարդկանց, որոնք իսկապես փառաբանում և երկրպագում են Իրեն: Իսկ երբ Նրա ներկայությունը և զորությունը դրսևորվում են, մենք լսում ենք Նրա ձայնը, տեսնում ենք հրաշքներ, հիվանդները բժշկվում են, մարդկանց կյանքերը փոխվում են, և տեղի է ունենում ներքին կերպարանափոխում:

Մի՞թե սա այն չէ, ինչ փափագում ես Աստծո հետ քո փոխհարաբերություններում: Երբ խոսում ես Նրա հետ և ուշադրություն դարձնում Նրա ձայնին, մի՞թե հիմնականում չես աղոթում, որ քո կյանքի որևէ բնագավառում փոփոխություն կամ վերափոխում կատարվի: Եթե Նրանից նոր աշխատանք ես խնդրում, դա փոփոխություն է: Եթե աղոթում ես, որ քո սիրելի մարդկանցից մեկը ճանաչի Տիրոջը, դա փոփոխություն է: Եթե խնդրում ես, որ Աստված ավելի շատ հայտնի Իրեն և օգնի քեզ հոգևորապես հասունանալու, դա փոփոխություն է: Եթե աղոթում ես, որ փողոցի այն կողմում ապրող պատանին դադարի թմրադեղեր օգտագործելուց, դա փոփոխություն է: Եթե խնդրում ես, որ Աստված օգնի քեզ այդքան հեշտությամբ չկորցնես հավասարակշռությունդ, դա փոփոխություն է:

Ինչի համար էլ աղոթես, աղոթքը սկսելու լավագույն ձևերից մեկը փառաբանության և երկրպագության մեջ մտնելն է: Դա կօգնի քեզ սիրտդ ուղիղ պահելու Աստծո առջև և ճանապարհ կհարթի Նրա ձայնը լսելու և փոփոխություններին պատրաստվելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ կարիք ունես լսելու Աստծո ձայնը, փառաբանի՛ր և երկրպագի՛ր Նրան:

Նորոգի՛ր քո միտքը

«...կերպարանափոխվե՛ք (փոխվե՛ք) ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք [ինքներդ ձեզ համար], թե որն է Աստծո բարի, ընդունելի և կատարյալ կամքը, այն, ինչը բարի է, ընդունելի և կատարյալ [Նրա տեսանկյունից ձեզ համար]» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.2):

Հիսուս Քրիստոսին Տեր ու Փրկիչ ընդունել եմ ինը տարեկանում: Ես գիտակցում էի իմ մեղավոր վիճակը և փնտրում էի Աստծո ներումը, որը ստացա Հիսուսի միջոցով: Ես ծնվեցի Հոգուց, բայց իրականում չհասկացա, թե ինչ կատարվեց իմ կյանքում: Ես չստացա հոգևոր ուսմունքներ, ուստի, մնացի խավարի մեջ, թեև Լույսը բնակվում էր իմ մեջ:

Այդ տարիքից հավատարմորեն հաճախում էի եկեղեցի: Ես մկրտվեցի, մասնակցեցի նախահաղորդության դասերի և, ընդհանրապես, անում էի այն, ինչ ճիշտ էի համարում, սակայն երբեք չունեի մտերիմ հարաբերություններ Աստծո հետ: Կարծում եմ, որ բազմաթիվ մարդիկ միևնույն վիճակում են ինչպես այսօր, այնպես էլ անցյալում:

Թեև ես անում էի լավագույնը «կրոնավոր» լինելու համար, բայց, ի վերջո, հասկացա, որ Հիսուսը չմահացավ, որ մեզ կրոն տար. Նա մահացավ, որ Իր միջոցով և Սուրբ Հոգու զորությամբ անձնական փոխհարաբերություն ունենանք Աստծո հետ:

Ինչպես նշեցի, ես ծնվել էի Հոգուց, բայց չունեի հայտնություն, թե ինչ էր դա նշանակում: Մարդիկ կարող են հարուստ լինել, բայց եթե հավատան, որ իրենք աղքատ են, նրանց կյանքը չի տարբերվի աղքատության մեջ ապրողների կյանքից: Եթե մարդիկ ունեն մեծ ժառանգություն, բայց չգիտեն այդ մասին, ապա չեն կարող տնօրինել այն:

Այսօրվա խոսքում ասվում է, որ Աստված ունի ծրագիր մեզ համար: Նրա կամքը մեզ համար բարի է, ընդունելի և կատարյալ, բայց մենք պետք է նորոգենք մեր միտքը, որպեսզի օգտվենք այն բարիքներից, որ Աստված ծրագրել է մեզ համար (տե՛ս Հռոմեացիների 12.1,2): Մենք նորոգում ենք մեր միտքը և ձեռք ենք բերում նոր վերաբերմունք ու նոր սկզբունքներ՝ ուսումնասիրելով Աստծո Խոսքը: Մենք պետք է սովորենք մտածել այնպես, ինչպես Աստված է մտածում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մտածի՛ր այնպես, ինչպես Աստված է մտածում:

Եղի՛ր հոգևորապես կենդանի

«Որովհետև կյանքի հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահի օրենքից» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.2):

Երբ փորձում ենք Աստծո հետ փոխհարաբերություններ ունենալ՝ պահպանելով կրոնի բոլոր օրենքները, ձախողվում ենք և մշտապես պարտված զգում: Հիսուսը մեր փոխարեն անթերի պահեց օրենքը և վճարեց այն գինը, որ մենք պարտք էինք Աստծուն մեր մեղքի և անարդարության համար: Նա մեզ համար ճանապարհ բացեց՝ հնարավորություն տալով մոտենալ Աստծուն Իր հանդեպ ունեցած հավատքով, այլ ոչ թե մեր գործերի միջոցով:

Հիսուսն ասաց, որ եթե սիրենք Իրեն, կպահենք Իր պատվիրանները (տե՛ս Հովհաննես 14.15): Նա չասաց, որ եթե պահենք բոլոր պատվիրանները, Նա կսիրի մեզ: Աստված արդեն սիրում է մեզ և ցանկանում է, որ արձագանքենք Իր սիրուն՝ պատրաստակամորեն անելով հնարավոր ամեն բան Իրեն հնազանդվելու համար: Նա նաև ուզում է՝ իմանանք, որ երբ սխալներ ենք անում, կարող ենք անմիջապես և լիովին ներվել:

Հին ուխտում մեղքը հոգևոր մահ էր բերում, բայց սիրո օրենքը, որի ներքո այսօր ապրում ենք, մեր ներսում կյանք է սփռում: Աստծո սերը զարմանալի է, և այն գիտակցումը, որ մենք մշտապես անթերի գործելու ճնշման տակ չենք, թույլ է տալիս մեզ հանգստանալու Նրա ներկայության մեջ և լսելու Նրա ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Խաչի վրա կատարած Հիսուսի աշխատանքը հնարավորություն է տալիս քեզ վայելել մտերիմ փոխհարաբերություն Աստծո հետ:

Միտք և բերան

«... սրտի ավելացածից կխոսի բերանը» (ՄԱՏԹԵՈՍ 12.34):

Այսօրվա խոսքը հիշեցնում է մի կնոջ, որը ներկա էր իմ համաժողովներից մեկին: Նա մոտեցավ ինձ և ասաց, որ երբեք չի դադարում խնդիրների մասին մտածելուց և խոսելուց, թեև իրեն սովորեցրել են, որ չկենտրոնանա դրանց վրա: Նա գիտեր, որ պետք է դադարեր բացասական բաների մասին մտածելուց, բայց կարծես անզոր էր այդ անելու համար:

Այս կինը բռնության էր ենթարկվել: Նա հանդիպել է մի քանի այլ կանանց, որոնք նույն ցավն էին կիսում: Երբ նրանք զրուցել են, նա հասկացել է, որ այն, ինչ Աստված ասել էր իրեն, ասել էր նաև նրանց, բայց նրանք հնազանդվել էին, իսկ ինքը՝ ոչ: Այդ կանայք նորոգել էին իրենց միտքը Աստծո Խոսքով, մինչ այդ կինն ավելի էր խորացրել խնդիրները՝ հրաժարվելով հանել դրանք իր մտքից:

Ինչի վրա կենտրոնացնում ենք մեր միտքը, ի վերջո դա դուրս է գալիս մեր բերանից: Քանի որ այդ կինը հրաժարվել էր Աստծուն հնազանդվելուց և չէր դադարել իր խնդիրների մասին մտածելուց ու խոսելուց, նա հայտնվել էր մի բանտում, որտեղից չէր կարողանում դուրս գալ:

Մենք փնտրում ենք այն, ինչի մասին մտածում ենք և խոսում: Այդ կինը կարող էր իր մտքերն ու խոսքերն օգտագործել Աստծուն փնտրելու համար, բայց փոխարենը դրանք վատնում էր այն բաների վրա, որոնցից փորձում էր ազատվել:

Քաջալերում եմ քեզ փնտրել Աստծուն՝ մտածելով և խոսելով Աստծո մասին ու խնդրելով Սուրբ Հոգուն, որ լցնի քո միտքն ու շուրթերը այն բաներով, որոնց վրա Նա ցանկանում է, որ կենտրոնանաս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր մտածի՛ր այն բաների մասին, որոնք ուրախացնում են քեզ, այլ ոչ թե տխրեցնում:

Աստված մուտք է գործում

«Պահի՛ր և պահպանի՛ր [մեծագույն խնամքով] այն թանկ և գերազանց [Ճշմարտությունը], որ ավանդվել է [քեզ] Սուրբ Հոգով [Նրա օգնությամբ], որ բնակված է մեզանում» (Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.14):

Հին կտակարանի ժամանակներում Ադամը և Եվան զբոսնում էին Աստծո հետ Եդեմի պարտեզում, իսկ Մովսեսը հանդիպում էր Նրան Սինա լեռան վրա: Այսօր Աստված չի հանդիպում մեզ հետ մեր պարտեզներում կամ մոտակա սարերում, ուր կարող ենք գնալ միայն Նրա հրավերով: Նա չի ընտրում ապրել վրանում, ինչպես այն ժամանակ, երբ Իսրայելի զավակները ճանապարհորդում էին անապատի միջով: Եվ Նա չի ապրում ձեռակերտ շինություններում:

Երբ ընդունում ենք Քրիստոսին, Սուրբ Հոգին գալիս է՝ բնակվելու մեր մեջ (տե՛ս Հովհաննես 14.17): Աստված ընտրում է բնակվել մեր հոգու մեջ՝ մեր կյանքի կենտրոնում, որտեղ Նա կարող է ավելի մոտ լինել մեզ, քան որևէ այլ կենդանի էակ: Երբ Աստծո Սուրբ Հոգին մտնում է մեր սրտի մեջ, մեր հոգին Նրա համար դառնում է բնակարան (տե՛ս Ա Կորնթացիների 3.16,17) և սրբվում է, որովհետև Աստված է այնտեղ:

Սրբության վիճակը, որի մեջ Աստված դնում է մեզ, սկսում է տարածվել նաև մեր շնչում և մեր մարմնում, և Աստված ցանկանում է, որ այն արտահայտվի մեր առօրյայում: Սրբությունը մշտական գործընթաց է, և փոփոխության փուլերը, որոնց միջով անցնում ենք, իրականում դառնում են վկայություն մեզ ճանաչողների համար: Մենք, ըստ էության, սովորում ենք ապրել՝ փոխվելով ներսից: Աստված զարմանահրաշ աշխատանք է կատարել մեր հոգում, և Սուրբ Հոգին սովորեցնում է մեզ ապրել այնպես, որ կարողանանք վկա լինել այն աշխարհին, որը Նրա կարիքն ունի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ապրի՛ր՝ փոխվելով ներսից:

Մեր մեծագույն ցանկությունը

«Նրանք չպիտի սովածանան և ծարավեն և նրանց չպիտի զարկի խորշակը և արևը կամ պատրանքը [չմոլորեցնի], որովհետև նրանց ողորմողը պիտի առաջնորդի նրանց և ջրի աղբյուրների մոտ պիտի տանի նրանց» (ԵՍԱՅԻ 49.10):

Աստված չի ուզում, որ Իրենից առավել այլ բան փափագենք: Այնպես չէ, որ մենք չպետք է որևէ բան ցանկանանք, պարզապես Նրան պետք է ցանկանանք ավելի, քան որևէ այլ բան: Նա ցանկանում է, որ ամեն օր ապրենք Իր ներկայության իրականության մեջ և լիովին բավարարվենք Իրենով:

Այսօրվա խոսքում նշվում է պատրանքի մասին: Իրականում մենք ծարավ ենք Աստծուն, բայց եթե չգիտակցենք, որ Նա միակն է, Ում պետք է փափագենք, կարող ենք հեշտությամբ մոլորվել, ինչպես պատրանքն է անապատում մոլորեցնում ծարավ ճանապարհորդներին: Սատանան կարող է խաբել մեզ՝ ստիպելով կենտրոնանալ այն բաների վրա, որոնք երբեք իսկապես չեն բավարարի մեզ: Ոչինչ, բացի Աստծուց, չի կարող բավարարել մեզ, այնպես որ, մենք պետք է ուղղենք մեր մտքերն Աստծո վրա: Եթե Նրան տանք առաջին տեղը մեր ցանկություններում, մտքերում, խոսակցություններում և ընտրություններում, մեր ծարավն իսկապես կհագենա, և մենք չենք մոլորվի:

Մենք ունենք օրինական պահանջմունքներ, և Աստված ցանկանում է բավարարել դրանք: Եթե փնտրենք Նրա երեսը (ներկայությունը), կհայտնաբերենք, որ Նրա ձեռքը միշտ բաց է մեզ համար: Սակայն, եթե փնտրենք նյութական բաներ, մենք կարող ենք հեշտությամբ խաբվել և գուցե հայտնաբերենք, որ մեր կյանքից շատ մաս վատնել ենք՝ պատրանքներին հետևելով: Դրանք այն բաներն են, որոնք մեզ անհրաժեշտ են թվացել, բայց իրականում ոչինչ են եղել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված ունի այն ամենը, ինչի կարիքը դու ունես:

Թարմացիր

«Ուրեմն, զղջացեք (փոխեք ձեր միտքը և նպատակը) և եկ դարձեք [Աստծուն], որ ձեր մեղքերը ջնջվեն (մաքրվեն), որ թարմության ժամանակները գան Տիրոջ ներկայությունից...» (ԳՈՐԾՔ 3.19):

Աստված դրսևորում է Իր ներկայությունը տարբեր ձևերով: Մեծ մասամբ մենք չենք տեսնում Նրան, ինչպես չենք տեսնում քամին, բայց կարող ենք տեսնել այն աշխատանքը, որ Նա անում է մեր մեջ: Եթե ես հոգնած եմ, հյուծված, հուսախաբված կամ ինչ-որ բանից անհանգստացած, և Նրա հետ ժամանակ անցկացնելուց հետո լցվում եմ թարմությամբ, ուրեմն գիտեմ, որ Հոգու քամին փչել է ինձ վրա:

Աստված ցանկանում է թարմություն բերել քո կյանքում: Մի՛ հուսախաբվիր կամ մի՛ տանջվիր, երբ պատասխանը քո ներսում է: Եթե դու չափազանց զբաղված ես Աստծո հետ ժամանակ անցկացնելու համար, ուրեմն դու պարզապես չափազանց զբաղված ես. քեզ ահրաժեշտ է որոշ փոփոխություններ մտցնել քո ժամանակացույցում: Մի՛ հյուծվիր, մի՛ վրդովվիր, ուժասպառ մի՛ եղիր և մի՛ լարվիր, երբ թարմության ժամանակները հասանելի են քեզ:

Սովորի՛ր դուրս գալ կյանքի զբաղվածությունից և ժամանակ անցկացնել Աստծո հետ այնպես, ինչպես Հիսուսն էր անում: Դու չես կարող սպասել, որ շրջապատող մարդիկ քեզ թույլ տան ժամանակ անցկացնել Աստծո հետ: Ինչ-որ մեկը միշտ կգտնի ինչ-որ բան, որ դու պիտի անես: Եթե հնարավոր է, առաջին հերթին ժամանակ հատկացրու առավոտյան, ապա փորձի՛ր օրվա մեջ վերցնել մի քանի փոքրիկ «հոգևոր ընդմիջումներ»: Երկու կամ երեք րոպեով դադարեցրո՛ւ այն, ինչ անում ես, խորը շո՛ւնչ քաշիր, հանգստացի՛ր և պարզապես Աստծուն ասա՛, թե որքան ես սիրում Իրեն և որքան ես զգում Իր կարիքը: Մնացած ժամանակը լո՛ւռ մնա Նրա ներկայության մեջ, և դու զարմանալի թարմություն կվերապրես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ հյուծվիր կամ մի՛ լարվիր. ժամանակ տրամադրիր՝ թարմանալու Տիրոջ ներկայության մեջ:

Բարի գործեր արա

«Որովհետև մենք Աստծո ստեղծածն ենք (Նրա ձեռքի աշխատանքը)՝ Քրիստոս Հիսուսով հաստատված [նոր ծնված], որ անենք այն բարի գործերը, որ Աստված նախասահմանեց (նախօրոք ծրագրեց) մեզ համար» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.10):

Երբ սկսեցի ավելի մտերմանալ Աստծո հետ, սպասում էի, որ Նա հաստատեր այն ամենը, ինչ ուզում էի անել: Հետո հասկացա, որ Նրա Հոգին ապրում է իմ մեջ, որպեսզի մղի ինձ բարի գործեր անելու: Աստծուն հետևելու վաղ տարիներին, մի անգամ ցանկացա տասը դոլար տալ կարիքավոր մի կնոջ: Երեք շաբաթ այդ ցանկությունը պահեցի սրտումս, մինչև, ի վերջո, աղոթեցի. «Աստված, եթե *իսկապես* Դու ես ասում, որ այդ կնոջը գումար տամ, ուրեմն կանեմ դա»: Այն ժամանակ տասը դոլարը բավականին գումար էր, և ես չէի ուզում դրանից հրաժարվել, մինչև հստակ չուղղորդվեի Աստծուց:

Աստված պարզ խոսեց. «Ջո՛յս, եթե նույնիսկ Ես չեմ ասում, ապա չեմ բարկանա, եթե օրինես որևէ մեկին»:

Աստծո Հոգին բնակվում է մեր մեջ, որի ապացույցը բարությունն է՝ Հոգու պտուղներից մեկը (տե՛ս Գաղատ. 5.22,23): Այդ է պատճառը, որ մենք ցանկանում ենք բարի լինել մարդկանց հանդեպ: Աստված Աբրահամին ասաց, որ օրինելու է իրեն, որպեսզի ինքը կարողանա օրհնություն լինել ուրիշների համար (տե՛ս Ծննդոց 12.2): Պատկերացրո՛ւ, թե որքան փառահեղ կլիներ ապրել ուրիշներին երջանկացնելու համար՝ որպես ծառայություն Աստծուն:

Աշխարհը լի է կարիքավորներով: Միշտ կա մեկը, ով քաջալերանքի կարիք ունի: Ինչ-որ մեկը դայակի կարիք ունի, մեկ ուրիշը՝ փոխադրամիջոցի, մյուսը՝ ֆինանսական օգնության: Երբ ժամանակ եմ անցկացնում Աստծո հետ, ինչ-որ մեկին օգնելու մեծ ցանկություն եմ ունենում: Այդ ցանկության միջոցով Աստված խոսում է ինձ հետ: Աստված բարի է, և երբ ժամանակ ենք անցկացնում Նրա հետ, մենք ուզում ենք բարիք անել ուրիշներին:

Խնդրի՛ր Աստծուց, որ ցույց տա, թե ում կարող ես օրինել: Հիշի՛ր՝ որտեղ սեր կա, այնտեղ Աստված է բնակվում (տե՛ս Ա Հովհ. 4.12):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. օգտվի՛ր բարիք անելու յուրաքանչյուր հնարավորությունից:

Յուրաքանչյուրը կարող է մտնել

«...Այս նոր և կենդանի ճանապարհով, որը Նա նախաձեռնեց և նվիրեց և բացեց մեզ համար բաժանող վարագույրի (Սրբություն Սրբոցի վարագույրի), այսինքն՝ Իր մարմնի միջոցով» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.19,20):

Երբ Հիսուսը մահացավ, տաճարի վարագույրը, որ Սրբարանը բաժանում էր Սրբություն Սրբոցից, վերևից ներքև պատռվեց (տես Մարկոս 15.37,38): Դա ճանապարհ բացեց յուրաքանչյուրի համար՝ մտնելու Աստծո ներկայության մեջ: Նախքան Հիսուսի մահը՝ միայն քահանայապետը կարող էր մտնել Աստծո ներկայության մեջ, այն էլ՝ տարին մեկ անգամ՝ մորթված անասունների արյունով, որպեսզի ծածկեր և քավեր իր և ժողովրդի մեղքերը:

Նշանակալից է այն, որ տաճարի վարագույրը պատռվեց վերևից ներքև: Վարագույրն այնքան բարձր էր և այնքան խիտ, որ ոչ մի մարդ չէր կարող պատռել այն. այն պատռվեց Աստծո գերբնական զորությամբ: Դրանով Աստված ցույց տվեց, որ Իր ժողովրդի համար նոր և կենդանի ճանապարհ էր բացում Իրեն մոտենալու համար, ինչպես կարդում ենք այսօրվա խոսքում:

Հենց սկզբից Աստված ցանկացել է հաղորդություն ունենալ մարդու հետ. դա Նրա նպատակն էր, երբ ստեղծում էր մեզ: Նա երբեք չի ցանկացել մարդկանց հեռու պահել Իր ներկայությունից, բայց Նա գիտեր, որ Իր սրբությունն այնքան հզոր էր, որ կկործաներ ցանկացած անսուրբ բան, որ կմոտենար Իրեն: Հետևաբար, նախքան մարդը մուտք կունենար Աստծո ներկայության մեջ, պետք է լուծվեր մեղավորների լիովին սրբվելու հարցը:

Մենք աշխարհում ենք, բայց աշխարհից չենք (տե՛ս Հովհաննես 17.14-16): Մեր աշխարհիկ կեցվածքը և մարմնավոր ճանապարհները բաժանում են մեզ Աստծո ներկայությունից և կարող են ետ պահել Աստծո ձայնը լսելուց: Եթե մշտապես հավատքով չընդունենք Հիսուսի արյան զոհը, որը մեզ մաքուր է պահում, մենք չենք կարողանա ճիշտ փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ և վայելել Նրա մտերմությունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված ուզում է հաղորդակցվել քեզ հետ. այսօր ազատորեն մտի՛ր Նրա ներկայության մեջ:

Օգնություն

«Որովհետև Ես՝ Եհովան՝ քո Աստվածը, զորացնում եմ քո աջը. որ ասում եմ քեզ. «Մի՛ վախեցիր, Ես կօգնեմ քեզ»» (ԵՍԱՅԻ 41.13):

Նշանակություն չունի, թե մեր կարծիքով, որքան լավ ենք տնօրինում մեր կյանքը: Ճշմարտությունն այն է, որ մենք օգնության կարիք ունենք ամեն ինչում: Մեզ անհրաժեշտ է օգնություն մեր ամենօրյա կյանքում: Հաճախ, երկար ժամանակ է պահանջվում հասկանալու, թե որքան շատ օգնության կարիք ունենք: Մենք սիրում ենք մտածել, որ կարող ենք ամեն բան ինքնուրույն անել և առանց որևէ մեկի աջակցության: Սակայն, Տերը մեզ Աստվածային Օգնական ուղարկեց, հետևաբար, մենք օգնության կարիք ենք ունենալու: Հիսուսն Ինքը մշտապես բարեխոսում է մեզ համար՝ Հոր աջ կողմում նստած (տես Եբրայեցիների 7.25, Հռոմեացիների 8.34), իսկ դա նշանակում է, որ մենք մշտապես Աստծո միջամտության կարիքն ունենք: Իրականում մենք շատ կարիքավոր ենք և անկարող ենք ինքնուրույն պատշաճ կերպով տնօրինել մեր կյանքը:

Գուցե թվում է, թե որոշ ժամանակ լավ ենք կազմակերպում մեր կյանքը, սակայն, ուշ թե շուտ, ինչ-որ բան է տեղի ունենում, և ամեն բան քանդվում է: Պատճառն այն է, որ մենք ապրում ենք՝ ապավինելով մեր սեփական ուժերին, այլ ոչ թե աստվածային օգնությանը:

Շատ անգամներ մեր գործերն իսկապես հաջող են ընթանում, քանի դեռ չենք բախվել անախորժությունների: Այն կարող է հանդես գալ ամուսնական խնդիրների, սիրելի մարդու մահվան, աշխատանքը կորցնելու կամ մեզ համար կարևոր մեկ այլ բանի տեսքով: Վերջին հաշվով, բոլորս հասնում ենք այն կետին, որտեղ ստիպված ենք ընդունել մեր կարիքավոր լինելը:

Եթե ուզում ենք ապրել այնպես, ինչպես Աստված է նախատեսել՝ արդարությամբ, խաղաղությամբ և ուրախությամբ լի կյանքով (տես Հռոմեացիների 14.17), ապա պետք է ընդունենք, որ օգնության կարիք ունենք, և դիմենք Սուրբ Հոգուն, Ում Աստված ուղարկեց՝ մեզ օգնելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ընդունի՛ր, որ օգնության կարիք ունես, և վստահի՛ր Սուրբ Հոգուն՝ քեզ օգնելու համար:

Աստված խոսում է Իր ընկերների հետ

«Տերն ասաց. «Մի՞թե Ես Աբրահամից (Իմ ընկերոջից և ծառայից) կթաքցնեմ այն, ինչ որ անելու եմ»» (ԾՆՆԴՈՅ 18.17):

Հավանաբար, ոչ ոք ավելի հաճախ չի վկայակոչվում որպես «Աստծո ընկեր», քան Աբրահամը: Աստվածաշունչը վկայակոչում է Դավթին՝ որպես «Աստծո սրտի համեմատ մարդու», և Հովհաննեսին՝ որպես «Հիսուսի սիրած աշակերտի», մինչդեռ Աբրահամն ունի առանձնահատուկ պատիվ՝ կոչվելու Աստծո *ընկեր,* և այս մասին գրված է ավելի քան մեկ սուրբգրային համարում:

Երբ Աստված որոշեց դատաստան բերել Սոդոմի և Գոմորի բնակիչների չարության վրա, Նա ասաց Աբրահամին, թե ինչ էր ծրագրել անել:

Ընկերության մեջ մարդիկ միմյանց հայտնում են իրենց մտադրությունները: Քանի որ Աստված Աբրահամին համարում էր որպես Իր ընկեր, Նա ասաց, թե ինչ էր մտադիր անելու, ճիշտ այնպես, ինչպես դու կասեիր քո ընկերոջը, թե ինչ ես մտադիր անելու: Երբ Աբրահամը լսեց, որ Աստված մտադիր էր կործանելու Սոդոմն ու Գոմորը, նա «մոտեցավ և ասաց. «Մի՞թե ամբարշտի հետ արդարին էլ կկորցնես»» (Ծննդոց 18.23): Ինչպես Աստված կիսեց Իր ծրագրերը Աբրահամի հետ, քանի որ նրանք ընկերներ էին, այնպես էլ Աբրահամը «մոտեցավ» Աստծուն և համարձակ ու բացեիբաց խոսեց Նրա ծրագրերի մասին, որովհետև նրանք ընկերներ էին: Նրանք ունեին այնպիսի փոխհարաբերություն, որ կարող էին ազատ հաղորդակցվել միմյանց հետ. նրանք կարող էին բացեիբաց խոսել միմյանց հետ: Աբրահամը մտերմություն ուներ Աստծո հետ, որովհետև համոզված էր այն սիրո մեջ, որ Աստված տածում էր իր հանդեպ:

Աստված ուզում է լինել նաև քո ընկերը, խոսել քեզ հետ և լսել, թե ինչ ես դու ասում Իրեն: Այսօր սկսի՛ր նորովի ընդունել այն փաստը, որ դու Աստծո ընկերն ես և կարող ես մոտենալ Նրան՝ որպես ընկեր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո հետ զարգացրո՛ւ այնպիսի փոխհարաբերություն, որ կարողանաս ազատ խոսել Նրա հետ և հեշտությամբ լսել այն, ինչ ասում է քեզ:

Ամեն բան գործակից է լինում դեպի բարին

«Մենք համոզված ենք և գիտենք, որ [Աստծուն ունենալով որպես գործընկեր] բոլոր բաները գործակից են լինում դեպի բարին նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են [Նրա] մտադրությունների և նպատակի համաձայն» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.28):

Երբ Աստված խոսում է մեզ հետ, և մենք հնազանդվում ենք, դա հավատքի դրսևորում է: Հաճախ կյանքում չեն լինում հանգամանքներ, որոնք կօգնեն մեզ հասկանալու՝ ճիշտ ենք վարվում, թե՞ ոչ: Այդ դեպքում մենք ստիպված ենք լինում գործել հավատքով: Մենք ստիպված ենք լինում քայլ անել՝ հավատալով, որ հետևում ենք Աստծուն: Մենք ստիպված ենք լինում գործել՝ հավատալով, որ լսել ենք Նրա ձայնը: Աստծո հետ փորձառությունը հրաշալի ուսուցիչ է, և հաճախ մենք երբեք չենք իմանա՝ ճիշտ ենք, թե՞ սխալ, մինչև «քայլ չանենք ու չպարզենք»:

Երբեմն կարող ենք սխալվել: Հնարավոր է՝ սխալ գործենք: Սխալվելու միտքը կարող է վախեցնել մեզ, այդ պատճառով մենք հաճախ մտածում ենք. *«Ավելի լավ է ապահով լինել, քան հետո զղջալ»:* Բայց եթե այդպիսի մոտեցում ունենանք, շուտով մեզ դժբախտ կզգանք: Եթե Աստված ասել է առաջ շարժվել, ու ոչինչ չենք արել, մենք ոչ միայն դժբախտ կլինենք, այլև կապրենք ձանձրալի, աննկատ կյանքով: Մենք փափագում ենք ունենալ արկածային կյանք, բայց վախը կպահի մեզ դրա ուրախությունը ճաշակելուց:

Ես հայտնաբերել եմ, որ եթե մեր սիրտն ուղիղ է, և մենք անում ենք հնարավոր ամեն բան, որպեսզի սովորենք լսել Աստծուց, Նա կպատվի մեր ջանքերը և մեր հնազանդության քայլերը: Եթե մենք շարժվենք մանկան վստահությամբ և հնազանդվենք այն ամենին, ինչին, հավատում ենք, որ Նա ասել է մեզ անել, ապա նույնիսկ ամեն բան ճշգրտորեն չանելու դեպքում Աստված մեր սխալները բարիին գործակից կդարձնի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված ամեն բան բարիին գործակից է անում քեզ համար:

Քայլ արա և հայտնաբերի՛ր

«Մեծ և արդյունավետ դուռ է բացված ինձ համար, և հակառակվողները շատ են» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 16.9):

Երբեմն Աստծո կամքը բացահայտելու միակ ճանապարհը, ինչպես ինքս եմ անվանում, «քայլ անելու և հայտնաբերելու» մեջ հմտանալն է: Եթե ես աղոթել եմ ինչ-որ իրավիճակի համար և դեռևս չգիտեմ ինչ անել, պարզապես հավատքի քայլ եմ անում: Աստված ցույց է տվել, որ Իրեն վստահելը նման է հանրախանութի ինքնաշխատ դռան առջև կանգնելուն: Մենք կարող ենք կանգնել և ամբողջ օրը նայել դռանը, բայց այն չի բացվի, մինչև առաջ չքայլենք և չգործարկենք այն մեխանիզմը, որը բացում է դուռը:

Կյանքում կան ժամանակներ, երբ պետք է առաջ քայլենք, որպեսզի հայտնաբերենք, թե ինչ պիտի անենք: Որոշ դռներ բացվում են անմիջապես հավատքի քայլ անելուց հետո, իսկ մյուսները երբեք չեն բացվում, ինչ էլ անենք: Երբ Աստված դուռ է բացում, անցի՛ր միջով: Եթե Նա չի բացում ինչ-որ դուռ, ուրեմն փորձի՛ր այլ ուղղությամբ գնալ: Բայց թույլ մի՛ տուր, որ վախը գցի քեզ լիակատար անգործության թակարդը:

Այսօրվա խոսքում Պողոսը նշում է իր առջև բացված դռան մասին, բայց նաև հիշատակում է շատ հակառակորդների մասին, այնպես որ, պետք է համոզված լինենք, որ հակառակությունը չենք շփոթում փակ դռան հետ:

Պողոսը և նրա գործընկերները՝ Շիղան ու Բառնաբասը, Աստծո կամքը փնտրելիս չէին նստում ու սպասում, որ հրեշտակ կամ տեսիլք երևար: Նրանք քայլ էին անում այն ուղղությամբ, որը, կարծում էին, ճիշտ է: Աստված բազմիցս դռներ էր բացել նրանց համար, բայց կային ժամանակներ, երբ Նա փակում էր դռները: Սա չէր հիասթափեցնում նրանց. նրանք պարզապես շարունակում էին հավատքով առաջ շարժվել՝ փնտրելով Աստծո կամքը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. համարձակ մտիր այն դռներով, որ Աստված բացում է քեզ համար, և մի՛ հիասթափվիր, երբ Նա որևէ դուռ է փակում:

Մկրտություն Սուրբ Հոգով

«Արդ եթե դուք, որ չար եք, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որքա՞ն ավելի երկնավոր Հայրը Սուրբ Հոգին կտա նրանց, որ ուզում են Իրենից» (ՂՈՒԿԱՍ 11.13):

Այսօրվա խոսքում տրվում է խոստում, որ Աստված կտա Սուրբ Հոգին նրանց, ովքեր խնդրում են Իրենից: Դու կարող ես խնդրել Աստծուց լցնել և մկրտել քեզ Սուրբ Հոգով հենց հիմա, հենց այնտեղ, որտեղ գտնվում ես: Ահա՛ աղոթք, որ կարող ես անել.

«Հա՛յր, Հիսուսի անունով, խնդրո՛ւմ եմ, որ մկրտես ինձ Սուրբ Հոգով, որը կուղեկցվի Հոգով լցվելու բոլոր ապացույցներով: Շնորհի՛ր ինձ համարձակություն, ինչպես շնորհեցիր նրանց, ովքեր լցվեցին Հոգով Պենտեկոստեի օրը, և տո՛ւր ինձ այն հոգևոր պարգևները, որոնք կամենում ես, որ ունենամ»:

Այժմ, գուցե ցանկանաս հաստատել քո հավատքը՝ բարձրաձայն ասելով. «Ես հավատում եմ, որ լցվել եմ Սուրբ Հոգով, և երբեք նույնը չեմ լինի»:

Եթե աղոթել ես վերոնշյալ աղոթքը կամ համանման աղոթք, հանգիստ սպասի՛ր Աստծուն և հավատա՛, որ ստացել ես այն, ինչ խնդրել ես: Եթե չես հավատում, որ ստացել ես, ապա նույնիսկ եթե ստացած էլ լինես, կհամարվի, որ չես ստացել: Ցանկանում եմ կրկին շեշտել հավատքով ստանալու կարևորությունը և հորդորել, որ որոշումներ չկայացնես՝ հիմնվելով քո զգացողությունների վրա: Օրվա ընթացքում խորհի՛ր այն փաստի շուրջ, որ Աստված ապրում է քո մեջ, և Նրա միջոցով դու կարող ես անել այն, ինչ անհրաժեշտ է անել:

Սուրբ Հոգով լցվելը ամենահրաշալի բանն է, որ կարող է երբևէ տեղի ունենալ հավատացյալի կյանքում: Նրա ներկայությունը տալիս է քեզ խիզախություն, հույս, խաղաղություն, ուրախություն, իմաստություն և այլ հրաշալի բաներ: Ամեն օր փնտրի՛ր Նրան ամբողջ սրտով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փնտրի՛ր Աստծուն հենց Իր համար և Իր ներկայության համար, որտեղ ուրախություն կա. մի՛ փնտրիր Նրան այն ամենի համար, թե ինչ կարող է անել քեզ համար:

Գործընկեր ամբողջ կյանքի համար

«Գիտեմ, ո՛վ Տեր, որ մարդունը չէ իր ճանապարհը, որ գնացող մարդու բանը չէ, որ ուղղի իր գնացքը» (ԵՐԵՄԻԱ 10.23):

Այսօրվա խոսքում Երեմիան ճշմարտություն է խոսում: Իրականում անհնար է, որ մարդ արարածը կարողանա պատշաճ կերպով տնօրինել իր կյանքը: Դու և ես օգնության կարիք ունենք, այն էլ՝ շա՛տ: Դա ընդունելը ոչ թե թուլության, այլ հոգևոր հասունության նշան է: Մենք տկար ենք, մինչև չենք գտնում մեր ուժն Աստծո մեջ, և որքան շուտ բախվենք այդ փաստին, այնքան ավելի լավ կլինի մեզ համար:

Գուցե դու էլ այնպիսին ես, ինչպիսին ես էի մի ժամանակ. ջանք ես թափում, որ ամեն բան ճիշտ ընթանա, և միշտ ձախողվում ես: Քո խնդիրն այն չէ, որ դու ձախողակ ես. քո խնդիրն այն է, որ չես դիմում օգնության ճիշտ աղբյուրին:

Աստված թույլ չի տա, որ առանց Իրեն հասնենք իրական հաջողության: Հիշի՛ր, իրական հաջողությունը նյութական հարստություն կուտակելու կարողությունը չէ. այն՝ կյանքը և Աստծո օրհնությունները վայելելու կարողությունն է: Շատերն ունեն դիրք, ֆինանսներ, իշխանություն, համբավ և այլ բաներ, բայց գուցե չունեն այն, ինչն ամենից կարևոր է՝ լավ փոխհարաբերություններ, ճիշտ դիրք Աստծո մոտ, խաղաղություն, ուրախություն, գոհունակություն, բավարարվածություն, առողջություն և կյանքը վայելելու կարողություն:

Համաձայն Սաղմոս 127.1-ի՝ եթե Տերը չշինի տունը, զուր են աշխատում այն շինողները: Գուցե մենք կարողանում ենք կառուցել, բայց այն, ինչ կառուցում ենք, կանգուն չի մնա, եթե Տերը ներգրավված չլինի: Նա մեր Գործընկերն է ամբողջ կյանքի համար, և, որպես Գործընկեր, ցանկանում է մաս լինել այն ամենի, ինչ անում ենք: Աստված հետաքրքրված է մեր կյանքի բոլոր բնագավառներով, և Նա ցանկանում է խոսել մեզ հետ այն ամենի մասին, ինչ մտահոգում է մեզ: Այս ճշմարտությանը հավատալը՝ Նրա հետ զարմանահրաշ ճանապարհորդության սկիզբն է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ Աստված լինի քո Գործընկերը ամբողջ կյանքի համար:

Ապավինի՛ր Նրան

«Մենք լսեցինք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր հավատքը [ձեր ամբողջ էությամբ Նրան ապավինելը՝ լիովին վստահելով Նրա զորությանը, իմաստությանը և բարությանը] և սերը [որ ունեք և ցուցաբերում եք] բոլոր սուրբերի հանդեպ» (ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1.4):

Աստված ցանկանում է, որ լիովին ապավինենք Իրեն, լսենք Իր ձայնը և հնազանդվենք. ահա թե ինչ է իրականում հավատքը: Ես սիրում եմ հավատքի այն սահմանումը, որ տրված է այսօրվա խոսքում, և այն փաստը, որ լիովին պետք է ապավինենք Տիրոջը:

Մենք կարող ենք ապավինել Աստծուն՝ Իր կամքի մեջ մեզ պահելու համար: Ես ուրախ եմ դրա համար, որովհետև չափազանց դժվար է սեփական ուժերով մնալ Աստծո կամքի մեջ: Չգիտեմ նույնիսկ մեկ անձնավորության, ով կարող է ազնվորեն ասել, որ լիովին վստահ է և գիտի, թե ինչ պիտի անի ամեն օր:

Մենք կարող ենք հնարավոր ամեն բան անել ճիշտ որոշումներ կայացնելու համար: Սակայն ինչպե՞ս կարող ենք իմանալ, որ մենք ճիշտ ենք: Իհարկե՝ չե՛նք կարող: Մենք պետք է վստահենք Աստծուն, որ պահի մեզ Իր կամքի մեջ, ուղղի մեր առջև խորդուբորդ ճանապարհները, պահի մեզ նեղ ուղու վրա, որ տանում է դեպի կյանք, և հեռու պահի կործանում տանող լայն ճանապարհից (տե՛ս Մատթեոս 7.13):

Մենք պետք է աղոթենք. «Աստվա՛ծ, թող Քո կա՛մքը լինի իմ կյանքում»: Աստծո կամքից գիտեմ որոշ բաներ իմ կյանքի համար, բայց չգիտեմ ամենը, այնպես որ, ես սովորել եմ հանգիստ ու խաղաղ մնալ՝ ապավինելով Աստծուն, նվիրվելով Նրան և աղոթելով, որ Նրա կամքը կատարվի իմ մեջ և իմ միջոցով:

Երբեմն մտածում ենք, որ միայն թույլ կամ փխրուն մարդիկ կարող են ապավինել ինչ-որ մեկին, բայց հասկացել եմ, որ վատ բան չէ, եթե ապավինում ենք Աստծուն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր լիովին ապավինի՛ր Աստծուն:

Մենք պետք է խնդրենք

«Միայն թող հավատքով խնդրի՝ առանց երկմտելու...» (ՀԱԿՈԲՈՍ 1.6):

Եթե բացենք Հակոբոսի թուղթը, կտեսնենք, որ այն սկսվում է նրանով, թե ինչպես վարվենք կյանքի խնդիրների և փորձությունների հետ: Կա ֆիզիկական միջոց դրանց դեմ պայքարելու համար, բայց կա նաև հոգևոր միջոց:

Հակոբոսի 1.5,6 խոսքերում հիմնականում ասվում է. «Եթե խնդիր ունեք, Աստծո՛ւց հարցրեք, թե ինչ անեք»: Գուցե անմիջապես չլսես Նրա ձայնը և չստանաս պատասխան, բայց եթե խնդրես հավատքով, մինչ զբաղված կլինես քո գործերով, կհայտնաբերես, որ գործում ես մի իմաստությամբ, որն աստվածային է և վեր՝ քո բնական գիտելիքներից:

Սաղմոս 23.2-ում սաղմոսերգուն ասում է, որ Աստված առաջնորդում է Իր ժողովրդին դեպի կանաչ արոտավայրեր և տանում հանդարտ ու խաղաղ ջրերի մոտ: Այլ խոսքով՝ Աստված միշտ կառաջնորդի մեզ խաղաղության և անվտանգության վայր, եթե փնտրենք Իրեն:

Նայի՛ր այսօրվա խոսքին և ուշադրություն դարձրու, որ մենք պետք է խնդրենք հավատքով: Շատ հաճախ մենք չենք ստանում օգնություն, որովհետև չենք խնդրում: Սուրբ Հոգին բարեկիրթ է (ջենտլմեն). Նա սպասում է այնքան, մինչև հրավիրենք մեր իրավիճակների մեջ: Մենք չենք կարող ապրել ենթադրություններով. մենք պետք է խնդրենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ որևէ բանի կարիք ունես, խնդրի՛ր Աստծուց:

Եղի՛ր ճշմարիտ երկրպագու

«Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներից» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.23):

Աշխարհը հաճախ մտածում է երկրպագության մասին՝ որպես «կրոնական արարողության», ինչը շատ հեռու է երկրպագության աստվածաշնչյան գաղափարից: Երբ մարդիկ հարցնում են. «Որտե՞ղ ես երկրպագում», նրանք հաճախ պարզապես ուզում են իմանալ, թե ինչ եկեղեցի ես հաճախում: Երբ Աստվածաշնչում կարդում ենք երկրպագության վերաբերյալ, տեսնում ենք, որ երկրպագությունը անձնական փոխհարաբերությունն է Աստծո հետ. Ում հետ կարող ենք խոսել, և Ով խոսում է մեզ հետ: Մենք կարդում ենք հոգևոր մտերմության և ջերմեռանդ անձնվիրման, Աստծուն ամբողջ սրտով սիրելու և երկրպագելու մասին: Սա է ճշմարիտ երկրպագությունը. այն բորբոքվում է մեր ներսում, երբ նախանձավոր ենք Աստծո հանդեպ և խանդավառվում ենք Նրանով:

Համաձայն այսօրվա խոսքի՝ Աստված փնտրում է ճշմարիտ, անկեղծ երկրպագուների, որոնք ի սրտե կերկրպագեն Իրեն:

Ինձ միշտ տխրեցրել է այն փաստը, որ Աստված փնտրում է ճշմարիտ երկրպագուների: Ես կարծում եմ, որ այդպիսիք շատ պետք է լինեն: Ինձ համար հետաքրքիր է, որ Նա չի ուզում, որ ինչ-որ մեկը պարզապես երկրպագի Իրեն. Նա ուզում է *ճշմարիտ* և *անկեղծ* երկրպագուներ: Նա չի փնտրում մարդկանց, որոնք կերկրպագեն վախից կամ պարտավորությունից դրդված: Նա փնտրում է նրանց, ովքեր կերկրպագեն Իրեն, որովհետև սիրո փոխհարաբերության մեջ են Իր հետ:

Ճշմարիտ երկրպագությունը ավելին է, քան եկեղեցական ծառայությանը հաճախելը և երգեր երգելը: Մենք պետք է երկրպագենք Աստծուն մեր ամբողջ կյանքով՝ ամեն բան անելով Նրա համար և Նրա միջոցով: Անկեղծ երկրպագությունը բխում է Աստծո հետ մտերմությունից, և այն մեզ զգայուն է դարձնում Նրա ձայնի հանդեպ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ երկրպագիր վախից դրդված. երկրպագի՛ր սիրուց մղված:

Մարդկանց առաջնահերթ նշանակություն տուր

«Բայց ես՝ քավ լիցի, որ Տիրոջ դեմ մեղք գործեմ՝ ձեզ համար աղոթք անելուց դադարելով...» (Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 12.23):

Արդյունավետ աղոթքի բանալիներից մեկն այն է, երբ կենտրոնանում ենք ուրիշների վրա և չենք տարվում սեփական կարիքներով: Անշուշտ, մենք կարող ենք աղոթել մեզ համար և խնդրել Աստծուց լրացնել մեր կարիքները, բայց անհրաժեշտ է խուսափել անդադար մեզ համար աղոթելուց: Ինքնահաճո, եսասեր և եսակենտրոն աղոթքներն արդյունավետ չեն, ուստի պետք է իսկապես ջանանք աղոթել նաև ուրիշների համար: Ես մշտապես լսում եմ չորս կամ հինգ մարդու մասին, որոնք աղոթքի կարիք ունեն, և երբ այդ աղոթքներից մի քանիսը պատասխանվում են, ես տեղեկանում եմ այլ մարդկանց մասին, որոնց համար նույնպես պետք է աղոթել: Հավանաբար, քո կյանքն էլ այդպիսին է: Դու լսում ես, որ ինչ-որ մեկը վերջերս հրաժեշտ է տվել հարազատին, մեկ ուրիշն աշխատանքի կարիք ունի, մյուսը՝ կացարանի, ինչ-որ մեկը բժշկից վատ լուր է լսել, մեկի երեխան է հիվանդ, մյուսի ամուսինն է թողել-հեռացել...

Մարդիկ ունեն տարբեր կարիքներ, և նրանց հարկավոր են մեր աղոթքները: Աստված ուզում է, որ աղոթենք միմյանց համար անկեղծ սիրով և սրտացավությամբ: Երբ աղոթում ենք ուրիշների համար, մենք ցանում ենք սերմեր, որոնք պտուղ կբերեն մեր կյանքում: Հիշում եմ մի կնոջ, ով ասաց, որ մասնակցել էր իմ համաժողովներից մեկին, որտեղ ես աղոթել էի հիվանդների համար: Թեև նա ավշային սպիտակարյունություն ուներ, բայց աղոթել էր ուրիշների բժշկության համար և նույնիսկ չէր մտածել իր համար աղոթելու մասին: Հաջորդ շաբաթ այցելել էր բժշկի և հետազոտությունից հետո ասել էին, որ թեև չեն հասկանում՝ ինչ է կատարվել, բայց նա այլևս չունի այդ հիվանդությունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. որքան շատ ես ձեռք մեկնում ուրիշներին, այնքան շատ է Աստված ձեռք մեկնում քեզ:

Ամուր կառչիր հույսից

«Նրա համար, ինչ որ գրվեց, մեր սովորելու համար գրվեց, որ [մեր անսասան և համառ] համբերությամբ և Գրքերի մխիթարությամբ ամուր կառչենք հույսից և փայփայենք այն» (ՀՌՈՄԵԱՅԻՆԵՐԻ 15.4):

Բոլորս քաջալերվելու կարիք ունենք: Երբեմն մեզ քաջալերանք է հարկավոր հիասթափության հորից դուրս գալու համար, բայց հաստատող մի խոսքը, հույսի մի շողը կամ «Դու կարող ես» արտահայտությունն անհրաժեշտ են մեզ ամեն ժամանակ:

Աստված քաջալերանքի լավագույն աղբյուրն է, ու մենք պետք է քաջալերանք և հույս փնտրենք Նրանից: Նա քաջալերում է մեզ Իր Հոգու միջոցով, բայց նաև քաջալերանք է խոսում Իր Խոսքի միջոցով: Շատ անգամներ, երբ քաջալերվելու կամ հույսով զորանալու կարիք եմ ունենում, դիմում եմ Աստվածաշնչին: Ես ունեմ մի քանի սիրելի հատվածներ, որոնք ընթերցում կամ որոնց շուրջ խորհում եմ, երբ զորության, աջակցության կամ քաջալերանքի կարիք եմ ունենում:

Աստծո Խոսքը լի է քաջալերանքով, և քանի դեռ ունենք Աստվածաշունչ, առանց քաջալերանքի չենք մնա: Մի թարգմանության մեջ ասվում է, որ Աստծո Խոսքը այն դեղորայքն է, որի կարիքը մենք ունենք:

Դիմի՛ր Աստծո Խոսքին, երբ քաջալերվելու կարիք ունես, երբ ցավ ես զգում, հուսախաբված ես, հիասթափված ես, շփոթված ես կամ ուժասպառ ես: Թող Նրա խոսքերը ներծծվեն քո սրտի և մտքի մեջ, մինչ սպասում ես Նրա ներկայությանը: Աստված երբեք հուսախաբ չի անի քեզ, և դու կարող ես մշտապես կառչած լինել Նրա Խոսքից, հատկապես երբ հույսի ու քաջալերանքի կարիք ունես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. նշանակություն չունի, թե ինչ ես անում այսօր. շարունակի՛ր ամուր կառչել հույսից:

Դու ունես Դատապաշտպան

«Ո՞վ է, որ Աստծո ընտրվածների դեմ մեղադիր լինի. Աստված է, որ արդարացնում է [Ով մեզ ճիշտ հարաբերության մեջ է դնում Իր հետ]: Ո՞վ է, որ առաջ գա և մեղադրի կամ ամբաստանի նրանց, ում Աստված ընտրել է» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.33):

Սուրբ Հոգին մեր Դատապաշտպանն է: *«Դատապաշտպան»* բառը հունարենում նշանակում է նա, ով կանչված է մեզ օգնելու. Սուրբ Հոգին նշանակված է Աստծո կողմից՝ մեզ աջակցելու, պաշտպանելու կամ մեր շահերն առաջ քաշելու համար:

Սուրբ Հոգին բառացիորեն կանչված է մեր կողքին լինելու և մեզ ամեն կերպ օգնելու համար: Երբ մենք պաշտպանվելու կարիք ենք ունենում, Նա պաշտպանում է մեզ, ինչպես փաստաբանը կպաշտպաներ իր վստահորդի շահերը: Լավ է իմանալ, որ մենք ստիպված չենք ինքնապաշտպանվելու, երբ մեղադրում են մեզ որևէ սխալ արարքի կամ շարժառիթի մեջ: Մենք կարող ենք օգնություն խնդրել Սուրբից և ակնկալել, որ կստանանք այն, որովհետև Նա մեր Դատապաշտպանն է: Այդ միտքը միայն բավական է մեզ մխիթարություն և քաջալերանք բերելու համար:

Շատերը բավականին ժամանակ և եռանդ են ծախսում՝ փորձելով պաշտպանել իրենց, իրենց հեղինակությունը, դիրքը, արարքները, խոսքերը և որոշումները: Իրականում մենք վատնում ենք մեր ժամանակը: Երբ ուրիշները դատում են մեզ, հնարավոր է, որ մեծ ջանքերից հետո վստահեցնենք նրանց, որ մեր սիրտը մաքուր է: Պարզապես խնդիրն այն է, որ եթե նրանք հակված են դատելու, ապա շուտով կգտնեն մեկ այլ պատճառ մեզ դատելու համար: Մեզ համար լավագույն գործելակերպը աղոթելն է և թույլ տալը, որ Սուրբ Հոգին անի Իր գործը՝ լինելով մեր Դատապաշտպանը և Պաշտպանը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Սուրբ Հոգին քո Դատապաշտպանն է և Պաշտպանը:

Սկզբում մտածիր

«… դուք պետք է հանդարտ մնաք (ձեզ զսպեք) և հապճեպ ոչինչ չանեք» (ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 19.36):

Իմաստուն քայլ չէ նվիրվել որևէ գործի՝ առանց այդ մասին Աստծուց հարցնելու և Նրա պատասխանին սպասելու: Իմաստուն քայլ չէ նաև հապճեպ որևէ բան սկսելը՝ առանց մտածելու՝ պատրա՞ստ ես դրան, թե՞ ոչ: Հաճախ մենք չափից շատ պարտավորություններ ենք վերցնում և վերջում հյուծվում ու ուժասպառ ենք լինում: Իհարկե, Աստված զորացնում է մեզ Սուրբ Հոգու միջոցով, բայց չի զորացնում մեզ, որ անենք բաներ, որոնք Իր կամքի համեմատ չեն: Նա չի զորացնի մեզ՝ հիմարություն անելու համար: Երբ նվիրվում ենք որևէ բան անելու, Աստված ակնկալում է, որ պահենք մեր խոսքը և լինենք շիտակ մարդիկ: Այսօրվա խոսքում Նա խորհուրդ է տալիս, նախքան խոսելը, մտածել: Մենք պետք է հարցնենք Աստծուց, թե ինչ է մտածում այն խնդրի վերաբերյալ, որ մենք քննարկում ենք:

Սա մի դաս է, որը ստիպված եղա սովորել: Ես խանդավառությամբ որոշումներ էի կայացնում՝ առանց Աստծուց խորհուրդ հարցնելու, և վերջում միշտ դժգոհում էի իմ ժամանակացույցի համար: Աստված ստիպված եղավ բացատրել, որ եթե սկզբում փնտրեի Իրեն և հետևեի Իր առաջնորդությանը, կկարողանայի խուսափել հուսախաբությունից և լարվածությունից:

Համոզված եմ, որ դու ունես շատ հնարավորություններ՝ ներգրավվելու այնպիսի բաների մեջ, որոնցից հաճույք ես ստանում, կամ՝ որոնք կարևոր ես համարում: Պարզապես քաջալերում եմ քեզ՝ չնվիրվել որևէ բանի՝ առանց լրջորեն մտածելու և Աստծո առաջնորդությունը փնտրելու:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մտածիր, նախքան կխոսես:

Նայի՛ր Հիսուսին

«Նայենք Հիսուսին՝ հավատքի Առաջնորդին և Աղբյուրին [մեր հավատքի շարժառիթին] և Ավարտողին [հավատքը հաստատության և կատարելության հասցնողին]» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.1,2):

Շատ բաներ, որ ցանկանում ենք և անհրաժեշտ է իմանալ Աստծո կամքի վերաբերյալ, հստակ գրված են Նրա Խոսքում: Ինչևէ, կան առանձնահատուկ հարցեր, որոնք պատասխանված չեն Սուրբ գրքում: Եթե ես աղոթում եմ որևէ բանի համար, որին Աստծո Խոսքը հստակ չի անդրադառնում, եթե ես կանգնած եմ մի որոշման առջև, որը կայացնելու համար չեմ գտնում համապատասխան սուրբգրային խոսք, ապա աղոթում եմ այսպես.

«Հա՛յր, ես սա եմ ուզում, բայց ավելի շատ ուզում եմ, որ Քո՛ կամքը լինի, ոչ թե՝ իմ: Եթե իմ խնդրանքը Քո ժամանակի մեջ չէ, կամ՝ եթե Քո կամքը չէ այն, ինչ խնդրում եմ ինձ համար, այդ դեպքում, մի՛ տուր դա ինձ, ամե՛ն»:

Մենք կարող ենք հույզերի ազդեցությամբ ինչ-որ բան ձեռնարկել՝ կարծելով թե Աստծուց է, բայց մեկնարկից հետո հնարավոր է՝ հայտնաբերենք, որ գործ ունենք լավ գաղափարի հետ, որն առանց Աստծո օգնության անհնար է իրականացնել: Բայց Աստված պարտավոր չէ ավարտել այն, ինչ Ինքը չի նախաձեռնել: Մենք կարող ենք աղոթել այն ծրագրերի համար, որ սկսում ենք, բայց իմաստ չկա բարկանալու Աստծո վրա, եթե Նա չօգնի մեզ ավարտելու դրանք: Նա պարտավոր չէ ավարտել որևէ բան, որի հեղինակն Ինքը չէ: Զգո՛ւյշ եղիր, երբ պատրաստվում ես սկսել ինչ-որ բան զուտ այն պատճառով, որ դա լավ գաղափար է թվում: Լավը հաճախ այն լավագույնի թշնամին է, որ Աստված ունի մեզ համար: Երբ որևէ գաղափար է ծագում, ժամանակ հատկացրու՝ ստուգելու Աստծո հետ: Նախքան միջոցներ ձեռնարկելը՝ ուշադրություն դարձրու՝ արդյո՞ք քո հոգին վկայություն է տալիս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հետևի՛ր, որ քո լավ գաղափարներն Աստծո գաղափարները լինեն:

Փոքր բաներ, մեծ բաներ

«Առավոտյան լսել տուր ինձ Քո ողորմությունը, որ Քեզ եմ հուսացել. ինձ ցույց տուր այն ճանապարհը, որ պիտի գնամ նրանում, որովհետև դեպի Քեզ եմ բարձրացնում իմ անձը» (ՍԱՂՄՈՍ 143.8):

Փոքր բաներում Աստծուն լսելու միջոցով ես սովորել եմ վստահել Նրան և լսել Նրա ձայնը խոշոր իրադարձություններում ու կարևոր որոշումներում: Մի անգամ Դեյվն ու ես ընտանիքի անդամների հետ պատրաստվեցինք ֆիլմ դիտել, բայց հեռակառավարման վահանակը ոչ մի կերպ չէինք գտնում: Մենք չգիտեինք ինչպես դիտել ֆիլմը՝ առանց հեռակառավարման վահանակի, ուստի բոլորս ջանասիրաբար փնտրում էինք:

Ի վերջո, ես որոշեցի աղոթել: Սրտումս ասացի. «Սուրբ Հոգի, խնդրում եմ, ցույց տուր՝ որտեղ է հեռակառավարման վահանակը»: Եվ անմիջապես մտաբերեցի լոգասենյակը, որտեղից էլ գտանք այն:

Նույնը պատահեց ինձ հետ, երբ կորցրել էի մեքենայի բանալիները: Ես փնտրել էի ամենուրեք, բայց՝ ապարդյուն: Հետո աղոթեցի և հոգումս տեսա, որ բանալիները մեքենայի առջևի նստարանին էին: Այդպես էլ իրականում կար:

Այս երկու պատմությունները Սուրբ Հոգու «գիտության խոսք» կոչվող պարգևի օրինակներ են (Ա Կորնթացիների 12.28): Աստված ինձ գիտության խոսք տվեց հեռակառավարման վահանակի և սխալ տեղում դրված բանալիների մասին: Այս և մյուս պարգևները հասանելի են նրանց, ովքեր լցված են Սուրբ Հոգով: Պարգևները զորության գերբնական շնորհներն են՝ տրված հավատացյալներին՝ ֆիզիկական կյանքը գերբնականորեն ապրելու համար:

Աստված սիրում է մեզ: Նա այնքան է հոգում մեզ համար, որ խոսում է մեզ հետ փոքր բաների մասին (իմ պարագայում Նա խոսեց հեռակառավարման վահանակի մասին միտք և ավտոմեքենայի բանալիների վերաբերյալ տեսիլք տալու միջոցով): Պարզապես մտածի՛ր, թե որքան սիրով Նա կխոսի մեզ հետ նաև մեծ բաների մասին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հիշի՛ր, Աստված այնքան է հոգում քեզ համար, որ ցանկանում է քեզ հետ խոսել նույնիսկ փոքր բաների մասին:

Խոստմունքներ, խոստմունքներ

«Եվ Աստծո խոստմունքի համար չերկմտեց անհավատությունով, այլ զորացավ հավատքով և Աստծուն փառք տվեց» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 4.20):

Ծննդոց 17.16-ում Աստված խոսեց Աբրահամի հետ և նրան ժառանգ խոստացավ: Բայց խնդիրն այն էր, որ Աբրահամը և կինը՝ Սառան, ծեր էին, *իսկապես* ծեր: Նա հարյուր տարեկան էր, իսկ Սառան՝ իննսուն, այնպես որ, նրանց վերարտադրողական տարիքը վաղուց անցել էր: Բայց Աբրահամը գիտեր, որ Աստված էր խոսել, ու վճռել էր չկենտրոնանալ իր և Սառայի՝ երեխա ունենալու ֆիզիկական անհնարինության վրա: Փոխարենը, նա իր հավատքն ամրապնդեց Աստծո խոստմունքի վրա և ամուր կառչեց այդ խոստմունքից՝ փառք տալով Աստծուն, ինչպես կարդում ենք այսօրվա խոսքում:

Թո՛ւյլ տուր կրկին ասել, որ ֆիզիկական առումով Աբրահամը հույս չուներ: Իրականում, հնարավոր չէ պատկերացնել ավելի անհույս իրավիճակ, քան այն, որ իննսուն տարին բոլորած ամուսինները կարողանան երեխա ունենալ: Բայցևայնպես, Աբրահամը շարունակում էր հուսալ. նա շարունակում էր հավատալ Աստծո խոստմունքին: Նա նայում էր իր հանգամանքներին և քաջատեղյակ էր այն տարաձայնություններին, որ ավելանում էին իր դեմ, բայց չէր հանձնվում, թեև Աստվածաշունչն ասում է, որ նրա մարմինը «մեռած» էր, ամուլ էր և «մեռած» նաև Սառայի արգանդը: Հակառակ ակնհայտ ֆիզիկական անհնարինության՝ Աբրահամը տեղի չտվեց անհավատությանը. նա չերկմտեց իր հավատքում կամ չկասկածեց Աստծո խոստմունքին: Փոխարենը «զորացավ հավատքով»՝ Աստծուն փառք տալով:

Եթե Աստված խոստմունքներ է տվել քեզ, և մինչև այժմ սպասում ես, որ իրականանան, եղի՛ր Աբրահամի նման. հիշի՛ր, թե ինչ է ասել Աստված, և շարունակի՛ր փառաբանել Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փառաբանի՛ր Աստծուն, մինչ սպասում ես, որ Նրա խոստմունքներն իրականություն դառնան:

Աստված օգնում է մեզ աճելու

«Սնապարծ, ինքնահավան, մրցակցող, վիճահարույց և իրար գրգռող ու զայրացնող չլինենք՝ միմյանց նախանձելով» (ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.26):

Յուրաքանչյուր մարդու փոխհարաբերությունն Աստծո հետ տարբեր է, տարբերվում է նաև Աստծո ձայնը լսելու յուրաքանչյուրի կարողությունը: Այնպես որ, ազա՛տ եղիր՝ հաղորդակցվելու Աստծո հետ այնպես, ինչպես Նա է առաջնորդում: Աստծո հետ փոխհարաբերությունը քրտնաջան աշխատանք կամ ինչ-որ բան կատարելու փորձ չէ. այն պարզապես խոսելն է Նրա հետ և Նրա ձայնը լսելը: Հարկ չկա, որ փորձենք լինել այնտեղ, որտեղ մեկ ուրիշն է, կամ լսել Աստծուն այնպիսի պարզությամբ և ճշգրտությամբ, ինչպես մեկ ուրիշն է լսում, որովհետև գուցե այդ անձնավորությունն Աստծո հետ վայելում է այնպիսի փոխհարաբերություն, որին հասել է տարիների ընթացքում, իսկ մենք այդքան երկար չենք քայլել Աստծո հետ: Որևէ խնդիր չկա, եթե հոգևոր առումով մենք «ավելի երիտասարդ» ենք, քան մյուսները. միևնույն է, Աստված լսում և պատասխանում է մեզ՝ անկախ մեր փորձառության չափից: Ուրիշների հետ համեմատվելը միայն դժբախտացնում է մեզ: Աստված պարզապես ուրախ է, որ մենք սովորում և աճում ենք:

Ինքդ քեզ ուրիշների հետ համեմատելը կխանգարի քո հոգևոր աճին: Աստված ճանաչում է քեզ անձամբ և ունի անհատական ծրագիր քո առաջխաղացման համար: Նա գիտի քո անցյալը, փորձառությունները, հիասթափությունները և քո ցավը: Նա նաև գիտի, թե ինչ է քեզ անհրաժեշտ՝ լիովին վերականգնվելու համար, ու դու կարող ես համոզված լինել, որ Նա աշխատանք է կատարում քո մեջ, քանի դեռ դու փնտրում ես Իրեն:

Ես ունեմ չորս զավակ, որոնք շատ տարբեր են, և չեմ ակնկալում, որ նրանք լինեն այնպիսին, ինչպիսին չեն: Ես հասկացել եմ, որ նույն վերաբերմունքն Աստված ունի մեր հանդեպ: Եղի՛ր այնպիսին, ինչպիսին կաս, հաճո՛ւյք ստացիր քեզնից և վայելի՛ր հոգևոր այն մակարդակը, որին մինչև այժմ հասել ես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մինչ շարունակում ես առաջ ընթանալ, վայելի՛ր հոգևոր այն մակարդակը, որին հասել ես:

Աստված լսում է

«Այն ժամանակ խոսեցին Տիրոջից վախեցողներն իրար հետ, և Տերը ականջ դրեց ու լսեց, և հիշատակի գիրք գրվեց Նրա առջև Տիրոջից վախեցողների համար և Նրա անունը պատվական համարողների համար» (ՄԱՂԱՔԻԱ 3.16):

Այսօրվա խոսքում ասվում է, որ Աստծուն դուր է գալիս, երբ մենք խոսում ենք այն մասին, թե որքան բարի է Նա: Երբ Նա լսում է այդ խոսակցությունները, հանում է Իր հիշատակի գիրքը և գրի առնում դրանք: Նա չի գրառում մեր տրտունջը, նվնվոցը կամ դժգոհությունը, այլ գրի է առնում փառաբանության այն խոսքերը, որոնք հնչում են մեր շուրթերից:

Մտածի՛ր՝ ինչպես կզգայիր, երբ պատահմամբ լսեիր, թե ինչպես են քո երեխաներն ասում. «Մեր մայրիկը հրաշալի՛ է: Նա աշխարհի ամենալա՛վ մայրիկն է: Մենք ունենք ամենասքանչելի՛ մայրիկն ու հայրիկը: Նրանք լավագո՛ւյն ծնողներն են»: Համոզված եմ, որ եթե այսպիսի խոսակցության վկա լինեիր, ապա անհամբեր կսպասեիր, որ օրհնեիր նրանց:

Բայց, մյուս կողմից, ի՞նչ զգացողություն կունենայիր, եթե մտնեիր սենյակ ու լսեիր, որ քո երեխաներն ասում են. «Ես այնքա՛ն եմ հոգնել մայրիկից ու հայրիկից: Նրանք երբեք ոչինչ չեն անում մեզ համար: Նրանք դրել են այս բոլոր կանոնները: Նրանք չեն ուզում, որ մենք զվարճանանք: Մայրիկը միշտ խոսում է մեզ վրա և ստիպում կատարել մեր տնային աշխատանքները: Եթե մեր ծնողներն իսկապես սիրեին մեզ, ապա կտային այն, ինչ ցանկանում ենք, այլ ոչ թե այն, ինչ, իրենց կարծիքով, լավագույնն է»:

Մեր կյանքն Աստծո հետ չի տարբերվում իմ նկարագրած այս երկու տեսարաններից: Մենք Աստծո զավակներն ենք: Նա լսում է այն, ինչ ասում ենք, և գիտի, թե ինչ կա մեր սրտում, երբ նույնիսկ ոչինչ չենք ասում: Ինչի՞ մասին է Նա ուզում, որ խոսենք: Այն մասին, թե որքա՛ն հրաշալի է Նա, որքա՛ն փառահեղ է Նա, ի՞նչ հրաշալի բաներ է Նա արել, կարող է անել և կանի: Սրտանց և լավ բաներ խոսի՛ր Աստծո մասին, ու դու կստեղծես մթնոլորտ, որտեղ Աստված կխոսի քեզ հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ասա՛ բաներ, որոնց համար ուրախ կլինես, երբ Աստված պատահմամբ լսի քեզ:

Սուրբ Հոգին բարեխոսում է մեզ համար

«Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև՝ թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք, ինչպես արժան է, չգիտենք. բայց Ինքը՝ Հոգին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.26):

Աստծո Խոսքը սովորեցնում է, որ միայն Աստծո Հոգին ճշգրտորեն գիտի Աստծո մտքերը, և այդ պատճառով մենք կարիք ունենք, որ Նա բարեխոսի մեզ համար և առաջնորդի մեր աղոթքներում:

Եթե ուզում ենք աղոթել Աստծո կամքի համաձայն, իսկ ես հավատում եմ, որ դա քո ցանկությունն է, ապա պետք է իմանանք, թե ինչ է Աստված մտածում և ցանկանում: Շատ անգամներ մենք անկարող ենք հասկանալ դա, բայց Սուրբ Հոգին կարող է, ուստի Նա բարեխոսում է մեր անունից: Ես փորձում եմ հնարավորինս ճիշտ աղոթել, բայց անչափ երախտապարտ եմ, որ Սուրբ Հոգին իմ աղոթքի գործընկերն է և աղոթում է ինձ համար: Մենք նաև Աստծո Խոսքից գիտենք, որ ինչ էլ պատահի մեր կյանքում, կարող ենք վստահել Աստծուն, որ Նա ամեն բան գործակից կանի դեպի բարին, քանի դեռ աղոթում ենք, սիրում ենք Աստծուն և փափագում Նրա կամքը:

Այսօրվա խոսքին՝ Հռոմեացիների 8.26-ին, արագորեն հաջորդում է Հռոմեացիների 8.28-ը. «Մենք համոզված ենք և գիտենք, որ [քանի որ Աստված նրանց գործընկերն է] բոլոր բաները գործակից են լինում դեպի բարին նրանց համար, ովքեր սիրում են Աստծուն և կանչված են [Նրա] մտադրությունների և նպատակի համաձայն»: Ինչպիսի՜ մխիթարություն է իմանալ, որ Աստված ուղարկել է Իր Սուրբ Հոգուն, որպեսզի օգնի մեզ ամեն ինչում, ներառյալ՝ աղոթքում: Չկա իրավիճակ, որ Նա չկարողանա գործակից դարձնել դեպի բարին: Այսօր աղոթելիս խնդրի՛ր, որ Սուրբ Հոգին օգնի քեզ: Եթե այնքան խորն է ցավդ, որ ի վիճակի ես միայն հառաչելու, ապա Սուրբ Հոգին կարող է նույնիսկ քո հառաչանքը ճշգրտորեն արտահայտել Աստծուն և բերել քո պատասխանը: Դու ունես Աստվածային Օգնական, Ով քեզ հետ է ամեն ժամանակ, այնպես որ՝ աշխատի՛ր հաճախակի կանչել Նրա անունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու կարող ես վստահել Սուրբ Հոգուն, Ով գերազանց կերպով կբարեխոսի քեզ համար:

Քո զորության աղբյուրը

«Եհովան իմ Զորությունն ու իմ Գովությունն է և իմ Փրկությունը եղավ. Նա իմ Աստվածն է, և ես կփառավորեմ Նրան. Նա իմ հոր Աստվածն է, և ես կբարձրացնեմ Նրան» (ԵԼԻՑ 15.2):

Մենք պետք է նմանվենք Մովսեսին և իսրայելցիներին, որոնց մասին կարդում ենք այսօրվա խոսքում: Ուզում եմ մատնանշել, որ Աստված ոչ միայն նրանց զորություն *տվեց* (որը տեսնում ենք ամբողջ Հին կտակարանում), այլև հենց Ինքն *էր* նրանց Զորությունը: Աստվածաշնչի թարգմանություններից մեկում՝ Ա Թագավորաց 15.29-ում, Աստված վկայակոչվում է որպես «Իսրայելի Զորությունը»: Կար ժամանակ, երբ Իսրայելը գիտեր, որ Աստված է իր Զորությունը, բայց հետո մոռանում էր դա: Երբ իսրայելցիները մոռանում էին այս կենսականորեն կարևոր ճշմարտությունը, մշտապես սասանվում էին և անհաջողություն կրում՝ որպես ազգ, ու նրանց կյանքը կործանվում էր: Երբ նրանք դառնում էին Աստծուն՝ որպես իրենց Զորության, ամեն բան պտտվում էր ի նպաստ իրենց:

Նույնիսկ եթե գիտես, որ Աստված է քո Զորությունը, դու պիտի հավատքով ընդունես դա: Ամեն առավոտ Աստծուն ասում եմ, որ ոչինչ չեմ կարող անել առանց Նրա և լիովին ապավինում եմ, որ զորացնում և կարողություն է տալիս ինձ: Երբ անհրաժեշտ լինի, Նա մեզ կզորացնի քաջալերող խոսքով կամ ուղղորդելով: Նա մեզ կզորացնի՝ իմաստության և հայտնության խոսքեր ասելով: Երբ հոգնում կամ ուժասպառ ենք լինում, Նա զորացնում է մեզ ֆիզիկապես. մենք լցվում ենք գերբնական եռանդով և ստանում ուժ՝ համբերելու դժվար մարդկանց և իրավիճակներին:

Վստահի՛ր Աստծուն, որ Նա լինի քո Զորությունը, այլ ոչ թե փորձիր ինքնուրույն լուծել քո հարցերը: Գուցե շատ մարդիկ են ապավինում քեզ, բայց դու կարող ես օգնել նրանց միայն այն ժամանակ, երբ ապավինես Աստծուն և վստահես Նրան: Այսօր հավատքով ընդունի՛ր Նրան որպես քո կյանքի Զորություն և կզարմանաս, թե ինչեր կարող ես հեշտությամբ իրականացնել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ Աստված *լինի* քո Զորությունը:

Հնազանդ սիրտ

«Այսօր քո Եհովա Աստված քեզ պատվիրում է, որ այս կանոնները և դատաստանները կատարես և դրանք պահես և կատարես ամբողջ սրտով և ամբողջ հոգով» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅ 26.16):

Աստծո հետ մտերիմ ընկերական հարաբերություն կառուցելու գրավականը՝ հնազանդ սիրտ ունենալն է: Երբ մեր սիրտը մաքուր է և զգայուն Նրա առաջնորդության հանդեպ, և պատրաստ՝ հնազանդությամբ արձագանքելու Նրան, մենք Աստծո մտերմությունը ճաշակելու և Նրա ձայնը լսելու հրաշալի դիրքում ենք: Աստված գիտի, որ մենք չենք հասնի կատարելության, քանի դեռ այս երկրագնդի վրա ենք, բայց մենք կարող ենք և պետք է ունենանք կատարյալ սիրտ, սիրտ, որը փնտրում և փափագում է անել ճիշտը՝ գոհացնելով և փառաբանելով Աստծուն:

Աստծո հետ քո ընկերությունը խորացնելիս երբեք մի՛ մոռացիր, որ քո փոխհարաբերությունը պետք է հիմնված լինի Նրա Ով լինելու վրա, այլ ոչ թե՝ ինչ կարող է անել քեզ համար: Շարունակի՛ր փնտրել Նրա ներկայությունը, ոչ թե Նրա նվերները. շարունակի՛ր փնտրել Նրա երեսը, ոչ թե Նրա ձեռքը, որովհետև Աստծո հետ կենսունակ, հասուն ընկերական հարաբերություններ ունենալու արգելքներից մեկն այն է, որ մենք կենտրոնանում ենք ոչ թե *Աստծո* վրա՝ որպես մեր ընկերոջ, այլ այն օգուտների, որ տալիս է Նրա հետ ընկերությունը: Որպես մարդկային արարածներ՝ մեզ դուր չի գալիս, երբ մարդիկ ուզում են մեզ հետ ընկերություն անել այն պատճառով, որ մենք կարող ենք նրանց տալ այն, ինչ ցանկանում են. մենք արժևորված ենք զգում, երբ գիտենք, որ մարդիկ ճիշտ սիրտ ունեն մեր հանդեպ և ուզում են մեզ հետ ընկերություն անել մեր ով լինելու և մեզ հետ հաճելի ժամանակ անցկացնելու համար: Նույն սկզբունքը վերաբերում է Աստծուն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո հետ քո փոխհարաբերությունը հիմնի՛ր Նրա Ով լինելու վրա, այլ ոչ թե՝ ինչ կարող է անել քեզ համար:

Ո՞ւմ ձայնն ես լսում

«Արդ, դիմում եմ ձեզ, եղբայրներ, և աղաչում Աստծո ողորմությունով, որ վճռականորեն նվիրաբերեք ձեր մարմինները [ներկայացնելով ձեր բոլոր անդամները և կարողությունները] որպես կենդանի զոհ՝ սուրբ (նվիրված, սրբագործված) և Աստծուն ընդունելի» (ՀՌՈՄԵԱՅԻՆԵՐԻ 12.1):

Այսօրվա խոսքին հնազանդվելու համար պետք է ընտրենք Տիրոջը տալ մեր «անդամներն ու կարողությունները»: Այլ կերպ ասած՝ մենք առաջարկում ենք Նրան մեր մարմինը, մտքերը, կարողություններն ու զգացմունքները: Մենք պետք է զգույշ լինենք, որ թույլ չտանք սատանային օգտագործել մեր միտքը: Մարդու միտքը նրա սիրելի մարտադաշտն է, և ամբողջ օրը նա մեզ վրա մտքեր է արձակում, մտքեր, որոնք կխեղդեն Աստծո ձայնը, եթե ընտրենք լսել դրանք: Այդ մտքերը սովորաբար աննկատ են, խորամանկ և խաբուսիկ, այնպես որ, մենք կարող ենք հեշտությամբ հավատալ: Սատանան ստում է, մեղադրում և ասում այն, ինչ կարող է մտածել՝ մեր ուրախությունն ու խաղաղությունը գողանալու համար, և ստիպում է, որ ամաչենք, մեղավոր և անարժան զգանք: Նա անբարեպաշտ մտքեր է բերում ուրիշների մասին: Մենք չենք կարող կանգնեցնել նրան՝ թույլ չտալով ուղարկել այդ մտքերը, բայց կարող ենք հակառակվել դրանց Քրիստոսի զորությամբ: Ապա կարող ենք մեր մտքերը զգուշորեն ուղղել Աստծուն և Նրա ասածներին:

Լինում են օրեր, երբ դիմահարդարվելու ընթացքում ստիպված եմ լինում մի կողմ նետել տասնյակից ավելի մտքեր: Բայց, գոհություն Աստծուն, որ ես գիտեմ ինչպես դա անել: Դու նույնպես կարող ես անել դա: Մտածի՛ր այսպես. երկու ձայն մրցում են քո ուշադրությունը գրավելու համար: Դու կարող ես ուշադրություն դարձնել մեկին կամ մյուսին. ընտրի՛ր լսել Աստծո ձայնը և խորհել այն ամենի շուրջ, ինչ Նա է ասում, այլ ոչ թե այն բաների, ինչ թշնամին է ասում: Երբ մեր միտքը լցնում ենք ճիշտ բաներով, սխալ բաների համար այլևս տեղ չի մնում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. տո՛ւր միտքդ Աստծուն և կենտրոնացի՛ր այն բաների վրա, ինչ Նա է ասում քեզ:

Ընտրիր հանձնվելը

«Որովհետև նրանց, որ առաջուց ճանաչեց, առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու…» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.29):

Համաձայն այսօրվա խոսքի՝ Աստծո նպատակներից մեկը մեզ Հիսուսի նման դարձնելն է: Նա ուզում է, որ մենք շարունակենք նմանվել Հիսուսին մեր մտքերով, մեր խոսքերով, ուրիշների հետ մեր վարվելակերպով, մեր անձնական կյանքով և մեր արարքներով: Մենք չենք կարող միանգամից նմանվել Հիսուսին. դա ընթացք է, որի մեջ պետք է ներգրավվենք:

Երեկվա խոսքում՝ Հռոմեացիների 12.1-ում, ասվում էր. «Արդ, դիմում եմ ձեզ, եղբայրնե՛ր, և աղաչում Աստծո ողորմությունով, որ վճռականորեն նվիրաբերեք…»: Սա նշանակում է, որ պետք է նպատակաուղղված որոշում կայացնենք նվիրվելու Աստծուն: Աստված տվել է մեզ ազատ կամք: Միակ ճանապարհը, որով լիովին կպատկանենք Իրեն, կամովի նվիրվելն է Աստծուն: Նա երբեք չի պարտադրի սիրել կամ ծառայել Իրեն: Նա կխոսի մեզ հետ, կառաջնորդի, կուղեկցի և կմղի որևէ բան անելու, բայց Իրեն հանձնվելու որոշումը միշտ կթողնի մեզ:

Աստված ստեղծել է մարդկային արարածներ, ոչ թե ռոբոտներ, ու Նա չի փորձի ծրագրավորել մեզ՝ որոշակի վարքագիծ ունենալու համար, որովհետև Նա տվել է մեզ ընտրելու ազատություն և ուզում է, որ ընտրենք Իրեն: Նա ուզում է, որ ամեն օր մեր կյանքը կամովի դնենք Իր առջև և ասենք. «Աստվա՛ծ, թող Քո՛ կամքը լինի, ոչ թե՝ իմ»: Այս կարճ, հասարակ աղոթքը չափազանց զորավոր է, երբ իսկապես նկատի ունենք դա, և նրանում ամփոփված է այն լիակատար հնազանդությունը, որ Աստված պահանջում է մեզնից: Եթե Աստված խոսում է քեզ հետ որևէ բանի մասին կամ որևէ ուղղությամբ աշխատանք է տանում, քաջալերում եմ քեզ, առանց հետաձգելու, անձնատուր լինել: Այսօր ընտրի՛ր հնազանդվել Նրա ձայնին և հանձնվել: Խնդրի՛ր Նրան լինել քո Զորությունը և հիշի՛ր, որ Նրա միջոցով դու կարող ես անել ամեն բան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ընտրի՛ր հանձնվել Աստծուն:

Համաձայնություն աղոթքում և կյանքում

«Երանի՜ խաղաղություն անողներին և պահողներին (որոնք նախանձելի երջանիկ են, հոգևորապես հաջող են, ունեն ուրախություն և բավարարվածություն Աստծո շնորհքում և փրկության մեջ՝ անկախ իրենց արտաքին պայմաններից), որ նրանք Աստծո որդիներ կկոչվեն» (ՄԱՏԹԵՈՍ 5.9):

Համաձայնության աղոթքը արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ նրանք, ովքեր համաձայնում են աղոթքում, առօրյայում ապրում են համաձայնության մեջ: Համաձայնության մեջ ապրել՝ չի նշանակում երբեք չունենալ սեփական կարծիք, այլ նշանակում է, որ փոխհարաբերություններում կա ներդաշնակություն, փոխադարձ հարգանք և պատիվ: Այն ենթադրում է այնպիսի բաների բացակայություն, որոնք բաժանում և կռիվներ են բերում, ինչպիսիք են՝ եսասիրությունը, բարկությունը, զայրույթը, նախանձը, դառնությունը կամ համեմատությունը: Համաձայնության մեջ ապրելը նման է նույն սպորտային թիմում լինելուն, երբ բոլորն աշխատում են միասին, աջակցում և քաջալերում են միմյանց, հավատում և վստահում են մեկը մյուսին, քանի որ բոլորը հետապնդում են միևնույն նպատակը և կիսում են ընդհանուր հաղթանակը:

Համաձայնության աղոթքը շատ զորավոր է, բայց այն կարող է արդյունավետությամբ կիրառվել միայն նրանց կողմից, ովքեր ջանք են թափում համաձայնության մեջ ապրելու համար: Օրինակ, եթե Դեյվն ու ես ժամանակի մեծ մասը վիճեինք ու կռվեինք, բայց հրատապ կարիք ունենալու դեպքում ցանկանայինք համաձայնության աղոթք անել, ապա այդ աղոթքը չէր գործի: Ժամանակ առ ժամանակ համաձայնելու մեջ զորություն չկա. մենք պետք է ապրենք համաձայնության մեջ: Ապրիր՝ հարգելով ուրիշներին և խաղաղություն պահպանելով նրանց հետ: Հարմարվի՛ր մարդկանց և իրավիճակներին, որպեսզի լինես խաղաղարար և խաղաղապահ (տես Հռոմեացիների 12.18):

Միաբանություն և ներդաշնակություն պահպանելը ջանքեր է պահանջում, բայց այն զորությունը, որ արձակվում է համաձայնության մեջ ապրող մարդկանց աղոթքի ժամանակ, արժե այդ ջանքերին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ավելի հեշտ է չվրդովվել, քան վրդովվելուց հետո հանդարտվել:

Հետևի՛ր սիրո օրենքին

«Որովհետև դուք ազատության համար եք կանչվել, եղբայրնե՛ր. միայն թե ձեր ազատությունը պատճառ չտա մարմնին, այլ սիրով ծառայե՛ք իրար» (ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.13):

Երբեմն, կյանքի հանգամանքներով անցնելիս, ցավեցնում ենք մարդկանց, առանց՝ նույնիսկ այդ մասին իմանալու: Ես շատ շիտակ անձնավորություն եմ, ու դա լավ որակ է, բայց նաև սովորել եմ մարդկանց հետ զրույցի բռնվելիս լինել զգայուն այն ամենի հանդեպ, ինչի միջով նրանք անցնում են: Այն, ինչ ասում ենք մեկ անգամ, կարող է բոլորովին տեղին չլինել հաջորդ անգամ: Անշուշտ, Քրիստոսը ազատ է արձակել մեզ, և մենք ունենք իրավունք լինելու այնպիսին, ինչպիսին կանք, բայց սիրո օրենքը պահանջում է, որ մեր ազատությունը չգործածվի իբրև եսասիրության պատրվակ:

Եթե զգում ենք, որ պետք է ինչ-որ բան ասենք կամ անենք, չի նշանակում, որ տվյալ իրավիճակում պետք է այդպես վարվենք: Եթե խոսում ես որևէ մեկի հետ, ով երկար ժամանակ հիվանդ է եղել, ապա լավագույն ժամանակը չէ նրան ասելու, թե որքան լավ ես զգում քեզ հաճախ: Կամ եթե խոսում ես մի անձնավորության հետ, ով հենց նոր կորցրել է աշխատանքը, ապա լավագույն ժամանակը չէ նրան պատմելու քո աշխատավարձի բարձրացման և առաջխաղացման մասին: Հիսուսը մահացավ, որ մենք կարողանանք ազատություն վայելել, սակայն Իր Խոսքում Նա նաև հստակ ասում է, որ մենք պետք է սիրով ծառայենք իրար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ուրիշներին երջանկացնելով՝ ինքդ երջանիկ կլինես:

Ինչ ես ուզում, Աստվա՛ծ

«… Եվ էլ ո՞վ է հոժար այսօր Տիրոջը նվիրվելու» (Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 29.5):

Քրիստոնյաները վտանգավոր են դառնում թշնամու համար, երբ սկսում են ապրել նվիրաբերված կյանքով, որը լիովին հանձնված է Աստծուն: Այսպիսի նվիրումը նշանակում է, որ այն, ինչ կանք և ունենք, դնում ենք Աստծո տրամադրության տակ՝ ոչինչ չպահելով մեզ: Երբ մեր անձերը նվիրում ենք Աստծուն, մենք հրավիրում ենք Նրան խոսելու մեզ հետ և գործ ունենալու մեր կյանքի ցանկացած բնագավառում, որ Նա կընտրի:

Եթե իսկապես լրջորեն տրամադրված ենք՝ առանձնանալու Աստծո գործածության համար, ապա պետք է ինքներս մեզ հարցնենք՝ կա՞ն արդյոք բնագավառներ, որտեղ մենք թաքնվում ենք Նրանից: Ի՞նչ փոքրիկ, գաղտնի անկյուններ ունենք մեր սրտում: Որո՞նք են այն բաները, որոնց վերաբերյալ ասում ենք. «Լա՛վ, Աստվա՛ծ, Դու կարող ես ունենալ ամենը, բացի *սրանից»,* կամ՝ «Օ՜, ո՛չ, Աստվա՛ծ, ես պատրաստ չեմ *դրան»,* կամ՝ «Աստվա՛ծ, դեռ մի՛ դիպչիր *այդ* փոխհարաբերությանը», կամ՝ «Տե՛ր, ինձ մի՛ խնդրիր թողնել *դա»:* Լիակատար նվիրում՝ չի նշանակում. «Տե՛ր, ես ամեն օր Աստվածաշունչ կկարդամ, սուրբգրային խոսքեր անգիր կսովորեմ, Քո Խոսքը կպահեմ իմ սրտում և ժամերով կաղոթեմ, բայց մի՛ խնդրիր, որ հրաժարվեմ այդ փոքրիկ թուլությունից»: Ո՛չ, լիակատար նվիրումը ենթադրում է հետևյալը. «Ես լիովին նվիրվում եմ Քեզ, Տե՛ր: Խոսի՛ր ինձ հետ և ասա, թե ինչ ես Դու ուզում»:

Այս ասելով՝ նկատի չունեմ, որ մենք պետք է ակնկալենք, որ Աստված կվերցնի մեզնից այն ամենը, ինչից բավականություն ենք ստանում. Նա այդպես չի վարվի: Բայց ամեն բան պետք է հասանելի լինի Նրան: Նա՛ պետք է ընտրի, թե որն է մեզ համար լավ, և որը՝ վատ, իսկ մեր գործը՝ լիովին Նրան վստահելն է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. լիովի՛ն հասանելի եղիր Աստծուն՝ ոչինչ չպահելով Նրանից:

Ուզո՞ւմ ես իմանալ Աստծո կամքը

«Ամեն բանի մեջ գոհացե՛ք, որովհետև սա է Աստծո կամքը ձեզ համար Քրիստոս Հիսուսում» (Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ 5.18):

Շատերն ուզում են լսել Աստծո ձայնը հիմնականում այն պատճառով, որ ցանկանում են իմանալ, թե որն է Նրա կամքը իրենց կյանքի համար: Երբեմն մարդիկ վերաբերում են Աստծո կամքին՝ ինչպես աշխարհի ամենաբարդ առեղծվածի, և նմանատիպ արտահայտություններ են անում. «Եթե իմանայի Աստծո կամքը, ապա կինազանդվեի», կամ՝ «Ես իսկապես ուզում եմ հետևել Աստծուն. պարզապես համոզված չեմ, թե որն է Նրա կամքը»:

Ես չեմ կարող ասել՝ արդյո՞ք Աստծո կամքն է, որ դու տեղափոխվես Մինեապոլիս, փոխես աշխատանքդ կամ գլխավոր դեր ստանձնես եկեղեցում բեմադրվող Զատկի ներկայացմանը, բայց կարող եմ մեկ հստակ ճանապարհ ցույց տալ՝ Աստծո կամքը գիտենալու և Նրան հնազանդվելու համար. եղի՛ր շնորհակալ: Եղի՛ր շնորհակալ ամեն ժամանակ՝ անկախ նրանից, թե ինչի միջով ես անցնում: Այո՛, յուրաքանչյուր հանգամանքում ունեցի՛ր գոհացող սիրտ, և դա կօգնի ավելի հստակ տեսնելու այն ուղղությունը, որով պիտի գնաս: Երբեմն գոհանալը հեշտ է, երբեմն՝ դժվար, բայց եթե զարգացնես ու պահպանես գոհության *վերաբերմունք,* ապա կլինես Աստծո կամքի մեջ: Ուշադրություն դարձրու, որ վերոհիշյալ խոսքում չի ասվում գոհանալ ամեն բանի *համար*, այլ գոհանալ ամեն բանի *մեջ:* Օրինակ, մի օր բացում ես սառնարանը և տեսնում, որ լույսն անջատված է, իսկ մթերքն այնքան սառը չէ, որքան պիտի լիներ: Հարկ չկա, որ գոհանաս Աստծուց այն բանի համար, որ սառնարանը չի աշխատում, բայց կարող ես գոհանալ, որ ունես սառնարան և մթերք, որը կարելի է դնել այնտեղ: Դու գոհանում ես, որ սառնարանը հնարավոր է վերանորոգել, և պահպանում ես գոհացող սիրտ, մինչ սպասում ես վերանորոգմանը: Քաջալերում եմ քեզ հմտանալ գոհանալու մեջ, մինչ զբաղված ես ամենօրյա գործերով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գոհացի՛ր ամեն բանում:

Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք

«Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը (բարեհաճությունը և հոգևոր օրհնությունը) և Աստծո սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը և ներկայությունը (Սուրբ Հոգով հաղորդակցումը և բաժնեկցումը) ձեր ամենի հետ լինի, ամե՛ն» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 13.13):

Նախքան խաչվելը՝ Հիսուսը խոսեց Իր աշակերտների հետ և փորձեց պատրաստել նրանց այն կյանքին, որ ունենալու էին առանց Իրեն: Նա ասաց, որ երբ գնար, Հայրը կուղարկեր մեկ ուրիշ Մխիթարիչ՝ Սուրբ Հոգուն, Ով կապրեր նրանց մեջ, Ով նրանց խորհուրդ կտար, կօգներ, կզորացներ, կպաշտպաներ, կբարեխոսեր նրանց համար և կհանդիմաներ մեղքի ու արդարության համար: Սուրբ Հոգին մտերիմ հարաբերություններ կհաստատեր նրանց հետ, կառաջնորդեր նրանց ամբողջ ճշմարտության մեջ և կփոխանցեր այն, ինչ իրենց էր պատկանում՝ որպես Հիսուս Քրիստոսի հետ ժառանգակիցների (տե՛ս Հովհաննես 16.7-15, Հռոմեացիների 8.17):

Ինչպես տեսնում ես, Աստված ուղարկեց Սուրբ Հոգուն, որպեսզի մենք մտերիմ հարաբերություններ հաստատենք Իր հետ և կարողանանք ընդունել այն, ինչ առաջարկում է մեզ: Եթե մտադիր ենք թույլ տալու, որ Սուրբ Հոգին մխիթարի մեզ, խորհուրդ տա, սովորեցնի և անի այն, ինչ Աստված խոստացել է, ապա պետք է ուշադիր լինենք Նրա ձայնին, որովհետև մեզ հետ խոսելը այն միջոցներից է, որով Նա ծառայում, առաջնորդում և օգնում է մեզ:

Մենք Սուրբ Հոգու կարիքն ունենք, և Աստված տվել է մեզ Նրան: Մեր փոխհարաբերությունն Աստծո հետ կարող է այնքան մտերիմ և այնքան խորը լինել, որքան ցանկանում ենք: Մենք պետք է ընդամենը ժամանակ հատկացնենք Նրա հետ հաղորդակցմանը, խնդրենք Նրան խոսել և բացենք մեր սիրտը Նրա խոսքերը լսելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քո փոխհարաբերությունն Աստծո հետ կարող է այնքան մտերիմ և այնքան խորը լինել, որքան ցանկանում ես:

Լռությո՛ւն, խնդրում եմ

«Գցի՛ր Տիրոջ վրա քո գործերը, և կհաստատվեն քո խորհուրդները» (ԱՌԱԿԱՅ 16.3):

Երբ խնդրում ենք Աստծուց, Նա միջամտում է մեր կյանքին: Երբ հրաժարվում ենք մեր ճանապարհներից և դադարեցնում ինքնուրույն գործելու փորձերը, Նա ղեկավարությունն Իր ձեռքն է վերցնում: Երբ է Աստված իրականում անմիջականորեն և զորավոր կերպով խոսում մեզ հետ. երբ դադարում ենք խոսելուց և սկսում ենք լսել: Մեր խնդիրներն ինքնուրույն լուծելու, դրանց համար անհանգստանալու և տանջվելու փոխարեն՝ պիտի լուռ լսենք, թե ինչ է Աստված ասում:

Այսօրվա խոսքում նշվում է «գործեր» բառը: Շատ հաճախ մեր գործերը՝ մեր մտքում կատարվող բաներն են. մեր դատողությունները, վերլուծությունները և փորձերը՝ պարզելու, թե ինչ է կատարվում, կամ ինչ պիտի անենք: Աստված ասում է, որ եթե մեր գործերը հանձնենք Իրեն, կհաստատվեն մեր խորհուրդները: Այլ կերպ՝ եթե կարողանանք հանդարտեցնել մեր մտքերը, մենք կլինենք սթափ, և Աստված կտա մեզ գաղափարներ ու կխոսի մեզ հետ նոր ռազմավարությունների և ուղղությունների մասին:

Մի անգամ ես վրդովված էի և անհանգստանում էի մի խնդրի համար, որի լուծումը չէի կարողանում գտնել: Ի վերջո լռեցի և Աստծուն հարցրի, թե ինչ պիտի անեմ: Նա պարզ պատասխան տվեց. «Արա՛ այն, ինչ կասեիր անել այն մարդուն, ով խորհրդի համար կդիմեր քեզ նման իրավիճակում»: Ես իսկույն հասկացա, թե ինչ պիտի անեմ, և վերագտա իմ խաղաղությունը. Աստված մեզ համար ունի պատասխաններ, եթե պարզապես լռենք և լսենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. միտքդ հանդա՛րտ պահիր և լռի՛ր, որպեսզի Աստված կարողանա խոսել քեզ հետ և հաստատել քո խորհուրդները:

Մխիթարիչը

«Ես՝ Ես եմ ձեզ մխիթարողը...» (ԵՍԱՅԻ 51.12):

Սուրբ Հոգու զանազան անունները նկարագրում են Նրա բնավորությունը և ծառայությունը մեր կյանքում: Նա կոչվում է մեր Ուսուցիչ, մեր Օգնական, մեր Բարեխոս, մեր Դատապաշտպան, մեզ Զորացնող և մեր Հենարան: Այս անունները հայտնում են, թե ինչ է Սուրբ Հոգին կամենում անել հավատացյալների համար: Այսօր ուզում եմ կենտրոնանալ Նրա՝ Մխիթարիչ լինելու վրա (տես Հովհաննես 14.16):

Տարիներ շարունակ ես պարբերաբար բարկանում էի ամուսնուս վրա, որովհետև նա չէր մխիթարում ինձ, երբ զգում էի դրա կարիքը: Համոզված եմ, որ նա փորձում էր անել դա, բայց այժմ հասկանում եմ, որ Աստվա՛ծ թույլ չէր տալիս Դեյվին մխիթարել ինձ, որովհետև, փոխարենը ես պետք է մխիթարություն փնտրեի Սուրբ Հոգուց. Նա կարող էր տալ ինձ այն մխիթարությունը, որի կարիքն ունեի, եթե միայն խնդրեի:

Աստված մարդկանց թույլ կտա օգնել մեզ միայն որոշ չափով, բայց ոչ ավելին: Նույնիսկ նրանք, ովքեր շատ մտերիմ են մեզ, չեն կարող մշտապես տալ այն, ինչի կարիքն ունենք: Երբ ակնկալում ենք, որ ուրիշները մեզ համար անեն այն, ինչ միայն Աստված կարող է անել, մեր սպասումները սխալ տեղ ենք ուղղում և մշտապես հիասթափվում ենք:

Աստծո մխիթարությունն առավել լավ է, քան որևէ մեկինը: Մարդը չի կարող տալ մեզ այն, ինչի կարիքն իսկապես ունենք, քանի դեռ Աստված չի նշանակել և չի օծել նրան՝ մեզ ծառայելու համար, ինչը Նա հաճախ անում է: Բայցևայնպես, Աստված է ճշմարիտ մխիթարության միակ աղբյուրը, և երբ մխիթարության կարիք ենք ունենում, պիտի գնանք Նրա մոտ և ընդունենք այն, քանի որ Նա պատրաստ է ամեն ժամանակ մխիթարել մեզ: Եթե այսօր ցավ ես զգում, քաջալերում եմ, որ Աստծուց աստվածային մխիթարություն խնդրես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փնտրի՛ր և ընդունի՛ր մխիթարություն Աստծուց:

Եղիր համարձակ

«Ամբարիշտը փախչում է, երբ ոչ ոք նրան չի հալածում, բայց արդարները առյուծի պես համարձակ են» (ԱՌԱԿԱՅ 28.1):

Մարդիկ չեն աղոթում և դժկամորեն են Աստծուց խնդրում այն, ինչի կարիքն ունեն և ինչ ցանկանում են, հիմնականում այն պատճառով, որ իրենց արժանի չեն զգում: Նրանք լավ կարծիք չունեն իրենց մասին, չեն զգում, որ բավականաչափ հոգևոր են, ուստի չեն հավատում, որ Աստված կլսի իրենց: Բոլորս ենք սխալներ գործում, և երբ սխալվում ենք, պետք է ընդունենք Աստծո ներումն ու ողորմությունը, ինչը թույլ է տալիս, որ Նրա օրհնությունները հոսեն նույնիսկ այն ժամանակ, երբ սխալվում ենք:

Երբ խոսում ենք Աստծո հետ և խնդրանքներ ներկայացնում Նրան, պետք է հասկանանք մեր դիրքը՝ որպես Աստծո որդիների և դուստրերի, որոնք արդարացված են Հիսուսի արյունով: Այլապես, հնարավոր է՝ հստակ չլսենք Նրա ձայնը կամ ճշգրտորեն չընկալենք Նրա պատասխանները: Շատ հաճախ մտածում ենք, որ մեր արդարությունը հիմնված է «ճիշտ» բաներ անելու, «ճիշտ» խոսքեր խոսելու, «ճիշտ» վարվելու կամ «ճիշտ» վերաբերմունք ունենալու վրա: Ճշմարտությունն այն է, որ մենք չենք կարող ինքներս մեզ արդարացնել: Մենք կարող ենք կրոնավոր դառնալ, բայց մեզ արդարացնել չենք կարող: Աստվածաշնչյան ճշմարիտ արդարությունը հիմնված չէ մեր ճիշտ արարքների վրա, այն հիմնված է նրա վրա, ինչ Հիսուսն արեց մեզ համար: Նրա արդարությունը դառնում է մերը հավատքի միջոցով, և երբ հավատում ենք դրան, աստիճանաբար ավելի ու ավելի ճիշտ վարքագիծ ենք դրսևորում: Մշտապես պետք է հիշենք, որ Աստված պատասխանում է մեր աղոթքներին, որովհետև Նա բարի է, ոչ թե՝ մենք ենք բարի: Մենք կարող ենք ամեն օր աղոթքով համարձակությամբ մոտենալ Նրան և ակնկալել, որ կլսենք Նրանից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված քո սխալները կվերածի հրաշքների, եթե վստահես Նրան և համարձակ աղոթես:

Ոչ մի սահմանափակում

«Աստված կարող է խոսել այս կամ այլ կերպ» (ՀՈԲ 33.14):

Ամեն օր կարիք ունենք լսելու Աստծուց տարբեր հարցերի վերաբերյալ, բայց կյանքում լինում են ճակատագրական պահեր, երբ անհրաժեշտ է իմանալ, որ իսկապես հստակ լսում ենք Նրանից: Աստված ուզում է խոսել մեզ հետ, բայց մենք պետք է զգույշ լինենք, որ չզարգացնենք կանխակալ մտածելակերպ այն մասին, թե *ինչպես* է Նա խոսում մեզ հետ: Մենք չպետք է ասենք. «Ես թույլ կտամ, որ Աստված խոսի ինձ հետ Իր Խոսքի միջոցով, բայց թույլ չեմ տա, որ խոսի երազի միջոցով»: Մենք չպիտի ասենք. «Ես թույլ կտամ, որ Աստված խոսի ինձ հետ իմ հովվի միջոցով, բայց ո՛չ իմ ընկերների միջոցով»: Ինչպես արդեն նշել եմ, Աստված ունի բազմաթիվ միջոցներ մեզ հետ խոսելու համար, բայց անկախ նրանից, թե որ միջոցն է Նա ընտրում, մենք կարող ենք ապավինել Նրան՝ մեզ ուղղություն տալու համար, որովհետև Նա կատարում է Իր խոստումը:

Միշտ չէ, որ հեշտ է իմանալ՝ լսում ենք Աստծո՞ ձայնը, թե՞ մեր մտքերի կամ հույզերի: Ոմանք ասում են, որ իրենցից տարիներ են պահանջվել, մինչև սովորել են լսել Աստծո ձայնը, բայց ես կարծում եմ, որ պատճառն այն է, որ բավականին հստակ ուսմունք չի եղել այն մասին, թե ինչպես է Աստված հաղորդակցվում Իր ժողովրդի հետ: Աստված ուզում է՝ մենք իմանանք, որ Ինքը կամենում է առաջնորդել և ուղեկցել մեզ այնպես, ինչպես բարի հովիվն է առաջնորդում իր գառներին:

Աստված խոսում է բազում կերպերով, ուստի խնդրի՛ր Նրան, որ խոսի քեզ հետ, և թո՛ւյլ տուր, որ առաջնորդի քեզ այնպես, ինչպես Ինքն է նախընտրում: Մի անգամ Աստված խոսեց մարգարեի հետ ավանակի միջոցով, այնպես որ, մենք ուզում ենք անկանխակալ լինել այն հարցում, թե ինչպես է Աստված ընտրում խոսել մեզ հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եղի՛ր անկանխակալ այն հարցում, թե ինչպես է Աստված խոսում քեզ հետ:

Աստված խոսում է հնարավորության դռների միջոցով

«...Սա է ասում Սուրբը՝ Ճշմարիտը, որ Դավթի բանալիներն ունի. որ բացում է, և ոչ ոք չի փակում, և փակում է, և ոչ ոք չի բացում» (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 3.7):

Երբեմն Աստված խոսում է՝ մեր առջև դռներ բացելով կամ փակելով: Պողոսն ու Շիղան փորձում էին գնալ Բյութանիա՝ Ավետարանը քարոզելու և այնտեղի մարդկանց ծառայելու, բայց Հիսուսի Հոգին թույլ չտվեց անել դա (տե՛ս Գործք 16.6,7): Մենք հստակ չգիտենք, թե ինչպես դա եղավ. հնարավոր է՝ նրանք պարզապես կորցրին իրենց խաղաղությունը: Ես այն կարծիքին եմ, որ նրանք իրականում փորձեցին մտնել այդ գավառը, բայց Աստված ինչ-որ կերպ ետ պահեց նրանց:

Դեյվն ու ես փորձառությունից գիտենք, որ Աստված կարող է բացել հնարավորության դռներ, որոնք ոչ ոք չի կարող փակել, և կարող է փակել դռներ, որոնք պարզապես չենք կարող բացել: Ես աղոթում եմ, որ Աստված բացի այն դռները, որոնց միջով Նա ուզում է, որ ես անցնեմ: Գուցե անկեղծորեն մտածեմ, որ ճիշտ բան եմ պատրաստվում անել, սակայն, իրականում, դա սխալ լինի. հետևաբար, ես ապավինում եմ Աստծուն՝ հավատալով, որ եթե իսկապես սխալվում եմ, Նա կփակի այն դռները, որոնց միջով փորձում եմ անցնել:

Տարիներ շարունակ փորձել եմ հասնել նրան, ինչ ցանկացել եմ, և հետևանքը եղել է ծրագրերի խափանումն ու հիասթափությունը: Շատ ավելի հաճելի է, և ավելի խաղաղ ես զգում, երբ անում ես քո մասը և վստահում Աստծուն, որ Նա կբացի այն դռները, որոնք համապատասխանում են Նրա կամքին, և ամուր կփակի այն դռները, որոնք Նրա կամքի համեմատ չեն: Աստված սիրում է քեզ, և դու կարող ես համոզված լինել, որ ճիշտ ժամանակին Նա ճիշտ դուռ կբացի քեզ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ փորձիր ինքնուրույն հասնել ինչ-որ բանի: Վստահի՛ր Աստծուն, որ Նա քեզ համար կբացի ճիշտ դռներ և կփակի սխալ դռները:

Աստծո արդար ընկերը

«Նա Քրիստոսին, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արեց, որ մենք Նրանում և Նրանով դառնանք Աստծո արդարությունը [օժտվենք այդ արդարությամբ, օրինակ լինենք այդ արդարության], [որն էլ պետք է լինենք, Նրա բարությամբ հաստատված և ընդունված և Նրա հետ ճիշտ փոխհարաբերության մեջ մտած]» (Բ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐԻ 5.21):

Ես չեմ կարող մտածել որևէ բանի մասին, որն առավել փառահեղ է, քան Աստծո ընկեր լինելը: Չկա մի բան, որ կգերադասեի լսել, քան Աստծո այս խոսքերը. «Ջոյս Մայերն Իմ ընկերն է»: Ես չեմ ուզում, որ Նա ասի. «Ջոյս Մայեր. գիտի աղոթքի բոլոր սկզբունքները, կարող է բազմաթիվ աստվածաշնչյան խոսքեր մեջբերել, աղոթելիս շատ պերճախոս է, բայց Ինձ բոլորովին չի ճանաչում, և մենք իրականում ընկերներ չենք»: Ես ուզում եմ իմանալ, որ Աստված մտածում է իմ մասին՝ որպես Իր ընկերոջ, և հավատում եմ, որ դու էլ նույնն ես ցանկանում: Հիսուս Քրիստոսի միջոցով մենք ունենք իրավունք՝ հարմարավետ զգալու Աստծո մոտ, լսելու Նրա ձայնը և համարձակությամբ մոտենալու շնորհքի Գահին և պատշաճ ժամանակին ստանալու մեզ անհրաժեշտ օգնությունը՝ մեր և ուրիշների կարիքները բավարարելու համար (տե՛ս Եբրայեցիների 4.16):

Լավագույն բանը, որ կարող ես երբևէ անել, Աստծո հետ քո ընկերությունը զարգացնելն է: Հիսուսն արդարացրեց քեզ այն արյան միջոցով, որ թափեց խաչի վրա, ուստի չկա որևէ պատճառ, որ չկարողանաս մոտենալ Աստծուն այնպես համարձակ և անկաշկանդ, ինչպես կմոտենայիր քո լավագույն ընկերոջը: Հիշի՛ր, Աստծո հետ ընկերությունը ժամանակի և ջանքերի ներդրում է պահանջում: Բայց նաև հիշի՛ր, որ քո ընկերության խորացմանը զուգընթաց զարգանում է նաև Աստծո ձայնը լսելու քո կարողությունը: Աստծո հետ հարաճուն, կենսունակ, աստիճանաբար խորացող ընկերական հարաբերությունները բնականաբար կհանգեցնեն Նրա հետ ավելի արդյունավետ հաղորդակցման:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր ջա՛նք արա աստիճանաբար խորացնել քո ընկերական հարաբերությունն Աստծո հետ:

Եղի՛ր պտուղների տեսուչ

«Ուրեմն, իրենց պտուղներից ճանաչեք նրանց» (ՄԱՏԹԵՈՍ 7.20):

Քաջալերում եմ քեզ քննել քո և մյուսների պտուղները: Մի՛ քննիր մարդկանց՝ նրանց դատելու և քննադատելու համար, այլ քննիր՝ պարզապես որոշելու, թե արդյո՞ք նրանք այն են, ինչ պնդում են: Սա «հոգիները փորձելու» կամ ստուգելու և անախորժությունից հեռու մնալու միջոցներից է: Շատերը ցավոտ փորձառություն են ունեցել, երբ խաբվել են ինչ-որ մեկի կողմից: Մենք կարծում էինք, թե ճանաչում ենք այդ անձնավորությանը, բայց պարզվեց, որ նա այն չէր, ինչ թվում էր: Այս փորձառություններից կարող ենք սովորել չտպավորվել նրանով, ինչ մարդիկ ասում են, այլ հետևել այն պտուղներին, որ նրանք դրսևորում են: Մարդը կարող է կրոնավոր երևալ և նույնիսկ ամբողջական գլուխներ մեջբերել Աստվածաշնչից, բայց եթե նա կոպիտ է մարդկանց հանդեպ, ագահ է և եսասեր, ապա այն չէ, ինչ թվում է:

Իրական քրիստոնյա լինելը շատ կարևոր է ինձ համար: Ես ուզում եմ դրսևորել այն պտուղները, որոնց մասին խոսում եմ, և համոզված եմ, որ դու էլ նույնն ես ցանկանում: Ես սիրում եմ ամեն օր նայել իմ կյանքի պտուղներին: Անիմաստ է դատել ուրիշների պտուղները, եթե ինքս չեմ կամենում նայել իմ պտուղներին: Արդյո՞ք ես համբերատար եմ: Արդյո՞ք առատաձեռն եմ: Արդյո՞ք հոգ եմ տանում ուրիշների համար և արդյո՞ք պատրաստ եմ զոհողություն անել նրանց օգնելու համար: Արդյո՞ք արագորեն հնազանդվում եմ Սուրբ Հոգու առաջնորդությանը: Մենք կխաբենք ինքներս մեզ՝ մտածելով, թե այն ենք, ինչ իրականում չենք, եթե ժամանակ չհատկացնենք՝ քննելու մեր կյանքի պտուղները:

Դավիթը խնդրեց Աստծուն քննել իրեն, իսկ Պողոսը կորնթացիներին ասաց քննել, փորձել և գնահատել իրենց՝ տեսնելու, թե արդյո՞ք հավատքի մեջ են և պատշաճ պտուղներ են դրսևորում (տե՛ս Սաղմոս 26.1, Բ Կորնթացիների 13.5,6): Եկե՛ք փորձենք և քննենք մեր ճանապարհները և խնդրենք Աստծուց հեռացնել վատ պտուղները, որպեսզի ամբողջ ծառը չախտահարվի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ամեն օր ժամանակ հատկացրու՝ քո կյանքի պտուղները քննելու համար:

Հավատք, ոչ թե զգացմունքներ

«Հավատքով ենք քայլում [վստահությամբ և սուրբ ջերմեռանդությամբ, մեր կյանքը կարգավորում ենք և վարվում այն համոզմունքով կամ հավատքով, որ ունենք Աստծո հետ մարդու փոխհարաբերության և աստվածային բաների հանդեպ], և ոչ թե երևույթով» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.7):

Աստվածաշունչը սովորեցնում է մեզ ապրել հավատքով, այլ ոչ թե մեր տեսածով և զգացածով: Սակայն, կան ժամանակներ, երբ Աստված խոսում է մեզ հետ հանգամանքների միջոցով: Օրինակ, երբ Դեյվն ու ես զգացինք, որ Աստված առաջնորդում է մեզ՝ հեռուստատեսային ծառայություն սկսելու, երկուսս էլ չգիտեինք, թե ինչպես հաղորդում պատրաստենք, և չունեինք անհրաժեշտ գումար՝ այն հեռարձակելու համար: Մենք հավատում էինք, որ Աստված խոսել էր մեր սրտում, բայց նաև կարիք ունեինք, որ Նա խոսեր մեր հանգամանքների միջոցով: Գումարի խնդիրը լուծվեց մեր ընկերների և գործընկերների ֆինանսական աջակցության շնորհիվ:

Մենք պետք է իմանանք հավատքի, հիմարության և ենթադրության տարբերությունը: Հիմարություն կլիներ, եթե մտնեինք պարտքի տակ՝ հեռուստատեսությամբ հաղորդումներ հեռարձակելու համար:

Ենթադրենք, կինն աղոթում է և զգում, որ պիտի աշխատի՝ ընտանիքի ծախսերն ինչ-որ չափով հոգալու համար: Նա որոշում է աշխատանք գտնել, բայց ունի երկու փոքր երեխա, ու եթե չկարողանա գտնել վստահելի դայակ, ապա չի կարողանա աշխատել: Դա մի հանգամանք է, որի համար Աստված պետք է հոգա, որպեսզի նա կարողանա առաջ գնալ: Եթե Աստված չլուծի դայակի հարցը, այն ժամանակ կինը ստիպված կլինի կասկածի տակ առնել աշխատանքի հետ կապված իր մտքերը: Գուցե Աստված ցույց է տալիս, որ այդ ժամանակահատվածում ընտանիքի հետ տանը մնալն ավելի լավ է, քան աշխատելը:

Մենք վարվում ենք հավատքով, բայց պետք է նաև խնդրենք Աստծուց իմաստություն՝ թե երբ լիովին անտեսենք հանգամանքները, և երբ ուշադրություն դարձնենք դրանց, որովհետև Նա օգտագործում է դրանք՝ մեզ հետ խոսելու և մեզ առաջնորդելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ապրի՛ր հավատքով, բայց հիմար մի՛ եղիր:

Ժամանակ հատկացրու Աստծո համար

«Բայց Տիրոջը ապավինողները [որոնք սպասում են և հուսացած են Տիրոջը] կփոխվեն և կնորոգվեն ուժով, թևերով վեր կսլանան [կմոտենան Աստծուն] արծիվների պես, կվազեն և չեն վաստակի, կգնան և չեն թուլանա կամ ուժասպառ չեն լինի» (ԵՍԱՅԻ 40.31):

Մենք ապրում ենք մի աշխարհում, որտեղ ժամանակը սուղ է, և այն, ինչ անում ենք, կարծես հրատապ է: Թշնամին մեծ հաջողություններ է հասել իր ծրագրում. մարդկանց զբաղված պահելով՝ նա կարողանում է խանգարել նրանց՝ աղոթելու և Խոսքի մեջ ժամանակ անցկացնելու հարցում: Մենք ապրում ենք անհավատալի ճնշման տակ և մի բանից վազում ենք մյուսը, ապա մյուսը, ապա մյուսը, մինչև հասնում ենք այն կետին, որ անտեսում ենք մեզ համար իսկապես կարևոր բաները. Աստված, ընտանիք, փոխհարաբերություններ մարդկանց հետ, առողջություն, հոգևոր կյանքի շինություն: Այնուհետև ավելի ու ավելի լարվածություն ենք զգում, իսկ դա հաղթահարելու և կյանքում կարգ ու կանոն վերահաստատելու միակ ճանապարհը Աստծուն մոտենալն է և լսելը, թե ինչ է ասում մեզ: Այո՛, մենք չենք կարող տնօրինել մեր կյանքն առանց Նրա: Մենք չենք կարող առանց Նրա հաղթահարել ճնշումը, խառնաշփոթությունն ու լարվածությունը: Մեր ամուսնությունը կտուժի, մեր երեխաները կտուժեն, մեր ֆինանսական վիճակը կվատանա, մեր փոխհարաբերությունները չեն ծաղկի, եթե ժամանակ չանցկացնենք Խոսքի և աղոթքի մեջ: Աստված կզորացնի մեզ և կարողություն կտա խաղաղ և իմաստուն կերպով տնօրինելու մեր կյանքը, եթե սկսենք աղոթել ամեն բանի համար, այլ ոչ թե *փորձենք* մի կերպ անցկացնել օրը: Երբ ժամանակ ենք տրամադրում Աստծուն և լսում ենք Նրա ձայնը, Նա նորոգում է մեր ուժը և հնարավորություն տալիս ճիշտ կազմակերպելու մեր կյանքը ու չհոգնելու: Բայց մենք պետք է սկսենք իմաստուն կերպով օգտագործել մեր ժամանակը՝ տալով Աստծուն առաջին տեղը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ժամանակ հատկացրու ամեն օր լսելու Աստծո ձայնը:

Աստծո մտքերը մարդու մտքերը չեն

«Որովհետև Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները Իմ ճանապարհները չեն, - ասում է Տերը» (ԵՍԱՅԻ 55.8):

Մի անգամ մեր որդի Դավիթը, որը ղեկավարում է մեր ծառայության համաշխարհային միսիայի բաժինը, եկավ ինձ մոտ՝ ցանկանալով խորհուրդ լսել այն մասին, թե ում վարձեր նոր աշխատատեղի համար: Նա զգում էր, որ Աստված ուզում էր, որ այդ աշխատանքն առաջարկվեր մեկին, ում նա չէր ընտրի: Նա փորձել էր աշխատանքն առաջարկել մի քանի թվացյալ որակավորված մարդկանց, բայց բոլորից էլ մերժում էր ստացել: Եվ ինձ ասաց. «Կարծես Աստված ուզում է այն անձնավորությանը, որին ես չէի ընտրի»:

Այսօրվա խոսքում Աստված ասում է. «Իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները Իմ ճանապարհները չեն» (Եսայի 55.8): Այն անձնավորությունը, որին Աստված դրեց Դավթի սրտում, միակն էր, ով անկեղծորեն հետաքրքրված էր այդ աշխատանքով: Մենք հասկացանք, որ դա ևս մեկ օրինակ էր, երբ Աստված օգնում է մեզ լսելու Իրենից բաց և փակ դռների միջոցով: Միշտ չէ, որ Աստված տալիս է աշխատանք կամ հանձնարարություն ամենաորակավորված մարդուն: Հաճախ, մարդու սրտի վերաբերմունքն ավելի կարևոր է, քան փորձառությունը կամ մասնագիտական որակավորումները, հատկապես ծառայության պաշտոններում:

Ես բացահայտել եմ, որ այն, ինչ Աստված ընտրում է անել, միշտ չէ, որ տրամաբանական է թվում. միշտ չէ, որ այն տեղավորվում է մեր դատողության շրջանակներում: Մեր միտքը միշտ չէ, որ հասկանում է այն առաջնորդությունը, որ ունենում ենք Աստծուց: Նրա խորհուրդներն իսկապես վեր են մեր խորհուրդներից: Նրա բոլոր ճանապարհներն ուղիղ են և հաստատ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թող քո հոգին առաջնորդի. մի՛ առաջնորդվիր քո դատողություններով:

Եղի՛ր սպասողական

«Ո՛վ իմ անձ, միայն սպասի՛ր Աստծուն և լուռ հնազանդվի՛ր Նրան, որովհետև Նրանից է իմ հույսը և սպասումը» (ՍԱՂՄՈՍ 62.5):

Աստծո զորությունն արձակվում է, երբ աղոթում ենք հավատքով՝ վստահելով և հավատալով Նրան, որովհետև հավատքը հաճեցնում է Նրան: Սպասողականությունը հավատքի հատկանիշ է, որն ունի իր զորությունը՝ հույսի զորությունը: Հավատքը թափանցում է հոգևոր տիրույթ և ակնկալում, որ Աստծո գերբնական զորությունը կհայտնվի և կանի այն, ինչ երկրագնդի ոչ մի մարդ չի կարող անել: Մյուս կողմից, կասկածանքը վախենում է, որ ոչ մի լավ բան տեղի չի ունենա. այն չի հաճեցնում Աստծուն, և Աստված չի կարող օրհնել այն: Մենք անզոր ենք, երբ ապրում ենք կասկածանքով, հիասթափությամբ և Աստծո հանդեպ անվստահությամբ:

Պարզապես հիշի՛ր քո կյանքից մի ժամանակ, երբ համոզված չէիր, որ Աստված կմիջամտի քո իրավիճակին: Դու անկարող էիր զորավոր աղոթքներ անելու, այնպես չէ՞: Այժմ մտաբերի՛ր մեկ այլ ժամանակ, երբ սիրտդ լիովին վստահում էր Աստծուն, և դու իսկապես հավատում էիր, որ Նա կմիջամտի քո իրավիճակին: Այդ ժամանակ աղոթելիս դու զորություն էիր զգում, այնպես չէ՞: Դա սպասողականության զորությունն է: Նույնիսկ եթե ամեն բան չի ընթանում այնպես, ինչպես հուսով էիր, որ կընթանա, վստահի՛ր, որ Աստված գիտի, թե որն է լավագույնը, և շարունակի՛ր ակնկալել, որ Նա հզոր բաներ կանի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սպասի՛ր, որ Աստված հզոր բաներ կանի քո կյանքում, և համարձակ աղոթի՛ր:

Խնդրում եմ, մի՛ եղիր կրոնավոր

«Վա՛յ ձեզ, դպիրնե՛ր և փարիսեցիներ՝ կեղծավորներ, որ մաքրում եք բաժակի և սկավառակի դրսի կողմը, բայց ներսից լիքն են հափշտակությունով և անիրավությունով» (ՄԱՏԹԵՈՍ 23.25):

Հիսուսը հաճախակի խստորեն հանդիմանում էր Իր օրերի կրոնական առաջնորդներին, որովհետև թեև նրանք բազմաթիվ բարի գործեր էին անում, բայց ունեին սխալ շարժառիթներ: Կրոնական գործերի շատությունով չի որոշվում, թե որքանով է մարդը մտերիմ Աստծո հետ: Կարծում եմ, որ կրոնական գործունեությունը կարող է մեզ ետ պահել Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություն ունենալուց և Նրա ձայնը լսելուց:

Հիսուսը մահացավ, որպեսզի մեզ համար ճանապարհ բացի՝ Աստծո հետ մտերմություն ունենալու համար, և դա պետք է միշտ առաջնահերթ լինի ցանկացած բարի գործից: Իրականում, հնարավոր է զբաղվել կրոնական գործունեությամբ, բայց սրտով հեռու լինել Աստծուց: Մենք պետք է հաճախակի «շարժառիթի ստուգում» կատարենք: Աստծո համար ավելի կարևոր է, թե *ինչու* ենք անում տվյալ բանը, քան՝ թե *ինչ* ենք անում, երբ խոսքը վերաբերում է կրոնական գործերին: Նա ասաց, որ ճշմարիտ կրոնասիրությունը սա է. այցելել, օգնել այրիներին ու որբերին և հոգ տանել իրենց նեղության մեջ (տե՛ս Հակոբոս 1.27): Աստված ավելի շատ ուզում է, որ անկեղծորեն սիրենք ցավատանջ մարդկանց և հոգ տանենք նրանց համար, քան փորձենք տպավորություն թողնել միմյանց վրա երկար, պերճախոս աղոթքներով:

Կրոնավոր մարդիկ շատ բաներ են անում ավելի շուտ իրենց հեղինակությունը բարձրացնելու, քան Աստծուն ծառայելու համար: Նրանք կարող են ներգրավվել տարբեր տեսակի բարի գործերի մեջ, բայց հազվադեպ են, եթե ոչ երբեք, իրենց սիրտը կիսում Աստծո հետ կամ թույլ տալիս, որ Նա կիսի Իր սիրտը նրանց հետ: Այս մարդիկ իրականում հազվադեպ են լսում Աստծո ձայնը կամ մտերիմ հաղորդակցում ունենում Նրա հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կենտրոնացի՛ր ոչ թե կրանավոր լինելու վրա, այլ՝ Աստծո հետ քո փոխհարաբերության:

Փնտրիր Աստծուն, ապա ծառայիր Նրան

«…ճանաչիր քո հոր Աստծուն [անձամբ ճանաչիր Նրան, ծանոթացիր Նրա հետ և հասկացիր Նրան, գնահատիր, ականջ դիր և փայփայիր Նրան] և ծառայիր Նրան կատարյալ սրտով և հոժար կամքով…» (Ա ՄՆԱՑՈՐԴԱՑ 28.9):

Հիսուսը կարեկից է այն մարդկանց, որոնք կեղեքվել են կրոնական օրենքներից և հարստահարվել դաժան կրոնական առաջնորդների կողմից: Նա ուզում է մարդկանց բժշկված և վերականգնված տեսնել, որպեսզի նրանք իմանան, որ Աստված բարի է, բազմագութ ու երկայնամիտ, որ Նա իսպառ չի բարկանում և պատրաստ է ներելու: Աստված տալիս է շնորհք՝ Իր զորությունը, որպեսզի օգնի մեզ անելու այն, ինչ չենք կարող անել մեր ուժերով: Երբ Նա ինչ-որ բան է ասում, որ անենք, մեզ անզոր չի թողնում. Նա տալիս է մեզ այն, ինչ անհրաժեշտ է դա անելու համար:

Երբ Հիսուսն ասաց. «Ինձ մո՛տ եկեք, բոլոր վաստակածներ և բեռնավորվածներ» (Մատթեոս 11.28), Նա խոսում էր հոգևորապես հյուծված մարդկանց հետ: Նա ուզում է մխիթարել նրանց, ովքեր ուժասպառ են եղել ծառայելու փորձերից և ձախողվելու մտավախությունից: Այսօր եկեղեցում կան հազարավոր մարդիկ, որոնք գերհոգնած են աշխատանքից և թերսնված են հոգևորապես: Մարդիկ ուզում են հզոր փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ, և նրանք արել են այն, ինչ, այսպես կոչված, կրոնն ասել է իրենց, սակայն շարունակում են դատարկ զգալ:

Ձգտելով հաճեցնել Աստծուն՝ նրանք Աստծուն *փնտրելը* և Նրա ձայնը լսելը փոխարինել են Աստծո համար *աշխատելով*՝ առանց մշտապես Նրանից ուղղություն ստանալու: Նա ուզում է, որ մենք անենք Արքայության գործերը, որոնք այն գործերն են, որ Նա առաջնորդում է մեզ անելու, բայց Նա չի ցանկանում, որ մենք այդքան զբաղված լինենք կրոնական գործունեությամբ՝ մտածելով, որ Նրան հաճելի են մեր զոհերը, որոնք Նա իրականում չի խնդրել, որ անենք: Ինչպե՞ս կարող են մարդիկ անել Աստծո գործերը, եթե ժամանակ չեն հատկացրել Նրանից լսելու, թե ինչ պետք է անեն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հարցրո՛ւ Աստծուց, թե ինչ է ուզում, որ անես, ապա ի սրտե արա՛ դա:

Եկե՛ք Ինձ մոտ

«Ինձ մո՛տ եկեք, բոլոր վաստակածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ [Ես կհանգստացնեմ, կսփոփեմ և կթարմացնեմ ձեր անձերը]» (ՄԱՏԹԵՈՍ 11.28):

Աստծուց լսելու ամենամեծ խոչընդոտն այն է, երբ փորձում ենք մոտենալ Նրան գործերի, ոչ թե Նրա հետ անձնական փոխհարաբերության միջոցով, որը կարող ենք ունենալ վերստին ծնվելով և Նրա հետ կանոնավոր հաղորդակցվելով: Աստված կտա քեզ այն ուժն ու զորությունը, որ անհրաժեշտ են Նրան արդարությամբ և սրբությամբ ծառայելու համար: Հիսուսը դաժան վերակացու չէ, ինչպես տեսնում ենք նաև այսօրվա խոսքում: Ըստ էության, Նա ասում է. «Ես բարի եմ: Իմ համակարգը լավն է. այն դաժան, խիստ, ծանր կամ ճնշող չէ»: Դու կարող ես հեշտությամբ գերծանրաբեռնվել՝ փորձելով անել այն, ինչ զգում ես, որ ակնկալվում է քեզնից: Բայց Հիսուսն այսօր ասում է. «Ես քեզ չեմ ծանրաբեռնի և չեմ պահանջի բաներ, որոնք ուժասպառ կանեն քեզ: Իմ ծրագիրը քեզ համար հարմար է, հաճելի և շնորհառատ»:

Երբ Աստված որևէ բան է հանձնարարում, Նա նույնպես օգնում է, որ անենք դա: Նա տալիս է մեզ կարողություն, ուժ, խաղաղություն և ուրախություն: Աստծո կամքը կատարելիս՝ Նա թարմացնում է մեզ, մինչ մենք աշխատում ենք: Իսկ եթե ծանրաբեռնված ես զգում, գուցե անում ես բաներ, որոնք Աստված չի խնդրել, որ անես, կամ, գուցե, փորձում ես անել դրանք սեփական ուժերով: Հարցրո՛ւ Նրան, թե ինչ է ուզում, որ անես և չանես, ու եղի՛ր բավականաչափ համարձակ՝ հեռացնելու այն, ինչը Նա չի օրհնում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քո ժամանակացույցից հեռացրո՛ւ այն ամենը, ինչը բարի պտուղ չի բերում:

Աստծո որդիներ և դուստրեր

«Եթե խրատին համբերեք, Աստված ձեզ հետ՝ ինչպես որդիների հետ կվարվի. որովհետև ո՞ր որդին է, որ հայրը նրան չի խրատում» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.7):

Եթե մենք ուզում ենք առաջնորդվել Աստծո Հոգով, ապա պետք է հոժարակամ լինենք աճելու և դառնալու Աստծո հասուն որդիներ ու դուստրեր: Մենք չպետք է թույլ տանք, որ մեր մարմնավոր ցանկությունները, բնական հակումները, սատանան, մեր ընկերները, մեր հույզերը կամ մեր մտքերը առաջնորդեն մեզ. մենք պետք է հետևենք միայն Աստծո Հոգուն՝ մեզ առաջնորդելու և ուղղություն տալու համար:

Որքան շատ ենք ուսումնասիրում Աստծո Խոսքը, այնքան համոզվում ենք, որ Նա չի մոլորեցնի կամ չի ուղղորդի այնտեղ, որտեղ մեզ համար լավ չի լինելու: Նույնիսկ այն բաները, որոնք սկզբում անհարմար են թվում, վերջին հաշվով կվերածվեն մեծ օրհնությունների, եթե պարզապես հետևենք Սուրբ Հոգու առաջնորդությանը: Հոգևոր հասունության մաս է կազմում Նրան հետևել սովորելը:

Աստվածաշունչը երբեմն վկայակոչում է մեզ՝ որպես «Աստծո զավակների», երբեմն էլ՝ «Աստծո որդիների»: Կա տարբերություն զավակների կամ երեխաների և հասուն որդիների ու դուստրերի միջև: Չնայած բոլորն էլ հավասարապես սիրված են, բայց հասուն որդիներն ու դուստրերը վայելում են այն ազատությունն ու արտոնությունները և ունեն այն պարտականությունները, որ երեխաները դեռևս չունեն՝ բավականաչափ հասուն չլինելու պատճառով:

Մենք մտնում ենք Աստծո արքայություն՝ որպես մանուկներ, ապա որոշ ժամանակով համարվում ենք երեխաներ, այնուհետև սովորում ենք ինչպես վարվել՝ որպես Աստծո որդիներ և դուստրեր և Քրիստոսի հետ ժառանգակիցներ: Աստված ուզում է հրաշալի բաներ անել մեզ համար, բայց մենք պետք է աճենք Նրանում, որպեսզի ընդունենք դրանք: Քաջալերում եմ քեզ անել ամեն հնարավոր բան հոգևոր հասունության ձգտելու համար: Այսօրվանից խնդրի՛ր Նրան օգնել քեզ այդ գործընթացում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. պատրաստակա՛մ եղիր աճելու և հասունանալու Աստծո մեջ:

Զո՛հ մատուցիր

«Ուստի, Նրանով ամեն ժամանակ Աստծուն փառաբանության զոհ մատուցենք, այսինքն՝ Նրան երախտագիտություն հայտնող, Նրա անունը դավանող և փառաբանող շրթունքների պտուղ» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.15):

Այսօրվա խոսքում նշված «փառաբանության զոհ մատուցել» արտահայտությունը հաճախ մեկնաբանում ենք որպես ոչ ավելի, քան փառաբանել Աստծուն այն ժամանակ, երբ ցանկություն չունենք, ու դա, անշուշտ, կարող է լինել զոհաբերության մի տեսակ: Սակայն, կարծում եմ, որ Եբրայեցիների թղթի հեղինակն իրականում հղում էր անում Հին կտակարանի զոհաբերության համակարգին, որը պահանջում էր կենդանիների արյուն՝ մարդկանց մեղքերը քավելու համար:

Մենք ապրում ենք Նոր կտակարանի ժամանակներում, երբ այլևս կարիք չկա զոհասեղանին դնելու մորթված ոչխարներ, նոխազներ և խոյեր: Փոխարենը, այն զոհը կամ զոհաբերությունը, որ Աստված այսօր ուզում է մեզնից, մեր շուրթերից դուրս եկող ճիշտ խոսքերն են: Ինչպես Հին ուխտում կենդանիների զոհաբերության ծուխը և հոտը բարձրանում էին Նրա գահի առջև, այսօր էլ Նրա առջև, իբրև զոհ, բարձրանում է մեր սրտերի փառաբանությունը: Եբրայեցիների 13.15-ում Տերն իրականում ասում էր. «Այն զոհը, որ այժմ Ես ուզում եմ, ձեր՝ երախտագիտություն հայտնող շուրթերի պտուղն է»:

Սուրբգրային այս խոսքը պետք է կիրառենք մեր կյանքում՝ օգտագործելով յուրաքանչյուր հնարավորություն՝ Աստծուն փառաբանելու համար: Մենք պետք է պատմենք մարդկանց այն հրաշալի բաները, որ Նա անում է մեզ համար. մենք պետք է շնորհակալություն հայտնենք Նրան և ասենք, որ սիրում ենք Իրեն: Մեր սրտում և մեր շուրթերով պիտի մշտապես ասենք. «Տե՛ր, ես սիրում եմ Քեզ: Անչափ շնորհակա՛լ եմ այն ամենի համար, որ անում ես իմ կյանքում: Տե՛ր, փա՜ռք եմ տալիս Քեզ, որ այսօր հոգ ես տանում ինձ վերաբերող ամեն ինչի համար»: Մենք պետք է լինենք փառաբանող մարդիկ՝ «ամեն ժամանակ» երախտապարտ լինելով Աստծուն, մշտապես փառաբանության զոհ մատուցելով Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր փառաբանի՛ր Աստծուն այնքան, որքան կարող ես:

Աշխարհում, բայց ոչ աշխարհից

«Եվ Քո խոսքը նրանց տվի, և աշխարհը նրանց ատեց, որովհետև աշխարհից չեն, ինչպես Ես էլ աշխարհից չեմ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 17.14):

Այսօրվա խոսքը սովորեցնում է, որ, որպես հավատացյալներ, մենք աշխարհում ենք, բայց աշխարհից չենք, ինչը նշանակում է, որ մենք չենք կարող իրերին նայել աշխարհիկ տեսանկյունից: Զգոնություն է հարկավոր մեր ճանապարհներում և վերաբերմունքի մեջ աշխարհին չնմանվելու համար: Չափից շատ բռնության տեսարաններ դիտելը կարող է բթացնել կամ խստացնել մեր խղճմտանքը և թուլացնել Աստծո ձայնի հանդեպ մեր զգայունակությունը: Այսօր աշխարհում շատերն անտարբեր են իրական մարդկանց տառապանքների հանդեպ, որովհետև տեսնում են ողբերգություններ, որոնք հաճախ ցուցադրվում են հեռուստատեսությամբ:

Լրատվական միջոցներով հաճախ առանց հույզերի, զուտ որպես փաստ, ներկայացվում են բացասական լուրեր կամ ողբերգական պատմություններ, որոնք դիտում և լսում ենք՝ հաճախ առանց որևէ զգացմունքի: Մենք այնքան սոսկալի բաներ ենք լսում, որ այլևս ողբերգությանը չենք արձագանքում սրտացավությամբ կամ վրդովմունքով:

Կարծում եմ, որ այս ամենը սատանայի համընդհանուր ծրագրի մասն է աշխարհի համար: Նա ուզում է, որ մենք խստասիրտ դառնանք և հուզականորեն անտարբեր լինենք այն սարսափելի իրադարձությունների հանդեպ, որ տեղի են ունենում մեր շուրջը: Նա չի ցանկանում, որ մենք հոգ տանենք տուժածների համար: Բայց, որպես քրիստոնյաներ, մենք պիտի հոգ տանենք, պիտի զգանք և պիտի աղոթենք: Ամեն անգամ, լսելով, թե ինչ է կատարվում աշխարհում, պետք է խնդրենք Աստծուց հայտնել Իր տեսանկյունը և ցույց տալ, թե ինչպես կարող ենք արձագանքել: Այնուհետև պետք է ուշադրություն դարձնենք Նրա արձագանքին և համապատասխանաբար գործենք: Ահա ճանապարհներից մեկը, որով կարող ենք լինել աշխարհում, բայց ոչ աշխարհից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. պաշտպանի՛ր աստվածային արժեքները ու երբեք փոխզիջման մի՛ գնա:

Բացի՛ր սիրտդ

«Հիսուսն արտասվեց» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 11.35):

Շատերը չունեն աստվածային հուզական ապրումներ, որովհետև անցյալում այնքան շատ ցավի են դիմացել, որ պարզապես «անջատել են» իրենց զգացմունքները: Մարդիկ տևական ժամանակ հրաժարվում են զգացմունքներ ունենալուց, որովհետև այն, ինչ կարող են հիշել զգացմունքների մասին, միայն ցավն է:

Ի վերջո, մենք պետք է լուծենք հուզական ցավի հարցը, որպեսզի թույլ տանք, որ աստվածային հույզերը կրկին հոսեն մեր կյանքի մեջ: Երբ սկսենք կրկին զգալ, մեր քարե սրտերը կփափկեն, բայց համբերություն և պատրաստակամություն են հարկավոր Աստծո օգնությամբ մեր զգացմունքները կրկին բորբոքելու համար:

Նշանակություն չունի, թե ինչն է քեզ ցավ պատճառել, կամ որքան սոսկալի է քո ցավը. մի՛ մնա խստասրտության կապանքների մեջ: Դա կբուժի միայն ախտանշանները, բայց ո՛չ ցավի արմատները: Դա քեզ չի պաշտպանի հետագա ցավից, այլ կխանգարի Աստծո ձայնը լսելու կարողությանը: Խստասրտությունն Աստծուց չէ. Նա մեզ ստեղծել է զգացմունքներով: Համաձայն այսօրվա խոսքի՝ նույնիսկ Հիսուսն արտասվեց:

Երբ թույլ տաս, որ քո ներսում զգացմունքներ առաջանան, դու խոցելի կլինես ցավի հանդեպ, բայց չի լինի այնպես, ինչպես նախկինում էր, որովհետև Հիսուս Բժիշկն ապրում է քո մեջ: Ամեն անգամ, երբ քեզ ցավեցնեն կամ վնաս պատճառեն, Նա կլինի քո կողքին և հոգ կտանի վերքերիդ մասին:

Եթե «անջատել» ես քո հույզերը, խնդրում եմ, հասկացի՛ր, որ դու փոխզիջման ես գնացել Աստծո ձայնը լսելու քո կարողության հետ: Բացի՛ր սիրտդ Նրա առջև, խնդրի՛ր Նրան փափկեցնել սիրտդ և բժշկել քեզ, որպեսզի կարողանաս լսել Նրա ձայնը և մտերիմ հաղորդակցում վայելել Նրա հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե կառուցում ես պատեր՝ մարդկանց քո կյանքից հեռու պահելու համար, ապա կապրես այդ պատերի ներսում՝ քո իսկ կառուցած բանտում:

Դառնությունը խանգարում է լսելուն

«Ամեն դառնություն և բարկություն (ցասում, մոլեգնում) և սրտմտություն և վրդովմունք (զայրույթ, թշնամություն) և վիճաբանություն (աղմկոտ վեճ, գոռգոռոց, կռիվ) և զրպարտություն (չարախոսություն, հայհոյություն) թող վեր առնվի ձեզնից՝ ամեն չարության (ոխի, չարակամության կամ որևէ տեսակի ստորության) հետ» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.31):

Աստծո հանդեպ դառնությունը հստակ խոչընդոտ է Նրա ձայնը լսելու համար: Ամեն անգամ, երբ դառնությունը փորձում է տիրել քեզ, հրաժարվի՛ր: Շատ անգամներ սատանան ստիպում է մտածել, որ մենք միակն ենք, որ դժվարության միջով ենք անցնում: Ես չեմ ուզում անկարեկից երևալ, բայց որքան էլ սոսկալի լինեն մեր խնդիրները, ինչ-որ մեկը միշտ ավելի դժվար խնդիր ունի:

Մեր ծառայության մեջ աշխատում էր մի կին, ում ամուսինը լքել էր նրան երեսունինը տարվա ամուսնությունից հետո: Նա կնոջը մի երկտող էր թողել ու հեռացել: Դա ողբերգություն էր այդ կնոջ համար: Ես այնքա՜ն ողջունեցի այդ կնոջ արած քայլը, երբ մի քանի շաբաթ անց եկավ ու ասաց. «Ջո՛յս, խնդրո՛ւմ եմ, աղոթի՛ր ինձ համար, որ չբարկանամ Աստծո վրա: Սատանան հուժկու կերպով գայթակղում է ինձ՝ ստիպելով, որ բարկությամբ լցվեմ Նրա հանդեպ: Ես չեմ կարող բարկանալ Աստծո վրա: Նա իմ միակ ընկերն է: Ես Նրա կարիքն ունեմ»:

Դառնությունը փորձում էր արմատ գցել իմ ընկերուհու սրտում, որովհետև նրա կյանքն այնպիսի ընթացք չէր ստացել, ինչպես ինքն էր ցանկացել:

Երբ ցավեցնում են մեզ, պետք է գիտակցենք, որ յուրաքանչյուր անձնավորություն ունի ազատ կամք, և մենք չենք կարող վերահսկել այդ կամքը, նույնիսկ աղոթքի միջոցով: Մենք կարող ենք աղոթել, որ Աստված խոսի այն մարդկանց հետ, որոնք մեզ ցավ են պատճառել. մենք կարող ենք խնդրել, որ Նա առաջնորդի նրանց ճիշտ ուղղությամբ, բայց, վերջին հաշվով, թողնում է, որ նրա՛նք կատարեն իրենց ընտրությունը: Եթե որևէ մեկն այնպիսի ընտրություն է կատարում, որ մեզ ցավ է պատճառում, մենք չպետք է մեղադրենք Աստծուն և դառնանանք Նրա հանդեպ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե քեզ ցավեցնեն, երբևէ մի՛ մեղադրիր Աստծուն: Նա լավագույն ընկերն է, որ դու ունես:

Ուր էլ Նա առաջնորդի

«... Հիսուսն ասաց Սիմոն Պետրոսին. «Սիմոն՝ Հովհանի՛ որդի, սիրո՞ւմ ես Ինձ դրանցից ավելի [խոհեմությամբ, նպատակաուղղված, հոգևոր նվիրումով, ինչպես մեկը սիրում է Հորը]»: Նրան ասաց. «Այո՛, Տեր, Դու գիտես, որ ես սիրում եմ Քեզ...»» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 21.15):

Այսօրվա խոսքում տեսնում ենք, որ Հիսուսը Պետրոսին հարցրեց. «Սիրո՞ւմ ես Ինձ»: Իրականում, Հիսուսը Պետրոսին ևս երկու անգամ տվեց նույն հարցը: Բայց մինչև երրորդ անգամ հարցնելը՝ Պետրոսը տրտմեց, որ Հիսուսը շարունակ նույն հարցն էր տալիս: Նա ասաց. «Այո՛, Տեր, Դու գիտես, որ սիրում եմ Քեզ»:

Այնուհետև Հովհաննես 21.18-ում բացահայտում ենք, թե ինչու էր Հիսուսը Պետրոսին տալիս այդ հարցը. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ քեզ, երբ որ պատանի էիր, ինքդ էիր գոտիդ կապում և ման գալիս, որտեղ ուզում էիր: Բայց երբ որ կծերանաս, ձեռքերդ կմեկնես, և ուրիշը գոտի կկապի և կտանի, որտեղ որ չես ուզի»:

Աստված մարտահրավեր նետեց ինձ սուրբգրային այս խոսքով, որովհետև ես ունեի իմ ծրագիրը և քայլում էի իմ ճանապարհներով: Եթե մենք իսկապես ուզում ենք Աստծո կատարյալ կամքը, ապա, հնարավոր է, Նա խնդրի մեզ անել բաներ, որոնք մեր սրտով չեն: Եթե մենք իսկապես սիրում ենք Նրան, ապա կանենք այն, ինչ Նա ասում է, և թույլ կտանք, որ Նրա ճանապարհները հաստատվեն մեր կյանքում:

Երբ Հիսուսն ասաց Հովհաննես 21.28-ում գրված խոսքերը, ես հավատում եմ, որ Նա ցույց էր տալիս, որ երբ մենք երիտասարդ, ոչ հասուն քրիստոնյաներ էինք, գնում էինք այնտեղ, որտեղ ուզում էինք: Որպես մանուկ քրիստոնյաներ՝ անում էինք այն, ինչ ցանկանում էինք: Բայց հասունանալուն զուգընթաց՝ մենք պետք է սովորենք հանձնվել Աստծուն: Պետք է հոժարակամ լինենք գնալու Նրա հետևից այնտեղ, որտեղ գուցեև չենք ցանկանում գնալ:

Շտապե՛նք հետևել Նրան, ուր էլ, որ առաջնորդի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր Աստծուն կասե՞ս հավիտենական «այո», նույնիսկ եթե չգիտես, թե ուր է առաջնորդում քեզ:

Հոգևոր իշխանություն

«Ակա՛նջ դրեք ձեր հոգևոր առաջնորդներին և հնազանդվե՛ք [մշտապես ընդունելով նրանց՝ ձեզ վրա ունեցած իշխանությունը], որ նրանք հսկում են ձեր հոգիների համար և հետևում ձեր հոգևոր բարեկեցությանը, որպես մարդիկ, որոնք հաշիվ պիտի տան: [Արե՛ք ձեր մասը՝ թույլ տալով], որ նրանք ուրախությունով անեն այն, և ոչ թե հառաչելով, որ դա ձեզ օգուտ չէ» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.17):

Այսօր հասարակությունը լցված է ապստամբությամբ, իսկ ապստամբությունը մեզ ետ է պահում Աստծուն լսելուց: Շատերը խնդիրներ ունեն իշխանության հետ: Սա վերաբերում է բոլոր բնագավառներին՝ ամուսնությանը, ընտանիքին, դպրոցին, աշխատանքին, քաղաքացիական գործունեությանը և այլն: Հնազանդություն հոգևոր իշխանությանը՝ գործնականում գոյություն չունի:

Հաճախ, երբ հովիվը փորձում է որոշակի ուղղումներ կատարել, մարդիկ հակված են վրդովվելու և եկեղեցուց հեռանալու, իսկ դա ճիշտ չէ: Պողոսը հաճախ էր ուղղում մարդկանց. դա հոգևոր առաջնորդի պարտականության մի մասն էր: Պողոսն ասաց. «Ոչ թե ձեր հավատքի վրա տիրապետում ենք, այլ ձեր ուրախությանը գործընկեր ենք…» (Բ Կորնթացիների 1.24): Եթե հասկանանք և հավատանք, որ հոգևոր իշխանությունը մեր ուրախությունը խթանելու համար է, ապա կընդունենք այն, որի արդյունքում կավելանա մեր ուրախությունը և կզարգանա նաև Աստծո ձայնը լսելու մեր կարողությունը:

Ապստամբության ոգին, որ այսօր գործում է աշխարհում, հակաքրիստոսի ոգին է՝ համաձայն Բ Թեսաղոնիկեցիների 2.7,8-ի, դա այն ոգին է, որ չի կամենում հնազանդվել որևէ մեկին: Այսօր մարդիկ ասում են, որ պահանջում են իրենց *իրավունքները*, բայց, իրականում, նրանք հաճախ պարզապես հակառակվում են ցանկացած իշխանության:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հնազա՛նդ եղիր իշխանությանը՝ որպես ծառայություն Տիրոջը, և Նա կօրհնի քեզ, ու դու կբարգավաճես:

Վերջ կրոնական օրինապաշտությանը

«Եվ երբ որ Հիսուսը քացախն առավ, ասաց. «Կատարվա՛ծ է»: Եվ գլուխը խոնարհեց՝ Հոգին ավանդեց» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 19.30):

Երբ Հիսուսը, խաչին գամված, ասաց՝ «Կատարվա՛ծ է», նկատի ուներ, որ վերջ տրվեց կրոնական օրինապաշտության համակարգին. այսուհետև ոչ միայն կրոնական քահանայապետերը կարող էին մտնել Աստծո ներկայության մեջ, այլև բոլոր մարդիկ կարող էին վայելել Նրա ներկայությունը, խոսել Նրա հետ և լսել Նրա ձայնը:

Նախքան Հիսուսը կմահանար մեր փոխարեն, Աստծո խոստմունքները ստանալու միակ ճանապարհը կատարյալ և անմեղ կյանքով ապրելն էր (լինելով չափազանց օրինապաշտ), կամ մեղքի համար արյան զոհաբերություն (մորթված կենդանիներին որպես զոհ) մատուցելն էր: Երբ Հիսուսը մահացավ և Իր արյունով գին վճարեց մարդկության մեղքերի համար, Նա դուռ բացեց յուրաքանչյուր մարդու համար՝ վայելելու Աստծո ներկայությունը: Երբ Հիսուսն ասաց՝ «Կատարվա՛ծ է», Նա հրավիրեց մեզ ոչ թե վախի, այլ ազատության կյանքի մեջ, այնպիսի կյանքի, որը կապրենք Սուրբ Հոգու առաջնորդությամբ, այլ ոչ թե կանոններով ու սահմանված կարգերով: Սովորական մարդիկ, որոնք միշտ չէ, որ ամեն բան ճիշտ են անում, կարող են ազատորեն մտնել Աստծո ներկայության մեջ:

Օրինապաշտությունից ազատ լինելը՝ կոչ չէ անօրինության կամ ծուլության: Այն պատասխանատվություն է՝ սովորելու Աստծո Խոսքը և անձամբ լսելու Նրանից, ինչն էլ Աստված մշտապես ցանկացել է ժամանակների սկզբից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված սիրում է քեզ և ցանկանում է, որ վայելես քո կյանքը:

Սուրբ Հոգու զորությունը

«Բայց դուք զորություն (ունակություն, կարողություն և ուժ) կստանաք, երբ Սուրբ Հոգին կգա ձեզ վրա...» (ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ 1.8):

Աստծո Հոգին զորություն է տալիս նրանց, ովքեր ուզում են լսել Նրա ձայնը և ծառայել Նրան: Մարդիկ գուցե ցանկանան ինչ-որ բան անել և չունենան զորություն դա անելու համար, բայց այդ զորությունը նրանք կարող են ստանալ Սուրբ Հոգու մկրտության միջոցով:

Հիշենք, որ Հիսուսը մկրտվեց՝ ջրի մեջ ընկղմվելով, բայց Նա մկրտվեց նաև Սուրբ Հոգով: Այլ կերպ ասած՝ Նա ընկղմվեց զորության մեջ, որը հնարավորություն տվեց Նրան կատարելու այն առաջադրանքը, որի համար Հայրը Նրան ուղարկել էր: Գործք 10.38-ում գրված է, որ «Նրան Աստված Սուրբ Հոգով և զորությունով օծեց», և Նա «ման եկավ՝ բարի անելով և սատանայից բոլոր հարստահարվածներին բժշկելով»:

Նախքան Հիսուսը կսկսեր Իր հանրային ծառայությունը, Նա օծվեց Սուրբ Հոգով և զորությամբ: Երբ լցվում ենք Սուրբ Հոգով, կարողանում ենք ավելի հստակ լսել Աստծո ձայնը և սպառազինվում ենք՝ Աստծո արքայության մեջ ծառայելու համար: Մենք կարողանում ենք գործածել Սուրբ Հոգու այն զորությունը (ունակությունը, կարողությունը և ուժը), որ ստացանք Նրանից, երբ Նա իջավ մեզ վրա: Այս զորությունը մեզ հնարավորություն է տալիս դառնալու Իր վկաները և անելու այն, ինչ Աստված ցանկանում է, որ անենք:

Կարևոր է տեսնել, որ Հիսուսը ոչ մի հրաշք կամ զորավոր գործ չարեց, մինչև չզորացավ Սուրբ Հոգով: Եթե Հիսուսը Հոգու զորության կարիքն ուներ, առավել ևս՝ մենք: Խնդրի՛ր, որ Նա լցնի քեզ Սուրբ Հոգու զորությամբ այսօր և ամեն օր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. զորությունը հասանելի է քեզ. ընդունի՛ր այն:

Խնդրի՛ր, որոնի՛ր, թակի՛ր

«Խնդրե՛ք, և կտրվի ձեզ. որոնե՛ք և կգտնեք. դուռը թակե՛ք, և կբացվի ձեզ համար» (ՄԱՏԹԵՈՍ 7.7):

Հիսուսն ասաց, որ խնդրենք, որոնենք և թակենք: Եթե ոչ ոք չթակի, ոչ մի դուռ չի բացվի: Եթե ոչ ոք չորոնի, ոչ ոք չի գտնի: Եթե ոչ ոք չխնդրի, ոչ ոք չի ստանա:

Ստանալու համար՝ պետք է խնդրենք, այդ պատճառով մեր աղաչանքները շատ կարևոր են: Աստծուն խնդրանքներ ներկայացնելիս մենք ուզում ենք հետևել, որ մեր աղաչանքները չգերակշռեն փառաբանությանն ու գոհությանը, որովհետև նախ պետք է գոհանանք այն ամենի համար, ինչ ունենք, ապա խնդրենք ավելին: Հիշենք, որ Փիլիպեցիների 4.6-ում մեզ պատվիրվում է. «Ոչինչ հոգս մի՛ արեք. այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով և գոհությունով՝ ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն»: Երբ մեր խնդրանքները հավասարակշռության մեջ են փառաբանության և գոհության հետ, մեր աղոթքները և աղաչանքները հզոր և հուզումնալից են դառնում: Հրաշալի է, երբ Աստծուց ինչ-որ բան ես խնդրում, հավատում ես, որ Նա կանի դա, ապա հետևում ես, թե ինչպես է իրականություն դարձնում դա քո կյանքում: Հնարավոր է՝ մեր սրտում իմանանք, որ ստացել ենք պատասխանը, և այլևս կարիք չլինի Աստծուն հիշեցնելու մեր խնդրանքը, հնարավոր է նաև՝ զգանք, որ պետք է համառորեն աղոթենք. ամեն դեպքում, մենք կարող ենք համոզված լինել, որ Աստված սիրում է տալ. Նա սիրում է պատասխանել մեր աղոթքներին Իր իմաստությամբ, Իր ժամանակին և Իր ձևով: Այնպես որ, մի՛ վարանիր խնդրել, որոնել և թակել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբեք թույլ մի՛ տուր, որ աղաչանքները գերակշռեն փառաբանությանն ու գոհությանը:

Հայրն ամենից լավ գիտի

«Սակայն առաջ Աստծո արքայությունը և Նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ» (ՄԱՏԹԵՈՍ 6.33):

Աստված ցանկանում է, որ փնտրենք արդարություն, խաղաղություն և ուրախություն, որոնք Իր արքայության անբաժանելի մասն են (տես Հռոմեացիների 14.17): Նա ուզում է, որ մենք փափագենք ունենալ ճիշտ վարքագիծ և անենք հնարավոր ամեն բան՝ դրան հասնելու համար, և այս դեպքում Նա խոստանում է ավելացնել այն բաները, որոնց կարիքն ունենք և որոնք ցանկանում ենք: Նա ուզում է, որ փնտրենք Իրեն, և երբ փնտրենք, Նա սիրով կօրհնի մեզ:

Երբ ունենում ենք որևէ ցանկություն, պարզապես պետք է խնդրենք Աստծուց և լիովին վստահենք Նրան. սակայն, մենք պետք է խուսափենք այն բանից, որ մեր ցանկությունը չվերածվի տենչանքի: Ես կարծում եմ, մենք լցվում ենք տենչանքով, երբ ինչ-որ բան այնքան շատ ենք ցանկանում, որ թվում է, թե առանց դրա երջանիկ չենք լինի: Մի անգամ ես լսեցի, թե ինչպես մի կին ասաց, որ երջանիկ չի լինի, եթե Աստված իրեն երեխաներ չտա: Լսել եմ նաև չամուսնացած կանանց, որոնք նույն մեկնաբանությունն են արել ամուսնանալու վերաբերյալ: Նման վերաբերմունքը սխալ է և վիրավորում է Աստծուն: Աստծուց բացի՝ ցանկացած բան, որ կարծում ենք՝ պետք է ունենանք երջանիկ լինելու համար, թշնամին կարող է օգտագործել մեր դեմ, ուստի հետևի՛ր, որ ցանկություններդ պահես հավասարակշռության մեջ:

Շատ ավելի լավ է աղոթել և խնդրել Աստծուց, որ հոգ տանի քեզ համար, քան տանջվել՝ փորձելով ինքնուրույն ինչ-որ բաների հասնել: Միշտ հիշի՛ր, Աստված բարի է, և Նա ուզում է բարի լինել քո հանդեպ, ուստի նայի՛ր Նրան և Նրա արքայությանը և ուրախությամբ սպասի՛ր, որ Նա կապահովի քեզ այն ամենով, ինչ անհրաժեշտ է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ցանկացած բան, որ կարծում ես՝ պետք է ունենաս երջանիկ լինելու համար, սատանան կարող է օգտագործել քո դեմ:

Վերահսկիր քո ցանկությունները

«Ո՛վ Տեր, Քո առջև է իմ ամբողջ փափագը, և իմ հառաչանքը Քեզնից ծածուկ չէ» (ՍԱՂՄՈՍ 38.9):

Աստված Իր Խոսքում ասում է, որ եթե ցնծանք Իրենով, Նա կտա մեզ մեր սրտի ծածուկ ցանկություններն ու խնդրանքները (տես Սաղմոս 37.4): Ինձ դուր է գալիս այս միտքը, որովհետև տարիներ շարունակ ես հուսախաբվել եմ՝ փորձելով ինքնուրույն հասնել իմ ուզածին: Ինչ-որ բաների ձգտելիս մենք հաճախ զլանում ենք փնտրել Աստծուն և ցնծալ՝ Նրան ճանաչելով: Շատ տարիներ առաջ, ծառայելու բուռն ցանկության պատճառով, սա պատահեց ինձ հետ, քանի որ ինքս էի թույլ տվել: Ես մտածում էի, որ աշխարհում ամենակարևոր բանը Աստծո համար ծառայելն է, բայց պետք է հասկանայի, որ դա այնքան կարևոր չէր, որքան Ինքը՝ Աստված:

Արդյո՞ք ցանկություններդ պահում ես հավասարակշռության մեջ և ամեն ինչից վեր ցնծում ես Տիրոջով: Եթե ոչ, դու կարող ես հեշտությամբ շտկել դա՝ ինքդ քեզ հիշեցնելով, թե որն է իրականում կարևորը: Բոլոր ցանկություններդ բեր Աստծո առջև, ինչպես պատվիրում է այսօրվա խոսքը, և վստահի՛ր, որ Նա կհեռացնի այն ամենը, ինչը չի համապատասխանում Իր կատարյալ կամքին:

Ոչ բոլոր ցանկություններն են Աստծուց, հետևաբար մեր բոլոր ցանկությունները չեն բավարարվի, բայց մենք կարող ենք վստահել Աստծուն, որ Նա կբավարարի այն ցանկությունները, որոնք մեզ համար գործակից կլինեն դեպի բարին: Աստված ուզում է, որ իմանաս. եթե որևէ բան ես խնդրում և չես ստանում, գուցե պատճառն այն է, որ Նա շատ ավելի լավ բան է նախատեսել քեզ համար: Այնպես որ, հանգստացի՛ր. ցնծա՛ Աստծով և թո՛ւյլ տուր, որ Նա հոգ տանի մնացած բաների համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո ծրագրերը քեզ համար ավելի լավն են, քան քո ծրագրերը:

Ինչ-որ մեկն աղոթում է քեզ համար

«Ես նրանց համար եմ աղաչում...» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 17.9):

Մենք գիտենք, որ Հիսուսն աղոթում է մեզ համար: Ղուկասի 22.32-ում Նա Պետրոսին ասում է. «Բայց Ես աղաչեցի քեզ համար»: Այսօրվա խոսքում աշակերտների վերաբերյալ Նա ասում է. «Ես նրանց համար եմ աղաչում»: Հովհաննեսի 17.20-ում Նա շարունակում է Իր խոսքը. «Բայց ոչ թե միայն նրանց համար եմ աղաչում, այլ նրանց համար էլ, որ նրանց խոսքով կհավատան Ինձ», իսկ դա վերաբերում է քեզ և ինձ:

Ի՞նչ է անում բարեխոսը: Բարեխոսն աղոթում է ուրիշների համար՝ կանգնելով այն սահմանագծում, որը գոյություն ունի Աստծո և անհատի միջև: Այդ սահմանագիծը բոլորիս բաժանում է Աստծուց: Այլ կերպ ասած՝ մենք այնքան սուրբ չենք, որքան Նա, բայց Հիսուսը կանգնած է այդ սահմանագծում՝ միացնելով Աստծուն և ինձ կամ Աստծուն և քեզ, որպեսզի կարողանանք հաղորդություն ունենալ Նրա հետ, և Նա կարողանա պատասխանել մեր աղոթքներին: Մի՞թե հրաշալի չէ իմանալ, որ քանի դեռ մեր սրտերն ուղիղ են, և մենք հավատում ենք Հիսուսին, Նա կմիջամտի մեր կյանքին, կուղղի մեզ և հոգ կտանի մեր յուրաքանչյուր անկատար արարքի համար: Ուզում եմ, որ պատկերացնես. Հիսուսը կանգնած է Աստծո գահի առջև և քո անունից աղոթում է քեզ համար: Երբ պատկերացնես դա, կկարողանաս վստահել, որ Իր բարեխոսության միջոցով Նա հոգ է տանում քո թերությունների համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Հիսուսն աղոթում է քեզ համար:

Դա նման է բանկ գնալուն

«Նրա հանդեպ մեր հավատքի շնորհիվ ունենք համարձակություն (խիզախություն և վստահություն) ազատ (ազատությամբ և առանց վախի) մոտենալու Աստծուն» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.12):

Մենք երբեք անապահով չպիտի զգանք, երբ աղոթքով մոտենում ենք Աստծուն: Նա գիտի մեր բոլոր տկարությունները և, ամեն դեպքում, սիրում է մեզ: Աստված ուզում է տալ մեզ ավելին, քան բավական է, և մենք պետք է համարձակ խնդրենք:

Աստծուն աղոթքով համարձակ մոտենալը կարելի է նմանեցնել բանկում գումար կանխիկացնելուն: Եթե գիտեմ, որ բանկում ունեմ հիսուն դոլար, որովհետև անցյալ շաբաթ այդքան գումար եմ փոխանցել իմ բանկային հաշվին, ապա առանց վարանելու կմոտենամ ինքնասպասարկման պատուհանին և կկանխիկացնեմ հիսուն դոլարանոց վճարագիրը: Ես գիտեմ, որ ունեմ այդ գումարը, այն իմն է, և կարող եմ հանել բանկից, եթե ցանկանամ: Երբ ներկայացնում եմ վճարագիրը, լիովին ակնկալում եմ, որ կստանամ իմ հիսուն դոլարը: Նույն համարձակությամբ մենք պետք է մոտենանք Աստծուն՝ ոչ թե մեր արդարության, այլ Հիսուսի հետ ժառանգակիցներ լինելու արտոնության շնորհիվ: Մենք պետք է հասկանանք, թե ինչն է հասանելի մեզ Հիսուսի շնորհիվ, և պետք է վստահ աղոթենք՝ լիովին ակնկալելով, որ կստանանք այն, ինչ պատկանում է մեզ: Աստված անհավանականորեն ապահովել է մեզ ամեն ինչով, և մենք պարզապես պետք է խնդրենք Հիսուսի անունով այն օրհնությունները, որոնք ձեռք են բերվել Նրա զոհի միջոցով: Երբ պայքարում ենք անարժանության զգացումների դեմ, պետք է դիմենք Աստծո Խոսքին և թույլ տանք, որ այն հիշեցնի մեզ մեր արտոնությունները՝ որպես Աստծո զավակների: Մենք պետք է խնդրենք Սուրբ Հոգուն օգնել մեզ համարձակությամբ մտնելու Աստծո ներկայության մեջ և ստանալու այն օգնությունը, որի կարիքն ունենք, որովհետև «Նույն Ինքը՝ Հոգին, վկայություն է տալիս մեր հոգուն, որ մենք Աստծո որդիներ ենք: Եվ եթե որդիներ՝ ապա ժառանգներ էլ, Աստծո ժառանգներ և Քրիստոսի ժառանգակիցներ…» (Հռոմեացիների 8.16,17): Նա կխոսի մեզ հետ և կհիշեցնի, որ մենք պատկանում ենք Աստծուն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու Աստծո զավակ ես, և Նա սիրով ցանկանում է բարի լինել քո հանդեպ:

Առաջին տեղը

«Որդյակներ, պահեք ձեր անձերը կուռքերից (սուտ աստված-ներից). [ամեն բանից, որ ձեր սրտում կզբաղեցնի Աստծո տեղը, ցանկացած բանից, որ կփոխարինի Նրան և ձեր կյան-քում կգրավի առաջին տեղը]» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 5.21):

Եթե դու այն անձնավորությունն ես, ով փափագում է լսել Աստ-ծուց, ապա շատ կարևոր է, որ քո կյանքում Աստծուն հատկացնես առաջին տեղը: Եթե Աստծո հանդեպ մեր փափագն ավելի ուժեղ չէ, քան որևէ բանի հանդեպ մեր ցանկությունը, ապա սատանան միշտ առավելություն կունենա մեր նկատմամբ: Հենց որ հասկա-նանք այս ճշմարտությունը, նա կկորցնի իր առավելությունը, և մենք ի վիճակի կլինենք արմատական փոփոխություններ կատա-րելու Աստծո հետ մեր փոխհարաբերության և հաղորդակցման մեջ: Երկար ժամանակ է պահանջվում, մինչև շատերն ի վերջո հասկանում են, որ իրենք Աստծո՛ կարիքն ունեն, այլ ոչ թե այն ամենի, ինչ Աստված կարող է տալ:

Եթե դու ջանասիրաբար փնտրես Աստծուն և հեռու պահես քեզ բոլոր կուռքերից, դու կպատվես Նրան, և Նա կպատվի քեզ: Նա կհայտնի Իրեն և կօրհնի քեզ այնպես, ինչպես երբևէ չէիր կարող պատկերացնել: Ինքդ քեզ անկեղծորեն հարցրու՝ կա՞ որևէ բան կամ որևէ մեկը, որն Աստծուց կարևոր է քեզ համար: Եթե կա, պարզապես խնդրի՛ր Աստծուց ներել քեզ ու շտկում կատարել քո առաջնահերթություններում: Մեր առաջնահերթությունների ցուցա-կը Նա՛ է գլխավորում, և ոչինչ պատշաճ կերպով չի գործի, մինչև Նրան չհատկացնենք Իրեն արժանի առաջին տեղը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծուն հատկացրու առաջին տեղը քո կյանքում:

Հանգստացի՛ր և ապավինի՛ր պարգևին

«Մինչ Նրա հանգստի մեջ մտնելու խոստմունքը դեռևս կա և առաջարկվում է [այսօր], եկե՛ք վախենանք, որ մի գուցե ձեզնից որևէ մեկը չմտածի, որ չափազանց ուշացել է և զրկվել դրանից» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4.1):

Արդարության մասին սովորեցնելիս՝ սիրում եմ բերել հետևյալ օրինակը, և կխնդրեմ, որ ինքդ էլ փորձես: Նստի՛ր աթոռին, ապա *փորձի՛ր* նստել աթոռին: Գիտեմ, որ անհեթեթ է հնչում, որովհետև դու արդեն նստած ես աթոռին: Երբ արդեն նստած ես աթոռին, այլևս չես կարող կրկին նստել: Նույն գաղափարը վերաբերում է արդարությանը: Հիսուսն Իր զոհի միջոցով արդարացրեց մեզ Աստծո մոտ, և մենք չենք կարող որևէ բան անել մեզ ավելի արդար դարձնելու համար: Մեր վարքագիծը կարող է բարելավվել, բայց սկզբում մենք պետք է լիովին ընդունենք մեր արդարությունը, որ տրված է Հիսուսի միջոցով: Հիսուսը նստեցնում է մեզ արդարության աթոռին, և մենք պետք է սովորենք հանգստանալ ու այլևս չփորձել լինել այն, ինչ արդեն կանք: Որքան էլ ճիշտ արարքներ գործենք, առանց Քրիստոսի երբեք չենք կարող արդարանալ: Սա հաստատելով՝ Պողոս առաքյալն աղոթում էր, որ գտնվեր Քրիստոսում և ոչ թե իր արդարությունն ունենար, որ օրենքից է, այլ այն, որ Քրիստոսի հավատքից է (տես Փիլիպեցիների 3.9):

Երբ իսկապես հասկանում ենք, որ ոչինչ չենք կարող անել մեզ արդարացնելու համար, և որ հարկ չկա որևէ բան ապացուցելու Աստծուն, կարողանում ենք հանգստանալ և ապավինել արդարության այն պարգևին, որ ստացել ենք Հիսուսից, ու դա մեզ համարձակ է դարձնում մեր աղաչանքներում և տալիս վստահություն, որ Աստված ունի ցանկություն՝ պատասխանելու մեզ: Ես գիտեմ՝ Աստված լսում կամ պատասխանում է իմ աղոթքներին ոչ թե այն պատճառով, որ ես լավն եմ, այլ՝ որ Նա է բարի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սիրի՛ր քեզ այնպիսին, ինչպիսին կաս, որովհետև Աստված Իր ձեռքով արարել է քեզ:

Դու ունես հանձնարարություն

«Որովհետև Դո՛ւ, ո՛վ Զորաց Տեր՝ Աստված Իսրայելի, Քո ծառայի ականջներին հայտնեցիր և ասացիր. «Քեզ համար տուն պիտի շինեմ». սրա համար Քո ծառան իրենում սիրտ առավ, որ այս աղոթքը Քեզ անի» (Բ ԹԱԳԱՎՈՐԱՑ 7.27):

Երբեմն Աստված մեզ «աղոթքի հանձնարարություններ» է տալիս: Դավիթ թագավորը հավատում էր, որ իրեն հանձնարարվել էր տուն կառուցել Աստծո համար, և նա պարտավորվել էր աղոթել, մինչև որ դա իրականություն դառնար: Շատ մարդկանց կամ իրավիճակների համար ես աղոթում եմ ընդամենը մեկ անգամ, և վերջ: Բայց նաև հավատում եմ, որ Աստված հանձնարարում է մեզ աղոթել ոմանց համար այնքան, մինչև ավարտին հասցնի այն, ինչ ցանկանում է անել նրանց մեջ կամ նրանց համար: Քսանհինգ տարի է՝ ես աղոթում եմ մի անձնավորության համար և կշարունակեմ աղոթել, քանի դեռ ապրում եմ, կամ՝ քանի դեռ Աստված չի ազատել ինձ այդ պարտականությունից, կամ՝ քանի դեռ այդ անձնավորությունն ապրում է, կամ՝ այն, ինչ պետք է կատարվի, դեռ իրականություն չի դարձել: Երբեմն հոգնում եմ այդ մարդու համար աղոթելուց, բայց անկախ նրանից, թե ինչպես եմ զգում, ես շարունակում եմ աղոթել: Ես գիտեմ, որ Աստված տվել է ինձ այդ հանձնարարությունը, և ես չեմ հանձնվի: Ես հավատում եմ, որ Աստված օգտագործում է իմ աղոթքները այդ մարդու կյանքի ուղին շտկելու համար:

Երբեմն էլ զգում եմ, որ ինչ-որ մեկի համար «պիտի» ավելի շատ աղոթեմ, բայց երբ աղոթում եմ, բոլորովին չեմ հիշում այդ մարդու մասին: Իսկ երբ փորձում եմ աղոթել, չեմ կարողանում շատ բան ասել, ասածս էլ չոր ու տաղտկալի է հնչում:

Եթե Աստված խոսի քեզ հետ և տա հանձնարարություն աղոթելու որևէ մեկի կամ որևէ բանի համար, դու ստիպված չես լինի «փորձել» աղոթքի ցանկություն առաջացնել քո մեջ. քո սիրտը և միտքը համակված կլինեն դրանով, և աղոթքը դյուրին կլինի: Դու նույնիսկ կաղոթես այդ մարդու կամ իրավիճակի համար՝ նախապես չծրագրելով դա: Երբ ինչ-որ մեկը քո սրտում է կամ մտքում, հավատա՛, որ լսում ես Աստծուց, և աղոթի՛ր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու չես կարող ամեն բան անել և ամեն բան լավ անել, ուստի իմացի՛ր, թե որն է քո հանձնարարությունը, և մտի՛ր Աստծո հանգստի մեջ:

Համառության ուժը

«Եվ Նա ասաց. «Թո՛ղ տուր Ինձ, որովհետև արշալույսը ծագեց»: Եվ Հակոբն ասաց. «Չեմ թողնի Քեզ, մինչև որ ինձ չօրհնես»» (ԾՆՆԴՈՑ 32.26):

Երբեմն աղոթում ես մի քանի բառ կամ մի քանի նախադասություն և այլևս չես մտածում այդ մասին: Սակայն, ուրիշ անգամներ մտաբերում ես ինչ-որ մեկին կամ ինչ-որ իրավիճակ և պարզապես հասկանում ես, որ պետք է շարունակես աղոթել: Երբ Սուրբ Հոգին կրկին ու կրկին ինչ-որ բան է հիշեցնում, հավանաբար Նա մղում է քեզ համառորեն աղոթելու, աղոթելու և չհանձնվելու:

Իմ կյանքում եղել են ցանկություններ, որոնք համապատասխանել են Աստծո կամքին, որովհետև Իր Խոսքում Նա հստակ խոսել է դրանց մասին: Երբ աղոթել եմ դրանց համար և չեմ ունեցել ճեղքում, գնացել եմ Աստծո մոտ և ասել. «Ես կրկին այստեղ եմ: Աստվա՛ծ, ես չեմ ուզում անքաղաքավարի երևալ, բայց չեմ պատրաստվում լռել, մինչև չունենամ ճեղքում»: Երբեմն ասում եմ. «Ես կրկին խնդրո՛ւմ եմ Քեզ, Տե՛ր, և մտադիր եմ խնդրելու այնքան, մինչև տեսնեմ հաղթանակ այս բնագավառում»: Ուրիշ անգամներ ես պարզապես շնորհակալություն են հայտնում Աստծուն, որ Նա գործում է, և հիշեցնում եմ Նրան, որ ես սպասում եմ հաղթանակի: Մենք պետք է լինենք Հակոբի նման և ասենք. «Քեզ չեմ թողնի, մինչև որ ինձ չօրհնես»: Աստված իսկապես օրհնեց Հակոբին և ասաց, որ այդպես արեց, որովհետև Հակոբը մի մարդ էր, ով գիտեր ինչպես մարտնչել մարդկանց և Աստծո հետ: Այլ խոսքով՝ Հակոբը համառ էր և չէր հանձնվում (տե՛ս Գաղատացիների 32.24-28):

Երբ ես գիտեմ Աստծո կամքը, կարող եմ համապատասխանաբար աղոթել ու հրաժարվել հանձնվելուց: Աստված հիանում է հաստատակամ մարդկանցով և Իր խոսքում քաջալերում է չթուլանալ կամ չձանձրանալ: Համառությունը վարձք ունի, ուստի ամո՛ւր կառչիր քո նպատակներից, այդ թվում՝ աղոթքի հանձնարարություններից: Հաստատակամության շնորհիվ Հակոբը մարտնչեց Աստծո և մարդկանց հետ և պարգևատրվեց նոր անունով, ու նրա կյանքում նոր սկիզբ դրվեց:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված հիանում է, երբ մարդիկ հարգալից համառություն են ցուցաբերում:

Ինչպես երեխա

«Եվ ասաց. «Ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե չապաշխարեք (չփոխվեք, դարձի չգաք) և չլինեք երեխաների նման (վստահող, խոնարհ, սիրող, ներող), երբեք չեք կարողանա մտնել Երկնքի արքայություն»» (ՄԱՏԹԵՈՍ 18.3):

Այսօրվա խոսքում երեխաները նկարագրվում են որպես վստահող, խոնարհ, սիրող և ներող: Պարզապես մտածիր, թե որքան ավելի կվայելեինք մեր կյանքը և Աստծո ու մարդկանց հետ մեր փոխհարաբերությունները, եթե դրսևորեինք այս չորս առաքինությունները: Ակնհայտ է, որ Հիսուսն այս որակները չափազանց կարևոր է համարում, որովհետև առանց դրանց չենք կարող մտնել Երկնքի արքայություն: Մենք չենք կարող վայելել Աստծո արքայության օգուտները և միաժամանակ պահպանել վատ վերաբերմունք:

Աստծո ձայնը լսելու հարցում չափազանց կարևոր է լինել երեխայի նման, որովհետև երեխան հավատում է այն ամենին, ինչ իրեն ասում են: Ոմանք ասում են, որ երեխաները դյուրահավատ են, քանի որ հավատում են ամեն ինչի: Բայց երեխաները դյուրահավատ չեն. կարծում եմ՝ նրանք վստահում են: Աստված չի ուզում, որ մենք դյուրահավատ կամ միամիտ լինենք. Նա ուզում է, որ մենք վստահենք: Երբեմն մեզ դավաճանում են այն մարդիկ, ում սիրում և վստահում ենք, ու մենք սկսում ենք անվստահություն տածել բոլորի հանդեպ, սակայն չենք կարող ստիպել, որ բոլորը վճարեն մեկ ուրիշի արարքի համար:

Կան մարդիկ, որոնց չի կարելի վստահել, բայց մեզ շրջապատում են նաև բազմաթիվ լավ մարդիկ, ու մենք պետք է հրաժարվենք կասկածամտության ոգով ապրելուց:

Աստված լիովին վստահելի է: Ցավոք, բոլոր մարդկանց հնարավոր չէ անվերապահորեն վստահել, բայց Աստծուն՝ կարելի է:

Աստված ուզում է, որ մոտենաս Իրեն երեխայի նման՝ լիովին վստահելով և հավատալով այն ամենին, ինչ ասում է քեզ, որովհետև Նա բացարձակապես վստահելի է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թույլ մի՛ տուր, որ մեկ կամ երկու վատ փորձառությունները վերահսկեն քո ամբողջ կյանքը:

Ինչ ես ակնկալում

«Բարի է Տերը նրանց հանդեպ, ովքեր հույսով և ակնկալիքով սպասում են Իրեն, ովքեր որոնում են Իրեն» (ԵՐԵՄԻԱՅԻ ՈՂԲԵՐԸ 3.25):

Երբ աղոթում ենք և Աստծուց խնդրում այն, ինչ ուզում ենք կամ ինչի կարիքն ունենք, դրանից հետո պետք է ակնկալությամբ սպասենք: Մենք պետք է հույսով լեցուն լինենք. հույսը ինչ-որ լավ բանի ուրախ և վստահ սպասումն է: Մանկության և պատանեկության տարիներին մշտապես հիասթափություն վերապրելով՝ իմ կյանքը նմանվեց Առակաց 15.15-ում նշված թշվառի օրերին: Վատ կանխազգացումները չէին լքում ինձ: Մեծ մասամբ ես սպասում էի վատ լուրերի: Ես կարծում եմ, որ շատերը վախենում են լավ բանի սպասելուց, որովհետև չեն ցանկանում կրկին հիասթափվել: Աստված ուզում է, որ բոլորը համառորեն լավ բաներ ակնկալեն Իրենից, որովհետև Ինքը բարի է:

Մի՛ եղիր պասիվ: Պասիվ մարդը նա է, ով ուզում է, որ լավ բաներ կատարվեն, բայց չի պատրաստվում որևէ բան անելու: Նա սպասում է, որ ինչ-որ բան տեղի ունենա: Թեև այսօրվա խոսքում մեզ հորդորվում է սպասել, բայց նաև շեշտվում է, որ *ակնկալիքով սպասենք:* Ես սիրում եմ բարձրաձայն դավանել Աստծո Խոսքը, մինչ սպասում եմ, որ Աստված գործի իմ անունից: Այն հիշեցնում է Նրա խոստմունքները և քաջալերում ինձ: Աստծո Խոսքը լի է ստեղծարար զորությամբ, և երբ հավատքով հռչակում ենք այն, դա հավասարազոր է սերմ ցանելուն, որը կբերի պտուղ:

Եթե աղոթել ես և տեսնում ես, որ ավելի երկար ես սպասում պատասխանին, քան ծրագրել էիր, անհամբեր դառնալու փոխարեն, շնորհակալությո́ւն հայտնիր Աստծուն, որ Նա գործում է: Մի՛ ընկիր դժգոհության և տրտունջի թակարդը: Ուրախացի՛ր և վստա՛հ եղիր, որ քո պատասխանը ճանապարհին է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ հուսահատվիր: Աստված գործում է, և դու շուտով կտեսնես արդյունքները:

Քո «ընդունիչը» զերծ պահիր խաբեբայից

«Տեր Եհովան ինձ ուսումնավարժ լեզու է տվել... Նա զարթեցնում է ամեն առավոտ՝ զարթեցնում է իմ ականջը, որ լսեմ աշակերտների պես: Տեր Եհովան բացել է իմ ականջը, և ես չհակառակվեցի՝ եւ չդարձա» (ԵՍԱՅԻ 50.4,5):

Աստծուց լսելու առաջին քայլը հավատալն է, որ *կարող ենք* լսել Նրանից: Շատերն ուզում են լսել Աստծուց, բայց իրականում չեն ակնկալում լսել Նրանից: Նրանք ասում են. «Ես չեմ կարող լսել Աստծուց. Նա երբեք չի խոսում ինձ հետ»:

Այս մարդիկ չափից շատ ձայնային խանգարումներ ունեն իրենց «ընդունիչներում»՝ Աստծուն հստակ լսելու համար: Նրանց ականջները խցանված են ոչ աստվածահաճո աղբյուրներից եկող ուղերձներով: Հետևաբար նրանք դժվարանում են զանազանել, թե ինչ է Աստված իրականում ասում իրենց:

Ի՞նչ օգուտ, որ Աստված խոսի մեզ հետ, եթե չենք հավատում, որ լսում ենք Նրանից: Խաբեբան՝ սատանան, չի ուզում, որ մտածենք, թե կարող ենք լսել Աստծուց: Նա չի ուզում, որ մենք հավատանք, ուստի ուղարկում է փոքրիկ դևերի, որոնք գիշեր ու ցերեկ ստում են մեզ՝ ասելով, որ չենք կարող լսել Աստծուց: Բայց մենք կարող ենք պատասխանել. «Գրվա՛ծ է, որ Աստված տվել է ինձ ընդունակություն լսելու և հնազանդվելու Իրեն» (տե՛ս Սաղմոս 40.6): Աստծո Խոսքը հռչակում է, որ բոլոր հավատացյալներն ունեն ընդունակություն լսելու և հնազանդվելու Աստծուն և առաջնորդվելու Սուրբ Հոգով:

Հիսուսը մշտապես հստակ լսում էր Հորից: Ովքեր կանգնած էին Հիսուսի շուրջը, ըստ իրենց՝ լսեցին միայն որոտմունք, երբ Աստված խոսեց Նրա հետ (տե՛ս Հովհաննես 12.29): Եթե դու խնդիր ունես Աստծուց լսելու հարցում, քեզ քաջալերում եմ՝ ամեն օր մի քանի րոպե հատկացրո՛ւ և հավատքով դավանի՛ր, որ լսում ես Աստծուց: Երբ դավանես այն, ինչին հավատում ես ամբողջ սրտով, քո միտքը կնորոգվի, և դու կսկսես ակնկալել, որ լսելու ես Աստծուց:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փոխանակ ճնշվածություն զգալու՝ պարզապես վստահի՛ր, որ Նա կխոսի քեզ հետ:

Ժամանակ հատկացրու, ժամանակ գտիր

«…կանգնիր և հասկացիր Աստծո սքանչելիքը» (ՀՈԲ 37.14):

Ես լսել եմ, թե ինչպես են բազմաթիվ մարդիկ ասում. «Աստված երբեք չի խոսում ինձ հետ»: Բայց համոզված եմ, որ ավելի հավանական է՝ նրանք երբեք չեն լսում Աստծուց, չգիտեն ինչպես լսել Նրանից կամ կորցրել են զգայունակությունը Նրա ձայնի հանդեպ: Աստված բազում փորձեր է անում՝ խոսելու մեզ հետ Իր Խոսքի, բնական նշանների, գերբնական հայտնության և ներքին վկայության միջոցով: Այս ամենին արդեն անդրադարձել եմ:

Երբեմն մենք կարծում ենք, որ չենք կարող լսել Աստծո ձայնը, որովհետև մեր սրտում կամ կյանքում կան որոշակի արգելքներ, որոնք խանգարում են Նրա ձայնը հստակ լսելուն: Դրանցից մեկը չափազանց զբաղված լինելն է: Մենք այնքան զբաղված ենք, որ ժամանակ չունենք սպասելու Աստծուն կամ լսելու Նրա ձայնը: Մենք նույնիսկ կարող ենք այնքան զբաղված լինել հոգևոր գործունեությամբ, օրինակ՝ եկեղեցական գործերով կամ ուրիշներին ծառայելով, որ մեր ժամանակացույցում տեղ չունենանք Աստծո համար: Հիշում եմ, մի շրջան այնքան քրտնաջան էի աշխատում Աստծո *համար,* որ Նրա *հետ* հաղորդակցվելու ժամանակ չունեի. սա պատահում է շատերի հետ:

Այն, ինչ անում ենք Աստծո համար, պիտի մշտապես ավելի պակաս նշանակություն ունենա, քան Նրա հետ մեր փոխհարաբերությունը: Ժամանակը մեր ձեռքում է, և մենք կարող ենք դրա հետ վարվել այնպես, ինչպես ուզում ենք, ուստի, իմաստուն կերպով օգտագործենք մեր ժամանակը: Յուրաքանչյուրին օրական տրված է ժամանակի նույն չափը, և երբ այդ ժամանակն օգտագործվեց, այլևս չենք կարող ետ բերել: Քո ժամանակացույցը կազմի՛ր այն ժամանակի շուրջ, որ պետք է անցկացնես Աստծո հետ, այլ ոչ թե փորձիր Նրան խցկել այդ ժամանակացույցի մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. իմաստուն կերպով օգտագործիր ժամանակդ, որովհետև այն հնարավոր չէ ետ բերել:

Մեզ անհրաժեշտ է այն, ինչ Հիսուսն ունի

«Եվ Նրա վրա կհանգչի Տիրոջ Հոգին՝ իմաստության և հանճարի Հոգին, խորհրդի և զորության Հոգին, գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին» (ԵՍԱՅԻ 11.2):

Աստված որոնում է մարդկանց, որոնք Իր փառքը կդրսևորեն իրենց կյանքում: Դրանք կլինեն այն մարդիկ, ովքեր կհնազանդվեն Նրան յուրաքանչյուր մանրուքի մեջ: Հնազանդությունը թույլ չի տալիս, որ ապականենք մեր խղճմտանքը, և օգնում է մեզ՝ ապրելու Աստծո փառքի համար:

Մենք գիտենք, որ այսօրվա խոսքը մարգարեություն է Հիսուսի մասին, բայց եթե Հիսուսի Հոգին բնակվում է մեր մեջ և ապրում մեր միջոցով, ապա կարող ենք ունենալ այն, ինչ Նա ունի: Մենք կարող ենք ունենալ իմաստություն, հանճար, խորհուրդ, զորություն և գիտություն:

Խնդիրները վերանում են այս ամենի ներկայությամբ: Հարկ չկա, որ ապրենք խառնաշփոթության մեջ, եթե հնազանդ ենք Հոգու առաջնորդությանը: Տերը կտա խորհուրդ, իմաստություն, հանճար և զորություն, եթե պատվենք և հնազանդվենք Իրեն:

Մարդիկ, որոնք ուզում են ունենալ հանճար, որոնք ուզում են լսել Աստծուց, որոնք ուզում են ունենալ իմաստություն և գիտություն, պետք է ակնածալից երկյուղ և պատկառանք տածեն Աստծո հանդեպ: Ունենալ ակնածալից երկյուղ՝ նշանակում է իմանալ, որ Աստված Աստված է, և որ Նա լրջորեն է տրամադրված: Նա անվանել է մեզ Իր ընկերներ, նույնիսկ՝ Իր որդիներ և դուստրեր, բայց մենք պետք է հարգենք և պատվենք Նրան ակնածալից հնազանդությամբ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այն, ինչ Աստված խնդրում է, որ անես, քո օգտին է, ուստի շտապի՛ր հնազանդվել Նրան այսօր և ամեն օր:

Աստված առանձնահատուկ բաներ է ասում

«Եթե լսեն և հնազանդվեն, իրենց օրերը բարիքով կվերջացնեն և իրենց տարիները՝ զվարճությունով» (ՀՈԲ 36.11):

Դեյվն ու ես մշտապես կարիք ունենք լսելու Աստծուց շատ բաների վերաբերյալ: Մենք պետք է լսենք Նրանից և իմանանք, թե ինչպես վարվենք մարդկանց հետ տարբեր հանգամանքներում և առանձնահատուկ իրավիճակներում: Մենք մշտապես աղոթում ենք. «Ի՞նչ պիտի անենք այս կապակցությամբ: Ինչպե՞ս վարվենք այս դեպքում»:

Յուրաքանչյուր շաբաթ հարյուրավոր բաներ են տեղի ունենում, և Դեյվն ու ես պետք է արագ կողմնորոշվենք ու աստվածահաճո որոշումներ կայացնենք: Եթե մենք չհնազանդվենք Աստծուն երկուշաբթի, ապա մինչև ուրբաթ մեր շաբաթը կվերածվի քաոսի: Այդ պատճառով, որոշել ենք, որ չենք ապրելու անհնազանդության մեջ:

Շատերին մտահոգում է Աստծո առանձնահատուկ կամքը իրենց կյանքի համար. նրանք ուզում են իմանալ, թե ինչ է Աստված ցանկանում, որ անեն: Օրինակ, նրանք հարցնում են. «Տե՞ր, ընդունե՞մ աշխատանքի այս առաջարկը, թե՞ ուզում ես, որ ուրիշ աշխատանք կատարեմ: Ուզում ես, որ սա՞ անեմ, թե՞ այս մեկը»: Ես հավատում եմ, որ Աստված կամենում է տալ մեզ առանձնահատուկ ուղղություն, որին մենք սպասում ենք, բայց Նրա համար առավել կարևոր է, որ մենք հնազանդվենք Նրա ընդհանուր կամքին, որը բացահայտում ենք Նրա Խոսքում, օրինակ՝ շնորհակալ լինել ամեն ժամանակ և ամեն իրավիճակում, երբեք չդժգոհել, մշտապես գոհ լինել, դրսևորել Հոգու պտուղը և ներել նրանց, ովքեր ցավեցնում կամ հիասթափեցնում են մեզ:

Եթե չհնազանդվենք այն ուղեցույցներին, որ Նա արդեն տվել է Սուրբ գրքում, ապա դժվարությամբ կլսենք, թե ինչ առանձնահատուկ կամք ունի Նա մեզ համար: Երբ ջանք գործադրես՝ առավել հստակ լսելու Աստծուն և հետևելու Նրա կամքին, որ ունի քո կյանքի համար, հիշի՛ր, առաջին հերթին պետք է ճանաչես Նրա ընդհանուր կամքը և հնազանդվես՝ խորը արմատներ գցելով Խոսքի մեջ: Այնուհետև, դու կարող ես առավել հեշտությամբ լսել Նրան, երբ առանձնահատուկ բաներ ասի քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. շարունակի՛ր անել այն, ինչ գիտես, և երբ չիմանաս ինչ անել, Աստված ցույց կտա:

Ինչպես ձեռք բերել իմաստություն

«Եթե եր դառնաք (ապաշխարեք) և ականջ դնեք Իմ հանդիմանությանը, ահա Ես [Իմաստությունը] Իմ հոգին կթափեմ ձեզ վրա, Իմ խոսքերը կհասկացնեմ ձեզ» (ԱՌԱԿԱՅ 1.23):

Մենք պետք է հնազանդվենք Աստծո առաջնորդությանը, երբ Նա խոսում է մեզ հետ: Հնազանդությունը չպետք է լինի հազվադեպ իրադարձություն. այն պետք է լինի մեր ապրելակերպը: Մեծ տարբերություն կա Աստծուն ամեն օր հոժարակամ հնազանդվող մարդկանց և նրանց միջև, ովքեր պատրաստ են հնազանդվելու, միայն թե դուրս գան անախորժությունից: Աստված, անշուշտ, ցույց է տալիս մարդկանց՝ ինչպես դուրս գան անախորժությունից, բայց Նա առատապես օրհնում է նրանց, ովքեր որոշում են անմնացորդ ապրել Նրա համար, և Նրան հնազանդվելը դարձնում ապրելակերպ: Ճշմարիտ խաղաղության միակ ուղին հնազանդությունն է:

Շատերը հնազանդվում են Աստծուն լուրջ հարցերում, բայց տեղյակ չեն, որ մանրուքների մեջ հնազանդվելը փոփոխություն է բերում այն ծրագրում, որ Աստված ունի իրենց համար: Աստծո Խոսքն ասում է, որ եթե հավատարիմ չլինենք քչի մեջ, ապա իշխանություն չենք ունենա շատի վրա (տես Ղուկաս 19.17): Ինչո՞ւ պիտի Աստված մեծ պատասխանատվություն վստահի մեզ, եթե մտադիր չենք հավատարիմ լինելու և անելու այն փոքրիկ բաները, որ Նա խնդրել է մեզ անել:

Հորդորում եմ, որ հնազանդ լինես Աստծուն նույնիսկ ամենափոքր բաներում: Տասնվեցերորդ դարում ապրում էր մի վանական՝ եղբայր Լորենս անունով, որը հայտնի էր նրանով, որ մշտապես քայլում էր Աստծո ներկայության մեջ: Նա ասում էր, որ հաճույքով կատարում էր իր առօրյա գործերը, որովհետև սիրում էր Աստծուն և ուզում էր հնազանդվել Նրան:

Այսօրվա խոսքում Աստված ասում է, որ կհասկացնի մեզ Իր խոսքերը, եթե լսենք Իրեն և թույլ տանք, որ ուղղի մեզ: Եթե հետևենք Նրան և հաճույքով անենք ամեն փոքր բանը, որ Նա խնդրում է, այն ժամանակ Նա կբացի մեզ Իր իմաստությունը, և մենք կունենանք ավելի շատ հայտնություն, քան երբևէ կարող էինք պատկերացնել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե հավատարիմ լինես փոքր բաներում, Աստված քեզ իշխանություն կտա մեծ բաների վրա:

Աստված շատ բան ունի ասելու

«Բայց ուրիշ էլ շատ բաներ կան, որ Հիսուսն արեց, որոնք եթե մեկ-մեկ գրված լինեին, կարծում եմ, թե աշխարհն էլ բավական չէր լինի այն գրված գրքերը տանելու» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 21.25):

Աստված շատ բան է ցանկանում հայտնել մեզ՝ որպես Իր զավակների: Եթե ուզում ենք, որ Աստծուց լսելը դառնա ապրելակերպ, ապա պետք է հնազանդ լինենք Նրան, երբ խոսի մեզ հետ: Ամեն անգամ, երբ լսում և հնազանդվում ենք, զարգանում է մեր զգայունակությունը Աստծո ձայնի և սրտի հանդեպ:

Մենք ունենք հնարավորություն, ինչպես սիրում եմ ասել, լինել *«սովորողներ ամբողջ կյանքում»:* Ես ուզում եմ ամեն օր ինչ-որ բան սովորել: Մեր ընթացքն Աստծո հետ մշտական ճանապարհորդություն է: Այն հոգնեցուցիչ է, ուստի մենք կարիք ունենք լսելու Աստծուց և առաջնորդվելու Նրա Հոգով: Սուրբ Հոգին այսօր և ամեն օր քեզ սովորեցնելու բան ունի: Մի՛ կարդա Աստվածաշունչը նրա համար, որ օրվա պարտականությունդ կատարած համարես, այլ մոտեցի՛ր դրան ինչ-որ բան սովորելու ցանկությամբ: Սուրբ Հոգին մեր Ուսուցիչն է, և ես հավատում եմ, որ Նա ամեն օր առանձնահատուկ բան ունի մեզ ասելու, եթե բացենք մեր սիրտը և լսենք: Թող քո սրտի աղաղակը լինի. «Աստվա՛ծ, ես ուզում եմ ավելի ու ավելի շատ իմանալ Քո և Քո ճանապարհների մասին և ուզում եմ անմիջապես հնազանդվել Քեզ»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու մշտապես սովորում և աճում ես Քրիստոսում: Նայի՛ր, թե որքան ճանապարհ ես անցել, ոչ թե՝ որքան հեռու դեռ պետք է գնաս:

Սիրում ես Նրան, ուրեմն՝ հնազանդվիր

«Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահեք» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.15):

Այսօրվա խոսքում Հիսուսն ասում է, որ մեր սերը Նրա հանդեպ ցուցաբերում ենք՝ հնազանդվելով Նրա ասածներին: Երբ մտածում եմ Աստծուց լսելու մասին, վերադառնում եմ այն փաստին, որ մենք հստակ չենք լսի Նրանից, եթե չհնազանդվենք Նրան մեր գիտեցածի մեջ: Առանց հնազանդության մեր խիղճը մաքուր չէ: Քանի դեռ մեր խիղճը մաքուր չէ, մենք չենք կարող ունենալ հավատք և վստահություն (տե՛ս Ա Հովհաննես 3.20-24):

Քրիստոնյայի նպատակները պիտի միանգամայն տարբեր լինեն անհավատի նպատակներից: Ովքեր չեն ծառայում Աստծուն, ձգտում են հարստության, դիրքի, իշխանության և այլ բաների, իսկ մեր՝ քրիստոնյաներիս նպատակը պիտի լինի Աստծուն հնազանդվելը և փառավորելը: Տարիներ շարունակ ես հաճախել եմ եկեղեցի՝ այդքան մեծ ուշադրություն չդարձնելով Աստծուն հնազանդվելուն: Ես հետևում էի կրոնական դոգմաներին՝ հույս ունենալով այդպես արժանանալ Աստծո հավանությանը, սակայն հաստատուն որոշում չէի կայացրել ամեն օր առաջնորդվել Նրա սկզբունքներով: Ամբողջ կյանքդ դի՛ր Աստծո առջև և հրավիրի՛ր Սուրբ Հոգուն, որ լինի քո կյանքի Ուսուցիչը: Արա՛ լավագույնը Նրա ցուցումներին հնազանդվելու համար, իսկ երբ ձախողվես, ներողությո՛ւն խնդրիր և կրկի՛ն սկսիր: Ժամանակ և եռանդ մի՛ վատնիր՝ մեղավոր զգալու համար, որովհետև Քրիստոսում մենք միշտ ունենք նոր սկիզբ: Աղոթի՛ր հնազանդության համար, ուսումնասիրի՛ր այն և ամեն օր հետամո՛ւտ եղիր դրան: Այսկերպ վարվելով՝ ցուցաբերում ենք մեր սերն Աստծո հանդեպ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. որքան էլ փորձում ենք, միևնույն է, սխալվում ենք, բայց քանի դեռ հրաժարվում ենք հանձնվելուց, մենք կհասնենք մեր նպատակներին:

Աստված տեսնում է քո սիրտը

«Բայց շնորհակալություն Աստծուն, որ մեղքի ծառա էիք, բայց սրտով հնազանդվեցիք այն վարդապետության օրինակին, որին հանձնվեցիք» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 6.17):

Երբ ընդունում ենք Քրիստոսին՝ որպես Փրկչի, Աստված մեզ նոր սիրտ է տալիս. սիրտ, որն ուզում է ճիշտ վարվել: Սակայն, ժամանակ է պահանջվում, որ մեր վարքագիծը հասցնի հետևել մեր նոր սրտին, և դա հաճախ վիատեցնող է լինում: Մեր էության մի մասն ուզում է անել ճիշտը, մինչդեռ մյուս մասը պայքարում է դրա դեմ: Դա մարմնի և հոգու պատերազմն է, որի մասին խոսում է Պողոսը Գաղատացիների 5.17-ում:

Երբ վերստին ծնվում ենք, Աստված սպառազինում է մեզ այն ամենով, ինչ անհրաժեշտ է սուրբ և հնազանդ կյանքով ապրելու համար: Մենք նոր արարած ենք Քրիստոսում. հներն անցան, և ամեն բան նոր եղավ (տե՛ս Բ Կորնթացիների 5.17): Ես սիրում եմ ասել, որ մենք նոր հոգևոր կավ ենք, և կյանքի ընթացքում թույլ ենք տալիս, որ Սուրբ Հոգին ձևավորի ու դարձնի մեզ Քրիստոսի պատկերի պես (տե՛ս Հռոմեացիների 5.17): Մենք պետք է շնորհակալ լինենք Աստծուց, որ ունենք նոր սիրտ. սիրտ, որն ուզում է հնազանդ լինել:

Տոնի՛ր քո առաջընթացը և մի՛ հուսահատվիր, որովհետև Աստված տեսնում է քո սիրտը: Եթե մենք թողնենք այն, ինչ ետևում է, և համառորեն ձգտենք լիակատար հնազանդության, Աստված գոհ կլինի: Մենք սովորում ենք քայլել Աստծո հետ, իսկ քայլելը տեղաշարժման ամենադանդաղ ձևն է: Գուցե դու այնտեղ չես, որտեղ ուզում ես լինել, բայց գոհությո՛ւն Աստծուն, որ ունես հնազանդ սիրտ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կենտրոնացի՛ր Հիսուսի վրա, ոչ թե քո ձախողումների:

Հոգին մի՛ հանգցրեք

«Հոգին մի՛ հանգցրեք» (Ա ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐԻ 5.19):

Այսօրվա խոսքում ասվում է, որ չհանգցնենք Սուրբ Հոգին: Ես կարծում եմ, որ Հոգին հանգցնելու միջոցներից մեկը դժգոհությունն է: Մենք կարիք ունենք, որ Սուրբ Հոգին գործի մեր կյանքում, և որքան քիչ դժգոհենք, այնքան Սուրբ Հոգին ազատ կլինի գործելու մեր իրավիճակներում: Դժգոհելը բնական է, բայց գերբնական է գոհանալը, երբ ստուգվում և փորձվում ենք կյանքի հանգամանքներում:

Մարդիկ, որոնք փնթփնթում են և դժգոհում, չեն լսում Աստծուն, որովհետև Նրան լսելու համար պետք է դադարեն դժգոհելուց: Ինձնից տարիներ պահանջվեցին այս ճշմարտությունը բացահայտելու համար: Ես փնթփնթում էի, դժգոհում, տրտնջում և թերություն փնտրում ամեն ինչում և ամեն մեկի մեջ, իսկ հետո նախանձում, որ բոլորը լսում էին Աստծուն, իսկ ես՝ ոչ:

«Ինչո՞ւ ինձ հետ որևէ լավ բան չի կատարվում», - հառաչում էի ես:

Դեյվը շարունակ ասում էր. «Ձո՛յս, մեր կյանքում լավ բաներ տեղի չեն ունենա, մինչև չդադարես վրդովվելուց ամեն անգամ, երբ ինչ-որ բան չի ընթանում այնպես, ինչպես դու ես ցանկանում»:

Ես բարկանում էի նրա վրա այդ խոսքերի համար և պատասխանում. «Դու պարզապես չգիտես կամ քեզ համար միևնույն է, թե ինչպես եմ ես զգում»:

Խնդիրն այն էր, որ ինձ ավելի շատ մտահոգում էր այն, թե ինչպես էի զգում, քան այն, որ Աստված խոստացել էր օգնել ինձ: Աստված առաջարկում է օգնել մեզ մեր դժվարություններում և ցույց տալ ելքը, եթե փորձությունների ժամանակ մնանք համբերատար (պահպանենք ճիշտ վերաբերմունք): Դժգոհությունը համբերության նշան չէ, համբերության նշան են երախտագիտությունը և գոհությունը: Սովորելով ապրել Աստծո Խոսքով և ոչ թե զգացմունքներով՝ ես սկսեցի ավելի պարզ լսել Աստծո ձայնը: Դժգոհությունը դուռ է բացում թշնամու համար, բայց գոհությունը և երախտագիտությունը դուռ են բացում Աստծո համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ հանգցրու Սուրբ Հոգին դժգոհության միջոցով:

Գցի՛ր դրանք Աստծո վրա

«Գցի՛ր Տիրոջ վրա քո գործերը (լիովին հանձնի՛ր և վստահի՛ր դրանք Աստծուն. Նա կհամաձայնեցնի քո մտքերը Աստծո կամքին), և կհաստատվեն ու կհաջողվեն քո ծրագրերը» (ԱՌԱԿԱՅ 16.3):

Եթե ուզում ենք մտերիմ փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ և ապրել Նրան նվիրված կյանքով, մեզ վերաբերող ամեն ինչ պետք է բերենք Նրա առջև ու ասենք. «Աստվա՛ծ, ես սա Քեզ եմ տալիս: Քեզ եմ տալիս այս խնդիրը: Քեզ եմ տալիս այս իրավիճակը: Քեզ եմ տալիս այս փոխհարաբերությունը: Ես լիովին բաց եմ թողնում այս ամենը: Սա չափազանց շատ է ինձ համար: Ես այլևս չեմ անհանգստանալու ու չեմ փորձելու ամեն բան հասկանալ, թույլ եմ տալու, որ Դու հոգաս ամենի ինչի համար: Աստվա՛ծ, Քեզ եմ տալիս նաև ինձ, որովհետև անկարող եմ որևէ բան անել՝ ինքս ինձ փոխելու համար: *Ամենը* Քեզ եմ տալիս: Քեզ եմ տալիս իմ ուժեղ և թույլ կողմերը: Ես ուզում եմ փոխվել, բայց Դո՛ւ պետք է փոխես ինձ»: Ինձ համար հրաշալի օր էր, երբ ի վերջո հասկացա, որ Աստծո գործն էր ինձ փոխելը, իսկ իմ գործը՝ հավատալը:

Սաղմոս 37.5-ում ասվում է. «Տիրոջը հանձնի՛ր քո ճանապարհը և Նրան հուսա՛, և Նա կկատարի»: Ի՞նչ է նշանակում՝ մեր ճանապարհները հանձնել Աստծուն: Դա նշանակում է գցել դրանք Աստծո վրա: Երբ մեր խնդիրներն ու մարդկային դատողությունները գցում ենք Աստծո վրա, ինչը նշանակում է՝ *լիովին* վստահել Նրան, Նա փոխում է մեր մտքերը, և դրանք համաձայնեցնում Իր կամքին: Այլ կերպ ասած՝ Նրա մտքերը դառնում են մեր մտքերը, որպեսզի մենք ցանկանանք այն, ինչ Նա է ցանկանում: Երբ դա տեղի ունենա, մեր ծրագրերը կհաջողվեն, որովհետև դրանք լիարժեք համաձայնության մեջ են Աստծո ծրագրերի հետ: Ազատվի՛ր և բա՛ց թող բոլոր հոգսերդ ու հանգստացի՛ր, որպեսզի կարողանաս լսել, թե ինչ է Աստված ասում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գցի՛ր բոլոր խնդիրներդ Աստծո վրա:

Հետևի՛ր հավատքով

«Եվ ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ և քեզ օրհնեմ և քո անունը մեծացնեմ, և դու օրհնյալ կլինես» (ԾՆՆԴՈՅ 12.2):

Ինձ համար հեշտ չէր հնազանդվել Աստծո ձայնին, երբ առաջին անգամ Նա կոչ արեց, որ թողնեմ ապահով աշխատանքս և սկսեմ իմ ծառայությունը: Սակայն, այսօրվա խոսքը այն խոսքերից է, որ Աստված օգտագործում էր՝ Իր ծրագրերի վերաբերյալ ինձ հետ խոսելու և քաջալերելու համար: Հեշտ է կարդալ այս խոսքը և ասել. «Այո՛, ես ուզում եմ օրհնվել: Դա հրաշալի՛ է»: Բայց մենք պետք է հիշենք, որ Աստված Աբրահամից հնազանդության զոհ պահանջեց, նախքան կիրականացներ այդ մեծ խոստմունքը:

Աբրահամը պետք է թողներ այն ամենը, ինչը հարմարավետ էր և ծանոթ, ու շարժվեր դեպի անհայտ նպատակակետ: Շատերի համար դա նյարդայնացնող կլիներ, բայց Աբրահամը չնյարդայնացավ: Եբրայեցիների 11.8-ում ասվում է. «Հավատքով՝ Աբրահամը, երբ որ կանչվեց, հնազանդ եղավ՝ դուրս գնալու այն տեղը, որ ժառանգության համար ստանալու էր, և դուրս եկավ, գնաց՝ առանց գիտենալու, թե ուր է գնում»:

Երբ հնազանդվում ենք Աստծուն, պետք է Աբրահամի նման լինենք և թույլ չտանք, որ մեր մտքերը խռովվեն: Երբ Աստված խոսում է մեզ հետ և առաջնորդում, մենք պետք է հավատքով հետևենք Նրան՝ վստահելով և հավատալով, որ Նա կօրհնի մեր հնազանդությունը և կիրականացնի Իր խոստմունքները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված իրականացնում է Իր խոստմունքները:

Սրտով մաքուրները կտեսնեն Աստծուն

«Երանի՜ նրանց (ուրախ, նախանձելի կերպով հաջողակ, հոգևորապես հաջող և երջանիկ են նրանք [այդ երջանկությունը գալիս է Աստծո բարեհաճությունը վերապրելուց և հատկապես պայմանավորված է Նրա շնորհքի հայտնությամբ՝ անկախ նրանց արտաքին պայմաններից]), որ սրտով մաքուր են, որ նրանք Աստծուն կտեսնեն» (ՄԱՏԹԵՈՍ 5.8):

Եթե մենք ունենք մաքուր սիրտ, կկարողանանք հստակ լսել Աստծո ձայնը: Մենք պարզ կտեսնենք Նրա ծրագիրը մեր կյանքի համար: Մենք աննպատակ և շփոթված չենք զգա: Մեր սրտի վիճակը ամենակարևորն է Աստծո համար: Եթե սրտի ծածուկ մարդը ճիշտ դիրքում է, դա չափազանց գոհացնում է Աստծուն (տե՛ս Ա Պետրոս 3.3,4): Աստվածաշունչն ասում է, որ ամեն զգուշությունից առավել պետք է պահպանենք մեր սիրտը, որովհետև նրանից է կյանքի ելքը (տե՛ս Առակաց 4.23):

Քննի՛ր քո սիրտը, վերաբերմունքը և մտքերը՝ տեսնելու, թե արդյո՞ք կա որևէ բան, որ Աստված հավանություն չի տալիս: Ունե՞ս դառնություն կամ զայրույթ: Արդյո՞ք թույլ ես տվել, որ քննադատական կամ դատապարտության վերաբերմունքն արմատ գցի քո սրտում: Ինչպիսի՞ն է քո սիրտը՝ փափո՞ւկ, թե՞ կարծր: Արդյո՞ք բաց ես ուրիշների կարծիքի և գաղափարների համար, թե՞ փակել ես սիրտդ: Աստվածաշունչն ասում է, որ մենք պատասխանատու ենք մեր սիրտը ճիշտ վիճակում պահելու և պահպանելու համար:

Սիրտը՝ որպես ֆիզիկական օրգան, մարմնի ամենակարևոր օրգանն է: Եթե այն ախտահարվի կամ պատշաճ կերպով չաշխատի, ապա կյանքին վտանգ կսպառնա: Կարծում եմ՝ սրտի վերաբերմունքը նույնպես ամենակարևոր բանն է, որին պետք է ուշադրություն դարձնենք: Եթե թույլ տանք, որ այն ախտահարվի, ապա դա իր ազդեցությունը կթողնի մեր կյանքի որակի վրա:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր Աստծուց, որ այսօր և ամեն օր ցույց տա սրտի այն վիճակները (սրտի վերաբերմունքը), որոնք պետք է փոխես:

Լսի՛ր ուշադիր

«…Ուշադի՛ր եղեք, թե ինչ եք լսում: Ինչ չափով որ չափեք [ձեր լսած ճշմարտությունը], նրանով էլ ձեզ կչափվի [առաքինությունը և գիտությունը], և կավելանա ձեզ՝ լսողներիդ» (ՄԱՐԿՈՍ 4.24):

Աստվածաշունչն ասում է, որ վերջին օրերին շատ սուտ մարգարեներ կբարձրանան և մարդկանց կասեն այն, ինչ ցանկալի է նրանց մարմաջող ականջներին: Մարդիկ կփնտրեն նրանց, ովքեր հաճելի և գոհացուցիչ բաներ կասեն: Իրենց ցանկությունները բավարարելու համար նրանք կշրջվեն ճշմարտությունը լսելուց և կմոլորվեն առասպելներով ու մարդու հնարքներով (տե՛ս Բ Տիմոթեոս 4.3,4): Նրանք կշրջվեն դեպի այն մեթոդները, որոնք գուցե «հոգևոր» են կոչվում, բայց վստահելի չեն Աստծո արքայության մեջ: Դրանք «հոգևոր» են, բայց սխալ հոգուց են:

Նախկինում երբեք չենք տեսել այսքան շատ էքստրասենսներ, որոնք մրցում են բաց ականջ գտնելու համար: Հեռուստատեսությամբ ցուցադրում են ոգեհարցների (մեռելահարցուկների), որոնք պնդում են, թե հաղորդակցվում են մահացածների հետ: Այս մարդիկ իրականում հաղորդակցվում են ոգիների հետ, որոնք հայտնում են կես-ճշմարտություն անցյալի մասին և ստում ապագայի վերաբերյալ: Սա խստորեն արգելվում է Սուրբ գրքում (տե՛ս Ղևտացիների 19.31): Աստված ասում է, որ Իր երեսը կդարձնի նրա վրա, ով կդիմի վհուկներին և հմայողներին (տե՛ս Ղևտացիների 20.6,7), մինչդեռ քրիստոնյաները շարունակում են կարդալ հորոսկոպներ և դիմում էքստրասենսների, իսկ հետո զարմանում, թե ինչու են ապրում խառնաշփոթության մեջ և ինչու խաղաղություն չունեն:

Մենք պետք է գիտակցենք, որ սխալ է, բացի Աստծուց, որևէ տեղից առաջնորդություն փնտրել կյանքի համար: Եթե դու ներգրավված ես եղել այսպիսի գործունեության մեջ, հորդորում եմ, որ հիմնովին ապաշխարես, խնդրես, որ Աստված ների քեզ, և լիովին շրջվես դրանից: Աստված ունի քեզ անհրաժեշտ բոլոր պատասխանները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. լուցկու հատիկներով մի՛ խաղա. դա միայն կհանգեցնի հրդեհի:

Ավելի շատ լսի՛ր, քան խոսիր

«Իր խոսքերը զսպողը գիտություն գիտի, և ծանրաբարո մարդը խոհեմ է» (ԱՌԱԿԱՅ 17.27):

Աստվածաշնչյան մտորումների այս ձեռնարկում խոսեցինք այն մասին, որ Աստծուց լսելու մեր որոնումներում պետք է ինքներս մեզ սովորեցնենք լսել: Երբեմն այնքան շատ ենք խոսում, որ պարզապես չենք կարողանում լսել, թե ինչ է Աստված ասում: Չլսելու պատճառով մենք կարող ենք նաև բաց թողնել այն կարևոր բաները, որ մարդիկ ասում են մեզ:

Եթե սովորենք հանդարտ և հանգիստ մնալ, ապա կլսենք այն, ինչ Աստված ուզում է ասել մեզ: Վերջերս իմ դուստրը՝ Սանդրան, աղոթքից հետո մի պահ նստում է և Աստծուց հարցնում, թե կա՞ արդյոք որևէ բան, որ Նա կցանկանար իրեն ասել, նախքան կսկսեր իր օրը: Սանդրան սրտում զգում է, որ Աստված ասում է. «Գնա՛, Ես քեզ հետ եմ»: Նա մխիթարվում է այդ մտքից, բայց մխիթարություն է գտնում հատկապես այն ժամանակ, երբ մի քանի օրից տեղեկանում է վատ լուրի մասին: Այն խոսքը, որ Աստված տվեց նրան, ավելացնում է նրա հավատքը և նրան հաստատուն ու հանգիստ պահում փորձության ժամանակ:

Եթե ականջ չդնենք, ապա չենք լսի: Տո՛ւր Աստծուն հնարավորություն՝ կանոնավոր կերպով խոսելու քեզ հետ: Երբ աղոթում ես, հարկ չկա, որ միայն դու խոսես: Դու կարող ես զսպել քո խոսքերը և համարվել Աստծո իմաստուն մարդ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու ունես մեկ բերան և երկու ականջ, դա նշանակում է, որ Աստված ուզում է՝ երկու անգամ ավելի շատ լսես, քան խոսես:

Բարի Հովիվը

«Ես եմ բարի Հովիվը, և Ես իմիններին ճանաչում եմ և իմիններից էլ ճանաչվում եմ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 10.14):

Աստծուց լսելը յուրաքանչյուր հավատացյալի իրավունքն ու արտոնությունն է: Աստված տալիս է մեզ կարողություն՝ զանազանելու Նրա ձայնը մյուս ձայներից, որոնք կարող են խաբել և մոլորեցնել մեզ: Նա զուգահեռներ է անցկացնում զանազանման այս կարողության և հովվի ձայնը ճանաչող ոչխարների բնազդի միջև, ինչպես կարդում ենք այսօրվա խոսքում:

Եթե մենք իսկապես Աստծունն ենք, ապա կկարողանանք զանազանել Նրա ձայնը այն ձայներից, որոնք կփորձեն շեղել մեզ: Մենք պետք է սովորենք քննել իրերի բնույթը և իմանալ Աստծո բնավորությունը:

Ես տրտմում եմ, երբ լսում եմ, որ մարդիկ ասում են՝ «Աստված ինձ ասաց սա անել», մինչդեռ ակնհայտ է, որ բարի հովիվը երբեք չէր ասի նրանց անել այն, ինչ անում են: Ես ճանաչում էի մի կնոջ, ում հոգևոր առաջնորդն ասել էր, որ Աստված նախասահմանել է, որ իրենք ամուսնանան: Խնդիրն այն էր, որ այդ մարդն արդեն ամուսնացած էր: Ցավոք, այս կինը հավատացել էր նրան և խրախուսել, որ կնոջից բաժանվեր, որպեսզի միասին լինեին: Դա հիմար, անբարեպաշտ արարք էր և երբեք չէր կարող լինել Աստծո կամքը, որովհետև հակառակ էր Նրա Խոսքին:

Մարդիկ հաճախ ուզում են իմանալ հետևյալը. «Ինչպե՞ս կարող եմ համոզված լինել որ Աստծուց եմ լսում»: Մենք կտարբերենք Նրա ձայնը խաբեության ձայնից, եթե իսկապես ճանաչենք Նրա բնավորությունը, էությունը և իմանանք, թե ինչպես է Նա առաջնորդել ուրիշներին: Հիսուսն Իր ոչխարների մասին ասաց. «Բայց օտարի ետևից չեն գնում. այլ նրանից փախչում են, որովհետև օտարների ձայնը չեն ճանաչում» (Հովհաննես 10.5):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբեք թույլ մի՛ տուր, որ զգացմունքները ղեկավարեն քեզ, հատկապես երբ դրանք առաջնորդում են անելու այն, ինչ հակառակ է Աստծո Խոսքին կամ Նրա բնավորությանը:

Լիարժեք կյանքի բանալին

«Եվ հիմա այսպես է ասում Զորաց Տերը. «Ձեր ուշը դարձրե՛ք ձեր ճանապարհներին»» (ԱՆԳԵ 1.5):

Աստված ծրագրել է, որ ապրենք հիասքանչ, լիարժեք կյանքով, բայց եթե կամակոր (տե՛ս Ելից 33.3) կամ խստասիրտ լինենք, բաց կթողնենք այն, ինչ Նա պատրաստել է մեզ համար: Երբ կամակոր ենք և հրաժարվում ենք Աստծո ձայնին հնազանդվելուց, մնում ենք մեր ճանապարհներում և չենք կարողանում առաջընթաց ունենալ: Այս իրավիճակում հայտնվելիս՝ հաճախ անզոր ենք լինում կանգ առնելու և ինքներս մեզ հարցնելու, թե որն է խնդիրը:

Այսօրվա խոսքում հիշատակվում է այն ժամանակը, երբ Աստծո ժողովուրդը դժգոհ էր իր վիճակից ու շատ խնդիրների առջև էր կանգնել: Աստված ասաց, որ ուշադրություն դարձնեն իրենց ճանապարհներին: Հաճախ, երբ մարդիկ բավարարված չեն կյանքում, պատճառը փնտրում են ամենուրեք, բայց ոչ՝ իրենց մեջ: Եթե կյանքում անբավարարված ես, ուշադրություն դարձրու քո ճանապարհներին: Խնդրի՛ր Աստծուց խոսել «քո ճանապարհների» մասին և ուշադրություն դարձրու, թե ինչ է ասում: Ես ստիպված եմ եղել բազմիցս այսպես վարվել և, որպես արդյունք, փոփոխություններ եմ կատարել իմ մտածելակերպում, շարժառիթներում, վարքագծում:

Երբ ուշադրություն դարձրի իմ ճանապարհներին, հասկացա, որ կամակոր էի, խստասիրտ, ինքնավստահ, հպարտ և ունեի շատ որակներ, որոնք կասեցնում էին իմ առաջընթացը: Բայց, փա՜ռք Աստծուն, Նա փոխել է ինձ. աղոթում եմ, որ շարունակի փոխել ինձ ու երբեք կանգ չառնի:

Ես ուզում եմ այն, ինչ Աստված է ուզում, որ ունենամ, և չեմ ուզում այն, ինչ Նա չի ուզում: Ես Նրանն եմ, դու՝ նույնպես: Նա կամենում է, որ ունենաս երջանիկ, օրհնված, հրաշալի և բավարարված կյանք: Եթե չես ապրում այդպիսի կյանքով, ապա ժամանակ հատկացրու և ուշադրություն դարձրու քո ճանապարհներին. խնդրի՛ր Աստծուց, որ ցույց տա՝ ինչ պիտի փոխվի, ապա արա այն, ինչ Նա ասում է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ վախեցիր դեմառդեմ կանգնել քո մասին ճշմարտությանը. դա ազատ է արձակում քեզ:

Մարդկանց հետ լավ վարվիր

«Ով որ խցկի աղքատի աղաղակի դեմ իր ականջը, ինքն էլ կկանչի և պատասխան չի գտնի» (ԱՌԱԿԱՅ 21.13):

Համաձայն այսօրվա խոսքի՝ երբ ուշադրություն չդարձնեմ կարիքավոր մարդկանց և ոչինչ չանեմ նրանց օգնելու համար, այն ժամանակ Աստված, հնարավոր է, տրամադրված չլինի պատասխանելու իմ օգնության աղաղակին, երբ ինքս կարիքի մեջ լինեմ:

Մարդկանց նկատմամբ բարի լինելը չի սահմանափակվում ընկերներով և ընտանիքի անդամներով, այն տարածվում է ամբողջ հանրության վրա: Հիշում եմ, մի անգամ վիճակագրական տվյալներ էի կարդում, որտեղ ասվում էր, որ Սենթ Լուիսում անտուն մարդկանց միջին տարիքը յոթ տարեկանն է: Իմ քաղաքում: Քսան տարի առաջ այդ տեղեկությանը հավանաբար կարձագանքեի այսպես. «Ինչ ցավալի է»: Բայց հիմա, երբ տեղեկանում եմ նման իրավիճակների մասին, ասում եմ. «Ես պետք է ինչ-որ բան անեմ»: Մարդիկ գուցե ասում են. *«Քեզ* համար հեշտ է դա ասել, Ջոյս, դու ունես մեծ ծառայություն և շատ մարդկանց դիմելու հնարավորություն»: Գուցե դու չունես այն միջոցներից մի քանիսը, որ մեր ծառայությունն ունի, բայց դու ունես աղոթելու նույն կարողությունը, որ ես ունեմ: Դու կարող ես զոհաբերություն կատարել այն ծառայություններին, որոնք փորձում են օգնել կարիքավոր մարդկանց: Դու կարող ես որոշ ժամանակով կամավոր աշխատել: Բոլորս կարող ենք ինչ-որ բան անել, եթե իսկապես ցանկանանք:

Կարծում եմ, որ մեր աղոթքների մեծ մասը չի պատասխանվում, և մենք երբեմն ի վիճակի չենք լինում լսել Աստծո ձայնը, քանի որ ողորմություն և սրտացավություն չենք ցուցաբերում նրանց հանդեպ, ովքեր դժվար իրավիճակներում են: Ճշմարտությունն այն է, որ մենք կարող ենք հսկայական հունձք ունենալ՝ պարզապես սիրալիր լինելով: Աստծո համար կարևոր է, որ մարդկանց հետ լավ վարվենք: Եթե քեզ երբևէ մոռացել են կամ սխալ են վարվել, ուրեմն դու գիտես, թե որքան ցավոտ է դա: Եթե ուզում ես արդյունավետ աղոթքներ անել, եթե ուզում ես, որ Աստծո ականջները բաց լինեն քո ձայնի համար, ապա պետք է լավ վարվես մարդկանց հետ և բարի՛ լինես նրանց հանդեպ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ամենահրաշալի բանը, որ կարող ես անել, օգնելն է մեկին, ով պակաս երջանիկ է, քան դու:

Անցի՛ր

«Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես. Քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ» (ՍԱՂՄՈՍ 23.4):

Հաճախ խոսում ենք այն մասին, թե «ինչի միջով ենք անցնում», բայց բարի լուրն այն է, որ *անցնում ենք.* մենք չենք խրվում մեր խնդիրների մեջ՝ չունենալով որևէ ելք: Աստված երբեք չի խոստանում, որ կապրենք առանց խնդիրների, բայց խոստանում է լինել մեզ հետ ու երբեք չթողնել կամ չլքել մեզ: Երբ Աստված անցկացնում է մեզ որևէ բանի միջով, միշտ արժեքավոր դասեր է տալիս, որոնք կարող ենք օգտագործել ապագայում:

Աստծուց լսելու ամենակարևոր ժամանակն այն է, երբ անցնում ենք դժվարություններով և ուղղորդվելու կարիք ունենք: Ինչ պիտի անենք: Որքա՞ն է տևելու մեր խնդիրը: Այսօրվա Սաղմոսում ասվում է, որ երբ անցնենք դժվարության միջով, Աստված կառաջնորդի մեզ: Ապավինելով Նրա օգնությանը՝ մենք կշարունակենք առաջ գնալ ու չհանձնվել:

Եբրայեցիների գրքում ասվում է, որ Աստված ուզում է, որ անցնենք ամբողջ ճանապարհը, որպեսզի մեր հույսն իրականացած տեսնենք (տե՛ս Եբրայեցիների 6.11): Սատանայի ցանկությունն է, որ հիասթափվենք և հանձնվենք, բայց Աստված մեզ զորություն է տալիս գնալու մինչև վերջ: Մի՛ եղիր այնպիսի մարդ, ով սկսում է ինչ-որ բան անել, սակայն, բախվելով դժվարությունների՝ չի ավարտում այն: Երբ որևէ բան ենք սկսում, պետք է հաշվենք ծախսը և վստահ լինենք, որ ունենք այն, ինչ անհրաժեշտ է սկսածն ավարտին հասցնելու համար, որպեսզի հետո հիմար չերևանք: Ավարտելու համար վճռականություն է անհրաժեշտ. այն կօգնի գնալ մինչև վերջ, նույնիսկ երբ լավ զգացմունքները մարեն, իսկ մյուսները՝ հանձնվեն: Եթե գնաս մինչև վերջ, կստանաս հավատքիդ վարձքը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կյանքի ձորերով անցնելիս՝ Աստված միշտ կառաջնորդի և կմխիթարի քեզ:

Սրբված, թլփատված ականջներ

«Ո՞ւմ ասեմ և վկայեմ, որ լսեն. ահա նրանց ականջը անթլփատ է [Աստծո հետ ուխտի մեջ չէ կամ չի սրբվել Նրա ծառայության համար], և չեն կարող լսել կամ հնազանդվել...» (ԵՐԵՄԻԱ 6.10):

Ամեն անգամ, երբ Աստված խոսում է մեզ հետ, և մենք վարվում ենք այնպես, կարծես չենք լսում Նրան, մեր սրտերը մի փոքր կարծրանում են, մինչև հասնում ենք այն կետին, որ ծայրահեղ դժվար է լինում լսել Նրան: Ի վերջո, մեր կամակորությունը բթացնում է Աստծուն լսելու կարողությունը: Ամեն անգամ, երբ չենք անում այն, ինչը գիտենք, որ ճիշտ է, ավելի խստասիրտ ենք դառնում, մինչև լիովին խլանում ենք Նրա առաջնորդության հանդեպ:

Այսօրվա խոսքում տեսնում ենք, որ Աստված ուզում էր՝ Երեմիան զգուշացներ Իր ժողովրդին վերահաս կործանման մասին, բայց նրանք անկարող էին լսել նրա ձայնը, որովհետև նրանց ականջներն անթլփատ էին (Աստծո հետ ուխտի մեջ չէին): Ինչպիսի՜ ողբերգություն:

Հակառակ դրան՝ Հովհաննեսի 5.30-ում տեսնում ենք, որ Հիսուսն ուներ սրբված (առանձնացված), թլփատված ականջներ: Կարծում եմ, որ սա Աստվածաշնչի ամենակարևոր խոսքն է Աստծուց լսելու վերաբերյալ. «Ես Ինձնից (ինքնուրույն, ինքնակամ) չեմ կարող ոչինչ անել (այլ միայն այն, ինչ սովորեցնում է Աստված). ինչպես լսում եմ, այնպես եմ դատում [որոշում եմ այնպես, ինչպես ինձ հրամայվում է: Ես որոշում եմ կայացնում համաձայն Իմ լսածի], և Իմ դատաստանն արդար է (ուղիղ, իրավացի), որովհետև Իմ կամքը չեմ որոնում [Ես չունեմ ցանկություն, որ անեմ այն, ինչ հաճեցնում է Ինձ, և Իմ նպատակները չեմ հետապնդում], այլ՝ ինձ ուղարկող Հոր կամքը և ցանկությունը»:

Հիսուսը *ոչինչ* չէր անում, մինչև չէր լսում Հորից: Պատկերացրու՝ որքան կփոխվեր մեր կյանքը, եթե Նրանից խորհուրդ խնդրեինք, նախքան կընկնեինք այն անախորժությունների մեջ, որ ինքներս ենք ստեղծում, իսկ հետո Նրա կարիքն ենք ունենում՝ այդ ամենից դուրս գալու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. նախքան որոշում կկայացնես՝ լսի՛ր սրտիդ:

Աստված քեզ է ուզում

«Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությունով, որ ձեր մարմինները [բոլոր անդամներով և կարողություններով] ներկայացնեք որպես կենդանի զոհ» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.1):

Աստված քեզ է ուզում: Նա ուզում է ամբողջությամբ խնամակալության տակ վերցնել քո սիրտը, այլ ոչ թե ժամանակ առ ժամանակ այցելել քեզ: Մարդիկ հաճախ դժգոհում են, որ աղոթում են Հիսուսի անունով, ու ոչինչ տեղի չի ունենում. բայց հաշվի առնելով ժամանակի այն չափը, որ անցկացնում են Նրա հետ՝ ակնհայտ է, որ նրանք միայն «տեսակցում են» Նրան: Ես չստացա իմ ամուսնու ազգանունը, մինչև չամուսնացա նրա հետ: Հիսուսը ցանկանում է ունենալ ամուսնական հարաբերություններ Իր եկեղեցու հետ:

Աստծո հետ մտերմությունը նպաստում է մեր կյանքում Նրա զորության դրսևորմանը: Մենք չենք կարող մտերմությանը նայել որպես միայն ժպիտներ ու ջերմ զգացմունքներ: Երբ կա մտերիմ փոխհարաբերություն, մարդիկ կարող են շտկել միմյանց և լիովին ազնիվ լինել միմյանց հանդեպ: Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություններում ունենում ենք հրաշալի պահեր, բայց լինում են նաև այնպիսի պահեր, երբ Նա կոչ է անում ազնվորեն նայել այն բաներին, որոնք պետք է փոխվեն մեր կյանքում:

Ոմանք չեն հասկացել, որ կարող են հասնել խաղաղության միայն այն ժամանակ, երբ հանձնվեն Աստծուն և անմիջապես հնազանդվեն Նրա ասածներին: Այս մարդիկ նման են հեծնելուն անսովոր մտրուկների, որոնք ընդդիմանում են բերանում ամրացված սանձին, որն Աստված կարող էր օգտագործել՝ նրանց անվտանգության և ապահովության վայր առաջնորդելու համար:

Ոմանք չեն կամենում թույլ տալ, որ Աստված ղեկավարի իրենց կյանքը, բայց նրանք երբեք չեն զգա այն ապահովությունը կամ խաղաղությունը, որին փափագում են, մինչև լիովին չհանձնվեն Սուրբ Հոգուն: Նա քեզ է ցանկանում. թո՛ւյլ տուր, որ ամբողջությա՛մբ տիրի քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կյանքդ ամբողջությա՛մբ հանձնիր Աստծո խնամակալությանը:

Մի՛ մոռացիր Աստծո խոստմունքը

«[Աբրահամը] երկար սպասելով և համբերատար լինելով, գիտակցեց և հասավ [Իսահակի ծննդյան՝ որպես գալիք բաների գրավականի] խոստմունքին» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 6.15):

Աստված Աբրահամին ժառանգ խոստացավ, բայց նա ստիպված եղավ ավելի երկար սպասել, քան կարող էր երբևէ պատկերացնել: Այսօրվա խոսքում ասվում է, որ Աբրահամը «երկար սպասեց և համբերատար եղավ»: Այդ ժամանակահատվածում, համոզված եմ, նա ստիպված էր կրկին ու կրկին իրեն հիշեցնել Աստծո խոստմունքը: Երբ ստիպված ենք լինում երկար սպասել, սկսում ենք կասկածել, որ երբևէ լսել ենք Աստծուց: Գուցե հենց հիմա սպասում ես ինչ-որ բանի և կարիք ունես ինքդ քեզ հիշեցնելու, թե ինչ է Աստված խոսել քո սրտին:

Կասկածն ու անհավատությունն իսկապես հարձակվեցին Աբրահամի վրա, բայց նա գոհացավ և փառք տվեց Աստծուն: Երբ սատանան հարձակվում է, չպետք է լինենք պասիվ՝ ընդհանրապես ոչինչ չձեռնարկելով: Մենք պետք է պատերազմենք նրա և նրա ստերի դեմ՝ հիշեցնելով նրան Աստծո Խոսքը և մեզ տրված խոստումները: Բարձրաձայն ասա՛ դրանք, մտորի՛ր դրանց շուրջ և գրի՛ առ դրանք: Երբ Ամբակումը սպասում էր Աստծուն, նրան կարգադրվեց գրել տեսիլքը տախտակների վրա, որպեսզի յուրաքանչյուր անցորդ կարողանար կարդալ (տե՛ս Ամբակում 2.2): Հավանաբար սա գովազդային պաստառի հինկտակարանյան տարբերակն էր:

Պատերազմի՛ր հավատքի բարի պատերազմը և պի՛նդ պահիր քո դավանությունը: Նշանակություն չունի, թե ինչպես ես զգում հենց հիմա, մի՛ հանձնվիր, որովհետև Աստված հավատարիմ է, և ինչպես ճիշտ ժամանակին իրականացրեց Աբրահամին տված խոստումը, այնպես էլ կիրականացնի այն, ինչ ասել է քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ զրուցում ես ընկերներիդ հետ, չափից շատ մի՛ խոսիր այն մասին, թե ինչպես ես զգում. ասա՛ նրանց, թե ինչ է գրված Աստծո Խոսքում:

Հավատա՛, որ Աստված առաջնորդում է քեզ

«Գնալիս՝ քո քայլերը չպիտի հանդիպեն արգելքի [քո ճանապարհը մաքուր և բաց կլինի], և վազելիս՝ չես գլորվի» (ԱՌԱԿԱՅ 4.12):

Այն ճանապարհորդության ընթացքում, երբ սովորում էի լսել Աստծուց, հասկացա, որ վերջին հաշվով մենք պետք է պարզապես հավատանք, որ Նա առաջնորդում և ուղղորդում է մեզ: Մենք խնդրում ենք, որ Նա ուղղորդի մեր քայլերը, և հավատում ենք, որ ստանում ենք այն, ինչ խնդրում ենք Իրենից: Լինում են ժամանակներ, երբ Աստծուց շատ հստակ խոսք եմ լսում, բայց մեծ մասամբ աղոթում եմ իմ օրվա համար, ապա հավատքով գործում եմ: Գուցե այդ օրը ոչ մի գերբնական կամ առեղծվածային բան տեղի չունենա: Գուցե չլինեն տեսիլքներ, ձայներ, արտասովոր բաներ, բայց իմ սրտում գիտեմ, որ Աստված ինձ ապահով է պահում և առաջնորդում ճիշտ ճանապարհով:

Աստված մեզ պահում է շատ բաներից, որոնց մասին նույնիսկ չգիտենք: Զարմանում եմ, թե որքան հաճախ կարող էի վթարի ենթարկվել, եթե առավոտյան չաղոթեի Աստծո առաջնորդության համար: Որքա՜ն խցանումներից եմ խուսափել, որովհետև պարզապես *զգացել եմ,* որ պետք է ընտրեմ այլ երթուղի և ոչ թե այն, որը սովորաբար ընտրում եմ: Ուզում եմ ուժգին քաջալերել, որ աղոթես, խնդրես Աստծո առաջնորդությունը և օրվա ընթացքում ասես. «Ես հավատում եմ, որ առաջնորդվում եմ Աստծով այսօր և ամեն օր»:

Սաղմոս 139.2-ում ասվում է, որ Աստված գիտի մեր նստելն ու վեր կենալը: Եթե Նա գիտի, թե երբ ենք նստում ու վեր կենում, և ժամանակ է հատկացրել այդ մասին Իր Խոսքում գրելու, ապա Նա հաստատ տեսնում և հոգ է տանում մնացած բաների համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու կարող ես հանգստանալ՝ իմանալով, որ Աստված զբաղված է քո յուրաքանչյուր քայլով:

Հասունանալ

«Որ այս երևացող բաներին չենք մտիկ անում, այլ՝ աներևույթներին. որովհետև երևացողները ժամանակավոր են, իսկ չերևացողները՝ հավիտենական» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 4.18):

Թեև Պողոսն անցավ սոսկալի փորձություններով և նեղություններով, նա չհուսահատվեց, որովհետև չէր նայում երևացող բաներին, այլ նայում էր չերևացող բաներին: Մենք պետք է հետևենք նրա օրինակին: Փոխանակ նայելու մեզ շրջապատող բաներին՝ պետք է նայենք, թե ինչ է Սուրբ Հոգին անում: Նա կառաջնորդի մեզ՝ կենտրոնանալու Աստծո պատասխանների, այլ ոչ թե մեր խնդիրների վրա:

Երկու մարդ կարող են կարդալ Խոսքը, և նա, ով չի լսում հոգևոր ականջներով, կընկալի այլ կերպ, քան հոգևոր ականջներով լսողը: Օրինակ, Հովհաննեսի 3-րդ թղթի 2-րդ խոսքում ասվում է. «Սիրելի՛, աղոթք եմ անում, որ ամեն բանի մեջ հաջող և առողջ լինես, ինչպես քո հոգին հաջող է»:

Ոչ այդքան հասուն, մարմնավոր քրիստոնյաները (որոնք դեռ հրապուրվում են ֆիզիկական հաճույքներով և ցանկություններով) կարող են խանդավառվել հաջողության և բժշկության խոստումով, որովհետև դա այն է, ինչ նրանք լսում են այս խոսքում: Նրանք մտածում են. «Օ՜, փա՜ռք Աստծուն: Նա կամենում է, որ մենք հաջողություն ունենանք և առողջ լինենք»:

Բայց հասուն հավատացյալները, որոնք զգայուն են իրենց կյանքի համար Աստծո սուրբ մտադրության հանդեպ, նաև կլսեն այս խոսքի մյուս մասը. «...ինչպես քո հոգին հաջող է»: Նրանք լսում են՝ հասկանալով, որ Աստված նրանց հաջողություն և բժշկություն է տալու *այն հարաբերակցությամբ,* ինչպես հաջող է նրանց հոգին:

Աղոթի՛ր, որ ունենաս ականջներ՝ իսկապես լսելու այն, ինչ Աստված ասում է, և աստիճանաբար հասունանաս, մինչ քայլում ես Աստծո հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր, որ Աստված բացի քո հոգևոր ականջները, որպեսզի լսես և ընկալես Սուրբ գրքում գրված խոսքերի լիարժեք նշանակությունը:

Աղոթիր, այնուհետև ծրագրիր

«Շատ դիտավորություններ կան մարդու սրտում, բայց Տիրոջ խորհուրդը կմնա հաստատ» (ԱՌԱԿԱՅ 19.21):

Աստծո Խոսքը հստակ ցույց է տալիս, որ մենք պետք է ականջ դնենք Նրա ձայնին և մեր ականջները ուխտի մեջ մտցնենք Նրա հետ: Այսպիսով թույլ կտանք Նրան սրբել և թլփատել մեր ականջները, որպեսզի կարողանանք լսել Նրան: Շատ անգամներ Աստված հստակ ցույց է տալիս, թե ինչ անենք, բայց մենք չենք անում, որովհետև չենք հավանում Նրա ծրագիրը: Նույնիսկ կարող ենք հոգևոր խուլ ձևանալ, երբ մեզ դուր չի գալիս այն, ինչ հստակ լսում ենք Նրանից: Մեր մարմնավոր հակումները և ցանկությունները կարող են խանգարել Աստծո ճշմարտությունն ընդունելուն:

Մենք կարող ենք դեմ առ դեմ կանգնել ճշմարտությանը և չընդունել այն: Ես խոստովանում եմ, որ ճշմարտությունը շատ հաճախ ավելի հեշտ է ընդունել, երբ այն վերաբերում է ուրիշներին և նրանց կյանքին, քան՝ ինձ և իմ կյանքին: Մենք ունենք ծրագիր, թե ինչպես ենք ուզում, որ մեր կյանքն ընթանա, և ունենք այդ ծրագիրն իրականացնելու ճանապարհը: Մեծ մասամբ ուզում ենք, որ Աստված լսի մեր ծրագիրը և իրականություն դարձնի այն, փոխանակ ականջ դնենք Նրա ծրագրին և խնդրենք անել այն, ինչ անհրաժեշտ է այդ ծրագիրը մեր միջոցով իրականացնելու համար: Մենք մշտապես պետք է աղոթենք, ապա ծրագրեր կազմենք, այլ ոչ թե ծրագրեր կազմենք և աղոթենք, որ Աստված իրականացնի դրանք: Ակա՛նջ դիր Աստծո ծրագրին, հետևի՛ր դրան և մշտապես հաջողություն կունենաս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. իմացի՛ր Աստծո ծրագիրը՝ նախքան կկազմես քո ծրագրերը:

Երբ Աստված խոսում է...

«Որովհետև Աստծո Խոսքը կենդանի է և զորավոր և ամեն երկսայրի սրից ավելի կտրուկ է և թափանցում է մինչև շնչի և ոգու և հոդվածների և ծուծի բաժանվելը և քննող է սրտի մտքերը և խորհուրդները» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 4.12):

Մենք կարող ենք հստակ ասել, որ Աստծո Խոսքը վիրահատում է մեզ՝ մեր կյանքից կտրելով այն, ինչ խանգարում է Աստծո ծրագրի իրականացմանը: Աստծո Խոսքը գտնում և մեկուսացնում է մարմնավոր և շնչավոր բաները, ապա Սուրբ Հոգու միջոցով հեռացնում դրանք:

Աստծո Խոսքն ուսումնասիրելու վաղ տարիներին ես չունեի բավականաչափ փորձառություն՝ տարբերելու, թե երբ էի առաջնորդվում Սուրբ Հոգով և երբ՝ շնչով (մտքով, կամքով, զգացմունքներով): Եթե ես որևէ բան էի ցանկանում, փորձում էի այնպես անել, որ դա կատարվեր, իսկ եթե չէր կատարվում, լցվում էի բարկությամբ: Ես եսասեր էի, մարմնավոր և գործում էի շնչի բնագավառում, բայց տարիների ընթացքում Աստված Իր Խոսքով վիրահատեց ինձ և հեռացրեց իմ սխալ վարքագիծը:

Ցանկացած վիրահատություն երբեք հաճելի չէ, բայց անհրաժեշտ է առողջության պահպանման համար: Արդյո՞ք Աստված փորձում է որևէ բան կտրել-հեռացնել քո կյանքից: Ցավո՞ տ է: Վիրահատությունները մեծ մասամբ ցավոտ են, բայց երկարատև օգուտ են տալիս: Եթե ցանկանում ես Աստծո լավագույնը քո կյանքի համար, ուրեմն պետք է թույլ տաս, որ Նա հեռացնի այն բաները, որոնք խանգարում են քո հոգևոր աճին: Հոգևոր հասունացման համար չկան կարճ ճանապարհներ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հաջողության երկար ճանապարհն այն ճանապարհն է, որն անցնելիս իմաստություն տվող արժեքավոր դասեր ենք քաղում:

Աստված լսում է, երբ աղոթում ես

«Հեռացե՛ք ինձնից, ո՛վ բոլոր անօրենություն գործողներ, որովհետև Տերն իմ լացի ձայնը լսել է: Տերը լսեց իմ աղաչանքը. Տերն ընդունում է իմ աղոթքը» (ՍԱՂՄՈՍ 6.8,9):

Երբ աղոթում ենք, Աստված լսում և պատասխանում է մեզ: Կարևոր է, որ վստահ լինենք դրանում այնպես, ինչպես Դավիթն էր վստահ, երբ գրեց վերոհիշյալ խոսքերը: Դու կարող ես ապրել վստահությամբ, քանի դեռ գիտես, որ Աստված քո կողմից է և կօգնի քեզ հաղթելու կյանքի պատերազմները: Դու մենակ չես, Աստված քեզ հետ է:

Սաղմոսներն ընթերցելը հրաշալի միջոց է Աստծուց լսելու համար: Նա խոսում է մեզ հետ Իր Խոսքի միջոցով, և Սաղմոսները հատկապես քաջալերող են դժվարությունների ժամանակ: Երբ կարդում ես, ի սրտե ընդունի՛ր դրանք: Մի՛ խորհիր դրանց շուրջ այնպես, կարծես մեկ ուրիշի համար են գրված, այլ հիշի՛ր, որ դրանք Աստծո անձնական նամակն են քեզ: Նա ուզում է՝ իմանաս, որ լավ ծրագրեր ունի քեզ համար, և ով էլ քեզ դեմ դուրս գա, Աստված քո կողմից է: Աստված ազատեց Դավթին իր թշնամիներից և նույնը կանի քեզ համար, եթե շարունակես վստահել Նրան:

Մնա՛ խաղաղության մեջ և շարունակի՛ր գոհանալ Աստծուց, որ գործում է քո կյանքում: Հավաստիացնում եմ՝ Աստված չի մոռացել քեզ: Նա չի ուշացնի քո աղոթքի պատասխանը: Գուցե շուտ չպատասխանի, բայց չի ուշանա: Պահի՛ր տեսիլքդ քո առջև և մի՛ հանձնվիր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված քեզ օգնություն կուղարկի. Նա կաջակցի, կթարմացնի և կզորացնի քեզ:

Մի՛ վիրավորիր Աստծուն

«…ահով և դողալով (առանց ինքնավստահության, լրջագույն զգուշությամբ, մեղմ խղճմտանքով, գայթակղության հանդեպ զգոնությամբ, հեռու մնալով այն ամենից, ինչը կարող է վիրավորել Աստծուն և վարկաբեկել Քրիստոսի անունը) գործե՛ք (զարգացրե՛ք, հասե՛ք և լիովին ավարտին հասցրե՛ք) ձեր անձերի փրկությունը» (ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 2.12):

Մենք կարող ենք թույլ տալ, որ Սուրբ Հոգին տիրի մեր կյանքում: Մենք կարող ենք լցվել Նրա ներկայությամբ և զորությամբ այնպես, որ թույլ տանք Նրան ներկա լինել մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառում և մասնակից լինել այն ամենին, ինչ անում ենք: Նա կարող է ազդել մեր մտքերի, հույզերի և նույնիսկ կամքի վրա՝ բերելով բժշկություն ու լիարժեքություն մեր անձին, բայց Նա ուզում է հրավեր ստանալ:

Ասա՛ Սուրբ Հոգուն, որ պատրաստ ես համագործակցել Նրա հետ, որպեսզի քո կյանքում դրսևորվի այն, ինչ Նա արել է քո մեջ Աստծո շնորհքով: Այսօրվա խոսքում օգտագործվում է «գործել» արտահայտությունը, որ նշանակում է՝ մենք պետք է սովորենք ապրել Հոգուց: Մենք կարիք ունենք սովորելու ապրել ներսից դուրս: Զգո՛ւյշ եղիր, որ չվիրավորես Աստծուն՝ տրվելով գայթակղությանը և մեղքին: Սովորի՛ր ապրել այնպես, որ ամեն ժամանակ քո խղճմտանքն ամբողջովին մաքուր լինի:

Գուցե մտածում ես. «Ջո՛ւյս, այս ամենը դժվար է թվում, և ես համոզված չեմ, որ ունեմ այն, ինչ անհրաժեշտ է»: Բայց ուզում եմ հավաստիացնել, որ դու ունես այն, ինչ անհրաժեշտ է, որովհետև Սուրբ Հոգու զորությունն է քո կյանքում: Դու չես կարող գործել քո ուժերով, բայց երբ համագործակցես Աստծո հետ, կկարողանաս անել այն, ինչ անհրաժեշտ է: Մի՛ հարմարվիր «ծայրը ծայրին հասցնելու» կյանքին, երբ կա առատության կյանք, որ սպասում է քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. շրջվի՛ր այն ամենից, ինչը վիրավորում է Աստծուն:

Հոգով և ճշմարտությամբ

«Աստված Հոգի է, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությունով երկրպագեն» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.24):

Մենք հաղորդակցվում ենք Աստծո հետ մեր հոգու միջոցով: Այսօրվա խոսքում Հիսուսն ասում է, որ պետք է երկրպագենք Աստծուն հոգով և ճշմարտությամբ: Աստծո հետ բացարձակապես ազնիվ լինելը այն միջոցն է, որով կարող ենք մտերմություն հաստատել Նրա հետ: Նա գիտի մեր մասին ամեն ինչ, այնպես որ՝ պատճառ չկա Նրա հետ լիովին ազնիվ չլինելու համար: Ասա՛ Նրան, թե ինչպես ես զգում, ինչն ես սխալ արել, և որոնք են քո ցանկությունները: Ազնի՛վ եղիր Աստծո հետ, ինչպես կլինեիր լավ և վստահելի ընկերոջ հետ:

Լինում են ժամանակներ, երբ Աստված ուզում է, որ ինչ-որ բան անեմ, իսկ ես ազնվորեն ասում եմ, որ չեմ ուզում դա անել, բայց անում եմ՝ հնազանդվելով, քանի որ սիրում եմ Իրեն: Կեղծավորությունը և Աստծո հետ մտերիմ փոխհարաբերությունը անհամատեղելի են: Մի անգամ իմ ընկերուհիներից մեկն ինձ ասաց, որ թեև գիտեր, որ պետք է ֆինանսապես աջակցեր Աստծո արքայության գործում, բայց չէր ուզում դա անել: Նա Աստծուն ազնվորեն ասաց. «Ես կանեմ դա, բայց իրականում չեմ ուզում, ուստի խնդրո՛ւմ եմ, որ տաս ինձ նվիրատվություն անելու ցանկություն»: Ժամանակի ընթացքում նա դարձավ շատ առատաձեռն և ուրախությամբ նվիրատվություններ էր անում:

Միայն ճշմարտությունը մեզ ազատ կարձակի (տե՛ս Հովհաննես 8.32): Աստծո Խոսքը ճշմարտություն է: Նա ասում է այն, ինչ նկատի ունի, և նկատի ունի այն, ինչ ասում է: Երբ որևէ սխալ ենք անում, պետք է լիովին ազնիվ լինենք Աստծո հետ: Մեղքը կոչի՛ր իր անունով: Եթե ագահ էիր, անվանի՛ր դա ագահություն: Եթե նախանձ էիր, անվանի՛ր դա նախանձ: Եթե սուտ էիր խոսում, անվանի՛ր դա սուտ: Խնդրի՛ր, որ Աստված ների քեզ, և հավատքով ընդունի՛ր դա:

Երբ երկրպագում ենք Աստծուն, պետք է անենք դա հոգուց և ամբողջ ճշմարտությամբ, անկեղծությամբ ու ազնվությամբ: Երբ նկատում ենք, որ մեր ընկերը ճշմարտացիորեն չի վարվում, հաճախ ասում ենք, որ նա դադարի ձևանալուց և անկեղծ լինի: Կարծում եմ՝ Աստված նույնը ցանկանում է մեզնից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. անկե՛ղծ եղիր:

Ներքին կյանք

«Սուրբ Հոգին նրանով ցույց էր տալիս, որ դեռ սրբությունների (Սրբություն Սրբոցի) ճանապարհը բաց չէր, քանի որ առաջին խորանը (նրա արտաքին բաժինը) դեռ ընդունվում էր և հաստատ կանգնած էր» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 9.8):

Հին կտակարանի խորանն ուներ երեք բաժին: Այն բաղկացած էր արտաքին գավիթից, երկրորդ բաժնից, որ կոչվում էր Սրբարան, և Սրբություն Սրբոցից, որը ներքին սենյակն էր: Միայն քահանայապետը կարող էր մտնել Սրբություն Սրբոց, որովհետև այնտեղ Աստծո ներկայությունն էր:

Մենք՝ որպես մարդ արարածներ, նույնպես եռամաս ենք: Մենք ունենք մարմին, շունչ և հոգի: Այսօրվա խոսքը հաստատում է, որ քանի դեռ շարունակում ենք ընդունել արտաքին բաժինը, որը մեր մարմնի և շնչի նմանությունն է, ապա Սրբություն Սրբոցի (մեր հոգու նմանության) ճանապարհը բաց չէ: Պարզ ասած՝ եթե ենթարկվում և սպասարկում ենք մարմնին, ապա երբեք չենք ճաշակի Աստծո ներկայությունը և չենք բնակվի նրա մեջ: Օրինակ՝ եթե ես բարկացած եմ, չեմ ճաշակի Աստծո ներկայությունը:

Մեր մարմինը միշտ պահանջներ կներկայացնի, որովհետև այն եսասեր է և իրենն է ուզում, բայց մենք չպետք է տրվենք այս պահանջներին: Կարող ենք պարզապես ասել. «Ես այլևս չեմ ընդունում քեզ, դու իշխանություն չունես ինձ վրա»: Երբ հակառակվում ենք մարմնավոր կյանքի պահանջներին, մենք պատվում ենք Աստծուն և կարողանում ճաշակել Նրա ներկայությունը: Այսօրվա ուղերձը պարզ է. «Ասա ոչ՝ քո «ես»-ին, և այո՝ Աստծուն»: Աստվածաշունչն ասում է, որ մենք մեռած ենք մեղքին: Մեղքը մեռած չէ. այն միշտ կփորձի քաշել մեզ դեպի իրեն, բայց մենք կարող ենք ասել՝ ո՛չ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ ապրիր մարմնավոր կյանքով՝ սպասարկելով մարմնավոր բնության ցանկություններին ու մղումներին:

Եղիր գերազանց

«Ամեն բան օրինավոր (թույլատրելի) է ինձ, բայց ամենն օգուտ չէ (լավ, նպատակահարմար և շահավետ չէ՝ այլ բաներ հետ հաշվի առնելով). ամեն բան օրինավոր է ինձ, բայց ես չպիտի որևէ բանի ծառա դառնամ կամ դրա իշխանության տակ լինեմ» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 6.12):

Աստված ունի հրաշալի ծրագիր՝ լիովին և անսահմանորեն օրինելու մեզ, բայց Նրա ծրագիրը կյանքի կոչելու համար պետք է լիովին և անսահմանորեն հնազանդվենք Նրան: Մենք Աստծո օգնության կարիքն ունենք՝ Նրա օրհնությունների ճանապարհին մնալու համար: Խնդրիր, որ Նա լրջորեն աշխատի քեզ հետ այն բնագավառներում, որոնք չեն գոհացնում Նրան, և արագ արձագանքիր ու հնազանդվիր Նրա ցուցումներին:

Աստված Իր Սուրբ Հոգին դնում է մեր մեջ՝ կատարյալ խաղաղության մեջ առաջնորդելու համար: Եթե լսենք Նրան, իմաստուն որոշումներ կկայացնենք և կվայելենք Նրա խաղաղությունը: Այսօրվա խոսքում տեսնում ենք, որ շատ բաներ թույլատրելի են, սակայն օգտակար չեն մեզ համար, և իմաստուն չէ թույլ տալ, որ որևէ բան մեր կյանքում դառնա վերահսկող գործոն:

Մենք կարող ենք շատ բաներ անել, բայց դրանք չեն լինի լավագույն ընտրությունը կամ չեն բերի լավագույն արդյունքը: Պողոսն ասաց, որ մենք պիտի լավագույնն ընտրենք (տե՛ս Փիլիպեցիների 1.10): Աստված չի պատրաստվում տալ մեզ գերբնական հայտնություն մեր յուրաքանչյուր քայլի վերաբերյալ, բայց Նա տալիս է մեզ Իր Խոսքն ու իմաստությունը և ակնկալում, որ կապրենք դրանցով: Մի՛ եղիր միջակ՝ հուսալով, թե մեծ արդյունքների կհասնես, փոխարենը՝ ընտրի՛ր լինել գերազանց՝ իմանալով, որ գոհացնում ես Աստծուն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գերազանց ընտրությունները բերում են գերազանց արդյունքներ:

Բերկրանք զգա Աստծո կամքի մեջ

«Ես բերկրանք եմ զգում Քո կամքը կատարելուց, ո՛վ իմ Աստված, և Քո օրենքն իմ սրտում է» (ՍԱՂՄՈՍ 40.8):

Եթե ուզում ենք լսել Աստծո ձայնը և հնազանդվել Նրա կամքին, ուրեմն, մեր աղոթքն ամեն առավոտ պիտի լինի այսպիսին.

«Աստվա՛ծ, ուզում եմ ամբողջ կյանքում քայլել Քո կատարյալ կամքի մեջ: Ես չեմ ուզում Քո թույլատրելի կամքը, ես չեմ ուզում որևէ բան՝ առանց Քո հավանության և օրհնության: Եթե փորձեմ անել այն, ինչը չի համապատասխանում իմ կյանքի համար Քո լավագույն մտադրություններին, խնդրում եմ, թո՛ղ սրտումս տարակուսանք զգամ, հոգումս՝ արգելք, որպեսզի մնամ Քո ծրագրի մեջ:

Օգնի՛ր, որ հանձնվեմ Քեզ:

Օգնի՛ր, որ խստավիզ չլինեմ:

Օգնի՛ր, որ կամակոր չլինեմ:

Օգնի՛ր, որ խստասիրտ չլինեմ:

Աստվա՛ծ, ուզում եմ, որ Քո կամքը լիովին իրականանա իմ կյանքում: Ես ճաշակել եմ իմ կամքի պտուղը և գիտեմ, որ եթե ընտրեմ իմ ճանապարհը, ու դա այն չէ, ինչ Դու ես ցանկանում, ապա վատ հետևանքների կհանգեմ: Ես կամենում եմ հնազանդվել Քեզ, բայց խնդրում եմ, օգնի՛ր ինձ հստակ լսել, թե ինչ ես ասում, որ անեմ: Ամե՛ն»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ամեն օր մի քանի անգամ Աստծուն շշուկով ասա՛. «Թո՛ղ Քո կամքը լինի»:

Աղոթք-խնդրանքներ և հարատևություն

«… չունեք, որովհետև չեք խնդրում» (ՀԱԿՈԲՈՍ 4.2):

Աստված նախատեսել է պարզ միջոց՝ ստանալու այն, ինչ ցանկանում ենք՝ առանց դժվարություններ կրելու: Այսօրվա խոսքում ասվում է, որ չունենք որոշակի բաներ, որովհետև Աստծուց չենք խնդրում: Եթե չկա աղոթք, չկա նաև աղոթքի պատասխան. հետևաբար, մենք պետք է աղոթենք և խնդրենք: Աղոթքի այն տեսակը, որի ժամանակ խնդրանքներ ենք ներկայացնում, կոչվում է աղոթք-խնդրանք, և այս աղոթքը շատ կարևոր է, որովհետև Աստված ոչինչ չի անում երկրագնդի վրա, մինչև որևէ մեկը չի աղոթում և չի խնդրում: Մենք համագործակցում ենք Նրա հետ աղոթքի միջոցով: Աղոթքը պարզապես միջոց է հոգևոր ոլորտում Նրա հետ գործակից լինելու և ֆիզիկական ոլորտում արդյունքներ տեսնելու համար: Աղոթքը՝ Երկնքի զորությունը բերում է երկիր:

Եթե մեր աղոթքներն անմիջապես չեն պատասխանվում, գուցե խնդրում ենք այն, ինչն Աստծո կամքը չէ, կամ, գուցե, Աստված է հապաղում պատասխանել, որովհետև Նա զորացնում է մեր հավատքը և օգնում զարգացնելու մեր հոգևոր մկանները՝ սովորեցնելով լինել համբերատար և տոկուն:

Մենք պետք է աղոթենք Աստծուն և մեր խնդրանքները հայտնի դարձնենք Նրան, այլ ոչ թե փորձենք ինքներս ամեն բան իրականացնել: Մենք նաև պետք է վստահենք Նրա իմաստությանը, քանի որ Նա գիտի ինչպես և երբ պատասխանել: Աղոթքը դուռ է բացում Աստծո համար, բայց սեփական ջանքերով ինչ-որ բանի հասնելը միայն հուսախաբ է անում մեզ և խանգարում Աստծուն: Նա սպասում է, որ խնդրենք և վստահենք Նրա ճանապարհներին ու ժամանակներին: Երբ այդպես վարվենք, Նա զորավոր կերպով կգործի մեր կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված ուզում է քեզ համար անել ավելին, քան կարող ես պատկերացնել, ուստի, համարձակ խնդրիր:

Իմաստություն և ողջամտություն

«Երջանիկ (օրհնված, հաջողակ և նախանձելի) է այն մարդը, որ աստվածային իմաստություն է գտնում, և այն մարդը, որ հասկացողություն է ստանում [Աստծո Խոսքից և կյանքի փորձառությունից] …Աստվածային իմաստությունը պատվական է գոհարներից… Նրա ճանապարհները հաճելի ճանապարհներ են, և նրա բոլոր շավիղները խաղաղություն են» (ԱՌԱԿԱՅ 3.13-17):

Երբ ուշադրություն ենք դարձնում այն ուղղությանը, որ Աստված ցույց է տալիս, կայացնում ենք իմաստուն որոշումներ, որոնք բերում են պատիվ, բարգավաճում, բավարարվածություն և խաղաղություն: Երբ Դեյվն ու ես աղոթում ենք, որ Աստված խոսի մեզ հետ և ուղղորդի, իմաստություն և ողջամտություն ենք ցուցաբերում և՛ մեծ, և՛ փոքր հարցերում:

Իմաստությունը միշտ կառաջնորդի քեզ դեպի Աստծո լավագույնը: Օրինակ՝ իմաստությունը սովորեցնում է, որ չես կարող պահպանել ընկերությունդ, եթե փորձում ես վերահսկել այն, ինչ կատարվում է քո և ընկերներիդ կյանքում: Դու չես պահպանի ընկերությունդ, եթե վատաբանես ընկերոջդ ետևից:

Ողջամտությունը կուղղորդի քեզ ֆինանսական հարցերում, և դու չես մտնի պարտքերի մեջ, եթե չծախսես ավելի շատ գումար, քան վաստակում ես: Հարկ չկա, որ Սուրբ Հոգին բարձրաձայն ասի, որ մենք չենք կարող ավելի շատ գումար ելքագրել, քան մուտքագրել ենք: Ողջամտությունն ասում է, որ մենք անախորժության մեջ կհայտնվենք, եթե այդպես վարվենք:

Իմաստությունը թույլ չի տա, որ գերնվիրվենք մեր ժամանակի մեջ: Որքան էլ մտահոգված լինենք ինչ-որ բաներ իրականացնելու համար, մենք կարիք ունենք ժամանակ հատկացնելու և սպասելու Աստծուն, որպեսզի խաղաղություն ստանանք այն բանում, թե ինչ պիտի անենք և ինչ պիտի չանենք: Առակաց 31-ում հիշատակված կինը մտածում էր արտեր գնելու մասին, բայց դա չէր անի, եթե նոր պարտականությունը ստիպեր նրան անտեսել ներկա պարտականությունները:

Իմաստությունը մեր ընկերն է: Այն օգնում է, որ չապրենք ափսոսանքով, և կատարենք ընտրություններ, որոնց համար ուրախ կլինենք հետագայում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. իմաստություն և ողջամտություն ցուցաբերի՛ր քո բոլոր որոշումներում:

Ինչ-որ բան բռնել ես

«Իսկ Հիսուսը նրանց ասաց. «Տղաներ (զավակներ), ուտելու միս (ձուկ) ունե՞ք [ինչ-որ բան բռնել եք հացի հետ ուտելու համար]...»» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 21.5):

Հովհաննեսի Ավետարանի 21-րդ գլխում նկարագրվում է այն պատմությունը, երբ աշակերտներն ամբողջ գիշեր ձկնորսություն արին, բայց ոչինչ չբռնեցին: Եղե՞լ է, որ արել ես այն, ինչ կարողացել ես, և արդյունքի չես հասել: Եթե այդպես է, ուրեմն քեզ ծանոթ է այն զգացողությունը, որ ունեին աշակերտները:

Հիսուսը հայտնվեց լճի ափին և նրանց հարցրեց, թե որևէ բան բռնել են: Աշակերտները բացասական պատասխան տվին: Նա ասաց, որ ուռկանները գցեն նավի աջ կողմը և այնտեղ ձուկ կգտնեն: Նրանք գցեցին և այնքան շատ ձուկ բռնեցին, որ չէին կարողանում ուռկանը քաշել: Այդ պատմությունը օրինակ է այն բանի, թե ինչ է տեղի ունենում, երբ հետևում ենք Աստծո կամքին՝ հակառակ նրա, թե ինչ է տեղի ունենում, երբ հետևում ենք մեր կամքին:

Ըստ էության, Հիսուսն աշակերտներին հարցնում էր. «Որևէ օգուտ ստանո՞ւմ եք նրանից, ինչ փորձում եք անել»: Դա մի հարց է, որը կարող ենք ինքներս մեզ տալ, երբ չունենք որևէ արդյունք այն ջանքերի դիմաց, որ ներդնում ենք մեր ծրագրերի իրականացման մեջ:

Երբ «ձկնորսություն ենք անում» Աստծո կամքից դուրս, դա համարժեք է նավի սխալ կողմում ձուկ որսալուն: Երբեմն մենք պայքարում ենք, ջանք թափում, աշխատում, լարվում՝ փորձելով կյանքի կոչել մեծ բաներ: Մենք ջանում ենք փոխել ինչ-որ բաներ, մարդկանց կամ ինքներս մեզ: Փորձում ենք ավելի շատ գումար վաստակել կամ ավելի մեծ պաշտոն զբաղեցնել: Մենք կարող ենք աշխատել ու աշխատել այս բոլոր ուղղություններով և մեր ջանքերի դիմաց ոչինչ չունենալ ցուցադրելու՝ բացի ուժասպառ լինելուց:

Վերջերս ինչ-որ բան «բռնել ես»: Որևէ բանի հասնե՞լ ես՝ առանց ուժասպառ լինելու. եթե ոչ, գուցե ձկնորսություն ես անում նավի սխալ կողմում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե Աստծուց օգնություն խնդրես և ուշադրություն դարձնես Նրա ձայնին, Նա կասի, թե ո՞ր կողմ նետես ուռկանը:

Աղոթի՛ր ուրիշների համար

«Արդ աղաչում եմ և հորդորում՝ խնդրվածքներ, աղոթքներ, բարեխոսություններ և գոհություն բարձրացնել բոլոր մարդկանց համար» (Ա ՏԻՄՈԹԵՈՍ 2.1):

Երբ աղոթում ենք, և՛ խոսում ենք Աստծո հետ, և՛ լսում Նրան: Աղոթքի տեսակներից է բարեխոսությունը, որը, քեզնից բացի, մեկ ուրիշի համար աղոթելն է: Դու աղաղակում ես Աստծուն ուրիշի անունից՝ նրա կարիքներն աղոթքով բերելով Աստծո առջև և երբեմն նրա իրավիճակի վերաբերյալ Աստծուց ինչ-որ բան լսելով: Բարեխոսությունը աղոթքի կարևոր տեսակներից է, որովհետև շատերը չեն աղոթում իրենց համար կամ չգիտեն ինչպես աղոթել: Ինչո՞ւ: Այն պատճառով, որ նրանք չունեն փոխհարաբերություն Աստծո հետ: Երբեմն էլ հանգամանքներն այնքան բարդ են լինում, լարվածությունը՝ այնքան բարձր, ցավը՝ այնքան ուժգին, կամ իրադրությունը՝ այնքան շփոթեցնող, որ մարդիկ չեն իմանում ինչպես աղոթել իրենց իրավիճակների համար: Լինում են ժամանակներ, երբ մարդիկ այնքան են աղոթում իրենց համար, որ այլևս ուժ չի մնում աղոթքները շարունակելու համար:

Օրինակ՝ մի անգամ այցելեցի իմ ընկերներից մեկին, ով հիվանդանոցում քաղցկեղով պառկած էր: Նա քաջարի մարտիկի պես պայքարել և աղոթել էր, բայց հասել էր մի կետի, երբ այլևս այնքան ուժեղ չէր, որ աղոթեր այնպես, ինչպես ցանկանում էր: Նա ինձ ասաց. «Ջո՛յս, ես այլևս *չեմ կարողանում* աղոթել»: Նա կարիք ուներ, որ ընկերներն աղոթեին իր համար. ոչ թե պարզապես *աղոթեին* իր համար, այլ աղոթեին իր *փոխարեն*, որովհետև ինքն անկարող էր դա անել:

Համոզված եմ, որ քո կյանքում կան մարդիկ, որոնք աղոթքի կարիք ունեն, մարդիկ, որոնք կարիք ունեն, որ իրենց անունից խոսես Աստծո հետ և լսես Նրանից: Քաջալերում եմ՝ խնդրես Աստծուն ցույց տալ այդ մարդկանց և հավատարմությամբ աղոթես նրանց համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եղի՛ր հավատարիմ՝ աղոթելու մարդկանց համար, երբ Աստված առաջնորդի քեզ:

Կանգնել խրամատում

«Եվ Ես նրանցից մարդ որոնեցի՝ պարիսպը շինող և խրամատության առջև կանգնող, Իմ դիմացը՝ երկրի համար, որ նրան չապականեմ, բայց չգտա» (ԵԶԵԿԻԵԼ 22.30):

Այս խոսքում խրամատությունը երկու բաների միջև գոյություն ունեցող տարածքն է, ճեղքը, անջրպետը, որը թույլ չի տալիս, որ միանան երկու առարկա, երկու արարած կամ երկու մարդ: Երբ քարոզում եմ օտար երկրներում, իմ և լսարանի միջև առաջանում է անջրպետ: Եթե բեմում եմ, այդ անջրպետը ֆիզիկական է, կարող է լինել նաև մշակութային անջրպետ, բայց ամենից շատ ինձ մտահոգում է լեզվական անջրպետը: Եթե ուզում եմ, որ մարդիկ հասկանան ինձ, ապա պետք է ունենամ թարգմանիչ՝ մեկին, ով կհեռացնի լեզվական անջրպետը, որպեսզի կարողանամ արդյունավետ կերպով փոխանցել ուղերձը: Թարգմանիչը պետք է գործի իմ անունից՝ վերացնելով այդ անջրպետը և օգնելով մարդկանց հասկանալու այն, ինչ ասում եմ:

Եզեկիել 22.29-31-ում խոսվում է «խրամատության առջև կանգնելու» մասին: Այսօրվա խոսքը Աստվածաշնչի ամենատխուր հատվածներից է: Աստված, ըստ էության, ասում է. «Ինձ անհրաժեշտ էր մեկը, ով կաղոթեր, ու Ես չկարողացա գտնել այդ մեկին, ուստի ստիպված եղա կործանել երկիրը»: Նրան անհրաժեշտ էր ընդամենը մեկ մարդ, որը կաղոթեր, և ամբողջ երկիրը կփրկվեր: Տեսնո՞ւմ ես, թե որքան կարևոր է բարեխոսությունը: Ընդամենը մեկ մարդ աղոթքի միջոցով կարող էր հսկայական փոփոխություն բերել ամբողջ երկրում և փրկել այդ տարածքը: Մենք պետք է աղոթելու պատրաստակամություն ունենանք. զգայուն լինենք Սուրբ Հոգու առաջնորդությանը և հնազանդվենք, երբ Նա մղում է մեզ բարեխոսելու: Մենք երբեք չգիտենք, որ մեր աղոթքը կարող է լինել հենց այն աղոթքը, որը կվերացնի անջրպետը և Աստծո զորությունը կբերի հուսահատ իրավիճակի մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ասա՛ Աստծուն, որ պատրաստ ես աղոթել ուրիշների համար, և արա՛ դա, երբ Նա առաջնորդի քեզ:

Մենք կարող ենք փոփոխություն բերել

«Եվ Եհովան եւ առավ այն չարիքը, որ ասել էր, թե իր ժողովրդին պիտի աներ» (ԵԼԻՑ 32.14):

Գիտե՞ս, որ աղոթքը կարող է փոխել Աստծո մտադրությունը: Աստված կարող է վերանայել Իր ծրագրերն այն պատճառով, որ ինչ-որ մեկը ժամանակ է հատկացրել՝ խոսելու Իր հետ և լսելու Իրենից:

Երբ Մովսեսը բարձրացավ Սինա լեռը՝ Տասը Պատվիրանները ստանալու, նա ավելի երկար մնաց այնտեղ, քան մարդիկ ցանկանում էին: Իրենց առաջնորդի բացակայությունից նրանք մոռացան Տիրոջը, անձնատուր եղան մարմնավոր ցանկություններին և որոշեցին հալեցնել իրենց զարդերը, ձուլել ոսկե հորթ ու երկրպագել նրան: Աստված լեռան վրա խոսեց Մովսեսի հետ և, ըստ էության, ասաց հետևյալը. «Ավելի լավ է՝ վերադառնաս այնտեղ, որովհետև ժողովուրդը խառնաշփոթության մեջ է: Եվ Ես բարկացած եմ դրա համար» (գոհություն Աստծուն, որ Սաղմոս 30.5-ում ասվում է, որ Նրա բարկությունը ակնթարթի չափ է, բայց Նրա ողորմությունը կամ քաղցրությունը՝ հավիտյան):

Մովսեսը սկսեց բարեխոսել ժողովրդի համար, որովհետև շատ էր անհանգստանում նրանց համար: Աստված նրան ասել էր. «Թո՛ղ Ինձ, որովհետև այս ժողովուրդը խստապարանոց և կամակոր է» (տե՛ս Ելից 32.9,10): Բայց Մովսեսը հրաժարվեց հանձնվելուց, որովհետև նրա սրտում անհամաձայնություն կար: Նա սիրում էր այդ ժողովրդին, նա գիտեր Աստծո էությունը և գիտեր Նրա բնավորությունը: Բացի այդ, գիտեր, որ Աստված իսկապես սիրում է այդ ժողովրդին և իրականում չի ուզում թողնել այդ վիճակում:

Մովսեսը խնդրեց, որ Աստված փոխի Իր մտադրությունը (տե՛ս Ելից 32.12), և, համաձայն այսօրվա խոսքի, Աստված փոխեց Իր մտադրությունը: Մենք *կարող ենք* փոփոխություն բերել, երբ աղոթենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ աղոթում ես, Աստված լսում է և պատասխանում:

Լսի՛ր հոգով

«Հոգին է կենդանացնողը, մարմինը ոչինչ օգուտ չի տալիս. այն բանը, որ Ես ձեզ հետ խոսեցի, հոգի է և կյանք» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 6.64):

Երբեմն միտքը, կամքը կամ զգացմունքները խանգարում են Աստծո ձայնը լսելու մեր կարողությանը: Երբ փորձում ենք լսել և հնազանդվել Աստծուն, բացասական մտքերը կարող են ռմբակոծել մեզ այն աստիճան, որ ցանկանանք հանձնվել: Բայց եթե լռեցնենք մեր միտքը և տեսնենք, թե ինչ կա մեր սրտում, Աստված կհաստատի այն, ինչ ասում է մեզ: Մենք կզգանք Նրա պատասխանը խաղաղության և վստահության միջոցով, որոնք կբարձրանան մեր սրտի խորքից, որտեղ բնակվում է Սուրբ Հոգին:

Մի անգամ, հավաքույթից հետո, որին քրտնաջան պատրաստվել էի՝ հույս ունենալով, որ այն օգտակար կլինի մարդկանց, շարունակ մտքումս լսում էի այս խոսքերը. «Ոչ ոք չօրհնվեց, ու մեծ մասը կցանկանար, որ ընդհանրապես եկած չլիներ»:

Ես ինձ թշվառ անհաջողակի պես էի զգում, թեև գիտեի, որ դա Աստծո կամքը չէր: Ի վերջո հանդարտվեցի, լռեցի ու փորձեցի լսել, թե ինչ է ասում Սուրբ Հոգին: Հոգու խորքում անմիջապես լսեցի մեղմ, կամաց ձայն. «Եթե մարդիկ չուզեին լինել այստեղ, ուրեմն չէին գա: Եթե չհավանեին ուղերձը, ապա շատերը կհեռանային: Այդ ուղերձը Ես եմ տվել քեզ, և Ես երբեք որևէ մեկին վատ բան չեմ տալիս քարոզելու, այնպես որ՝ թույլ մի՛ տուր, որ սատանան գողանա քո աշխատանքի բերկրանքը»: Եթե չլսեի այդ խոսքերը, կշարունակեի թշվառ զգալ, բայց Աստծո խոսքերն ինձ կյանք տվեցին:

Մենք լսում ենք Աստծուց մեր հոգու, ոչ թե մտքի միջոցով: Հիշի՛ր դա, և միշտ ժամանակ հատկացրու կանգ առնելու ու հարցնելու, թե ինչ է Աստված ասում քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո խոսքը միշտ կյանք է բերում:

Սովորիր զանազանել

«Երբ որ հասկացողությանը (զանազանմանը) կանչես և ձայն տաս հանճարին... Այն ժամանակ կհասկանաս Տիրոջ երկյուղը և Աստծո գիտությունը կգտնես» (ԱՌԱԿԱՅ 2.3-5):

Աստծո հետ մտերիմ փոխհարաբերություն կառուցելու ընթացքում զարգացնում ենք նաև զանազանման կարողությունը: Այն թույլ է տալիս թափանցելու իրավիճակների խորքը և տեսնելու դրանց էությունը: Միշտ չէ, որ իրավիճակներն այնպիսին են, ինչպիսին թվում են, ուստի զանազանումը շատ արժեքավոր կարողություն է: Եթե ունենանք զանազանող միտք և սիրտ, կխուսափենք բազում անախորժություններից: Քաջալերում եմ քեզ կանոնավոր աղոթել զանազանման համար:

Եթե կայացնենք որոշումներ՝ հիմնվելով արտաքին երևույթների, մեր կարծիքի կամ զգացմունքների վրա, ապա բազմաթիվ ոչ խելամիտ որոշումներ կկայացնենք: Հնարավոր է՝ ինչ-որ բան քեզ լավ թվա, մինչդեռ հոգու խորքում ունես զգացողություն, որ պետք է զգույշ լինես և առաջ չշարժվես: Այս դեպքում պետք է սպասել և մի փոքր ավելի աղոթել՝ խնդրելով, որ Աստված առաջնորդի և օգնի, որ կարողանաս հոգով զանազանել: Երբեք ոչինչ մի՛ արա, եթե չունես խաղաղություն կամ հոգումդ անհարմարություն ես զգում:

Այսօրվա խոսքը քաջալերում է մեզ հասկանալ Տիրոջ երկյուղը: Երբ զգուշանում ենք անել այն, ինչը հակառակ է մեր սրտի զգացողությանը, սովորում ենք հմտանալ Տիրոջ երկյուղի մեջ: Մենք ակնածանք ենք ցուցաբերում այն ամենի հանդեպ, ինչ Նա ցույց է տալիս, նույնիսկ եթե բոլորովին չենք հասկանում դա: Սովորել առաջնորդվել Հոգով՝ նշանակում է բացահայտել և հարգել այն միջոցները, որոնցով Աստված հաճախ խոսում է, իսկ դրա համար անհրաժեշտ է զարգացնել զանազանման կարողությունը: Այնպես որ՝ շարունակի՛ր աղոթել և հմտանալ այս ոլորտում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ կայացրու որոշումներ՝ հիմնվելով միայն մտավոր գիտելիքների վրա. կատարի՛ր ներքին ստուգում և ունեցի՛ր հոգևոր զանազանում:

Պարզապես արա քո մասը

«Տերը լսեց իմ աղաչանքը. Տերն ընդունում է իմ աղոթքը» (ՍԱՂՄՈՍ 6.9):

Յուրաքանչյուր հավատացյալ կանչված է աղոթքի միջոցով խոսելու Աստծո հետ և լսելու Նրա ձայնը, բայց ոչ բոլորն են կանչված բարեխոսի հոգևոր ծառայության մեջ: Օրինակ, ես հավատում եմ, որ Աստված կանչել է Դեյվին՝ բարեխոսելու Ամերիկայի համար: Կարծես նա Տիրոջից «պաշտոնական» հանձնարարություն ունի աղոթելու մեր երկրի համար: Դեյվն իսկապես մտահոգված է ազգային հարցերով ու խնդիրներով, փափագում է տեսնել արթնություն երկրում և խորապես հետաքրքրված է այն ամենով, ինչը վերաբերում է Միացյալ Նահանգներին: Նա ջանասիրաբար ուսումնասիրում է Ամերիկայի պատմությունը և մշտապես տեղեկանում, թե ինչ է կատարվում կառավարությունում: Նա աղոթում է արտասովոր ջերմեռանդությամբ: Ահա թե ինչ նկատի ունեմ, երբ խոսում եմ բարեխոսի պաշտոնում կամ ծառայության մեջ գործող մարդու մասին:

1997 թվականից ականատես եմ, թե ինչպես է Դեյվն աղոթում, աղաղակում և ռմբակոծում երկինքը Միացյալ Նահանգների համար: Ես չեմ արտասվում մեր երկրի համար այնպես, ինչպես նա, բայց դա չի նշանակում, որ չեմ մտածում կամ չեմ աղոթում մեր առաջնորդների համար: Դա պարզապես նշանակում է՝ ես չեմ կարող ինձ ստիպել, որ ունենամ Դեյվի ջերմեռանդությունը, որովհետև այն Աստծուց է: Դա նաև նշանակում է, որ Աստված Դեյվին և ինձ գործածում է մեկ թիմում. Դեյվը իր դերն է կատարում, ես՝ իմ: Եթե մտածեմ, որ ինձ հետ ինչ-որ բան այն չէ, քանի որ չեմ բարեխոսում այնպես, ինչպես Դեյվն է բարեխոսում, ապա կընկնեմ դատապարտության տակ, իսկ դա ետ կպահի իրականացնելու այն, ինչ Աստված կանչել է ինձ անելու: Բայց, եթե ես վստահաբար մնամ իմ տեղում և կենտրոնանամ իմ դերը գերազանց կատարելու վրա, ապա մեր թիմը միշտ կհաղթի: Աստված բոլոր հանձնարարությունները մեկին չի տալիս: Սուրբ Հոգին ամեն բան բաժանում է այնպես, ինչպես հարմար է գտնում, և մենք ընդամենը պետք է կատարենք մեր մասը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հանգստացիր և աղոթիր այնպես, ինչպես Աստված է առաջնորդում:

Այո և ոչ

«Կամ՝ ո՞վ է ձեզնից այն մարդը, որ եթե նրանից իր որդին հաց ուզի, մի՞թե քար կտա նրան: Եվ եթե ձուկ ուզի, մի՞թե օձ կտա նրան» (ՄԱՏԹԵՈՍ 7.9,10):

Միշտ չէ, որ ունենում ենք բավականաչափ խելամտություն՝ խնդրելու ճիշտ բաներ, բայց այսօրվա խոսքը հավաստիացնում է, որ եթե հաց խնդրենք, Աստված մեզ քար չի տա, և եթե ձուկ խնդրենք, Նա մեզ օձ չի տա: Լինում են ժամանակներ, երբ կարծում ենք, թե հաց ենք խնդրում, բայց իրականում քար ենք խնդրում: Այլ խոսքով՝ մենք կարող ենք խնդրել այն, ինչն իսկապես կարծում ենք, թե ճիշտ է, բայց Աստված գիտի, որ այդպիսի խնդրանքի պատասխանը կլինի ամենավատ բանը, որ կարող է երբևէ տալ մեզ:

Մենք կարող ենք միամտորեն, առանց գիտակցելու, խնդրել այն, ինչը վտանգավոր կամ վատ է մեզ համար: Այս պարագայում պետք է ուրախ լինենք, որ Աստված չի պատասխանում մեր խնդրանքին: Նման դեպքերում մենք տեղյակ էլ չենք, որ եթե Աստված մեր խնդրանքին ասեր «այո», ապա դա նման կլիներ տան մեջ օձ բաց թողնելուն: Մենք պետք է վստահենք Նրան այնքան, որ կարողանանք ասել. «Աստվա՛ծ, ես ունեմ համարձակություն խնդրելու Քեզնից ցանկացած բան: Բայց չեմ ուզում այն, ինչը Քո կամքով չէ: Ես վստահում եմ Քեզ, Աստվա՛ծ: Եթե չստանամ իմ խնդրանքը, ապա կիմանամ, որ ճիշտ ժամանակը չէ, կամ՝ Դու ավելի լավ բան ունես ինձ համար, և իմ մտքով դեռևս չի անցել, որ աղոթեմ դրա համար»: Երբեք մի՛ ունեցիր վատ վերաբերմունք այն պատճառով, որ Աստված չի տալիս քեզ այն, ինչ ուզում ես:

Աստված ուզում է, որ մենք օրհնվենք: Նա ուզում է, որ ունենանք ոչ միայն այն, ինչ ցանկանում ենք, այլև այն, ինչը լավագույնն է մեզ համար: Եթե իսկապես վստահում ենք Աստծուն, ապա պետք է վստահենք Նրան՝ և՛ մեր խնդրանքներին «այո» ասելիս, և՛ դրանք մերժելիս:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. վստահի՛ր Աստծուն, երբ ասում է «այո», և երբ ասում է «ոչ»:

Շատ զորավոր աղոթք

«...Սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ անիծողներին. բարի՛ արեք ձեզ ատողներին և աղո՛թք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար» (ՄԱՏԹԵՈՍ 5.44):

Զորավոր աղոթքներից մեկը, որ կարող ես անել, թշնամիների համար աղոթքն է: Եթե ուզում ես տեսնել մեկին, ով զորավոր է աղոթքում, փնտրի՛ր այնպիսի մարդու, որը բարեխոսում է թշնամու համար: Ես հավատում եմ, որ Աստված մեծապես օրհնում է մեզ, երբ բարեխոսում ենք նրանց համար, ովքեր վիրավորել կամ դավաճանել են մեզ:

Հիշո՞ւմ ես Հոբին: Նա ստիպված եղավ աղոթել ընկերների համար, որոնք իսկապես ցավեցրել և հիասթափեցրել էին իրեն: Բայց աղոթքից անմիջապես հետո Աստված սկսեց վերականգնել նրա կյանքը: Ըստ էության, Աստված վերադարձրեց Հոբին կրկնապատիկը, քան նա կորցրել էր (տե՛ս Հոբ 42.10): Զորավոր է, երբ աղոթում ենք մեզ վիրավորողների համար, որովհետև այդ ժամանակ սիրով ենք լցվում նրանց հանդեպ և հնազանդվում ենք Աստծո Խոսքին:

Այսօրվա խոսքում կարող ենք լսել Աստծո ձայնը: Ի՞նչ է պատվիրում Հիսուսը, որ անենք: Նա հորդորում է աղոթել մեր թշնամիների համար: Երբ մտածում ես այն մարդկանց մասին, որոնք շահագործել են քեզ, բռնության ենթարկել, անհանգստացրել և չարախոսել, օրհնի՛ր նրանց. մի՛ անիծիր: Աղոթի՛ր նրանց համար: Աստված գիտի, որ թշնամիներին օրհնելը հեշտ չէ, և հնարավոր է՝ ցանկություն չունենաս դա անելու: Բայց դու չես անում դա, որովհետև ցանկանում ես. դու անում ես Տիրոջ համար: Երբ անիծելու փոխարեն աղոթում ես և օրհնում, դա հզոր ազդեցություն է ունենում հոգևոր աշխարհում, և արդյունքում Աստված հրաշալի բաներ է անում քո կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թույլ մի՛ տուր, որ անարգ մարդիկ իջեցնեն քեզ իրենց մակարդակին՝ գայթակղելով, որ վարվես այնպես, ինչպես իրենք են վարվում:

Միաբանությունը բերում է օրհնություններ

«Տե՛ս, ինչքա՛ն բարի և ինչքա՛ն ցանկալի է, որ եղբայրներն իրար հետ մեկտեղ բնակվեն... Հերմոնի շաղի պես է, որ վայր է գալիս Սիոնի սարերի վրա. որովհետև Տերն այնտեղ պատրաստեց օրհնություն և կյանք հավիտյան» (ՍԱՂՄՈՍ 133.1,3):

Երբ որոշ ժամանակ աղոթում ես ինչ-որ բանի համար և կարծես չես լսում Աստծուց, գուցե պետք է գտնես մեկին, ով քեզ հետ համաձայնության աղոթք կանի: Այդպիսի միաբանությունը հզոր հոգևոր ուժ է և, համաձայն այսօրվա խոսքերի, դա բարի է և Աստծո օրհնությունն է պատրաստում:

Երբ երկու կամ ավելի մարդ համաձայնության է գալիս, Հիսուսը խոստանում է լինել նրանց հետ, և Նրա ներկայությունն ավելի շատ զորություն է բաց թողնում մեր կյանքում և հանգամանքներում, քան կարող ենք երբևէ պատկերացնել: Մատթեոսի 18.19,20 խոսքերում Նա ասում է. «... եթե ձեզնից երկուսը երկրի վրա միաբանվեն՝ ինչի համար, որ խնդրեն, կլինի նրանց Իմ Հորից, որ Երկնքում է: Որովհետև, որտեղ երկու կամ երեք հոգի Իմ անունով ժողովված լինեն՝ Ես այնտեղ՝ նրանց մեջ եմ»: Աստված մեզ հետ է նաև առանձին-առանձին, բայց մեր զորությունն ավելանում է, երբ միաբանվում ենք և համաձայնության գալիս: Աստվածաշնչում գրված է, որ մեկը կարող է հալածել հազարին, և երկուսը կարող է փախցնել տասը հազարին (տե՛ս Երկրորդ Օրինաց 32.30): Ինձ դուր է գալիս այսպիսի թվաբանությունը:

Քանի որ Աստծո օրհնությունը հանգչում է միաբանության վրա, և Նրա ներկայությունը նրանց հետ է, ովքեր համաձայնության են գալիս Իր անունով, թշնամին ջանասիրաբար աշխատում է բաժանել մարդկանց, վիճաբանություն բերել փոխհարաբերություններում և անհամերաշխություն ու գժտություն սերմանել մարդկանց մեջ: Մենք պետք է հասկանանք միաբանության և համաձայնության զորությունը և գործադրենք այն՝ ուրիշների հետ միասին խոսելով Աստծո հետ և ականջ դնելով Նրա ձայնին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ թող ուրիշների հետ աղոթելը:

Աստված ունի բոլոր պատասխանները

«Տերը լսի քեզ նեղության օրը, և Հակոբի Աստծո անունը պաշտպանի քեզ» (ՍԱՂՄՈՍ 20.1):

Եթե երբևէ փոխհարաբերությունների մեջ ես եղել մարդկանց հետ, փորձել ես տնօրինել ֆինանսներդ, աշխատել ես, ջանացել ես բացահայտել և իրականացնել Աստծո նպատակը քո կյանքի համար կամ ձգտել ես ունենալ հոգևոր աճ, ապա, հավանաբար, բախվել ես խնդիրների: Խնդիրները կյանքի մաս են կազմում, և երբ ազատվում ես մի խնդրից, ամենայն հավանականությամբ, բախվում ես մեկ այլ խնդրի: Դա վերաբերում է բոլորիս, և չնայած նրան, որ մենք հասունանում ենք և ձեռք բերում կարողություններ՝ դիմակայելու, համբերելու, հաստատուն լինելու և հաղթանակի մեջ ապրելու, միևնույն է, ստիպված ենք լինում պայքարել այս կամ այն խնդրի դեմ:

Միայն Աստված ունի լուծումներ կյանքի խնդիրների համար, և լավագույն բանը, որ կարող ենք անել՝ մեր խնդիրները Աստծուն հանձնելն է: Մենք պետք է դադարենք խնդիրների մասին անընդհատ մտածելուց, դրանց մասին խոսելուց, դրանց համար անհանգստանալուց. մենք պետք է սովորենք Աստծուն հանձնել կյանքի ճնշումներն ու խնդիրները և թույլ տալ, որ Նա կարգավորի ամեն բան: Եթե Աստծուն հանձնենք մեր ճնշումներն ու իրավիճակները, ավելի հեշտությամբ կվայելենք կյանքը, ավելի ուրախ, երջանիկ և հանգիստ կլինենք:

Աստված մի ակնթարթում կարող է անել ավելին, քան մենք կարող ենք անել՝ մի ամբողջ կյանք պայքարելով ու մաքառելով: Նա կարող է անմիջապես խոսել քեզ հետ և լիովին փոխել իրավիճակը. Նրա մեկ խոսքը կարող է լուծել ամեն բան: Աստծո համար ոչինչ չափազանց մեծ չէ, որ չիրականացնի, և ոչինչ չափազանց փոքր չէ, որ ուշադրություն չդարձնի: Նա հոգ է տանում քեզ վերաբերող *ամեն ինչի* համար, այնպես որ, տո՛ւր քո խնդիրները Նրան, և թող Նա տա քեզ այն լուծումները, որոնց կարիքն ունես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. տո՛ւր քո խնդիրներն Աստծուն, և թող Նա տա քեզ լուծումները:

«Քաղցր» բեռ

«Սակայն, ո՛վ Տեր, իմ Աստվա՛ծ, նայի՛ր Քո ծառայի աղոթքին և նրա աղերսանքին, որ լսես այս պաղատանքը և աղոթքը, որ ծառադ այսօր Քո առջև մատուցում է» (Գ ԹԱԳԱՎՈՐԱՅ 8.28):

Երբեմն, ուրիշների համար աղոթելիս, Աստծուց ստանում ես, ինչպես ոմանք ենք անվանում, աղոթքի կամ բարեխոսության բեռ: Այդ բեռը ծանրացնում է քո սիրտը և կարևոր դառնում քեզ համար: Դա մի բան է, որ Աստված խնդրում է քեզ կրել աղոթքում, մի բան, որից չես կարող ազատվել: Երբեմն Աստված կարող է խոսել քեզ հետ և բացատրել, թե ինչ բեռ է դա: Այլ դեպքերում դու նույնիսկ չգիտես կամ լիովին չես հասկանում, թե ինչն է քեզ անհանգստացնում. միայն գիտես, որ *պետք է* աղոթես:

Ոմանք կանչված են շատ աղոթելու որոշակի բաների համար: Իմ ամուսինը շատ է աղոթում Ամերիկայի համար: Ես գիտեմ մարդկանց, որոնք մշտապես աղոթում են Իսրայելի համար: Մի կին ինձ ասաց, որ աղոթում է պատերազմի վետերանների համար: Ես հավատում եմ, որ Աստված անդրադառնում է աշխարհում գոյություն ունեցող յուրաքանչյուր կարիքին: Հարկ չկա, որ բոլորս աղոթենք նույն բանի համար, որովհետև եթե այդպես վարվեինք, ապա հոգ չէր տարվի բոլոր կարիքների համար: Ուշադրություն դարձրու, թե ինչ է Աստված դնում քո սրտում, և աղոթիր հենց ա՛յդ կարիքի համար:

Աստված խոսում է մեզ հետ նաև ուրիշների համար մեզ վրա աղոթքի բեռ դնելու միջոցով: Հաճախ Նա անում է դա առանց խոսքերի՝ մեր սրտում մարդկանց համար անհանգստության և պատասխանատվության զգացում առաջացնելով: Այսկերպ Նա խնդրում է մեզ աղոթել նրանց համար: Ուշադրություն դարձրու այն բեռներին, որ Նա դնում է քեզ վրա, և հավատարի՛մ եղիր աղոթելու՝ արձագանքելով Նրա խնդրանքին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ աղոթում ես ուրիշների համար, հիշի՛ր, որ ինչ-որ մեկն էլ Աստծո կարգադրությամբ աղոթում է քեզ համար:

Հիշեցրու Աստծուն Իր Խոսքը

«Քո պարիսպների վրա, ո՛վ Երուսաղեմ, պահապաններ եմ դրել. նրանք ամբողջ օրը և ամբողջ գիշերը բնավ չպիտի լռեն. դուք, որ [Նրա ծառաներն եք և ձեր աղոթքով] հիշեցնում եք Տիրոջը [Իր խոստումները], մի՛ լռեք» (ԵՍԱՅԻ 62.6):

Այսօրվա խոսքում մեզ պատվիրվում է հիշեցնել Աստծուն այն խոստումները, որ տվել է, և դա անելու լավագույն միջոցը Նրա Խոսքով աղոթելն է:

Աստծո Խոսքը չափազանց արժեքավոր է Նրա համար և պետք է արժեքավոր լինի նաև մեզ համար: Վերջին հաշվով, Նա հստակ խոսում է մեզ հետ Իր Խոսքով, և դա հուսալի միջոց է Նրա ձայնը լսելու համար: Ըստ էության, «Ընդլայնված Աստվածաշնչում» Սաղմոս 138.2-ը հնչում է այսպես.

«Երկրպագություն կանեմ Քո սուրբ տաճարի առջև և կգոհանամ Քո անունից Քո ողորմության համար և Քո ճշմարտության համար և Քո հավատարմության համար. որ ամեն ինչից վեր բարձրացրիր Քո անունը և Քո Խոսքը ու Քո ամեն անունից բարձր մեծացրիր Քո Խոսքը»: Այստեղ նշվում է, որ Աստված Իր Խոսքը մեծացնում է նույնիսկ Իր անունից: Եթե Նա այդ աստիճան մեծարում է Իր Խոսքը, ապա մեզ համար առաջնահերթ պետք է դառնա Նրա Խոսքն իմանալը, այն ուսումնասիրելը: Մենք պետք է սիրենք Խոսքը, թույլ տանք, որ այն խորը արմատներ գցի մեր սրտում, գնահատենք ավելի բարձր, քան որևէ այլ բան, և ընդգրկենք մեր աղոթքների մեջ:

Երբ մեծարում ենք Խոսքը և նվիրվում նրան այնպես, ինչպես հենց նոր նկարագրեցի, մենք «բնակվում ենք» նրանում (տես Հովհաննես 15.7): Խոսքի մեջ բնակվելը և թույլ տալը, որ Խոսքը բնակվի մեր մեջ, անմիջական կապ ունեն աղոթքում վստահություն ունենալու և աղոթքների պատասխանը ստանալու հետ: Երբ աղոթում ենք Աստծո Խոսքով, քիչ հավանական է, որ կաղոթենք այն բաների համար, որոնք համաձայն չեն Աստծո կամքին:

Հիսուս Քրիստոսը կենդանի Խոսքն է (տես Հովհաննես 1.1-4): Բնակվելով Խոսքի մեջ՝ բնակվում ենք Նրանում, և դա աննկարագրելի զորություն է տալիս մեր աղոթքներին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո Խոսքը նորոգում է քո միտքը և սովորեցնում մտածել այնպես, ինչպես Աստված է մտածում:

Հոգևոր ուժ

«Մեկ մարդն ինչպե՞ս կհալածեր հազարին, և երկու մարդն ինչպե՞ս կփախցներ տասը հազարին, եթե նրանց Վեմը նրանց չծախեր, և Եհովան նրանց չմատներ» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՅ 32.30):

Ինչպես արդեն ասել եմ, Աստված պատասխանում է համաձայնության աղոթքներին, երբ մարդիկ, որոնք աղոթում են, ապրում են համաձայնության մեջ իրենց կյանքում: Նա այնքան բարձր է գնահատում այն մարդկանց, որոնք գին են վճարում համաձայնության, միաբանության և ներդաշնակության մեջ ապրելու համար, որ, ըստ էության, նրանց ասում է. «Երբ մեկտեղ հավաքվեք, Իմ զորությունը կարձակվի ձեր մեջ: Ձեր համաձայնության ուժն այնքան գործուն է, որ ճեղքում կբերի. դրանում մի՛ կասկածեք: Ես կանեմ դա»:

Համաձայնությունն այնքան հզոր է, որ գործում է բազմապատկման, ոչ թե գումարման սկզբունքով: Այդ է պատճառը, որ այսօրվա խոսքում ասվում է՝ մեկը կարող է փախցնել հազարին, երկուսը՝ տասը հազարին: Եթե համաձայնությունը հիմնված լիներ գումարման սկզբունքի վրա, ապա մեկը կփախցներ հազարին, երկուսը՝ երկու հազարին: Միաբանությունը պատրաստում է Աստծո օրինությունը, իսկ Աստծո օրինությունը բերում է բազմացում: Այդ պատճառով ճշմարիտ համաձայնության աղոթքը հզոր և ահռելի ուժ է հոգևոր աշխարհում:

Երբ մասնատվում ենք, մենք թուլանում ենք, իսկ երբ միաբանվում ենք, դառնում ենք ուժեղ: Զորությունը, որ հասանելի է մեզ, անկասկած արժե այն ջանքերին, որ անհրաժեշտ է միաբանություն և ներդաշնակություն պահպանելու համար: Նշանակություն չունի՝ ինչ են անում կամ ինչ չեն անում ուրիշները, դու արա քո՛ մասը, և Աստված կօրհնի քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու չես կարող ստիպել, որ բոլորը դուրեկան լինեն, բայց կարող ես թույլ չտալ, որ նրանք վրդովեցնեն քեզ:

Ստացիր զորություն աղոթքից

«…Եվ Նա, փագնապի մեջ լինելով, ավելի եռանդով էր աղոթք անում: Եվ Նրա քրտինքն էր՝ ինչպես արյան կաթիլներ, որ թափվում են երկրի վրա» (ՂՈՒԿԱՍ 22.43,44):

Երբ մոտենում էր խաչվելու ժամանակը, Հիսուսը սաստիկ պայքարի մեջ էր, որն ընթանում էր Նրա մտքում և զգացմունքներում: Աստծո կամքը կատարելու համար Նրան անհրաժեշտ էր Աստծո զորությունը, որն անհրաժեշտ է նաև մեզ: Նա աղոթեց և ստացավ այդ զորությունը: Աստվածաշունչը հաստատում է, որ երբ Նա աղոթում էր, հրեշտակներն իջան երկնքից և ծառայում էին Նրան:

Երբեք մի՛ ենթադրիր, թե այն, ինչ Աստված խնդրում է, որ անես, չափազանց դժվար է: Եթե իսկապես պատրաստակամ լինես կատարելու Աստծո կամքը և խնդրես Նրան, որ զորացնի քեզ, ապա Նա կանի դա: Խոսքեր մի՛ վատնիր՝ Աստծուն և ուրիշներին ասելով, թե ինչ անհնարին առաջադրանք է քեզ տրված: Այդ նույն եռանդն օգտագործիր՝ խնդրելով Աստծուն տալ քեզ քաջություն, վճռականություն և ուժ: Կարծում եմ, հրաշալի է, երբ ականատես ես լինում, թե ինչպես է Աստված համագործակցում անհատի հետ և հնարավորություն տալիս նրան իրականացնելու անհնարինը:

Շատ բաներ մարդու համար անհնարին են, բայց Աստծո հետ անհնարին ոչինչ չկա: Եթե հենց հիմա ճգնաժամի կամ դժվարության առջև ես կանգնած, խնդրում եմ, հիշիր այն պայքարը, որի միջով Հիսուսն անցավ Գեթսեմանի պարտեզում: Նա այնպիսի ճնշում էր զգում, որ Նրա քրտինքն արյուն դարձավ: Եթե Աստծո զորությամբ Հիսուսը կարողացավ անել այն, ինչ սահմանված էր, ապա դու նույնպես կարող ես հաղթանակ ունենալ աղոթքի միջոցով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված երբեք չի հանձնարարի քեզ անել այն, ինչը չես կարող իրականացնել Իր օգնությամբ:

Դավանի՛ր Խոսքը

«Թող իմ լեզուն խոսի Քո Խոսքի համար, որովհետև Քո բոլոր պատվիրաններն արդարություն են» (ՍԱՂՄՈՍ 119.172):

Աստծո Խոսքը մեծագույն գանձն է: Այն լի է իմաստությամբ, խրատով, ճշմարտությամբ և այն ամենով, ինչ անհրաժեշտ է նպատակասլաց, հզոր և հաջողակ կյանքով ապրելու համար: Մենք պետք է ներառենք Խոսքը մեր աղոթքների մեջ՝ դավանելով այն յուրաքանչյուր հանգամանքում և իրավիճակում: *«Դավանել»*՝ նշանակում է «ասել նույն բանը», ուստի երբ դավանում ենք Խոսքը, ասում ենք նույն բաները, ինչ Աստված է ասում. մենք համաձայնության ենք գալիս Նրա հետ: Եթե իսկապես ուզում ենք խորը և կենսունակ փոխհարաբերություն ունենալ Աստծո հետ, ապա պետք է համաձայնենք Նրա հետ, իսկ դրան կօգնի Խոսքի դավանությունը: Դավանությունն ամրապնդում է Խոսքի գիտությունը և հավատքն առ Աստված, ինչն էլ նպաստում է մեր աղոթքների հստակությանն ու արդյունավետությանը:

Խոսքը դավանելու համար՝ պետք է իմանանք այն, որովհետև մենք կարող ենք համաձայնել Աստծո հետ միայն այն ժամանակ, երբ գիտենք, թե ինչ է արել և ինչ է ասել: Հաճախ հանդիպում եմ մարդկանց, որոնք խնդրում են Աստծուն տալ այն, ինչ արդեն ունեն, կամ դարձնել իրենց այնպիսին, ինչպիսին արդեն կան, և ես ուզում եմ ասել. «Դադարե՛ք այդպես աղոթելուց: Աստված արդեն ավարտել է այն աշխատանքը, որ խնդրում եք»: Կարիք չկա, որ խնդրեք Աստծուն օրհնել ձեզ, որովհետև Նա արդեն օրհնել է: Ավելի լավ կլինի ասել. «Աստվա՛ծ, շնորհակալություն, որ Քո Խոսքի համաձայն ես օրհնված եմ»: Այն աղոթքները, որոնց միջոցով խնդրում ենք, որ Աստված տա մեզ այն, ինչ արդեն տվել է, միանգամայն ավելորդ են: Երբ աղոթում ենք Աստծո Խոսքով կամ հիշեցնում Աստծուն Նրա Խոսքը, մենք մեծարում ենք Նրա Խոսքը և ինքներս մեզ հիշեցնում, թե ինչ է այն ասում: Ամեն անգամ, երբ խոսում ենք Նրա Խոսքը, երկնքից զորություն է արձակվում՝ երկրի վրա փոփոխություն բերելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո Խոսքը, որը հավատքով դուրս է գալիս քո շուրթերից, ամենահզոր ուժն է երկնքում և երկրի վրա:

Սովորի՛ր Հիսուսի աղոթքներից

«…Հա՛յր, թո՛ղ դրանց, որովհետև չգիտեն, թե ինչ են անում…» (ՂՈՒԿԱՍ 23.34):

Կարծում եմ՝ մարդկանց բնավորության և հոգևոր հասունության մասին շատ բան է հայտնում այն, թե ինչպես են նրանք աղոթում և ինչի համար են աղոթում: Կար ժամանակ, երբ իմ աղոթքի կյանքը վկայում էր հոգևոր ոչ հասուն լինելու մասին: Թեև ես վերստին ծնված էի, լցված էի Սուրբ Հոգով և սովորեցնում էի Աստծո Խոսքը, սակայն իմ աղոթքները մարմնավոր էին: Ես ունեի խնդրանքների մի ցուցակ, որոնց, իմ կարծիքով, Աստված պետք է պատասխաներ, որպեսզի ես երջանիկ լինեի: Դրանք սովորական խնդրանքներ էին. «Տե՛ր, այնպես արա, որ իմ ծառայությունն աճի: Տո՛ւր մեզ նոր մեքենա, ա՛յս արա, ա՛յն արա: Թող Դեյվը փոխվի: Թող երեխաներն իրենց ճիշտ պահեն» և այլն:

Ի պատասխան՝ Աստված պարզապես ասաց. «Ուզում եմ, որ քննես Հիսուսի և Պողոսի աղոթքները: Այնուհետև կխոսենք քո աղոթքի կյանքի մասին»: Իհարկե, Աստվածաշնչում կան շատ աղոթքներ, հատկապես Սաղմոսներում, բայց Աստված ասաց ինձ հետևել Հիսուսի աղոթքներին, որոնք գրված են Ավետարաններում, և Պողոսի աղոթքներին, որոնք գրված են Թղթերում:

Երբ սկսեցի աղոթել այնպես, ինչպես Հիսուսն էր աղոթում, բացահայտեցի, որ չկա ավելի զորավոր աղոթք, քան այն, որը հիմնված է Աստծո Խոսքի վրա, որովհետև Խոսքում արտացոլվում է այն, ինչը կարևոր է Նրա համար: Հիսուսի աղոթքներից մեկը մեջբերված է այսօրվա խոսքում: Նա ուրիշ աղոթքներ էլ արեց, այդ թվում՝ աշակերտների սրբության համար. «Սրբացրո՛ւ նրանց [սրբի՛ր, առանձնացրո՛ւ Քեզ համար, դարձրո՛ւ սուրբ] Քո ճշմարտությամբ. Քո Խոսքը Ճշմարտություն է» (Հովհաննես 17.17), Իր ժողովրդի միաբանության համար (տե՛ս Հովհաննես 17.23) և Պետրոսի համար. «Բայց Ես աղաչեցի քեզ համար, որ քո հավատքը չպակասի» (Ղուկաս 22.32):

Քաջալերում եմ քեզ կարդալ Ավետարանները և տեսնել, թե ինչպես էր Հիսուսն աղոթում, այնուհետև նույնկերպ դո՛ւ աղոթիր՝ խոսելով Աստծո հետ և լսելով Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. աղոթի՛ր, որ Աստված հայտնի Իր սերը քո հանդեպ, և որ գիտակցես ու վերապրես այդ սերը:

Սովորիր Պողոսի աղոթքներից

«Որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը՝ փառքի Հայրը, տա ձեզ իմաստության և հայտնության հոգի...» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1.17):

Այսօր ուշադրությունդ կենտրոնացրու Պողոսի աղոթքների վրա: Երբ կարդացի նրա աղոթքները Եփեսացիների, Փիլիպեցիների և Կողոսացիների թղթերում, շատ վատ զգացի մարմնավոր աղոթքներիս համար: Պողոսի աղոթքներն այնպիսի ազդեցություն ունեցան ինձ վրա, որ իմ աղոթքի կյանքն ընդմիշտ փոխվեց: Պողոսը երբեք չէր աղոթում, որ մարդիկ հեշտ կյանք ունենային: Փոխարենը, աղոթում էր, որ կարողանային անխռով տանել այն ամենը, ինչին բախվում էին կյանքում, լինեին համբերատար ու հաստատուն և դառնային Աստծո շնորհքի կենդանի օրինակներ: Նա աղոթում էր այն բաների համար, որոնք կարևոր էին Աստծո համար, և փորձառությունից կարող եմ հավաստիացնել, որ երբ այդպիսի աղոթքներ ենք անում, Աստված անհավանական զորություն է արձակում մեր կյանքի մեջ: Մենք պետք է հոգ տանենք ավելի շատ մեր հոգևոր վիճակի, քան մեր ցանկությունների համար:

Այսօրվա խոսքում Պողոսն աղոթում է իմաստության և հայտնության հոգու համար, և սա պետք է լինի մեր հիմնական խնդրանքը: Կարծում եմ, Աստծուց հայտնություն՝ հոգևոր խորաթափանցություն և հասկացողություն խնդրելը առավել կարևոր աղոթքներից է: «Հայտնություն»՝ նշանակում է «բացահայտում»: Մենք պետք է խնդրենք Աստծուց հայտնել այն, ինչ պատկանում է մեզ Քրիստոսում: Մենք կարիք ունենք, որ Նա հայտնի Խոսքի ճշմարտությունները, որպեսզի հասկանանք, թե ինչպես աղոթենք մեր և ուրիշների համար: Երբ ինչ-որ մեկը պատմում է աստվածաշնչյան որևէ սկզբունքի կամ հոգևոր ճշմարտության մասին, դա *տեղեկություն* է: Բայց երբ Աստված օգնում է քեզ հասկանալ այդ տեղեկությունը, այն դառնում է *հայտնություն*. իսկ հայտնությունը մի բան է, որը ճշմարտությունն այնքան իրական է դարձնում, որ ոչինչ չի կարող խլել այն քեզնից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դադարեցրու մարմնավոր աղոթքները և խնդրիր, որ Աստծո ներկայությունն ավելանա քո կյանքում:

Աստված միշտ մեզ հետ է

«Թե այս Աստվածն է մեր Աստվածը՝ միշտ և հավիտյան. Նա կառաջնորդի մեզ մինչև մահ» (ՍԱՂՄՈՍ 48.14):

Մխիթարող է այն խոստումը, որ Աստված կառաջնորդի մեզ, քանի դեռ ապրում ենք այս երկրագնդի վրա: Մենք երբեք մենակ չենք, որովհետև Նա մեզ հետ է: Նա մշտապես հսկում է մեզ:

Աստծուց լսելու կարողությունը զարգացնելիս պետք է հիշես, որ աստվածային առաջնորդությունը հիմնական միջոցն է, որով Նա խոսում է: Ձևավորի՛ր հոգևոր սովորություն՝ ճանաչելու Աստծուն այն ամենում, ինչ անում ես՝ խնդրելով Նրա առաջնորդությունը, ապա հավատա, որ ունես այն:

Ես մտադիր եմ այսօր գնումներ կատարել և խնդրելու եմ, որ Աստված առաջնորդի ինձ: Հնարավոր է՝ Նա առաջնորդի այնպիսի խանութ, որտեղ, ի զարման ինձ, զեղչեր են, կամ, գուցե, ուղղորդի այնպիսի ճանապարհով, որ հանդիպեմ մեկին, ով քաջալերանքի կարիք ունի: Ես հավատում եմ, որ իմ քայլերը Տերն է հաստատում (տե՛ս Սաղմոս 37.23): Հավատում եմ, որ Աստված կառաջնորդի ինձ գնելու այն, ինչի կարիքն ունեմ, և կօգնի, որ չգնեմ այն, ինչի կարիքը չունեմ: Ես ուզում եմ, որ Նա ներգրավված լինի այն ամենում, ինչ անում եմ, և հուսով եմ, որ դա նաև քո ցանկությունն է:

Ուսմունքի ծառայություններ անցկացնելիս հաճախ է լինում, երբ աստվածային առաջնորդություն եմ ունենում: Ես մշտապես պատրաստվում եմ ծառայությանը և ուսումնասիրում այն, ինչի մասին պետք է խոսեմ, սակայն, հաճախ, երբ սկսում եմ խոսել, հայտնաբերում եմ, որ Աստված առաջնորդում է այլ ուղղությամբ: Նա գիտի, թե ներկա գտնվողներն ինչի՛ կարիք ունեն և ի՛նչ պետք է լսեն, և իմ գործն է թույլ տալ, որ Նա՛ վերցնի ղեկն Իր ձեռքը:

Ուզում եմ հիշեցնել, որ Աստծուց լսելը կարող է հաճախ միանգամայն բնական թվալ: Մի՛ փնտրիր գերբնական փորձառություններ, փոխարենը փնտրի՛ր Աստծո առաջնորդությունը: Նրա Հոգին քո մեջ է, և Նա հաճույք է ստանում, երբ ներգրավված է լինում քո բոլոր գործողություններում: Այսօր ինչ էլ անես կամ ուր էլ գնաս, ակնկալի՛ր, որ Նա կառաջնորդի քեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված միշտ քեզ հետ է և կառաջնորդի այն ամենում, ինչ այսօր անում ես:

Հոգով առաջնորդված համառություն

«Ուրեմն ի՞նչ անեմ. աղոթք կանեմ Հոգով [Սուրբ Հոգով, որ իմ ներսում է], աղոթք կանեմ նաև մտքով և հասկացողությամբ...» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 14.15):

Ուզում եմ քաջալերել քեզ, որ համառ, հաստատակամ աղոթքներ անես, որոնք առաջնորդված են Սուրբ Հոգով. աղոթքներ, որոնք ոչ թե օր-օրի կրկնվում են, այլ բխում են սրտից և դրսևորում անկոտրում կամք: Կարելի է մեխանիկորեն արտաբերել բառեր, որոնք որևէ իմաստ չունեն, և այդպիսի աղոթքները ոչ այլ ինչ են, քան անարդյունավետ աշխատանք: Ես կարող եմ ամբողջությամբ մեջբերել Տերունական աղոթքը՝ միաժամանակ մտածելով մեկ այլ բանի մասին, իսկ դա չի փառավորի Աստծուն, և որևէ օգուտ չի տա ինձ, բայց եթե անկեղծ լինեմ և ի սրտե աղոթեմ, Աստված կլսի և կգործի իմ օգտին:

Դատարկ խոսքերը ոչինչ են Աստծո համար և որևէ ազդեցություն չունեն մեր կյանքում, ուստի նույնիսկ այն ժամանակ, երբ կրկին ու կրկին աղոթում ենք միևնույն բանի համար, պետք է զգույշ լինենք, որ անիմաստ կրկնողությամբ չզբաղվենք: Փոխարենը՝ թույլ տանք, որ Սուրբ Հոգին առաջնորդի մեզ նորովի, նույնիսկ երբ անդրադառնում ենք մի թեմայի, որի համար երկար ժամանակ աղոթել ենք: Երբեմն Նա կառաջնորդի, որ ավելի ջանասեր և համառ լինենք այս կամ այն հարցում, բայց կա տարբերություն կրկնողության և Հոգով առաջնորդված համառության միջև:

Աղոթքում ասվող խոսքերը, որոնք միացած չեն մեր սրտին, խոսքեր են առանց զորության: Երբ աղոթում ենք, պիտի կենտրոնանանք այն բանի վրա, ինչ ասում ենք: Մենք չպետք է արտաբերենք անգիր արած խոսքեր, բայց սրտով հեռու լինենք Աստծուց: Արդարի ջերմեռանդ (անկեղծ, շարունակական) աղոթքը հսկայական զորություն է բաց թողնում (տե՛ս Հակոբոս 5.16):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քո անկեղծ աղոթքներն ունեն զորություն, և Աստված լսում է:

Աղոթի՛ր, քանի դեռ շատ ուշ չէ

«Եվ երբ որ այն տեղը հասավ, նրանց ասաց. «Աղո՛թք արեք, որ փորձության մեջ չմտնեք»» (ՂՈՒԿԱՍ 22.40):

Աշակերտները տարբեր գայթակղությունների էին ենթարկվում, մինչ Հիսուսի հետ Գեթսեմանի պարտեզում էին: Գուցե ցանկանում էին փախչել, թաքնվել կամ Պետրոսի պես ուրանալ Քրիստոսին: Հիսուսը նրանց չասաց՝ աղոթեն, որ չփորձվեն, այլ՝ աղոթեն, որ փորձության մեջ չմտնեն:

Մենք շատ կուզեինք, որ երբևէ չգայթակղվեինք՝ վատ բան անելու, սակայն դա երբեք չի լինի: Աստվածաշնչում ասվում է, որ գայթակղությունները կգան: Հավատքն առ Աստված օգնում է մեզ հակառակվելու սխալ բան անելու գայթակղությանը: Հիսուսն ուզում էր, որ աշակերտները նախապես աղոթեին, որպեսզի երբ ճնշումը սաստկանար, արդեն բավականաչափ ուժեղ լինեին՝ ընդդիմանալու համար:

Եթե մարդն ախորժակի հետ կապված խնդիր ունի, նախքան սեղանի շուրջ նստելը, ավելի լավ է՝ աղոթի, որ ունենա ուժ՝ սխալ ընտրություններից ետ կանգնելու համար: Ինչո՞ւ սպասել, մինչև ճնշումը սաստկանա, և կերակուրի անուշ հոտը գայթակղի: Ես իսկապես հավատում եմ, որ եթե մենք ճանաչենք մեր թույլ կողմերը և կանոնավոր աղոթենք ուժի ու դիմացկունության համար, ապա ավելի շատ հաղթանակներ կտեսնենք: Ես գիտեմ, որ հակված եմ անհամբերություն ցուցաբերելու, եթե ստիպված եմ երկար սպասել, ուստի, նախքան երբևէ կհայտնվեմ նմանատիպ իրավիճակում, ես աղոթում եմ, ու դա օգնում է ինձ: Աստված խոստացել է մեզ Իր զորությունը, բայց մենք պետք է խնդրենք այն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու կարող ես ամեն բան անել քեզ զորացնող Քրիստոսով:

Ներումը կարևոր է

«Եվ որ ժամանակ որ կանգնեք՝ աղոթք անեք, ներե՛ք (բա՛ց թողեք), եթե մեկի դեմ բան ունենաք. որպեսզի ձեր Հայրն էլ, որ Երկնքում է, ձեր հանցանքը և թերությունները թողնի ձեզ» (ՄԱՐԿՈՍ 11.25):

Եթե ուզում ենք լսել Աստծուց, Նրան մոտենալիս պետք է ունենանք մաքուր սիրտ, իսկ Նրա առջև մաքուր լինելու համար, նախևառաջ, պետք է ներենք նրանց, ովքեր ցավեցրել կամ վիրավորել են մեզ: Ներելը հեշտ չէ, բայց այն արդյունավետ աղոթքի նախապայման է, ինչպես գրված է այսօրվա խոսքում:

Չնայած Հիսուսի աշակերտները ծանոթ էին ներման վերաբերյալ Նրա ուսմունքներին, սակայն նրանց համար ներումը շարունակում էր մնալ դժվար հաղթահարելի խնդիր: Մի օր Պետրոսը հարցրեց. «Տե՛ր, քանի՞ անգամ, եթե իմ եղբայրն ինձ դեմ մեղք անի, ես ներեմ նրան. մինչև յո՞թ անգամ» (Մատթեոս 18.21): Հիսուսը, ըստ էության, ասաց. «Ո՛չ, իսկ ի՞նչ կասես յոթանասուն անգամ յոթի մասին»: «Յոթ» թիվը խորհրդանշում է ավարտունություն կամ կատարելություն, այնպես որ, Հիսուսի ասածը սա էր. «Ներման վրա սահմանափակում մի՛ դիր. պարզապես շարունակի՛ր ներել»:

Երբ ներում ենք, նմանվում ենք Քրիստոսին. գործում ենք այնպես, ինչպես Աստված է գործում, որովհետև Նա ներող Աստված է: Ներումը արտահայտված ողորմությունն է. այն՝ սերն է գործողության մեջ, սեր, որը հիմնված է ոչ թե զգացմունքների, այլ՝ որոշման, Աստծուն հնազանդվելու միտումնավոր ընտրության վրա: Իրականում, կարծում եմ, ներումը սիրո բարձրագույն ձևն է: Ներումը և սերը անքակտելիորեն կապված են: Մարդկանց սիրելով ու ներելով՝ պատվում ու փառավորում ենք Աստծուն, ապրում Նրա կամքին համաձայն և հնազանդվում Նրա Խոսքին, ինչն էլ օգնում է լսել Նրա ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. աշխատի՛ր ներել արագ, հաճախ և լիովին:

Ազատ՝ Հոգուն հետևելու համար

«Որովհետև Տերն է Հոգին. որտեղ Տիրոջ Հոգին է, այնտեղ է ազատություն» (Բ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐԻ 3.17):

Այս գրքում արդեն խոսել եմ օրինապաշտության մասին, որը զսպող գործոն է Հոգով առաջնորդվող կյանքի համար, սակայն ցանկանում եմ ավելի մանրամասն անդրադառնալ դրան, որովհետև, կարծում եմ, օրինապաշտությունը հսկայական խոչընդոտ է Աստծուց լսելու համար:

Մենք չենք կարող վերապրել իսկական ուրախություն, մինչև չառաջնորդվենք Աստծո Հոգով, և չենք կարող առաջնորդվել Հոգով՝ միաժամանակ ապրելով օրենքի տակ: Օրինապաշտական մտածելակերպն ասում է, որ բոլորը մշտապես պետք է վարվեն նույն ձևով: Բայց Աստծո Հոգին առաջնորդում է մեզ անհատապես, հաճախ՝ յուրօրինակ և ստեղծագործական ճանապարհներով:

Աստծո գրավոր Խոսքում նույն ուղերձն ուղղված է բոլորին, և այստեղ մասնավոր մեկնության խնդիր չկա (տե՛ս Բ Պետրոս 1.20): Սա նշանակում է, որ Աստծո Խոսքը չի պատվիրում մեկին՝ մի բան, մյուսին՝ մեկ այլ բան: Սակայն, Սուրբ Հոգին անհատապես առաջնորդում է յուրաքանչյուրին:

Աստված կարող է առաջնորդել ինչ-որ մեկին չօգտագործել շաքարավազ առողջական խնդրի պատճառով: Դա չի նշանակում, որ ոչ ոք չի կարող շաքարավազ օգտագործել: Օրինապաշտական մարդիկ փորձում են ուրիշներին ուղղված Աստծո խոսքերը վերցնել և դարձնել օրենք իրենց համար:

Ես լսել եմ, որ այն ժամանակ, երբ Հիսուսը ծնվեց, դպիրներն ու փարիսեցիները Տասը պատվիրանները վերածել էին երկու հազար կանոնների, որոնց պետք է հետևեին մարդիկ: Այդպիսի օրենքի ներքո ապրելը պարզապես գերություն է:

Հիսուսը եկավ, որ գերիներին ազատ արձակի: Մենք ազատ չենք, որ անենք այն, ինչ ցանկանում ենք: Մենք ազատվել ենք օրինապաշտությունից և այժմ ազատ ենք՝ հետևելու Սուրբ Հոգուն այն ստեղծագործական, յուրօրինակ ճանապարհներով, որոնցով Նա առաջնորդում է մեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. վստահի՛ր, որ Սուրբ Հոգին կխոսի քեզ հետ և կառաջնորդի կյանքի ճանապարհներում:

Հնազանդության վերաբերմունք

«Ով որ մերժում է իր ականջը [Աստծո և մարդու] օրենքը լսելուց, նրա աղոթքը մինչև իսկ գարշելի և ատելի է [Աստծուն]» (ԱՌԱԿԱՅ 28.9):

Այսօրվա խոսքում ասվում է, որ երբ չունենք պատշաճ վերաբերմունք իշխանության հանդեպ, կամ եթե ապստամբ ենք, մեր աղոթքները գարշելի են Աստծուն:

Առանց շտկվելու՝ մենք չենք կարող աճել կամ հասունանալ: Եթե ապստամբում ենք աշխատանքային կանոնադրության, երթևեկության կանոնների կամ որևէ իշխանության դեմ, ուրեմն վերաբերմունքի հետ կապված ավելի լուրջ խնդիրներ ունենք, քան կարող էինք մտածել: Ապստամբությունը մի բան է, որը պետք է ջանասիրաբար հեռացնենք մեր վերաբերմունքից ու վարքագծից: Ինչո՞ւ: Որովհետև եթե հրաժարվենք երկրային իշխանությանը հպատակվելուց, ապա չենք հպատակվի Աստծո իշխանությանը: Սա անհնազանդություն է, որը կխանգարի արդյունավետ աղոթքին:

Նախքան Աստված թույլ կտար, որ սկսեի իմ ծառայությունը, Նա դրեց ինձ մեկ ուրիշի ծառայության մեջ, որտեղ մնացի մի քանի տարի: Ես պետք է սովորեի ենթարկվել իշխանությանը: Դա հեշտ չէր: Միշտ չէ, որ համաձայնում էի այն որոշումներին, որոնք կայացվում էին, և միշտ չէ, որ կարծում էի՝ ինձ հետ արդարացի են վարվում, բայց Աստված մի կարևոր դաս տվեց. մենք պատրաստ չենք լինի ստանձնելու իշխանություն, քանի դեռ չենք սովորել ենթարկվել իշխանությանը:

Գուցե ցանկանում ես, որ աշխատավարձդ բարձրացնեն, կամ առաջխաղացում ունենաս աշխատանքում, բայց մշտապես բամբասում և քննադատում ես ղեկավարիդ: Սա ապստամբության տեսակ է, որը կարող է խանգարել քո առաջընթացին: Ունեցի՛ր հնազանդ վերաբերմունք և ավելի շատ աղոթքների պատասխաններ կստանաս ու ավելի հստակ կլսես Աստծո ձայնը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գուցե արդարացի չէ այն, ինչ պահանջվում է, որ անես, բայց վերջում Աստված միշտ հատուցում է:

Աստված է տալիս իշխանություն

«Ամեն անձ թող հնազանդվի բարձր իշխանություններին, որովհետև չկա իշխանություն, որ Աստծուց չէ, և ներկա իշխանություններն Աստծուց են կարգված» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 13.1):

Իշխանության հանդեպ պատվի և հնազանդության վերաբերմունքը պետք է դրսևորվի մեր առօրյայում, որովհետև Աստված կարգում է իշխանություններին՝ մեզ ապահովության մեջ պահելու և մեր ուրախությունը խթանելու համար: Նա տալիս է և՛ հոգևոր, և՛ երկրային իշխանություն ու պահանջում հնազանդվել երկուսին միաժամանակ: Մենք պետք է հարգանքով վերաբերվենք նույնիսկ այն ցուցանակներին, որոնք դրված են իշխանության կողմից: Եթե տեսնում ես «Չկայանել» ցուցանակը, ուրեմն մեքենադ մի՛ կայանիր այդտեղ: Եթե կայանատեղիում միակ ազատ տեղը հաշմանդամների համար նախատեսված մասն է, ապա մի՛ կայանիր այնտեղ, եթե հաշմանդամ չես, նույնիսկ երբ ստիպված լինես երկար ճանապարհ ոտքով գնալ: Եթե կարմիր լույս է, ապա կանգնի՛ր: Մի՛ անցիր փողոցը ցանկացած տեղով զուտ այն պատճառով, որ շտապում ես: Եթե մայրուղու վրա տեսնում ես «Անանցանելի գոտի» ցուցանակը, ապա մի՛ գնա այդ ճանապարհով:

Գուցե մտածում ես. «Այդ ամենը մանրուք է և չի կարող որևէ նշանակություն ունենալ: Ես ունեմ ավելի մեծ խնդիրներ, որոնք պետք է լուծել»: Մեր մեծ խնդիրները կմնան չլուծված, մինչև չհասկանանք, որ իշխանությանը հարգելու կամ չհարգելու մեր թվացյալ փոքր, ամենօրյա ընտրությունները հսկայական ազդեցություն ունեն մեր կյանքի վրա:

Նկարագրված վարքագծերն արտացոլում են իշխանության հանդեպ մեր վերաբերմունքը, և անհարգալից վերաբերմունքը խանգարում է Աստծո ձայնը լսելու մեր կարողությանը, որովհետև Աստված Ինքն է մեզ վրա կարգում իշխանություններ և ուզում է, որ պատվենք: Մենք պատվում ենք Նրան, երբ պատվում ենք մեզ շրջապատող իշխանությանը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ուշադի՛ր եղիր, որ հնազանդվես Աստծուն փոքր բաներում, որոնք մեծ ազդեցություն կունենան քո կյանքում:

Լսիր Աստծուն Խոսքի միջոցով

«Հաստատի՛ր Քո Խոսքը Քո ծառայի համար, որ Քեզնից վախենում է» (ՍԱՂՄՈՍ 119.38):

Աստված խոսում է մեզ հետ Իր Խոսքի միջոցով, իսկ Նրա Խոսքը օգնում, ուղղորդում և քաջալերում է մեզ կյանքում: Նրա ձայնը հնարավոր է լսել յուրաքանչյուր իրավիճակում, որովհետև Աստվածաշնչում կան խոսքեր կամ հատվածներ, որոնցով կարող ենք աղոթել զանազան հանգամանքներում: Երբեմն սուրբգրային խոսքերը կամ հատվածները տալիս են զարմանալիորեն հստակ և մանրամասն ուղղություն, երբեմն էլ հարկավոր է վերցնել իմաստության հատիկները կամ ընդհանուր հոգևոր սկզբունքները և կիրառել խնդիրների լուծման մեջ: Ստորև թվարկված են մի քանի տարածված, առանձնահատուկ իրավիճակներ և հուզական ապրումներ, որոնցով թշնամին սպառնում է մեզ, և տրված են համապատասխան սուրբգրային խոսքեր յուրաքանչյուր պարագայում աղոթելու համար:

Երբ անցնում ես դժվարության միջով կամ ուժասպառ ես լինում, կարող ես աղոթել Եսայի 40.29 խոսքով. «Նա է հոգնածին ուժ տվողը, և Նա կարողություն չունեցողին զորություն է շատացնում»:

Երբ անհանգստանում ես ապագայի համար, կարող ես աղոթել Երեմիա 31.17 խոսքով. «Հույս կա քո ապագայի համար»:

Երբ ֆինանսական պայքարի մեջ ես, կարող ես աղոթել Սաղմոս 34.9,10 խոսքերով. «Վախեցե՛ք Տիրոջից, ո՛վ Նրա սուրբեր, որովհետև Նրանից վախեցողների համար պակասություն չկա: Առյուծի կորյունները կարոտում են և սոված են, բայց Տիրոջը խնդրողները ոչ մի բարիքի պակասություն չունեն»:

Ես իսկապես հավատում եմ, որ Աստծո Խոսքն ունի պատասխան յուրաքանչյուր հարցի համար և տալիս է իմաստություն յուրաքանչյուր կարիք բավարարելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. զգացմունքները կարող են շեղել քեզ, բայց Աստծո Խոսքն ապահովության վայր է առաջնորդում:

Աստված լսում է այն արդարին, ով հետևողական է

«Տերը… լսում է [հետևողական է] արդարների (ուղիղների, Նրա հետ ճիշտ դիրքում գտնվողների) աղոթքը» (ԱՌԱԿԱՅ 15.29):

Այսօրվա խոսքում Աստված խոստանում է լսել մեր աղոթքները, եթե հավատարիմ լինենք Նրան հետևելու մեջ: Ինչ է նշանակում լինել «հետևողական արդար»: Պարզ ասած՝ հետևողական արդար լինելու լավագույն ճանապարհը փոխզիջումից հրաժարվելն է:

Ով փոխզիջման է գնում, հակված է հետևելու այն ամենին, ինչ մյուսներն են անում, թեև դա կարող է ամբողջովին սխալ լինել: Փոխզիջման գնացողը գիտի, որ տվյալ բանը ճիշտ չէ, բայց ամեն դեպքում անում է՝ հուսալով, որ ինչ-որ կերպ դուրս կգա իրավիճակից: Մենք փոխզիջման ենք գնում, երբ սրտի խորքում գիտենք և նույնիսկ ունենք Սուրբ Հոգու հանդիմանությունը, որ չպիտի ասենք կամ անենք տվյալ բանը, սակայն ասում կամ անում ենք: Դրանով հայտնում ենք հետևյալը. «Աստված ցույց է տալիս, թե ինչ պիտի անեմ, բայց ես անելու եմ այն, ինչ ուզում եմ»: Այս դեպքում կարող ենք մեղադրել միայն մեզ, եթե չենք տեսնում ցանկալի արդյունքներ: Երբ հրաժարվում ենք փոխզիջման գնալուց և ուժերի ներածին չափով նվիրվում ենք հետևողական արդար լինելուն, Աստված տեսնում է մեր սիրտը, լսում մեր աղոթքները և պատասխանում մեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե հրաժարվես փոխզիջման գնալուց, Աստծուն ժպիտ կպարգևես:

Լավ վերաբերմունք. արդյունավետ աղոթք

«Ո՛վ Աստված, լսի՛ր իմ աղոթքը. ակա՛նջ դիր իմ բերանի խոսքերին» (ՍԱՂՄՈՍ 54.2):

Բոլորս ցանկանում ենք, որ մեր աղոթքներն արդյունավետ լինեն և կարողանանք հաղորդակցվել Աստծո հետ այնպես, որ Նրա սրտի ցանկություններն ու ծրագրերն իրականություն դառնան մեր և ուրիշների կյանքում: Աստվածաշնչում ասվում է. «Արդարի ջերմեռանդ, արդյունավետ աղոթքը շատ է օգնում» (Հակոբոս 5.16): Եթե ուզում ենք արդյունավետ աղոթքներ անել, որոնք մեծ օգուտ են տալիս, ուրեմն պետք է իմանանք, թե ինչն է դրանց արդյունավետ դարձնում: Ոչ բոլոր աղոթքներն են հաջողված: Օրինակ, երբեմն ինչ-որ բան այնքան ուժգին ենք ցանկանում, որ չենք կարողանում աղոթել Աստծո կամքի համաձայն. այսպիսի աղոթքներն անարդյունավետ են: Երբեմն էլ այնքան բարկացած կամ վիրավորված ենք լինում, որ աղոթում ենք՝ հիմնվելով մեր զգացմունքների, ոչ թե Աստծո Խոսքի կամ Նրա կամքի վրա. արդյունավետ չեն նաև այս աղոթքները:

Իր Խոսքի միջոցով Աստված ցույց է տալիս, թե ինչպես կարող ենք արդյունավետ աղոթքներ անել: Արդյունավետ աղոթքը բանաձևերին հետևելու կամ որոշակի սկզբունքներով ապրելու արդյունք չէ: Արդյունավետ աղոթքը հիմնված է Աստծո Խոսքի վրա. այն պարզ է, անկեղծ և հավատքով լեցուն ու որևէ կապ չունի կանոնների կամ ուղեցույցների հետ, բայց պետք է բխի ճիշտ վերաբերմունք ունեցող սրտից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. վատ վերաբերմունքը կարող է փոխվել՝ պարզապես այն փոխելու որոշում կայացնելով:

Ուշացումը մերժում չէ

«Իմ ժամանակը Քո ձեռքում է. փրկի՛ր ինձ իմ թշնամիների ձեռքից և ինձ հալածողներից» (ՍԱՂՄՈՍ 31.15):

Երբ աղոթում ենք, միշտ չէ, որ անմիջապես պատասխան ենք ստանում: Երբեմն ստիպված ենք երկար սպասել, բայց դա չի նշանակում, որ Աստված մերժում է մեր խնդրանքը: Շատ կարևոր է վստահել Աստծո ժամանակներին բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում են մեզ և մեր կյանքին: Գուցե երկար ժամանակ է՝ աղոթում ես և սպասում ճեղքման, իսկ Աստված լռում է, և այդ լռությունը խառնաշփոթություն է բերում քո կյանքում: Խնդրում եմ, հիշի՛ր. Աստված չէ խառնաշփոթության հեղինակը: Նա ուզում է, որ վստահես Իրեն, այլ ոչ թե շփոթվես:

Շատ ուշացումներ «աստվածային ուշացումներ» են: Դրանք նախատեսված են Աստծո կողմից՝ մեր մեջ անհրաժեշտ աշխատանք իրականացնելու համար: Եթե շարունակում ենք հավատարմորեն ծառայել Աստծուն նույնիսկ այն ժամանակ, երբ շատ բաներ մեզ համար անհասկանալի են, մենք ձևավորում ենք ուժեղ աստվածահաճո բնավորություն: Մտածի՛ր Հովսեփի մասին, ով սպասեց տասներեք տարի՝ իր աղոթքների պատասխանը տեսնելու համար, կամ Աբրահամի մասին, ով սպասեց քսան տարի: Եթե նրանք հանձնվեին, երբեք չէին վայելի Աստծո հանդեպ ունեցած վստահության վարձքը: Հնարավոր է՝ Աստված շուտ չգա, բայց չի էլ ուշանա: Մեծ մասամբ այն, ինչ արժե ունենալ, սովորաբար ավելի երկար ժամանակ է պահանջում, քան կարծում էինք, և ավելի դժվար է, քան ենթադրում էինք: Բայց Աստված հստակ գիտի, թե ինչ է անում, և ուզում է, որ վստահես Իր ժամանակներին:

Աստված խոստանում է ազատել մեզ մեր թշնամիներից, բայց մինչ սպասում ենք, պետք է աղոթենք նրանց համար և լինենք օրհնություն, որքան հնարավոր է, շատ մարդկանց համար. Աստված գործում է, մինչ դու սպասում ես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սովորի՛ր խաղաղությամբ սպասել, այլապես կապրես թշվառության մեջ:

Պահի՛ր Աստծո գաղտնիքները

«Բայց դու երբ որ աղոթք անես, մտի՛ր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկում է, և քո Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ» (ՄԱՏԹԵՈՍ 6.6):

Աստծո հետ իմ փորձառության տարիների ընթացքում հասկացել եմ, որ մենք հմուտ չենք գաղտնիքներ պահելու մեջ: Այսօրվա խոսքում նշվում է, որ այն, ինչի համար աղոթում ենք, մեր և Աստծո միջև է, ու կարիք չկա, որ ցուցադրվի բոլորին: Մենք ուզում ենք լսել Աստծուց, մինչդեռ այն պահին, երբ զգում ենք, որ Նա ինչ-որ բան է ասում, շտապում ենք դա պատմել ուրիշներին: Որոշ դեպքերում գուցե այդպես վարվելը սխալ չէ, բայց կան ժամանակներ, երբ պետք է գաղտնի պահվի այն, ինչը մեր և Աստծո միջև է:

Երբ Հովսեփը երազ տեսավ այն մասին, որ հայրը և եղբայրները մի օր ծնկի էին իջնելու իր առջև, գուցե մանկական անմտություն էր, որ դրդեց նրան պատմել նրանց այդ մասին: Գուցե այդ անմտությունն էր պատճառը, որ Աստված ստիպված եղավ աշխատել Հովսեփի հետ, նախքան կկարողանար վստահել նրան այն պատասխանատվությունը, որ վաղօրոք որոշել էր: Երբ պատրաստակամ չենք գաղտնիքներ պահելու, շատ հաճախ դա խոսում է ոչ հասուն լինելու մասին: Այսօրվա խոսքի համաձայն, կարծում եմ, Աստծո հատուցումն ավելի շատ կտեսնեինք մեր կյանքում, եթե կարողանայինք զանազանել, թե ինչը պետք է ասել, և ինչը պետք է գաղտնի պահել:

Աստված կհայտնի ավելին, եթե կարողանա վստահել մեզ: Սովորենք մեր սրտում պահել ծածուկ բաները, մինչև Աստված չթույլատրի հայտնել դրանք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. զգո՛ւյշ եղիր, թե ինչ ես ասում հույզերի ազդեցության տակ:

Երբեք մի՛ հանձնվիր

«Եկեք չվիատվենք, չձանձրանանք և չթուլանանք ազնվաբարո վարվելուց և ճիշտ գործելուց, որովհետև իր ժամանակին կհնձենք, եթե չթուլանանք և չկորցնենք քաջությունը» (ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 6.9):

Պատճառներից մեկը, որ մարդիկ չեն լսում Աստծո ձայնը, այն է, որ ժամանակից շուտ հանձնվում են: Պողոսն ու Շիղան կեսգիշերին բանտախցում երկրպագում և փառաբանում էին Աստծուն (տես Գործք 16.25): Շատերը կհանձնվեին և կպառկեին քնելու շատ ավելի վաղ: Մեր կարգախոսը պետք է լինի. «Երբեք մի՛ հանձնվիր»:

Քաջալերում եմ քեզ, ինչ էլ պատահի, չհանձնվել և շարունակել խոսել Աստծո հետ ու սպասել, որ Նա խոսի քեզ հետ: Ամեն օր ժամանակ անցկացրու Աստծո հետ: Սատանան չի կարող պարտության մատնել նրան, ով հրաժարվում է հանձնվելուց: Նա ուզում է, որ դու հենց հիմա հանձնվես ու ասես.

«Ես երբեք ավելի լավ աշխատանք չեմ ունենա»:

«Ես երբեք չեմ ամուսնանա»:

«Ես երբեք չեմ ազատվի պարտքերից»:

«Ես երբեք չեմ նիհարի»:

Նման վերաբերմունքը երաշխիք է այն բանի, որ ոչինչ էլ չենք ստանա: Բայց մենք կարող ենք նաև ընտրել այն վերաբերմունքը, որն ասում է. «Աստված հավատարիմ է Իր Խոսքին, և ես երբեք չեմ հանձնվի»: Մարդիկ երբեք չեն տեսնում իրենց աղոթքների արդյունքը հիմնականում այն պատճառով, որ հանձնվում են: Մենք կհնձենք ճիշտ ժամանակին, բայց ե՞րբ է այդ ժամանակը. երբ Աստված գիտի, որ պատրաստ ենք ստանալու այն, ինչ խնդրում ենք: Մինչ այդ՝ մեր գործը հավատարիմ լինելն է: Շարունակի՛ր աղոթել և շարունակի՛ր հնազանդվել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված տալիս է երկրորդ հնարավորություն, այնպես որ՝ եթե քեզ նոր սկիզբ է հարկավոր, ապա այսօրվանից քա՛յլ արա:

Վստահիր Աստծո զորությանը

«Եվ իմ խոսքը և քարոզությունը ոչ թե մարդկային իմաստության պատիր խոսքերով եղավ, այլ Հոգու և զորության ապացույցով. որ ձեր հավատքը մարդկանց իմաստությունով չլինի, այլ՝ Աստծո զորությունով» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 2.4,5):

Կրթությունը կարևոր է, բայց պետք է միշտ հիշենք, որ Աստծո իմաստությունն ավելի լավ և արժեքավոր է, քան աշխարհիկ կրթությունը և մարդկային փիլիսոփայությունը: Պողոս առաքյալը կրթված անձնավորություն էր, բայց նա հաստատում էր, որ ոչ թե իր կրթությունը, այլ Աստծո զորությունն էր արժեքավոր դարձնում իր քարոզությունը:

Ես ճանաչում եմ շատերին, ովքեր գերազանց ավարտել են քոլեջը և նույնիսկ գիտական աստիճաններ ստացել, բայց դժվարանում են աշխատանք գտնել: Ճանաչում եմ նաև մարդկանց, որոնք հնարավորություն չեն ունեցել սովորելու քոլեջում, բայց ապավինում են Աստծո բարեհաճությանը և մեծ հաջողություններ ունենում աշխատանքում: Որտեղ է քո վստահությունը. Աստծո մե՞ջ, թե՞ քո գիտեցածի: Անկախ նրանից, թե ինչ գիտենք կամ ում ենք ճանաչում, մեր վստահությունը պիտի ուղղված լինի միմիայն Քրիստոսին և Նրա զորությանը:

Կորնթացիների Առաջին թղթի 1.21-ում Պողոսը նշում է, որ աշխարհն ամբողջ մարդկային իմաստությամբ և փիլիսոփայությամբ չկարողացավ ճանաչել Աստծուն, բայց Աստված հայտնեց Իրեն և փրկեց մարդկությանը քարոզության հիմարությունով: Ցավոք, հաճախ տեսնում ենք, որ որքան կրթված է մարդը, այնքան դժվարանում է պարզ, մանկական հավատք ունենալ: Զգույշ լինենք, որ մեր գիտելիքները և դատողությունը չխանգարեն մեզ, որովհետև մենք կարող ենք ճանաչել Աստծուն միայն Հոգով և սրտով, ոչ թե բանականությամբ: Այնպես արա, որ հավատքդ հիմնվի ոչ թե մարդկային փիլիսոփայության, այլ Աստծո զորության վրա, միայն այդ դեպքում այն կօգնի քեզ կյանքի բոլոր բնագավառներում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո զորությունը կարող է հաղթահարել ցանկացած արգելք, որին կբախվես կյանքում:

Շնորհքի Հոգի

«Մեկը, որ Մովսեսի օրենքն անարգում էր, առանց ողորմության երկու կամ երեք վկայի խոսքով մեռնում էր: Էլ որքա՞ն ավելի, կարծում եք, սաստիկ պատժի կարժանանա նա, որ Աստծո Որդուն ոտքի տակ կոխեց... և շնորհքի Հոգուն նախատեց» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 10.28,29):

Սուրբ Հոգին շնորհքի Հոգի է: Շնորհքը Սուրբ Հոգու զորությունն է, որն օգնում է հեշտությամբ անել այն, ինչ չենք կարող անել ջանասիրաբար աշխատելով: Բայց, առաջին հերթին, դա այն զորությունն է, որ մեզ հնարավորություն է տալիս ճիշտ դիրք ունենալու Աստծո մոտ, որպեսզի Նա կարողանա ապրել մեր մեջ, և մենք դառնանք Նրա բնակարանը: Երբ Սուրբ Հոգին մեր մեջ է, մենք կարող ենք լցվել շնորհքի Հոգու զորությամբ և անել այն, ինչ չենք կարող անել սեփական ուժերով:

Օրինակ, տարիներ շարունակ ես փորձում էի ինքս ինձ փոխել, որովհետև բազմաթիվ թերություններ էի տեսնում իմ բնավորության մեջ: Մեծ մասամբ հուսախաբվում էի, որովհետև իմ ջանքերը և տքնաջան աշխատանքը որևէ արդյունք չէին տալիս: Եթե գիտակցում էի, որ տհաճ բաներ եմ ասում, որոնք չպիտի ասեի, վճռականորեն կանգ էի առնում: Բայց ինչ էլ անում էի, միևնույն է, չէի փոխվում, և երբեմն, կարծես ավելի վատն էի դառնում:

Ի վերջո, աղաղակեցի Աստծուն՝ խոստովանելով, որ այլևս չեմ կարող նույնիսկ փոխվելու փորձ անել: Այդ պահին լսեցի, թե ինչպես Նա խոսեց իմ սրտում. «Շա՛տ լավ, այժմ Ես կարող եմ ինչ-որ բան անել քո կյանքում»:

Երբ Աստված փոփոխություններ է կատարում մեր կյանքում, ամբողջ փառքը Նա է ստանում. այդ է պատճառը, որ Նա թույլ չի տա, որ ինքներս մեզ փոխենք: Երբ փորձում ենք փոխվել՝ առանց Աստծուն ապավինելու, Նրան «ծրագրից դուրս» ենք թողնում: Ինքներս մեզ փոխելու փորձեր անելու փոխարեն, պարզապես խնդրենք, որ Նա՛ փոխի մեզ, այնուհետև թույլ տանք, որ Նրա շնորհքի Հոգին աշխատանք կատարի մեր ներսում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբեք մի՛ փորձիր անել որևէ բան՝ առանց Աստծուն խնդրելու, որ օգնի քեզ:

Ճշմարտության Հոգի

«Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Հոգին, կգա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտության մեջ...» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.13):

Ես շատ դժբախտ էի և ունեի բազում դժվարություններ, որոնց համար տարիներ շարունակ մեղադրում էի մարդկանց և հանգամանքներին: Ես դժվարանում էի կառուցել ու պահպանել լավ փոխհարաբերություններ և համոզված էի, որ ինձ շրջապատող մարդիկ պետք է փոխվեին, որպեսզի կարողանայինք հաշտ լինել միմյանց հետ: Իրականում, իմ մտքով երբեք չէր անցնում, որ գուցե ես եմ խնդիրներ ստեղծողը:

1976 թվականին՝ մի օր, երբ աղոթում էի, որ ամուսինս փոխվեր, Սուրբ Հոգին խոսեց իմ սրտում: Ես ցնցված էի, երբ Նա սկսեց մեղմորեն մերկացնել այն խաբեությունը, որի մեջ հայտնվել էի՝ հավատալով, որ խնդիրը բոլորի մեջ է՝ բացի ինձնից: Երեք օր շարունակ Սուրբ Հոգին հայտնում էր իմ բացասական կողմերը. ես եսասեր էի, քննադատող, իշխող, վերահսկող, ինձ հետ դժվար էր շփվելը, ուրախ ժամանակ անցկացնելը, և սա ցուցակի ընդամենը սկիզբն էր:

Այս ճշմարտությանը դեմառդեմ կանգնելը չափազանց դժվար էր ինձ համար, բայց Սուրբ Հոգին տվեց շնորհք, ու ես ոտք դրի բժշկություն և ազատություն տանող ճանապարհին: Շատ ճշմարտություններ, որ այսօր սովորեցնում եմ, հասկացել եմ հենց այդ ժամանակ: Սատանան մեծ խաբեբա է և ստի հայրն է. եթե նա կարողանա պահել մեզ խավարում, ապա մենք կմնանք գերության և թշվառության մեջ: Թեև ճշմարտությանը դեմառդեմ կանգնելը կարող է ցավոտ լինել, սակայն դա կենսականորեն անհրաժեշտ է առաջընթացի և ազատության համար:

Ինչպես Հիսուսն ասաց այսօրվա խոսքում, Սուրբ Հոգին ճշմարտության Հոգի է, և Նա կխոսի մեզ հետ ու կառաջնորդի ամբողջ ճշմարտության մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր, որ Սուրբ Հոգին հայտնի խաբեության այն բնագավառները, որոնք առկա են քո կյանքում:

Ծանր լսողությո՞ւն ունես

«... Ես սովորել եմ՝ ինչի մեջ որ կամ, նրանով բավական լինել (բավարարվել այն աստիճան, որ չվրդովվեմ կամ չանհանգստանամ): Գիտեմ ինչպես խոնարհաբար և համեստորեն ապրել սուղ պայմաններում, նաև գիտեմ ինչպես լիություն ունենալ և ապրել առատության մեջ...» (ՓԻԼԻՊԵՅԻՆԵՐԻ 4.11,12):

Մենք մշտապես պատրաստ ենք հետևելու Սուրբ Հոգուն, երբ Նա առաջնորդում է օրհնությունների մեջ, բայց կարող ենք ունենալ «ծանր լսողություն», երբ Նրա առաջնորդությունը ենթադրում է, որ չենք ստանալու այն, ինչ ուզում ենք:

Դարձի գալուց և Սուրբ Հոգով մկրտվելուց հետո Պողոսը Հոգուց լսեց այն դժվարությունների մասին, որոնք պետք է կրեր (տե՛ս Գործք 9.15,16): Նա բազում դժվարին իրավիճակների միջով անցավ, բայց նաև մեծապես օրհնվեց: Աստվածային ներշնչմամբ՝ նա գրեց Նոր կտակարանի մեծ մասը: Նա տեսավ տեսիլքներ, նրան այցելեցին հրեշտակներ, և բազում այլ հրաշքների ականատես եղավ: Նա պետք է հետևեր Սուրբ Հոգու առաջնորդությանը նաև այն ժամանակ, երբ չկար օրհնությունների առատություն: Նա լսում և հնազանդվում էր Աստծո ձայնին՝ անկախ նրանից՝ հարմար էր, տեղին էր, ի նպաստ իրեն էր, թե՝ ոչ:

Այսօրվա խոսքում Պողոսը գրում էր, որ սովորել էր բավարարվել՝ անկախ այն բանից՝ օրհնություն էր վայելում, թե դժվարին պայքարի մեջ էր: Հաջորդ խոսքում նա հռչակում էր, որ ամեն բան կարող է անել Քրիստոսով, Ով զորացնում է իրեն: Նա զորանում էր թե՛ լավ ժամանակների համար, որպեսզի վայելեր դրանք և պահպաներ ճիշտ վերաբերմունք, թե՛ դժվար ժամանակների համար, որպեսզի դիմակայեր դրանց և նույնպես ունենար ճիշտ վերաբերմունք:

Սուրբ Հոգին առաջնորդում է մեզ և՛ լավ ժամանակներում, և՛ դժվար ժամանակներում: Մենք կարող ենք հուսալ Նրան՝ անկախ այն ամենից, թե ինչ է կատարվում մեր կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված նույնն է՝ անկախ նրանից, թե ինչպիսին են մեր հանգամանքները, և Նա միշտ արժանի է փառաբանության ու գոհության:

Աղաչանքի Հոգի

«Եվ պիտի թափեմ Դավթի տան վրա և Երուսաղեմում բնակվողի վրա շնորհքի կամ չարժանացած բարեհաճության և աղաչանքի Հոգին» (Զաքարիա 12.10):

Համաձայն այսօրվա խոսքի՝ Սուրբ Հոգին աղաչանքի Հոգի է, ինչը նշանակում է, որ Նա աղոթքի Հոգի է: Սուրբ Հոգին մեզ աղոթելու ցանկություն է տալիս. դա այն միջոցն է, որով Նա խոսում է մեզ հետ: Գուցե չենք գիտակցում, թե որքան հաճախ է Նա առաջնորդում մեզ աղոթելու, և գուցե կարծում ենք, թե մեր մտքով հենց այնպես է անցնում տվյալ անձնավորությունը կամ իրավիճակը: Հաճախ ժամանակ է պահանջվում հասկանալու, թե երբ է Աստված խնդրում մեզ աղոթել, և սա այն դասերից է, որ ստիպված եղա սովորել փորձառության միջոցով:

Մի երկուշաբթի ես մտածում էի ինձ ծանոթ հովիվներից մեկի մասին: Երեք օր շարունակ նա իմ մտքում էր: Չորեքշաբթի օրը գործնական նպատակով գտնվում էի մի վայրում, որտեղ տեսա նրա քարտուղարուհուն և անմիջապես հարցրի նրա ողջությունը: Իմացա, որ հովիվն այդ շաբաթ հիվանդ է եղել, բացի այդ, նրա հորն ախտորոշել էին քաղցկեղ, որը տարածվում էր ամբողջ մարմնով:

Ես իսկույն հասկացա, թե ինչու էի այդքան շատ մտածում այդ հովվի մասին: Պետք է խոստովանեմ, որ չեմ աղոթել նրա համար. պարզապես մտածել եմ: Անշուշտ, ցավում էի, որ բաց էի թողել Սուրբ Հոգու առաջնորդությունը, բայց համոզված եմ, որ Աստված գործածել էր ուրիշներին՝ նրա համար աղոթելու և նրան ծառայելու համար, մինչ ես սովորում էի այս կարևոր դասը՝ Նրա ձայնը լսելու մասին:

Երբ այսպիսի բաներ են պատահում, չպետք է ընկնենք դատապարտության տակ. պարզապես պետք է սովորենք: Աղաչանքի Հոգին ապրում է մեր մեջ, ուղղորդում է մեզ և խոսում մեզ հետ: Մենք պետք է զարգացնենք մեր զգայունակությունը Նրա առաջնորդության հանդեպ, որպեսզի աղոթենք ուրիշների համար, երբ Նա խնդրում է, և տեսնենք, թե ինչ հրաշալի բաներ է Աստված անում նրանց կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ավելի լավ է աղոթել ինչ-որ մեկի համար, քան պարզապես մտածել նրա մասին:

Հայրն ուզում է խոսել քեզ հետ

«Որովհետև դուք ծառայության հոգին չառաք, որ դարձյալ վախենաք, այլ՝ որդեգրության Հոգին առաք, որով աղաղակում ենք՝ Աբբա՛, Հա՛յր» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.15):

Սուրբ Հոգին որդեգրության Հոգի է: Սա նշանակում է, որ Սուրբ Հոգու զորությամբ մենք դառնում ենք Աստծո ընտանիքի մաս: Մի ժամանակ մեղավորներ էինք և ծառայում էինք սատանային, բայց Աստված փրկեց մեզ, գնեց Իր Որդու արյունով և կոչում է Իր սիրելի որդիներ ու դուստրեր:

Որդեգրությունը հրաշալի է: Ով երեխա է ուզում, նպատակաուղղված ընտրում է մեկին և, ինչպես հարազատ երեխա, սիրում ու հոգ է տանում նրա համար: Որոշ դեպքերում սա կարող է ավելի լավ լինել, քան ընտանիքում ծնվելը, որովհետև երբ երեխաները ծնվում են ընտանիքում, միշտ չէ, որ ցանկալի են: Երբեմն նրանց ծնունդը հետևանք է այն ընտրությունների, որոնց համար ծնողները զղջում են: Բայց երբ երեխաները որդեգրվում են, նրանք ցանկալի են, առանձնահատուկ և նպատակով ընտրված:

Երբ հավատքով ընդունում ենք Հիսուս Քրիստոսին, վերստին ծնվում ենք և մտնում Աստծո ընտանիքի մեջ: Աստված դառնում է մեր Հայրը. մենք դառնում ենք Նրա ժառանգները և Քրիստոսի ժառանգակիցները (տե՛ս Հռոմեացիների 8.16,17): Նա մեզ հետ վարվում է որպես սիրող, կատարյալ Հայր: Բարի հայրը լռակյաց չէ իր զավակների հանդեպ: Նա շատ բաներ է անում նրանց համար, ինչպես Աստված՝ մեզ համար: Նա խոսում է նրանց հետ և ասում, թե որքան է սիրում: Նա սովորեցնում է, ուղղորդում, զգուշացնում, հաստատում և քաջալերում նրանց: Դու պատկանում ես Աստծուն. Նա որդեգրել է քեզ և հիմա քո Հայրն է: Նա ուզում է խոսել քեզ հետ: Եթե ցավոտ փորձառություն ես ունեցել, քանի որ ծնողներդ մերժել կամ լքել են քեզ, թո՛ւյլ տուր հիշեցնել, որ Աստված որդեգրում է քեզ և ընդունում հարազատ զավակի պես (տե՛ս Սաղմոս 27.10):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված մտածում է, որ դու յուրահատուկ ես: Նա ընտրել է, որ լինես Իր զավակը:

Բարի խոսքեր

«Խոսելով իրար հետ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով՝ երգեք և սաղմոսեք ձեր սրտերում Տիրոջը» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5.19):

Աստվածաշնչի «Քինգ Ջեյմս» թարգմանության մեջ այս խոսքը հնչում է այսպես. «Խոսելով ինքներդ ձեզ հետ սաղմոսներով և օրհնություններով և հոգևոր երգերով՝ երգեք և սաղմոսեք ձեր սրտերում Տիրոջը»: Ես սիրում եմ սուրբգրային այս խոսքը կիրառել միաժամանակ երկու ձևով: Կարևոր է և՛ այն, թե ինչպես եմ խոսում ինքս ինձ հետ, և՛ այն, թե ինչպես եմ խոսում ուրիշների հետ:

Հեշտ է ընկնել բացասական բաների մասին խոսելու թակարդը՝ կենտրոնանալով խնդիրների, հիասթափությունների և բախումների վրա: Բայց դա խանգարում է մշտապես Հոգով լցված լինելուն և չի արտացոլում այն, ինչ Սուրբ Հոգին ուզում է ասել մեզ, որովհետև Նրա մեջ բացասական ոչինչ չկա: Նույնիսկ երբ Նա խոսում է մեզ հետ ինչ-որ խնդրի մասին, նպատակը լուծում առաջարկելն է, և երբ խոսում է դժվար իրավիճակների մասին, նպատակը մխիթարելը և ուժ տալն է: Որքան շատ ենք մտածում և խոսում մեր խնդիրներից, այնքան ավելի ենք տկարանում, բայց զորանում ենք, երբ խոսում և մտածում ենք Հիսուսի և մեզ տված Նրա խոստումների մասին:

Կյանքը հեշտ չէ. բոլորս ժամանակ առ ժամանակ բախվում ենք դժվարությունների: Աստված լցրել է մեզ Իր Հոգով, որպեսզի կարողություն տա հաղթահարելու դժվարությունները: Երբ անցնում ես դժվարության միջով, ականջդ Աստծո ձայնի՛ն պահիր: Խոսի՛ր դրական բաներ, որոնք Աստված ասում է քեզ Իր Խոսքի և Սուրբ Հոգու ձայնի միջոցով, որը հնչում է քո սրտում: Մեր խոսքերն ազդեցություն ունեն մեր կյանքում, ուստի, շատ կարևոր է խոսել բարի խոսքեր, որոնք լի են կյանքով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խելամտորե՛ն ընտրիր քո խոսքերը, որովհետև դրանք ունեն կյանքի և մահվան զորություն:

Աղոթի՛ր Խոսքով

«Ո՛վ Տեր, Քո Խոսքը հավիտյան հաստատ է Երկնքում» (ՍԱՂՄՈՍ 119.89):

Դու գիտես, որ Աստված խոսում է մեզ հետ Իր Խոսքի միջոցով: Մենք կարող ենք արձագանքել Նրան Իր Խոսքով, երբ աղոթքի մեջ օգտագործենք Նրա Խոսքը: Հավանաբար լսել ես «աղոթի՛ր Խոսքով» արտահայտությունը և ուզում ես իմանալ, թե ինչպես են դա անում: Կարծում եմ, Խոսքով աղոթելը կամ, ինչպես ոմանք են ասում, «Սուրբ գրքով աղոթելը» աղոթքի ամենապարզ ձևն է, որ հասանելի է յուրաքանչյուր հավատացյալի: Դա Աստվածաշնչի խոսքերը կարդալն է կամ անգիր ասելը և դրանցով աղոթելը՝ համարելով, որ դրանք ուղղված են անձամբ քեզ կամ մեկ ուրիշի: Կարծում եմ, դա անելու լավագույն միջոցը՝ Խոսքին հետևյալ առաջաբանը կցելն է. «Աստվա՛ծ, Քո Խոսքն ասում է (զետեղել սուրբգրային խոսքը), և ես հավատում եմ դրան»:

Եթե քեզ համար աղոթեիր Երեմիա 31.3 խոսքով, ապա մոտավորապես այսպես կասեիր. «Աստվա՛ծ, Քո Խոսքն ասում է, որ Դու սիրել ես ինձ հավիտենական սիրով և քաշել ողորմությունով: Շնորհակալություն, որ այդքան սիրում ես ինձ և շարունակում ես ողորմությունով մոտեցնել Քեզ: Օգնի՛ր, որ գիտակցեմ և զգամ Քո սերը իմ հանդեպ»: Եթե նույն Խոսքով աղոթեիր քո ընկերուհի Սյուզիի համար, ով դժվարանում է հավատալ, որ Աստված իսկապես սիրում է իրեն, ապա մոտավորապես այսպես կաղոթեիր. «Աստվա՛ծ, Քո Խոսքն ասում է, որ Դու սիրել ես Սյուզիին հավիտենական սիրով և քաշել ես նրան ողորմությունով: Աստվա՛ծ, Դու գիտես, որ Սյուզին վերջերս այդքան էլ վստահ չէ Քո սիրո մեջ, ուստի խնդրում եմ, այնպես արա, որ այս խոստման ճշմարտությունը գերազանցի նրա զգացմունքներին»:

Աստծո խոստմունքները քեզ համար են. դրանք յուրաքանչյուր հավատացյալի համար են, և Նա սիրում է, երբ գիտենք Նրա Խոսքը և այդ Խոսքով աղոթում ենք Իրեն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված սիրում է քեզ այնպիսին, ինչպիսին կաս, և կօգնի, որ դառնաս այն, ինչ ստեղծել է քեզ լինելու:

«Սուրբ Բանը»

«Հրեշտակը պատասխանեց և ասաց նրան. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրյալի զորությունը քեզ վրա կհովանավորի [ինչպես լուսավոր ամպ], և այն սուրբ (մաքուր, անմեղ) Բանը (Ժառանգը), որ կծնվի քեզնից, Աստծո Որդի կկոչվի»» (ՂՈՒԿԱՍ 1.35):

Կույս Մարիամը հղիացավ Սուրբ Հոգու ներգործությամբ. Սուրբ Հոգին իջավ նրա վրա և, համաձայն այսօրվա խոսքի, նրա ներսում «սուրբ Բան» դրեց: Սրբության Հոգին, որպես Սերմ, դրվեց նրա արգանդում: Այն աճեց ու դարձավ Աստծո Որդի և մարդու Որդի, Ով պետք է ազատեր ժողովրդին մեղքերից:

Երբ վերստին ծնվում ենք, նման զարգացում է տեղի ունենում մեր մեջ: Սրբության Հոգին, որպես Սերմ, դրվում է մեր ներսում: Երբ ջրում ենք այդ Սերմը Աստծո Խոսքով և թույլ չենք տալիս, որ «աշխարհի մոլախոտերը» խեղդեն այն, Սերմն աճում և վերածվում է արդարության հսկա ծառի, որ «Տերը տնկել է Իր փառավորության համար» (Եսայի 61.3):

Աստծո Խոսքը սովորեցնում է մեզ հետևել սրբության (տե՛ս Եբրայեցիների 12.14): Երբ մեր սիրտը նվիրում ենք այդ նպատակին, Սրբության Հոգին օգնում է մեզ: Եթե ուզում ենք սուրբ լինել, պետք է լցվենք Սուրբ Հոգով և թույլ տանք, որ Նա խոսի մեզ հետ, ուղղի, առաջնորդի և օգնի կյանքի յուրաքանչյուր բնագավառում:

Երբեք մի՛ մոռացիր, որ քո ներսում «սուրբ Բան» է բնակվում: Ջրի՛ր այդ սերմն Աստծո Խոսքով և թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին խոսի քեզ հետ և սովորեցնի, թե ինչպես աճեցնես այն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Սուրբ Հոգին փափագում է լինել քո մտերիմ գործընկերը՝ սովորեցնելով քեզ քայլել սրբության մեջ:

Աստված օգտագործում է բոլոր տեսակները

«Նրա պարգևները տարբեր են, և Նա մի քանիսին [նշանակեց] տվեց առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ: Նրա մտադրությունն էր սուրբերին լիարժեք զինելը և կատարյալ դարձնելը...» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.11,12):

Աստված խոսում է մեզ հետ նաև մարդկանց միջոցով: Երբեմն նրանք մեր ընկերներն են կամ ընտանիքի անդամները, երբեմն էլ՝ հովիվները, ուսուցիչները, ավետարանիչները, առաքյալները և մարգարեները, որոնց Նա դնում է մեր կյանքում: Աստված պարգևում է այս մարդկանց՝ մասնավորապես հավատացյալներին օգնելու և շինություն տալու համար, ինչպես այսօրվա խոսքն է ասում՝ «սուրբերին լիարժեք զինելու համար»:

Պարգևներից մեկը, որ Աստված տվել է ինձ, Խոսքն ուսուցանելն է: Թեև ուսուցանելու պարգևը մեծ օրհնություն է եղել ինձ համար, Աստված դրել է այն իմ մեջ՝ ուրիշներին օգուտ տալու համար: Ոմանք, ինչ-ինչ պատճառներով, չեն հավանում ինձ, ոմանց դուր չի գալիս, թե ինչպես եմ սովորեցնում, կամ չեն հավատում, որ Աստված կանչել է ինձ ծառայելու: Այդպես վարվելով՝ նրանք խափանում են այն աշխատանքը, որ Սուրբ Հոգին կարող էր իրականացնել իրենց կյանքում ոչ թե իմ, այլ այն պարգևի միջոցով, որ Նա դրել է իմ մեջ:

Նույնը վերաբերում է մյուս ծառայողներին: Աստված արժեքավոր պարգևներ է դրել նրանց մեջ, և միշտ կլինեն մարդիկ, որոնք իրենց սրտերը կբացեն այդ պարգևների համար, կլինեն նաև հակառակվողներ: Մենք պետք է սովորենք ընդունել Աստծո Խոսքը տարբեր մարդկանցից: Մենք սխալվում ենք, երբ չափից շատ կենտրոնանում ենք այն անոթի վրա, ում Աստված գործածում է, և ոչ թե նրա վրա, ինչ Նա ցանկանում է փոխանցել այդ անոթի միջոցով:

Քաջալերում եմ քեզ՝ թո՛ւյլ տուր, որ Աստված խոսի քեզ հետ այն մարդու միջոցով, ում կընտրի: Մի՛ ընդդիմացիր Նրա ուղերձին՝ մերժելով նրան, ում ուղարկում է՝ Իր խոսքը քեզ հասցնելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սովորի՛ր լսել տարբեր մարդկանց և վայելել այն պարգևները, որ Աստված դրել է նրանց մեջ քո օգտի համար:

Լցվիր խանդավառությամբ

«Ես ուրախ եղա, երբ որ ասացին ինձ, թե Տիրոջ տունը գնանք» (ՍԱՂՄՈՍ 122.1):

Որպես քրիստոնյաներ՝ մենք այնքան օրհնություններ ունենք: Մենք կարող ենք ճանաչել Աստծուն, լսել Նրա ձայնը, ընդունել Նրա սերը, վստահել, որ Նա կանի լավագույնը մեզ համար, և հանգիստ լինել՝ իմանալով, որ Նա վերահսկում է մեր կյանքի յուրաքանչյուր բնագավառը: Մենք ունենք շատ պատճառներ ուրախանալու համար: Մենք խանդավառվում ենք բազում այլ բաներով, ուստի ինչո՞ւ չպիտի խանդավառվենք Աստծո հետ մեր փոխհարաբերությամբ:

Մարդիկ հաճախ ասում են, որ խանդավառության ցանկացած դրսևորում հոգևոր միջավայրում «գերհուզականություն» է: Ես վերջապես հասկացա, որ Աստված է տվել հույզեր, թեև Նա չի ցանկանում, որ առաջնորդվենք դրանցով, բայց տալիս է դրանք նպատակով, այդ թվում՝ վայելքի համար: Եթե իսկապես վայելում ենք Աստծուն, ապա ինչպե՞ս կարող ենք որոշակի հույզեր չցուցաբերել: Ինչո՞ւ պիտի մեր հոգևոր փորձառությունը չոր և ձանձրալի, միապաղաղ ու անկյանք լինի: Մի՞թե քրիստոնեությունը պետք է արտահայտվի երկար դեմքերով, տխուր երաժշտությամբ և մռայլ ծեսերով: Իհարկե՝ ո՛չ:

Այսօրվա խոսքում Դավիթն ասում է, որ ուրախ է Աստծո տուն գնալու համար: Թագավորաց Երկրորդ գրքի 6.14-ում նա պարում էր Տիրոջ առջև «ամբողջ ուժով»: Նա նաև քնար էր նվագում, երգում էր Աստծուն և ցնծալով ուրախանում: Բայց Դավիթն ապրում էր Հին ուխտում: Այսօր մենք ապրում ենք Նոր ուխտում, և ովքեր հավատում են Քրիստոսին, լի են հույսով, ուրախությամբ և խաղաղությամբ (տե՛ս Հռոմեացիների 15.13): Այլևս կարիք չկա պայքարելու կամ ջանք թափելու՝ Աստծո մոտ ընդունելի լինելու համար: Մենք ապավինում ենք այն շնորհքին, որի միջոցով Հիսուսը մեզ ընդունելի դարձրեց: Այլևս հարկ չկա, որ փորձենք ինքներս մեզ արդարացնել մեր գործերով. մենք արդարանում ենք հավատքով: Մենք կարող ենք լսել Նրա ձայնը և վայելել Նրա ներկայությունը: Մենք ազատվել ենք ամեն տեսակի գերությունից: Սրանք հրաշալի պատճառներ են խանդավառվելու և ցնծալու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գրի՛ր տասը պատճառ, որոնք խանդավառում են քո փոխհարաբերությունն Աստծո հետ:

Բացի՛ր դուռը

«Ահա ես դռան առջև կանգնած եմ և թակում եմ. եթե մեկը լսի Իմ ձայնը և բացի դուռը, կմտնեմ նրա մոտ և ընթրիք կանեմ նրա հետ, և նա՝ Ինձ հետ» (ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 3.20):

Երբ բացեցի սրտիս դուռը՝ թույլ տալով, որ Սուրբ Հոգին լիարժեք ծառայի իմ կյանքում, Նա սկսեց խոսել ինձ հետ և կարգավորել կյանքիս յուրաքանչյուր բնագավառը. չկար որևէ բան, որում Նա ներգրավված չլիներ: Դա ինձ դուր էր գալիս, բայց ինչ-որ առումով նաև դուր չէր գալիս, կարծում եմ, գիտես՝ ինչ նկատի ունեմ:

Աստված ցույց էր տալիս, թե ինչպես էի խոսում մարդկանց հետ և նրանց մասին: Նա ասում էր, թե ինչպես էի ծախսում իմ գումարները, ինչպես էի հագնվում, ովքեր էին իմ ընկերները և ինչպես էի անցկացնում ազատ ժամանակս: Նա զրուցում էր ինձ հետ իմ մտքերի և վերաբերմունքի մասին: Ես հասկացա, որ Նա գիտեր իմ խորը գաղտնիքները, և ոչինչ ծածկված չէր Նրանից: Նա այլևս իմ կյանքի «կիրակնօրյա սենյակում» չէր, այլ գրավել էր ամբողջ տունը: Ես երբեք չգիտեի, թե երբ Նա կսկսեր խոսել իմ կյանքին վերաբերող այս կամ այն թեմայի շուրջ: Ինչպես ասացի, դա հիասքանչ էր, բայց նաև մարտահրավերային, որովհետև գիտեի, որ երբ Նա խոսում էր, նշանակում էր՝ իմ կյանքում շատ բաներ պիտի փոխվեին:

Բոլորս փոփոխություն ենք ուզում, բայց երբ այն գալիս է, կարող է վախեցնող թվալ: Հաճախ ուզում ենք, որ մեր կյանքը փոխվի, բայց՝ ոչ մեր ապրելակերպը: Գուցե մեզ դուր չի գալիս այն, ինչ ունենք կյանքում, բայց մտածում ենք՝ մի՞թե կարող է ավելի լավ այլընտրանք լինել: Մենք կարող ենք մտահոգվել կամ, նույնիսկ, վախենալ մեր կյանքի վերահսկողությունը կորցնելուց և թույլ տալուց, որ այն իր ձեռքը վերցնի Մեկը, Ում չենք տեսնում:

Լսել Աստծո ձայնը և հնազանդվել Նրան՝ նշանակում է ապրել ոչ թե մեր, այլ Նրա հաճույքի և փառքի համար: Գուցե լարվում ենք կամ անհանգստանում, երբ կյանքի բոլոր բնագավառների դռները բացում ենք Նրա առջև. սակայն, վստահեցնում եմ՝ արժե դա անել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հրավիրի՛ր Աստծուն քո կյանքի յուրաքանչյուր բնագավառ:

Հավատք և բարեհաճություն

«Տիրոջից է մարդու քայլերի հաջողությունը, ուրեմն մարդն ի՞նչ է հասկանում իր ճանապարհից» (ԱՌԱԿԱՅ 20.24):

Երբ Դեյվն ու ես զգացինք, որ Աստված կանչում է մեզ հեռուստատեսային ծառայություն սկսելու, այդ ուղղությամբ հավատքով քայլեր արեցինք: Առանց գումարի հնարավոր չէր իրականացնել դա, ուստի առաջին բանը, որ արեցինք, հասցեների ցուցակում ընգրկված ընկերներին և գործընկերներին նամակներ գրելն էր՝ խնդրելով ֆինանսապես աջակցել՝ հեռուստատեսային ծառայություն սկսելու համար: Աստված խոսել էր մեզ հետ որոշակի գումարի վերաբերյալ, որն անհրաժեշտ կլիներ մեկնարկի համար, և հենց այդքան գումար էլ ստացանք:

Այնուհետև ևս մեկ քայլ արեցինք: Մենք ռեժիսորի կարիք ունեինք, և Աստված լրացրեց այդ կարիքը: Երեք ամիս առաջ, նախքան Աստված կխոսեր մեզ հետ հեռուստատեսությամբ հեռարձակվելու մասին, աշխատանքի նպատակով մեզ դիմեց մի մարդ՝ հեռուստառեժիսորի մասնագիտությամբ: Քանի որ այդ ժամանակ չունեինք հեռուստատեսային ծառայություն, ասացինք, որ նրա ծառայությունների կարիքը չունենք: Երբ ժամանակը եկավ, հիշեցինք այդ մարդուն և հասկացանք, որ Աստված բավարարել էր մեր կարիքը, նախքան երբևէ կիմանայինք, որ այդպիսի մասնագետի կարիք ունենք:

Հաջորդ քայլը՝ շաբաթական մեկ անգամ մի քանի հեռուստակայանում եթերային ժամանակ գնելն էր: Քանի որ մեր հաղորդումների շնորհիվ կարողանում էինք հոգալ ֆինանսական ծախսերը, և մենք բարի պտուղ էինք տեսնում, ավելի շատ եթերային ժամանակ գնեցինք: Ի վերջո, սկսեցինք ամեն օր եթեր դուրս գալ և այժմ ունենք ամենօրյա հաղորդում, որը հեռարձակվում է ամբողջ աշխարհով և օգնում միլիոնավոր մարդկանց:

Աստված Դեյվին և ինձ առաջնորդում էր քայլ առ քայլ. այդպես էլ կառաջնորդի քեզ: Ամեն անգամ, երբ հավատքի քայլ էինք անում, Աստված բարեհաճություն էր տալիս: Քաջալերում եմ, որ դու էլ բարեհաճության սպասես: Աստված արդեն գիտի քո կարիքները և ունի պատասխանները, ուստի երբ վախը թակում է քո դուռը, պատասխանի՛ր հավատքով, և դու հրաշալի բաների ականատեսը կլինես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. վստա՛հ եղիր, որ Աստված առաջնորդում է քեզ և տալիս բարեհաճություն:

Նա կփոխի քեզ

«Եվ քեզ վրա կգա Տիրոջ Հոգին, և նրանց հետ մարգարեություն կանես, և դու կփոխվես, ուրիշ մարդ կդառնաս» (Ա ԹԱԳԱՎՈՐԱՅ 10.6):

Աստծո ձայնը լսելու կարողությունը՝ Նրան ճանաչելու և Նրա Հոգով լցված լինելու արդյունք է, բայց Հոգով լցված կյանքի միակ ապացույցը չէ: Մարդու մեջ Սուրբ Հոգու զորության մեկ այլ պարզ, բայց հզոր ապացույց է՝ փոխված կյանքը:

Հիսուսի դատավարության ժամանակ Պետրոսը երեք անգամ ուրացավ Նրան, որովհետև վախենում էր հրեաներից (տես Ղուկաս 22.56-62), բայց Պենտեկոստեի օրը, Սուրբ Հոգով լցվելուց հետո, նա այլևս չվախեցավ, այլ կանգնեց ու չափազանց համարձակ ուղերձ քարոզեց: Պետրոսի քարոզի արդյունքում նույն օրը երեք հազար մարդ ավելացավ Աստծո արքայության մեջ (տես Գործք 2.14-41): Սուրբ Հոգու լեցունությունը փոխեց Պետրոսին, դարձրեց այլ մարդ՝ համարձակ և բոլորովին անվախ:

Պետրոսը միակը չէր, որ այդ օրը համարձակություն ստացավ: Նույնկերպ վարվեցին մյուս տասնմեկ աշակերտները: Հրեաների վախից նրանք թաքնվել էին փակ դռների ետևում, երբ Հիսուսը հարությունից հետո եկավ նրանց մոտ (տես Հովհաննես 20.19,20): Հանկարծ, Սուրբ Հոգով լցվելուց հետո, բոլորն անվախ և համարձակ դարձան:

Սուրբ Հոգու զորությունը տարիների ընթացքում փոխեց բազմաթիվ մարդկանց: Այն փոխեց Սողոսին, ինչպես գրված է այսօրվա խոսքում: Փոխեց Պետրոսին և մյուս աշակերտներին: Այն փոխել է ինձ և շարունակում է աշխարհով մեկ փոխել նրանց, ովքեր թախանձագին փնտրում են Աստծուն: Փոխվելու կարիք ունես. խնդրի՛ր, որ Սուրբ Հոգին լցնի քեզ այսօր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քեզ անհրաժեշտ է Սուրբ Հոգու զորությունը՝ փոխվելու համար:

Հրաշագործություններ

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք, և ուրիշին… հրաշագործություններ» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.8-10):

Հիսուսը շատ հրաշքներ գործեց: Օրինակ, Նա ջուրը գինու վերածեց (տե՛ս Հովհաննես 2.1-10) և մի տղայի ուտելիքով կերակրեց ամբողջ բազմությանը, որից հետո ավելացած կտորները լցրին զամբյուղները (տե՛ս Հովհաննես 6.1-13): Կան բազմատեսակ հրաշքներ. մատակարարման և կարիքները բավարարելու հրաշքներ, բժշկության հրաշքներ, ազատագրման հրաշքներ և այլն:

Դեյվն ու ես տարիների ընթացքում բազմաթիվ հրաշքների ականատես ենք եղել: Տեսել ենք ֆիզիկական բժշկություններ և ազատագրումներ երկարատև գերությունից: Տեսել ենք մատակարարման հրաշքներ, երբ Աստված միջամտել է մեր իրավիճակին և գերբնականորեն մատակարարել մեզ ու մեր ծառայությանը:

Հրաշքներն այնպիսի բաներ են, որոնք հնարավոր չէ բացատրել, որոնք տեղի չեն ունենում սովորական միջոցներով: Բոլորս կարող ենք և պետք է հավատանք Աստծուն հրաշքների համար: Մի՛ բավարարվիր սովորական կյանքով, երբ հրաշքների պարգևը հասանելի է: Խնդրի՛ր և սպասի՛ր, որ Աստված հրաշքներ անի քո և ուրիշների կյանքում: Այն Աստված, Ով կիսեց Կարմիր ծովը, ուզում է օգնել քեզ այսօր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ բավարարվիր սովորականով, սպասի՛ր արտասովորին:

Պատասխանն աստղերի մեջ չէ

«Վհուկներին մի՛ նայեք և հմայողներից մի՛ հարցրեք, որ նրանցով չպղծվեք. Ես եմ Եհովան՝ ձեր Աստվածը» (ՂԵՎՏԱՑԻՆԵՐԻ 19.31):

Որպես հավատացյալներ՝ մենք ունենք Աստծուն մոտենալու և հոգևոր իրականության հետ առնչվելու իրավունք: Մենք կարող ենք լսել Աստծո ձայնը և Նրանից ուղղություն ստանալ: Շատերը հոգևոր առաջնորդություն են ուզում, բայց ոչ բոլորն են այն փնտրում Աստծուց:

Ամբողջ աշխարհում մարդիկ խորհուրդ և ուղղություն են փնտրում աստղերից, էքստրասենսներից, գուշակներից... Սա սխալ է և վիրավորում է Աստծուն: Սատանան այս ճանապարհով շատերին է խաբում: Մարդիկ ուղղություն և լուծումներ են փնտրում իրենց կյանքի համար: Ցավոք, նրանց չեն սովորեցրել, որ Աստված կհոգա այդ ամենի համար: Այսօրվա ուղերձի նպատակն է հայտնել քեզ, որ Աստված ուզում է լինել քո տեղեկությունների աղբյուրը: Նա ուզում է ամեն օր առաջնորդել քեզ Իր Խոսքի և Հոգու միջոցով:

Մի անգամ ես աշխատում էի մի կնոջ հետ, որն աստղագուշակությամբ էր զբաղվում: Նա հետևում էր աստղերին՝ նախքան որևէ որոշում կայացնելը: Նույնիսկ նայում էր աստղերի դասավորությանը, որպեսզի իմանար, թե որ օրն էր կտրելու մազերը: Ինչո՞ւ դիմենք աստղերին, երբ կարող ենք դիմել Աստծուն, Ով ստեղծել է աստղերը:

Եթե առաջնորդություն կամ ուղղություն ես փնտրում այլ աղբյուրներից և ոչ՝ Աստծուց, ապա հորդորում եմ, որ ապաշխարես, շրջվես դեպի Նա և խնդրես Սուրբ Հոգուն, որ այսօրվանից լինի քո միակ ուղեցույցը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փնտրի՛ր տեղեկություն և առաջնորդություն միայն Աստծուց:

Դեմառդեմ կանգնիր ճշմարտությանը

«Թող մեր կյանքը սիրով արտահայտի ճշմարտությունը [ամեն բանում, ճշմարիտ խոսելով, ճշմարիտ գործելով, ճշմարիտ ապրելով]» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.15):

Դու և ես ապրում ենք մի աշխարհում, որը լի է մարդկանցով, որոնք ապրում են շինծու կյանքով, կրում դիմակներ և թաքցնում այն, ինչ չեն ցանկանում, որ ուրիշներն իմանան: Դա սխալ է: Բայց դրա պատճառն այն է, որ մարդկանց չեն սովորեցրել քայլել ճշմարտության մեջ: Հավատացյալների ներսում բնակվում է Սուրբ Հոգին, Ով Ճշմարտության Հոգի է և հայտնում է մեզ ճշմարտությունը:

Երբեմն սատանան խաբում է մեզ, բայց լինում են ժամանակներ, երբ ինքներս ենք մեզ խաբում: Այլ խոսքով՝ մենք հորինում ենք կյանք, որի մեջ հարմար ենք զգում, փոխանակ դեմառդեմ կանգնենք իրական կյանքին և հաղթահարենք խնդիրները Սուրբ Հոգու օգնությամբ:

Սուրբ Հոգին հաճախակի խոսում է ինձ հետ և դեմառդեմ կանգնեցնում իմ կյանքում առկա խնդիրներին: Նա սովորեցրել է ինձ դեմառդեմ կանգնել ճշմարտությանը, այլ ոչ թե վախենալ ճշմարտությունից: Վախկոտները թաքնվում են ճշմարտությունից. նրանք վախենում են դրանից: Դու չպետք է վախենաս ճշմարտությունից: Հիսուսն աշակերտներին ասաց, որ Սուրբ Հոգին կառաջնորդի նրանց ճշմարտության մեջ, բայց նաև ասաց, որ նրանք պատրաստ չեն լսելու որոշ բաներ (տե՛ս Հովհաննես 16.12), ուստի նրանց ամեն բան չհայտնեց: Սուրբ Հոգին մշտապես կհայտնի քեզ ճշմարտությունը, բայց չի ասի որոշ ճշմարտություններ, մինչև չիմանա, որ պատրաստ ես լսելու:

Եթե բավականաչափ խիզախ ես՝ հրավիրելու Սուրբ Հոգուն քո կյանքի յուրաքանչյուր բնագավառ և թույլ տալու, որ Նա խոսի քո կյանքում առկա խնդիրների մասին, ապա պատրաստ ես մեկնելու անմոռանալի ճանապարհորդության՝ դեպի ազատություն և զորություն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբեք մի՛ վախեցիր ճշմարտությունից:

Դու մենակ չես

«Եվ Հիսուսը, Սուրբ Հոգով լցված, Հորդանանից ետ դառավ և Հոգով տարվեց անապատ: Քառասուն օր սատանայից փորձվեց...» (ՂՈՒԿԱՍ 4.1,2):

Այսօրվա խոսքերից իմանում ենք, որ Սուրբ Հոգով մկրտվելուց անմիջապես հետո Հիսուսը Հոգով տարվեց անապատ, որպեսզի քառասուն օր ու գիշեր փորձվի սատանայից: Հավանաբար դա շատ դժվար փորձառություն էր, բայց Հիսուսն անմիջապես հնազանդվեց Հոգու առաջնորդությանը: Նա վստահում էր Սուրբ Հոգուն՝ իմանալով, որ նույնիսկ այն դժվարությունները, որոնց կբախվեր, վերջին հաշվով, Իր համար գործակից կլինեին դեպի բարին:

Անապատում քառասուն օր անցկացնելուց հետո Հիսուսը սկսեց Իր հանրային ծառայությունը, ինչպես կարդում ենք Ղուկասի 4.14-ում. «Եվ Հիսուսը Հոգու զորությունով ետ դառավ Գալիլեա, և Նրա համբավը դուրս գնաց այն գավառի բոլոր կողմերը»: Հիսուսը պետք է հոժարակամ լիներ հետևելու Սուրբ Հոգու առաջնորդությանը ոչ միայն այն ժամանակ, երբ դա զորություն և համբավ էր բերելու Իրեն, այլև այն ժամանակ, երբ դժվարությունների, փորձությունների ու քննությունների առջև էր կանգնելու:

Դժվար ժամանակներում Աստծուն հնազանդվելն օգնում է աստվածային բնավորության կերտմանը: Հիսուսն օրինակ ծառայեց մեզ համար: Դժվարությունների ժամանակ Սուրբ Հոգու առաջնորդությանը հետևելը կերտում է մեր մեջ հավատարմություն, վճռականություն և ամրություն՝ որակներ, որոնք Աստված ուզում է, որ ունենանք:

Աստված տվել է մեզ Սուրբ Հոգուն, որպեսզի կարողանանք իրականացնել այն ծրագրերը, որ Նա ունի մեր կյանքի համար: Երբեմն պետք է հանդիպենք դժվարությունների, որպեսզի կերտենք այն բնավորությունը, որն անհրաժեշտ է Աստծո ծրագրերն իրականացնելու համար: Մենք պետք է մշտապես հիշենք, որ երբեք մենակ չենք անցնում թե՛ դժվար, թե՛ բարենպաստ ժամանակների միջով: Սուրբ Հոգին միշտ մեզ հետ է՝ մեզ օգնելու համար, և Նրա ճանապարհները միշտ լավագույնն են:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ վախեցիր դժվար ժամանակներից, որովհետև դրանք, վերջին հաշվով, քեզ ուժեղ են դարձնում:

Սուրբ Հոգին ջենտլմեն է

«Որ Աբրահամի օրհնությունը հեթանոսների մեջ լինի Քրիստոս Հիսուսով, որ մենք Սուրբ Հոգու խոստմունքն ընդունենք հավատքով» (ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 3.14):

Այս գրքում բավականին շատ եմ խոսել Սուրբ Հոգու և Հոգով լցված լինելու մասին և ուզում եմ համոզվել, որ գրքի էջերը կարդալիս հնարավորություն կունենաս ավելի լավ ճանաչելու Սուրբ Հոգուն:

Սուրբ Հոգին ջենտլմեն է: Նա առանց հրավերի մուտք չի գործի քո կյանք: Նա կլցնի քեզ միայն այն դեպքում, եթե խնդրես: Ղուկասի 11.13-ում Հիսուսը խոստանում է, որ Աստված կտա Սուրբ Հոգին նրանց, ովքեր խնդրում են: Իսկ Հակոբոսի 4.2-ում ասվում է, որ չունենք որոշ բաներ, որովհետև չենք խնդրում:

Քաջալերում եմ քեզ խիզախորեն գալ Աստծո առջև և ամեն օր խնդրել, որ լցնի քեզ Սուրբ Հոգով: Խնդրիր՝ սպասելով, որ կստանաս: Մի՛ եղիր երկմիտ կամ թույլ մի՛ տուր, որ սիրտդ լցվի կասկածով, այլ խնդրի՛ր հավատքով: Հավատա՛, որ ստանում ես, և գոհացի՛ր Աստծուց, որ Նա ապրում է քո մեջ: Աստված մարդ չէ, որ ստի (տե՛ս Թվոց 23.19): Նա հավատարիմ է Իր Խոսքին, երբ որևէ մեկը այդ Խոսքի հիման վրա հավատքով քայլ է անում, այնպես որ, խնդրի՛ր և ստացի՛ր, որ ուրախությունդ կատարյալ լինի (տե՛ս Հովհաննես 16.24):

Այսօրվա խոսքում ասվում է, որ մենք ստանում ենք Հոգու խոստմունքը հավատքի միջոցով: Պարգևները չեն կարող պարտադրվել որևէ մեկին. դրանք պետք է առաջարկվեն տվողի կողմից և ընդունվեն նրանց կողմից, ում առաջարկվում է: Աստված առաջարկում է Իր Հոգին, այնպես որ, քեզ ընդամենը հարկավոր է հանգստանալ և հավատքով ընդունել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբեք մի՛ ամաչիր Աստծուն խնդրելուց և շարունակի՛ր խնդրել, որ Նա բավարարի քո կարիքները:

Փափագել Աստծուն ավելի ու ավելի

«Որ Նա կշտացնում է կարոտած անձին և լցնում է սոված անձը բարությունով» (ՍԱՂՄՈՍ 107.9):

Երբ քաղցած ենք, մեծ ջանքեր ենք գործադրում կերակուր ձեռք բերելու համար: Մտածում ենք կերակուրի մասին, խոսում դրա մասին, խանութից մթերք գնում և խնամքով կերակուր պատրաստում: Կարծում եմ՝ նույնկերպ պետք է վարվենք, եթե փափագում ենք ավելի մտերիմ լինել Աստծո հետ: Աստված ասաց, որ պիտի փնտրենք Իրեն մեր ամբողջ սրտով, ջանասիրաբար, խանդավառությամբ, ջերմեռանդությամբ և ամենայն լրջությամբ:

Ամեն շաբաթ մենք բավականաչափ ժամանակ ենք հատկացնում ֆիզիկական կերակուրին, իսկ որքա՞ն ժամանակ ենք հատկացնում հոգևոր կերակուրին: Ես հաշվարկել եմ, որ մեզնից շատերը շաբաթական ամենաքիչը տասնչորս ժամ են անցկացնում ֆիզիկական կերակուր փնտրելու, պատրաստելու և ուտելու համար: Մենք պետք է ազնվորեն ինքներս մեզ հարցնենք, թե որքան ժամանակ ենք անցկացնում Աստծուն փնտրելու և Նրան ճանաչելու համար: Աստծո հետ մտերիմ լինելու աստիճանը կախված է նրանից, թե որքան ժամանակ ենք պատրաստ ներդնելու Նրա հետ մեր փոխհարաբերության զարգացման մեջ: Ժամանակն արժեքավոր է բոլորիս համար, և այն պետք է օգտագործել ամենակարևոր բաների վրա: Դու կարող ես վատնել կամ ներդնել քո ժամանակը. քո՛ ընտրությունն է: Այն, ինչ վատնում ենք, կորցնում ենք, բայց այն, ինչ ներդնում ենք, շահաբաժնով ետ ենք ստանում:

Վճռականորեն խորհուրդ եմ տալիս, որ Աստծուն փնտրելուն հատկացնես առնվազն այնքան ժամանակ, որքան՝ ֆիզիկական կերակուր փնտրելուն, և դու շուտով կլցվես Նրա իմաստությամբ ու ներկայությամբ: Երբ Աստված լցնի քո անձն Իրենով, կգտնես այնպիսի բավականություն, որ երբևէ չես ունեցել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. միայն Աստված է կշտացնում քաղցած անձին, այնպես որ՝ հատկացրու՛ Նրան առաջին տեղը քո ժամանակացույցում:

Հոգու պտուղը

«Բայց Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, ժուժկալություն...» (ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.22,23):

Երբ ամբողջությամբ ողողվում ենք Սուրբ Հոգով, տեսնում ենք, թե ինչպես է Նրա պտուղը դրսևորվում մեր կյանքում: Մենք ունենում ենք խաղաղություն և ուրախություն և բարի ենք դառնում մարդկանց հանդեպ: Հիսուսը պատվիրել է մեզ սիրել միմյանց, ինչպես Ինքը սիրեց մեզ: Կարևոր է, որ աշխարհը տեսնի այս սիրո դրսևորումը: Աշխարհի մարդիկ ծարավ են ճշմարտության և կարիք ունեն տեսնելու, որ Աստված կարող է փոխել մարդկանց: Նրանք պետք է տեսնեն Աստծո սերը գործողության մեջ, որպեսզի փափագեն Աստծուն:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ մենք պետք է աղ և լույս լինենք (տե՛ս Մատթեոս 5.13,14): Աշխարհը խավարի մեջ է, բայց Սուրբ Հոգով լցված քրիստոնյաները լույս են բերում ամենուրեք: Աշխարհն անհամ է, բայց քրիստոնյաներն իրենց ներկայությամբ աղ (համ) են տալիս կյանքին:

Որպես քրիստոնյաներ՝ մենք մեծ աշխատանք ունենք անելու, և մշտապես զգայուն պետք է լինենք Սուրբ Հոգուն այն բանում, թե ինչպես ենք վարվում մարդկանց հետ: Աստված մեր մեջ է և մեր միջոցով դիմում է աշխարհին. մենք Նրա ներկայացուցիչներն ենք (տե՛ս Բ Կորնթացիների 5.20): Այդ փաստը հաշվի առնելով՝ Պողոսը հորդորում էր, որ կառչենք աստվածային բարեհաճությունից, որ առաջարկվեց մեզ: Մենք պետք է աշխատենք Սուրբ Հոգու հետ՝ զարգացնելով Հոգու պտուղը, որպեսզի մեզ պահենք այնպես, որ փառավորենք Աստծուն և մարդկանց ուղղորդենք Նրա մոտ:

Հոգու պտուղը զարգանում է, երբ անցնում ենք դժվարությունների միջով և Աստծո օգնությամբ շարունակում վարվել մարդկանց հետ այնպես, ինչպես Նա կվարվեր: Մնա՛ ուժեղ Տիրոջ մեջ ու հիշի՛ր, որ աշխարհը հետևում է քեզ և կարիք ունի, որ դու աղ և լույս լինես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. անկախ նրանից, թե ինչ մարտահրավերների առջև ես այսօր կանգնած, շարունակի՛ր բարի լինել բոլորի հանդեպ:

Սրբության Հոգի

«[Ինչ վերաբերում է Նրա աստվածային բնությանը] սրբության Հոգու կողմից Աստծո Որդի սահմանվեց զորությունով [ցնցող, հաղթական և հրաշք ձևով]՝ մեռելներից հարություն առնելով, նույն ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը (Մեսիան, Օծյալը)» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 1.4):

Այսօրվա խոսքը Սուրբ Հոգուն վկայակոչում է որպես «սրբության Հոգի»: Նա կոչվում է իր անունով, որովհետև Նա Աստծո սրբությունն է, և Նրա գործն է, որ այդ սրբությունը բերի յուրաքանչյուրի մեջ, ով հավատում է Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի:

Աստված ուզում է և պատվիրում է, որ սուրբ լինենք (տե՛ս Ա Պետրոս 1.15,16): Նա երբեք չէր պատվիրի մեզ սուրբ լինել, եթե չտրամադրեր այն օգնությունը, որ անհրաժեշտ է դա իրականացնելու համար: Անսուրբ հոգին երբեք չէր կարող սրբացնել մեզ: Ուստի, Աստված Իր Հոգուն ուղարկում է մեր սրտերի մեջ, որպեսզի լիարժեք և հիմնավոր աշխատանք կատարի մեր կյանքում:

Փիլիպեցիների 1.6-ում Պողոսն ասում է, որ Աստված, Ով սկսեց այս բարի գործը մեզանում, կկատարի և ավարտին կհասցնի այն: Սուրբ Հոգին կշարունակի աշխատել մեր մեջ, քանի դեռ ապրում ենք այս երկրագնդի վրա: Աստված ատում է մեղքը և ամեն անգամ, երբ մեր մեջ մեղք է գտնում, անմիջապես աշխատում է մաքրել մեզ:

Միայն այս փաստը բացատրում է, թե ինչու կարիք ունենք, որ Սուրբ Հոգին բնակվի մեր մեջ: Նա մեր կողքին է ոչ միայն մեզ առաջնորդելու և ուղղորդելու համար, այլև անմիջապես համագործակցելու Հոր հետ, որպեսզի հեռացնի մեզնից այն, ինչը տհաճ է Իրեն: Նա և՛ կխոսի մեզ հետ այն բաների վերաբերյալ, որոնք պետք է փոխվեն, որպեսզի կարողանանք աճել սրբության մեջ, և՛ կզորացնի մեզ՝ կատարելու այդ անհրաժեշտ փոփոխությունները:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու աճում ես սրբության մեջ, որովհետև Սրբության Հոգին ապրում է քո մեջ:

Բոլորս միասին ենք աշխատում

«Որովհետև ինչպես մեկ մարմնի մեջ շատ անդամներ ունենք, և բոլոր անդամները միևնույն գործը չունեն, այնպես էլ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսում, բայց ամեն մեկը միմյանց անդամ է» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.4,5):

Այսօրվա խոսքերը սովորեցնում են պարգևների զանազանության մասին, որոնք տրվում են անհատներին: Մենք մեկ մարմնի անդամներ ենք Քրիստոսում, իսկ Նա գլուխն է: Ֆիզիկական տեսանկյունից մարմնի բոլոր մասերը պետք է կապված լինեն գլխի հետ, որպեսզի ամեն բան ճիշտ գործի: Ֆիզիկական մարմնի տարբեր մասերը միասին են գործում. դրանք չեն նախանձում միմյանց կամ չեն մրցում միմյանց հետ: Ձեռքերն օգնում են ոտքերին՝ կոշիկներ հագնելիս: Ոտքերը մարմնին տանում են այնտեղ, որտեղ անհրաժեշտ է: Բերանը կատարում է խոսելու դերը: Մարմինը շատ անդամներ ունի. դրանք նույն գործառույթը չունեն, բայց աշխատում են միասին՝ մեկ ընդհանուր նպատակի համար: Քրիստոսի հոգևոր մարմինը պետք է գործի նույնկերպ: Այդ է պատճառը, որ Սուրբ Հոգին օգտագործեց ֆիզիկական մարմնի օրինակը, երբ ներշնչեց Պողոսին՝ գրելու Հռոմեացիների թուղթը:

Երբ փորձում ենք գործել այլ կերպ, քան Աստված նախատեսել է, հայտնվում ենք ճնշման տակ: Բայց երբ վարվում ենք այնպես, ինչպես Աստված է նախատեսել, վերապրում ենք ուրախություն, բավականություն և ստանում մեծ վարձք: Մենք պետք է աշխատենք Սուրբ Հոգու հետ, որպեսզի բացահայտենք մեր յուրահատուկ ճակատագիրը, ապա անենք հնարավոր ամեն բան այն իրականացնելու համար: Դու հմուտ կլինես այն բանում, ինչի համար Աստված քեզ օժտել կամ կարողություն է տվել, ուստի պարզի՛ր, թե որն է քո հմտությունը, և գործի՛ր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե ուզում ես գործածվել Աստծո կողմից, գտի՛ր որևէ կարիք և լրացրո՛ւ:

Շարունակի՛ր առաջ շարժվել

«Որովհետև Աստված չտվեց մեզ երկչոտության (վախկոտության, փոքրոգության, ստորաքարշության և քծնող վախի) հոգի, այլ՝ զորության և սիրո և զգաստության և կարգապահության և ինքնատիրապետման» (Բ ՏԻՄՈԹԵՈՍ 1.7):

Հոգևոր բաներում կա՛մ առաջ ենք շարժվում, կա՛մ հետ ենք սահում: Մենք կա՛մ աճում ենք, կա՛մ չորանում: Չկա՛, այսպես կոչված, ննջող կամ չեզոք քրիստոնեություն: Մենք չենք կարող մեր քրիստոնեական ընթացքը կանգնեցնել կամ որոշ ժամանակով մի կողմ դնել: Խիստ կարևոր է մշտապես առաջ շարժվել: Այդ է պատճառը, որ Պողոսը Տիմոթեոսին պատվիրեց արծարծել իր մեջ եղած Աստծո շնորհքը և բորբոքել այն կրակը, որ սրտում վառվում էր Աստծո հանդեպ (տե՛ս Բ Տիմոթեոս 1.6):

Ակնհայտ է, որ Տիմոթեոսն ուներ այս քաջալերանքի կարիքը: Այսօրվա խոսքից երևում է, որ նա, ըստ երևույթին, պայքարում էր վախի դեմ: Ամեն անգամ, երբ թույլ ենք տալիս, որ վախը վերահսկի մեզ, գործուն լինելու փոխարեն դառնում ենք անշարժունակ: Վախը քարացնում է մեզ. այն կանխում է առաջընթացը:

Հավանաբար, Տիմոթեոսը վախենում էր, որովհետև իր օրերում քրիստոնյաները սոսկալի հալածանքներ էին կրում: Բացի այդ, նրա ուսուցչին՝ Պողոսին, բանտ էին նետել, և գուցե նա մտածում էր, որ նույնը կպատահեր իր հետ:

Սակայն Պողոսը հորդորեց նրան՝ հավաքել ուժերը, կանգնել ճիշտ ուղու վրա, լինել հավատարիմ իր կոչմանը և հիշել, որ Աստված չի տվել իրեն «երկչոտության հոգի, այլ՝ զորության և սիրո և զգաստության»:

Սա այն է, ինչ ստանում ենք, երբ ընդունում ենք Սուրբ Հոգու լեցունությունը՝ զորություն, սեր և զգաստություն: Երբ վախի զգացում ես ունենում, հիշի՛ր այս ճշմարտությունը: Առանձնացի՛ր Աստծո հետ և թո՛ւյլ տուր, որ Սուրբ Հոգին լցնի քեզ խիզախությամբ ու վստահությամբ, որպեսզի կարողանաս առաջ շարժվել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ջա՛նք արա, որ հաղորդակցվես Հիսուսի հետ և մտածես ոչ թե խնդիրների, այլ Նրա մասին:

Քի՛չ խոսիր, շա՛տ ցուցադրիր

«Մնացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում. ինչպես որ ճյուղն իր անձից չի կարող պտուղ բերել, եթե որթում չմնա, այսպես ոչ էլ դուք, եթե Ինձանում չմնաք» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.4):

Որքան զարգացնում ենք մեր փոխհարաբերությունն Աստծո հետ, այնքան ավելի ոգևորվում ենք և խանդավառվում, ու դա լավ է: Սակայն, մենք պետք է ցույց տանք մարդկանց ավելին, քան մեր խանդավառությունն է. նրանք պետք է տեսնեն իրական փոփոխություններ և բարի պտուղներ:

Պողոսն ասաց, որ մեր կյանքը պիտի լինի նամակ, թուղթ, որ մարդիկ կարող են կարդալ (տես Բ Կորնթացիների 3.3): Այլ կերպ ասած՝ մեր վարքագիծն ավելի լավ է խոսում, քան՝ բառերը կամ հույզերը: Տարիների ընթացքում ես հայտնաբերել եմ, որ խանդավառությունն ու նախանձախնդրությունը պետք է միախառնվեն համբերությանը, բարությանը, քաղցրությանը, լավ վարքագծին և մարդկանց օգնելու պատրաստակամությանը: Մեր արարքներն իսկապես ավելի լավ են խոսում, քան մեր բառերը: Անշուշտ, մենք պետք է պատմենք մարդկանց Հիսուսի մասին, որովհետև ճիշտ ժամանակին ասված խոսքերը կարող են շատ օգտակար լինել, բայց ճշմարիտ քրիստոնյաները ճանաչվում են իրենց պտղից:

Որքան շատ ժամանակ անցկացնես Աստծո հետ, այնքան շատ պտուղներ ի հայտ կգան այդ փոխհարաբերությունից: Բարի պտուղն է, որ փառավորում է Աստծուն, և բարի պտուղն է, որ ամենից բարձր է խոսում մարդկանց հետ: Ես ճանաչում եմ մարդկանց, որոնց փորձում էի խոսքով համոզել, որ փոխվել եմ, բայց նրանք այդպես էլ չէին համոզվում: Տարիներ անց, երբ նրանք օգնության կարիք ունեին, և ես օգնեցի նրանց, միայն այդ ժամանակ հասկացան, որ Աստված իսկապես աշխատել էր իմ կյանքում: Շատ դժվար է վիճարկել բարի պտուղները, որովհետև դրանք ապացուցում են, որ մենք այն ենք, ինչ ասում ենք: Քաջալերում եմ, որ ուշադիր լինես, թե ինչպես ես վարվում մարդկանց հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. նախքան այս օրը կավարտվի, ամենայն հավանականությամբ, կհանդիպես շատ մարդկանց: Այնպե՛ս արա, որ քո հեռանալուց հետո նրանք ժպտան:

Սիրո Հոգի

«Աստծուն երբեք ոչ ոք չի տեսել. եթե իրար սիրենք, Աստված մեզանում է բնակվում, և Նրա սերը կատարյալ է մեզանում» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.12):

Մենք չենք կարող տալ այն, ինչ չունենք: Եթե երբեք չենք ընդունել Աստծո սերը ինքներս մեր հանդեպ, ապա անօգուտ է փորձել սիրել ուրիշներին: Մենք պետք է սիրենք ինքներս մեզ, բայց պահպանենք հավասարակշռություն և չկենտրոնանանք ինքներս մեզ վրա: Ես սովորեցնում եմ, որ մենք պիտի սիրենք ինքներս մեզ, ոչ թե սիրահարվենք մեզ:

Ինքդ քեզ սիրելու համար պարզապես պետք է հավատաս այն սիրուն, որ Աստված տածում է քո հանդեպ. իմանաս, որ այդ սերը հավիտենական է, անփոփոխ և ոչ պայմանական: Թո՛ւյլ տուր, որ Նրա սերը հաստատի քեզ և համակի վստահության զգացումով, բայց մի՛ մտածիր քո մասին ավելի բարձր, քան արժան է (տե՛ս Հռոմեացիների 12.3): Սիրել ինքներս մեզ՝ չի նշանակում սիրել մեր վարքագիծն ամբողջությամբ, այն նշանակում է, որ մենք սիրում և ընդունում ենք այն յուրահատուկ անձնավորությանը, որ Աստված ստեղծել է մեզ, որ լինենք:

Կարծում եմ՝ երբ հավասարակշռված ձևով սիրում ենք ինքներս մեզ, թույլ ենք տալիս, որ Աստծո սերը հոսի մեր միջոցով դեպի ուրիշները: Եթե ողջամտորեն չընդունենք այն սերը, որ Աստված ունի մեր հանդեպ, ապա անկարող կլինենք անվերապահորեն սիրել մարդկանց: Գուցե նրանց հանդեպ կապվածության, հարգանքի կամ հումանիստական սիրո զգացում ունենանք, բայց անկեղծորեն սիրել չենք կարող, մինչև Աստված մեր մեջ չառաջացնի և չխթանի այդ սերը:

Սուրբ Հոգին սրբացնում է մեր սրտերը, որպեսզի կարողանանք թույլ տալ, որ Աստծո ճշմարիտ սերը մեր միջոցով հոսի դեպի ուրիշները (տե՛ս Ա Պետրոս 1.22): Սա Հոգով լցվելու դրսևորումներից է:

Աստված ուզում է, որ սեր ցուցաբերենք մարդկանց հանդեպ: Երբ մտածում ենք ուրիշների մասին և ուղիներ որոնում նրանց օրհնելու համար, շարունակում ենք լցված մնալ Սուրբ Հոգով, Ով սիրո Հոգի է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու հրաշալի բան ունես այսօր աշխարհին տալու. Աստծո սերը, որ քո մեջ է:

Որտեղ է Աստված

«Փնտրեք, հարցրեք և խնդրեք Տիրոջը, քանի դեռ հնարավոր է գտնել Նրան (պահանջելով Նրան իրավունքով և ըստ անհրաժեշտության). կանչեք Նրան, քանի որ Նա մոտ է» (ԵՍԱՅԻ 55.6):

Իմ ծառայության ամբողջ ընթացքում հաճախ եմ լսել այս հարցը. «Ինչո՞ւ չեմ կարողանում զգալ Աստծո ներկայությունը»: Ժամանակ առ ժամանակ նույն հարցն ինքս ինձ եմ տվել:

Աստվածաշնչից գիտենք, որ Սուրբ Հոգին չի հեռանում և չի թողնում մեզ ամեն անգամ, երբ անում ենք այն, ինչ դուր չի գալիս Նրան (տես Եբրայեցիների 13.5): Իրականում, Նա հանձն է առել մնալ մեզ հետ և օգնել հաղթահարելու մեր խնդիրները, այլ ոչ թե անօգնական թողնելու դրանց մեջ:

Սուրբ Հոգին երբեք չի թողնում մեզ, բայց երբեմն «թաքնվում» է: Ես սիրում եմ ասել, որ երբեմն Աստված պահմտոցի է խաղում Իր զավակների հետ: Երբեմն Նա թաքնվում է մեզնից, մինչև այնքան ենք կարոտում, որ սկսում ենք փնտրել Նրան: Ու Նա խոստանում է, որ կգտնենք Իրեն, երբ փնտրենք (տես Ա Մնացորդաց 28.9, Երեմիա 29.13):

Իր Խոսքում Աստված շարունակ ասում է, որ փնտրենք Իրեն. փնտրենք Իր երեսը, Իր կամքը, Իր նպատակը մեր կյանքի համար: Փնտրել՝ նշանակում է փափագել, հետապնդել և ամբողջ ուժով հետամուտ լինել: Մեզ նաև ասվում է փնտրել Նրան կանուխ, անկեղծորեն և ջանասիրաբար: Եթե չփնտրենք Աստծուն, կապրենք հիասթափված կյանքով: Աստված ցանկանում և պատվիրում է, որ փնտրենք Իրեն: Աստծուն փնտրելը կենտրոնական տեղ է զբաղեցնում մեր հոգևոր ընթացքի մեջ և կարևոր է հոգևոր աճի համար: Ասա՛ Աստծուն, թե որքան կարևոր է Նա քեզ համար, և որ առանց Նրա ոչինչ չես կարող անել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. պատվի՛ր Աստծուն այսօր և ամեն օր՝ խնդրելով, որ Նա ներգրավվի քո կյանքի յուրաքանչյուր ոլորտում և բոլոր մանրուքներում:

Ինքնատիրապետում, ոչ թե ինքնահաճեցում

«Նա, ով փափկասեր է և ապրում է հաճույքներով [կրվում է հաճույքներին և հաճեցնում ինքն իրեն], մեռած է՝ նույնիսկ ողջ լինելով» (Ա ՏԻՄՈԹԵՈՍ 5.6):

Մի անգամ ես մի մատանի հավանեցի և կարող էի գնել, որովհետև որոշակի գումար էի խնայել: Բայց չշտապեցի, այլ աղոթեցի և փորձեցի ստուգել իմ մղումները: Ապա Աստծուն հարցրի. «Աստված, կարո՞ղ եմ գնել այս մատանին: Դու գիտես, որ այս գումարով կանեմ այն, ինչ ուզում ես, բայց եթե դեմ չես, ես կցանկանայի ունենալ այս մատանին»:

Ես որևէ հանդիմանություն չզգացի, ուստի գնեցի այն:

Պատմությունը դրանով չավարտվեց. այնտեղ նաև թևնոց կար: Վաճառողն ասաց, որ այն զեղչված է, բայց զեղչը գործում է մինչև հաջորդ օրը: Եվ ասաց, որ այն ինձ շատ է սազում:

Ես երկմտում էի, բայց գնացի Դեյվին փնտրելու՝ ճանապարհին մտածելով. «Գուցե նա կգնի այն ինձ համար»:

Դեյվը նայեց թևնոցին, հավանեց ու ասաց. «Իհա՛րկե, դու կարող ես գնել այն, եթե ցանկանում ես»:

Ես սրտումս գիտեի, որ չպիտի գնեմ այդ թևնոցը: Այն գնելն անշուշտ մեղք չէր լինի, բայց գիտեի, որ այդ ժամանակ ինձ համար ավելի մեծ օգուտ կլիներ այնպիսի բնավորություն կերտելը, որը թույլ կտար հրաժարվել նրանից, ինչը ցանկալի էր, բայց ոչ անհրաժեշտ:

Այդ պահին զգացի, որ գուցե Աստված թույլ կտար ձեռք բերել թևնոցը ավելի ուշ, եթե դարձյալ ցանկանայի: Ես պարզապես չունեի խաղաղություն՝ նույն օրը գնելու նաև թևնոցը: Ետ նայելով՝ հասկանում եմ, որ զսպվածությունը, որ ցուցաբերեցի, ավելի մեծ բավականություն բերեց, քան ինքնահաճեցումը:

Եթե ուզում ենք իսկապես երջանիկ լինել, պետք է լսենք Աստծուն: Նա թույլ կտա, որ իմանանք՝ ինչն է ճիշտ, և ինչն է սխալ մեզ համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թո՛ղ Աստված առաջնորդի քեզ ինչպես փոքր, այնպես էլ լուրջ հարցերում:

Ինչպես երջանիկ լինել

«Ունենալով զանազան պարգևներ (ընդունակություններ, փաղանդներ, առանձնահատկություններ) այն շնորհքի համաձայն, որ մեզ տրված է, եկեք օգտագործենք դրանք...» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.6):

Աստված օժտել և շնորհել է մեզ՝ գործելու այն պարգևներով, որոնք տրվել են մեզ: Այսօրվա խոսքում ասվում է, որ պարգևները պետք է օգտագործենք համաձայն այն շնորհքի, որ մեզ վրա է:

Երկու մարդ կարող են ունենալ սովորեցնելու պարգև, սակայն մեկը կարող է լինել ավելի ուժեղ ուսուցիչ, քան մյուսը, որովհետև Աստված նրան ավելի շատ շնորհք է տվել այդ կոչման համար: Ինչո՞ւ: Որովհետև Սուրբ Հոգին բաժանում է պարգևները նրանց, ում կամենում է (տե՛ս Ա Կորնթացիների 12.11): Նա ունի Իր պատճառներն այն ամենի համար, ինչ անում է, և մենք պետք է վստահենք Նրան: Պետք է շնորհակալ լինենք նրա համար, ինչ Նա տալիս է մեզ, և չնախանձենք մեկ ուրիշի պարգևին: Մենք չենք կարող սիրել մարդկանց և միաժամանակ նախանձել նրանց պարգևներին:

Իմ ամուսինը կարող էր նախանձել, որովհետև Աստված տվել է ինձ քարոզելու պարգև, իսկ նրան՝ ոչ: Դեյվը վաղուց հասկացել է, որ երջանիկ չի լինի, եթե փորձի գործել այն շնորհքից դուրս, որ տրվել է իրեն: Եթե նա փորձեր լինել այն, ինչ ես եմ, կկորցներ իր ուրախությունը: Դեյվն օծված է գործերի կառավարման և ֆինանսների մեջ, և նրա դերը մեր ծառայության մեջ նույնքան կարևոր է, որքան՝ իմը:

Եթե ուզում ես իսկապես երջանիկ լինել, նվիրվի՛ր այն ամենին, որ կանչված և օժտված ես անելու: Սուրբ Հոգին կխոսի քեզ հետ այն մասին, թե ինչ պետք է անես, և կօգնի հասկանալու այն շնորհքը, որ տրվել է քեզ: Մի՛ նախանձիր ուրիշներին, այլ վերաբերվի՛ր նրանց սիրով և հավատարի՛մ եղիր քո կյանքի կոչմանն ու շնորհքին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու հրաշալի անձնավորություն ես՝ ապշեցուցիչ պարգևներով ու կարողություններով, և կարիք չկա, որ քեզ համեմատես մեկ ուրիշի հետ:

Ավելի գերազանց ճանապարհ

«Թախանձագին ցանկացեք և նախանձավոր եղեք մեծագույն և լավագույն պարգևներին ու շնորհքներին... և Ես ավելի գերազանց ճանապարհ ցույց կտամ ձեզ [այն, ինչը գերազանցում է այդ ամենին՝ սերը]» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.31):

Կորնթացիների Առաջին թղթի 13-րդ գլխում, որն անմիջապես հաջորդում է այսօրվա խոսքին, հստակ ասվում է, որ անկախ նրանից, թե Սուրբ Հոգու պարգևներից քանիսն են մեր միջոցով գործում, դրանք բացարձակապես անօգուտ են, եթե չենք քայլում սիրո մեջ: Համաձայն այսօրվա խոսքի՝ սերն ավելի գերազանց ճանապարհ է և վեր է ամենից:

Եթե աղոթենք մարդկանց և հրեշտակների լեզուներով, ունենանք մարգարեական կարողություններ, հասկանանք խորհուրդներ և նույնիսկ ունենանք ամեն գիտությունը և այնպիսի հավատք, որ կարող է սարեր շարժել, բայց չունենանք սեր, ապա «ոչինչ» ենք (տես Ա Կորնթացիների 13.2):

Աստծո հետ քայլելու վաղ տարիներին ես շատ խոսակցություններ էի լսում Հոգու պարգևների մասին: Շատերը կենտրոնանում էին իրենց պարգևների և դրանք գործածելու վրա: Ցավոք, ավելի շատ լսում էի հոգևոր պարգևների մասին, քան սիրո կամ Հոգու որևէ այլ պտղի մասին:

Կորնթացիների Առաջին թղթի 12-րդ գլխում խոսվում է Հոգու ինը պարգևների մասին: Եվս մի քանի պարգև թվարկված է Հռոմեացիների 12-րդ գլխում: Գաղատացիների 5-րդ գլխում թվարկված են Հոգու ինը պտուղները: Հոգու պարգևները չափազանց կարևոր են, և պետք է թախանձագին ցանկանանք դրանք: Մենք պետք է սովորենք դրանց մասին, իմանանք՝ ինչպես գործենք դրանցով և աշխատենք զարգացնել այն պարգևները, որ տրվել են մեզ: Սակայն, երբեք չպիտի կարևորենք պարգևները կամ դրանց դրսևորումն ավելի, քան սիրով գործելը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված սիրում է քեզ և ուզում է, որ Իր սերը քո միջոցով հոսի դեպի ուրիշները:

Երջանկության հիմքը

«Ամենը լսվել է. եզրակացությունը սա է. Աստծուց վախեցիր [պատկառիր և երկրպագիր Նրան] և Նրա պատվիրանները պահիր, որովհետև սա է ամեն բան մարդու համար [Նրա արարչագործության ամբողջական, սկզբնական նպատակը, …ամբողջ երջանկության հիմքը…] և ամեն մարդու պարտականությունը» (ԺՈՂՈՎՈՂ 12.13):

Ժողովողի հեղինակը մի մարդ էր, ով բառացիորեն փորձել էր ամեն ինչ՝ երջանիկ լինելու համար: Նա ուներ մեծ հարստություն, իշխանություն և շատ կանայք: Նա իրեն չէր զրկում ոչ մի աշխարհիկ հաճույքից: Նա տիրանում էր այն ամենին, ինչ աչքերը ցանկանում էին: Նա ուտում էր, խմում և զվարճանում: Ուներ ահռելի գիտություն, իմաստություն և հարգանք, սակայն ատում էր կյանքը: Ամեն բան սկսեց անիմաստ թվալ նրան: Նա փորձում էր հասկանալ, թե ինչի համար է կյանքը տրված, և ավելի ու ավելի էր խճճվում:

Ի վերջո, Սողոմոնը հասկացավ, թե որն էր իր խնդիրը. Նա չէր հնազանդվում Աստծո պատվիրաններին, այդ պատճառով էլ դժբախտ էր: Նա արեց այն պնդումը, որ ամբողջ երջանկության հիմքը հնազանդությունն է:

Կան շատ ու շատ տխուր, տրտում մարդիկ, որոնք իրենց դժբախտ կյանքի համար մեղադրում են մարդկանց և հանգամանքներին՝ չհասկանալով, որ իրենց չբավարարված լինելու պատճառը Աստծո հանդեպ անհնազանդությունն է:

Ես հավատում եմ, որ դու ուզում ես երջանիկ լինել: Երջանկության բանալին Աստծուն հնազանդվելն է: Աստվածաշնչի թարգմանություններից մեկում՝ Ժողովող 12.13-ում, ասվում է, որ հնազանդությունը «բոլոր աններդաշնակ հանգամանքների կարգավորումն է»: Դա նշանակում է, որ ցանկացած բան, որը դուրս է կարգուկանոնից կամ ներդաշնակությունից, անհնազանդության հետևանք է, և միայն հնազանդությունն է վերականգնում ներդաշնակությունը: Ամեն անգամ, երբ հնազանդվում ենք Աստծուն, մեր կյանքը բարելավվում է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հստակ որոշիր, որ ամեն բանում հնազանդվելու ես Աստծուն, և ուրախությունդ կավելանա:

Մեր փոխհարաբերությունը կարևոր է

«Եվ մի՛ տրտմեցրեք [մի՛ վիրավորեք կամ մի՛բարկացրեք կամ մի՛ տխրեցրեք] Աստծո Սուրբ Հոգուն, որով կնքվեցիք փրկության օրվա համար» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.30):

Այսօրվա խոսքը, նախորդող և հաջորդող խոսքերի համատեքստում, սովորեցնում է, որ մեր փոխհարաբերությունը կարևոր է Աստծո համար: Եթե մեզ վատ ենք պահում, դա տրտմեցնում է Սուրբ Հոգուն:

Հաճախ վատ ենք վարվում մեր մտերիմների հետ, հատկապես երբ լավ չենք զգում. քիչ ենք քնել, ծանր օր ենք ունեցել, վատ լուր ենք ստացել կամ հիասթափվել ենք: Բայց Աստված ուզում է, որ միմյանց հետ լավ վարվենք ոչ միայն այն ժամանակ, երբ ցանկություն ունենք, այլ՝ մշտապես:

Ինքս ինձ հարցնում էի, թե ինչու եմ վատ վարվում ամուսնուս կամ երեխաներիս հետ, բայց ոչ՝ ուրիշների հետ: Սուրբ Հոգին ցույց տվեց, որ ես զսպում էի իմ բացասական հույզերն ու վերաբերմունքը, երբ գտնվում էի այն մարդկանց կողքին, որոնց վրա ուզում էի տպավորություն թողնել: Բայց երբ ընտանիքիս հետ էի, ակնհայտ ցույց էի տալիս թերություններս ու հոգևոր մանկությունս: Ինքս ինձ համոզել էի, որ երբ նյարդայնանում եմ, պարզապես չեմ կարողանում վերահսկել ինձ: Ես չափազանց հուսախաբված էի զգում:

Երբ վրդովվում էի ֆինանսական դժվարություններից, աշխատանքային խնդիրներից կամ տան հետ կապված որևէ չնչին հարցից, հուսախաբությունս արտահայտվում էր ընտանիքի անդամների հետ փոխհարաբերություններում: Մեծ մասամբ բարկանում էի և նրանց հետ վատ վարվում ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ բան էր պատահել, այլ՝ որովհետև իմ ներսում չլուծված հարցեր կային: Աստված օգնեց դեմառդեմ կանգնել ճշմարտությանը, և ես ազատագրվեցի:

Փոխհարաբերությունները մեր մեծագույն արժեքն են, և Աստված ուզում է, որ բարձր գնահատենք դրանք: Սուրբ Հոգին կօգնի, որ ճիշտ վարվենք մեր հուսախաբությունների հետ, երբ պատրաստ լինենք դեմառդեմ կանգնելու այն ճշմարտությանը, որ Նա ցույց կտա:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ ստիպիր, որ ուրիշները հատուցեն քո ներքին հուսախաբությունների համար:

Շնորհքի Հոգի

«Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում, և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք… որ [ամբողջ էությամբ] լցվեք Աստծո ամեն լիությունով [ամբողջությամբ վերապրեք աստվածային ներկայությունը և դառնաք Աստծով լցված և հեղեղված անոթ]» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.17,19):

Հրաշալի է ամեն օր լցված լինել Աստծո ներկայությամբ և զորությամբ, և համաձայն այսօրվա խոսքի, դա Աստծո կամքն է մեզ համար: Աստծով լցված լինելը շատ ավելի լավ է, քան ինքներս մեզնով լցված լինելը: Եսասիրությամբ ապրելը թշվառություն է, բայց Աստված Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ համար նախատեսել է այլ ճանապարհ. ապրել Իր և ուրիշների համար:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ Քրիստոսը մահացավ բոլորի համար, որ «կենդանի լինողները այլևս ոչ թե իրենց անձերի համար կենդանի լինեն, այլ Նրա համար» (Բ Կորնթացիների 5.15): Հիսուսը մեզ համար ճանապարհ է հարթել խաղաղությամբ և ուրախությամբ լի կյանք ունենալու համար: Նա հնարավորություն է տվել սիրելու միմյանց, այլ ոչ թե ապրելու միայն մեր հաճույքների ու նպատակների համար:

Աստծո ներկայությամբ լցվելու համար հարկավոր է փնտրել Նրան, ուսումնասիրել Նրա Խոսքը և ձևավորել այնպիսի վարքագիծ, որը հնարավորություն կտա Նրան անարգել գործելու մեր կյանքում: Օրը ճիշտ սկսելու համար սկսի՛ր այն Աստծո Խոսքով և Նրա հետ հաղորդակցությամբ: Այս օրը նվեր է քեզ Աստծուց, այնպես որ՝ մի՛ վատնիր այն: Նա սպասում է, որ լցնի քեզ Իր ներկայությամբ. խնդրի՛ր և ընդունի՛ր, որ քո ուրախությունը կատարյալ լինի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. լցվի՛ր Աստծով և թո՛ւյլ տուր, որ Նա քո միջոցով դիպչի ուրիշներին:

Հավիտենական պտուղ

«Ինչպես Իմ Հայրն Ինձ սիրեց, ես էլ ձեզ սիրեցի. մնացե՛ք Իմ սիրո մեջ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.9):

Երբեք չեմ մոռանա այն օրը, երբ Դեյվը որոշեց, որ մեր տան կողքին գտնվող գեղեցիկ ծեր ծառը պետք է էտել: Ճյուղերից մի քանիսը թեքվել էին մի կողմ, և ծառն անհավասար աճում էր: Ես առանձնապես ուշադրություն չդարձրի Դեյվի այն խոսքերին, որ կանչելու է մասնագետների, որպեսզի էտեն և նոսրացնեն ծառը: Բայց ես սարսափեցի, երբ եկա տուն ու հայտնաբերեցի, որ այդ երջանիկ սողոցարարները վնասագործությամբ էին զբաղվել:

Դեյվն ասաց. «Պարզապես սպասի՛ր մինչև հաջորդ տարի: Այն կրկին գեղեցիկ տեսք կունենա»:

Բայց ես չեմ սիրում սպասել:

Եվ ինձ դուր չէր գալիս նայել ատամի փայտիկի չափ ճյուղերին, որոնք մի ժամանակ փարթամ ու շքեղ էին: Բայց Դեյվը ճիշտ էր: Հաջորդ տարի ծառն ավելի գեղեցիկ տեսք ստացավ: Այն բավականաչափ ամուր էր՝ դիմակայելու ուժգին քամիներին, և ավելի պտղաբեր, քան երբևէ: Սա հրաշալի օրինակ է այն էտման, որ Սուրբ Հոգին իրականացնում է մեր կյանքում՝ մեզ ավելի գեղեցիկ, ուժեղ ու հավատարիմ դարձնելով:

Գաղատացիների 5-րդ գլխում թվարկվում են մարմնի գործերը և Հոգու պտուղները: Մեր մարմինը պետք է կանոնավոր կերպով էտվի, որպեսզի ավելի ու ավելի շատ տեղ բացվի բարի պտուղների համար: Ինչպես իմ ծառը, երբեմն մենք էլ մի կողմ ենք թեքվում կամ դուրս ենք գալիս հավասարակշռությունից, և Աստված պետք է աշխատի մեզ հետ, որպեսզի կրկին ուղղի մեզ: Մենք պիտի շնորհակալ լինենք Աստծուն, որ հոգ է տանում մեզ համար, հսկում է մեզ և օգնում՝ ավելի լավը դառնալու: Խնդրի՛ր, որ Աստված քո կյանքում կանոնավոր կերպով հեռացնի ավելորդ ճյուղերը, որպեսզի ավելի առատ և գերազանց պտուղ բերես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կարգապահությունը հաճելի զգացումներ չի առաջացնում, բայց ավելի ուշ վայելում ենք դրա պտուղը:

Առաջնորդվել Հոգով

«Եթե [Սուրբ] Հոգով ենք ապրում, Հոգով վարվենք: [Եթե Սուրբ Հոգով ունենք կյանք Աստծո մեջ, եկե՛ք հնազանդվենք Նրան և մեր վարքագիծը դնենք Հոգու հսկողության տակ]» (ԳԱՂԱՏԱՅԻՆԵՐԻ 5.25):

Այսօրվա խոսքում գրված է Հոգով ապրելու և վարվելու մասին, որը նույնն է, ինչ Հոգով առաջնորդվելը: Մեզ կարող են առաջնորդել մարդիկ, սատանան, մարմինը (մեր ֆիզիկական մարմինը, միտքը, կամքը կամ զգացմունքները) կամ Սուրբ Հոգին: Աշխարհում կան շատ ձայներ, որ խոսում են մեզ հետ, և հաճախ դրանցից մի քանիսը խոսում են միաժամանակ: Մենք պետք է սովորենք առաջնորդվել Սուրբ Հոգով: Հիշի՛ր. Նա գիտի Աստծո կամքը և ուղարկվել է՝ բնակվելու մեր մեջ, որպեսզի օգնի մեզ լինելու այն, ինչ Աստված նախատեսել է, որ լինենք, և ունենանք այն, ինչ Նա կամենում է, որ ունենանք:

Սուրբ Հոգին ապրում է մեր մեջ, որպեսզի օգնի մեզ: Գուցե միշտ չէ, որ Նրա օգնությունը սկզբում գրկաբաց ընդունվում է, բայց, գոհություն Աստծուն, Նա հետևողական է և հույսը չի կտրում մեզնից: Ամեն օր մեր կյանքը պետք է բերենք Նրա առջև և ամբողջ զորությամբ ասենք. «Սո՛ւրբ Հոգի, ես սրտաբաց ընդունում եմ Քեզ իմ կյանքի յուրաքանչյուր բնագավառի մեջ»:

Երբ սրտաբաց ընդունես Սուրբ Հոգուն քո կյանքի յուրաքանչյուր բնագավառի մեջ, Նա կգա: Նա կխոսի քեզ հետ, կուղղորդի, կուղղի, կօգնի, կզորացնի և կառաջնորդի: Հնարավոր է՝ այլ ուժեր փորձեն առաջնորդել քեզ, բաց Սուրբ Հոգին կտա քեզ զորություն՝ հակառակվելու դրանց, և կօգնի, որ հետևես Իրեն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ինքդ քեզ հարցրու, թե ով կամ ինչն է առաջնորդում քեզ. դո՞ւ, մարդի՞կ, զգացմունքնե՞րը, սատանայի ստե՞րը, թե՞ Սուրբ Հոգին:

Լեզուների պարգև

«Որովհետև մեկին Հոգուց տրված է… այլ և այլ լեզուներ…» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.8,10):

Քրիստոսի մարմնի որոշ մասեր թերևս ավելի շատ են հայտնի Հոգու պարգևներով գործելու մեջ, քան նրանք, որոնց հոգևոր կյանքն այլ նախապատմություն ունի: Որոշ եկեղեցական խմբեր կանոնավոր սովորեցնում են Հոգու մկրտության և պարգևների մասին ու հաճախ տեսնում դրանց դրսևորումը, մինչդեռ կան այնպիսիք, որոնք չեն սովորեցնում պարգևների մասին կամ, նույնիսկ, չեն հավատում, որ դրանք այսօր հասանելի են քրիստոնյաներին: Այս պարգևները Սուրբ գրքի մի մասն են և պետք է ուսումնասիրվեն ու հետապնդվեն Քրիստոսում բոլոր հավատացյալների կողմից:

Լեզուներով խոսել՝ նշանակում է խոսել հոգևոր լեզվով, որը հասկանում է Աստված, բայց խոսողը և մյուսները կարող են չհասկանալ: Այն օգտակար է անձնական աղոթքի և Աստծո հետ հաղորդակցման համար և բարերար ազդեցություն ունի ընդհանուր հավաքույթների ժամանակ, սակայն պետք է ուղեկցվի թարգմանության հոգևոր պարգևով (տե՛ս Ա Կորնթացիների 14.2,27,28):

Հոգու պարգևների անտեսումը կարող է փակել պարգևների շվայտության և չարաշահման դուռը. երևույթներ, որոնք երբեմն տեղի են ունենում. բայց նաև փակում է անթիվ օրհնությունների դուռը, որոնց կարիքը մարդիկ հուսահատորեն ունեն կյանքում:

Ինչպես Պողոսն ասաց Ա Կորնթացիների 14.18-ում, ես նույնպես ուրախ եմ, որ խոսում եմ լեզուներով, և գոհանում եմ Աստծուց այս պարգևի համար: Ես լեզուներով շատ եմ խոսում, որովհետև դա զորացնում է ինձ հոգևորապես, խորացնում է իմ մտերմությունն Աստծո հետ և կարողություն տալիս ավելի հստակ լսելու Նրա ձայնը:

Անշուշտ, Պողոսը խոսում էր լեզուներով: 120 աշակերտները, որոնք Պենտեկոստեի օրը լցվեցին Սուրբ Հոգով, խոսում էին այլ լեզուներով: Ինչպես արձանագրված է Գործք առաքելոցում, լեզուներով էին խոսում նաև մյուս հավատացյալները, որոնք ընդունեցին Սուրբ Հոգու մկրտությունը: Ինչո՞ւ դու և ես չպիտի գործենք Հոգու այս պարգևով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. բա՛ց եղիր Սուրբ Հոգու պարգևների համար և երբեք մի՛ եղիր նեղմիտ նոր բաներ սովորելու համար:

Ժամանակ հատկացրու ճանաչելու մարդկանց

«Ազնիվ եղեք դատելու մեջ և առաջին հայացքից (մակերեսորեն և արտաքուստ) մի՛ որոշեք, այլ ուղիղ և արդար դատաստան արեք» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 7.24):

Այսօրվա խոսքը շատ հստակ, առանձնահատուկ խոսք է Աստծուց: Այն ասում է, որ չդատենք մակերեսորեն կամ արտաքին տեսքից:

Տարիներ շարունակ ես եղել եմ այնպիսի անձնավորություն, ով հապճեպ դատողություններ էր անում: Մի քանի անգամ Աստված լրջորեն հանդիմանել է ինձ, ի վերջո ես հասկացա հապճեպ և մակերեսորեն դատելու վտանգը:

Նախքան մարդկանց դատելը՝ պետք է ժամանակ հատկացնենք և ճանաչենք, թե իրականում ովքեր են նրանք: Հակառակ դեպքում, կարող ենք հավանություն տալ մեկին, ով իրականում այն չէ, ինչ թվում է, կամ հավանություն չտալ մյուսին, ով իրականում հրաշալի անձնավորություն է, բայց արտաքուստ կամ վարմունքով այլ տպավորություն է թողնում:

Բոլորս ունենք փոքրիկ տարօրինակություններ, թույլ ենք տալիս անսովոր արարքներ, որոնք հեշտությամբ չեն հասկացվում մյուսների կողմից: Աստված չի դատում երևույթով, և մենք պետք է հետևենք Նրա օրինակին:

Դավիթը երբեք չէր ընտրվի թագավոր, եթե մարդիկ մակերեսորեն դատեին: Նույնիսկ նրա ընտանիքն անարգում էր նրան: Բայց Աստված տեսավ Դավթի սիրտը, որ հովվի սիրտ էր: Աստված տեսավ երկրպագողի, ում սիրտը նվիրված էր Իրեն, ով փափուկ ու դյուրաթեք էր Իր ձեռքերում: Սրանք որակներ են, որ Աստված գնահատում է, բայց միշտ չէ, որ ակնհայտ են առաջին հայացքից:

Քաջալերում եմ քեզ փնտրել Աստծուն և թույլ տալ, որ Սուրբ Հոգին խոսի քեզ հետ մարդկանց մասին: Նա գիտի նրանց սրտերը և կասի քեզ՝ զգուշանա՞ս, թե՞ փոխհարաբերություններ հաստատես: Վստահի՛ր Նրան, ոչ թե քո դատողությանը՝ մարդկանց ճանաչելու և նրանց հետ փոխհարաբերություն կառուցելու գործում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ուրիշների հանդեպ ունեցի՛ր այն վերաբերմունքը, ինչը կցանկանայիր, որ նրանք ունենային քո հանդեպ:

Կրակով սրբված

«Եվ Եհովան գնում էր նրանց առջևից՝ ցերեկը ամպի սյունով՝ նրանց ճանապարհ ցույց տալու համար, և գիշերը՝ կրակի սյունով, որ նրանց լույս տա, որ ցերեկ և գիշեր գնան» (ԵԼԻՑ 13.21):

Աստվածաշնչի մի քանի հատվածներում հիշատակվում է Աստծո կրակի մասին, նաև՝ թե ինչպես է այն գործում մեր կյանքում: Եթե ուզում ենք Աստծո լավագույնը, պետք է պատրաստ լինենք անցնելու սրբացման կրակների միջով: Մեր ներսում կա ոսկի (լավ որակներ), բայց կան նաև անմաքրություններ, որոնք պետք է հեռացվեն:

Բոլորն ուզում են վայելել Աստծո լավագույնը, բայց քչերն են ուզում ենթարկվել Նրա կրակի փորձությանը: Միշտ հիշի՛ր. երբ Աստծո կրակը գալիս է քո կյանքի մեջ, Աստված Ինքն է հետևում կրակի բոցերին: Նա երբեք թույլ չի տա, որ կրակն ամբողջովին մարի, ոչ էլ թույլ կտա, որ այն կործանի քեզ: Նա երբեք չի տալիս մեզ ավելի շատ փորձություն, քան կարող ենք տանել:

Ամբողջ կյանքի ընթացքում մենք վերապրում ենք ժամանակներ, որոնք դժվար են թվում, և ժամանակներ, որոնք առավել հեշտ են: Պողոսը խոսում էր այդ ժամանակների մասին և ասում, որ երկու դեպքում էլ սովորել է գոհանալ: Նա հավատում էր, որ Աստծո իմաստությունը կատարյալ է, և որ ամեն բան ի վերջո գործակից է լինելու դեպի բարին: Մենք կարող ենք հետևել նրա օրինակին: Երբ ընդդիմանում ենք Աստծո կրակին, միևնույն է, այն շարունակում է վառվել մեր կյանքում, բայց մեզ համար ավելի դժվար է դառնում նրան դիմանալը:

Աստծո կրակը գալիս է, որ այրի մեր կյանքի բոլոր անօգտակար բաները և բոցավառի Նրա համար այն, ինչ մնացել է: Երբեմն զգում ենք, թե ինչպես է այդ կրակը վառվում մեր մեջ, երբ ուսումնասիրում ենք Աստծո Խոսքը և հանդիմանվում որևէ բնագավառի համար, որը պետք է փոխվի: Այլ անգամներ Աստծո կրակը գալիս է տհաճ հանգամանքների տեսքով, որոնցում Աստված պահանջում է, որ մնանք կայուն և ցուցաբերենք աստվածահաճո վարքագիծ: Ամեն անգամ, երբ որևէ դժվարություն ենք կրում Աստծո փառքի համար, կարող ենք համոզված լինել, որ ճիշտ ժամանակին կստանանք մեր վարձքը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե անցնում ես ինչ-որ բաների միջով, դրանցից փախչելու կամ նույնիսկ վախենալու հարկ չկա:

Արդյո՞ք գործում է քո հավատքը

«Քանի որ Քրիստոս Հիսուսում ո՛չ թլփատությունն է մի բան կարող, և ո՛չ անթլփատությունը, այլ՝ հավատքը, որ սիրով գործում է» (ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 5.6):

Շատերը կարծում են, թե մեծ հավատքը հոգևոր հասունության առաջին նշանն է, բայց, կարծում եմ, հոգևոր հասունության ճշմարիտ ցուցանիշը սիրո մեջ քայլելն է: Այն խթանում է մեր հավատքը: Մենք չենք կարող ունենալ լավ փոխհարաբերություն Աստծո հետ, եթե չունենանք հավատք, բայց սերը ցուցադրում, զորացնում և արտահայտում է մեր հավատքը: Եթե իսկապես սիրենք Աստծուն և հավատանք Նրան, կսիրենք նաև մարդկանց:

Այսօրվա խոսքը սովորեցնում է մեզ, որ հավատքը գործում է սիրո միջոցով, և սերը խոսք կամ տեսություն չէ. այն գործողություն է: Իրականում Աստվածաշունչն ասում է, որ եթե տեսնում ենք եղբորը կարիքի մեջ և չենք օգնում՝ ցուցաբերելով այն, ինչ անհրաժեշտ է, ուրեմն չենք քայլում սիրո մեջ (տե՛ս Ա Հովհաննես 3.17):

Հիսուսը նաև ասաց, որ ամբողջ օրենքը և մարգարեներն ամփոփված են սիրո մեջ. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ անձով և քո ամբողջ մտքով: Սա է առաջին և մեծ պատվիրանը: Երկրորդն էլ սրա նման. սիրի՛ր քո ընկերոջը քո անձի պես: Այս երկու պատվիրանից կախված է ամբողջ օրենքը և մարգարեները» (Մատթեոս 22.37-40): Հիսուսն այս խոսքերով պատասխանեց այն մարդկանց, ովքեր հարցնում էին, թե որ պատվիրանն է ամենակարևորը: Նրանք, ըստ էության, ասում էին. «Ասա՛ մեզ գլխավորը, Հիսո՛ւս»: Նա ասաց. «Շա՛տ լավ, ուզում եք իմանալ գլխավո՞րը: Ուզո՞ւմ եք լիովին հնազանդվել ամբողջ օրենքին և մարգարեներին: Ուրեմն, սիրե՛ք Ինձ և սիրե՛ք մարդկանց»: Այդքան պարզ: Հիսուսը մարդկանց հայտնեց, որ սիրո մեջ քայլելու դեպքում է միայն հնարավոր ապրել այն կյանքով, որը հաճո է Աստծուն: Առանց սիրո հավատքով քայլելը նման է առանց մարտկոցի լապտեր ունենալուն: Պետք է այնպես անենք, որ մեր սիրո մարտկոցը մշտապես լիցքավորված լինի: Այլապես մեր հավատքը չի գործի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված սեր է, և որքան շատ ճանաչենք Նրան, այնքան շատ կսիրենք ուրիշներին:

Սուրբ Հոգու պարգևները

«Բայց հոգևոր պարգևների համար, եղբայրնե՛ր, չեմ կամենում, որ չգիտենաք» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.1):

Քրիստոնեության պատմության ընթացքում շատ բան է գրվել Հոգու պարգևների մասին: Աստվածաշունչը սովորեցնում է Հոգու պարգևների կարևորության մասին և շեշտում, որ մենք չպետք է անտեղյակ լինենք դրանց: Սակայն, չնայած այն տեղեկատվությանը, որ այսօր հասանելի է այս թեմայի շուրջ, շատերը միանգամայն անտեղյակ են այս պարգևներին: Ինքս տարիներ շարունակ հաճախել եմ եկեղեցի ու նույնիսկ մեկ քարոզ կամ ուսմունք չեմ լսել Հոգու պարգևների մասին: Ես չեմ իմացել, որ դրանք կան, ուր մնաց՝ հասանելի լինեն ինձ:

Կան զանազան «պարգևներ» կամ «շնորհներ», ինչպես գրված է Աստվածաշնչի «Ընդլայնված թարգմանությունում», որտեղ նաև ասվում է, որ պարգևները «արտասովոր զորություններ են, որոնցով առանձնանում են որոշ քրիստոնյաներ» (Ա Կորնթացիների 12.4): Պարգևները տարբեր են, բայց բոլորն էլ նույն Սուրբ Հոգուց են: Երբ թույլ ենք տալիս, որ Աստված առաջնորդի մեզ այս պարգևների գործածության մեջ, դրանք զորության նոր հարթություն են ավելացնում մեր կյանքին: Ա Կորնթացիների 12.8-10 խոսքերում պարգևները թվարկված են այսպես. իմաստության խոսք, գիտության խոսք, հավատք, բժշկության պարգևներ, հրաշագործություններ (զորությունների ներգործություններ), մարգարեություն, հոգիների զանազանում (ընտրություն), այլ և այլ լեզուներ և լեզուների թարգմանություն:

Այս բոլորը կարողություններ են, պարգևներ, ձեռքբերումներ, գերբնական զորության շնորհներ, որոնցով հավատացյալը կարողանում է իրականացնել արտասովոր բաներ, և դրանք հասանելի են բոլոր հավատացյալներին: Մենք չենք կարող բռնի ուժով գործի դնել որևէ պարգև: Մենք պետք է նախանձավոր լինենք բոլոր պարգևներին, բայց Սուրբ Հոգին է ընտրում՝ երբ և ում միջոցով դրանք գործեն: Խնդրի՛ր և սպասի՛ր, որ Աստված առաջնորդի քեզ Հոգու պարգևների հարցում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հարկ չկա, որ ապրես տկարության մեջ, որովհետև Աստծո զորությունը հասանելի է քեզ այսօր և ամեն օր:

Իմաստության խոսք

«Որովհետև մեկին Հոգուց տրված է իմաստության խոսք…» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.8):

Կորնթացիների Առաջին թղթի 1.30-ում ասվում է, որ Հիսուսը «մեզ համար եղավ իմաստություն»: Իսկ Առակաց գրքի հեղինակը շարունակ հորդորում է, որ փնտրենք իմաստություն և անենք ամեն հնարավոր բան՝ այն ձեռք բերելու համար: Իմաստությունը հասանելի է դարձել բոլոր մարդկանց, բայց «իմաստության խոսքը» իմաստության այնպիսի տեսակ է, որը տարբերվում է այն իմաստությունից, որ բոլորը կարող են ունենալ:

Իմաստությունն ամբողջությամբ Աստծուց է, և կա իմաստություն, որը կարելի է ձեռք բերել փորձառությունից և գիտելիքները յուրացնելուց: Բայց դա իմաստության խոսքը չէ, որի մասին գրված է այսօրվա խոսքում: Իմաստության խոսքը հոգևոր առաջնորդության ձև է: Երբ գործում է այս պարգևը, անհատը Սուրբ Հոգուց գերբնականորեն իմանում է՝ ինչպես լուծել այս կամ այն հարցը բացառիկ իմաստուն կերպով, որը վեր է իր իմացությունից կամ փորձառությունից և համապատասխանում է Աստծո նպատակին*:

Մենք հաճախ ենք գործում այս պարգևով՝ նույնիսկ անտեղյակ լինելով դրան: Կարող ենք ինչ-որ մեկին ինչ-որ բան ասել, որը սովորական է թվում մեզ, բայց լսողի համար իմաստության խոսք է՝ իր իրավիճակի համար:

Ես լսել եմ իմաստության խոսքեր երեխաներից, որոնք հաստատ գաղափար չունեին, թե ինչ էին ասում: Սուրբ Հոգին փորձում էր գրավել իմ ուշադրությունը և օգտագործում էր այնպիսի աղբյուր, որի միջոցով կիմանայի, որ Ինքն է խոսում: Խնդրի՛ր և սպասի՛ր, որ Աստված առաջնորդի քեզ իմաստության խոսքի միջոցով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. փնտրի՛ր իմաստություն, որովհետև իմաստության մեկ խոսքը ճիշտ ժամանակին կարող է կյանք փոխել:

---

* Սթենլի Մ. Բուրգես և Գարի Մաքջի, *Հոգեգալստական և խարիզմատիկ շարժումների բառարան* (Գրանդ Ռեփիդս, Միսսուրի. Զոնդերվան, 1988), 890-92:

Գիտության խոսք

«Եվ ուրիշին [զորություն՝ ասելու] գիտության և հասկացողության խոսք՝ նույն [Սուրբ] Հոգու չափով» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.8):

Գիտության խոսքը մեծ մասամբ գործում է այնպես, ինչպես իմաստության խոսքը: Գիտության խոսքի վերաբերյալ մի քանի տարբեր մեկնաբանություններ կան, բայց մեծ մասը համաձայնում է, որ այն գործողության մեջ է, երբ Աստված անհատին հայտնում է, թե ինչ է անում տվյալ իրավիճակում, և այդ գիտելիքը անհատը չէր կարող ստանալ բնական ճանապարհով*:

Երբեմն, երբ Աստված խոսում է մեզ հետ և տալիս գիտության խոսք ուրիշների վերաբերյալ, մենք հասկանում ենք, որ ինչ-որ բան այն չէ նրանց կյանքում, կամ նրանք պետք է որոշակի գործողության դիմեն տվյալ իրավիճակում: Մենք երբեք չպիտի փորձենք այս գերբնական գիտելիքը պարտադրել որևէ մեկին: Փոխարենը, պետք է խոնարհաբար ներկայացնենք այն և Աստծուն թողնենք համոզելու գործը: Երբեմն Աստված ընդամենը ուզում է, որ աղոթենք տվյալ անհատի համար:

Թեև գիտության խոսքը հաճախ տրվում է որպես ծառայության միջոց՝ ուրիշներին օգնելու համար, այն նաև շատ արժեքավոր է մեր անձնական կյանքում: Օրինակ, այս պարգևը հաճախակի գործում է, երբ որևէ բան կորցրել կամ սխալ տեղ եմ դրել: Ես չեմ կարողանում գտնել այն, ինչ փնտրում եմ, ու հանկարծ մտովի տեսնում եմ, Սուրբ Հոգուց միտք կամ խոսք եմ ստանում, թե որտեղ է այն: Սա շատ գործնական օրինակ է այն բանի, թե ինչպես է գիտության խոսքը գործում կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. կրթությունը լավ է, բայց Աստծո գիտությունն առավել լավ է, այնպես որ՝ ապավինիր Նրան:

---

* 1.Սթենլի Մ. Բուրգես և Գարի Մաքջի, Հոգեգալստական և խարիզմատիկ շարժումների բառարան (Գրանդ Ռեփիդս, Միսսուրի. Զոնդերվան, 1988), 527-28:

Հավատքի պարգև

«Մյուսին՝ [հրաշագործ] հավատք՝ նույն [Սուրբ] Հոգով» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.9):

Կարծում եմ՝ Աստված որոշ անհատների տալիս է հավատքի պարգև առանձնահատուկ դեպքերի համար, ինչպիսիք են՝ վտանգավոր միսիոներական ուղևորությունը կամ մարտահրավերային իրավիճակը: Երբ այս պարգևը գործում է մարդու մեջ, նա ի վիճակի է լինում հեշտությամբ հավատալու Աստծուն այն բանի համար, ինչն ուրիշներն անհնարին են համարում[1]*: Նա լիովին հավատում է մի բանի, որից ուրիշները կվհատվեին կամ, նույնիսկ, կվախենային:

Հավատքի պարգևով գործող մարդը պետք է զգույշ լինի, որ չկարծի, թե նրանք, ովքեր չունեն այդ պարգևը, թերահավատ են, որովհետև երբ հավատքի պարգևը գործում է որևէ անհատի մեջ, Աստված նրան տալիս է հավատքի անսովոր չափաբաժին, որպեսզի իրականացնի Իր նպատակը: Այդ անհատը կարող է գործածվել Աստծո կողմից՝ ուրիշներին քաջություն և մխիթարություն բերելու համար, բայց պետք է մնա խոնարհ և շնորհակալ լինի այն ամենի համար, ինչ Աստված տվել է իրեն: Հռոմեացիների 12.3-ում ասվում է. «Որովհետև Աստծո շնորհքով (Աստծո՝ չարժանացած բարեհաճությամբ), որ ինձ տրված է, ասում եմ ձեր մեջ ամենին, բան չմտածել նրանից ավելի, քան թե արժան է մտածել, այլ մտածել պարկեշտ մնալ այնպես, ինչպես որ Աստված ամեն մեկին հավատքի չափը բաժանեց»:

Աստված միշտ կտա մեզ անհրաժեշտ հավատք՝ դեմառդեմ կանգնելու ցանկացած իրավիճակի: Սակայն, հավատքի պարգևը մարդուն արտասովոր կերպով համարձակ է դարձնում: Ով գործում է այդ պարգևով, պետք է գիտակցի, որ այդ համարձակությունը պարգև է Աստծուց, և մշտապես շնորհակալություն հայտնի Նրան դրա համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. շնորհակալ եղիր այն հավատքի համար, որ Աստված տալիս է քեզ՝ դժվար բաներ իրականացնելու:

---

* 1.Առնոլդ Բիթլինգեր, *Պարգևներ և շնորհներ* (Գրանդ Ռեփիդս, Միսսուրի. Իրդմանս, 1967), 23-42:

Մարգարեության պարգև

«...և ուրիշին՝ մարգարեություն (աստվածային կամքը և նպատակը մեկնելու պարգև)...» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.10):

Մարգարեության ճշմարիտ պարգևը գործում է այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը լսում և խոսում է հստակ ուղերձ Աստծուց՝ մեկ ուրիշի, խմբի կամ իրավիճակի համար: Երբեմն մարգարեությունը շատ ընդհանուր է, երբեմն էլ՝ բավականին առանձնահատուկ: Այն կարող է ի հայտ գալ պատրաստված ուղերձի կամ քարոզի միջոցով կամ էլ աստվածային հայտնությամբ:

Թեև մարգարեության պարգևը կենսականորեն կարևոր է, ցավոք, այն չարաշահվել է և մեծ խառնաշփոթություն ստեղծել: Իհարկե, այսօր կան իսկական մարգարեներ, բայց նույնպես կան սուտ մարգարեներ: Կան նաև այնպիսիք, որոնք վնասելու մտադրություն չունեն, երբ փորձում են Աստծուց խոսք ասել, բայց իրականում խոսում են՝ առաջնորդվելով ոչ թե Աստծո Հոգով, այլ իրենց սեփական մտքերով, կամքով կամ զգացմունքներով:

Ճշմարիտ մարգարեության նպատակը «մարդկանց հետ շինություն և մխիթարություն և սփոփություն խոսելն է» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 14.3): Սուրբ Հոգու բոլոր պարգևներն ի շահ և հօգուտ բոլորի են: Ճշմարիտ մարգարեական խոսքն ուղեկցվում է խաղաղությամբ, և մեր սիրտն ու հոգին վկայում են, որ այն Աստծուց է: Բացի այդ, մարգարեական խոսքը հաստատում է այն, ինչ արդեն կա քո սրտում, թեկուզ՝ թեթևակիորեն: Այս չափանիշները կարող են օգնել որոշելու՝ մարգարեությունը ճշմարի՞տ է, թե՞ ոչ: Անշուշտ, մարգարեության ճշմարիտ լինելը ստուգվում է այն իրականանալով կամ չիրականանալով: Հիշի՛ր. ճշմարիտ մարգարեությունն իրականանում է: Մարգարեության պարգև ունեցողները միակը չեն, որ լսում են Աստծուց: Դու ունես կարողություն և իրավունք ինքնուրույն լսելու Նրա ձայնը, այնպես որ՝ մշտապես փորձի՛ր այն հոգին, որ կանգնած է քո ստացած մարգարեության ետևում, և ստուգի՛ր մարգարեությունը՝ համոզվելով, որ այն վկայություն է տալիս քո սրտին (տե՛ս Ա Հովհաննես 4.1):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ մարդիկ խորհուրդ են տալիս քեզ և ասում, որ դա Աստծուց է, համոզվի՛ր, որ նրանց ասածը համաձայն լինի Աստծո Խոսքին և հաստատություն գտնի քո սրտում:

Բժշկության պարգևներ

«…ուրիշին՝ բժշկության արտասովոր զորություններ՝ նույն Հոգով» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.9):

Բժշկության պարգևները գործում են հավատքի պարգևի հետ: Չնայած բոլոր հավատացյալներին քաջալերվում է աղոթել հիվանդների համար և տեսնել նրանց ապաքինումը (տե՛ս Մարկոս 16.17,18), Սուրբ Հոգին ոմանց տալիս է բժշկության արտասովոր պարգևներ:

Մեր համաժողովներին հաճախ աղոթում ենք մարդկանց համար և տեսնում բազմաթիվ հրաշալի բժշկություններ: Տարիների ընթացքում ստացել ենք հաստատված ֆիզիկական հրաշքների բազմաթիվ վկայություններ: Ես հավատքի աղոթքներ եմ անում մեր համաժողովների և հեռուստաթերթերների ժամանակ ու հավատում, որ Աստված գործում է:

Երբ մարդը բժշկություն է ստանում հոգևոր պարգևի միջոցով, այդ բժշկությունը կարող է անմիջապես չերևալ: Բժշկությունը կարող է լինել մի գործընթաց, որը նման է դեղորայքային բուժմանը: Անհրաժեշտ է հավատքով ընդունել բժշկությունը և հավատալ, որ այն գործում է: Արդյունքները հաճախ ավելի ուշ են ի հայտ գալիս: Ես հաճախ քաջալերում եմ մարդկանց ասել. «Աստծո բժշկարար զորությունը հենց հիմա գործում է իմ մեջ»:

Մենք պետք է վստահենք Աստծուն մեր առողջության բնագավառում: Ես շնորհակալություն եմ հայտնում Աստծուն բժիշկների և դեղորայքի համար, երբ հարկ է լինում դիմել նրանց օգնությանը, բայց, Հիսուսն է մեր Բժիշկը (տե՛ս Եսայի 53.5):

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված քո բժիշկն է, իսկ Նրա Խոսքը՝ քո դեղորայքը: Խնդրի՛ր, որ Նա բժշկի քեզ ամեն առումով:

Միտք, կամք և զգացմունքներ

«...մենք Քրիստոսի (Մեսիայի) միտքն ունենք և Նրա սրտի մտքերն (զգացմունքներն ու նպատակներն) ենք կիսում» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 2.16):

Երբ հրավիրում ենք Հիսուսին մեր սրտի մեջ, Սուրբ Հոգին բնակություն է հաստատում մեր մեջ: Մեր սրտից, որը մեր էության կենտրոնն է, Սուրբ Հոգին սկսում է իր մաքրագործման աշխատանքը մեր շնչում (միտք, կամք, զգացմունքներ):

Մեր միտքն ասում է, թե ինչ ենք *մենք* մտածում, այլ ոչ թե՝ ինչ է Աստված մտածում: Սուրբ Հոգին գործում է մեր մեջ, որպեսզի փոխի դա: Մենք պետք է սովորենք մտածել Աստծո պես, լինել անոթներ, որոնք ընդունում են Նրա մտքերը: Պետք է մաքրվենք հին մտքերից, և թույլ տանք, որ Աստծուց եկող նոր մտքերը դառնան մեր մտածողության մասը:

Մեր զգացմունքներն ասում են, թե ինչ ենք *մենք* զգում, այլ ոչ թե՝ ինչ է Աստված զգում այս կամ այն իրավիճակի, մարդկանց կամ մեր կայացրած որոշումների վերաբերյալ: Համաձայն Սաղմոս 7.9-ի՝ Աստված ստուգում և փորձում է մեր զգացմունքները: Նա աշխատում է մեզ հետ այնքան, մինչև որ սովորում ենք շարժվել ոչ միայն մարդկային զգացմունքներով, այլև Նրա Հոգով:

Մեր կամքն ասում է, թե ինչ ենք *մենք* ուզում, այլ ոչ թե՝ ինչ է Աստված ուզում: Կամքը գերակշռում է զգացմունքներին և նույնիսկ մտքերին: Մենք կարող ենք կամովի ճիշտ բան անել, նույնիսկ երբ դա անելու ցանկություն չունենք: Մեզ տրված է ազատ կամք, և Աստված որևէ բան չի պարտադրի մեզ: Նա Իր Հոգով առաջնորդում է մեզ՝ անելու այն, ինչը գիտի, որ մեր բարօրության համար է, բայց վերջնական որոշումը մերն է: Աստված ուզում է, որ մշտապես կայացնենք որոշումներ, որոնք համաձայն են ոչ թե մեր, այլ Իր կամքին:

Երբ այս երեք ոլորտները՝ միտքը, կամքը և զգացմունքները, ենթարկվեն Հիսուս Քրիստոսի իշխանությանը և Սուրբ Հոգու առաջնորդությանը, մենք ավելի ու ավելի հասուն քրիստոնյաներ կդառնանք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու կարող ես կառավարել քո զգացմունքները՝ թույլ չտալով, որ դրանք կառավարեն քեզ:

Մարդիկ Աստծունն են

«…Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ փրկել եմ, քո անունով կանչել եմ, թե դու Իմն ես» (ԵՍԱՅԻ 43.1):

Ունե՞ս որևէ գույք, որը չափազանց արժեքավոր է քեզ համար, որը փայփայում ես և որով հիանում ես: Եթե տեսնեիր, որ ինչ-որ մեկն անփութորեն դես ու դեն է նետում այն կամ կարող է վնասել, մի՞թե չէիր տրտմի:

Աստված նույն զգացողությունն ունի Իր ունեցվածքի հանդեպ: Մարդիկ Աստծունն են: Նրանք Աստծո ստեղծագործությունն են, և Աստծո Հոգին տրտմում է, երբ տեսնում է, որ վատ են վարվում Իր ստեղծագործության հետ:

Բոլորը չունեն նույն կոչումը, բայց յուրաքանչյուր վերստին ծնված Աստծո ժառանգ է և Քրիստոսի հետ ժառանգակից: Յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ունենալու խաղաղություն, արդարություն և ուրախություն, ստանալու իր կարիքների պատասխանը, գործածվելու Աստծո կողմից և տեսնելու, թե ինչպես է Աստծո օծությունը հոսում իր միջոցով:

Բոլորը հավասար հնարավորություն ունեն՝ տեսնելու պտուղ իրենց ծառայության մեջ, բայց ուրիշներին սիրելու պատրաստակամությամբ է պայմանավորված այն, թե որքան պտուղ նրանք կտեսնեն: Տարիներ առաջ Սուրբ Հոգին ինձ ասաց. «Հիմնական պատճառներից մեկը, որ մարդիկ չեն քայլում սիրո մեջ, այն է, որ դա ջանքեր է պահանջում: Ամեն անգամ, երբ նրանք վարվում են սիրով, դա ինչ-որ բան է արժենում նրանց»:

Սերը պահանջում է, որ չասենք որոշ բաներ, որ կցանկանայինք ասել: Սերը պահանջում է, որ չանենք որոշ բաներ, որ կցանկանայինք անել, և տանք որոշ բաներ, որ կցանկանայինք պահել: Սերը պահանջում է, որ համբերատար լինենք մարդկանց հանդեպ:

Փոխհարաբերությունները միշտ չէ, որ հեշտ են, բայց կարևոր են Աստծո համար, որովհետև Նա բարձր է գնահատում մարդկանց: Մենք պետք է ջանք թափենք և անհրաժեշտ զոհողություններ անենք, որպեսզի սիրենք մարդկանց այնպես, ինչպես Աստված է ցանկանում, և չտրտմեցնենք Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված նայում է մարդկանց՝ որպես Իր գանձերի, ուստի՝ զգո՛ւյշ եղիր նրանց հետ վարվելիս:

Լեզուների թարգմանություն

«…ուրիշին՝ լեզուները թարգմանելու կարողություն» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.10):

Երբ եկեղեցական ծառայության ժամանակ մարդը խոսում է լեզուներով, նրա ուղերձը պետք է թարգմանվի՝ համաձայն Ա Կորնթացիների 14.27-ի: Երբեմն ինձ տրվել է հասկացողություն կամ մեկնություն լեզուներով ասված ուղերձի վերաբերյալ: Այդ ժամանակ կարծես հոգումդ տպավորություն կամ տեղեկություն ես ստանում, թե ինչ է Աստված փոխանցում ուղերձը լսողներին:

Քրիստոնեական շատ շրջանակներում այս բաները գաղտնիք են, որովհետև դրանց վերաբերյալ չկան ուսմունքներ: Կարծում եմ՝ մենք ապրում ենք դժվար ժամանակներում և Աստծո գերբնական օգնության կարիքն ունենք: Կարևոր է չխաբվել, բայց կարևոր է նաև չվախենալ խաբվելուց այնքան, որ վերջում նեղմիտ դառնանք Աստծո պարգևների հարցում:

Պողոսը քաջալերում էր հավատացյալներին, որ աղոթեն լեզուներով, նաև՝ որ թարգմանեն: Ես հավատում եմ, որ նույնկերպ մենք պետք է վարվենք: Թարգմանության պարգև ունենալը հնարավորություն է տալիս ավելի լավ հասկանալու այն, ինչ աղոթում ենք, երբ գործածում ենք աղոթքի մեր առանձնահատուկ լեզուն: Լեզուների թարգմանությունը տարբերվում է սովորական թարգմանությունից: Մենք չենք ստանում բառացի մեկնություն, այլ ձեռք ենք բերում ընդհանուր հասկացողություն այն մասին, թե ինչ է Աստված ասում Իր ժողովրդին:

Աստված Հոգի է, և մենք հոգևոր արարածներ ենք, որոնք պետք է սովորեն զգալ իրենց հոգում, թե ինչ է Աստված ասում: Քաջալերում եմ, որ ինքնուրույն ուսումնասիրես այս բաները և խնդրես, որ Աստված հասկացողություն տա Իր բոլոր հրաշալի պարգևների մասին: Կարևորն այն է, որ միտքդ բաց պահես և հետևես Սուրբ Հոգու առաջնորդությանը, մինչ աղոթում և փնտրում ես Աստծուն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եղի՛ր համարձակ և խնդրի՛ր, որ Աստված հասկացնի քեզ Իր խորհուրդներն ու գաղտնիքները:

Հոգիների զանազանում

«…ուրիշին՝ կարողություն՝ նկատելու և զանազանելու [ճշմարիտ] հոգիները [մոլար ոգիներից] …» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.10):

Կարծում եմ՝ հոգիների զանազանումը չափազանց արժեքավոր պարգև է, և քաջալերում եմ, որ ցանկանաս և զարգացնես այդ պարգևը: Ոմանք ասում են, որ հոգիների զանազանումը գերբնական խորաթափանցությունն է հոգևոր ոլորտ, երբ Աստված դա թույլ է տալիս: Շատերն էլ համոզված են, որ հոգիների զանազանումը պարգև է, որը տրվում է մեզ՝ մարդու կամ իրավիճակի բուն էությունն իմանալու համար: Մեր աշխարհը լի է խաբեությամբ, և շատ մարդիկ այն չեն, ինչ թվում են: Հոգիների զանազանման պարգևն օգնում է մեզ տեսնելու, թե ինչ կա այն դիմակների ետևում, որ մարդիկ կրում են, որպեսզի իմանանք, թե ինչ է իրականում կատարվում: Պարգևը նաև օգնում է զգալու, որ տվյալ մարդն ունի բարի սիրտ, կամ գործ ունենք ինչ-որ լավ բանի հետ:

Դեյվն ու ես բազմիցս տեսել ենք, թե ինչպես է այս պարգևը գործում՝ մարդկանց աշխատանքի ընդունելիս: Շատ անգամներ մարդիկ որակավորված, ունակ, նվիրված և «կատարյալ» էին թվում այն աշխատանքի համար, որին հավակնում էին: Հիշում եմ մի դեպք, երբ ծանոթացանք մեկի հետ, որ բոլորը կարծում էին, որ պետք է ընդունենք աշխատանքի, բայց իմ սրտում մի տանջող զգացողություն կար, որ այդպես չպիտի վարվեինք: Բայցևայնպես, այդ անձնավորությանն ընդունեցինք աշխատանքի, և նա ոչինչ չարեց՝ բացի անախորժություններ պատճառելուց: Ես թույլ տվի, որ իմ դատողությունը գերիշխեր հոգևոր զանազանմանը, քանի որ կարծում էի, թե նա լավ կաշխատի, որովհետև նրա գիտելիքներն ու աշխատանքային փորձը բավարարում էին մեր պահանջները, բայց երանի՜ այդպես չվարվեի:

Աստծո Հոգին ապրում է մեր սրտում և խոսում է մեր սրտին, ոչ թե մտքին: Նրա պարգևները մտավոր չեն կամ չեն գործում մտքի ոլորտում. դրանք հոգևոր են և գործում են հոգու մեջ: Մենք պետք է հետևենք, թե ինչ ենք զգում մեր հոգում, ոչ թե՝ ինչ մտածում ենք, թե ճիշտ է: Սա է պատճառը, որ Աստված տալիս է մեզ զանազանելու կարողություն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սովորի՛ր զանազանել և չկայացնել որոշում՝ հենվելով տեսածիդ և մտածածիդ վրա:

Փնտրի՛ր Հոգու պարգևները

«Գոյություն ունեն շնորհների (պարգևներ, արտասովոր կարողություններ, որով առանձնանում են որոշակի քրիստոնյաներ՝ պայմանավորված աստվածային շնորհքի այն զորությամբ, որ գործում է նրանց մեջ Սուրբ Հոգով) առանձնահատուկ բազմազանություն և տեղաբաշխում, և դրանք տարբերվում են, բայց [Սուրբ] Հոգին նույնն է» (Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 12.4):

Դժվար է բացատրել Հոգու պարգևները, որովհետև դրանք գործում են հոգևոր տիրույթում: Հուսով եմ, վերջին մի քանի ուղերձներում կարողացա նկարագրել այդ պարգևները և ցույց տալ, թե ինչպես են դրանք հիմնականում գործում: Հոգևոր պարգևների մասին կարելի է շատ խոսել, և ես քաջալերում եմ, որ կարդաս լավ գրքեր, որոնք նվիրված են Սուրբ Հոգու պարգևների թեմային:

Երբ գործում ենք գերբնական տիրույթում, պետք է զգույշ լինենք, բայց չվախենանք: Սատանան առաջարկում է Աստծո ճշմարիտ պարգևների բազմաթիվ աղավաղումներ, բայց մենք կարող ենք մնալ ճիշտ ուղու վրա աղոթքի և Աստծո Խոսքի ճշմարտությունը փնտրելու միջոցով:

Նաև հորդորում եմ, որ սկսես աղոթել Հոգու պարգևների համար: Խնդրի՛ր, որ Աստված գործածի քեզ այդ պարգևների մեջ հարմար ժամանակին: Մի՛ փնտրիր այն պարգևները, որոնք ամենից գրավիչ կամ հետաքրքիր են թվում, այլ փնտրի՛ր այն պարգևները, որոնք Աստված նախատեսել է քեզ համար:

Հոգու պարգևների դրսևորումն օգնում է մեզ կյանքում և անհավատներին ցուցադրում է մեր ներսում բնակվող Քրիստոսի զորությունն ու քաղցրությունը: Երբ Սուրբ Հոգու պարգևները գործում են մեր կյանքում, մեզ տրված Աստծո շնորհքի փառքը ցույց ենք տալիս նրանց, ովքեր հուսահատորեն կարիք ունեն հավատալու Հիսուսին:

Ձգտի՛ր գործել Հոգու պարգևներով՝ քո շինության և ուրիշների բարօրության համար: Երբ փնտրես պարգևները, մի՛ մոռացիր հատկապես քայլել սիրո մեջ, որովհետև սերը բոլոր պարգևներից մեծագույնն է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Սուրբ Հոգու պարգևները պիտի լինեն քո կյանքի բնականոն մասը:

Աստծո հետ առանձին

«Եվ երբ որ ժողովուրդներին արձակեց, վեր ելավ սարը՝ առանձին աղոթք անելու, և երբ որ իրիկուն եղավ, միայն Ինքն էր այնտեղ» (ՄԱՏԹԵՈՍ 14.23):

Ինձ համար կենսականորեն անհրաժեշտ է որևէ հանգիստ վայրում Աստծո հետ առանձին ժամանակ անցկացնելը: Կարծում եմ՝ քեզ համար նույնպես: Ես ունեմ առանձնասենյակ, որտեղ ամեն առավոտ հանդիպում եմ Աստծո հետ՝ նախքան օրս սկսելը: Բացի այդ, սիրում եմ տարին մոտավորապես չորս անգամ մի քանի օրով առանձնանալ: Ես վայելում եմ հանգստության այդ ժամանակը՝ լիովին կենտրոնանալով Աստծո վրա:

Մարդկանց մեծ մասն ամենամյա արձակուրդ է վերցնում և յուրաքանչյուր շաբաթ ժամանցի որևէ տեսակ է ծրագրում: Մենք ուզում ենք զվարճանալ և հանգստանալ, դրանում վատ բան չկա: Դա անհրաժեշտ է մեզ հավասարակշռված, առողջ կյանք ունենալու և հուզական ներդաշնակություն պահպանելու համար: Սակայն, առավել կարևոր է հոգևոր արձակուրդ ունենալը, և դա պետք է լինի առաջին բանը, որ նշում ենք մեր տարեկան օրացույցում կամ շաբաթվա ժամանակացույցում:

Պատկերացրու, թե ինչպիսի պատիվ կցուցաբերես Աստծուն, եթե ժամանակ ամրագրես Նրա հետ անցկացնելու համար՝ նախքան որևէ բան ծրագրելը: Ես համաժողովներ եմ անցկացնում ԱՄՆ-ում և արտասահմանում ու միշտ տպավորված եմ նրանով, թե որքան շատ մարդիկ են արձակուրդ վերցնում և երկար ճանապարհ անցնում, որպեսզի ներկա լինեն այդ համաժողովներին: Ես մշտապես ողջունում եմ նրանց քայլը և գիտեմ, որ Աստված հպարտանում է նրանց ընտրությամբ: Նրանք հոգևորապես կաճեն, որովհետև զոհողության են գնում, որպեսզի ժամանակ անցկացնեն Աստծո հետ:

Մի՛ սպասիր, որ ինչ-որ դժվարություն կամ ողբերգություն ստիպի քեզ ժամանակ անցկացնել Աստծո հետ, որպեսզի պատասխաններ գտնես քո իրավիճակի համար: Առաջին հերթին և մշտապես փնտրի՛ր Աստծուն, և դու հոգևորապես ուժեղ կլինես ու կկարողանաս լուծումներ գտնել ցանկացած իրավիճակում. եթե Հիսուսը կարիք ուներ մենակ լինելու Հայր Աստծո հետ, առավել ևս մենք դրա կարիքն ունենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հենց հիմա հանի՛ր քո օրացույցը և նշի՛ր այն ժամանակը, որ անցկացնելու ես Աստծո հետ:

Աստված տեղ է հասցնում Իր ուղերձը

«Ուրեմն, լսի՛ր քո Եհովա Աստծո ձայնը...» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 27.10):

Ինչպես գիտես, երբեմն Աստված խոսում է մեզ հետ մարդկանց միջոցով: Հիշում եմ, երբ Աստված Դեյվի միջոցով խոսեց ինձ հետ մի խնդրի վերաբերյալ, որ առկա էր իմ կյանքում: Երբ Դեյվը հայտնեց դա, ես բարկացա: Նա պարզապես ասաց. «Արա՛ այն, ինչ ուզում ես. ես պարզապես ասում եմ այն, ինչ, հավատում եմ, որ Աստված ցույց է տվել ինձ»: Նա չփորձեց համոզել, որ իր ասածները ճշմարիտ են. պարզապես հաղորդեց այն, ինչ, իր կարծիքով, Աստված հայտնել էր իրեն: Հաջորդ երեք օրերի ընթացքում Աստված հավաստիացրեց ինձ, որ Դեյվն ասել էր ճշմարտությունը: Ես շատ արցունքներ թափեցի, որովհետև ամաչում էի խոստովանելուց, որ Դեյվը ճիշտ էր:

Գիտության խոսքը, որ Աստված տվեց Դեյվի միջոցով, օգնեց ինձ հասկանալու, թե ինչն էր պատճառը, որ դժվարություն ունեի իմ կյանքի բնագավառներից մեկում: Ես փնտրում էի Աստծուն այդ իրավիճակի համար և որևէ պատասխան չէի ստանում: Դեյվը տվեց պատասխանը, որն ինձ դուր չեկավ, որովհետև այն հանդիմանում էր ինձ՝ դատելու և բամբասելու համար: Հավանաբար Աստված հայտնեց պատասխանը Դեյվի միջոցով, որովհետև գիտեր, որ ես չէի կարողանա լսել այն անմիջապես Իրենից:

Չեմ կարող չընդգծել այն ազդեցությունը, որ այս փորձառությունն ունեցավ իմ կյանքում: Եթե Աստված անմիջականորեն աշխատեր ինձ հետ, համոզված եմ, որ ես դաս կքաղեի դրանից, բայց ավելի արժեքավոր էր այն դասը, որ սովորեցի, երբ Նա Դեյվի միջոցով խոսեց ինձ հետ:

Քաջալերում եմ, որ բաց լինես լսելու Աստծուն՝ վստահելի մարդկանց միջոցով, ովքեր լսում են Նրա ձայնը և սիրում են քեզ այնքան, որ պատրաստ են ասելու այն, ինչ Աստված ուզում է, որ լսես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր Աստծուց, որ ամեն օր խոսի քեզ հետ՝ ինչպես կցանկանա, երբ և ում միջոցով կցանկանա:

Աստված ընտրում է մեր պարգևները

«… Մարդը չի կարող ոչինչ վեր առնել [նա չի կարող ոչինչ պահանջել, չի կարող ոչինչ վերցնել իրեն], եթե Երկնքից տրված չլինի նրան [Մարդը պետք է գոհ լինի այն պարգևից, որ տրվում է իրեն Երկնքից. ուրիշ աղբյուր չկա» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.27):

Կարծում եմ՝ շատ տխուր բան է տեղի ունենում, երբ մարդիկ մրցում են միմյանց դեմ կամ համեմատվում միմյանց հետ պարգևների, բնական ընդունակությունների և կոչման ոլորտում: Համեմատության և մրցակցության պատճառով կորցնում ենք այն ուրախությունը, որը վերապրում ենք, երբ անում ենք այն, ինչ Աստված սահմանել է մեզ անելու:

Այսօրվա խոսքը պատվիրում է բավարարվել այն պարգևով կամ պարգևներով, որ ունենք: Մեր պարգևներն Աստծուց են, և մենք պետք է երջանիկ լինենք դրանցով, որովհետև չենք կարող ստանալ այլ պարգևներ, եթե Աստված չորոշի տալ դրանք: Մենք պետք է վստահենք Սուրբ Հոգուն՝ հավատալով, որ Նա ուղարկվել է Երկիր, որպեսզի օգնի, որ Աստծո կամքն իրականանա երկրագնդի վրա և յուրաքանչյուրիս կյանքում:

Քաջալերում եմ քեզ մտորել այն փաստի շուրջ, որ Աստված ուղարկել է Սուրբ Հոգուն՝ մեր մեջ բնակվելու համար: Նա ապրում է յուրաքանչյուրի սրտում, ով իսկապես ընդունել է Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի և Տիրոջ: Սուրբ Հոգին ուղարկվել է՝ պահելու մեզ մինչև փրկագնման վերջին օրը, երբ Հիսուսը կվերադառնա և կպահանջի նրանց, ովքեր Իրենն են: Նա փորձում է խոսել մեզ հետ, որպեսզի առաջնորդի այն առատության մեջ, որ Հիսուսն Իր մահվամբ ապահովեց մեզ համար: Երբ պատերազմում ենք մեր կոչման դեմ կամ բավարարված չենք նրանով, ինչ կանք և ինչ ունենք, մենք պատերազմում ենք Սուրբ Հոգու աշխատանքի և իմաստության դեմ: Մենք պետք է հպատակվենք Նրան, հնազանդվենք Նրա ձայնին, զարգացնենք այն պարգևները, որ Նա դրել է մեր մեջ, և Նրա օգնությամբ ջերմեռանդորեն ապրենք Աստծո փառքի համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. գոհունակությունը մեր հարգանքի տուրքն է Աստծուն: Այն ասում է, որ մենք վստահում ենք Նրան և գնահատում այն, ինչ Նա անում է մեզ համար:

Ներկայացրու քեզ Աստծուն, ապա հանգստացիր

«Քո Տեր Աստված քո մեջ զորավոր է, Նա փրկում է, Նա պիտի ուրախանա քեզնով զվարճությամբ, Նա պիտի հանգստացնի քեզ Իր սիրով և պիտի ցնծա քեզնով՝ երգելով» (ՍՈՓՈՆԻԱ 3.17):

Կարծում եմ՝ այսօր մարդկանց առջև ծառացած դժվարին խնդիրներից մեկը զբաղված, հապճեպ, բուռն, լարված ապրելակերպն է: Զբաղվածությունը շատ է խանգարում Աստծուց լսելուն, բայց այսօրվա խոսքում մեզ տրվում է խոստում, որ Աստված կհանգստացնի մեզ Իր սիրով: Քեզ մեծ լավություն կանես, եթե գտնես որևէ տեղ, որտեղ կարող ես հանգիստ և լուռ լինել:

Աստծուն լսելը պահանջում է մենության լուռ ժամեր: Եթե իսկապես ուզում ես լսել Նրա հանդարտ, մեղմ ձայնը, ուրեմն պետք է հանգիստ լինես: Պետք է գնաս ինչ-որ տեղ և Նրա հետ մենակ լինես: Հիսուսն ասաց. «Մտի՛ր քո սենյակը և դուռը փակի՛ր» (տես Մատթեոս 6.6):

Խաղաղության և լռության մի քանի րոպեն միշտ չէ, որ բավական են. քեզ հարկավոր է հանգստության և լռության երկարատև ժամանակահատված՝ Աստծուն փնտրելու համար: Կարևոր է, որ կարողանաս ժամանակ անցկացնել Աստծո հետ այնպես, որ ոչինչ չշեղի և չընդհատի քեզ:

Երբ մենակ ես Աստծո հետ, մի՛ մտածիր խնդիրների մասին: Խնդրի՛ր Նրա իմաստությունը և զորությունը: Խնդրի՛ր թարմություն և նորոգություն:

Ասա՛ Նրան, որ ուզում ես իմանալ, թե ինչ է Նա պատրաստել քո կյանքի համար:

Հարցրու Նրան, թե ինչ է ուզում, որ անես:

Հարցրու Նրան, թե ինչ *չի* ուզում, որ անես:

Ներկայացրու քեզ Աստծուն և լսի՛ր: Դու պատվում ես Նրան՝ Նրա մոտ գնալով: Դու Նրանից պատասխան կստանաս: Եթե չես լսում Նրա ձայնը այն ընթացքում, երբ մենակ ես Նրա հետ, մի՛ անհանգստացիր: Դու արել ես քո մասը՝ Նրան փնտրելով, և Նա անպայման կուղղորդի քեզ, երբ անցնես կյանքի ճանապարհներով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե չափազանց զբաղված ես Աստծո հետ ժամանակ անցկացնելու համար, ուրեմն միանշանակ չափից շատ զբաղված ես:

Նախանձոտ սեր

«Կամ թե կարծում եք՝ Սուրբ Գիրքը պարապ տեղն է ասում. «Նախանձով փափագում է Հոգին, որ բնակված է մեզանում»» (ՀԱԿՈԲՈՍ 4.5):

Այսօրվա խոսքն ամփոփում է այն փաստը, որ Սուրբ Հոգին ուզում է ջերմորեն ընդունվել մեր կյանքում: Իրականում, Նա փափագում է մեզ հետ հաղորդություն ունենալ:

Այսօրվա խոսքին նախորդում է Հակոբոս 4.4-ը, որի համաձայն, երբ ավելի շատ ուշադրություն ենք դարձնում աշխարհի բաներին, քան Աստծուն, Նա նայում է մեզ՝ որպես անհավատարիմ կնոջ, որն ապօրինի սիրային հարաբերությունների մեջ է աշխարհի հետ և խախտում է Նրան տված ամուսնական երդումը: Որպեսզի հավատարիմ մնանք Իրեն, երբեմն Նա պետք է մեր կյանքից հեռացնի այն բաները, որոնք հետ են պահում մեզ Իրենից:

Եթե թույլ տանք, որ աշխատանքը կանգնի Աստծո և մեր միջև, մենք միգուցե կորցնենք այն: Եթե փողը բաժանի մեզ Նրանից, հնարավոր է՝ ստիպված լինենք սովորել, որ ավելի լավ է ապրել պակաս գումարով և որոշ բաներ չունենալ, քան օտարանալ Աստծուց: Եթե հաջողությունը կանգնում է երկնային Հոր հետ մեր փոխհարաբերության ճանապարհին, ապա հնարավոր է՝ ունենանք ոչ թե պաշտոնի բարձրացում, այլ՝ իջեցում: Եթե մեր կյանքում ընկերները զբաղեցնում են առաջին տեղը, ապա հնարավոր է՝ կորցնենք նրանցից մի քանիսին:

Բազմաթիվ մարդիկ չեն գիտակցում, որ իրենց ուզածը չեն ստանում, որովհետև իրականում Աստծուն չեն հատկացնում առաջին տեղը: Աստված նախանձոտ Աստված է. Նա ուզում է քո կյանքում զբաղեցնել առաջին տեղը: Ուրիշ տարբերակ Նա չի ընդունում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրիր Աստծուց, որ քո կյանքից հեռացնի այն ամենը, ինչը զբաղեցնում է այն տեղը, որն Իրեն է պատկանում:

Հաղորդություն. ծածուկ վայր

«Երբ որ մեռած էինք [մեր] հանցանքներում ու թերություններում, մեզ կենդանացրեց Քրիստոսի հետ հաղորդության և միության մեջ...» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.5):

Աստծո հետ հաղորդությունը մեզ կյանք է տալիս: Այն նորոգում է մեզ, այսպես ասած՝ լիցքավորում մեր մարտկոցները: Մենք ուժեղանում ենք Աստծո հետ միության և հաղորդության միջոցով, ուժեղանում ենք այնքան, որ կարողանում ենք դիմակայել մեր հոգիների թշնամու հարձակումներին (տե՛ս Եփեսացիների 6.10,11):

Երբ հաղորդակցվում ենք Աստծո հետ, գտնվում ենք ծածուկ վայրում, որտեղ պաշտպանված ենք թշնամուց: Սաղմոս 91.1-ում խոսվում է այս վայրի մասին և նշվում, որ նրանք, ովքեր բնակվում են այստեղ, հաղթում են յուրաքանչյուր թշնամու. «Նա, ով բնակվում է Բարձրյալի ծածուկ վայրում, անսասան ու հաստատ է մնում Ամենակարողի շուքի տակ [Ում զորությանը ոչ մի թշնամի չի կարող դիմանալ]»:

Ես հավատում եմ, որ ծածուկ վայրը Աստծո ներկայությունն է: Երբ այդ ներկայության մեջ հաղորդակցվում ենք Նրա հետ, վերապրում ենք Նրա խաղաղությունը: Սատանան պարզապես չգիտի, թե ինչպես վարվի այն հավատացյալի հետ, որն անսասան է՝ անկախ հանգամանքներից: Երբեմն դժվար է անսասան մնալ, բայց մենք լցվում ենք անհրաժեշտ ուժով, երբ Սուրբ Հոգու միջոցով հաղորդություն ենք ունենում Աստծո հետ:

Աստծո հետ հաղորդակցություն ունենալը ժամանակ է պահանջում, բայց այդ ժամանակը զուր չի անցնում. դու զորանում ես և կարողանում դիմակայել անսպասելի մարտահրավերներին: Աստվածաշնչի թարգմանություններից մեկում Առակաց 18.14-ն այսպես է հնչում. «Մարդու ուժեղ հոգին պահպանում է նրան ֆիզիկական ցավի կամ դժվարության ժամանակ»: Մի՛ սպասիր, մինչև դժվարություն ունենաս, որ ուժեղանաս. մշտապես ուժե՛ղ մնա:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ինչի առջև էլ հենց հիմա կանգնած լինես, Քրիստոսի միջոցով դու ունես հաղթանակ:

Ակնկալի՛ր ավելին

«Տակավին շատ բան ունեմ ձեզ ասելու, բայց հիմա չեք կարող տանել կամ չեք կարող հասկանալ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.12):

Հիսուսն այսօրվա խոսքերն ասաց Իր աշակերտներին, ըստ էության, ցույց տալով, որ նրանք պատրաստ չէին լսելու այն ամենը, ինչ ուզում էր ասել, բայց խոստացավ, որ Սուրբ Հոգին կգա և կառաջնորդի նրանց ամբողջ ճշմարտության մեջ (տե՛ս Հովհաննես 16.13): Նա նաև խոստացավ, որ Սուրբ Հոգին կշարունակի սովորեցնել մեզ ամեն բան և կհիշեցնի այն ամենը, ինչ Աստված ասել է Իր Խոսքի միջոցով (տե՛ս Հովհաննես 14.26):

Հիսուսն այս խոսքերն ասաց այն մարդկանց, որոնց հետ անցկացրել էր վերջին երեք տարիները: Նրանք գիշեր ու ցերեկ Հիսուսի հետ էին եղել, սակայն Նա նշում էր, որ դեռ շատ բան ուներ նրանց սովորեցնելու: Մենք կմտածեինք, որ եթե Հիսուսը երեք տարի՝ գիշեր ու ցերեկ, մեզ հետ լիներ, ապա կիմանայինք այն, ինչ կարելի էր իմանալ: Կարծում եմ, որ եթե մի ամբողջ ամիս անցկացնեի մարդկանց հետ, ապա կկարողանայի պատմել նրանց այն ամենը, ինչ գիտեմ: Բայց Հիսուսն ասաց, որ ակնկալենք ավելին, որովհետև Նա միշտ ասելիք կունենա այն նոր իրավիճակների վերաբերյալ, որոնց կբախվենք: Աստծո և Նրա Խոսքի հայտնությունն աստիճանաբար ավելանում է: Նրա մեջ հասունանալուն զուգընթաց՝ մենք ի վիճակի ենք լինում հասկանալու այն, ինչ նախկինում չէինք կարող հասկանալ: Մենք կարող ենք տասն անգամ կարդալ սուրբգրային նույն խոսքը և հաջորդ անգամ, երբ կրկին կարդանք, հասկանանք այն, որը նախկինում չգիտեինք: Ամեն օր դու կարող ես ակնկալել, որ Աստված ինչ-որ բան կսովորեցնի քեզ, եթե ուշադրություն դարձնես, թե ինչ է Նա ասում և հայտնում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ակնկալի՛ր, որ Սուրբ Հոգին ամեն օր նոր բան կսովորեցնի քեզ: Մտածի՛ր օրագիր պահելու մասին, որպեսզի գրի առնես այն, ինչ սովորում ես:

Կրակի մկրտություն

«Ես ջրով եմ մկրտում ձեզ ապաշխարության համար, բայց Իմ ետևից եկողն Ինձնից զորավոր է, որի կոշիկները վեր առնելու Ես արժանի չեմ. Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով և կրակով» (ՄԱՏԹԵՈՍ 3.11):

Որպես հավատացյալներ՝ մենք կանչված ենք անելու ավելին, քան կիրակի առավոտյան եկեղեցի գնալը, սահմանված արարողություններին հետևելը, ջրով ցողվելը կամ մկրտության ավազանում ջրի մեջ ընկղմվելը: Այս բոլորը չափազանց կարևոր են և չպետք է անտեսվեն, բայց դրանց պետք է հաջորդի «կրակի մկրտություն» վերապրելու պատրաստակամությունը:

Ի պատասխան Հակոբոսի և Հովհաննեսի մոր, ով հարցրեց, թե արդյոք իր որդիները կարող են նստել Հիսուսի աջ և ձախ կողմերում՝ Նրա արքայությունում (տե՛ս Մատթեոս 20.21,22), Հիսուսն ասաց, որ նրանք չգիտեն, թե ինչ են խնդրում: Նա շարունակեց. «Կարո՞ղ եք այն բաժակը խմել, որ Ես եմ խմելու, կամ այն մկրտությունով մկրտվել, որ Ես եմ մկրտվելու» (Մատթեոս 20.22):

Ի՞նչ մկրտության մասին էր խոսքը: Հիսուսն արդեն մկրտվել էր Հովհաննեսի կողմից Հորդանան գետում և միաժամանակ ստացել Սուրբ Հոգու մկրտություն (տե՛ս Մարկոս 1.9-11): Ուրիշ ի՞նչ մկրտություն կար:

Հիսուսը խոսում էր կրակի մկրտության մասին: Կրակը մաքրող գործոն է, մի բան, որն անհարմարություն է պատճառում, մինչ կատարում է իր աշխատանքը: Հիսուսն անմեղ էր, ուստի մաքրվելու կարիք չուներ, բայց մենք ունենք: Հիսուսը Նա է, Ով մկրտում է մեզ Սուրբ Հոգով և կրակով:

Ունեցի՛ր քաջություն՝ խնդրելու, որ Հիսուսը մկրտի քեզ Իր կրակով: Խնդրի՛ր, որ Նա մաքրման և սրբագործման աշխատանք կատարի քո մեջ, որպեսզի կարողանաս լինել անոթ՝ հարմար Նրա գործածության համար: Գուցե դժվար լինի անցնել այդ կրակի միջով, բայց արդյունքը գոհացուցիչ կլինի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ անցնես կրակի միջով, Աստված քեզ հետ կլինի: Նա երբեք չի թողնի կամ չի լքի քեզ:

Մի՛ մոռացիր Աստծուն

«Որովհետև Իմ ժողովուրդը կրկնապատիկ չարություն գործեց. Ինձ՝ կյանքի ջրի աղբյուրիս, թողեցին, որ իրենց համար հորեր փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել» (ԵՐԵՄԻԱ 2.13):

Առաջին և ամենամեծ սխալը, որ որևէ մեկը կարող է գործել, Աստծուն թողնելը կամ անտեսելն է, կամ այնպես վարվելը, կարծես Նա գոյություն չունի: Սա այն է, ինչ արեցին մարդիկ, որոնց մասին Երեմիան գրեց այսօրվա խոսքում: Նույն գլխում, ավելի ուշ, Աստված ասում է. «...Իմ ժողովուրդը մոռացել է Ինձ այնքան օրեր, որ թիվ չունի» (Երեմիա 2.32): Ինչպիսի՜ ողբերգություն. ինչում է այնպես, կարծես Աստված տխուր է կամ, նույնիսկ, միայնակ:

Անշուշտ, ինձ դուր չէր գա, որ երեխաներս մոռանային իմ մասին: Երբեք չի լինում այնպես, որ օրերով նրանց հետ չխոսեմ: Իմ որդիներից մեկը ծառայության բերումով շատ է ճանապարհորդում: Նույնիսկ երբ նա օտար երկիր է մեկնում, հաճախակի է զանգում ինձ:

Հիշում եմ, մի անգամ Դեյվն ու ես երկու երեկո անընդմեջ ճաշեցինք մեր որդիներից մեկի հետ: Հաջորդ օրը նա զանգեց մեզ՝ պարզապես իմանալու, թե ինչպես ենք, ապա հարցրեց, թե արդյոք չե՞նք ցանկանա միասին որևէ բան անել հաջորդ երեկո: Նա նաև ասաց, որ ինքն ու կինն իսկապես գնահատում էին այն ամենը, ինչ մենք անում էինք՝ նրանց օգնելու համար:

Սրանք այնպիսի բաներ են, որոնք օգնում են կառուցելու և պահպանելու լավ փոխհարաբերություններ: Երբեմն փոքր բաներն առավել կարևոր նշանակություն ունեն: Իմ երեխաների վարմունքը թույլ է տալիս հասկանալու, որ նրանք սիրում են ինձ: Թեև ես գիտեմ, որ նրանք սիրում են ինձ, բայց հաճելի է նաև զգալ այդ սերը:

Այսպիսին էլ Աստծո վերաբերմունքն է մեր՝ Իր սիրելի զավակների հանդեպ: Գուցե Նա գիտի, որ սիրում ենք Իրեն, բայց նաև ցանկանում է ճաշակել այդ սերը մեր արարքների միջոցով, հատկապես, երբ հիշում ենք Իրեն և փափագում ժամանակ անցկացնել Իր հետ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծուն հետաքրքրում է այն ամենը, ինչը վերաբերում է քեզ, ուստի ազա՛տ եղիր՝ խոսելու Նրա հետ ցանկացած հարցի շուրջ:

Բարի պտո՛ւղ բեր

«Սրանով փառավորվեց Իմ Հայրը, որ շատ պտուղ բերեք և Իմ աշակերտները լինեք» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.8):

Այսօրվա խոսքում Հիսուսն ասաց, որ Աստված փառավորվում է, երբ մենք պտուղ ենք բերում: Նա պտղի մասին խոսեց նաև Մատթեոս 12.33-ում, երբ ասաց, որ ծառն իր պտղից է ճանաչվում, իսկ Մատթեոս 7.15,16 խոսքերում նույն սկզբունքը կիրառեց մարդկանց կյանքում: Այս խոսքերը ցույց են տալիս, որ, իբրև հավատացյալներ, պետք է մտահոգվենք, թե ինչպիսի պտուղ ենք բերում: Մենք ուզում ենք Սուրբ Հոգու բարի պտուղները բերել (տե՛ս Գաղատացիների 5.22,23), բայց ինչպե՞ս դա անենք:

Մենք գիտենք, որ Աստված լափող կրակ է, և Հիսուսն ուղարկվել է, որ մկրտի մեզ Սուրբ Հոգով և կրակով: Մինչև թույլ չտանք, որ Աստծո կրակը վառվի մեր կյանքում, երբեք չենք դրսևորի Սուրբ Հոգու պտուղները:

Բարի պտուղ բերելը ոգևորիչ է թվում մինչև այն պահը, երբ գիտակցում ենք, որ պտուղ բերելու համար պետք է էտվել: Հիսուսն ասաց. «Ամեն ճյուղ, որ Ինձանում է և պտուղ չի բերում, Նա կտրում է նրան, և ամեն պտուղ բերողին մաքրում է, որ ավելի պտղաբեր լինի» (Հովհաննես 15.2): Ինչպես կրակը, այնպես էլ էտումը, խորհրդապատկերում են Սուրբ Հոգու աշխատանքը մեր կյանքում: Կրակն անհրաժեշտ է մաքրվելու և մարմինը սպանելու համար. էտումն անհրաժեշտ է աճի համար: Այն ամենը, ինչ մահացած է և սխալ ուղղությամբ է գնում, պետք է կտրվի, որպեսզի կարողանանք աճել որպես «արդարության բևեկնիներ» և առատ պտուղ բերենք Աստծո համար (տե՛ս Եսայի 61.3)

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ Աստված ինչ-որ բան է կտրում քո կյանքից, դա անում է, որպեսզի տեղ բացի ավելի լավ բաների համար:

Աստված այնքան է սիրում մեզ, որ փոխում է

«Եվ ո՞վ է Նրա Գալու օրը տանողը, և ո՞վ է Նրա երևալու ժամանակին կանգնողը, որովհետև Նա հալեցնողի կրակի պես է և թափիչների օճառի պես» (ՄԱՂԱՔԻԱ 3.2):

Աստված օգտագործում է Իր հալեցնող կրակը, որպեսզի փոխի մեզ և դարձնի այնպիսին, ինչպիսին ցանկանում է, որ լինենք: Ես հասկանում եմ, որ հեշտ չէ փոխվել: Երեսուն տարուց ավելի է՝ ուսումնասիրում եմ Աստծո Խոսքը, և դեռ ստիպված եմ աշխատել շատ բաների վրա ու թույլ տալ, որ Աստված փոխի ինձ: Ես դեռևս այնտեղ չեմ, որտեղ պետք է լինեմ, բայց շնորհակալ եմ Աստծուց, որ այնտեղ չեմ, որտեղ նախկինում էի:

Երբ Աստծո մաքրող կրակը գալիս է և հայտնում այն վարքագիծը, որ պիտի փոխվի մեր կյանքում, իսկ մենք համառում ենք կամ չենք կամենում ապաշխարել, ապա սերը նույնպես համառ է դառնում: Թո՛ւյլ տուր բացատրել: Մենք գիտենք, որ Աստված սեր է, և Նա նախանձոտ Աստված է: Նա չի ցանկանում, որ մեր կյանքում որևէ բան զբաղեցնի այն տեղը, որ պատկանում է Իրեն: Եվ սերը՝ Աստված Ինքը, մեր հանդեպ այնքան նախանձոտ ու համառ է դառնում, մինչև հասնում է Իր ուզածին: Սերը (Աստված) ցույց կտա մեզ այն, ինչ չենք ցանկանում տեսնել, որպեսզի օգնի մեզ լինելու այն, ինչ պետք է լինենք:

Կրակը լափում է ամեն անմաքրություն և թողնում այն, ինչը բոցավառ է մնում Աստծո փառքի համար: Տարիների ընթացքում Ջոյս Մայերից շատ բան է այրվել Աստծո մաքրող կրակում: Անտարակույս, դա հեշտ չի եղել, բայց, միանշանակ, արժեր:

Աստծո մաքրող կրակը կարող է մոտենալ քեզ տարբեր ճանապարհներով: Սրտումդ կարող ես ունենալ անհանգստացնող զգացում՝ դադարեցնելու այն, ինչ անում ես, և սկսելու բոլորովին այլ բան: Դու կարող ես հանդիմանություն զգալ, երբ Նա խոսի քեզ հետ Իր Խոսքի միջոցով, կամ կարող ես հոգումդ անմիջապես լսել Նրա ձայնը: Աստված ամեն միջոց կօգտագործի՝ Իր մաքրող կրակը քո կյանքի մեջ բերելու համար: Երբ այն գա, մի՛ ընդդիմացիր, այլ վստահի՛ր Աստծուն և թո՛ւյլ տուր, որ կրակն իր գործն անի:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված օրեցօր փոխում է քեզ, և այսօր դու ավելի լավն ես, քան երեկ էիր:

Ժառանգության երաշխիք

«Որ [Հոգին] մեր ժառանգության երաշխիքն է [երախայրին, գրավը, կանխաճաշակումը և կանխավճարը], մինչև Աստծո սեպհականության լիարժեք փրկագնումը՝ Նրա փառքի գովասանքի համար» (ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1.14):

Սուրբ Հոգին երաշխիքն է այն բարի բաների, որ գալու են: Հաճախ, հատկապես երբ զգում եմ, որ իսկապես լցված եմ Սուրբ Հոգով, ասում եմ. «Սա այնքա՜ն հրաշալի է, ես չեմ կարող պատկերացնել, թե ինչպիսին կլինի փառքն իր ամբողջ լիությամբ»: Եթե մենք ճաշակում ենք միայն 10 տոկոսը (կանխավճարի սովորական չափը) այն ամենի, ինչ պատկանում է մեզ մեր ժառանգության շնորհիվ, պարզապես մտածի՛ր, թե ինչ երանելի վիճակում կլինենք, երբ դեմ առ դեմ տեսնենք Աստծուն, երբ այլևս չլինեն ո՛չ արցունքներ, ո՛չ ցավ, ո՛չ մահ: Ես ապշահար եմ լինում այս մտքերից:

Եփեսացիների 1.13,14-ում Աստվածաշունչն ասում է, որ մենք կնքված ենք Սուրբ Հոգով, և Նա երաշխավորում է, որ մեղքից և դրա բոլոր հետևանքներից ազատվելու վերջին օրը ապահով և անվնաս կհասնենք վերջնական նպատակակետին: Մտածի՛ր, թե որքան հրաշալի է դա. Սուրբ Հոգին, որ մեր մեջ է, պահպանում է մեզ՝ մեր վերջնական հանգրվանի համար, որը գերեզմանում չէ, այլ՝ Երկնքում՝ Աստծո ներկայության մեջ:

Սուրբ Հոգին մեզ համար հրաշալի բաներ է անում այստեղ և հիմա: Նա խոսում է մեզ հետ, առաջնորդում, օգնում, սովորեցնում, խորհուրդ տալիս, զորակցում՝ իրականացնելու Աստծո հիասքանչ ծրագրերը մեր կյանքի համար: Բայց որքան էլ հրաշալի լինեն Նրա հետ մեր փոխհարաբերությունները երկրային կյանքում, դրանք միայն կանխաճաշակումն են այն բանի, ինչին անհամբեր սպասում ենք: Մենք ունենք կանխավճար, բայց դեռ ավելին ունենք ստանալու:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու կարող ես ապահով զգալ՝ իմանալով, որ քո ժառանգությունն ունի երաշխիք:

Ապրի՛ր Հոգու կյանքով

«Բայց դուք չեք ապրում մարմնի կյանքով, դուք ապրում եք Հոգու կյանքով, եթե Աստծո [Սուրբ] Հոգին ձեզանում բնակված է. իսկ եթե մեկը Քրիստոսի [Սուրբ] Հոգին չունի, նա Նրանը չէ» (ՀՌՈՄԵԱՅԻՆԵՐԻ 8.9):

Մենք կանչված ենք վարվելու Հոգով, կամ, ինչպես այսօրվա խոսքում է գրված, ապրելու «Հոգու կյանքով»: Հոգու կյանքով ապրելու որոշումը սկզբնակետն է, բայց Աստծո Խոսքից և փորձառությունից կարող եմ ասել, որ միայն որոշում կայացնելը բավական չէ. մենք Սուրբ Հոգու մանրակրկիտ աշխատանքի կարիքն ունենք մեր կյանքում: Նա աշխատում է մեզ հետ Աստծո Խոսքով, որը բաժանում է շունչն ու հոգին (տե՛ս Եբրայեցիների 4.12): Նա նաև օգտագործում է հանգամանքները՝ մեզ անսասան դարձնելու և սիրո մեջ քայլել սովորեցնելու համար:

Այս բաները հենց այնպես չեն տրվում մեզ. դրանք պետք է մշակվեն մեր մեջ: Ինչպես թթխմորը կամ խմորիչն է ներգործում խմորի մեջ, այնպես էլ Քրիստոսը պետք է ներգործի մեր մեջ:

Փիլիպեցիների 2.12-ում Պողոսը սովորեցնում է, որ ահով և դողալով «գործենք» մեր անձերի փրկությունը: Դա նշանակում է՝ մենք պետք է համագործակցենք Սուրբ Հոգու հետ, երբ Նա մեր մեջ սկսի խաչելության կամ «ես»-ի համար մահանալու աշխատանքը: Պողոսն ասաց. «Ես ամեն օր մեռնում եմ» (Ա Կորնթացիների 15.31): Այլ խոսքով՝ նա ասում էր, որ մարմինը մշտապես մահվան էր մատնում: Նա չէր խոսում ֆիզիկական մահվան մասին, այլ՝ իր կամքի և ճանապարհների մահվան:

Եթե իսկապես ցանկանում ենք ապրել Հոգու կյանքով, մենք նույնպես մահվան պետք է մատնենք մեր կամքն ու ճանապարհները և ընտրենք Աստծո կամքը: Մենք կարող ենք ապավինել Աստծուն՝ մեզ առաջնորդելու համար, և ուզում ենք, որ Նա էլ կարողանա ապավինել մեզ՝ Իրեն հնազանդվելու համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. եթե մահանաս քեզ համար, կկարողանաս ծառայել ուրիշներին:

Եղի՛ր ջանասեր աղոթքում

«…բայց ես աղոթք եմ անում» (ՍԱՂՄՈՍ 109.4):

Աղոթքը կարող է լինել կարճ, միևնույն ժամանակ, արդյունավետ, բայց չի նշանակում, որ անհրաժեշտ և արժեքավոր չեն այն շարունակական ժամանակահատվածները, որ հատկացնում ենք Աստծո հետ խոսելուն և Նրան լսելուն: Իրականում, բացի ամենօրյա աղոթքից, խորհուրդ եմ տալիս տարվա մեջ մի քանի անգամ մի ամբողջ օր կամ մի քանի օր անընդմեջ հատկացնել Աստծուն՝ Նրան փնտրելու, աղոթելու և Նրա Խոսքն ուսումնասիրելու համար: Ծոմապահությունը նույնպես շատ օգտակար է: Թեև աղոթքը պարզ է, և երբեք չպետք է բարդացնել, բայց լինում են ժամանակներ, երբ աղոթքը դառնում է աշխատանք: Երբեմն պետք է ջանք թափենք աղոթքում, մինչև ազատվենք այն բեռից, որ Աստված դրել է մեր սրտում, կամ համբերությամբ սպասենք կամ որևէ բան զոհենք՝ Աստծո ձայնը լսելու համար: Բայց, միևնույն ժամանակ, չպիտի թույլ տանք, որ սատանան համոզի մեզ, թե աղոթքը բարդ է և դժվար:

Սատանան արտաժամյա աշխատում է՝ փորձելով գողանալ մեզնից Աստծո հետ հաղորդակցվելու պատիվը: Նա չի ուզում, որ մեր սիրտը կիսենք Աստծո հետ և, իհարկե, չի ուզում, որ լսենք Աստծո ձայնը: Քաջալերում եմ քեզ լինել ջանասեր և հավատարիմ Աստծո հետ հաղորդակցման գործում և վերագտնել Նրա հետ արժեքավոր, բավարարող և պտղաբեր փոխհարաբերություն ունենալու հրաշալի արտոնությունը, որը հնարավորություն է տալիս խոսելու Նրա հետ և լսելու Նրան:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մնա՛ կապի մեջ Աստծո հետ:

Աստված խոսում է մխիթարություն և սփոփանք

«Օրհնյա՛լ լինի Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, գթությունների Հայրը և ամեն մխիթարության Աստված» (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 1.3):

Բոլորս ուզում ենք լինել ընդունված, ոչ թե մերժված: Ես ատում եմ մերժված լինելու տխուր զգացողությունը և հուզական ցավը, որոնք վերապրել եմ տարիներ շարունակ՝ չիմանալով, թե ինչ կարող եմ անել այդ կապակցությամբ: Գոհությո՛ւն Աստծուն, ամեն բան փոխվեց:

Մի քանի տարի առաջ այն, ինչ տեղի ունեցավ ինձ հետ, հիշեցրեց մերժվածության նախկին ցավը: Ես օգնության ձեռք մեկնեցի մեկին, ով մանկությանս տարիներին խորը ցավ էր պատճառել ինձ: Ներողություն խնդրելու փոխարեն՝ նա մեղադրեց ինձ մի բանի մեջ, որում մեղավոր չէի, և ես հստակ ուղերձ ստացա, որ այդ անձնավորությունն ընդհանրապես հետաքրքրված չէ ինձնով:

Ուզում էի թաքնվել և խղճալ ինքս ինձ, բայց փոխարենը, անմիջապես խնդրեցի Աստծուց Սուրբ Հոգու մխիթարությունը: Խնդրեցի, որ Նա բժշկի իմ վիրավոր զգացմունքները և կարողություն տա այդ իրավիճակում վարվելու այնպես, ինչպես Հիսուսը կվարվեր: Ես ապավինեցի Նրան և զգացի, որ տաքություն իջավ վրաս. կարծես հանգստացնող յուղ լցնեին վերքերիս:

Ես խնդրեցի, որ Աստված ների այն անձնավորությանը, ով վիրավորել էր ինձ, և Նա հիշեցրեց այս ասացվածքը. «Վիրավորված մարդիկ վիրավորում են ուրիշներին»: Նրա անմիջական, անձնական պատասխանը բժշկություն բերեց իմ վիրավոր հոգուն:

Աստված ամեն մխիթարության, սփոփանքի և քաջալերանքի աղբյուրն է: Խնդրում եմ, արա՛ ամեն հնարավոր բան Նրա հետ մտերիմ փոխհարաբերություն կառուցելու և պահպանելու համար, որովհետև այդ միջավայրում է, որ կկարողանաս լսել Նրա ձայնը, ստանալ Նրա մխիթարությունն ու բժշկությունը և զորանալ Նրա քաջալերանքով և հոգատարությամբ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված գիտի, թե որքան կարևոր է մխիթարությունը. Նա ուղարկեց Սուրբ Հոգուն հենց դրա համար:

Կրակի միջով

«Որովհետև մեր Աստված փչացնող կրակ է» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 12.29):

Աստված ցանկանում է մեր կյանքում ոչնչացնել այն ամենը, ինչը փառք չի բերում Իրեն: Նա ուղարկում է Սուրբ Հոգուն, որ ապրի մեր՝ հավատացյալներիս մեջ, լինի մեզ հետ սերտ հաղորդակցության մեջ և հանդիմանի մեր յուրաքանչյուր սխալ միտքը, խոսքը կամ արարքը: Մենք պետք է անցնենք «հալեցնողի կրակի» միջով (Մաղաքիա 3.2):

Ի՞նչ է նշանակում անցնել հալեցնողի կրակի միջով. նշանակում է, որ Աստված մեր կյանքում որոշակի աշխատանք է իրականացնելու: Նա աշխատելու է փոխել մեր վերաբերմունքը, ցանկությունները, ճանապարհները, մտքերը և խոսակցությունները: Նա խոսելու է մեզ հետ մեր սրտում եղած այն ամենի մասին, ինչը հաճո չէ Իրեն, և խնդրելու է, որ փոխենք դրանք: Ովքեր փախչելու փոխարեն անցնեն կրակի միջով, վերջին հաշվով մեծ փառք կբերեն Աստծուն:

Կրակի միջով անցնելը վախեցնող է թվում: Այն հիշեցնում է ցավի և նույնիսկ մահվան մասին: Հռոմեացիների 8.17-ում Պողոսն ասաց, որ եթե ուզում ենք կիսել Քրիստոսի ժառանգությունը, պետք է կիսենք նաև Նրա չարչարանքները: Ինչպե՞ս Հիսուսը չարչարվեց: Արդյո՞ք մենք նույնպես պետք է բարձրանանք խաչը: Ե՛վ այո, և՛ ոչ: Հարկ չկա, որ ֆիզիկապես խաչվենք մեր մեղքերի համար, բայց Մարկոսի 8.23-ում Հիսուսն ասաց, որ պետք է վերցնենք մեր խաչը և հետևենք Իրեն: Ապա շարունակեց՝ խոսելով եսասիրական, եսակենտրոն ապրելակերպից հրաժարվելու մասին: Աստվածաշունչն ասում է, որ մենք պետք է մահանանք մեր «ես»-ի համար: Հավատա՛, եսասիրությունից ազատվելու համար պետք է անցնել կրակի միջով, սովորաբար՝ բոցավառ կրակի: Բայց եթե հոժարությամբ անցնենք այդ կրակի միջով, ապա ավելի ուշ կճաշակենք Աստծուն փառք բերելու ուրախությունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված շատ է սիրում քեզ և կշարունակի աշխատել քեզ հետ՝ մինչև Իր վերադարձի օրը:

Նա ուզում է ներգրավված լինել ամեն ինչում

«Որովհետև, որոնք որ Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.14):

Սուրբ Հոգով վարվել՝ նշանակում է թույլ տալ, որ Նա ներգրավվի մեր կայացրած թե՛ ծանրակշիռ, և թե՛ աննշան որոշումներում: Նա առաջնորդում է մեզ խաղաղությամբ և իմաստությամբ, ինչպես նաև Աստծո Խոսքով: Նա խոսում է մեր սրտում մեղմ, հանդարտ ձայնով կամ, ինչպես հաճախ ասում ենք, «ներքին վկայությամբ»: Ովքեր ցանկանում են առաջնորդվել Սուրբ Հոգով, պետք է սովորեն հետևել ներքին վկայությանը և անմիջապես արձագանքեն:

Օրինակ, եթե զրուցում ենք որևէ մեկի հետ և ներքուստ անհարմարություն ենք զգում, գուցե դա նշանակում է, որ Սուրբ Հոգին ազդանշան է տալիս՝ փոխելու խոսակցության թեման կամ լռելու: Եթե ներքուստ անհանգիստ ենք զգում ինչ-որ բան գնելիս, ուրեմն պիտի սպասենք և հասկանանք, թե ինչու ենք անհանգիստ: Միգուցե այդ իրի կարիքը չունենք կամ գուցե գտնենք այն զեղչով՝ մեկ այլ վայրում, կամ՝ հնարավոր է, որ այն գնելու ճիշտ ժամանակը չէ: Միշտ չէ, որ պետք է իմանանք պատճառը. պարզապես պետք է հնազանդվենք:

Հիշում եմ՝ մի անգամ կոշիկի խանութում էի: Փորձելու նպատակով ընտրել էի մի քանի զույգ կոշիկ, բայց հանկարծ ներքին անհանգստություն զգացի: Այն ուժգնացավ, մինչև որ լսեցի Սուրբ Հոգու ձայնը. «Դո՛ւրս արի այս խանութից»: Ես ասացի Դեյվին, որ պիտի գնանք, ու մենք հեռացանք: Ես երբեք չիմացա պատճառը և կարիք էլ չունեմ իմանալու: Գուցե Աստված փրկեց ինձ ինչ-որ վնասից, կամ գուցե խանութում գտնվող մարդիկ ներգրավված էին անբարոյական որևէ արարքի մեջ: Գուցեև Աստված ստուգում էր իմ հնազանդությունը: Ինչպես ասացի, միշտ չէ, որ պետք է իմանանք, թե ինչու է Աստված առաջնորդում մեզ որոշակի ճանապարհներով: Մեր գործն է պարզապես հնազանդվել Նրա ձայնին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծուն պատվելու լավագույն միջոցը Նրան անմիջապես հնազանդվելն է:

Աստված կհագեցնի քո ծարավը

«Ինչպես որ եղջերուն փափագում է ջրերի առուներին, այնպես էլ իմ անձը փափագում է Քեզ, ո՛վ Աստված: Իմ անձը ծարավ է Աստծուն՝ կենդանի Աստծուն...» (ՍԱՂՄՈՍ 42.1,2):

Տարիներ շարունակ ես հաճախել եմ եկեղեցի՝ առանց իմանալու, որ Աստված ուզում է խոսել ինձ հետ, թեև անկեղծորեն սիրել եմ Նրան: Ես պահում էի բոլոր կրոնական կանոնները, տոները և ամեն կիրակի մասնակցում եկեղեցական ծառայությանը: Անում էի այն, ինչ գիտեի, բայց դա բավարար չէր Աստծո հանդեպ իմ ծարավը հագեցնելու համար:

Ես կարող էի ամբողջ ժամանակն անցկացնել եկեղեցում կամ Աստվածաշնչի ուսումնասիրման խմբակներում, սակայն դա չէր հագեցնում Տիրոջ հետ խորը փոխհարաբերություն ունենալու ծարավը: Ես կարիք ունեի խոսելու Նրա հետ իմ անցյալից և կարիք ունեի, որ Նա խոսեր ինձ հետ իմ ապագայից: Բայց ոչ ոք ինձ չէր սովորեցրել, որ Աստված ուզում է անձամբ խոսել ինձ հետ: Ոչ ոք ցույց չէր տվել ճանապարհ՝ իմ հոգևոր փափագը բավարարելու համար:

Աստվածաշունչը կարդալով՝ հասկացա, որ Աստված իսկապես ուզում է խոսել մեզ հետ և բավարարել Իր ներկայությունը վերապրելու և Իր հետ փոխհարաբերություն ունենալու մեր փափագը: Նա ունի ծրագրեր մեր կյանքի համար՝ ծրագրեր, որոնք կառաջնորդեն մեզ դեպի խաղաղություն և գոհություն, ու Նա ցանկանում է, որ աստվածային առաջնորդության միջոցով ճանաչենք և հասկանանք Իրեն ու լցվենք Իր կամքի գիտությամբ:

Աստծուն հուզում է այն, ինչ վերաբերում է քեզ, և Նրա մտադրությունն է անմիջականորեն ներգրավված լինել քո կյանքի յուրաքանչյուր ոլորտում: Երբ իմացա այս ճշմարտությունը և հավատացի դրան, Նրա հետ իմ հոգևոր ընթացքը դարձավ արկածային ճանապարհորդություն՝ կրոնական պարտականության փոխարեն:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր քո հանգիստ ժամանակի մի մասն անցկացրու պարզապես լուռ մնալով: Դադարի՛ր և լսի՛ր, թե ինչ է Աստված ուզում փոխանցել քեզ:

Ամեն ինչից վեր պատվի՛ր Աստծո ձայնը

«Օրհնյա՛լ լինի այն մարդը, որ Տիրոջն է ապավինում, և Տերն է նրա հույսը» (ԵՐԵՄԻԱ 17.7):

Աստծուն ամեն մեկից և ամեն ինչից վեր պատվելու վերաբերմունքն այն վերաբերմունքն է, որը ողջունում է Նրա ներկայությունը մեր կյանքում: Մեր վերաբերմունքը պետք է ասի. «Աստվա՛ծ, նշանակություն չունի, թե ինչ են ասում մարդիկ, թե ինչ եմ ինքս մտածում, թե ինչ ծրագիր ունեմ, եթե ես հստակ լսեմ Քեզ և իմանամ, որ Դու ես ասում, ապա կպատվեմ Քեզ ամեն ինչից առավել»:

Երբեմն մենք ավելի շատ նշանակություն ենք տալիս, թե ինչ են մարդիկ ասում, քան՝ ինչ է Աստված ասում: Եթե ջանասիրաբար աղոթենք և լսենք Աստծուց, այնուհետև սկսենք մարդկանցից կարծիք հարցնել, դրանով ցույց ենք տալիս, որ մարդկանց կարծիքն ավելի ենք պատվում, քան Աստծունը: Այսպիսի վերաբերմունքը կխանգարի Աստծո ձայնը մշտապես լսելու կարողությանը: Եթե մտադիր ենք զարգացնել Աստծո ձայնը լսելու և Հոգով առաջնորդվելու կարողություն, ապա պետք է դադարենք մարդկանցից շատ կարծիքներ լսելուց և վստահենք այն իմաստությանը, որ Աստված դնում է մեր սրտում: Կա ժամանակ, երբ տեղին է լավ խորհուրդ ստանալը, սակայն մարդկանց հավանությունից մշտապես կախված լինելը մեզ կհեռացնի Աստծո կամքից:

Սատանան ուզում է, որ մտածենք, թե ընդունակ չենք լսելու Աստծուց, բայց Աստծո Խոսքն ասում է, որ դա ճիշտ չէ: Սուրբ Հոգին բնակվում է մեր ներսում, որովհետև Աստված ուզում է, որ անձնապես առաջնոդվենք Հոգով և ինքներս լսենք Նրա ձայնը, երբ առաջնորդում և ուղղորդում է մեզ:

Այսօրվա խոսքում Աստված ասում է, որ մենք կօրհնվենք, եթե ապավինենք Իրեն: Համաձայն Երեմիա 17.5,6 խոսքերի՝ ծանր հետևանքներ են սպասում նրանց, ովքեր ապավինում են տղամարդկանց և կանանց անզորությանը, բայց օրհնյալ են նրանք, ովքեր ապավինում և պատվում են Տիրոջը: Երբ լսում ենք Աստծուն, լավ բաներ են տեղի ունենում: Նա ուզում է լինել մեր զորությունը, և մենք պետք է պատվենք Նրա Խոսքը՝ ամեն ինչից վեր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. լսի՛ր, թե ինչ են ասում ուրիշները, բայց հնազանդվի՛ր Աստծուն:

Կարմիր լույս, կանաչ լույս

«Բայց հիմա արձակվեցինք օրենքից և ընդհատեցինք ցանկացած կապ նրա հետ՝ մեռնելով նրան, որով որ բռնված էինք: Այնպես որ, այժմ ծառայում ենք՝ հնազանդվելով ոչ թե գրված կանոնակարգերի հին օրենսգրքին, այլ՝ Հոգու մղումներին՝ նոր կյանքի մեջ» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 7.6):

Իմ կյանքում եղել են ժամանակներ, երբ երջանիկ չէի, թեև քրիստոնյա էի և անում էի այն, ինչ կարծում էի, որ քրիստոնյան պետք է անի: Այժմ ետ եմ նայում և հասկանում, որ երջանիկ չլինելու հիմնական պատճառներից մեկն այն էր, որ շատ բան չգիտեի ներքին կյանքի մասին: Ես չգիտեի ինչպես լսել Աստծո ձայնը, որն առաջնորդում է ինձ Սուրբ Հոգու զորությամբ, կամ՝ ինչպես հնազանդվել Նրան, երբ մղում էր ինձ՝ անելու կամ չանելու որոշակի բաներ:

Այժմ Սուրբ Հոգին գործում է իմ ներսում ճանապարհային ոստիկանի պես: Երբ ճիշտ բաներ եմ անում, Նրանից կանաչ լույս եմ ստանում, իսկ երբ սխալ բան եմ անում, կարմիր լույս եմ ստանում: Եթե իմ ձեռնարկած քայլերի պատճառով հայտնվելու եմ անախորժության մեջ, ես նախազգուշացման ազդանշան եմ ստանում:

Որքան շատ ենք կանգ առնում և Աստծուց ուղղություն խնդրում, այնքան զգայուն ենք դառնում այն ներքին ազդանշաններին, որ Սուրբ Հոգին տալիս է: Նա խոսում է մեզ հետ մեղմ, հանդարտ ձայնով կամ, ինչպես ես եմ ասում, տալիս է ներքին հասկացողություն: Ուշադրություն դարձրու Սուրբ Հոգու մեղմ ազդանշաններին, որ տրվում են քո ներսում, ինչպես ուշադրություն կդարձնեիր կարմիր և կանաչ լույսերին՝ մեքենա վարելիս: Եթե կանաչ լույս ես տեսնում, ուրեմն առա՛ջ շարժվիր, իսկ կարմիրի դեպքում՝ կանգնի՛ր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. երբ նոր տարածքում ես, օգտագործի՛ր քո ԳՏՀ-ն (GPS), այսինքն՝ Աստծո ազդանշանային, տեղորոշման համակարգը:

Հաղորդություն Աստծո հետ

«...և մեր հաղորդությունը Հոր հետ և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի հետ» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 1.3):

Աստված ուզում է հաղորդակցվել մեզ հետ: Այսօրվա խոսքում Հովհաննեսը գրում է Հոր և Որդու հետ հաղորդության մասին, իսկ Բ Կորնթացիների 13.14-ում Պողոսը գրում է Սուրբ Հոգու հետ հաղորդության մասին: Սուրբ Հոգու հետ հաղորդությունը վերաբերում է մյուս հավատացյալների և հենց Իր՝ Հոգու հետ հաղորդակցությանը: Քանի որ Սուրբ Հոգին ապրում է մեր մեջ, հարկ չկա, որ շատ հեռու գնանք՝ Նրա հետ հաղորդություն և փոխհարաբերություն ունենալու համար:

Թերևս հաղորդակցությունը նկարագրելու համար լավ օրինակ է ծառայում միասին ապրող մարդկանց՝ ամուսնու և կնոջ փոխհարաբերությունը: Ես և իմ ամուսինը՝ Դեյվը, ապրում ենք միևնույն տանը, և մենք շատ մտերիմ ենք: Միասին աշխատում ենք և մեծ մասամբ ամեն բան միասին ենք անում: Երբեմն նա գնում է գոլֆ խաղալու, որի ընթացքում մեր կապը պահպանում ենք հեռախոսով: Նա կարող է դիտել սպորտային հաղորդումներ, ու թեև ես առանձնապես հետաքրքրված չեմ դրանցով, բայց շարունակում եմ տանը մնալ: Դեյվն ու ես միասին ճաշում ենք, միասին քնում ենք և առավոտյան օգտվում ընդհանուր լոգասենյակից, երբ պատրաստվում ենք տնից դուրս գալ: Մենք միասին շատ ժամանակ ենք անցկացնում: Միշտ չէ, որ զրուցում ենք, բայց մշտապես տեղյակ ենք միմյանցից: Մենք ունենում ենք լռության պահեր, բայց նաև շատ հաղորդակցվում ենք: Ես խոսում եմ Դեյվի հետ ինձ համար կարևոր և ոչ կարևոր բաների մասին: Նույնն էլ նա է անում: Երբ մեզնից մեկը խոսում է, մյուսը լսում է:

Պարզ ասած՝ հաղորդությունը կամ հաղորդակցությունը՝ միասին լինելն է, միմյանց հետ խոսելը և միմյանց լսելը: Սուրբ Հոգին մշտապես մեզ հետ է: Նա ապրում է մեր մեջ և երբեք չի հեռանա մեզնից: Մենք կարող ենք խոսել Նրա հետ, և Նա կլսի: Ու Նա կխոսի մեզ հետ, իսկ մենք պետք է լսենք:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սովորիր Աստծո հետ քեզ հարմարավետ զգալ: Վերաբերվիր Նրան որպես քո տան պատվավոր հյուրի:

Սուրբ Հոգին խոսում է մեր հոգու հետ

«Եվ Նա, երբ որ գա, կհանդիմանի և կհամոզի աշխարհին և կցուցադրի, թե ինչ է մեղքը, ինչ է արդարությունը (սրտի ուղղություն և Աստծո մոտ ճիշտ դիրք) և ինչ է դատաստանը» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.8):

Սուրբ Հոգին խոսում է մեր հոգու հետ, որպեսզի հանդիմանի մեղքի համար և համոզի արդարության հարցում: Նրա հանդիմանության նպատակը համոզելն է, որ ապաշխարենք, այսինքն՝ շրջվենք և գնանք ճիշտ ուղղությամբ:

Հանդիմանությունը բոլորովին տարբերվում է դատապարտությունից: Երկար ժամանակ պահանջվեց դա հասկանալու համար: Ամեն անգամ, երբ Սուրբ Հոգին հանդիմանում էր ինձ ինչ-որ բանի համար, որ համաձայն չէր Աստծո կամքին, ես դատապարտություն էի զգում: Հանդիմանությունը նրա համար է, որ հանի մեզ ինչ-որ բանից և օգնի՝ առաջ գնալու Աստծո կամքի և ծրագրերի մեջ: Դատապարտությունն ընկճում է մեզ և մեղքի բեռ դնում մեր ուսերին:

Երբ մեղքի համար հանդիմանվելիս ամոթի ու մեղքի առողջ զգացում ենք ունենում, դա բնական է: Բայց երբ մեղքից ապաշխարելուց հետո շարունակում ենք մեղավոր զգալ, դա ողջամիտ չէ և Աստծո կամքը չէ: Շնության մեջ բռնված կնոջ օրինակով (տես Հովհաննես 8.3-11) Հիսուսն ապացուցում է, որ դատապարտությունը միայն տանում է մահվան, իսկ հանդիմանությունն ազատագրում և առաջնորդում է նոր կյանքի մեջ, որն ազատ է մեղքից:

Քանի որ Աստված չի դատապարտում մեզ, մենք կարող ենք անվեհեր աղոթել. «Տե՛ր, ցո՛ւյց տուր իմ մեղքը: Հանդիմանի՛ր այն ամենի համար, ինչը խախտում է ուրիշներին սիրելու Քո օրենքը կամ խանգարում Քո կամքը կատարելուն: Զգայո՛ւն պահիր իմ խղճմտանքը Քո ձայնի հանդեպ: Տո՛ւր զորություն՝ մեղքից ազատ լինելու, ամե՛ն»: Երբ սովորում ենք այսպես ապրել, ավելի զգայուն ենք դառնում Աստծո ձայնի հանդեպ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. սատանան դատապարտում է, Սուրբ Հոգին՝ հանդիմանում:

Դու լսո՞ւմ ես

«Եվ Տերն եկավ կանգնեց, և առաջին անգամների պես կանչեց. «Սամուել, Սամուել», և Սամուելն ասաց. «Խոսի՛ր, որովհետև Քո ծառան լսում է»» (Ա ԹԱԳԱՎՈՐԱՑ 3.10):

Այսօրվա խոսքն այն պատմությունից է, թե ինչպես Աստված ցանկացավ հայտնել Սամուելին Իր ծրագրերը: Նա ստիպված եղավ մի քանի անգամ խոսել, մինչև Սամուելը հասկացավ, որ այն ձայնը, որ լսում էր, պատկանում էր Աստծուն: Հենց նա հասկացավ, որ Աստված է խոսում իր հետ, պատասխանեց. «Լսո՛ւմ եմ»:

Աստծո ձայնը լսելը կենսականորեն կարևոր է՝ կյանքում Նրա ծրագրերն իրականացած տեսնելու համար, բայց կլսես Նրան, թե ոչ, քո անձնական որոշումն է: Ոչ ոք չի կարող անել դա քո փոխարեն. ի՛նքդ պետք է անես: Աստված ուզում է, որ լսես Իրեն: Նա չի պարտադրի, որ ընտրես Իր կամքը, բայց ամեն ձևով կխրախուսի, որ հնազանդվես Իրեն:

Աստված ուզում է՝ իմանաս, թե ինչ է Նա ցանկանում, որ անես, ինչպես է մտածում քո մասին, և որոնք են Նրա ծրագրերը քո կյանքի համար: Առակաց 3.7-ում գրված է. «Դու քո աչքի առջև իմաստուն մի՛ եղիր...»: Այլ կերպ ասած՝ նույնիսկ մի՛ կարծիր, թե կարող ես հաջողությամբ տնօրինել կյանքդ՝ առանց Աստծո օգնության և ուղղորդման: Որքան վստահ լինես, որ կարող ես լսել Նրա ձայնը, այնքան ավելի հեշտությամբ Նրանից առաջնորդություն և հրահանգներ կստանաս:

Աստված ուզում է խոսել քեզ հետ: Այսօր որոշի՛ր, որ լսելու ես Նրան, երբ խոսի, և ամբողջ ուշադրությունդ ուղղելու ես Նրա ձայնին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված բարի ծրագրեր ունի քո կյանքի համար և կասի քեզ այն, ինչ անհրաժեշտ է իմանալ: Հիշի՛ր, որ պետք է լսես Նրան:

Թող քո խղճմտանքն ուղղորդի քեզ

«Աղո՛թք արեք մեզ համար, որովհետև համոզված ենք, որ բարի (մաքուր) խղճմտանք ունենք, կամենում ենք շիտակ լինել և ազնիվ ապրել՝ ամեն բանի մեջ պատվով և ազնվաբարո վարվել» (ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.18):

Աստված մեզ խղճմտանք է տալիս, որպեսզի կարողանանք հեռու մնալ անախորժություններից: Եթե բավական երկար ժամանակ անտեսենք մեր խղճմտանքը, այլևս չենք զգա Աստծո հանդիմանությունը, երբ մեղքի մեջ լինենք: Մարդիկ խստասիրտ են դառնում, երբ անտեսում են ճիշտ ու սխալի իրենց բնական զգացողությունը: Սա պատահում է նույնիսկ վերստին ծնված քրիստոնյաներին: Որքան խստասիրտ են մարդիկ, այնքան դժվար են լսում Աստծո ձայնը: Նրանց խղճմտանքը չի գործում այնպես, ինչպես Աստված նախատեսել է:

Խղճմտանքը հոգու գործառույթ է և գործում է իբրև մեր վարքի ներքին խորհրդատու: Այն թույլ է տալիս իմանալու, թե երբ է ինչ-որ բան ճիշտ կամ սխալ. հետևաբար, Աստծո հաստատած չափանիշների և ուղեցույցների իմացությունը մեծապես ազդում է մեր խղճմտանքի վրա:

Նրա Խոսքն արթնացնում է մեր խղճմտանքը կոմատոզ վիճակից: Ովքեր քրիստոնյաներ չեն, հնարավոր է՝ գիտակցում են, որ սխալ են վարվում, բայց հանդիմանություն չեն զգում, ինչպես զգում ենք մենք, որ վերստին ծնված ենք, Հոգով լցված և ամեն օր հաղորդակցություն ունենք Աստծո հետ:

Որքան շատ ժամանակ ենք անցկացնում Աստծո ներկայության մեջ, այնքան զգայուն ենք դառնում այն բաների հանդեպ, որոնք չեն արտացոլում Աստծո սիրտը: Երբ որևէ անբարեպաշտ արարք ենք թույլ տալիս, անմիջապես զգում ենք, որ չենք վարվել այնպես, ինչպես Հիսուսը կցանկանար, որ վարվեինք նման իրավիճակում:

Մենք կարող ենք ունենալ հրաշալի կյանք, եթե մեր միտքը լցնենք Աստծո Խոսքով, այնուհետև պարզապես հնազանդվենք մեր խղճմտանքին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. թող քո խղճմտանքն ուղղորդի քեզ:

Մնա՛ Աստծո մեջ

«Եթե մնաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում մնան, ինչ էլ որ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.7):

Այսօրվա խոսքում ասվում է, որ մենք կարող ենք խնդրել այն, ինչ «կամենանք», և կլինի մեզ, եթե մնանք Քրիստոսում: Սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ, Նրա մեջ հասունանալուն զուգընթաց, մեր ցանկությունները միախառնվեն Նրա ցանկություններին:

Յուրաքանչյուր հավատացյալի նպատակն է Աստծո հետ մեկ լինել: Սա հոգևոր առումով տեղի է ունենում այն ժամանակ, երբ վերստին ծնվում ենք, և աստիճանաբար ընդգրկում է մտքի, կամքի և զգացմունքների ոլորտը, երբ շարունակում ենք աճել և հասունանալ Նրա մեջ: Այս ժամանակ մեր ցանկությունները դառնում են Նրա ցանկությունները, և մենք վստահորեն հետևում ենք դրանց:

Ասածիս վառ օրինակ է այն կոչումը, որ Դեյվն ու ես ունենք մեր ծառայության համար: Աստծո ցանկությունն էր, որ մենք լինեինք ծառայության մեջ և օգնեինք մարդկանց այն պարգևներով, որ Նա տվել էր մեզ: Դա նաև մեր սրտի ցանկությունն էր: Մենք չէինք կարողանա ամեն շաբաթավերջ ճանապարհորդել, մնալ հյուրանոցներում և հեռու լինել մեր ընտանիքից, եթե ծառայելու մեր ցանկությունն Աստծուց չլիներ: Նա ծառայելու այնպիսի հզոր մղում է դրել մեր ներսում, որ պատրաստ ենք գնալու ամեն անհրաժեշտ զոհողության կամ հաղթահարելու ամեն արգելք՝ իրականացնելու այն կամքը, որ Նա ունի մեզ համար:

Մնալ կամ բնակվել Աստծո հետ՝ նշանակում է լինել Նրա հետ, ժամանակ անցկացնել Նրա հետ, ապրել Նրա ներկայության մեջ և փայփայել այն ցանկությունները, որ Նա դնում է մեր սրտում, որովհետև դա Նրա կամքն է մեզ համար: Նա խոսում է մեզ հետ և մեր սրտում ցանկություն դնում, որպեսզի աղոթենք ու խնդրենք այն ամենը, ինչ ցանկանում է տալ մեզ: Նա հավատարիմ կլինի կատարելու մեր ցանկությունները, քանի դեռ դրանք նաև Իր ցանկություններն են, և քանի դեռ մնում ենք Նրա մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. այսօր ժամանակ անցկացրու Աստծո հետ. Նա հրաշալի ընկեր է:

Կառուցի՛ր անձնական փոխհարաբերություն

«Դուք Իմ բարեկամներն (ընկերներն) եք, եթե անեք՝ ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 15.4):

Այսօրվա խոսքում Հիսուսն ասում է, որ մենք Իր ընկերներն ենք, եթե հնազանդվենք Իրեն: Հաջորդ խոսքում Նա ասում է, որ այլևս չի անվանում մեզ Իր ծառաներ, այլ՝ ընկերներ: Ակնհայտ է, որ Նա ցանկանում է անձնական փոխհարաբերություն ունենալ մեզ հետ և ուզում է, որ մենք էլ մտերիմ լինենք Իր հետ: Նա ապացուցում է սա այն փաստով, որ ապրում է մեր մեջ: Էլ ինչպե՞ս կարելի է առավել մտերիմ լինել:

Եթե Աստված ցանկանար ունենալ մեզ հետ առավել պաշտոնական, գործնական կամ մասնագիտական հարաբերություններ, ապա ավելի հեռու կապրեր: Գուցե ժամանակ առ ժամանակ այցելեր մեզ, բայց, անշուշտ, չէր գա ու մշտական բնակություն չէր հաստատի մեզ հետ միևնույն տանը:

Երբ Հիսուսը մահացավ խաչի վրա, մեզ համար ճանապարհ բացեց՝ Ամենակարող Աստծո հետ մտերմանալու համար: Ինչ հրաշալի մտադրություն: Պարզապես մտածի՛ր այս մասին: Աստված մեր անձնական ընկերն է:

Եթե գիտենք որևէ մեկին, ով կարևոր կամ նշանավոր անձնավորություն է, սիրում ենք օգտվել հնարավորությունից և ասել. «Օ՜, այդ մարդն իմ ընկերն է: Ես մշտապես լինում եմ նրանց տանը: Մենք հաճախ ենք այցելում միմյանց»: Նույնը կարող ենք ասել Աստծո մասին, եթե մշտապես հաղորդակցվենք Նրա հետ, լսենք Նրա ձայնը, հնազանդվենք Նրա ասածներին և ամեն օր մնանք Նրա ներկայության մեջ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու կարող ես ունենալ անձնական փոխհարաբերություն Աստծո հետ. Նա քո ընկերն է:

Աստված զտում է մեզ

«Եվ Նա նստելու է իբրև արծաթ հալեցնող և մաքրող և մաքրելու է Ղևիի որդիներին և զտելու է նրանց ոսկու և արծաթի պես...» (ՄԱՂԱՔԻԱ 3.3):

Ետ նայելով կյանքի տարիներին՝ տեսնում եմ, որ Աստծո հետ զարմանահրաշ ճանապարհ եմ անցել: Նա միանշանակ փոխել է ինձ և շարունակում է փոխել: Երբ ընդունեցի Սուրբ Հոգու լեցունությունը, բազմաթիվ խնդիրներ ունեի շնչի (մտքի, կամքի և զգացմունքների) ոլորտում և շրջապատված էի անբարենպաստ հանգամանքներով: Ես գրեթե չէի գիտակցում, թե ինչ էր տեղի ունենալու իմ կյանքում: Աստծուց փոփոխություն էի խնդրում, բայց բոլորովին անտեղյակ էի, որ *ես* պետք է փոխվեի:

Աստված իմ ներսում սկսեց մի գործընթաց՝ դանդաղ, հաստատուն և միշտ այնպիսի արագությամբ, որին կարող էի դիմանալ: Որպես Հալեցնող՝ Նա հսկում է մեր կյանքում վառվող կրակը՝ հետևելով, որ այն երբեք չափից շատ չբորբոքվի և երբեք չմարի: Նա հանգցնում է կրակը միայն այն ժամանակ, երբ նայում է մեզ և տեսնում Իր արտացոլանքը: Բայց դրանից հետո էլ ժամանակ առ ժամանակ ձևափոխման կարիք ենք ունենում:

Երբ Աստված աշխատում էր ինձ հետ՝ համբերատարություն ձևավորելու ուղղությամբ, ես բախվում էի շատ հանգամանքների, որոնցում կարող էի կամ համբերատար լինել, կամ վատ պահվածք դրսևորել: Հաճախ դրսևորում էի վատ պահվածք, բայց Սուրբ Հոգին շարունակում էր հանդիմանել, սովորեցնել և տալ ցանկություն՝ ապրելու Աստծո փառքի համար: Աստիճանաբար սկսեցի փոխվել՝ սկզբում մի բնագավառում, ապա՝ մյուսում: Սովորաբար այդ «մարտերի» միջև կարողանում էի մի փոքր հանգստանալ և հաճախ մտածում էի, որ ի վերջո ավարտեցի ուսումս, բայց հետո բացահայտում էի, որ դեռ սովորելու կարիք կա:

Ահա, թե ինչպես է Սուրբ Հոգին փոխում մեզ: Սիրտդ բա՛ց պահիր Նրա առաջնորդությանը, ականջներդ բա՛ց պահիր Նրա ձայնին, հնազանդվի՛ր Նրա ասածներին և շուտով կհայտնաբերես, որ ավելի ու ավելի ես փոխվում՝ դառնալով այն անձնավորությունը, որ Նա ստեղծել է քեզ լինելու:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ հուսահատվիր, երբ Աստված ցույց է տալիս այն ոլորտները, որոնք պետք է փոխվեն:

«Մարթա՛, Մարթա՛»

«Հիսուսը պատասխանեց և ասաց նրան. «Մարթա՛, Մարթա՛, դու հոգս ես քաշում և շատ բաներով զբաղված ես, բայց մեկ բան է պետք. Մարիամը բարի բաժինն ընտրեց, որ վեր չի առնվի նրանից»» (Ղուկաս 10.41,42):

Այսօրվա խոսքին նախորդող պատմության մեջ ասվում է, որ Հիսուսն այցելել էր երկու քույրերի՝ Մարիամին և Մարթային: Մարթան զբաղված էր՝ Հիսուսի համար ամեն բան կարգի բերելով. նա մաքրում էր տունը, կերակուր էր պատրաստում և փորձում էր լավ տպավորություն թողնել: Իսկ Մարիամն օգտվեց Հիսուսի հետ հաղորդակցվելու հնարավորությունից: Մարթան բարկացավ քրոջ վրա և նույնիսկ գանգատվեց Հիսուսին ու խնդրեց, որ Մարիամին ասի, որ իրեն օգնի:

Հիսուսի պատասխանը սկսվեց «Մարթա՛, Մարթա՛» բառերով, որոնք ենթադրում են ավելին, քան կարող ենք սկզբում մտածել: Դրանք ակնարկում են, որ Մարթան ժամանակ չուներ փոխհարաբերության համար, որ նա աշխատանքը գերադասում էր մտերմությունից և սխալ էր օգտագործում ժամանակը՝ բաց թողնելով ամենակարևորը:

Մարիամը գործում էր իմաստությամբ. նա օգտվում էր պահի հնարավորությունից: Նա կարող էր կյանքի մնացած մասն անցկացնել մաքրություն անելով, բայց այդ օրը Հիսուսը եկել էր իր տուն, և Մարիամն ուզում էր, որ Նա ընդունված և սիրված զգար: Հիսուսը եկել էր տեսնելու նրան և Մարթային, ոչ թե ստուգելու տան մաքրությունը: Թեև մաքուր տունը կարևոր է, բայց դա ոչ թե մաքրության, այլ Հիսուսի վրա կենտրոնանալու ժամանակն էր, որովհետև Նա այնտեղ էր:

Եկեք լինենք իմաստուն և բաց չթողնենք Աստծո ներկայությունը: Երբեմն զգում ենք, թե ինչպես է Սուրբ Հոգին մղում մեզ աղոթքի կամ ժամանակ անցկացնելու Աստծո ներկայության մեջ, բայց նախընտրում ենք այլ բանով զբաղվել: Երբ Նա կանչում է, անմիջապես արձագանքի՛ր: Նրա ներկայության օրհնությունները գերազանցում են այն օգուտները, որ ստանում ենք այլ բաներից:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. բաց մի՛ թող Աստծո ներկայությունը վայելելու որևէ հնարավորություն:

Թո՛ղ Աստված առաջնորդի քեզ դեպի կյանք

«...կյանքը և մահը, օրհնությունը և անեծքը ձեր առջև դրի. ուրեմն կյանքը ընտրիր, որ ապրես դու և քո սերունդը» (ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱՑ 30.19):

Հովհաննեսի 16.8-ում Հիսուսն ասաց, որ Սուրբ Հոգին աշխարհին «կհանդիմանի և կհամոզի» մեղքի և արդարության համար: Նա չասաց, որ Սուրբ Հոգին դատապարտություն կբերի: Նա ասաց, որ Սուրբ Հոգին «կցուցադրի, թե ինչ է մեղքը, և ինչ է արդարությունը»:

Սուրբ Հոգին հայտնում է մեղքի և արդարության հետևանքները, որպեսզի մարդիկ հասկանան, թե որ ճանապարհով գնան: Նա հստակ տարբերակում է դնում ճշտի ու սխալի, օրհնության ու անեծքի, կյանքի ու մահվան միջև, որպեսզի մարդիկ խնդրեն Աստծուց, որ օգնի իրենց ընտրելու կյանքը:

Ովքեր ապրում են մեղքի մեջ, ունեն թշվառ, դժբախտ կյանք: Երբեմն պատահաբար հանդիպում եմ մարդկանց, որոնց ճանաչում եմ և վաղուց չեմ տեսել: Նրանցից մի քանիսը չեն ապրում Աստծո համար, և այն տհաճ, թշվառ ապրելակերպը, որ նրանք ընտրել են, իր հետքն է թողել նրանց վրա: Նրանք կատարել են վատ և անխոհեմ ընտրություններ, և մեղքի հետևանքով ավելի ծեր են երևում, քան իրականում կան: Այս մարդիկ դառնությամբ լցված, տխուր, դժբախտ, բացասական և կյանքից դժգոհ անձնավորություններ են: Նրանք չեն կարողանում հասկանալ, որ իրենց կյանքը՝ իրենց կայացրած որոշումների արդյունքն է:

Մեղքի հետևանքն ամենուրեք է: Պարզորոշ է դառնում այն սահմանագիծը, որն Աստծուն սիրողներին ու Նրան ծառայողներին բաժանում է նրանցից, ովքեր չեն սիրում ու չեն ծառայում Նրան: Աստված խնդրում է, որ կատարենք ճիշտ ընտրություններ, որոնք կառաջնորդեն այն կյանքի մեջ, որ Նա ցանկանում է՝ ունենանք: Մեր առջև երկու ճանապարհ կա. ընդարձակ ճանապարհ, որ առաջնորդում է մեղքի մեջ և տանում կործանման, և նեղ ճանապարհ, որ տանում է դեպի կյանք (տե՛ս Մատթեոս 7.13,14): Քաջալերում եմ, որ ընտրես կյանքը այսօր և ամեն օր:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. լավ կյանքը հետևանք է լավ ընտրության:

Նրա բնակարանը

«Չգիտե՞ք, որ դուք Աստծո տաճար եք, և Աստծո Հոգին բնակված է ձեզանում» (Ա ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐԻ 3.16):

Ես ապշում և երկյուղածությամբ եմ լցվում, երբ մտածում եմ, թե ի՜նչ հրաշալի օրհնություն է, որ Սուրբ Հոգին բնակվում է մեր մեջ: Նա ներշնչում է մեզ անել մեծ բաներ: Նա օժտում է մեզ զորությամբ՝ մեր առաջադրանքներն իրականացնելու համար: Նա մնում է մեզ հետ սերտ հաղորդակցության մեջ՝ երբեք չթողնելով կամ չլքելով:

Պարզապես մտածի՛ր այս մասին. եթե դու և ես հավատացյալներ ենք Հիսուս Քրիստոսում, ուրեմն մենք Աստծո Սուրբ Հոգու բնակարանն ենք: Մենք պիտի խորհենք այս ճշմարտության շուրջ կրկին ու կրկին, մինչև այն դառնա անձնական հայտնություն մեր կյանքում: Եթե այդպես անենք, երբեք չենք լինի անօգնական, անհույս կամ անուժ, որովհետև Նա խոստանում է լինել մեզ հետ, խոսել մեզ հետ, զորացնել և աջակցել մեզ: Մենք երբեք չենք մնա առանց ընկերոջ կամ առանց ուղղորդման, որովհետև Նա խոստանում է առաջնորդել և լինել մեզ հետ այն ամենում, ինչ անում ենք:

Պողոսը գրում էր իր երիտասարդ աշակերտ Տիմոթեոսին. «Պահի՛ր և պահպանի՛ր [ամենայն խնամքով] այն թանկարժեք ավանդը [Ճշմարտությունը], որ վստահվեց քեզ Սուրբ Հոգով, որ բնակված է մեզանում» (Բ Տիմոթեոս 1.14):

Ճշմարտությունները, որ գիտես Սուրբ Հոգու մասին, այնքա՜ն թանկարժեք են. քաջալերում եմ, որ պահես ու պահպանես դրանք քո սրտում: Թույլ մի՛ տուր, որ դրանց ազդեցությունը թուլանա քո կյանքում: Քանի որ դու հավատացյալ ես Հիսուս Քրիստոսում, Սուրբ Հոգին քո մեջ է, որպեսզի օգնի քեզ՝ ոչ միայն պահպանելու այն, ինչ սովորել ես Նրա մասին, այլև զարգացնելու և կիսելու այդ ամենը ուրիշների հետ: Երախտապա՛րտ եղիր Նրան, պատվի՛ր Նրան, սիրի՛ր և պաշտի՛ր Նրան: Նա այնքա՜ն բարի է, այնքա՜ն քաղցր, այնքա՜ն հրաշալի: Նա սքանչելի՜ է, և դու Նրա բնակարանն ես:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. օրվա մեջ մի քանի անգամ ասա՛. «Ես Աստծո բնակարանն եմ: Նա բնակություն է հաստատել իմ մեջ»:

Երեքը մեկում

«Որովհետև երեքն են, որ Երկնքում վկայում են, Հայրը և Խոսքը և Սուրբ Հոգին, և այս երեքը Մեկ են» (Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 5.7):

Այսօրվա խոսքում գրված է Հոր, Որդու և Սուրբ Հոգու մասին, որը գիտենք, որ Սուրբ Երրորդությունն է: Թեև խոսքում գրված չէ *«Որդի»* բառը, բայց Հովհաննեսի Ավետարանի առաջին գլխից գիտենք, որ Հիսուսը և Խոսքը նույնն են:

Երբ մտածում ենք Երրորդության վերաբերյալ, պետք է հիշենք, որ նրանք երեքն են, բայց Մեկ են: Սա թվաբանական օրենքներով հնարավոր չէ հաշվարկել, բայց ճշմարիտ է՝ համաձայն Սուրբ գրքի: Եթե Սուրբ Հոգին ապրում է մեր մեջ, մեր մեջ են նաև Հայրը և Որդին:

Սա հրաշալի իրականություն է, չափազանց սքանչելի՝ բացատրելու համար: Մենք պետք է պարզապես հավատանք դրան մեր սրտում: Մի՛ փորձիր հասկանալ դա: Եղի՛ր մանկան նման և պարզապես հավատա՛, որովհետև Աստվածաշունչն է այդպես ասում. Աստվածության ամբողջ լիությունը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին, ապրում է քո և իմ մեջ և յուրաքանչյուր վերստին ծնված հավատացյալի մեջ, ով ընդունել է Հիսուս Քրիստոսին որպես Տեր և Փրկիչ (տե՛ս Կողոսացիների 2.9,10):

Այս ճշմարտությունը պետք է դարձնի մեզ համարձակ, անվախ և վճռական: Մենք պիտի հավատանք, որ կարող ենք անել այն, ինչ ներառված է Աստծո ծրագրում, որովհետև Սուրբ Երրորդությունը սպառազինում է մեզ: Նա տալիս է այն, ինչ անհրաժեշտ է, և ավելին: Աստված սիրում է քեզ, մշտապես քեզ հետ է և ունի հրաշալի ծրագիր քեզ համար: Նրա ներկայության շնորհիվ դու սպառազինված ես՝ անելու այն, ինչ պետք է իրականացնես քո կյանքում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. քաջությամբ ընդունի՛ր սա այսօր, որովհետև Աստված արդեն եղել է այնտեղ, ուր գնում ես, և ճանապարհ է պատրաստել քեզ համար:

Ուրիշ ոչինչ չի բավարարում

«Հոգովս Քեզ եմ փափագում գիշերը, հենց իմ ներսի հոգով ես Քեզ եմ բաղձանում...» (ԵՍԱՅԻ 26.9):

Աշխարհը մեր առջև լայն ճանապարհներ է բացում, որպեսզի մեր ականջները լցնի այն ամենով, ինչը խլացնում է Աստծո ձայնը և հրում Նրան ետին պլան: Ինչևէ, ամեն մարդու կյանքում գալու է այն օրը, երբ մեն-մենակ կանգնելու է Աստծո առջև: Ամեն բան անցնելու է, և մնալու է միայն Աստված:

Աստվածաշունչը սովորեցնում է, որ այն, ինչ հայտնի է Աստծո մասին, ակնհայտ է բոլորին, որովհետև Նա Իրեն հայտնել է մարդկության ներքին գիտակցության մեջ (տե՛ս Հռոմեացիների 1.19-21): Յուրաքանչյուր մարդ մի օր կանգնելու է Նրա առջև և հաշիվ է տալու իր կյանքի համար (տե՛ս Հռոմեացիների 14.12): Երբ մարդիկ չեն ուզում իրենց կյանքով ծառայել Աստծուն և գերադասում են գնալ իրենց ճանապարհներով, գտնում են միջոցներ՝ Նրանից թաքնվելու և անտեսելու այս ենթագիտակցական գիտելիքներն իրենց Արարչի մասին, Ով ուզում է խոսել իրենց հետ և առաջնորդել այն ճանապարհով, որով պիտի գնան:

Ճշմարտությունն այն է, որ, որքան էլ մարդիկ փորձեն թաքնվել Աստծուց, ոչինչ չի կարող բավարարել Աստծո հանդեպ նրանց փափագը՝ բացի Նրա հետ հաղորդությունից և փոխհարաբերությունից: Նույնիսկ երբ փորձում են անտեսել Նրան, միևնույն է, հոգու խորքում ցանկանում են լսել Նրա ձայնը:

Քաջալերում եմ, որ Աստծո հանդեպ քո փափագը բավարարես՝ Նրա հետ ժամանակ անցկացնելով, Նրա ներկայության մեջ ապրելով և Նրա ձայնը լսելով:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. ապրի՛ր այնպես, որ չվախենաս կամ չսարսափես Աստծո առջև կանգնելուց, երբ կյանքդ Երկրի վրա ավարտվի:

Խոսել և լսել

«Միտքդ դի՛ր իմ աղաղակի ձայնին, ո՛վ իմ Թագավոր և իմ Աստված. որովհետև Քեզ եմ աղաչում» (ՍԱՂՄՈՍ 5.2):

Աղոթքն այնքա՜ն պարզ է. այն ոչ ավելին է, քան Աստծո հետ խոսելը և լսելը, թե ինչ է Նա ասում: Աստված ուզում է սովորեցնել յուրաքանչյուրիս աղոթել և լսել Իր ձայնը յուրովի: Նա ընդունում է մեզ այնպիսին, ինչպիսին կանք, և ուզում է օգնել, որ բացահայտենք աղոթքի մեր ուրույն ռիթմը և մշակենք աղոթքի այն ոճը, որը կնպաստի Նրա հետ մեր անձնական փոխհարաբերության զարգացմանը: Նա ուզում է, որ աղոթքը լինի Իր հետ հաղորդակցման դյուրին, բնական, կենսատու միջոց, որի ընթացքում մենք կիսում ենք մեր սիրտը Նրա հետ և թույլ տալիս, որ Նա էլ կիսի Իր սիրտը մեզ հետ:

Աստծո ստեղծագործական ներուժը չափազանց մեծ է, որպեսզի յուրաքանչյուր անհատի սովորեցնի հաղորդակցվել Իր հետ միևնույն ձևով: Նա մեզ տարբեր է ստեղծել և ուրախանում է մեր առանձնահատկություններով: Յուրաքանչյուրս Աստծուն հետևելու ճանապարհի տարբեր հատվածներում ենք, ունենք հոգևոր հասունության տարբեր մակարդակներ և տարբեր փորձառություններ Նրա հետ: Աստծո հետ խոսելու և Նրա ձայնը լսելու կարողությունը զարգացնելիս պետք է մշտապես ասենք. «Տե՛ր, սովորեցրո՛ւ ինձ աղոթել. սովորեցրո՛ւ խոսել Քեզ հետ և լսել Քեզ: Սովորեցրո՛ւ անձամբ լսել Քո ձայնը: Աստվա՛ծ, ես ապավինում եմ Քեզ՝ աղոթքում արդյունավետության հասնելու և աղոթքի միջոցով Քեզ հետ ունեցած իմ փոխհարաբերությունը կյանքի ամենաարժեքավոր և պտղաբեր բնագավառը դարձնելու համար»:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. դու Աստծո յուրահատուկ ստեղծագործությունն ես: Արժանվույնս գնահատի՛ր դա քո կյանքում և աղոթքիդ մեջ:

Այսպես ավելի լավ է

«Բայց ես ճշմարտությունն եմ ասում ձեզ, թե լավ է ձեզ համար, որ ես գնամ, որովհետև եթե չգնամ, Մխիթարիչը չի գա ձեզ մոտ, բայց եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.7):

Սուրբ Հոգու ներկայությունը մեր կյանքում շատ ավելի հրաշալի է, քան կարող ենք պատկերացնել: Նա մեր Մխիթարիչն է, և դա նշանակում է, որ Նա կօգնի և կմխիթարի մեզ կյանքի ճանապարհորդության ամբողջ ընթացքում: Ես սիրում եմ մտածել Սուրբ Հոգու վերաբերյալ այսպես. Նա մոտ է ինձ այնքան, որքան իմ շնչառությունը:

Սուրբ Հոգին առաջնորդում և ուղղորդում է մեզ այն ծրագրի մեջ, որ Աստված ունի մեր կյանքի համար: Նրա առաջնորդությանը հետևելն իսկապես ճանապարհորդություն է: Մենք սովոր ենք ապրել մեր մտքերով, զգացմունքներով և ցանկություններով, բայց, որպես քրիստոնյաներ, պետք է սովորենք առաջնորդվել Սուրբ Հոգով: Հիսուսը եկավ մարդու մարմնով և հասկանում է այն ամենը, ինչի միջով անցնում ենք կյանքում: Ես մեծ մխիթարություն եմ ստանում, երբ հիշում եմ, որ *Հիսուսը հասկանում է* ինձ: Նա համբերատար է և կշարունակի աշխատել մեզ հետ, քանի դեռ հոժար ենք սովորելու:

Ինչո՞ւ պիտի Հիսուսն ասեր, որ ավելի լավ կլինի, որ գնա և ուղարկի Սուրբ Հոգուն: Ի՞նչը կարող էր ավելի հրաշալի լինել, քան Հիսուսի ֆիզիկական ներկայությունը երկրի վրա: Հիսուսը կարող էր միաժամանակ լինել միայն մեկ վայրում, բայց Սուրբ Հոգին կարող է լինել ամենուրեք՝ միաժամանակ գործելով յուրաքանչյուրի մեջ: Դա զարմանալի է: Նա *երբեք* չի թողնում մեզ՝ նույնիսկ մեկ վայրկյան: Նա գիտի ամենը մեր մասին և աշխատում է բժշկել մեր վերքերը ու ամեն բան կարգի բերել մեր կյանքում: Օրեցօր մենք ավելի ու ավելի լավն ենք դառնում Սուրբ Հոգու փառահեղ զորության և իմաստության շնորհիվ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. խնդրի՛ր, որ Սուրբ Հոգին ընդունի քեզ այնպիսին, ինչպիսին կաս, և դարձնի այնպիսին, ինչպիսին ուզում է, որ լինես:

Մենք առաջնորդի կարիք ունենք

«Թե այս Աստվածն է մեր Աստվածը՝ միշտ և հավիտյան. Նա կառաջնորդի մեզ մինչև մահ» (ՍԱՂՄՈՍ 48.14):

Ես հուզմունք եմ վերապրում այն մտքից, որ Աստված մեր առաջնորդն է մեր կյանքի բոլոր օրերում: Որքան հրաշալի է իմանալ, որ կա Մեկը, Ով առաջնորդում է մեզ և կյանքի մի նշանակետից տանում մյուսը:

Երբեմն, երբ Դեյվն ու ես ճանապարհորդում ենք, վարձում ենք զբոսավար՝ լավագույն և ամենակարևոր տեսարժան վայրերը ցույց տալու համար: Մի անգամ որոշեցինք ինքներս շրջել մի վայրում՝ մտածելով, որ այդպես կկարողանայինք անել այն, ինչ ուզում էինք, և այն ժամանակ, երբ ուզում էինք: Սակայն, շուտով հայտնաբերեցինք, որ մեր ինքնուրույն զբոսարշավը ժամանակի վատնում էր: Օրվա մեծ մասն անցկացնում էինք՝ մոլորվելով, ապա կրկին ճանապարհը գտնելով: Մենք սովորեցինք մեր սխալներից և այժմ գիտենք, որ ժամանակը լավագույնս օգտագործելու համար պետք է հետևենք զբոսավարին, այլ ոչ թե աննպատակ թափառենք՝ ինքներս ինչ-որ վայրեր գտնելով:

Կարծում եմ՝ այս օրինակը վերաբերում է նրան, թե ինչպես է մարդկանց մեծ մասը վարվում: Մենք ուզում ենք կազմել մեր երթուղին, ինքներս լինել զբոսավար և մեր հայեցողությամբ անել այն, ինչ ցանկանում ենք: Բայց, սովորաբար, մոլորվում ենք և վատնում մեր ժամանակը: Աստված այսօրվա խոսքում խոստացել է առաջնորդել մեզ: Նա անում է դա Սուրբ Հոգու միջոցով, Ով կխոսի մեզ հետ և կասի՝ ուր գնանք և ինչ անենք, եթե պարզապես խնդրենք, որ առաջնորդի մեզ:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված քեզ հետ է ամենուրեք, յուրաքանչյուր վայրկյան՝ մինչև մահ:

Աստծո մեծագույն ցանկությունը

«Ահա կույսը կհղիանա և որդի կծնի, և Նրա անունն Էմմանուել կկանչեն, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ» (ՄԱՏԹԵՈՍ 1.23):

Հիսուսը եկավ աշխարհ, որպեսզի մենք փրկագնվենք մեր մեղքերից, ճանաչենք Աստծուն և ճաշակենք այն բարիքները, որ Նա պատրաստել է մեր կյանքի համար: Նա ուզում է սերտ հաղորդակցություն ունենալ մեզ հետ և մասնակցել այն ամենում, ինչ տեղի է ունենում մեր կյանքում: Ահա թե ինչու է Աստծո անուններից մեկը՝ Էմմանուել, նշանակում «Աստված մեզ հետ»: Նա ուզում է լինել մեզ *հետ*, անձամբ ներգրավված լինել մեր կյանքում: Նա ուզում է, որ ճանաչենք Իր ձայնը և հետևենք Իրեն:

Աստծո կամքն է, որ հստակ լսենք Նրանից: Նա չի ուզում, որ ապրենք խառնաշփոթության ու վախի մեջ: Մենք պետք է վճռական, ապահով և ազատ լինենք: Նա ուզում է, որ յուրաքանչյուրս իրականացնենք մեր կոչումը և ամբողջությամբ հետևենք այն ծրագրին, որ Նա ունի մեզ համար:

Այո՛, մենք կարող ենք անձամբ լսել Աստծուց: Աստծո հետ մեր անձնական փոխհարաբերության խորությունը հիմնված է Նրա հետ մեր մտերիմ հաղորդակցության վրա: Նա խոսում է մեզ հետ, որպեսզի առաջնորդի, թարմացնի, վերականգնի և նորոգի մեզ:

Աստծուն լսելու առաջին քայլը՝ ականջը Նրա Խոսքին պահելն է: Ականջդ պահի՛ր Աստծո ձայնին և հանդարտվի՛ր: Նա կխոսի քեզ հետ և կասի, որ սիրում է քեզ: Աստված ուզում է բավարարել քո կարիքները և անել ավելին, քան երբևէ կարող ես մտածել կամ պատկերացնել (տե՛ս Եփեսացիների 3.20): Նա երբեք չի թողնի կամ չի լքի քեզ (տե՛ս Եբրայեցիների 13.5): Լսի՛ր և հետևի՛ր Նրան կյանքիդ բոլոր օրերում:

Դու պատկանում ես Աստծուն. դու Նրա հոտի մեջ ես, և Նրա ոչխարները ճանաչում են Հովվի ձայնը, բայց օտարի ետևից չեն գնում (տե՛ս Հովհաննես 10.4,5): Դու կարող ես լսել Աստծուց. դա քո ժառանգության մի մասն է՝ որպես քրիստոնյա: Այլ կերպ չի կարող լինել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստծո նվերը քեզ համար նոր կյանքն է՝ լցված արդարությամբ, խաղաղությամբ, ուրախությամբ և Նրա հետ մտերմությամբ:

Վայելի՛ր Աստծո ներկայությունը

«Դու ինձ ճանաչեցնում ես կյանքի ճանապարհը. Քո երեսի առջև ուրախությունների լիություն կա, և Քո աջ կողմը՝ քաղցրություններ՝ հավիտյան» (ՍԱՂՄՈՍ 16.11):

Ես սիրում եմ երեսնիվար պառկել հատակին և աղոթել. խոսել Աստծո հետ և լսել Նրա ձայնը: Այս դիրքն օգնում է ինձ կտրվել ամեն ինչից և զգալ այնպես, ասես մենակ եմ Աստծո հետ: Այդպես աղոթում եմ այնքան, մինչև մեջքս սկսում է ցավել, և ստիպված եմ լինում փոխել դիրքս, բայց ուրախ եմ, որ դրանից ինձ պակաս հոգևոր չեմ զգում: Ասելիքս այն է, որ չկա որևէ դիրք, որը պետք է պահպանել՝ աղոթելու, Աստծո ներկայությունը ճաշակելու կամ Նրա ձայնը լսելու համար: Եթե ծնկներդ ցավում են, պառկի՛ր հատակին: Եթե մեջքդ է ցավում, կամ քնում ես հատակին, վե՛ր կաց և քայլի՛ր: Եթե Դեյվի նման կարող ես նստած աղոթել՝ միաժամանակ նայելով պատուհանից, ապա աղոթի՛ր այդպես: Պարզապես գտի՛ր քեզ հարմար տեղը և ձևը Աստծո հետ խոսելու և Նրան լսելու համար՝ կենտրոնանալով միմիայն Նրա վրա:

Ազա՛տ եղիր աղոթքի բանաձևերից կամ դիրքերից, որոնց մասին լսել ես, և պարզապես աղոթի՛ր: Կո՛չ եմ անում, որ պարզեցնես քո հաղորդակցումն Աստծո հետ: Խոսի՛ր Նրա հետ և լսի՛ր Նրան այնպես, ինչպես հարմար է և հեշտ քեզ համար, և, ամեն ինչից վեր, վայելի՛ր Նրա ներկայությունը:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. պարզապես աղոթի՛ր:

Փրկված՝ ծառայելու համար

«Ուրեմն, քանի որ ժամանակ ունենք, բարի գործենք ամենին, մանավանդ՝ հավատքի ընտանիներին» (ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐԻ 6.10):

Օրդ սկսելիս՝ հարցրու Աստծուց, թե ինչ կարող ես անել՝ այդ օրը և ամեն օր ուրիշներին օգնելու համար: Աստված փրկել է մեզ, որպեսզի կարողանանք ծառայել Իրեն և ուրիշներին: Աստված սկզբում Ադամին ու Եվային ասաց, որ օգտագործեն իրենց բոլոր միջոցները Աստծուն և մարդկանց ծառայելու համար: Վեհանձն մարդը նա է, ով ծառայում է: Նույնիսկ առաջնորդը պետք է լինի ծառա-առաջնորդ:

Երբ Հիսուսի աշակերտները հարցրին, թե ով է իրենցից ամենամեծը, Նա պատասխանեց, որ ով կամենում է մեծ լինել, պետք է ծառա լինի (տե՛ս Մատթեոս 20.26): Քեզ հետաքրքրո՞ւմ է Աստծո ձայնը լսելը: Եթե այո, խնդրի՛ր Նրան, որ ցույց տա, թե ում կարող ես օգնել և օրհնել: Եթե մենք կամենանք լսել Աստծուց միայն այն, ինչն օգուտ կբերի *մեզ*, ապա, հնարավոր է, Նա շատ բան չասի մեզ, որովհետև Նա շահագրգռված չէ գոհացնել մեր եսասիրությունը: Եթե մենք իսկապես հոգ ենք տանում ուրիշների համար, հաճախ նրանց ծառայելու ընթացքում տեսնում ենք, թե ինչպես է Աստված լուծում մեր խնդիրները՝ առանց մեր կողմից էական ջանքեր գործադրելու:

Աստծո արքայության մեջ «ծառայի» դիրքը ամենաբարձրն է: Քրիստոսը եկավ, որ ծառայի, այլ ոչ թե՝ ծառայեն Իրեն (տե՛ս Մարկոս 10.45): Յուրաքանչյուրը կարող է ծառայել, եթե հոժար է դա անելու: Պարզապես լսի՛ր, թե ինչի կարիք ունեն մարդիկ և ինչ են ցանկանում, ապա գործի՛ անցիր ու ծառայի՛ր: Երբ ծառայես ուրիշներին, Քրիստոսի հետ քո մտերմությունն ավելի կխորանա, որովհետև Նա նույնպես Ծառա է:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. հենց հիմա աղոթի՛ր և հարցրու Աստծուց, թե ինչ կարող ես անել որևէ մեկին այսօր օգնելու համար: Ուշադրություն դարձրու մեղմ, հանդարտ ձայնին և հնազանդությամբ գործի՛ անցիր:

Ապացուցիր քո սերը

«Եվ երբ որ նրանց ոտքերը լվաց, Իր հանդերձներն առավ և դարձյալ սեղան նստեց և նրանց ասաց. «Գիտե՞ք՝ Ես ինչ արի ձեզ»» (ՀՈՎՀԱՆՆԵՍ 13.12):

Կարծում եմ՝ միայն վստահ մարդիկ կարող են իսկական ծառաներ լինել: Հիսուսը կարողացավ վերցնել սրբիչը և լվալ Իր աշակերտների ոտքերը, որովհետև գիտեր, թե Ով էր Ինքը, որտեղից էր եկել և ուր էր գնում: Նա ազատ էր վախից և ապացուցելու ոչինչ չուներ, ուստի կարող էր ազատ ծառայել:

Մեր հասարակության մեջ շատերին բարձր պաշտոն կամ դիրք է հարկավոր՝ իրենց արժեքավոր և նշանակալից զգալու համար: Ծառա լինելը հաճախ դիտվում է որպես ցածր աշխատանք, բայց Աստծո տեսանկյունից այն ամենաբարձր պաշտոնն է: Ճշմարիտ ծառա լինելը սկսվում է խոնարհ սրտից, իսկ դա այն սիրտն է, որ ընդունելի է Աստծուն: Անկախ նրանից, թե ինչ աշխատանք կամ զբաղմունք ունենք աշխարհում, Աստծուց ստացած մեր կոչումը Նրան և ուրիշներին ծառայելն է:

Աշակերտների ոտքերը լվալով՝ Հիսուսն օրինակ ցույց տվեց, թե ինչպես պետք է նրանք ապրեն, և ասաց, որ եթե ծառայեն ուրիշներին, կօրհնվեն և երանելի կլինեն (տե՛ս Հովհաննես 13.17): Երբ ծառայում ենք միմյանց, դառնում ենք միմյանց մասնիկը: Մենք հասկանում ենք սիրո իսկական նշանակությունը: Հիսուսը բարձր էր բոլորից, սակայն Նա խոնարհվեց և դարձավ ծառա: Պատրաստ ես հետևելու Նրա օրինակին:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. օգնի՛ր հնարավորինս շատ մարդկանց և այնքան հաճախ, որքան կարող ես:

Ոչ մի բաժանող պատ

«...Քրիստոսն է ամենը և ամենի մեջ [ամեն բան և ամենուրեք՝ բոլոր մարդկանց համար՝ առանց որևէ խտրության]» (ԿՈՂՈՍԱՅԻՆԵՐԻ 3.11):

Քրիստոսում Աստված արարեց նոր ստեղծագործություն, որում բոլոր տարբերությունները վերանում են, և մենք դառնում ենք մեկ Նրանում: Գործնական առումով՝ դա նշանակում է, որ մենք պետք է վստահենք Աստծուն, որ հոգ տանի այն ամենի համար, ինչ ինքներս ի վիճակի չենք անելու, և որպես պարգև՝ Նրանից ընդունենք այն բարի հատկությունները և ունակությունները, որ դրված են մեր ներսում: Ամեն բան Նրանում է: Նրանում արդարանում ենք Աստծո առջև, Նրանում է մեր կյանքը, մեր ուրախությունը և խաղաղությունը: Ամեն բան դեպի Նա է, Նրա համար է, Նրանում է և Նրանով է (տես Հռոմեացիների 11.36):

Այլևս հարկ չկա, որ համեմատվենք ուրիշի հետ: Կարևոր չէ, որ ուրիշներն անում են այն, ինչ մենք չենք կարող անել, որովհետև մեր միակ արժեքը և նշանակությունը Նրա մեջ է: Մենք ազատ ենք համեմատությունից և մրցակցությունից, ու դա հնարավորություն է տալիս լիովին դրսևորելու մեր ինքնությունը: Զարգացրո՛ւ քո լավագույն որակները: Երբ կարողանում ես որևէ բան լավ անել, շնորհակալությո՛ւն հայտնիր Աստծուն, իսկ երբ անկարող ես, շնորհակա՛լ եղիր Նրան, որ, միևնույն է, սիրում է քեզ և հոգ կտանի ամեն անհրաժեշտ բանի համար:

Այս ճշմարտությունը թույլ է տալիս մտնել Աստծո հանգստի մեջ և խուսափել ինքնամերժման տանջանքից կամ զուր փորձերից, որոնց նպատակն է դառնալ այնպիսին, ինչպիսին երբեք չենք դառնա: Եթե լսում ես Աստծո ձայնը, ուրեմն լսի՛ր Նրա խոսքերն այն մասին, որ դու յուրահատուկ ես. դու կարիք չունես համեմատվելու ուրիշների հետ: Բոլոր բաժանող պատերը քանդվել են Քրիստոսում, և բոլորս մեկ ենք Նրանում:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված երբեք չի օգնի, որ լինես մեկ ուրիշը, բայց կօգնի, որ լինես այն, ինչ կարող ես լինել:

Աստված գիտի, թե ինչի կարիք ունես

«Ե՛տ դարձեք ամրոցը, ո՛վ հույսի գերիներ, այսօր էլ եմ ծանուցանում, թե կրկնապատիկ եմ վճարելու քեզ» (ԶԱՔԱՐԻԱ 9.12):

Մի անգամ ես խորը վիրավորվեցի մի միջադեպից, որ տեղի ունեցավ Դեյվի և ինձ հետ: Մեզ հետ անարդար էին վարվել, և ես շատ ընկճված էի: Ես ինքնաթիռի մեջ էի ու որոշեցի Աստվածաշունչ կարդալ: Երբ կարդացի Զաքարիայի 9.12 խոսքը, բառերը կարծես դուրս թռան գրքի էջերից:

Այդ խոսքը բարձրացրեց հավատքս մի նոր մակարդակի: Առանց որևէ կասկածի՝ գիտեի, որ Աստված խոսում էր ինձ հետ իրավիճակիս վերաբերյալ: Ես գիտեի, որ եթե հույսս չկորցնեի, եթե ունենայի ճիշտ վերաբերմունք, ապա կտեսնեի այն օրը, երբ Աստված կրկնապատիկ կհատուցեր այն, ինչ կորցրել էինք այդ իրավիճակում:

Ուղիղ մեկ տարի անց Աստված մի գերազանց բան արեց և ապացուցեց հավատարմությունն Իր խոստմունքին՝ կրկնապատիկ վերականգնելով այն, ինչ անարդար կերպով վերցրել էին մեզնից, և վերականգնեց դա նույն մարդկանց միջոցով, որոնք սխալ էին վարվել մեզ հետ:

Սուրբ Հոգին հստակ գիտի, թե ինչի կարիք ունես: Այդ օրը ես բացեցի իմ Աստվածաշունչը՝ ակնկալելով, որ Նա կխոսի ինձ հետ և կօգնի իմ իրավիճակում, բայց Նա գերազանցեց իմ հույսերը՝ ոչ միայն մխիթարելով ինձ, այլև խոստանալով վերականգնել իմ կորուստը: Սուրբգրային այս խոսքը և մյուս բոլոր խոսքերը խոստումներ են՝ ուղղված նաև քեզ, և Աստված խոսում է քեզ հետ հենց այդ խոսքերով:

Ամեն անգամ, երբ մխիթարության կամ ուղղորդման կարիք ունենաս, քաջալերում եմ դիմել Աստծո Խոսքին: Այն իսկապես պարունակում է բոլոր պատասխանները, որոնց կարիքն ունենք կյանքի յուրաքանչյուր իրավիճակի համար:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. Աստված կտա քեզ կրկնակին՝ քո նեղության դիմաց (Նա կտա քեզ կրկնակի օրհնություն՝ քո նեղության դիմաց):

Մենք

«Տիրոջով են ուղղորդվում և հաստատվում [բարի] մարդու քայլերը, երբ Նա հավանում է նրա ճանապարհը [և զբաղվում է նրա յուրաքանչյուր քայլով]: Թեև վայր ընկնի, չի կործանվի, որովհետև Տերը նրա ձեռքից բռնում է և պահում» (ՍԱՂՄՈՍ 37.23,24):

Աստված զբաղված է մեր յուրաքանչյուր քայլով: Դա նշանակում է, որ մենք երբեք մենակ չենք: Երբ ընկնում ենք, Նա օգնում է մեզ բարձրանալ և քաջալերում է կրկին առաջ շարժվել: Ոչ ոք չի սովորում առաջնորդվել Աստծով՝ առանց սխալներ թույլ տալու, բայց հիշի՛ր, որ Աստված գիտի դրանց մասին, նախքան դրանք տեղի կունենան: Աստծուն չեն զարմացնում մեր վրիպումներն ու ձախողումները: Իրականում, Աստված մեր կյանքի բոլոր օրերը գրել է Իր Գրքում, երբ դրանցից մեկը դեռ չկար (տե՛ս Սաղմոս 139.16): Հիշի՛ր, Աստված հավանում է քեզ և զբաղված է քո յուրաքանչյուր քայլով: Եթե ընկնես, Նա կբարձրացնի քեզ:

Բոլոր մեծ մարդիկ՝ կին, թե տղամարդ, որոնց մասին գրված է Աստվածաշնչում, և որոնք եղել են պատմության ընթացքում, սխալներ են գործել: Աստված չի ընտրում մեզ, որովհետև կատարյալ ենք, այլ՝ որ զորավոր ձևով ցույց տա Իրեն մեր միջոցով: Իրականում Նա միտումնավոր ընտրում է աշխարհի տկարներին և հիմարներին, որպեսզի զարմացնի բոլորին և ցույց տա Իր մեծությունը (տե՛ս Ա Կորնթացիների 1.28,29): Մի՛ ընդունիր թշնամու այն սուտը, թե պետք է կատարյալ լինես և երբեք սխալներ չգործես: Ամեն օր արա՛ լավագույնը և վստահի՛ր, որ Աստված կանի մնացածը: Երբեք մի՛ վախեցիր քո սխալներից, այլ, փոխարենը, դա՛ս քաղիր: Թող քո սխալները դառնան համալսարանական դասընթաց, որը երբեք չպետք է կրկնել:

ԱՍՏԾՈ ԽՈՍՔԸ ՔԵԶ ՀԱՄԱՐ ԱՅՍՕՐ. մի՛ վախեցիր, Աստված քեզ հետ է:

Հեղինակի մասին

ՋՈՅՍ ՄԱՅԵՐԸ Աստվածաշնչի առաջատար ուսուցիչներից է աշխարհում: Ըստ *«Նյու Յորք Թայմս» ամսագրի*՝ նա համար 1 հանրաճանաչ հեղինակն է: Գրել է շուրջ 100 ոգեշնչող գիրք, այդ թվում՝ «Փոխի՛ր քո խոսքերը», «Փոխի՛ր քո կյանքը», «Մշակել լավ սովորություններ», «Ազատվել վատ սովորություններից», «Միտքը կռվի դաշտն է» ամբողջական գրքաշարը, երկու վիպակ՝ «Պեննին» և «Ցանկացած րոպե», նաև այլ գրքեր: Նա թողարկել է հազարավոր աուդիո ուսուցումներ և ունի ամբողջական տեսադարան: Ջոյսի՝ «Վայելել ամենօրյա կյանքը» ռադիո և հեռուստահաղորդումները հեռարձակվում են ամբողջ աշխարհով: Նա շատ է ճանապարհորդում՝ համաժողովներ անցկացնելով: Ջոյսը և ամուսինը՝ Դեյվը, ունեն չորս չափահաս զավակ և բնակվում են Միսսուրի նահանգի Սենթ Լուիս քաղաքում:

tv.joycemeyer.org/Armenian

Այսօրվա աշխարհում մենք շրջապատված ենք աղմուկով: Ամենուրեք լսում ենք ձայներ. մեր երեխաների, ընկերների, ամուսինների, կանանց կամ հենց մեր ձայները: Շեղվելով այլ ձայների ուղղությամբ՝ շուտով մոռանում ենք լսել ամենակարևոր ձայնը՝ Աստծո ձայնը:

Աստվածաշնչյան ընթերցանության այս ձեռնարկի միջոցով Ջոյս Մայերը մեզ՝ ընթերցողներիս, առաջնորդում է Աստծո հետ առավել մտերիմ փոխհարաբերության՝ ցույց տալով, թե ինչպիսի վարքագիծ և անձնային որակներ պետք է ձևավորենք, որպեսզի կարողանանք ճանաչել Աստծո ձայնը: Յուրաքանչյուր ուղերձ հիմնված է նրա երեք գրքերում տեղ գտած ուսմունքների վրա՝ «Ինչպե՞ս լսել Աստծուց», «Մտերմորեն ճանաչել Աստծուն» և «Պարզ աղոթքի զորությունը»:

Այս ձեռնարկում ամփոփված են խորը մտորումներ, որոնք կխրախուսեն և կօգնեն քեզ.

- ժամանակ հատկացնելու Աստծուն,
- հասկանալու Նրա արձագանքը քո աղոթքին,
- պահպանելու փոխհարաբերություններ ուրիշների հետ՝ միաժամանակ զարգացնելով մտերիմ փոխհարաբերություն Աստծո հետ:

Գիրքը պարունակում է կարճ և նշանակալից հիշեցումներ այն մասին, թե ինչպես միանաս Նրա ծրագրին և անցնես խոչընդոտների միջով՝ սկսած ժամանցախանութում գայթակղության դեմ պայքարից մինչև որևէ մեկի հանդեպ արմատավորված չարակամության հաղթահարումը: Ամենօրյա ընթերցանության միջոցով, որն ամրապնդում է խաղաղության, համբերության, հնազանդության և սիրո զորությունը, Ջոյս Մայերն առաջարկում է ռազմավարություններ, որոնք կօգնեն մեզ բաց լինել Նրա իմաստության համար, առաջին հերթին՝ բացելով մեր ականջները:

Անկախ նրանից՝ պատրաստվում ես նոր օրվան, թե մտորում ես անցած օրվա շուրջ, դու նույնպես կարող ես լսել Աստծուց: